

ՆՈՐ ԵՐԱԾՄ

I ՏԱՐԾ



ԳՐԱԿԱՆ, ՀԱՅԱՐԴԱԿԱՆ ԵԽ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 3

Մ Ա Ր Տ

1901

— առջևութեան —

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տիգրաֆիա Հրայ. Իզդ. Տ—վա. | Տպարան Վրաց Հրայ. Ընկերութեան
1901

№ 3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ԱՆՀԱԽԱՏՅ, պատմուածք Ա. Ահարոնեանի 5
2. ՄԵՆԱԿ ՄԱՐԳԻԿ, զրամա Գերհար Հառապտմանի, թարգմ. Ե.-Ա. 51
3. ԱՆԻՇԱՆ ՀԱՐՍՅ, ժող.-լուղենդա. Յովի. Թումանեանի 65
4. ՀԱՅՐԵՆԱՍԼԵՐ ԻՏԱԼ. Օ. Յ. Ն, պատմուածք Մարտ Նորսանի, թարգմ. Լ. Բաբյանի 68
5. ԶԵՅԹՈՒԽԻ ՆԵՐԿԱՅԻՑ, Հ. 75
6. ԳԻՒՂԻ ՄԱՐԴԻԿ, Ա Հողից կարուածներ, Լիօփ 85
7. ՖՐՈՄՈՆ ԿՐՏՍԵՐ, Վեպ Ալֆօնս Գոլի, թարգմ. Տ. Յովհաննեիսեանի 109
8. ՀԱՅԱԳԻՑՈՒԹԻՒՆԸ ՀԽ ԴԱՐԻ ՍԿՋԲՈՒՄ, Ա. Մալխասեանի 128
9. ԲՈՒՐԴԱԾԱ, բանաստեղծութիւն Մերեմկովսկիի, թարգմ. Ա. Կրապինիկեանի 143
10. ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԽ ԴԱՐՈՒՄ, Լիօփ 145
11. ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ, առողջապահական էտիւդ, բժպ. Վ. Արծունու 165
12. ԱՅՈՒ, ՀԵՆՅ ԵՐՈՒ ԵՐ, բանաստեղծ. Ալ. Շատուրեանի 193
13. ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ,—10. Մորացան «Թուղան», Լ.—11. Պինօդրագով. «Դասացիրք ընդհանուր պատմութեան», թարգմ. Ն. Գայամեանի, Ա. Լիս.—12. Լ. Յ. Հայկական տարգրութիւն», Ա. Մալխան.—13. Ն. Տաղամարտան. «Տարուինականութիւն», Ա. Բ.—14. Տօոռմեանց և Թոփչեանց «Տաճկատանը հասարակական և անտեսական տեսակիտից», Խ. 194
14. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ, Օտար զրամագլուխները թուաստունում 126
15. ՆԵՐՔԻՌ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մտարուականութեան նշանակութիւնը հասարակական գարգացման մէջ.—Եւրոպական աղասարար գրականութեան աղղեցութիւնը Թուաստանի ներքին կեանքի վրայ.—Նլէքսանդր Ռ. Ռ. վերաբերմունքը դէպի ճորտերի աղասութեան ինդիքը. —1861 թ. վետրուարի 19-ը.—Աղասու աշխատանք և դիւզացիական հոգառիրութիւն. —Հողաբաժինների պարտադիր լեռ գնումն. —Կալուածատիրական հողերի վրայ ապրող դիւզացիների զրութիւնը Անդրկովիատում. —Զրի աշխատանքից օգտուազներ; —Մանր տնտեսութիւնների զիմացկունութիւնը.—Սակաւահողութեան դէմպոր

Կոբ Հրաչյան 1 տարի

Հրատ. XIII տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱԿԱՎԱՆ ԵԽ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ի Ր

№ 3

Մ Ս Ա Ռ Տ

1901

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տիպոգրիա Груз. Издат. Т—ва. | Տպարան Վ. Պաց Հրատ. Ընկերութեան
1901

Дозволено цензурою Тифлисъ, 15-го марта 1901 г.

№ 3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.	ԱՆՀԱԽԱՏԸ, պատմուածք Ա. Ահարոնեանի	5
2.	ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ, գրամա Գերհարտ Հառւպտմանի, թարգմ. Ե.-Ա.	51
3.	ԱՆԻՇԱԾ ՀԱՐՍԸ, ժող.-լեզենդա. Յովի. Թումանեանի	65
4.	ՀԱՅՐԵՆԱՍԻՔ ԻՏԱԼԱՑԻՆ, պատմուածք Մարտ Նոր- սառի, թարգմ. Լ. Բաբյեանի	68
5.	ԶԵՅԹՈՒՆԻ ՆԵՐԿԱՅԻՑ, Հ.	75
6.	ԳԻՒՂԻ ՄԱՐԴԻԿ, II Հողից կարուածներ, Լեօի	85
7.	ՖՐՈՄԾՈՆ ԿՐՏՍԵՐ, վեպ Ալֆօնս Ռոդեի, թարգմ. Տ. Յով- հաննիսեանի	109
8.	ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ XX ԴԱՐԻ ՍԿԶԲՈՒՄ, Աս. Մալ- խասեանի	128
9.	ԲՈՒԴԻՇԱ, բանաստեղծութիւն Մէրեմկօվսկիի, թարգմ. Կ. Կրասիլնիկեանի	143
10.	ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ, Լեօի	145
11.	ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ, առողջապահական էտիւդ, բժա. Վ. Արծունու	165
12.	ԱՅՈՒ, ՀԵՆՑ ՆՈՒՐ ԷՐ, բանաստեղծ. Ալ. Ծառուեանի	193
13.	ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ,—10. Մորացան մեռպահն, Լ.—11. Կինոգրադով. «Ծասափրք ընդհանուր պատմութեան», թարգմ. Ն. Քարամեանի, Աս. Լ.իս.—12. Լ.օ. «Հայկա- կան տպագրութիւն», Աս. Մալխ.—13. և Տաղաւա- րեան. «Ճարուինականութիւն», Ա. Ռ.—14. Տօտոմեանց և Թորշեանց «Ճաճկաստանը հասարակական և տնտեսա- կան տեսակէտից», X.	194
14.	ՏՆՏԵԽԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ, Օտար զրամագլուխները Ռու- սաստանում	126
15.	ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մտարուականութեան նշանակու- թիւնը հասարակական զարգացման մէջ.—Եւրոպական աղաստարար գրականութեան ազդեցութիւնը Թուաս- տանի ներքին կեանքի վրայ.—Պլէքսանդր Ռ-րդի վե- րաբերմունքը դէպի ճորտերի ազատութեան ինդիրը. —1861 թ. վետրուարի 19-ը.—Ազատ աշխատանք և զիւղացիական հողատիրութիւն. — Հողաբաժինների պարտադիր յետ գնումն. — Կալուածատիրական հողերի վրայ ասլուղ զիւղացիների դրութիւնը Անդրկովկասում. —Զրի աշխատանքից օգտուողներ. — Մանր տնտեսութիւն- ների դիմացկունութիւնը.—Սակաւահողութեան դէմ գոր-	

	ծագրուող միջոցներ, - Տեղական ինքնավարութեան նը- շանակութիւնը երկրագործ ժողովրդի համար, - Ճորտե- րի ազատութեան քառասնամեակի առիթով որոշում- ներ, - Մարմարական պատմի վերացման միջնորդութիւն- ներ, - Ճորտերի ազատութիւնը իրեն հիմք վաթունա- կան թուականների վերանորոգութիւնների, - Պաշո- նական հաղորդագրութիւններ ուսանողական խառնա- կոմիւնների մասին, Լ. Ս.	222
16.	ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵՎԱՆՔ. I Խնբերդիութիւնը Սփառքալաքի զաւոռում և նրա հետևանքները, Սալլիւմեան. — II Եղբատանների խնամատարութիւնը Բագում, Ս.	242
17.	ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հարգացման հիմական օրէնքը. - Վայրենինների համամեթում և քաղաքակիրթ հասա- րակութիւն, - Համախմբում ազգայնական սկզբունքով. - Երկու տեսակ նացիօնայինուններ, - Դրանց լարաբ- րութիւնը, - Համամարդկացին համերաշխութիւն հաւա- սար ազգութիւնների մէջ, - Անհատական և միջազգային վէճների լուծման օրինական միջոց, - Զէխեր և գերմա- նացիններ, - Երլանդացիններ և անգլիացիններ, - Իրլան- դական օրստրուցիա պարլամէնտում, - Իրլանդական լեզուն անգլիական պատգամատրների ժողովում, - Իր- լանդական պարլամէնտ և համալսարան, - Հոգային հարցը Երլանդիայում, - Բանակցութիւններ անգլիացի- ների և թօէրների մէջ, - Նօցիալիստ Ձեվաչսի ստաշարկը ֆրանսիական պատղամատրների ժողովում, - Դէրուէդ և ֆրանսիական նացիօնայիններ, - Մակերոնիայի պարմանջները, - Եւրոպացի դիպլոմատների ընդդիմա- դրութիւնը Սան-Ստեֆանոյի դաշնագրութեան և դրա տիտր հետևանքները, Լ. Ս.	254
18.	ՎԻԿՏՈՐԻԱ ԹԱԳՈՒՀԻՒՆ, Ս. Ս.	262
19.	ՆԱՄԱԿՆԵՐ ԱՐՏԱՍԱՀԱՎԱՆՑ, Նամակ Բներլինից, Ե. Թոփչեանի	271
20.	ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ, Յ. Քչարեանի	276
21.	ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ, Տ. Փիրումեանի	283
22.	ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ	289
23.	ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ	293
24.	ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ	294
25.	ՑԱՏՍԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	295
26.	ՑԱՒԼՈՒԱԾ. «ՑԱՐՈՒԹԻՒՆ», ՎԵպ Լ. Տօլսովի, Բարդու. Տովիաննիսեանի:	48—80

Ա Ն Հ Ա Ի Ա Տ Ը Լ

I

Որսո շատ աջող էր:

Ես չը նկատեցի, թէ ինչպէս անցաւ օրը, ինչպէս
անցայ Մեծ-Առուն, որ մեր գիւղի գաշտերի հեռաւոր
սահմանն էր և որից այն կողմն առհասարակ վտանդա-
ւոր էր զբջել ուշ երեկոյեան և մանաւանդ գիշերը:
Մասիսը հեռու չէր. նրա փէշերը կաղմող բազմաթիւ
ամայի բլբակները տարուայ այս ժամանակ աւաղակնե-
րի բոյն են դառնում—քիւրդ ու թուրք վխտում են
այնտեղ: Բայց ես այդ մասին չէի մտածում, որսով
յափշտակուած էի և ուրախ: Ես հրճուանկով էի նայ-
ում, թէ ինչպէս լորերը փռուալով բարձրանում են
շանս առաջից և հրացանի պայթիւնից յետոյ՝ թրպը-
տալով վայր ընկնում: Ով որսորդ է, նո միայն կը հաս-
կանայ, թէ ինչքան մեծ է այդ րոպէի հաճոյքը, երբ
վիրաւոր թռչունը մի յուսահատ թափով վերջին ան-
դամ շեշտակի գէպի վեր է ձգւում, կարծես անհու-
նութեան մէջ վրկութիւնը վնարելով և անիծելով եր-
կիրը, ապա հաւասարակշութիւնը կորցրած՝ անկանոն
պտոյտներ է գործում, թեերն իրար են խառնուում և
ընկնում է խոտերի մէջ կամ ուժասպառ ու արիւնա-
քամ կամ մեռած: Շունն ուրախ ոստիւններով վրայ է
վաղում, բերնով վերցնում և բերում, և ինչ որ տարօ-
րինակ է և տխուր, որսն այնուհետև իր հետաքրքրու-
թիւնն ու արժէքը կորցնում է, կարծես գերագոյն
վայեկի րոպէն միմիայն զօրեղ ցնցման, զոհի մահու-

պայքարի, ոյն օրհասական բողէն է, երբ տաք արիւն
է հոսում: ինչո՞ւ... Ե՞ն, գաղանային մի բան կայ մար-
դու մէջ, որ գլուխ է բարձրացնում ամեն անդամ; երբ
առիթը ներկայանում է: Այդ իսկ զգացմունքի հա-
ճոյքը չէր, որ ինձ գրաւել էր: Քանի սն սպանեցի. խեղճ
թռչուններն իրար վրայ թափոտուած, գլխիկները՝ թոյլ,
կտուցներն՝ արիւնոտ ընկած էին սրսորդական պայիւ-
սակիս մէջ և այդ բոլորի վրայ մի կենդանի լոր դեռ
թրագրտում էր թափ ի թափ տալով իր ողջ մնացած մի
հատիկ թեր:

Մութն ընկաւ. իսկ ես շատ հեռու էի գիւղից,
պէտք էր շտապել վերադառնալ: Նունս էլ երկի այդ-
էր մտածում: նա յոդնած էր, լեզուն կախ ձգած՝ հե-
ռում էր, նայում էր ինձ խելացի ազերով և կարծես
հարցնում էր թէ՝ ժամանակ չէ տուն վերադառնալու:
Քայլում էի հանդարտ. այժմ միայն զգացի, թէ որքան
յոդնած եմ: Օգոստոսի վերջն էր. երկնքը պարզ էր,
աստղափայլ, օդը մեղմ էր, համարեա զով. շուրջս միա-
պաղաղ լուսվթիւն էր տիրում: միայն երբեմն-երբեմն
մի շղիկ արագ պտոյտ էր դործում գլխիս շուրջը, մի
վայրկեան աղմկում լուսվթիւնը և անցնում: Մի փոքր
հեռու մացառների տակից մէկ-մէկ լսում էր մի ցա-
ւոտ և երկար ճռոց և ապա լուսում: մանկութիւնից
ինձ հաւատացրել էին, թէ դա օձի ճռոց է և թէ նա
այդ անախորժ ձայնը հանում է տտամի ցաւից: Այդ
էր պատճառը, երկի, որ այդ ձայնը աշխատում էի չը
լսել: Խոտերն ու չորացած տերենները այստեղ այնուեղ
մեղմիկ խշոց էին հանում, այնքան մեղմ, որքան դա-
ւադիր երեխաների փափառցն է. ով գիտէ ինչ սողուն,
ինչ ողորմելի միջատ փորձում էր իր տեղը փոխել, թա-
թերով երերում էր խոռը, կամ իրանից հզօրի ճանկն
ընկած՝ կամացուկ տնկում էր: Խաւարի քողով ծած-
կուած և խուլ լուսվթեան մէջ կեանքը դործում է հզօր
թափով, բնութիւնը երբէք քուն չունի:

Նունս վաղում էր առաջիցս. որ և է շուկ լսելիս՝

նա կանդ էր առնում մի վայրկեան, ականջ էր դնում
ուշադրութեամբ, ապա դառնում էր ինձ նոյում հար-
ցական եղանակով. տեսնելով՝ որ տէրը ոչ մի շարժում
չէ անում, ձայն չէ հանում, կրկին շարունակում էր
ճանապարհը՝ Բաւական գիշեր էր անցել արդէն, երբ
ես մօտեցայ գիւղի բօստաններին. կենդանութիւն կար,
երգ, ծիծաղ, խօսք, զրոյց. պահապանները շատ էին:
Այսպէս է մեր կողմերում. ամեն ինչ պահպանել է
հարկաւոր, արդար վաստակի թշնամին շատ է, որով-
հետև անարդար վաստակով ապրողները բազմաթիւ են.
երբ դաշտերում բարիք կայ, քիւրդը լեռներից է ցած
գալիս, աւաղակ թուրքն իր ընից է դուրս սողում,
պէտք է պահել արտը, այգին, բօստանը, բամբակը...
ամեն ինչ:

Հեռու կրակ էր երեւում. բոցը մերի՛ մեծանում,
մերի՛ փոքրանում էր, հաղիւ լուսաւորելով մի քանի
մարդկային ուրուագծեր. երեկի բօստանչիներ էին իրար
մօտ հաւաքուած և ինչ որ եփում էին: Սիրուն բան է
կրակը գիշեր ժամանակ, լսուլ դաշտում, մանաւանդ
երբ մարդ յոգնած է և մօտալուտ վտանգի գիտակ-
ցութիւնից կենդանի արարածի կարօտ է դուրս եռ
ճանապարհութեացի և ուղիղ գէպի այդ կրակը դիմեցի:

—Բարի երեկոյ:

—Օ՛, Աստուծու բարին, ասացին նստողները. արի,
արի, զոքանչի սիրած ես, հաղիւ եփեցինք՝ վրայ հա-
սար. նստիր, բախտի բան է:

Երեք հոգի էին, մեր գիւղացի երիտասարդներ.
Երեքին էլ ճանաչում էի, մանկութեան խտղնկերներ
էինք, ինչեր էինք արել միասին հէնց այս դաշտերում:
Կեանքը մեր ճանապարհները զատեց—Նդանք մնացին
գիւղում, շարունակեցին իրանց հայրերի պարապմունք-
ները, խաղաղ, աշխատաւոր հողաղործներ դարձան:
Նրանք ամբողջ օրը այլուղ արելի տակ, դաշտերում,
կալերում աշխատելուց յետոյ, այժմ էլ ստիպուած էին
անքուն մնալ՝ իրանց արդար վաստակի պտուղները

պահպանելու համար։ Գիշերային միայնութեան ձանձ-
րոյթն ու քունը փախցնելու համար՝ մօտիկ բօստաննե-
րից նրանք իրար մօտ էին հաւաքուել, կրակ արել և
փեղամներ էին խորովում։ գրաւիչ աշխատանք էր, իւ-
րաքանչիւրը փայտեայ ձողի ծայրին մի հատ փեղամ
ցցած՝ մեկնել էր կրակի վրայ, դարձնում էր այս ու
այն կողմը՝ սպասելով որ եփուի. սրախօսութիւնները,
գիւղացիներին յատուկ կոշտ, մերկ, բայց պատկերաւոր
սրախօսութիւնները պակաս չէին։ Այն ինչ հրաշալի
մեղմութիւն է, որ մոյր երկրի կրծքից դուրս դալով՝
բռնում է երկրագործի ամբողջ էութիւնը և անյօյս
հնազանդութեան, անդարձ հպատակութեան կնիքն է
գնում այդ կոշտ գեմքերին։ Երկրագործը՝ ինքը մայր
երկիրն է, համբերող և արտագրող, գիշեր ու ցերեկ
աշխատող բնութիւնն է նա, մտածում էի ես նայելով
իմ վաղեմի ընկերներին։

—Նատ ուշ ես վերադառնում, ասաց նրանցից
մէկը, երբ ես արդէն տեղ էի բռնել կրակի առաջ, ե-
րեսի բանդ լաւ էր։

—Հա, պատասխանեցի, որսս աջող էր, լորերը
շատ շատ են։

—Օգոստոսին նրանք միշտ շատ են. բամբակներն
էլ այժմ բարձր են, կորեկները հասել են, լորերի լաւ
ժամանակն է, վրայ բերեց խօսակիցս, որ Սարգիս էր
կոչւում։

Յանկարծ մի հրացանի ձայն լսուեց մեղանից խիստ
մօտիկ. ես խլեցի կողքիս դրած հրացանը և վեր ցատ-
կեցի. ընկերներս ծիծաղեցին։

—Նստիր, նստիր, տնաշէն, բան չը կայ, այդ «Ան-
հաւատն է», ամեն գիշեր մի երկու անդամ որ հրացանը
չը պարպի, չի հանդստանայ. այստեղ մօտիկ բօստան է
պահում, ասաց Սարգիսը փէշս քաշելով, որ նստեմ։

Ես հնազանդուեցի մի փոքր կտրուած, մի փոքր
ամաչած և այժմ դժուարութեամբ էի կրծում ինձ յանձ-
նուած փեղամը։ «Անհաւատ»—այսպէս էին անուա-

նում մեր գիւղում Թուխիկենց Աթօին. այդ ես գիտէի
գեռ իմ մանկութիւնից, իսկ թէ ինչու էին այդ տարօ-
րինակ մականունը տուել նրան, ես մինչեւ այժմ էլ չը
գիտէի:

—Լոիր, Սարգիս, ասացի, ինչու են Աթօին ան-
հաւատ ասում:

—Ի՞նչու են ասում, ով գիտէ գիւղի բանը, ա-
սում են էլի՛, մէկն ասել է, մէկէներն էլ կրկնում են-
ինչ անհաւատ, կարդին հայքրիստոնեայ է, ինձանից
էլ քեզանից էլ հաւատով է. հէնց մի անդամ բերան-
ներս է ընկել, ասում ենք, ինքն էլ սովորել է, չէ նե-
ղանում: Բարի մարդ է, միշտ իր ցաւին, իր աշխա-
տանքին, միայն տէրտէրին վաղուց է՝ ինչ «օրհնեա,
տէր» չէ ասում, ով գիտէ ինչու համար մի անդամ
վզովն է ընկել, էլ ժամ չէ դնում: մի խօսքով կրօնի
հետ շատ էլ սէր չունի, կարծեմ պաս էլ է ուտում:
վերջացրեց նա փափսուկով:

—Դէ էլ նրա հաւատը ո՞րն է, անաշէն, անհաւատ
էլաւ գնաց էլի՛, բացականչեց կողքի ընկերը ծիծաղե-
լով: գեռ այն էլ չես ասում: որ արիւն թափելուց չէ
վախենում:

—Քաջ է, անվախ է, դրանում ինչ անհաւատու-
թիւն կայ, այ խելօք. մենամենակ քոան թուրքի, քրդի
գէմ դուրս կը դայ, հրացան ունի, գնդակը գետին չէ
ընկնում: նրա քօստանին մօտենալ չէ լինում: մեղ նման՝
դագանակներով չէ դուրս դալիս դաշտ: Մինչեւ հիմա
հւմ հաւին է անմեղ տեղը «քըշշ» արել, ումն է վնաս
հասցրել:

—Որ չը գիտես, մի խօսի, վրայ բերեց խօսակիցը,
հարցրո՞ւ իր հասակակիցներին և նրանք քեզ կ'ասեն,
թէ Թուխիկենց Աթօն ջահէլ ժամանակ ինչե՞ր է արել:

—Թշնամու խօսքեր են:

—Կանչենք թող դայ այստեղ մի քիչ խօսենք, մէջ
ընկաւ երրորդը:

Ես էլ ձայնակցեցի այս առաջարկութեանը:

—Զի գայ, ասացին միւս երկուսը. բօստանն անտեր չի թողնի:

—Փորձեցէք, ինդը եցի ես:

—Աթօ ապեր, հէյ Աթօ ապեր:

—Հէյ, հէյ, ձայն տուեց նա հեռուից:

—Արի, արի այստեղ փեղամ կեր, փեղամ:

Մի փոքր լռութիւն տիրեց:

—Շատ էք, հարցրեց Աթօն:

—Չորս հոգի ենք, չորս:

—Դալիս եմ, գալիս:

Ամենքս էլ ուրախացանք: Քիչ յետոյ նա մէկ էլ պարզեց հրացանը, կարծես կամենալով իր բացակայութեան ժամանակ այդ մի հատիկ պայթիւնին յանձնել իր բօստանի պահպանութիւնը և ապա հանդարտ սուլելով՝ յայտնուեց կրակի մօտ:

—Բարի երեկոյ, վահ, էս ով է, ասաց նա կռանալով դէպի ինձ, որ լաւ տեսնի դէմքս. տօ, էկ դու ես, նարմբնազով (քնքոյշ), բացականցեց նա ճանաչելով ինձ. վերջին բառով նա ակնարկում էր իմ դիւղական կեանքից խորթանալը:

—Ճօ, դու էստեղ, էդ որ խաչիցն է, շարունակեց նա:

—Որսից է դալիս, պատասխանեցին ընկերներս տեղ բանալով Աթօնին կրակի առաջ:

—Որսից, է, ինչ ես բերել, տեսնենք:

—Լոր, լոր, Աթօ ապեր, որքան ուզես. առ ահաքեղ մի կենդանի լոր տամ, դիր վանդակի մէջ, թնդառաւոտները երդ ասէ:

Այս ասելով՝ ես պայիւսակիցս հանեցի կենդանի լորը և մեկնեցի նրան: Սիրուն թռչուն էր, կոկորդի տակը՝ սե, մնացած վերառւները մոխրագոյն, նա թըրպարտում էր ձեռքումն և աչքերը բաց ու խուփ անում կրակի լոյսից: Աթօն բռնեց հանդարտութեամբ, մի քիչ նայեց, շշափեց կենդանու մարմինը:

—Լաւն է, չաղն է, ասաց. ապա երկու ոտներից

ու բնից բռնելով ամենայն սառնարտութեամբ թռչնի գլուխը թափով զարկեց իր հրացանի փողին. կենդանին վայրկենապէս շունչը վշեց, երկու կաթիլ արիւն որձկալով. Աթօն առանց փետրելու մաշկեհան արեց և ձգեց կրակի վրայ: Այս բոլորը կատարուեց մի քանի բոպէում:

Ես նկատեցի՝ թէ ինչպէս ամենքն էլ զարմացած մնացին նրա անգութ վարժունքի վրայ, մի թեթև դժկամակութիւն նկարուեց բոլորի գէմքին. նոյն իսկ ես, որ ամբողջ օրը լորեր էի կոտորել, վրդովուած էի Աթօի արածից. «Ճիշտ որ անհաւատ», մտածում էի ես:

—Հը, ի՞նչ ես նայում պէլ կտրած, գարձաւ նա գէպի ինձ նկատելով վրդովմննքս, հիմա կ'ասես, անխիղճն է. դու խօմ մի և նոյն բանն ես արել ամբողջ օրը: Էսպէս է աշխարհի բանը, մարդ իր գործած մեծ չարութիւնը կը մոռանայ, ուրիշի թեթև յանցանկը կը տեսնի, եփուիր, լորուկ, եփուիր, քեզ մատաղ, աշխարհում չարն ու բարին իրար են խառնուել, խելք կ'ուզեմ, որ կարողանայ ջոկել: Սուտ չեն ասել մեր պատերը՝ «Հաստ ու բարակ մէկ զին է, վայ դայ բարակ մանողին». թէ քեզ պահէի, ինսամէի, էլի ես անհաւատ էի. սպանեցի էլ, էլի ես եմ անհաւատ. լաւն էն է ուտեմ: Նարմընազուքը խղճով է, նա հրացանով է սպանում, իսկ ես... դէ մենք էլ գիւղացի կոշտուկոպիտ մարդ ենք, մերն էլ այսպէս է. ի՞նչ կ'ասեք աղերք, գարձաւ նա գէպի միւսները: Սրանք լուռ էին:

—Ի՞նչ ասենք, Աթօ ապեր, վերջապէս ձայն տուեց Սարգիսը, դու մեր հօր տեղն ես, մէկ էլ ամեն մարդ իր վարձրի տէրն է:

—Հա, ի՞նչու չէ, ամեն մարդ իր վարձրի տէրն է. թող այդպէս լինի, ես այս մի լորի վարձը չուղեցի, թէ սրա համար միւս կեանքում մէջքս շամիուրով այրեն, նարմընազուքին ողջ-ողջ կպրի կարասը պիտի դըցեն. թամաշայի բան կը լինի համ, վերջացրեց նա ծիծաղելով:

Լորը եփուեց. նա վերցրեց կրակի վրայից և սկսեց

ախորժակով կրծոտելք Ես նայում էի նրան այդ բողէին և զարմացած էի տեսնելով՝ որ այդ դէմքն ամենելին չար չէ և ոչնչով չէ համապատասխանում նրա խստասիրտ վարժունքին ու խօսքերին։ Վաթունն անցած մի ծեր գեղջկական դէմք էր չարչարուած ու բրտացած չարքաշ աշխատանքի մէջ, որ մի և նոյն ժամանակ զուրկ չէր խելացի արտայայտութիւնից կարճ և խաղառ ճերմակած միրուքը և թաւ բեխերը ծածկում էին նրա դէմքի մեծ մասը, շատ քիչ բաց տեղ թողնելով այտերի վրայ. աչքերը մանր էին, յօնքերի հովանու տակ կորած, բայց ոչ խորամանկ էին և ոչ չար, այլ մեղմ, բարի և խելացի։ Համարեա ոչինչ չը կար այդ դէմքի վրայ, որ անախորժ լիներ։

Մեր ետևում, խոտերի մէջ մի բան կամացուկ քըսաց. Աթօն ճշաց, վեր թռաւ սարսափած և փախաւ հեռու, ինչպէս օձից կծած։ Մենք մնացինք ապշած։

—Ի՞նչ պատահեց, ձայն տուինք չորսս էլ միաբերան։

—Այստեղ օձ կայ, խշիշաց, պատասխանեց նա շնչակտուր։

—Ճօ, ի՞նչ օձ, ի՞նչ բան, Աթօ ապեր, շունն էր, շարժուեց, քսոց հանեց։

—Ի՞նչ շուն, ում շունը։

—Իմ շունը, վրայ բերի ես, այ այնտեղ է, տնաշէն, խոտերի մէջ պառկած է։

Աթօն նայեց այն կողմը, տեսաւ շունը, հասկացաւ իր սխալը և անտեղի երկիւղը, բայց կարծես տմաւելով իր վախկոտութիւնից, էլ չէր մօտենում կրակին, որ չը տեսնենք իր դէմքի գունատութիւնը։ Համոզեցինք, կանչեցինք, մօտեցաւ, բայց էլ չը նստեց, մնաց կանգնած աչքերը խոտերին յառած։

—Նստիր, նստիր, ուտենք։

—Չէ, էլ չեմ կարող, վերջացաւ. Էստեղ օձ կը լինի, օձի տէրը մեռնի, վախեցէր օձից։

—Ճօ Աթօ ապեր, ասաց Սարդիսը, գու, հեռ իրաւ-

նից, ժամ-պատարագից չես դողում, տէրտէրի անէծքից չես վախենում, քսան թուրք-քիւրդ աւազակին մարդ չես ասի, հիմա օձից ես վախենում:

—Հա, պատասխանեց նա յուզուած ձայնով, ես ոչինչից էլ չեմ վախենում: Թրի ու կրակի միջով կ'անցնեմ, գայլ, արջ և ուրիշ տամն անդամ սարսափելի գազաններ ինձ համար նապաստակներ են, բայց ես վախենում եմ օձից, նոյն իսկ դողում եմ նրա անունը լըսելիս, տեսէք, դողում եմ, նա իմ չար հրեշտակն է: Եթէ ուզում էք ձեզ մօտ էլի մի փոքր մնամ, բարձրանանք քօշիկի կտուրը, թէ չէ կ'երթամ, այստեղ օձ կայ, սիրտս է ասում:

Մեր զարմանքը կրկնապատկուեց. այդ քաջ, անվեհեր ծերունին, որի մազերը, ով գիտէ, ինչ վտանգների մէջ էին ճերմակել, այդ «Անհաւատը», ինչպէս ասում էին գիւղացիք, դողում էր օձի նոյն իսկ անունից:

Ճար չը կար, բարձրացանք կտուրը. մի առ ժամանակ ամենքս էլ լուռ էինք, ամենքս էլ քիչ առաջ պատահածի ծանր տպաւորութեան տակ էինք: Աթօն շարունակում էր յուզուած մնալ և ոչ ոք սիրտ չէր անում խզել անախորժ լուռութիւնը: Ներքեում մենակ մընացած շունն սկսեց կտղկանձել և աշխատում էր բարձրանալ մեզ մօտ:

—Արի, արի, լաւ վախեցրիր ինձ, ասաց Աթօն, օդնելով շանք որ բարձրանայ. մենք ծիծաղեցինք և ճնշող լուռութիւնից աղատուեցինք:

—Աթօ ապեր, ասացի ես, չի լինի որ մեզ պատմես, թէ ինչու ես վախենում օձից: Նա մի առժամանակ ոչինչ չը պատասխանեց, գլուխը քաշ գցած՝ խազում էր հրացանի բլթակի հետ և մի և նոյն ժամանակ ասես փորփռում էր հին յիշոզութիւններ:

—Լաւ, պատասխանեց վերջապէս, պատմեմ, ծերացել եմ, ով գիտէ կամ շուտով կը մեռնեմ, կամ անիծած թուրքերը, քրդերը կը տան շանսատակ կ'անեն և կամ օձը կը կծի: Պատմեմ, քանի շունչս բերնումն

է. Թող գոնէ մի երկու մարդ իմանայ, թէ ինչու եմ միացել առանց ժամապատարագի, և երբ մեռնեմ, ով գիտէ, գուցէ խղճան, մի փոսի մէջ էլ ինձ գցեն:

Նա չիբուխը պատրաստեց, վառեց, մի քանի կում քաշեց և այսպէս սկսեց.

II

Շատ ժամանակ է է, քառասուն տարուց աւելի, որ ես ու խեղճ Գասպարը մտանք ձեր գիւղը: Քառասուն տարի, մի ամբողջ կեանք է, գուք չը կայիք գեռայն ժամանակ: Հեռու տեղից էինք գալիս. քայլել էինք ամբողջ օրեր ու շաբաթներ, մեր ոտների կաշին քերթուել էր, մէջքերիս պարկերը պատառուուել, ձեռներիս գաւազանը մաշուել: Մենք եկել էինք մեր գլուխը զնելու մի ապաստարան ճարել այս կողմերում, ինչպէս չուսդ թռչունները փախչում են տաք կողմեր՝ ձմեռը մօտենալիս: Աշխարհը լայն է, ասում են. ի հարկէ լայն է, մենք էլ գիտէինք, բայց արի տես, որ այդ լայն, արձակ աշխարհում մենք մի անկիւն չունէինք ծուարելու համար: Ասենք ուրիշ կերպ չի էլ կարող լինել. ով վաթան չունի, նա աշխարհում տեղ չունի, միայն չը գիտեմ երկնքում էլ նրան տեղ կը տան, թէ ոչ: Ծնած տեղներս՝ մեր վաթանը փուշ ու տատանկ էր գարձել մեղիսցուամ, օձ ու կարիճ էր գարձել մեղ կծում, և մենք գլուխ առած փախչում էինք առանց ետ նայելու. տեղն է, որ ասեմ՝ սե լինէր մեր փախած օրը, մեր ոտները երկու տակ լինէր՝ չը հեռանայինք. վաթանը եթէ գեհէն գառնայ, էլի գարիբութիւնից լաւ է. հիմա կ'առեմ, այն ժամանակ չէի հասկանում: Երկու ընկեր էինք, երկիսն ցան էլ մէկ էր, վլած պատի տակ ծընուած խեղճ ու կրակներ էինք. ծնունդից սկսած սե օրի, գառն ըրտնքի, մեր միսն ուտելու դատապարտուած գլուխներ. կան էն, այդպիսի մարդիկ շատ կան, որսնց ճակատին դեռ չը ծնուած կ'ասես զըել են՝

«ցաւ, տանջանք»։ Աշխարհում ունեցած՝ չունեցածս մի քոյր էր, հայ-հու, քանի տարի է անցել, գեռ քրոջս դարդի ծուխը քթիցս չի կուրս եկել, հոգիս գեռ մխում է. մի թառլան աղջիկ, որ ինձ համար ամեն ինչ էր՝ և հայր, և՝ մայր, և՝ եղբայր, և՝ հարստութիւնն Բացի նրանից Գասպարը կար, իմ միակ ընկերը. ցաւի, խեղճութեան մէջ իրար սէր էինք երդուել, միասին էինք չարչարւում, միասին աշխատում, միասին ուրախանում, միասին վայելում, թէ մի բան կար վայելելու։

Ապրում էինք։

Բախտը մեր խեղճութիւնը, մեր սև օրը մեզ քեչ համարեց. մի բանջարաքաղի օր անօրէնները քոյրս փախցրին։ Յիշում եմ, երբ այդ սև լուրը մեզ հասաւ, ինչպէս երկնքից մի-մի ժայռ ընկնէր իմ ու Գասպարի գլխին և մեզ աղցանի պէս տրորէր. հազար կտոր անէին մեզ, որանից լաւ էր։ Երկուսով էլ ընկանք սար ու ձոր, հարց ու փորձ արինք, գլուխներս սար ու քարի տուինք, գիշերները ցերեկ շինեցինք, բոլորն ի զուր, ըլ դտանք ու ըլ դտանք։ Վերջն իմացանք, որ փախցները հետքը կորցնելու համար շտապել են Արաքսից անցկացնել, Պարսկաստան տանել. գաղնան յորդացած գետը խեղգել է թէ զոհին և թէ գահիճներին։ Հարուածը սարսափելի էր, խեղն ու կրակ, ձեռներս ծոցերումն, տուն դարձանք, մնացինք կծկուած, ինչպէս մայրը կորցրած որբեր, սգացինք ու լոեցինք։

Ուշ իմացայ, որ խեղճ Գասպարը սիրում էր քրոջս, որ նրանք իրար խօսք էին տուել վաղուց. որա համար էր, որ խեղճ ընկերս այդ ծանր կորստից յետոյ այրւում փոթոթւում էր ինչպէս բոցերի մէջ։ Այն օրից, երբ յայտնի եղաւ քրոջս անյայտանալը և վերջում՝ մահը, Գասպարն էլ ոչ գիշերը քուն ունէր, ոչ ցերեկը հանգիստ։ Ես էի զրկուել իմ միակ քրոջից, էլի ես էի ստիպուած նրան հանգստացնել. արտասում էր երեխայի պէս և անդադար թափառում էր սար ու ձոր։ Վերջ ի վերջոյ, երբ մի փոքր հանգստացաւ, լոեց ինչ-

պէս համր, օրերով մի հատ բառ չէր արտասանի, միայն թափառում էր այն տեղերը, որտեղից քոյրս երբ և իցէ անցել էր, և ժամերով մնում էր քարացած մի և նոյն տեղում: Ուշ աշուն էր, որ նա մի օր ինձ առաց.

—Ես գնում եմ; Աթօ:

—Ո՞ւր, Գասպար, հարցըի ես զարմացած:

—Ո՞ւր, նա մնաց մի փոքր լուռ:

—Գնում եմ գրողի ծոցը, փախչում եմ մեր վէրանից, հոգիս փոթոթում է, ել չեմ կարող մնալ, որ էլի մի քանի օր մնամ; ցաւից կը պատռուեմ. կ'երթամքանի առջևս ճանապարհ կայ:

—Ղարիբութիւն:

—Հա, զարիբութիւն:

—Ես էլ քեզ հետ, եղաւ իմ պատասխանը:

Եւ մենք ճանապարհ ընկանք: Եկանք, հասանք ձեր գիւղին: Մեզ ինչ, թէ ինչպիսի գիւղ էր, բաւական է, որ հայ-քրիստոնեայ լինէին, բաւական էր, որ մեր աւեր դարձած երկրից հեռու էր: Մի դռան առաջ կանգ առանք. փոյթներս չէր, թէ ում տունն էր, մի տաք անկիւն, մի սաքու լինէր, այդ էր ինդրածներս: Յուրա էր, իսկ մեր շորերը պատռու-պատառ երկար ճանապարհից. սարեր, ձորեր էինք անցել էլ...: Մտանք մի սաքու, կծկուեցինք, տաքայանք, ողորմի տուփնք տիւրոջ մեռեներին և սկսեցինք մեր սև օրի վրայ մտածել, մեր անելիքը որոշել: Զմեռը մի կերպ դռնէ դուռ գլուխ պահեցինք, գարնանը Գասպարը նախրապան եղաւ, իսկ ես դաշտերի պահապան:

Ամիսներ ու տարիներ անցան, և մենք սև օրով աշխատում էինք ամբողջ ցերեկը, իսկ գիշերները մի տեղ, մի սաքւում, մի տան բակում; մի կտրան մերկ ցնցոտիների մէջ կծկում էինք, քնում միասին: Գասպարը մնաց միշտ լուռ, միշտ տխուր, սիրալ կոտրուած. երբեմն-երբեմն մի երկար «ալ» կամ «օօֆ» կ'անէր և յետոյ կը լուէր անվերջ: Ես էլ կոպէկ-կոպէկ հաւաքում էի, միաքս էր տան-տեղի, թոնիր-օջաղի տէր լինել:

Այս, այնպէս էի ձանձրացել ուրիշի դռներից, ուրիշի սաքուից, ուրիշի թսնրան շրթից, փշանքից, շան կեանք էր, շան կեանք։ Այնպէս ուզում էի ունենալ իմ սեփական տունը, իմ սեփական բունը, ուզում էի ես էլ աշխարհի պէս կնոջ, երեխայի տէր լինել, առիք սեւացնելը։ Այն ժամանակ խօմ կարող եմ խեղճ Դասպարին էլ մի անկիւն տալ, մտածում էի ես, մի գլուխ գնելու տեղ պատրաստել, որ ներս մտնի առանց կարմը-րելու. յետոյ միասին կ'ապրենք սիրով. լաւ չենք ապրի, վաս կ'ապրենք, բայց մեր յարկի տակ կը լինենք, միասին կ'աշխատենք, միասին կ'ուտենք։ Նա ինձանից էլ չի բաժանուի. ուր գնար իր նշանածի կորստից յետոյ, ով գիտէ, մէկ էլ նրա մոքովն անցնի պսակուել, թէ ոչ. այն մարդկանցից չէր, որոնց սրտում ցաւը մեռնում է ժամանակի հետ, նրա սիրով գեռ միում էր, ինչպէս չը մարած հրդեհ, որի բարակ ծուխը բարձրանում է հայ բարձրանում աւերակների միջից։

Ես խեղճ էի, աղքատ, անտուն, բայց սիրտն ինչ կը հարցնի ակքատութիւն. մի օր գաշտում մի աղջիկ տեսայ, սիրուն էր, սիրտս կպաւ, չէ որ ես էլ ջահէլ էր, ես էլ սիրոյ կարօտ։ Միտք արեցի, որոշեցի գլուխս սարով-քարով տամ, նրան առնեմ։ Սրա համար էի չարչարում, սրա համար էի արիւն քրտինք թափում և հաւաքում էի աշխատանքս։ Տուն ու օջաղը բոլորը միացան այն աղջկայ մէջ։

Անունը չեմ ասի, նա գեռ կենդանի է, մի ընտառնիքի մայր, համարեցէք Ռեհան։ Մի օր էլ պատահեցի Ռեհանին գաշտում, ազքով արեցի՝ ծիծաղեց, մի ուրիշ անգամ էլ ճար գտայ, սիրտ արեցի, մօտեցայ, խօսեցինք, քաղցր բաներ առացինք իրար, յետոյ մի օր էլ մի ընծայ տուի՝ առաւ, խօսք տուինք իրար, մենք նշանուած էինք։ Աղքատ աղջիկ էր, ունէր-չունէր մի պառաւ մայր, նրա համաձայնութիւնն էլ առանք, ուրախութիւնս անչափ էր, իսկ Դասպարը՝ լաւ յիշում եմ, այդ առթիւ ժապտաց։

Երկար նշանուած մնացի. Երկու տարի հաւաքում էի, հաւաքում, բան չեր դուրս դալիս. քանի տարի պիտի աշխատէի, որ գոնէ մի հարիւր ուուրլի հաւաքէի հարսանիքի ծախքի համար, նշանածիս իմ դրամով գոնէ մի շոր առնելու. խօմ չէի կարող հէնց այնպէս գնալ ձեռքից բանել տանել. երանի չէր, որ այդպէս հեշտ լինէր, հարսանիքը աղքատին պատիժ է զրուած: Երբ բեմն այնպէս էի յուսահասուում, որ լացս էր դալիս, բայց երբ գնում էի նշանածիս տեսմում, երբ նա մի երկու քաջալերող խօսք էր ասում, տմեն բան մոռանում էի, կրկին սիրտ առնում և կրկին վերակառում աշխատանքս նոր եռանդով. դուք չը գիտէք, թէ մի սիրած աղջիկ մարդու ինչեր անել կը տայ: Եւ Ռեհանը սպասում էր:

Քանի տեղ փոխեցի, քանի տուն մոռայ այնուհետեւ, քանի տեսակ պարապմունք դտայ: Երբեմն աների մշակ էի, մշջքիս այծի մորթի կապած, առաւօտից երեկոյ դոմում անսասունների աղքի մշջ չարչարւում էի և ամբողջ ձմեռուան վարձս էր 5—6—10 ուուրլի. Երբեմն բանուոր էի, օրավարձով աշխատում էի սրա նրա այդում, արտում, շինութեան վրայ, երբեմն էլ պարապ էի մնում և աշխատածս ծախսում, էլի մնում ձեռքերս դատարկ: Վերջ ի վերջոյ մի տարով վարձուեցի հօտաղ Զուհակենց Աէփօի տանը: Ողորմի իրան, վաղուց է մեռել, կինն էլ մարդու գնաց, տունը «բրիշակ» եղաւ պրծաւ:

Սէփօն մենակ մարդ էր, մի լուծ եղն ունէր և մի արօր, որ ինձ յանձնեց: Աշխատում էի և մտածում, թէ ինչպէս անեմ, որ հարսանիքիս ծախսը լրացնեմ: Երեք տարին շուտով կը բոլորէր և խեղճ Ռեհանն սպասում էր: Ամառ էր, ցերեկն անտառունների հետ էի, խոկ գիշերները գնում էի Սէփօի բօստանը պահապանելու, ինչպէս այժմ: Դասպարն էլ նախիքը դաշտից տուն էր բերում և դալիս ինձ հետ միասն գիշերում բօստանում: Երկու անբաժան որբերի պէս էինք: Դիշերնե-

ըլ ես պատմում էի նրան իմ սէրն ու վիշտը, գանդատւում էի, որ չեմ կարողանում ծայրը ծայրին հասցնել, պէտք եղած դրամը պատրաստել, նա, ըստ իր սովորականին, լուսմ էր, մի երկար «օճֆ» անում և վերջում կամացուկ աւելացնում:

—Աստուած ողորմած է, ախափէր:

Ի՞նչ էր միտքը, ինչ ծրագիր ունէր, իր վաստակած դրամն ինչ էր անում, և մնի էր պահ տալիս, կամ ունէր դրամ արդեօք, թէ թողնում էր սրա նրա մօտ առանց երբէք յետ ստանալու։ Ես չը գիտէի, երբ ակնարկում էի, նա հանդարտութեամբ խօսքը փոխում էր և այնուհետեւ անվերջ լուսմ։ Ես ցաւում էի ոչ միայն ինձ համար, ոչ միայն Ռեհանի սիրուն, այլ և այս խեղճ ու կրակ Դասպարի համար, որին կ'ուզէի գոներից ազատել, մի փոքր խնամել։ Ես գիտէի, թէ որդքան անճար ու բարի է նա, ես գիտէի, որ շատերը ծածուկ նրա բարութիւնից օգտառում են, և նա ինձ չէ յայտնում, ես համոզուած էի, որ նրա վաստակը կորչում է այս ու այն կողմից բայց ի՞նչ կարող էի անել, երբ նա լուսմ էր, կամ միայն «ախ, օճֆ» անում։ Իսկ երբ գիտուածով իմանում էի, որ այս կամ այն անձը նրա պահ տուած դրամը կերել է, վրդովում, բարկանում էի իր թուլութեան վրայ, նա նայում էր ինձ հեղ ացքերի տիտով հայեացքով, ուր այնքան սէր և գութ կար, ապա ասում էր մեղմութեամբ։

—Ի՞նչ ես նեղանում, ախափէր, երեի չունեն որ չեն տալիս, չկալութեան երեսը ու, ես ու դու խօմ լաւ գիտենք, թէ ինչ է չկալութիւնը, ինչ անենք, թէ չեն տայ, Աստուած իրանց հետ, օճֆ։

Կերակրում էր ցամաք հացով, որ ամեն առաւօտ մէջըին կտպած դաշտ էր տանում, քայլելիս մրջիւն կոխ չէր տայ, անասուններին չէր ծեծի, բերած հացը այս ու այն քաղցած հօտազի կամ անցորդի հետ կը կիսէր։ Նրա միակ միսիթարութիւնը իր չիրուխն էր, որ կաւից էր շինում, արեի առաջ չորացնում և նրանով անվերջ

ծխումն Երեկոյեան «ախ» ու «օճֆ» անելով անասունները հաւաքում էր, գիւղ բերում և յետոյ գալիս էր բռատան ինձ հետ միասին գիշերելու։ Ես, ըստ իմ սովորութեան, դարձեալ սկսում էի տրտնջալ մեր կեանքից, մեր բախտից, մեր ու զարիբութիւնից, իսկ նա էլ, ըստ իր սովորութեան, լուռ լսում էր, մի «ախ» անում և լուռմէ Այսպէս անցան տարիներ. վերջին Երեք տարիներին ես նշանուած էի և հազիւ հաւաքել էի յիսուն ոռուբլի։

Մի անգամ Ռեհանին տեսնելու գնացի. մօր քիթը կախ էր, նա ինձ ընդունեց պաղ Երեսով, խօսքերը ծամծում էր, վերջ ի վերջոյ ասաց՝ որ ինքն այդքան երկար չէ կարող սպասել, որ անխիղճ բան է իմ կողմից ջահելի ոտքը կապած պահել Երեք տարի, որ ինքն ամաչում է դուրս գուրս հանել հարևանների մէջ, զատ են խօսում, և թէ... այստեղ նա աւելի ցածրացրեց ձայնն ու յայտնեց, որ Ռեհանին ուզող կայ։

Ինչպէս սիրոս դանակ խրէին, վերջին խօսքերը կայծակի պէս ճայթեցին գլխիս. Ռեհանին ուզող կայ... ես այդ ամենեւին չէի մտածել, վաղուց էի սովորել նրան միանդամայն իմը համարել և մտքովս անգամ չէր անցնում, թէ մի օր մի մարդ կը յայտնուի և իմ Երեք տարուայ նշանածի ձեռքը կը խնդրի։ Սուտ էր ասում պառաւը, թէ ճշմարիտ, այդ ես չը գիտեմ; բայց ես բոլորովին հաւատացի, զայրացած նրան նայեցի ակամայ բռունցքներս սղմած, վեր կացայ և առանց մի բառ արտասանելու դուրս գնացի։

Ճանապարհին մենակ մտածելով՝ համոզուեցի, որ պառաւն իրաւունք ունէր, որ ես յանցաւոր եմ, և յատկապէս այն պատճառով՝ որ ես թշուառ եմ ու աղքատ։ Մտածում էի մտածում և խելքս բանի չէր հասնում, պակասում էր յիսուն ոռուի, քիչ փող չէր, յիսուն ոռուլի՛... որտեղից ճարել, ումից խնդրել, ումից պարտք վերցնել։ Գասպարը չունէր, ես այդ լաւ գիտէի, նրա վաստակածը սրան նրան էր բաժին ընկել. կամ ունենար էլ, ես ինչպէս նրա դառն քրտինքի փողով իմ հարսաւ

Նիքն անէիւ Խոչ պէտք էր անել. դժոխային գիշեր
անց կացրիւ Դասպարին ոչինչ չասացի. մտածում էի,
թէ մենակ պէտք էր ճար գտնել:

Յաջորդ օրը արօրով գաշտ գնացի ըստ սովորակա-
նին և երեկոյեան տուն դարձայ միայն մի եզրվ. միւսք
հէնց լծան տակ յանկարծամահ եղաւ. Սէփօն ու իր
կինը ծնկներին, գլխին տուին, բայց արդէն ուշ էր:
Աշնան սկիզբն էր, վար ու ցանքի ժամանակ, լուծը գե-
տին մնալը տնաքանդութիւն էր: Մրանց ցաւն իմից մեծ
եղաւ: Մարդ ու կին նստեցին, մի փոքր ալս ու վախ-
արին, մի փոքր վշվացին, յետոյ ճարները կտրած հան-
գստացան և ուստեցին խորհուրդ անել:

—Վաղն երթամ պարտք անեմ, ասաց Սէփօն:

Պարտքի անունից կինը կարծես դողն ընկաւ:

—Ամնն չէ, էլ չենք աղատուի, մարդ, ասաց նա.
Երեխաներս էլ ծախենք, չենք աղատուի. պարտքի տէ-
րը մեռնի, հաղար գլխանի վիշապ է. չէ, պարտքը թռղ,
մու գլխիս ոսկիները, տար ծախիր. թռղ մեր ամօթը
մեր երեսը մնայ, թռղ մեր դոնից կանչող չը լինի:

Երկու օրից յետոյ ոսկիները ծախուած էին, և Սէ-
փօն առւն բերեց յիսուն ոուբլին:

Մի առաւօս էր, լաւ յիշում եմ, ինչպէս այսօր,
Սէփօն բակլ մտաւ, ինձ տեսաւ:

—Տես, Ամիօ, ասաց, փողը բերի. նա ցոյց առւեց
թղթի մէջ երկուք քսանը հինգ ոուբլիանաց. դէ, որդի, գնա-
ն... դիւղը. ասում են նաւօն եղ ունի, դու լաւ եղ
ճանաշում ես. տես, արի լուր բեր, գնանք առնենք:

Ասաց, առաջ անցաւ գէպի տան գուռը, և աննկա-
տելի կերպով թղթի միջից փողն ընկաւ գետին, իսկ
ինքն առանց այդ խմանալու ներս մտաւ: Ես շտապով
վեր թւցրի. հէնց ուզում էի ձայն տամ, իրան յանձ-
նեմ, որ յանկարծ կարծես մէկը կոկորդս սզմեց. ձայնս
դուրս չեկաւ, լեզուս պապանձուեց, և ականջումն պարզ
ու որոշ հնչուեց զսքանչիս ձայնը — «Ոեհանին ուզող

կայ»։ Ես նշանուած եմ, մտածեցի, դրամը գրպանս դրի,
ըշտապով դուրս եկայ և դէպի Խ... դիւղը դիմեցի։

Առաջին անդամ իմ կեանքում ես գողացայ. Ես
այժմ գող էի։ Ոտներս գողում էին, չնչառութիւնս
կտրուում էր նեղ փողոցներում, ուստի շտապշտապ դիւ-
զից դուրս եկայ լայնարձակ դաշտ. այստեղ կանգ ա-
ռայ և մի քանի անգամ լիրը կրծքով շունչ առայ։ Յե-
տևիցս մէկը վազէվազ դալիս էր, երևի Սէփօն է,
մտածեցի և երկիւղով յետ նայեցի... ոչ ոք չը կար.
ինձ թուացել էր միայն։ Կամացուկ հանեցի դրալանիցո
թղթադրաները, նայեցի վրան սիրով.—դա իմ նշանածն
էր, իմ տունն էր, իմ օջախն էր. յիշում եմ, ժպտացի
էլ, ապա խնամքով ծալեցի և գրպանս դրի։ Բայց ոտ-
ներս գողում էին դեռ, սիրոս թրթուում էր, և այդ-
քանն ինձ զայրացնում էր. պէտք էր խլացնել նրա ձայ-
նը։ Սկսեցի մրմուալ մի երդ։ Զեղ չի պատահել ձեր ե-
րեխայ ժամանակ միայնութեան և խաւարի մէջ երդել,
որ չը լսէք անակնկալ և երկիւղալի ձայներ. ճիշտ այդ-
պէս, ես երգում էի սրտիս ձայնը խեղդելու համար,
երդում էի և քայլում։ Թրթոոցը սակայն չէր կտրուում.
այն միաքը, թէ ես երգում եմ, որ չը լսեմ սրտիս ձայ-
նը՝ ինձանից չէր հեռանում եւ ես աւելի վատ էի ըդ-
դում ինձ, ուստի որոշեցի լուել. բայց սաստիկ բարկա-
ցած էի, ում դէմ, չը դիտեմ, կարծեմ իմ ձայնի դէմ.
որովհետեւ նա գողգողում էր և անախորժ էր հնչում.
իմ երդի դէմ, իմ սրտի դէմ, ամեն բանի դէմ, ինչ որ
պատահում էր, ինչ տեսնում էի։

Ամենից աւելի ինձ զայրացնում էր մի կաչաղակ. նա
նստել էր մի այգու ցանկապատի վրայ, իր անախորժ ձայ-
նով անդապար կշկում էր և ցատկոտում դէս ու դէն։
ինձ թուաց, թէ նա ճիշտ իմ ձայնի պէս ձայն էր հա-
նում ինձ ծաղրելու համար. իսկ պոչը խօմ անտանելի
էր. ես երբէք չի տեսել, որ կաչաղակները այնպէս
անպիտան ձևով պոչները շարժեն. կարծես այդ կաչա-
ղակն իմ ջիդրու էր այդպէս խաղացնում իր պոչը։ Ես

Էլ մի քար վերցրի, կատաղաբար նետեցի դէպի նրան.
Նա մի սուր ծիչ հանեց և անյայտացաւ. ես հայհոյեցի
և շարունակեցի ճանապարհու Մի փոքր այն կողմը՝ ճա-
նապարհի վրայ մրջիւնի բոյն կար, շուրջը վիտում էին
մրջիւնները, աշխատում էին. ես կանգ առայ, նայում
էի, ըստ երեսյթին խաղաղ։ Մի խումը մրջիւններ միա-
բանուած քաշ էին տալիս մի ահագին բգէզ, երեկի վի-
րաւոր, որովհետեւ թրպրտում էր և ազատուել չէր կա-
րողանում։ Այս տեսարանն էլ ինձ բարկացրեց. բգէդի
վրայ բարկացայ արգեօք, որ անզօր էր փրկուելու, թէ
մրջիւնների, չեմ յիշում, միայն ոտքով տրորեցի և՛ բը-
զէղին, և՛ մրջիւններին. դրանով էլ կշացած՝ կարծես
չարկք գործելու ծարաւս մեծացաւ. ես սկսեցի ան-
գթօրէն տրորել բոլոր մրջիւններին, ապա փայտի ծայ-
րով քանդեցի նրանց բունը արագ-արագ, դուրս թա-
փեցի նրանց ձուանները և նոյնպէս տրորեցի անիմայ.
մի կատարեալ աւեր ու կոտորած։ Մի բոպէ ես այն-
պէս էի տարուել իմ այս անդուժ աշխատանքով, որ
մոռացայ նոյն իսկ, թէ Խ... գիւղը պիտի գնամ. լաւ
որ գիապուածով ձեռքս գրապանս տարայ, դրամը շօշա-
փեցի, յետ քաշեցի թափով, հեռու փախայ մրջիւնների
աւերակ բնից, գլուխս բռնեցի և մի փոքր միոք արի.
ես գաղան էի դարձել։ Նորէն առաջուայ դողը վերըս-
կուեց, որ քիչ առաջ կտրուել էր, երբ ինքս ինձ մո-
ռացած՝ աւերում էի մրջիւնների բոյնը։ Ճանապարհու
շարունակեցի։

Մի մարդ էր անցնում ճանապարհով, մի ողորմելի,
գզգուած մուրացկան։ Նա կամ սաստիկ յոդնած էր,
կամ հիւանդ, որովհետեւ հազիւ քայլում էր, յենուելով
երկու գաւաղանի վրայ։ Ունեցած չունեցածը մի մա-
շուած պարկ էր, որի մէջ մի քիչ բան կար և որ նա
կրում էր ուսին։ Ո՞րտեղից էր գալիս և ուր էր գնում,
ով գիտէ. այդպիսինները որոշ տեղ չունեն, նրանք ան-
տուն թափառականներ են։ Զարմանալի չէ, այս խղճա-
լի մուրացկանն ինձ ամենից շատ զայրացրեց. դու իմ

խեղճութիւնն էր, որ ցցւում էր առաջիս. ինձ թւում էր, թէ նա դիտմամբ յայտնուեց իմ առաջ, և ես առանց ճանաչելու դեռ հեռութից նրան ատում էի: Վերջապէս մենք հասանկ իրար:

— Բարեւ, ախալէր, ասաց. Ե... գիւղի ճանապարհն այս է:

Ես կանգ առայ, ոտքից գլուխ նայեցի մարդուն և թողեցի անսպատասխանն երեւ տեսքս լաւ չէր, որովհետեւ նա շտապեց հեռանալ, ոտներին ոյժ տուեց և մի քանի անգամ յետշետ նայեց երկիւղով գէսլի ինձ: Իրաւունք ունէր վախենալու, յիրաւի, երբ նա առաջս էր, ես առանձին չար ցանկութիւն էի զգում խէլ նրա պարկը, ուր երեւ մի քանի կտոր հաց կար դռներից հաւաքած, ցրիւ տալ դաշտում, իրան էլ մի պինդ քացիւ տալ. լաւ որ շուտ հեռացաւ, ես էլ զսպեցի ինձ ու անցայ:

Ճանապարհո անցնում էր հէնց այն արտի մօտով, ուր ընկած էր մեռած եղլ: Հեռութից երեսում էր դիակը, ուռած, ահագին, ոտներն օդի մէջ ցցուած զգուելի ձեռով. մի խումբ ցիններ և մի շուն քաշքշում էին նրա մսի կտորները: Ես մի տարօրինակ ցանկութիւն զգացի դնալ մէկ էլ աեմնել խեղճ կենդանուն: Քանի մեռած չէր, ես գէսլի նրան ոչինչ չէի զգացել, իսկ այժմ... այդ ուրիշ բան էր. այդ հոտած, այլանդակուած դիակի և իմ մէջ մեծ կապ կար. ախր նա որ չը մեռնէր, ես յիսուն ուուբլին որտեղից կը ճարէի: Յետոյ ես շատ մտածեցի և չը կարողացայ հասկանալ, թէ այդ եղլ ինձ համար մեռաւ, թէ հէնց այնպէս, քէֆն ուղեց՝ մեռաւ: Մի բոպէ դլառիս անցաւ, թէ ով դիտէ, Աստուած ինձ խղճաց, դրա համար եղլ յանկածամահ եղաւ, ապա մարդու բախտը ինչպէս է կտրում: յետոյ մտածեցի: — ինձ համար լաւ եղաւ, իսկ Մէփճն... դէ նրան էլի Աստուած կը հասցնէ մի ուրիշ տեղից: Լաւ միտք էր, ինքս ինձ միմիթարեցի, սիրտ տուի, մի քիչ հանդստացայ: Մօտեցայ դիակին, ցիները փախան, իսկ

շունը ատամները ցոյց տուեց, թշնամաբար մռռաց: Վախտ, քոսոտ շուն էր, անշուշտ անտէր ու թափառական. երեխ խեղճը վաղուց միս չէր տեսել և կարծում էր, թէ ես խլելու եմ եկել:

Վերջապէս Խ... դիւզը հասայ, պէտք եղած եզը տեսայ: Վերագարձիս նախ տարայ դողացածս դրամը թաքցրի մեր մարադում և ապա գնացի տուն, յայտնեցի ճանապարհորդութեանս յաջող արդիւնքը: Սէփօն ուրախացաւ, ներս գնաց դրամը վերցնի, որ գնանք նոր եզը գնենք, և յանկարծ ծնկներին խփելով՝ գժի պէս դուրս թռաւ և սկսեց բակում պայոյտներ դործել, այս ու այն առարկան բռնել, շարժել, թափ տալ, առանց հասկանալու՝ թէ ինչ է անում, միայն շարունակ ճշշում էր.

—Եզը տարան, եզը տարան...

—Ի՞նչ եզ, այ մարդ, ով տարաւ, ճշաց սարսափած կինը, բռնելով նրա ձեռքը:

—Եղն էլին, եզան փողը, փողը, փողը տարան, տունս քանդեցին, փողը չը կայ: Յիշում եմ, ես ուզում էի մէջ խառնուել, մի բան ասել, բայց բերանս փակուեց, ատամներս իրար վրայ սզմուեցին, ոտներիս դողը սաստկացաւ և հաղիւ յենուեցի սրահի սեանը, մինչ գեռ մարդ ու կին իրար ձեռքից բռնած, իրար քաշքշելով՝ վազվզում էին պատի այս ու այն կողմը, յետոյ հարբածի պէս կրկին ներս մտան տուն, ես էլ հետեւեցի նրանց: Իրար միջոց չը տալով՝ նրանք խառնեցին ոլնդուկը, դուրս թափեցին ինչ որ կար.—Փողը չը կար ու չը կար. թուզթն այնտեղ էր, որի մէջ փողը փաթաթուած էր, իսկ յիսուն ոուրլին չը կար: Տասն անգամ մի և նոյն թղթի կտորը մարդ ու կին փոխ առփոխ վերցրին, ծալքերը բացին նայեցին, դետին ձգեցին, տասն անգամ խառնեցին իրանց գրպանները, իրանք էլ չիմանալով թէ ինչու, ապա վեր թռան միասին և սկսեցին անկողինների ծալքը քանդել, տունը տակին ու վրայ արին, մինչդեռ Սէփօն լաւ յի-

շում էր, որ դրել էր սնդուկում։ Դրամը չը կար։ Տունը գարձաւ յատուկ մեռելատուն։ կինը արտասում էր, գովք էր ասում՝ ինչպէս երեխաները կորցրած մայր, իոկ Սէփօն կրկն դուրս թռաւ բակը և վշվալով ման էր գալիս, ձեռները արորում, վերջը կծկուեց մի պատի տակ։

Երեք անդամ պատրաստուեցի ստներն ընկնել, խոստովանել գործած յանցանքս, թողութիւն խնդրել արտասուելով, յետ տալ փողը, և երեք անդամ էլ պարզ որոշ լսեցի ականջումն միւնոյն ձայնը。—«Գիտե՞ս, Աթօ, Ռեհանին ուզող կայ»։ Երկինք, գետինք, այդ անիծուած ձայնը ես լսեցի՝ ինչպէս այժմ խօսում եմ. լսեցի՝ և բերանս փակուեց, լսեցի խեղդուած։ Ռեհանին ուզող կար, փողը տալ կը լինէր... գողում էի, սարսափում էի արածիցս, բայց էլ աւելի սարսափում էի յայտնելուց։ Ի՞նչ օր քաշեցի. քիչ էր մնում խելքս կորցնէի և սկսէի բակում զազվել գոռալով, «Գողը ես եմ, գողը ես եմ»։ Սիրտ չէի անում ասել, բայց կ'ուզէի, որ մի կերպով բոնուեմ, որ մի մարդ տեսած լինի արածո, գայ, հաստատի. կ'ուզէի, որ ինձ բոնեն, խեղդեն, կտորկտոր անեն, տանջեն, լացացնեն, մանաւանդ լացացնեն. արցունքով գուցէ սիրտ թեթևանար, թէ չէ մեռնում էի, քիչ էր մնում տրաքուեմ։

—Աթօ, քո տունն աւերուի, Աթօ, փողը տարան. ախր խեղճ կնկաս «Երեսի ջուրն էր», այն էլ տարան, Աթօօ, ճար, հնար, ասաց Սէփօն տխուր ձայնով, որ մինչև սիրտ թափանցեց, ապա գլուխն առաւ երկու ձեռների մէջ և սկսեց հեկեկալ։

—Հա, տարան, Սէփօ ապէր, կրկնեցի ես գողգոշուն ձայնով. և ի՞նչ, ես՝ գողս, աւազակս, ոճրագործս լաց եղայ խեղճ Սէփօի հետ, լաց եղայ բարձրաձայն, գժի պէս, լաց եղայ ոչ Սէփօի, այլ ինձ համար, լաց եղայ իմ խեղճութեան համար, իմ թշուառութեան համար, լաց եղայ հոգւոյս տանջանքը թեթևացնելու համար, ներսս այրող կրակի վրայ մի քիչ արցունք ցանեւ-

լու համար. լաց եղայ իմ կորցրած խիզճը, որ այդ օրն առաջին անգամ գողութիւնով սևացրիւ եւ էլի սիրտ չարեցի ասելու, թէ ես եմ գողը:

Տեսել էր ձմեռ ժամանակ, թէ ինչպէս փոքրիկ երեխան ձնագունող ձեռքին բռնած, ցրտից կապում է, գողում, լաց է լինում, թէ ձեռը սառում է, օգնութիւն է խնդրում, դանդատաւում է թէ կապտեց, մեռաւ ցրտից, բայց ոչ մի կերպով յանձն չէ առնում դէն գցել ձնագունող, որ իր ցաւի աղբիւրն է. ճիշտ այդպէս էի և ես, ճիշտ այդպէս էի արտասում ես. տարբերութիւնն այն է միայն, որ խեզճ երեխան չէ ուզում հաւատալ, թէ ձիւնն է իրան մրսացնողը, իսկ ես շատ լաւ գիտէի, և շարունակում էի աբուասուել և դողալ-

0', դա մի զարմանալի բան էր Թշնամուս չեմ ուզի այդ օրը տեսնիւ:

Մարդու հոգին շատ խորն է, շատ խորը, ծնվ...

III

Ուրախացայ, երբ տնից կամացուկ գուրս գնացի. Ել չէի դողում այնպէս, արցունքն ինձ փրկեց, Դիւղից գուրս եկայ, երկար քայլեցի միայնակ, մտածեցի հաղարու մի բաներ և մի ժամանակ համարեա առանց իմանալու ինձ դտայ Ռեհանենց տան առաջ. Սի բոպէ մընացի լուռ, շուարած. մտածում էի մանել թէ ոչ Սաստիկ կ'ուզէի մանել, տեսնել, ասել նրան, որ դու իմն ես, որ քեզ ոչ ոք չէ կարող խլել ինձանից, բայց վախենում էի մատնել ինձ: Լաւ համարեցի յետ գառնալ և սպասել, մինչև փոթորիկն անցնի, մինչև Սէփօի փողի ձէն ու ձունը կտրուի գիւղից: Հէնց այդ բոպէին բակի դուռը բացուեց, Ռեհանը դուրս եկաւ, գնում էր ջրի. մայրը տանը չէր. եկեղեցի էր գնացել, երեկոյ էր. այլ ես հեռանալն անկարելի էր, ներս մտանք:

Ելք մնացինք մենակ՝ ես մի առ ժամանակ նայեցի նրան. գեռ երբէք նա այնպէս սիրուն չիր երեացել

ինձ, ես նայում էի այնպէս, որ կարծես աչքերով ուղում էի ուստել նրան. ապա յանկարծ մօտեցայ, դրկեցի նրան առաջին անգամ երեք տարուայ սիրոյ ընթացքում. աղջիկը չէր սպասում, այդ նրան զարմացրեց: Այդ դեռ քիչ էր. ես նրան այնպէս սղմեցի գրկիս մէջ, որ նա քիչ մնայ նուռադէր, և երկիւղով ու ցաւով էր նայում երեսիս, կարծես ուզում էր իմանալ, չեմ խելագարուել արդեօք, կամ որ և է չար միտք չունեմ: Դէմքս երեխ սարսափելի լինելու չափ տարօրինակ էր. նա ճիգ գործ գրեց գուրս ոլրծնել ու փախչել. իզուք, իմ երկաթէ բաղուկների մէջ նա թրփրտում էր ինչպէս ճնճղուկը բազէի ճիրանների մէջ, և ես սեղմում էի, սեղմում բոլոր ուժով, խեղդելու չափ: Երեք տարի կուտակուած սէրս, զգացմունքս, կարօտս յանկարծ մէկն գուրս թռաւ, իմ համբոյրները սարսափելի էին. ես աղահութեամբ ծծում էի նրա միուր աղիւն հանելու չափ և չէի կշտանում. ես կատադիլ էի, ինքս ինձ մոռացել էի, միայն գիտէի, որ մի բան կայ գրկիս մէջ, որ պէտք է սղմել, սղմել նրան, մինչեւ որ խողառ հալուի, լուծուի ինձ հետ, իմ մարմին հետ, որ էլ ոչ որ չը կարողանայ բաժանել ինձանից: Ապա ինձ թռուաց, որ ես երազի մէջ եմ: Որքան ժամանակ տևեց այդ երազը, ես չը գիտեմ, միայն ուշքի եկայ այն ժամանակ, երբ յանկարծ նրա հեկելոցն ականնշիս հասաւ, ինչպէս հեռու տեղից քամու բերած մի ողբի ձայն. իր անզօրութեան մէջ աղջիկն արտասում էր երեխայի պէս իմ գրկի մէջ. ես ցնցուեցի և յետ փախայ սարսափած, չնչակոուր, հեւալով:

—Ինչո՞ւ ես սպանում ինձ, անաստուած, ես խօսմ նրան չեմ առնում, հազիւ կարողացաւ ասել Ռեհանը արտասուզի միջից:

Խեղճ, նա կարծում էր, թէ ես եկել եմ նրան խեղճեմ, որ իմ հակառակորդին բաժին չը լինի. իսկ երեխ ես խեղճում էի նրան, որովհետեւ սիրում էի, որովհետեւ երեք տարի շարունակ այդ համբոյրի համար տանջուել,

չարչարուել էի ուրիշի գոներում, որովհետեւ նրա համար ոճիր էի գործել: Բոլոր կրածս զօհերի հաշիւն էի պահանջում: Ես մի գաղանի ալէս ախորժակով պատըռատում էի իմ որսը, որ բռնել էի մեծ գժուարութեամբ. կարծես վրէժինդիր էի լինում այդ աղջկանից, որ իմ թշուառութեան եւ իմ երջանկութեան աղքիւրն էր միաժամանակ. նա մի բաժակ էր ինձ համար՝ մեղրով եւ թոյնով լցուած. Ես խմում էի մեղրը, ծծում էի քաղցրութիւնը մինչեւ յատակի թոյնին համելու: Յետոյ զդացի, որ ես կարող էի նրան խեղդել գրկիս մէջ, պատուտել միան ատամներովս, սարսափելի համբոյրովս. Եթէ չարտասուէր, չը ճշար՝ Ես կը խեղդէի նրան եւ կը մեռնէի ցաւից նրա սիրոյ համար. Նա իմ զօհն էր եւ իմ դահինը միաժամանակ, Ես զօհուում էի և զոհում միաժամանակ. չը դիտեմ թէ ես ինչ էի, սարսափելի բան էր:

—Դու միշտ իմն ես, Ռեհան ջան, այսուհետեւ ոչ ոք չէ կարող քեզ խէն ինձանից, ասացի ես հեւալով, եւ փորձեցի մօտենալ գունատ ու դողդողացող աղջկան. նա փախառ հեռու:

—Հա, քոնն եմ, որ խեղդես, անխիզն, ասաց նա հեռուից:

—Ռեհան, ներիք ինձ, Ես այսօր գժուել եմ, չը գիտես, բան կայ... էլ այսպէս չեմ լինի, Ռեհան... ձայնս խզուեց եւ ես հեկեկացի երեխայի ոլէս. նա էլ կրկին արտասուեց, մենք իրար փաթաթուեցինք: Այս անգամ ես մեղմով համբուրեցի նրա գունատ այտերը, եւ կամացուկ փախացի ականջում, կարծես վախենալով որ պատերը կը լուեն.

—Մեր հարսամնիքը շուտով կը լինի, այս ձմեռ. Փողը պատրաստ է:

—Ռուեզից:

—Լուռ, մի հարցրու. Ես ձեռքով փակեցի բերանը. կրկին առաջուայ կատաղութիւնը վրաս եկաւ, կրկին համբոյրներս կատաղի գարձան, բայց հենց այդ ըոպէին

դրսից ոտնաձայն լսուեց. ես թողի աղջկան և գուրս փախայ: Մայրն էր վերապառնում եկեղեցուց:

Տուն եկայ. հաւաքուել էին բազմաթիւ հարեւաններ. խօսքը գողութեան մասին էր: Խ՞նչ ասել կ'ուզէ, որ ոչ ոք իմ վրայ մազի չափ անդամ կասկած չէր տանում: Նախ՝ որ իմ կեանքը եղել էր միշտ օրինակելի, անրիծ. երկրորդ՝ եթէ անցեալում կասկածելի բարք էլ ունեցած լինէի՝ գոնէ այս անդամ ես պիտի ազատ լինէի որ և է մեղադրանքից, որովհետեւ գողութիւնը կատարուած բռալէին՝ Սէփօի իսկ վկայութեամբ, ես տանից և գիւղից բացակայ էի, գնացած լինելով Խ... գիւղը. և յիրաւի գնոցել էի:

—Երկինք, գետինք, ասում էր Սէփօն. այնպէս եմ յիշում, ինչպէս իմ այս չորս մատը, այս կատած ձեռքովս տարայ մեր անտէր մնդուկի մէջ դրի. երկու քըսանքհինդանոց, թղթի մէջ փաթաթած:

—Սէփօ, ասաց ուսը, գուցէ ճանապարհին թղթի միջից ձգել ես և թուղթը միայն տարել, դրել մնդուկը:

Այս հարցը փանգաւոր էր. իմ ոտները նորէն գուզացին, սիրա կրկին թրպրտալ սկսեց և ձեռքովս սրդմեցի կուրծքս. ինձ թւում էր, որ բոլորն էլ լսում են այդ թրթուցի ձայնը: Լաւ որ մուժ էր, թէ չէ կը տեսնէին, թէ ինչպէս գունատուեցիր:

—Զէ, տանուտէր, քո ոտին մեռնեմ, չէ. տուն բերի. Աթօն տանն էր, բաց արի, ցոյց տուի, այնպէս չէ, Աթօ, դարձաւ նա գէպի ինձ:

Նրա հետ միասին ամենքն ինձ նայեցին. գոզս կրկնապատկուեց, ատամներս կը կին փակուեցին և կարծեմ պէտք եղածից մի փոքր ուշ հաղիւ կարողացայ երկու բառ թոժովել.

—Աչքովս տեսայ... Դարձեալ խաւարն օդնեց, յուղմունքս չը նկատեցին:

—Ցոյց տուեցի Աթօին, շարունակեց Սէփօն, յետոյ նրան ուղարկեցի՝ որ գնայ Խ... եղը տեսնի, ես էլ փողը կրկին փաթաթեցի թղթի մէջ և տարայ իմ ձեռքով

գրեցի մնդուկը։ Աթօն դարձաւ լուր բերեց. գնացի որ փողերը վերցնեմ, գնանք եզն առնենք—փողը չը կայ ու չը կայ։ Թուղթը թողել են և փողը տարել. հայ գէս, հայ գէն, մնդուկն ու տունը տակն ու վրայ արինք, ել անկիւն չը թողինք, ել աման չը թողինք՝ իրար տուինք. չը կայ ու չը կայ. փող գրել ես, արի տար, ծարան, ինձ թողին վիզո ծուռ, ձեռու ծոցու։

—Տանու մարդ է, ախալէր, տանու մարդ, վճռեցին հարեւաններն այս ու այն կողմից. իսկական դողը դիշերը կը գար, պատը կը ծակէր, դուռը կը կոտրէր, կողպէքը կը բանար, թալան կ'անէր, և ոչ թէ օրը ցերեկով կ'երթար մնդուկից միմիայն փողը կը հանէր։

—Մեզնից մէկն է, հարեւաններից մէկն է, ասացին ուրիշները. ով գիտէ, գուցէ հէնց այս բոպէիս մեր մէջ նստած է, մեզ հետ խօսում է։ Ով և լինի՝ թնդ գոնէ իր Աստուծուց վախենայ, թէ խզճից չէ վախենում, թնդ բերի յետ տայ. թնդ էն խեղճ կնկայ արցունքին խնայի, թնդ էս մարդու երեխաների հացը չը կտրի. աշունը է, վար ու ցանքի ժամանակ է, լուծը գետինն է մնացել, արտն՝ անվարել, սերմն՝ անցանել. թնդ հէնց վարձք համարի բերի տայ։

Այսպէս էին խօսում երկար, որ գողի սիրտը փափկացնեն, նրան համոցեն։ Շատ բաներ ասացին, վերջ է վերջոյ սկսեցին իրար հաւատացնել, թէ գողը տանու մարդ է, այսինքն մօտիկ հարեւաններից մէկն է, որ ճանաչում է Սէփօի տան ել ու մուտքը, որ գողը շատ էլ անխիզն, ըարասիրու մարդ չէ. մի բան է՝ արել է, մի վատ գործ ձեռքից պրծել է, սատանային ականչ է դրել. իսկ այժմ արդէն փոշմանել է, Սէփօին ու կընկան խզճում է, որ ուզում է փողը վերագարձնել, բայց ամաչում է, չը գիտէ, ինչ հնարսվ բերի յետ տայ, որ իր ով լինելը չիմացուի՝ թէ իր խեղճը փրկի, թէ իր անունն անարատ մնայ։

—Հեշտ բան չէ գող անունը, հանաք մի կարծէք, ասում էր ուշող. ասենք թէ ես եմ գողացել. շատ էլ

փոշմանել եմ, ուզում եմ յետ տալ, ի՞նչպէս վեր կենամ առեմ, թէ ես եմ գողացել, ես դող եմ, փողը բերել եմ դէ տա՞՝ մարդ առաջուց գերեզմանը փորի. էլ ապրել կը լինի:

— Իրաւ, իրաւ գժուար քան է, ասացին այս ու այն կողմից:

Սկսեցին մտածել, թէ ինչ հնար գտնեն, որ գողը բերի յետ տայ փողը առանց յայտնուելու, առանց ամաչելու: Երկար մտածեցին և հնարը գտան, մի զարմանալի խելացի հնար: Որոշեցին որ իւրաքանչիւր հարեւան, մեծ թէ փոքր, մարդ թէ կին, մի քիչ հող ածի փէշը, բարձրանայ Սէփօենց կտուրը եւ նրանց երդիկից ներս թափէ տունը: Ներառում մարդ չի լինի, գուռը կը փակեն և բանալին կը յանձնեն տէրտէրին. գողացողն այսպիսով համարձակ կարող է հողի հետ ներս ձգել փողը, եւ ոչ ոք չի իմանայ, թէ ով ձգեց: Երբ ամենին էլ իրանց հողն ածեն վերջացնեն՝ տանտէրը, տէրտէրն ու ռէսը ներս կ'երթան եւ հողը կը քանդեն, կը նայեն, փող գտնելը գժուար չի լինի: Բայց որպէս զի գողին միջոց տան մի փոքր իր խղճի հետ հաշիւ տեսնելու, որպէս զի նա հնար ունենայ փողը թագցրած տեղից հանել բերել՝ ամենին էլ բաշուեցին իրանց տներն այդ երեկոյ, որ յաջորդ երեկոյ մթնով հաւաքուեն և փորձն անեն: Ես մինչև այժմ էլ չեմ հասկացել, թէ ինչու էլն կարծում, թէ գողը կը բերի փողը յետ կը դցի. խորհուրդ առաջը երեկի ինքը ցաւում էր Սէփօի վրայ, նրան թւում էր, թէ ինքը եթէ գողանար, կը բերէր յետ կը տար, ուստի հաւատում էր, թէ գողն էլ նոյնը կ'անէ:

Այդ գիշեր ես Գասպարին գանգատ չարի իմ բախտից, չը խօսեցի Ռեհանից և փորձեցի շուտ ընել. բայց անհանդիստ էի և երեկ տարօրինակ, որովհետեւ Գասպարը մի երկու անգամ լուռ երեսիս նայեց կասկածով, և երբ ես նրա հայեցքը բռնեցի՝ նա շտապով երեսը գարձրեց, որ չիմանամ, թէ ինձ է նայում. գոնէ ինձ այդպէս

թուաց։ Վերջապէս քննեցի. նա երբ քննեց՝ չը դիտեմ։ Լաւ չէր քունս. ամբողջ գիշեր երազների մէջ էի—կոխւ, կոտորած, դիմակ, արխին, լաց, իրար խառնուած՝ աչքիս առաջն էին։ Առաւոտեան Դասպարը դարձեալ մի քանի անդամ վրաս նայեց, այս անդամ աւելի կասկածով. ինձ թուաց նոյն իսկ, որ նա ուղեց մի բան ասել, բայց յետոյ զոտեց իրան, պատի մօտից փայտը վերցրեց և դուրս գնաց։ Ի՞նչ էր ուղում ասել արդեօք, չը լինի թէ ես քնիս մէջ խօսել եմ և ինձ մատնել, մտածեցի ես և սաստիկ վախեցայ. ստ շատ հաւանական էր, երազներս սարսափելի էին։ Ամբողջ օրն այդ միտքն ինձ չը թողեց. — ի՞նչ եմ խօսել արդեօք քնիս մէջ, Դասպարն ինչու էր այսպէս նայում ինձ. յետոյ որոշեցի, որ եթէ իմանար՝ կ'ասէր, երեւի ոչինչ չէ լսել։

Սրգէն մութ էր, երբ հարևանները կրկն հաւաքուեցին. Սէփօի տան դուռը փակեցին և բազմութիւնը մէկիկ-մէկիկ բարձրացաւ կտուրը, իւրագանչիւրը մի փոքր հող փէշն ածած։

— Մի ամաչէք, որդիք, ասաց տէրտէրը. մեզքից ազատուելը յանցանք չէ, մեզքի մէջ մնալն է յանցանք. այ, ես էլ հող կ'ածեմ Եւ իր երկար վերարկուի փէշի մէջ մի փոքր հող ածած, նա մօտեցաւ երգին, ընդհանուր ծիծաղի և շշնջոցի մէջ առաջինը թափեց հողը. նրան հետևեց ռէսը, ապա անմիջապէս մօտեցայ ես և թափեցի մի կոյտ հոգ։ Ի՞նչ ասել կ'ուղէ, որ դրամը չը գցեցի։ Բազմութիւնը շարունակում էր բարձրանալ և իջնել. ես մտքիս մէջ ե՛ տանջուում էի իմ արածի համար, և ծիծաղում էի ուրիշների արածի վրայ։ Ճիշտ որ ծիծաղելի էր. խեղճ Սէփօի տունը հողով լցուեց, բայց դեռ քանի մարդ կար։ Կէս գիշեր էր. ճարները կտրած, որոշեցին, որ բազմութեան մնացած մասը յաշնորդ երեկոյ ածէ, իսկ այժմ ներս մտնեն, հողը նայեն։ Այդպէս էլ արին։ Փողը չը կար, մնաց մի չնչին յոյս վաղուոյ համար. հարեանները ցրուեցին։ Յաջորդ երեկոյ առաջինը Գասպարը մօտեցաւ, իր հողն ածեց, նրան

հետևեցին միւսները. էլի տևեց մինչև ուշ գիշեր։ Վերջապէս բոլորն էլ իրանց պարտքը կատարեցին։ Տէրտէրը, տանուտէրը և Սէփօն ճրադ վառեցին, ներս գնացին։ Նրանք խնամքով դուռը փակեցին, և սկսեցին իրանց աշխատանքը։ Քիչ էր մեռմ ճշայի, թէ դուր էք այդքան խառնում, փող չը կայ այնտեղ, ես եմ պահել. և ճշմարիտ, երբեմն ինձ տարօրինակ էր թւում, որ ես այդշեմ ասում, որ թողնում եմ այսքան իրար անցնեն իզուր տեղը։ Էլի լռեցի, չէր ասում:

Երկար տևեց այդ աշխատանքը։ Բազմութիւնը դըրսում սպասում էր անհամինը, անհամգիստ ու հետաքրքիր. սա վերջին փորձն էր։ Ոմանք մօտենում էին, ականջները գնում դռան փակին և շունչները բռնած՝ աշխատում էին մի շշուկ, մի յուսատու խօսք լսել ներսից։

—Դանուեց, գանուեց, աչքերդ լոյս, յանկարծ լըսուեց տան ներսից. խօսողը, աչքալոյս տուողը ուշն էր։

Ես համոզուած էի, որ հանաք է անում, ծաղրում է։ Շատերի հետ ինքս էլ ժպտացի։ Դուրս եկան, երեքով էլ ժպտադէմ; ուրախ, գարձեալ աչքալոյս տուին բազմութեանը, իսկ տէրտէրը ամենայն լրջութեամբ օրհնում էր դողի բարի սիրտն ու ձեռքը։ Ես դարձեալ չը հաւատացի։ Սէփօն՝ առաջացաւ, ուղիղ յիսուն ուուբին նրա ձեռքումն էր. աչքովս տեսայ։

—Իսկ և իսկ այն փողերն են, այն քսանը ինդուրի առարկանոցները, ասաց նա, ահա, և նա ցոյց տուեց բազմութեանը. ով որ էր՝ շարունակեց նա, էլի ողորմի իր հօրը, թող Աստուած նրան ամենեին չար չը տայ. ինչ որ մեր գլուխը բերեց՝ թող նրան ամենեին չը պատահի։ Լացացրեց, լաւ լացացրեց մեզ, բայց լաւ էլ ուրախացրեց. ինձ այնպէս է թւում այժմ, թէ այն սատկած եզն էլ կենդանացաւ։

Բազմութիւնն ուրախուրախ ցրիւ եկաւ. Ամենքն այդ բոպէին մի և նոյն բանն էին մտածում; մի և նոյն բանն զգում. միայն ես էի անմասն ընդհանուրի ուրախու-

թեանը, միայն ես գժգոհ մնացի կատարուածից, միայն
ես էի տանջում ի ներքուստ, և չը գիտեմ ինչ էի
մտածում, միայն գիտեմ որ մտքերս լաւ չէին:

Ես գող էի:

IV

Ո՞վ դցեց գրամը. ո՞վ իր սեփական գրպանից այդ-
պիսի գումար զոհեց. ո՞վ է այդ գժոտ, աստուածավախ
մարդը, մտածում էի ես իմ տեղում քարացած կանգ-
նած՝ երբ բազմութիւնը կամաց-կամաց քաշում էր:
Ամեն մի հեռացող իր ուրախութեամբ, իր ծիծաղով,
իր խաղաղութեամբ տանում էր իր հետ իմ երջանկու-
թեան, իմ հանգստութեան վերջին մնացորդը, ինչպէս ե-
իմ ատելութիւնը. ես ատում էին ամենքին: Ես ամեն
բան սպասում էի գողութիւնից յետոյ. սպասում էի, որ
ո՞վ գիտէ ինչպէս՝ կարող են իմ յանցանքը բռնել. որ
գուցէ ես չեմ դիմանայ, կը յայտնեմ: որ մէկը տեսած
կը լինի ինձ մարագում փողը թագցնելիս. բայց որ մէկ
ուրիշ մարդ բերէր փողը տար խզճալով՝ այդ իմ մտքովն
անգամ չէր անցնում, և հէնց այդ անսպասելին էր, որ
ինձ սպանում էր: Յանկարծ մտքովս անցաւ, թէ մի
գուցէ ինձանից մի աւելի ճարպիկը, ո՞վ գիտէ ինչպէս,
իմացել է գրամի թագստի տեղը և բերել է տիրոջը
յանձնել. շտապով գնացի մարագ. — գրամն իր տե-
ղումն էր:

Ո՞վ էր ուրեմն այդ տարօրինակ, այդ ողորմած
մարդը. Գասպարը... բայց նա փող չունի, այդ ես շատ
լաւ գիտեմ: Սակայն ով և լինէր՝ ես ատում էի նրան,
այդքան արդարութիւնը, այդքան առաքինութիւնն ինձ
զայրացնում էր, ինչ ասեմ, իմ սիրտն էր ծակում. Ես
գող էի, և կ'ուզէի որ մէկն ու մէկն այդ բազմութիւ-
նից գիշերով գար, Սէփօի մնացած մի հատ եղն էլ
տանէր. կ'ուզէի, որ բոլորն էլ գառնային աւաղակներ,
մարդասպաններ: Իսկ գրա փոխարէն՝ մէկը սուրբի բան

արեց, իսկ և իսկ սուրբի գործ։ Պարապ, թափառաշըրջիկ մարդն ինչպէս է բարկանում, երբ տեսնում է մէկին արիւն քրտինք թափելիս, կամ հիւանդն ինչպէս դժուարանում է տեսնել մի առողջակազմ մարդ. ճիշտ այգպէս էլ ես զայրանում էի այդ բարի գործի վրայ։

Աւշ տուն գնացի. ամաչում էի, չէի համարձակւում Գասպարի առաջ դուրս գալ. կ'ուզէի, որ նա երես չը տեսնի։ Երբ ներս մոտայ՝ նա արդէն պառկած էր, բայց քնած չէր, և ոչինչ չասաց։ Ես ել չը դանդատուեցի մեր բախտից, չը խօսեցի իմ նշանածից, լուռ էի, չարդուած ու ախուր. նա խօմ լուռ էր ու լուռ երկար մնացինք այսպէս. խեղդուում էի, ինձ մի ճար էր հարկաւոր. ես վառւում էի բոցերի մէջ, ես գալարւում էի իմ պառկած տեղում։ Անի, այնպէս կ'ուզէի, որ Գասպարը իմացած լինէր իմ ոճիրը, ինձ դառն, կծու խօսքեր ասէր, ինձ անարդէր լացացնելու չափն Բայց նա լուռ էր ձարս կտրուեց, էլի ես խօսք բաց արեցի. ուզում էի իմանալ, թէ նա ինչ է մտածում։

—Ճեսնես ով էր տարել այդ փողու։

—Ով և տարել էր, ինչներիս է պէտք, բաւական է, որ էլի խղճով մարդ էր, բերեց յետ տուեց, Աստուած իր բանն աջողի։

Քիչ մնաց, նրա խօսքի վրայ ճշամ ասեմ, թէ ախր դողը չէ բերել, գողը ես եմ; փողն ուրիշ մարդ է զցել, ուրիշի փող է. էլի լեզուս փակուեց. Գասպարից էլ էի վախիենում, թէև ուզում էի որ նա խմացած լինի, բայց չէի համարձակւում ինքս ասել։ Վիճակս անտանելի էր ես մոռացայ և՛ նշանածս, և՛ իմ հարսանիքը, և՛ իմ օջաղը. միայն այդ գրամը, այդ անիծուած յիսուն ուուբլին մընաց աչքիս առաջ և ինձ քրքրում, տանջում էր. իսկ Գասպարը հանդարաս պառկել էր, իր բարի աչքերը բաց ու խուփ էր անում, նայում գէպի վեր, ապա մի քանի անդամ յօրանջեց և խաղաղ քննց խորը քնով ես նայում էի նրան և առաջին անդամ իմ կեանքում նախանձում էի իմ սիրելի ընկերոջը։

Ես մնացի անկուն։ Բոլոր ուշը ու միտքս այժմ
գարձել էր մի բանի վրայ, թէ ի՞նչպէս գտնեմ այն սուրբ
մարդուն, որ բերեց իր փողը գցեց երդկից. մտածում
էի տանել յիսուն ռուբլն զնել առաջը, պատմել իմ
գլուխ անցքը, խոստովանել բոլորը, աղաչել, պաղատել,
որ լուռ կենայ, և այսպիսով գոնէ իմ խղճի հանգիստը
գտնել, թէ չէ այսպէս ապրել չէր լինում։ Բայց ի՞նչպէս
գտնել այդ մարդուն, որ անշուշտ մի արդար էր։ Ես
գիւղում մի այդպիսի մարդ չէի ճանաչում։ Երեխ կար
մէկը թագնուած, որին ոչ ոք չէր ճանաչում։ իսկական
արդարները չեն յայտնուում շատ անգամ։ Ուզեցի Գառ-
պարին զարթեցնել, պատմել և խորհուրդ հարցնել.
թափով ձեռքս մեկնեցի և ուսը ցնցեցի. նա զարթեց։

—Հ'ը, ի՞նչ կայ, ասաց նա՝ աչքերը բաց ու խուփ
աներով կէս քուն կէս արթուն։ Հէնց երեսին նայեցի,
հէնց ձայնը լսեցի՝ քաջութիւնս փախաւ, դարձեալ շըր-
թունքներս գողդողացին. ոչ, ես ամբողջ աշխարհին կա-
րող էի ասել, բայց ոչ Գառպարին, այդ անհնար էր,
ուժից վեր։ —Ոչինչ, քունս չէր տանում, ասացի զար-
թեցնեմ մի ըիշ խօսենք։

Նա ժպաաց իր մեղմ, բարի ժպիտով։

—Ռեհանն է քունդ կտրել, գիտեմ. քնիր, քնիր,
Աստուած ողորմած է։ Ասաց և կրկին հանգարտ քնեց.
«Անխիղճ», միմուացի ես կամացուկ. արցունքը կոկորդս
սեղմեց և առաջին անդամ ընկերոջս կողքին ես ինձ
զգացի մենակ, անօդնական, անընկեր, աւելի թշուառ՝
քան երբ և իցէ։

Այսպէս անցան օրեր ու շաբաթներ, փողը մնաց
մարագում, Ռեհանը մնաց իրանց տանն սպասելով, իսկ
ես թափառական, անգործ, անհանգիստ։

Մի գիշեր, —ճիշտ մի այսպիսի գիշեր էր, դով ու
սիրուն, —ես ու Գառպարը այնտեղ էինք, այ այնտեղ,
առուի այն կողմը. այն ժամանակ Սէփօինն էր այն արտը
և նա բօստան էր ցանել, մենք երկուսով պահում էինք։

Ճիշտ այսպէս, ինչպէս այս դիշեր, նստած էինք քոլիկի մօտ, ճիշտ այսպէս կրակ արած վեղամներ էինք եփում ուստում: Յանկարծ Գասպարն այնպէս ճշաց, այնպիսի ձայն հանեց, որ մազերս դիղացան դլախ. մէկ էլ տեղից վեր թռաւ, փախաւ հեռու-հեռու, կանգնած տեղը մի քանի պտոյտ արեց և ընկաւ խոտերի մէջ՝ ինչպէս սղոցած բարտի ծառ: Վազէվազ հասայ. մինչև կը հարցնէի ինչ եղաւ, ինչ պատահեց՝ նա սարսափած ձայնով ասաց.

—Օձը կծեց, օձը...

Էլ ոչինչ չասաց, միայն թաւալւում էր խոտերի մէջ, կուրծքը տրորում էր գետնին, ատամներով կրծոտում էր խոտը, չանկուում էր հողը, ոռնում էր անտանելի ցաւից, ձայնը երկինք էր համուսմ: Դաշտում էլ մարդ չը մնաց, բոլորն էլ նրա ձայնից հաւաքուեցին:

—Աթօ, ախալէր, ընկեր, աչքիս լոյս, ազատիր ինձ, աղաչում էր նա. սպանիր ինձ քո ձեռքով, սպանիր:

Հոգիս կտոր-կտոր էր լինում. վազվզում էի այս ու այն կողմը խելագարի նման. մերթ մօտենում էի, բըռնում ձեռքից, պտըտում էի հետը, կամթաւալւում գետին, գրկում էի, համբուրում, ապա լալով փախչում էի հեռու: Զեռքն էր կծել, թոյնը գործում էր սարսափելի կերպով. օգոստոսի օձից Աստուած ազատի. ուռոյցը վայրկենապէս հասաւ մինչև ուսը: Մի քանի տեղով պինդ կապեցինք—իզուր. շուտով երեսն ու կուրծքն էլ ուռաւ, իսկ ինքը շարունակում էր աղիողորմ վայել, վայել, հառաչել, այնպէս էր տնքում, քարից, սարից արցունք էր քամում: Շալակեցինք, գիւղ տարանք. մինչև լուսարաց նոյն ձեռվ տրորուեց գետնին, ինքն իր միսը չանգուեց, գալարուեց, ճշաց՝ մինչև բոլորովին թուլացաւ: Հոգեվարքին մօտ, կապտած ու այլանդակուած, նա բարձրացաւ վերջին անդամ, ուռած ձեռները մեկնեց վեր-վեր, դէպի երկինք, և հաղիւ ասաց նուազած ձայնով.

—Անգնաթ Աստուած, Քեղինչ էի արել։ Ապա վայր
ընկաւ և իմ գրկի մէջ շունը փչեց։

Մենակ էի յուղարկաւոր, երբ տէրտէրի ու ժամ-
հարի հետ նրան տարանք գերեզմանատուն։ իմ ձեռքով
փորեցի գերեզմանը խոր-խոր, առա իմ ձեռքով ցած
իջեցրի այդ տանջուած մարմինը և հողը վրան ածեցի,
մինչդեռ տէրտէրը քաղում էր աղօթքներ։ Թումբը
բարձրացաւ, բարձրացաւ և ընդ միշտ ծածկեց իր տակ
նրան, որ այնքան բարի էր, դժոտ, և որ այնքան տան-
ջուեց առանց վայելելու այս փուչ, անիրաւ աշխար-
հում, այնքան «ար» ու «օճփ» արեց առանց երբէք
հասկանալու, թէ ինչու իր ցաւի բաժինն այնքան շատ
էր։ Ես էլ մինչև այժմ գեռ չեմ հասկացել, թէ Գառ-
պարն ինչու էր աշխարհ եկել, ինչու այնքան սև օր քա-
շեց և ինչու այնպէս տանջանքներով մեռաւ։

Թաղումից տուն վերագարձայ ջարդուած, կիսա-
մեռ, կիսախելագար։ Հարուածը սարսափելի էր. աշ-
խատել չէի կարողանում այլ ես. ցաւիս մէկը հաղար
գարձաւ և կրկին թափառական ընկայ սար ու ձոր։
Երջում էի յատկապէս այն տեղերը, ուր նա եղել էր,
սպառկել, այնտեղ՝ ուր նա գալարում էր ցաւից և ա-
նիժում իր օրն ու կեանքը։ Այժմ ես արդէն իսպառ
մենակ էի աշխարհում, օտար, անտուն, անտէր, թա-
փառական։ Նատ անգամ գիշերով թէ ցերեկով գնում
էի, նրա գերեզմանը գտնում, նստում էի կողքին, ար-
տասում, հառաջում, երբեմն էլ թմրում և քնում հո-
ղաթմբի վրայ մինչև լուսաբաց։

—Տէր Աստուած, մտածում էի ես. փողը ես գո-
ղանամ, օձը Գասպարին կծի, իմ խեղճ, իմ բարի Գառ-
պարին. ուր է արգարութիւնը, ուր է հատուցումը։

Ընկերոջս մահը սակայն մի հարց լուծեց ինձ հա-
մար. ես այժմս այլ ես չէի փնտրում փող տուողին.
պէտքս չէր իմանալ, թէ ով է այդ մարդը, որովհետեւ
փողը յետ տալու մտադրութիւն չունէի այլ ես։ Եւ
ինչու յետ տամ, մտածում էի, ինչու համար բարութիւն

անեմ, միթէ կարող եմ այնքան բարի լինել, այնքան ճշմարիտ, որքան Դասպարը՝ Վերջը... ինչ օգուտ դրանից, ինչպիսի մահով մեռաւ նա, ինչ տանջանկքների մէջ. ոչ, ոչ, ես փողը ոչ միայն յետ չեմ տայ, այլ թէ կարողանամ՝ էլի կը գողանամ, աւաղակ կը դառնամ, սար ու ձոր կ'ընկնեմ, կը խեմ, կը թալանեմ. մէկ չէ, երկնքի առաջ բարի լինեմ թէ չար, արդար թէ անարդար. գողի և առաքինի մարդու մէջ երկինքը խըռարութիւն չէ գնում; էլ ինչու գթոտ, ողորմած, սիրող լինեմ, ում համար և ինչու համար, ուր է հատուցումը, ուր է արդարութիւնը. Այսպէս էի մտածում ամբողջ օրեր ու շաբաթներ։ Դասպարի այլանդակուած պատկերն աշքից չէր հեռանում. ես տեսնում էի նրա կապտած ուռած ձեռները դէպի երկնք բարձրացրած, ես լսում էի նրա նուաղած ձայնը, նրա վերջին ճիչը, վերջին բողոքն Աստուծոյ դէմ իր սոսկալի մահուան համար։

Դասպարի մահից մի քանի շաբաթ յետոյ մի երեկոյ նրա գերեզմանի վրայ տեսայ խունկ կար ծխած։ Թարմ խունկ էր, գեռ կրակը չէր մարել. գեռ մի բարակ, անուշահոտ ծուխ բարձրանում էր դէպի վեր և բուրմունքով լցնում չորս կողմը։ Մնացի զարմացած ինքս ինձ հարցնելով, թէ ով կարող էր լինել այս անյայտ անձը, որ կապուած էր այս անտէր գերեզմանի հետ. ով ունէր Դասպարն աշխարհում բացի ինձանից։ Երկի մի գթասիրտ կին է. մտածեցի ես, որ իր մեռելի վրայ խունկ ծխելուց յետոյ այս անտէր գերեզմանի վրայ էլ մի փոքր ծխել է, ուրիշ կերպ լինել չէր կարող, թէ չէ ում հոգն էր կտրուել յատկապէս գալ նախըռուն խունկ ծխել։ Դիւղերում նախըռուն ճանաչում են ամենքը, բայց նրան հոգացող, նրա վրայ ցաւող մի հոգի չի լինի. ինչ ասել է մի նախըռի, նա իր պահած մի հատ կովից աւելի քիչ արժէք ունի։

Անցան դարձեալ օրեր. մի գիշեր էլի շատ այս ու այն կողմ թափառելուց յետոյ, քայլերս ուղղեցի դէպի

գերեզմանատում։ Դեռ չեի հասել, երբ հեռուից ական-
ջիս մի կանացի լացի ձայն հասաւ, որ գալիս էր գե-
րեզմաններից։ Աշնանային խաւար գիշեր էր, երկինքը
մառախապատ, օդը ցուրտ։ Քիչ հեռու հաղիւ տեսնում
էի գերեզմանաքարերը մեծ ու փոքր, զանազան ձևե-
րով, կարծես մեռելներ պառկած լինէին։ Այնպէս չե,
գիշեր ժամանակ գերեզմանները իսկ և իսկ մեռելների
պէս են, զարդանդ ունեն. բայց ես չեի վախենում, ես
մեռելից երբէք չեմ վախենում։ Բայց ով էր այդ սգա-
ւոր կինը, որ սիրտ էր արել մէն-մենակ գերեզմանները
գալ այսպիսի մժով, ինչու էր գիշերով եկել իր մեռելը
սղալու, մոտածում էի ես՝ կամսց-կամաց առաջանալով։
Յետոյ քայլերս իսպառ ծանրացրի։ Կինը շարունակում
էր իր սուդը. նա այնպէս էր հեծկլսում, այնպէս էր
հառաջում, որ կարծես բոլոր մեռելները դուրս էին
թափուել գերեզմաններից և ականջ էին դնում այդ
ողբին և նրան ձայնակցում, լախու Զարմանքը բռնեց
ինձ, երբ մի փոքր էլ մօտենալով նկատեցի, որ այդ
խորհրդաւոր կինը արտասում է հէնց Գասպարի գե-
րեզմանի վրայ։ Քարացած մնացի. հրեշտակ էր իջուլ
երկնքից և լտիս այդ անտէր գերեզմանի վրայ, թէ
մի ծածուկ բարեկամ, որի մասին ես ոչինչ չը գիտէի։
Սգացողը արտասանում էր նաև բառեր, բայց այնպէս
մեղմ, այնպէս տխուր, որ կարծես մեռելների ականջին
էր փափսում, նրանց էր գանգատում, նրանց էր աղա-
չում. ձայնն էլ այնպէս ցաւոտ էր, որ կարծես հոգին
կտոր-կտոր գուրս էր քաղւում նրա մըմնջոցի հետ և
բարձրանում վեր, խաւարի մէջ։ Նրա ախս ու վախից
երակներիս մէջ դող էր անցնում. ես կծկուեցի մի քարի
կողքի, որ չը խանդարեմ նրան, և ինքս էլ արտասուե-
ցի, դառն, դառն արցունքով։

Կինը երկար արտասուեց, ապա վերջին անգամ
կռացաւ հողաթմբի վրայ, մի փոքր մնաց այդպէս
անձայն, յետոյ վեր կացաւ, շարժուեց գէպի գիւղ։ Նա
առաջովս անցաւ, բայց ինձ չը տեսաւ. իր շուրջը չէր

նոյում, շտապում էր, երեխ վախենում էր խաւարից, դերեղմաններից. հեշտ բան չէ, մենակ մի կին գիշեր ժամանակ մեռելների մէջ: Երբ նա մի փոքր հեռացաւ ևս վեր կացայ և զգուշութեամբ հետևեցի նրան. պէտք էր իմանալ, թէ ով է նա և ուր է գնում նա դողունի քայլերով գիւղ հասաւ և մտաւ մի տուն: Այդ տունը եռ ճանաչում էի, Սօնայի տունն էր. բայց ինքը Սօնան էր արտասուող կինը, թէ մի ուրիշը, որ այնտեղ մտաւ: Այդ պէտք էր ճշտել: Յաջորդ շաբաթ երեկոյ խունկը դարձեալ ծխուած էր գերեզմանի վրայ. կինը դարձեալ սղում էր նոյն ժամին. ես նորէն հետևեցի. նա մի և նոյն ճանապարհով գնաց, անցաւ եկեղեցու առաջից, անցաւ գիւղի առուի կամուրջը և ներս մտաւ նոյն տունը: Այլ ես ոչ մի կատկած չը կար, որ Սօնան էր:

Ի՞նչ կապ կար արդեօք Սօնայի և Գասպարի մէջ: Այժմ այս խնդիրն ինձ զբաղեցրեց:

V

Սօնան մի այրի կին էր, աղքատ ու խեղճ, որ ապրում էր մի փոքրիկ տան մէջ իր երկու որբերով: Հենց այդ տան գուանն էր հաւաքում Գասպարը գիւղի նախիրը ամեն առաւօտ դաշտ քշելուց առաջ: Սօնան գիւղում ամենըն էլ յայտնի էր իր զարմանալի գժբախտութեամբ: Տներ կան, ուր երբ սուգը մտնում է էլ չէ գուրս գալիս, մինչև վերջին գիւղի գերեզման տարուի: Այսպիսի մի տուն էր այդ խեղճ Սօնայի հէրանց տունը, որի աստղը թեքուել էր. իջաւ իջաւ, ու մարեց խսպառ: Մի քանի տարի շարունակ Սօնան սկի ու սղի մէջ կորած էր. մէկ մէկի յետելից կորցրել էր հայր, մայր, եղբայրներ և վերջը հօր օջաղի բանալին կտուրը դժած էր հեռացել: Գիւղերում շատ օջաղ է այսպէս մարում: Ինչու այդպէս, ես հասկանալ չեմ կարողացել դեռ: Քիչ յետոյ Սօնան կորցրել էր ամուսնուն, այրիացել. այդ այն ժամանակն էր, որ ես ու Գասպարը ձեր

գիւղը հասանք։ Գիւղացիք այնքան անդամ տեսան նրան
եկեղեցում գագաղի վրայ սդալիս, որ ի վերջոյ անունը
զրին Լալկան-Սօնա։ Եւ ճշմարիտ, լացը նրա համար
գարձել էր այնպէս սովորական, որ շատ անդամ նա
եկեղեցի էր գալիս հարեանի աղիզ մեռելը ողբալու. իսկ
երբ Սօնան այստեղ էր՝ ամենքը լուսում էին, միայն նրա
բարակ ու տխուր ձայնն էր լսում. նա երգում էր ա-
մենքի ցաւը «գարգոտ բայեաթիներով», իսկ միւսները
հեկեկում էին։ Նա ամբողջ գիւղի լալկանն էր։ Զահէլ
կին էր, բայց նստել էր իր թոնրան շրթին իր երկու
որբերի համար, ասենք մարդու մաքով էլ չէր անցնում,
թէ Սօնան նորէն կ'ամուսնանայ. նա լացից, սդից աչք չէր
բաց անում։ Այրի կնկայ բանը գժուար է, երբ այլ ևս թե
ու թիկունը չունի. Սօնան էլ ապրում էր սե օրով,
գիւղի մեռելների շորերը շատ անդամ նրան էին ու-
ղարկում, ժամի հացից էլ բաժին էր հասնում։

Մի առաւօտ ես կամացուկ նրա գուռը բաց արի
և ներս մտայ:

—Բարի լոյս, Սօնա քուրիկ:

—Աստուծու բարին, ախալէր, պատասխանեց նա
զարմացած։

—Առ այս շորերը, քոյրիկ, ողորմի տուր տիրոջը.
ախալէրս մեռաւ, նրա հագուստն է, երեխաներիդ հար-
կաւոր կը գայ, և մի կապոց գրեցի նրա առաջ։

Նա մի քանի քայլ առաջ եկաւ, զարմացած նայեց
կապոցին, նայեց ինձ, յետոյ յանկարծ մօտեցաւ, առաջ-
առաջ արձակեց կապոցը, գուրս քաշեց մի արխալուղ,
նայեց, կրացաւ վրան և սկսեց գառն, գառն հեկեկալ։

—Իմ խեղճ, իմ սեաւոր Գասպար, ճչաց նա։

Ես ինձ զսպել չը կարողացայ. մենք մեզ մոռացած՝
մի ժամնանակ երկսով էլ կոացել էինք կապոցի վրայ և
արտասուսմ էինք։ Մենք քոյր եղբայր գարձանք կար-
ծես մեր ընդհանուր ցաւով։

—Քոյրիկ, թէ ծածկես էլ, իզուր է, գոյւ ես խոնկ

ծխումնրա գերեզմանի վրայ շաբաթ երեկոները, դժւ
ես սուգ ասում գիշերները:

—Աշխարհից ծածկեմ՝ քեղանից ինչ ծածկեմ: Ես
զիտեմ, որ երկուվ էլ զարիք էլիք, երկու ախալէր: Հա, ես
եմ: կոտրած ձեռքովս եմ խունի ծխում, կուրացած աշ-
քերովս եմ արտաստումնրա գերեզմանի վրայ: Խեղճ,
անտէր մեռել: Հօրս տունը հեղեղն եկաւ տարաւ. «Փա-
լաղը քիւլ» քամուն տուեց. քանի՛ դադաղ դովեցի,
քանի՛ «բոյովբուսաթով» տղամարդ հողը գրեցի. իմ
տանն էլ սև հագայ, գլխաւորս գլխից թռաւ, «շիւան»,
«տուման» բռնեց վրաս: Ես մնացի խեղճ ու կրակ ու
դարձայ լալկան Սօնա, աղքատ, այրի Սօնա. սև հագայ,
սեռվ ապրեցի, արցունքով դռների հաց կերայ, մինչեւ
որ Գասպարին ճանաչեցի: Ա՛խ, ախալէր, թող սև գառ-
նար այն օրը, նրան էլ չը տեսնէի՝ քանի որ ջիւանջիւ-
ւան հողը պիտի գնէի: Թէ ես բէխէր «քայզուշ» եմ,
ինձ մօտեցողը խէր չի հանի. Գասպարին էլ իմ սեռվ գը-
նաց, բա ես ինչն չեմ մեռնում, Աստուած: Երեք տա-
րի է, որ ես ու որբերս միայն Գասպարի աշխատանքո-
վըն ենք ապրում, նա իմ նշանածն էր:

Ես ականջներիս չէի հաւատում, քարացած մնացի:

—Զարմանում ես, չէ. իրաւունք ունիս: Մէկ մենք
երկուվ զիտէինք, մէկ Աստուած. մի օր այս երեխան
ընկել էր գուան առաջի տուն։ Դասպարը մտել էր ջու-
րը, հանել. բերեց տուն, ինձ նայեց, մնաց սառած. ո-
չինչ չասաց ու թողեց և գնաց: Այնուհետև էլի մի ան-
գամ եկաւ ինձ խնդրեց, որ շորերը կարկատեմ, լուսնամ,
երեխաների համար էլ բան էր գնել: Էլի նայեց ինձ. ու-
ղեց մի բան առել, ու գնաց լուս: Ես տեսնում էի, որ
ուզում էր շուտշուտ գալ, բայց որպէս զի գիւղում չը
խօսեն, գաղարեց. Երեխային ուղարկում էի, շորերը բե-
րում էր, լուսնում էի ու կարկատում, նրա փոխարէն մեղ
հողում էր: Թէ ինքն էլ դալիս էր՝ միշտ զգուշութեամբ,
որ մարդ չը տեսնի, նստում էր թռներան շրթին, մնում
էր լուս, մի խօսք չէր ասում, միայն «ախ» ու «օֆ» էր

անում, նայում էր ինձ, նայում էր, աջերը լցում էին, ու թողնում գնում ես երկար ժամանակ չը դիմէի, թէ նա ինչու էր այդպէս նայում, ինչու էր տխուր, ինչու էր սիրալ լցում, երբ ինձ տեսնում էր: Մի օր ինքն ասաց. «Դիտես, Սօնա, դու պյնպէս նման ես մէկին, որին կորցրի մեր վէրան երկում, և նրա դարդից «աւարական» ջրերը խմեցի, ընկայ զարիբութիւն»:

—Քոյրս, իմ հարազատ քոյրը, Գասպարի նշանածն էր, ասացի ես. անօրէնները փախցրին, Սօնա քոյրիկ: Դու ինչքան նման ես նրան, երևի ախազօրս մահով աչքերիս լոյսն է խաւարել, որ ես խկոյն չը տեսայ այդ:

Եւ ճիշտ որ նմանութիւնը զարմանալի էր:

—Յետոյ, շարունակեց Սօնան մի փոքր կարմրելով, էլի մի քանի անգամ դնաց եկաւ, խօսք տուինք իրար, ասաց՝ քո երեխաների հայրը կը լինեմ: Զգոյշ էր ու լուռ. մինչեւ, ասում էր, Աթօին պսակենք, յետոյ մեր մասին կը մտածենք: Աշխատած փողի մի մասը, ինչ որ կարողանում էր սրանից նրանից առնել՝ բերում էր ինձ պահ տալիս քո հարսանիքի համար, մահից մի քանի շաբաթ առաջ արգէն յիսուն ոռուբլի կար: Երբ Սէփօի փողը դողացան՝ նրա կնկայ լացն ու շիւանը տեսել էր. տխուր-տրառում տուն եկաւ, յիսուն ոռուբլին առաւ գնաց, էլ յետ չը բերեց: Օրեր յետոյ, երբ շատ նեղեցի, ասաց, որ տարել է Սէփօի երդկեց ցած է ձգել, որովհետև, ասում էր, դողացողը...

Կաց, կաց, էլ մի պատմի, Սօնա, ճշացի ես սիր-տըս բռնած: Էլ չէի կարող լսել. դուրս թռայ տնից և ուղիղ գնացի եկեղեցու բակը: Նստեցի տանը, երկար, երկար մտածում էի: Գասպարն է ձգել փողը. նա իմացել է, որ ես եմ դողացել. նա հասկացել է իմ տանշանքը, երևի քնիս մէջ խօսել եմ և մատնել ինձ այն գիշերը, երբ քունս չէր տանում, երբ նա ինձ նայեց և ծանր ախ քաշեց: Եւ նա մեռաւ վշտացած, որ իր ընկերը գող է, աւաղակ. օձից առաջ ես եմ խոցել նրա սիրուց: Եւ այդ փողը նա ինձ համար է հաւաքած եւ

դել, սրա համար էր կրկնում՝ «Աստուած ողորմած է»։ Սօնայի հետ կապուել է և լուռ է կացել. սպասել է իմ սիրուն, չարչարուել է իմ սիրուն. իսկ ես... ինչ արեցի նրա համար, ինչ տուի նրան. —միայն մի նոր վիշտ իմ գողութեամբ։ Տէր Աստուած, այսքան արդարութիւն, այսքան գուլթ, սէր, զոհ. հապա ինչու, օձը նրան կծեց, մրմնջում էի ես, եկեղեցուն նայելով, ծունկ չոքած քարերի վրայ. ինչու ինձ չը կծեց. չէ որ ես էի արժանի այդ պատժին և ոչ թէ նա։

Ցաւիս մէկը հազար դարձաւ և մնացի մտքերի ծովի մէջ։ Երեկոյեան ժամերգութեան եկեղեցի մտայ, ծնկներիս վրայ ընկայ, գլուխս ձեռներիս մէջ առայ և անդադար կրկնում էի։

—Աստուած, ինչու օձը Գասպարին կծեց, ինչու ինձ չը կծեց. չէ ես էի գողը, նա արդար էր։

Ժամաւորները գուրս գնացին. մնացի մենակ տէրս տէրի հետև Մօտեցայ.

—Տէրտէր, խոստովանութիւն ունեմ։

—Չոքիր, որդի։

—Տէրտէր, Գասպարին յիշում ես։

—Օրհնած, երէկ օձը կծեց խեղճ անձարին, ապա մոռանալ կը լինի։

—Ի՞նչպիսի մարդ էր։

—Բարի, քրիստոնեայ մարդ էր, իր ցաւին, իր աշխատանքին։

—Միայն այդքանի, տէրտէր. սուրբ մարդ էր, սուրբ մարդ։

—Թուղ սուրբ լինի, որդի, ես չեմ ուղի։

—Ապա որ սուրբ էր, ինչու օձը կծեց։

Տէրտէրը մի փոքր լուռ մնաց, զարմացած նայեց երեսիս։ Այսպիսի հարց երեխ չէր սպասում։

—Որդի, դու ասացիր, որ խոստովանութիւն ունես. այսպիսի խոստովանութիւն չի լինի։

—Կը լինի, տէրտէր. Գասպարը ճշմարիտ, արդար մարդ էր, ինչու օձը կծեց։

—Ե՞ն, որդի, Աստուծու բանն է. մենք մեղաւորներս ինչպէս իմանանք: Մենք ի՞նչ կարող ենք ասել, թէ նա արդար էր. ով գիտէ, մարդս այնքան ծածուկ մեղքեր ունի, այնքան ծածուկ յանցանքներ է գործում:

—Տէրտէր, ես նրա ծածուկ յանցանքներն էլ գիտեմ, այն էլ ասեմ: Սէփօի յիսուն ռուբլին ես էի գուղացել, այս ձեռքովս էի գողացել. իսկ երդկից փողը Գասպարն է դցել, այսօր իմացայ. իր գառն քրտինքի արդինքն է բերել տուել Սէփօին, որ նրա լուծը գետինը չը մնայ, որ նրա կինը չաբտասովի. նա այդ արել է առանց ոչ ոքի ասելու: Այս է Գասպարի ծածուկ մեղքը: Դէ, ասա, այդ ի՞նչպէս եղաւ, որ փողը ես գուղացայ, մեղքը ես գործեցի, իսկ այն արդարին օձը կծեց, ինչո՞ւ. ուր է արդարութիւնը, ուր է հատուցումը, բարի գործին հատուցում չը կայ...

Տէրտէրը էլի մի քիչ լուռ մնաց: Նա շուարել էր, չը գիտէր ի՞նչ պատասխանել. մի քիչ հաղաց, միրուքը շտկեց, վերջապէս ասաց.

—Ե՞ն, որդի, էլի Աստուծու կամքն է, նրա ողորմութիւնը մեծ է, հատուցման ճանապարհները անչափ. թէ որ արդար էր Գասպարը՝ իր վարձքը կը ստանայ երկում:

—Երկնքո՞ւմ:

—Հա, ի հարկէ երկնքում: աշխարհն ի՞նչ է որ. աշխարհը որ կայ՝ փուչ, ժամանակաւոր բնակարան է, անցաւոր է:

—Հիմա ի՞նչպէս իմանանք, որ նա գոնէ երկնքում չէ տանչւում; որ նա վարձատրուած է, որ նա բախտաւոր է:

—Պէտք է հաւատալ, որ նա բախտաւոր է:

«Պէտք է հաւատալ, որ նա բախտաւոր է», կրկնեցի ես և դուրս գնացի. այնուհետեւ էլ ժամ չը գնացի: Ինձ ասացին՝ «անհաւատ է»:

Անցնում են տարիներ. ես ամեն շաբաթ կէս գիշերին գնում եմ չոքում Գասպարի գերեզմանի վրայ,

լալիս եմ, հառաջում, երկինք եմ աղաղակում, աղաշում եմ Դասպարին, որ նա ինձ ասի, թէ ինքն ինչպէս է երկնքում, աշխարհում կրած տանջանքներից յետոյ։ Նա դեռ ինձ ոչինչ չէ ասել, ես դեռ ըսպասում եմ, ինձ դեռ ասում են «անհաւատ»։ Իրօք ինձ պիտի գող անուանեն. քանի տարի գողութիւն արի այնուհետև, աւաղակներին ընկեր դարձայ։ Հարեւաններից ում հաւը կորչէր՝ ես էի գողացել. բօստանները ես էի ոտի տակ տալիս, այդիները ես էի կողոպտում, մուլորուած անասունները ես էի տանում ծախում քրդերին։ Եւ ես չէի բռնւում, չէի պատժւում, միայն օձից էի վախենում, ուրիշ ոչնչից։ «Երեխ ունեւորի մալը չունեւորին հալալ է», մտածում էի ես, այլապէս ինչու երկինքը չէ պատժում ինձ, նոյն իսկ դաշտերի պահապահն էի։

Մի օր հեռու, գիւղի դաշտերի ծայրում պատահեցի նոյն մուրացկանին, որին տեսել էի մի անդամ տարիներ առաջ, յիսուն ոուրին գողացած օրու նա այժմ աւելի խղճալի էր, աւելի ծեր ու մաշուած. տարիների տանջանքը, ու օրերի շարքը աւերակ էին դարձրել նրա մարմինը. նա հաղիւ էր քաշ տալիս ինքն իրան ոսկորները կարծես ծանր էին գալիս նրան։ Էլի երկու փայտ ունէր թեերի տակ, էլի մի պարկ ուսին, միայն այժմ փայտերն աւելի կոկուել էին անվերջ գործածութիւնից, իսկ պարկն էլ աւելի մաշուած, պատուատուած էր. մէջն էլի հաց կար.

Նա էր, նոյն ողորմելի մուրացկանն էր, քանի տարի էր թափառում։ Այս անդամ չը բարկացայ վրան. ես ուրախացայ նոյն իսկ, որ պատահեցի, և գիտե՞ք ինչու. կը զարմանաք, որ ասեմ. ես որոշեցի այդ թշուառին կողոպտել. ես վաղուց էի ուզում մի այնպիսի բան անել, որ երկինքը գլխիս ճայթի, կամ երկիրը պատառուի, ինձ ներս տանի, թէ աշխարհում չարութեանը պատիժ կայ։ Ունեւորին կողոպտելն ինչ մեղք, մտածում էի ես. պէտք է այս թշուառին կողոպտել, որ երկինքից քար

ընկնի գլուխու ես պատիժ էի ուզում, պատիժ խնդրում
երկնքից:

Մօտեցայ, նա ճանաչեց ինձ, բայց էլ չը վախեցաւ.
նրա կարծես փոյթը չէր, թէ ինչ կ'անեն իրան. կեան-
քից յոզնած էր, երեւի. դա մի բեռ էր, որ քաշ էր տա-
լիս ակամայ, իսկ Ես... ես գող էի, ես պատիժ էի փընտ-
րում:

—Հէ, բարեկամ, ասացի, էլի պատահեցինք:

—Հա, պատահեցինք, պատասխանեց նա անտարբեր:

—Դու էլի՝ այնպէս ես:

—Զէ, ասաց, ես էլ այնպէս չեմ, ես այժմ լաւ եմ.

Դու ես էլի այնպէս:

Ակնարկը հասկացայ. աւելի լաւ, որ ինձ բարկա-
ցնում էր.

—Հա, ես էլի այնպէս եմ, պարկումի ի՞նչ կայ:

—Պարկումս... պարկումս ոսկի կայ, լիքն է, գո-
զացել եմ. չես լսում զնդզնդոցը: Նա թափ տուեց. պա-
տառուածքներից հացի վշրանքներ ընկան:

—Գիտես, դու մի անդամ իմ ձեռքից սլրծար, բայց
էլ չես պրծնի, ասացի: Պատասխանի փոխարէն նա
միայն տարօրինակ կերպով ժպտաց:

Ես խլեցի նրա պակը կոպտութեամբ, յետոյ մի
ձեռնափայտը դուրս քաշեցի թեփ տակից, ապա միւսը:
Նա մնաց երերալով կանգնած: Նայում էի:

—Ես հիմա ինչպէս գնամ, մութն ընկաւ, գիւղը
հեռու է, առաց նա հանդարտ:

—Ի՞նչպէս ուզում ես՝ գնա, դէ՞հ, սողա օձի պէս,
ասացի և թափով հրեցի. ընկաւ երեսի վրայ:

—Օ՛, հանգիստ կաց, ես չեմ սողայ. շատ սողացի
արգէն, կը մնամ այսպէս, թնդ գաղանները գան պա-
տառուաեն: Իսկ դու Աստուծուց չես վախենում, գիտեմ.
թնդ գոնէ խիղճդ գաղան դառնայ, քեզ պատոի. խիղճ
էլ չունիս...

Նա սկսեց հեկեկալ: Ես նայում էի, ես լսում էի,
ես քար դարձայ իմ տեղում: Երկար տարիներից յետոյ

առաջին անգամ ես զգացի, որ իսկապէս ոճրագործ եմ:
 նրա հեծկլտոցի ձայնը թափանցում էր մինչև հոգուս
 խորքը։ Ծեր միրուքի վրայից թափուսդ արցոննքները
 կաթիլ-կաթիլ ընկնում էին իմ կոշտացած սրտի վրայ և
 քանդում էին նրան։ Հին օրերի լացս եկաւ, աչքերս
 լցուեցին, շտապով պարկը և փայտերը տարայ կողքին
 դրեցի ու փախայ առանց յետ նայելու։ Փախչում էի,
 բայց ականջներումս դեռ լսում էր նրա հեծկլտոցը.
 նրա լացի ձայնն ինձ հալածում էր։ Փնտրածս պատիժը
 դտայ։ Ես էլ գող չէի»։

Վերջացրեց Աթօն, վեր կացաւ, հրացանն առաւ ու
 գնաց։ Լուսաստղը բարձրացաւ արևելքում։

Արշալոյսը հեռու չէր։

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ

Դ Բ Ա Մ Ա

Գերհարտ Հառապտմանի

Այս դրաման ես նուիրում եմ նրանց,
որոնք ունեցել են նմանը:

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Դէպքը տեղի է ունենում Բերլինի մօտ գտնուող Ֆրիդրիխսհապէն
արուարձանում: Յշտ տան պարտէզը կից է Միւզգէլեան լճին:

Բոլոր հինգ գործողութեան ընթացքում բեմը մնում է անփոփոխ:

Դահլիճի նման սենեակը,—որ ծառալում է միաժամանակ և իրեն
հիրասենեակ, և իրեն սեղանառուն—կահաւորուած է ունեոր բուրժուայի
ձևով: Դաշնամուր, գրքերի պահարան, երկու կողմից լուսանկար և փո-
րագրուած պատկերներ—ժամանակակից գիտնականների (ինչպէս և
ասոսուածարանների), նրանց մէջ Դարվինը և Հեկէլը: Դաշնամուրի վե-
րկից կախուած է սեղաներկ լուսանկար՝ պասորը զգեստաւորուած: Բացի
այդ՝ պատերից կախուած են Աստուածանչի նիւթերից մի քանի պատ-
կերներ, ըստ Շնորհա ֆօն Կարոլսֆելդի:

Զախ կողմից՝ մէկ, աջ կողմից՝ երկու դուռը: Զախ կողմից դուռը
տանում է դէպի Յոհաննէս Յօկերատի պարապէլու սենեակը: աջ կողմի
դռներից մէկը—դէպի ննջարանը և միւսը դէպի նախասենեակը:

Սենեակը ալնքան էլ բարձր չէ: Նրկու կիսակողոր լուսամուտներից
և յետիր պատում գտնուող ապակեալ դռնից երեսում են պատշամբը և
հեռում պարտէզը, լինը և լնի միւս կողմին Միւզգէլեան սարերը:

Դէպքը կատարում է մեր ժամանակ:

Ա. Ռ. Ա. ԶԻՆ ԳՈՐԾՈՂԱ, ՌԻԹԻԿԱ

Սենեակը դատարկէ: Պարապելու սենեակի կիսաբաց գանից լսում է պաստօրի ձայնը, որ քարոզ է խօսում: Նրա մի քանի վայրկեանից լեռոյ ձայնը զաղալում է՝ լսում է երգեհոնի վրա: Նուազուող եկեղեցական մեղեղի:

Առաջին ձայների ժամանակ զուրը բացում է, և մոնում են—տիկ. Ֆոկերատ—ակեսուրը, տիկ. Կէթէ ֆոկերատ և ծծմայրը՝ ձեռքին խանձարառում դրած երեխան: Բոլորը տօնական հագուստներով:

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. (Մօ 50 տարեկան պատկառելի կին է: Հազին մետախեայ սե զգես: Խոպով մազերը միջից նեղ- քած: Վերցնում է եւ թերեւ խփելով Կերեկի ձեռքը ոյցում): Շատ գեղեցիկ էր նա խօսում, այսպէս չէ, Կէթէ:

Կէթէ. (21 տարեկան: Միջահասակ, նրակազմ, գունատ, թիսահեր եւ մեղմ: Դեռ հիւանդուրիւնից ոչ բոլորովին կագ- դուրուած:—Ժպտում է ակամայ, մեկնայաբար զիսով է անում տիկ. Ֆոկերատին եւ դառնում դեպ երեխան):

ԾԾՄԱՅՐԸ. Փոքրիկ, սիրուն բալիկ.—Հէ, հէ... (Օրորում է նրան ձեռքերի վրայ): Դէհ, հիմա քննեց: Շշշ, շշշ, շշշ!—Եւ ոչինչ բանի գլուխ դնել չէ ուզում: (Բաց է անում երեխային խան- գարող ժապասենը): Այդպէս, այդպէս—հըմ, հըմ, հըմ: Քնիր, փոքրիկս, քնիր, (Փակ ըրուներով երգում է. «Քնիր, բալիկ, քնիր»): Բայց պաստօրին լաւ չարչարեց:—Հա. (Երեխայի հանգը անում է): Հէհէ. այնքան բղաւեց, մինչև ջուրը նստացըին, հէ, հէ, նանի, բալիկս, նանի: Հէ, հէ. յետոյ ամա ճղբառում էր հայ, վայ. շշ, նանի, բալիկս նանի.... (Երգում է եւ չափի համե- մատ ոոր խփում զետնին):

Տիկ. Կէթէ. (Գորովալի, բայց զդային ժպիտով):

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Դէհ, մի տես, է, տես Կէթիսէն, տես ինչ հիանալին է, ինչպիսի երկար թերթեռնքներ ունի փոքրիկը:

ԾԾՄԱՅՐԸ. Հէ, հէ. մայրն է, որ կայ: Քնիր, մանկիկ... Ասես վրձինիների մազեր լինեն...

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Ուզիղն եմ ասում, Կէթէ. ամբողջապէս մայրն է:

Տիկ. Կէթէ. (Գլուխը բափ է տալիս բացասական կերպով):

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. Ուզիղն եմ ասում:

Տիկ. Կէթէ. (Սկամայից) Ա՛իս, մազրիկ, ևս բոլորովին չեմ էլ ցանկանում որ նա ինձ նման լինի: Կ'ուզէի որ ինձ սկի չը նը- մանուի էլ: Ինձ... (Նա չէ վերջացնում խօսք):

Տիկ. ՖՕԿԵՐԱՏ. (Աշխատելով խօսակցութիւնը փոխել): Ուժեղ երեխայ է:

ԾԾՄԱՅՐԸ. Հակայ է, հակայ:

Տիկ. ՖՕԿԵՐՍ. Կէթէ, դու միայն սրա բռունցքներին նայիր, է:

ԾԾՄԱՅՐԸ. Գողիաթի բռունցքեր ունի...

Տիկ. Կէթէ. (Համբուրում է երեխային):

Տիկ. ՖՕԿԵՐՍ. Այնպէս չէ. կուրծքը որքտն լայն:

ԾԾՄԱՅՐԸ. Այն, ես պարծանքով կարող եմ ասել, որ գեներալի կուրծքից սկի պակաս չէ: Շշշ... կը մեծանայ և հինգի հախից միանգամից կը դայ:

Տիկ. ՖՕԿԵՐՍ. Ի հարկէ... (Նա եւ Կերեն ծիծաղում եց):

ԾԾՄԱՅՐԸ. Առողջ արիւն ունի, շշ, շշ: Ախր մանուկներն արիւնով են ապրում, շշ, շշ: (Կիսաձայն երգելով): Հիմա այսպէս, դէ եկ, դէ եկ:—Գնանք անկողնիկը—դէպի անկողնիկը: Այն, այն—մենք—գնում ենք հիմա—անկողնիկը—շշ, շշ, շշ! Քնիր: մանկիկա: (Գեռում է ննջարանիր):

Տիկ. ՖՕԿԵՐՍ. (Դուռը փակում է ծծմօր յետելից, վերադառնում է, զլուխը ուրախ շարժելով): Տասո... Այ քեզ, ինչ լաւ կի՞ն է: Շատ ուրախ եմ, Կէթիւն, որ քեզ այսպիսի լաւն է պատահել:

Տիկ. Կէթէ. Գեներալի կուրծքից պակաս չէ: Ա՛խ, Տէր Աստուած: (Ծիծաղում է: Նրա ծիծաղը ջղաձզական է, աւելի լացի նման, բան ծիծաղի):

Տիկ. ՖՕԿԵՐՍ. (Վախեցած): Ի՞նչ է, ինչ պատահեց քեզ:

Տիկ. Կէթէ. (Աշխատում է իրան զապել):

Տիկ. ՖՕԿԵՐՍ. (Դրկելով Կերեխի): Կէթիկ, հոգիա:

Տիկ. Կէթէ. Ես—հը—ոչի՞նչ, ոչի՞նչ:

Տիկ. ՖՕԿԵՐՍ. Ի՞նչպէս թէ ոչի՞նչ. ճիշտ որ զարմանալու ինչ կայ, ախր դու բոլորովին դեռ չևս կազգուրուել: Գնանք, մի փոքր պառկիր:

Տիկ. Կէթէ. Ոչ, արդէն անցաւ, մայրիկ:

Տիկ. ՖՕԿԵՐՍ. Զէ, չէ, գէթ մի վայրկեան պառկիր:

Տիկ. Կէթէ. Ա՛խ, ոչ, ինգրում եմ. և յետոյ, չէ որ իսկոյն ձաշելու ենք:

Տիկ. ՖՕԿԵՐՍ. (Մօսենում է սեղանին, որի վրայ գրուած է զինի եւ խմորեղին: Բաժակը զինի ածելով): Դէն, գոնէ մի կում խմիր: Համը տես, քաղցր է:

Տիկ. Կէթէ. (Խմում է):

Տիկ. ՖՕԿԵՐՍ. Կազգուրիչ է, չէ: Ա՛խ, դու իմ սիրելի, անուշ մանկիկս, ինչ եղաւ քեզ: Հա, հա... դու դեռ քեզ պէտք է խնայես, որիշ ոչի՞նչ հարկաւոր չէ, և կը լաւանաս: Դու քեզ համար աւելորդ յուղումներ մի հնարիր:—Ամեն բան կար-

գի կը գայ: Այժմ դուք որդի ունեք. հիմա ուրիշ կերպ կը լինի: Յոհաննէսը աւելի հանգիստ կը դառնայ...

ՏԻԿ. Կէթէ. Ա՛խ, մայրիկ, եթէ միայն այդպէս լինի:

ՏԻԿ. ՖՕԿԵՐՍ. Հէնց դու ինքդ մտածիր, ինչպէս ուրախացաւ նա, երբ ծնուեց երեխան, և ընդհանրապէս նա գտուած է երեխաների վրայ: Դու հաւատա, միշտ այդպէս է. ամուսնութիւնը առանց երեխայի սկի մի բանի նման չէ: Ես ինչպէս էի աղօթում Աստուծուն, որ ձեր ամուսնութիւնը օրհնի մի զաւակով: Տէս, օրինակ հէնց մեր ամուսնութիւնն առաջի չորս տարիները: Միթէ մի քանի նման էր իմ և ամուսնուս կեանքը: Վերջն Աստուծ մեր աղօթքը լսեց և ուղարկեց Յոհաննէսին. և միայն այն ժամանակ սկսուեց իսկական կեանքը: Մէկ սպասիր, թնդ անցնին այս մի քանի ամիսները, դու կը տեսնես թէ ինչ զուարձութիւն կը դտնես երեխայիդ մէջ: Ո՛չ, ոչ. դու միանդամայն կարող ես գոհ լինել: Այժմ դու ունես քո երեխադ, ունես քո ամուսինդ, որ քեզ սիրում է: Դուք կարող եք անհոգ ապրել. էլ ինչ ես ուզում աւելի:

ՏԻԿ. Կէթէ. Գուցէ սա յիմարութիւն է: Ես ինքս էլ հոսկանում եմ: Երբեմն ես ինձ համար իսկ որ աւելորդ հոգսեր եմ հնարում:

ՏԻԿ. ՖՕԿԵՐՍ. Տեսնում ես.—միայն դու ինձ վրայ մի բարկանար:—Դու շատ աւելի հանգիստ կը լինէիր, Կէթիսէն, անհամեմատ աւելի, եթէ միայն... Գիտես,—երբ ես մի վիշտ եմ ունենում և լաւ ջերմ աղօթում եմ և այն ամենը, ինչ որ սըրտում կայ, բայց եմ անում Աստուծու առաջ՝ այն ժամանակ այնպէս թեթևանում եմ, այնպէս զուարթ է զառնում սիրտս... Զէ, չէ, թնդ ուսում առածները ինչ կ'ուղեն ասեն.—Աստուծ կայ, Կէթիսէն:—կայ մի ողորմած Հայր երկնքումը, հաւատան դու ինձ: Տղամարդը առանց հաւատի՝ այդ արդէն վատ, բաւական վատ բան է. բայց կինը, որ չէ հաւատում... Դու մի բարկանար վրաս, Կէթիսէն: Դէ լաւ, լաւ, էլ չեմ խօսի զրամասին: Ես շատ եմ աղօթում: Ամեն օր եմ աղօթում իմ Աստուծուն: Եւ նա կը լսի իմ աղօթքները, այդ ես գիտեմ: Զէ որ դուք շատ լաւ մարդիկ եք: Ոզրմած Աստուծ ձեզ էլ բարեսպաշտ կը դարձնէ: (Նա համբուրում է իր հարսլին: Օրիներզը վերջանում է): Ա՛խ, ես իմ շատախօսութիւնով ժամանակ կորցրի:

Կէթէ. Գոնէ կարողանայի ես շուտ լաւանալ, մայրիկ: Թէ ոչ՝ ինձ համար ծանր է այդպէս միշտ տեսնել, ինչպէս դու ներութիւն ես քաշում:

ՏԻԿ. ՖՕԿԵՐՍ. (Պնակով դէպի նախասենեակի դուռը): Ի՞ն, այդ խօսելու բան է. հիմա ձեզ մօտ արձակուրդ է այստեղ:

երբ դու բոլորովին առողջանաս՝ այն ժամանակ տես ևս քեզ ինչպէս կը ծառայեցնեմ ինձ: (Դուրս է գնում):

Տիկ. Կէթէ. (Քայլում է դեպի ննջարանը: Բայց մինչեւ որ նա այսէնդ կը մտնի, մտնում է բրառնը այն սենեակից, ուր մրկութեան ծեսն եր կատարուել):

Բրառնը քան և վեց տարեկան է: Գունատ դէմքով, Ցողնած արտայատութեամբ: Աչքերի տակ շրջանակները ծանցան փոքրիկ բեխեր: Գրամը տակից խուզած: Հագուստը վերջին ճեփ, մի քիչ մաշռած, բայց վայելուչ: Բրառնը մաղսացին (Գլեգմատիկ) է, մեծ մասմբ դժգոհ, ուստի վաստակած:

ԲԲԱՌԻՆ. Այդպէս: (Կանգ է առնում եւ ծխատուփից հանում մի սիգարէս): Այս տանջանքն էլ տարանք:

Տիկ. Կէթէ. Իբրև թէ, լուր պ. Բրառն, դուք բաւական լու դիմացաք:

ԲԲԱՌԻՆ. (Ծխելով): Աւելի մեծ բաւականութեամբ ես կը նկարէի:—Յանցանք է և ամօթ—այսպիսի եղանակը իզուր վատնել:

Տիկ. Կէթէ. Լաւ, գեռ կը յաջողինք պակասը լրացնել:

ԲԲԱՌԻՆ. Ա՛խ, մենք բոլորս էլ անխափիր թոյլ բնաւորութեան տէր ենք: (Նսում է սեղանի մօս): Սակայն այդպիսի մկրտութիւնների մէջ մի ինչոր բան կա:

Տիկ. Կէթէ. Հետոնում էիք դուք Յոհաննէսին:

ԲԲԱՌԻՆ. (Ծապ): Նա զարմանալի կերպով անհանգիստ էր: Եւ ամբողջ ժամանակ սպասում էր, թէ ահա մի բան կը պատահի: Երկիւզ էի կրում, թէ մի դուցէ նա պաստօրի քարոզը ընդհատի: Այս, թէն հէնց քարոզն էլ անհաւատալի բան էր:

Տիկ. Կէթէ. Ինչու, պ. Բրառն:

ԲԲԱՌԻՆ. Այդ միանդամայն պարզ է, արկին Կէթէ: Սակայն ես բոլորովին գոհ եմ: Գիտէք, նոյն իսկ կարող է պատահել, որ ես այդ նիւթից մի պատկեր նկարեմ: Հիանալի բան է:

Տիկ. Կէթէ. Լուրջ էք ասում, պ. Բրառն:

ԲԲԱՌԻՆ. Եթէ ես այդ նկարեմ՝ իմ նկարից պիտի վչի, այսպէս ասած, յիշողութիւններով հարուստ մի բոյլ. դուք հասկանում էք—ճերմակ զինու... կարկանդակի, քթախոտի և մումիւրի... որ այնպէս, զիտէք, մարդու ախորժելի կերպով շշմացնի, երիտասարդական... այնպէս...

Ազն սենեակից, որտեղ մկրտութեան ծէսն էր կատարուել, մըտնում է Յոհաննէս Ֆօկերատը: Առ 28 տարեկան է. միջակ հասակով, շիկաներ, հողեղմալ շարժուն դէմքով: Նրա շարժուածքները անհանդիստ են: Հաղնուած է մաքուր, ֆրակ, սպիտակ փողպատ և ձեռնոցներ:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Հառաջում է եւ հանում ձեռնոցները):

ԲԻԱՌԻՆ. Զգացուած ես, չք: Խնձորի օշարակի նման հաւլուել ես, երեխ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ճիշտը չեմ կարող պնդել: Իսկ ճաշելու համար ինչ կարդազրութիւն ես արել, Կէթիւն:

ՏԻԿ. Կէթէ. (Անվեռողաբար): Դուրսը, պատշամբի վրայ, կարծում եմ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ի՞նչպէս. ոյնտեղ է արդէն հացը դցած:

ՏԻԿ. Կէթէ. (Երկչուուրեամբ): Այդ քեզ հաճելի չք. ես կարծում էի...

ՅՈՀԱՆՆԵՍ. Կէթէ, սիրելիս, բայց ոչ այդպէս խղճալի ձայնով. ես հօ քեզ չեմ ուտելու.—Այդ ինձ համար ճիշտ որ սոսկալի է:

Կէթէ. (Սփափելով իրան հաստատ ձայնով խօսել): Ես առացի, որ դուրսը սեղան պատրաստեն:

ՅՈՀԱՆՆԵՍ. Դէ, այդպէս, ի հարկէ:—Շատ էլ լաւ ես արել: Ամբ ես մարդակեր եմ, ինչ է:

ԲԻԱՌԻՆ. (Մրմրում է): Է՛, լաւ, դու էլ մի փնթինթայ այգքան:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Գրկելով Կերեին, բնեւուրեամբ): Իսկապէս, Կէթէ: Դու միշտ այնպէս ես անում, որ կարծես ես ուղղակի տան մէջ բռնակալ լինեմ: Կարծես մի զարհուրելի մարդ լինեմ: Դու պէտք է անպատճառ թողնես այդ սովորութիւնդ:

ՏԻԿ. Կէթէ. Բայց երբեմն քեզ համար անախորժ է, Յոհաննէս...

ՅՈՀԱՆՆԵՍ. (Նորից բանկուելով): Հինգ թնդ այդպէս էլ Անի, այդ մի դժբախտութիւն չէ: Այդ դէպքում ինձ մի լաւ շալրիբ. գու. էլ պաշտպանուիր: Իմ բնաւորութեան հետ ես ոչինչ չեմ կարող անել: Դու թոյլ մի տար այդպէս քեզ սորիացնել: Ես չը գիտեմ, ինչ կարող է ինձ այնքան անհաճոյ լինել, քան երբ մարդ այդչափ համբերող է, այդպէս Մաղսնայանման...

ՏԻԿ. Կէթէ. Դէ, իզուր տեղից էլ մի գրգռուիր, Հաննէս: Զարդէ զրա մասին խօսել:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Զայրացած): Օ, օ, օ! Դու հիմնովին սիսալում ես: Ես բնաւ չեմ դրդուում, մաքովս էլ չէ անցնում: Խսկապէս այդ զարմանալի է, թէ ինչու ես պէտք է ամեն չնշին բանի համար նեղանամ: (Բրառւեր կամենում է ինչ-որ ասել): Դէ լաւ: —Ի հարկէ, դուք այդ առելի լաւ գիտէք: Վերջ տանք. խօսենք մի այլ բանի մասին... Ախ, հա, հա...

ԲԻԱՌԻՆ. Գիտեմ, վերջապէս շատ ձանձրալի է զառնում քո մշտական ախ ու վախդ:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Բոնում է կուրծքը. Երա դեմքը ցավից ծռմբում է...) Ա՛խ:

ԲԻՍՈՒՆ. Էլ ի՞նչ պատահեց:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ոչինչ նոր: — Դարձեալ հին պատմութիւնը:
Կուրծքս ծակում է:

ԲԻՍՈՒՆ. Դու էլ յետ ծակիր, Համ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Լսիր, ծիշտ եմ ասում, կատակ անելու բան
չէ. Ա... ախ:

ՏԻԿ. Կէթէ. Ա՛խ Հաննէս, այդ չը պէտք է քեզ ան-
հանգստացի: Լուրջ ոչինչ չը կայ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Հա, բայց նրա համար, ովք երկու անգամ ու-
նեցել է թռփերի բորբագում...

ԲԻՍՈՒՆ. Դու անունն էլ պահեստի օֆիցէր է:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ի՞նչ անեմ դրա դէմ:

ԲԻՍՈՒՆ. Պառաւ մելամաղձուս: Մի թուլացիր, մի բան
կեր, քարոզն է նստել ոսկորներում մգ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Պարզն ասած, Բրէօ... Դու այնպէս ես խօ-
սում մկրտութեան մասին... թէ ինչպէս ես եմ վերաբերում
այդ բանին, գու գիտես: Յամննայն դէպս ես նայում եմ դրա
վրայ ոչ-քրիստոնէական տեսակէտից: Բայց և այնպէս զա մը-
նում է միշտ իբրև մի բան, որ շատ շատերի համար սուրբ է:

ԲԻՍՈՒՆ. Բայց ոչ ինձ համար:

ՅՈՀԱՆՆԵՍ. Այդ ես գիտեմ: Ուզզակի ոչ էլ ինձ համար:
Վերջապէս նոյնքան, որքան քեզ համար: Բայց չը եր պէտք է
դէմ մի փոքր պատկառանք ունենաս գէպի այն հանդէսը, որ
մի քիչ առաջ...

ԲԻՍՈՒՆ. Էհ, դու էլ քո բարեսպաշտական զգացմունքով:

ՅՈՀԱՆՆԵՍ. Եթէ դու էլ այդ զգացմունքից մի քիչ ունե-
նայիր:

ԲԻՍՈՒՆ. Հա, գէպի ամեն մի փայտի կտոր, որ մէկի
ոսների տակ է թռչում, պէտք է պատկառանք ունենալ: Դա
ուզզակի զգացմունքների զառանցանք է:

ՅՈՀԱՆՆԵՍ. Դէ, դու մի նեղանար, եթէ ես... մի ուրիշ
անգամ գուցէ ես աւելի հեշտ տանէի այդ, քան այսօր: (Դուքս
է զնում պատշաճը, ուր երեւում է, թէ ինչպէս մարմնամար-
զական փարժուրի ներ է անում):

ԲԻՍՈՒՆ. (Նփորուած վեր է կենում եւ առանց պատճառի
ծիծաղում):

ՏԻԿ. Կէթէ. (Կանգնած կարի սեղանի մօս): Դուք նրան
վիրաւորեցիք, պարոն Բրատն:

ԲԻՍՈՒՆ. (Նփորուած ծիծաղելով, յետոյ կուսուրեամբ): Ի՞նչ

կարող էի անել: Ասելով ատում ևմ ամեն մի կիսատութիւն:
Տիկ. Կէթէ. (Կարն լոռոքիւնից յետոյ): Դուք անարդար էք
դէպի նա:

ԲԻԱՌՈՒՆ. Բայց այդ ինչո՞ւ:

Տիկ. Կէթէ. Ես չը գիտեմ... ես չեմ կարողանում ար-
տայայտել այդ: Յամենայն դէպս... Հաննէսը անկեղծօրէն է
մաքառում:

ԲԻԱՌՈՒՆ. Այդ որ ժամանակից է նա այդքան սաստիկ վի-
րաւորող զարձել, կ'ուղենայի ես իմանալ:

Տիկ. Կէթէ. Այն ժամանակից, երբ մկրտութեան մասին
հարց բարձրացաւ: Ես արդէն այնքան ուրախ էի... իսկ այդ
վէճը կրկին խլեց նրա բոլոր հանգստութիւնը: Զէ որ հանդէսը
միայն մի ձեականութիւն է: Միթէ պէտք էր դրա համար ծեր
ծնողներին պատճառել մի սոսկալի վիշտ... ոչ—այդ բոլորովին
լաւ չէ: Այս ինքներդ զատեցէք, այնպէս բարեպաշտ, ջերմ հա-
ւատացող մարդիկ են: Պէտք է համաձայնուէք, պ. Բրաուն:

ՅՈՒԱՆՆԵՍ. (Բաց է անում ապակի դուռը և բացագան-
չում): Տղերք, ես մի քիչ զրգուուած էի: Ուրախացէք: Տեսնում
էք, ես էլ բացուեցի: (Գնում է դեպի պարտեզը):

ԲԻԱՌՈՒՆ. Ոչսար:

Դադար (պասուզա):

Տիկ. Կէթէ. Նա երբեմն ինձ ուղղակի յուղում է:

Դադար:

Այն սենեակը, որտեղ կատարաւել էր մկրտութիւնը, մոնում են ու-
րախ աղմուկով Յօկերատ-հալըր և պաստօր Նոլինը: Յօկերատի տարիքը
60-ի մօտ է: Դորշ գլուխ, շէկ միրուք, ցան (պէն) դէմքի և ձեռքի վրայ:
Հուժկու և լայն, չաղութեան հակոսած: Նա արդէն մի քիչ կորացել է և
ման է զայս մանը քաղլուածքով: Ամբողջովին սէր և բարեացակամու-
թիւն է նրանից թափում: Չուարթ, պարզ, կենսուրախ բնաւորութեամբ:
Պաստօր Կոլին, 73 տարեկան մի ծեր, զնում է փոքրիկ զուակ և քթախոտ
է քաշում:

ՖՕԿԵՐԱԾ. (Մտնում է՝ պասօրին քեւանցուկ, խօսում է
հետք մեղմ, մի քիչ բունուած ձայնով): Շատ, շատ չնորհակալ եմ,
պարզն պաստօր. շատ չնորհակալ եմ պատճառած հոգեզմայլու-
թեան համար, հա: Ուղղակի մի ինչոր հոգեկան ամրացում էի
ես զգում, հա, հա: Ա՛, դու այստեղ ես, սիրելի զստրիկա: (Մո-
տենում է Կէրեին, զրկում է եւ ենթուրեամբ համբուրում նրան):
Դէք, իմ սիրելի, սիրելի Կէթէ! Իմ ամբողջ հոգով ցանկանում
եմ քեզ բախտ: (Համբոյ): Ողորմած Աստուածը նորից ցոյց
տուեց իր մեծ բարութիւնը, հա... Նա յայտնեց իր անսահման

բարութիւնը: (Համբոյր): Նրա ողորմութիւնը և բարութիւնը անշափ է: Եւ նա այժմ, հա... Եւ նա այժմ կը տարածէ իր հայրական ձեռքը, հա, մեր մանկիկի վրայ, հա—(Թրառւելին): Թողլ տուէք, պ. Բրառուն, ձեր ձեռքը ևս սեղմել: (Յոհաննեսիր մտնում է. Ֆօկերատը գնում է երա հանդեպ) Ահա և դու, իւ հարազատ Յոհաննէս: (Համբոյր. ամուռ գրկախառնութիւն: Գրեթէ ծիծաղելով յառզումից): Ուրախ եմ քեզանով: (Համբոյր): Իսկապէս ուրախանում եմ: Ես չը գիտեմ, ինչպէս չնորհակալ լինեմ ողորմած Աստուծոց, հա, հա!

ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ. (Քիչ գողդոցուն, շնչառութիւնը արագ, ընդիաս, հանդիսաւոր կերպով սեղմում է Կերեկ ձեռքը): Կրկին անդամ, թող ձեզ վրայ լինի Աստուծու օրհնութիւնը: (Սեղմում է Յոհաննեսի ձեռքը): Թող լինի ձեզ վրայ Աստուծու օրհնութիւնը:

ՅՈԿԵՐԱԾ. Դէ հիմա, սիրելի պարոն պաստօր, ինչ ծառայութիւն կը հրամայէք մատուցանել ձեզ: Ոչի՞նչ: Օ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Խնդրեմ, պ. պաստօր.—գոնէ մի բաժակ գիշենի անուշ արէք: Ես կը բերեմ մի նոր շիշ:

ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ. Նեղութիւն մի քաշէք, լսեցէք, ոչ մի նեղութիւն:

ՅՈՀԱՆՆԵՍ. Որից կը կամենաք, ճերմակ թէ...

ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ. Ինչպէս կամենաք, բոլորովին ինչպէս կամենաք. բայց—լսեցէք.—յատուկ խնդրում եմ մի անհանգատացէք: (Յոհաննեսիր դուրս է գնում): Իսկ այժմ ես... (Որոնում է իր իրերը: Գլխարկը, վերակուն եւ պլեսը կախուած էն դռան մօս կախարանից):

ՅՈԿԵՐԱԾ. Միթէ դուք պատրաստւում էք արդէն գնալ, պարոն պաստօր:

ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ. Այն, լսեցէք.—իսկ քարոզ: Ապա ով կը խօսի վազը իմ քարոզ:

ԲՐԱՌԻՆ. (Պատրաստ բռնում է պասօրի վերարկուն հագցնելու համար):

ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ. (Հագնելով վերարկուն): Շնորհակալ եմ, երիտասարդ պարոն:

Տիկ. Կէթէ. Միթէ մեղ պատիւ չէք անիլ, պարոն պաստօր, մասնակցելով մեր համեստ ճաշին...

ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ. (Հագնուելով): Շատ լաւ, շատ լաւ, սիրելի արիկին Ֆօկերատ: Սակայն...

ՅՈԿԵՐԱԾ. Յարդելի պ. պաստօր, ճշմարիտ, դուք պէտք է այդ անէք մեր սիրոյն:

ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ. (Անվասան): Սակայն, լսեցէք.—լսեցէք...

ՖՕԿԵՐԱԾ. Բայց եթէ մնաք բոլորս ձեզ շատ խնդրում ենք:
ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ. Ապա Աստուածային խօսքը, որ ևս զարդ պատրաստում եմ քարողել. հասպա, —քարողել—լսեցէք—Աստուծու խօսքը—վաղը: (Յոհաննեսը վերադառնում է եւ զինին ածում):

ՖՕԿԵՐԱԾ. (Վերցնում է բաժակը, զինու համբ տեսնում է): Նախ և առաջ... դուք յամենայն գէպս սրանից չեք հրաժարուիլ:

ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ. (Վերցնում է նրանից բաժակը): Դրանից—ոչ, լսեցէք: Այսպէս ուրեմն—ուրեմն նոր մկրտուածի... նոր մկրտուածի կենացը! (Հրխկացնում են): Խմենք, որ նա կարողանայ մնալ Աստուծու հարազատ և ճշմարիտ զաւակ:

ՖՕԿԵՐԱԾ. (Կամացուկ): Տայ Աստուած:
ՅՈՀԱՆՆԵՍ. (Առաջարկում է պասօրին սիզար): Դուք անշուշտ ծխո՞ւմ էք, պ. պաստօր:

ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ. Այն, չնորհակալ եմ: (Վերցնում է սիզարը եւ կտրում է ծայրը): Շնորհակալ եմ! (Վառում է Յոհաննեսի սիզարի կրակից): Պֆ, պֆ! (Քառում է մեծ ջաներով): Վերջապէս սիզարը վառում է: Աչքի անց կացնելով սենեակը): Դուք գեղեցիկ կահատորել եք, պֆ, պֆ!—մեծ ճաշակով. լսեցէք: (Երջում է, ենքարկելով պատկերները նախ հարեւանցի, ապա մանրամասն զենուրեան: Կանգնելով մի պատկերի առաջ, որ Ենրկայացնում է Յակոբի կոփուր հրետակի հետ): Ես—քեզ չեմ թողնիլ, դու—պֆ, պֆ!—մինչև որ ինձ չօրհնես: (Մրմում է նա ինքնազոհ):

Տիկ. Կէթէ. (Քիչ երկչոս): Հայրիկ! Ես կ'առաջարկէի քեզ—գնալ պարտէզ. այնուեղ այժմ հիանալի է: Աւելի տաք է քան սենեակում: Գուցէ դու կը գնաս պարոն պաստօրի հետ... իսկ ես կ'ասեմ բաժակները փոխադրել այնուեղ:

ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ. (Նայում է գրադարանի շուրջ կափուած զինակաների պատկերները): Խայտաճամուկ հասարակութիւն! Մրանք ի հարկէ—պֆ, պֆ!—ձեր ուսուցիչներն են, պ. դօկտօր: Լսեցէք!

ՅՈՀԱՆՆԵՍ. (Քիչ շփորուելով): Այն... այսինքն... բացի Դարվինից, ի հարկէ:

ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ. (Աչեցր յառած պատկերներին): Դարվին, Դարվին.—Հա, այդպէս! Դարվին! Հա, իսկ որ! ըմմ! Լսեցէք! (Կարդում է վաճկ-վաճկ) երնստ—Հէկէլ: Մինչ ան-

գամ՝ սեփական ստորագրութիւն! Պֆ, պֆ! (Ոչ առանց հեգնութեան): Ուրեմն նա ձեր ուսուցիչն է եղել:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Ետապ, բռնկուելով): Այս, և ես պարծենում եմ դրանով:

ՖՈԿԵՐԱՏ. Իմ հարսս ճիշտ է ասում, սիրելի պաստօր: Դուրսը շատ աւելի տաք է: Եթէ դուք դէմ չեք՝ զնանք: Ես կը վերցնեմ դինին և բաժակները:

ՊԱՍՏՈՐ ԿՈԼԼԻՆ Շատ լաւ! պֆ, պֆ! հիանալի! պֆ, պֆ! սակայն, լսեցէք.—մի երկու բոպէ, այս! (Յօկերատի հետ զնալիս խօսում է գրգուած): Մարդս, պ. դատաւոր! մարդս, այլ հա, պֆ, պֆ! այլ հա իսկապէս Աստուծու պատկերը, նմանութիւնը չէ, լսեցէք: Այլ իսկապէս կապիկ, պֆ, պֆ! Գոնէ, բնական գիտութիւնը այդ եղբակացութեան է հասել...

(Դուքս են զնում պատշաճամբը, երկուան էլ աշխոյժ շարժումներ անելով, իջնում են պարտէզ):

ԲՐԱՌԻՆ. (Ծիծաղում է ինքն իրան):

ՅՈՀԱՆՆԵՍ. Ի՞նչ ես ծիծաղում:

ԲՐԱՌԻՆ. Ե՞ս: Ինչու: Ուրախանում եմ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ուրախանում ես:

ԲՐԱՌԻՆ. Այս. միթէ չէ կարելի:

ՅՈՀԱՆՆԵՍ. Խնդրեմ, խնդրեմ: (Ցես ու առաջ է զնում, հառաջում է եւ յանկարծ դիմում է Կերեկն, որ ուզում է հեռանա): Ասմ, ես երեի մի քիչ կծու էի:

ՏԻԿ. Կէթէ. Այս, փոքր ինչ:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Թօրուելով ուսերը): Դէհ, պարսներ.—այդ դէպօռում ես ոչինչ չնմ կսրող անել: Այդպիսի բան ես տանել չեմ կարող: Ամեն ինչ սահման ունի: Եթէ նրանք կամենում են ինձ գրգռել...

ՏԻԿ. Կէթէ. Բայց իսկապէս այդ ամենը շատ կակուդ ձեռվ էր յայտնուած:

ՅՈՀԱՆՆԵՍ. Միթէ:

ՏԻԿ. Կէթէ. Ո՞վ զիտէ, գուցէ նա չը նկատեց էլ քո կծու ոճու:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Անց ու դարձ է անում եւ գլուխը քորում): Բայց այնու ամենայնիւ ինձ այդ անախորժ է:

ԲՐԱՌԻՆ. Դարձեալ մի պատճառ գտար նեղանալու, Հանս:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Յանկարծ բռնկուելով), Է՞հ, սատանան տանի, հանգիստ թողէք ինձ վերջապէս: Դուք պէտք չէ շատ հեռու գնաք—եթէ համբերութիւնս հատնի...

ԲԲԱՌԻՆ. Այդ վատ չէր լինի:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Դառնալով Բրառւելին): Դուք համոզմունքի պարծենկոսներ էք, աւելի ոչինչ: Ի՞նչ կարիք կար ախր, որ ես ծերուկին ճշմարտութիւնը ասէի, ինչի՞ համար: Գիտես, երբ դու այդպէս ես խօսում, իսկոյն հանգստացնում ես իմ մէջ բարկութիւնը: Ինձ համար իսկոյն պարզւում է, որ դա միայն տղայութիւն է, մի փոքր անգամ զրդուել այդպիսի մարդկանց վրայ: Այդ մի և նոյն է, որ ես սկսեմ վրդովուել, թէ ինչո՞ւ սոճին առեղներ ունի: և ոչ տերեններ: Օրեկտիվ պէտք է լինել, սիրելիս:

ԲԲԱՌԻՆ. Գուցէ զիտութեան մէջ, բայց ոչ կեանքի:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ախր պարոններ. այդ ամբողջ դատարկաբանութիւնը ինձ այնքան է ձանձրացրել... այնքան ձանձրացրել... որ դուք երեակայել անգամ չէք կարող, թէ ինչպէս... (Վազվզում է յետ ու առաջ):

ԲԲԱՌԻՆ. (Վառարանից, որի մօս կանգնած էր, հեռանում է դեպի սեղանը, եւ դնում է մոխանանի մէջ սիզարեկի մեացորդը): Իսկ ինձ չէ ձանձրացրել: Ինձ էլ բաւականաշափի: Բայց այդ պատճառով շարունակ տրտնջալ ու լալ՝ այդ ես երբէք թոյլ չեմ տալ:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Փղխուած ձայնով եւ ժպտուն): Լաւ, լաւ, մի տապանար: Շարունակ տրտնջալ ու լալու մասին խօսք էլ չը կայ: Իսկ եթէ պատահում է, որ հառաչում եմ, այդ այն պատճառով է, որ օդի սովում եմ զգում, աւելի ոչինչ: Ո՞չ, ոչ, իմ կեանքս այնքան էլ վատ չէ և յամենայն դէպս գեռ շատ հեռու եմ քեզ պէս մնանկ լինելուց:

ԲԲԱՌԻՆ. Կարող է պատահել:

ՅՈՀԱՆՆԵՍ. Գրազ կը գնա:

ԲԲԱՌԻՆ. Ամեննեին:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ա՛խ, մնանկ, մնանկ, սակայն իսկապէս ի՞նչ է նշանակում մնանկ: Դու էլ նոյնքան քիչ ես մնանկ, որպէս և ես: Միայն լաւ կը լինէր, եթէ ես չը նեղացնէի ծերուկիս և պատօրի տրամադրութիւնը:

ՏԻԿ. Կէթէ. (Գրկելով Յոհաննեսին): Հաննէս, Հաննէս, զուարթ կաց, զուարթ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ինձ մտատանջում է և իմ աշխատութիւնը: Ահա նորից երկու շաբաթ է, որ չեմ կարողանում պարապել:

ԲԲԱՌԻՆ. Ո՞րպիսի փոքրոդութիւն: Դու ինքդ չես ուզում ընդունել, թէ նրքան ողորմելի է այդ ամեննը:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Չը լսելով նրա ասածները): Ի՞նչ:

ԲԲԱՌԻՆ. Երբ անձրէ է՝ թաց է, երբ ձիւն է գալիս՝ սպիտակ է, երբ ցուրտ է անում՝ սառչում է:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ոչխար:

ՏԻԿ. ԿԵԹԵ. Չուարթ կաց, ֆրից. մտածիր մեր փռքրիկ ֆիլիպի մասին. Մեզ համար ձմեռը այստեղ այնքան յարմար կը լինի: Ա՛խ, այն ժամանակ ինչպէս լաւ կը պարապես:

ՅՈՀԱՆՆԵՍ. Գիտես, Բրէօ, արդէն չորրորդ գլուխը պատրաստ է:

ԲԻԱՌԻՆ. (Անտարբեր): Հա:

ՅՈՀԱՆՆԵՍ. Հապա մի նայիր, տես ձեռագիրը. միմիայն աղբիւրները 12 երես են բռնում: Ահա քեզ աշխատութիւն: Ճիշտ չէ: Ա՛խ, թէ ինչպէս կը ցնցուեն կեղծ ծամեր կրող ծեր զլուխները:

ԲԻԱՌԻՆ. Հաւատում եմ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Ահա, օրինակի համար (Թերում և ձեռագիր): Այստեղ ես յարձակում եմ Դիւրուա-Շայմօնի վրայ:

ԲԻԱՌԻՆ. Դու... ճշմարիսն ասած, այժմ մի կարդար: Ես հիմա անպիսի ծոյլ տրամադրութեան մէջ եմ, որ... մի ուրիշ անգամ...

ՅՈՀԱՆՆԵՍ. (Համակերպուելով): Բնականաբար, հա, ի հարկէ: Դէ—ես սկի չէի էլ ուզում: Ես...

ՏԻԿ. ԿԵԹԵ. Շուտով ճաշելու էլ ենք:

ՅՈՀԱՆՆԵՍ. Բնականաբար, ի հարկէ, ի հարկէ... ես բոլորովին չէի էլ մտածում. ես ուզում էի միայն—է. (Հառաջելով ձեռագիրը նորից դնում է գրեթե պահարանում):

ՏԻԿ. ԿԵԹԵ. Հաննէս, զուարթ կաց, զուարթ:

ՅՈՀԱՆՆԵՍ. Դէ, Կէթէ, ես հէնց այդպէս էլ եմ:

ՏԻԿ. ԿԵԹԵ. Զէ, դու էլի վշտացար...

ՅՈՀԱՆՆԵՍ. Եթէ լայնարձակ երկրի վրայ գէթ մի մարդ մի բան ունենար և ինձ համար: Շատ բան չէ հարկաւոր: Մի քիչ համակրութիւն, մի քիչ հասկացում իմ աշխատութեան:

ՏԻԿ. ԿԵԹԵ. Պէտք է խոհեմ լինես: Դու չը պէտք է քեզ ցաւ պատճառես: Պէտք է համբերող լինես: Ժամանակը կը գայ. երբ նրանք կը հասկանան...

ՅՈՀԱՆՆԵՍ. Իսկ մինչև այն ժամանակը: Կարծում ես հեշտ է այդպէս առանց աջակցութեան... կարծում ես կարելի է այդքան ժամանակ դիմանալ...

ՏԻԿ. ԿԵԹԵ. Հաւատացած եմ: Ե՛կ, Հաննէս, երբ մի միտք ճնշում է՝ պէտք է աշխատել նրանից աղատուել: Ե՛կ, զնանք, մի տես Ֆիլիպպին: Քնած ժամանակը նա այնքան սիրուն է: Այսպէս է նա միշտ պառկած: (Ցոյց է տալիս, ինչպէս երեխան ծալում է քարիկները): Այսպէս բռունցքներ է շինում նա միշտ: Ծիծաղից կարելի է մարել: Ե՛կ, գնանք:

ՅՈՀԱՆՆԵՍ. (Բրառւնին): Դու էլ կը գնա մեզ հետ:
ԲԻՍՈՒՆ. Ահ, չէ, Հանս, չեմ սիրում փոքրիկ երեխաներին: Ես կը դնամքիչ կը շրջեմ պարտէղում: (**Ինւրս է զալիս պատճամբը:**)

ՅՈՀԱՆՆԵՍ. Տարօրինակ մարդ:

ՏԻԿ. ՖՈԿԵՐՍ. (Զգուշութեամբ բաց է անում ննջարանի դուռը): Տես ինչ զեղեցիկ է:—Շշ... կամաց, էլ կամաց: (**Երկուսն էլ դուրս են զնում ձեռք ձեռքի տուած եւ ուների ծայրերի վրայ:**)

Ե.—Ե.

(Կը տարունուկով)

ԱՆԻԾԱԾ ՀԱՐՍԸ

Ժող. լեզենցա

Վաղ ժամանակ
Մի հին շենում
Մի յարգեւոր
Հարսն է լինում:
Նորա բերնից
Կեսուր-կեսառ
Զեխն լրսել
Մի ըունչ, մի քառ.
Զեխն տեսել
Շուրքը մի օր:
Էսպիս խոնարհ
Ու յարգեւոր:
Մի օր մենակ
Օդում նրսած,
Եր ճոխ մազերն
Արձակ քափած,
Ազատ, անփոյթ
Սամում-հիւսում
Հետն էլ ձենով
Երգ էր ասում.

«Աչսարքը բան,
Մէջը անբախս
Ես մի զերի անխընդում:

Սիրուն շորեր,
Զահկը օրեր
Ի՞նչ եմ անում էս քանում:

«Երեկ՝ ծըսին,
Ճիւղի միջին
Ծըլվըլում է, թրբըլում.
Թըռչում՝ սիրած
Ընկերն առած,
Ազա՛ս, կանաչ արտերում:

«Ա՛խ, սե՛ւ ըի,
Չըքուի, փըլի
Ծնուած օրը աղջըկայ.
Ցաւ ու խընդում՝
Փակուած սրտում—
Ծիծաղ չը կայ, «ախ» չը կայ»:

Մին էլ յանկարծ
Բացուեց դուռը,
Ու ներս մըսաւ
Ծեր կեսուրը:
—Յօ՛ պօ՛, պօ՛, պօ՛ *),
Կանչեց խեղճը,
Գետին պատոի—
Մտնեմ մէջը...
—Յօ՛պօպ դառնաս,
Անամօք հարս.
Մի տե՛ս, մի տե՛ս
Թէ լըրի պէս
Գըլուխը բաց,
Ազա նըսած
Ո՞նց է կանչում,
Չի ամանչում...

*) Ամօթի ու գախի բացազանչութիւնն է:

Լեզուդ լալկի,
Մազրդ քաղկի,
Գըլխիդ կրպչի
Սանրը միջի:
Ասաւ-չասաւ՝
Մին էլ տեսաւ—
Սանրը գըլխին
Հարսն առաջին
Յօպօպ դառաւ,
Երդկից քրուաւ
Ու վերացաւ,
Վե՛ր—հեռացաւ:

Էն էր ու էն.
Խեղճն էն օրէն
Հանդերն ընկած
Յօպօպ մընաց,
Միշ էլ էն հին
Սանրը գըլխին,
Չալի՛կ-մալի՛կ,
Լեզուն լալիկ,
Անխօս ու լուռ,
Մոլոր, սըխուր:

Բայց երբ յանկած
Միտն է զալիս,
Որ գըլխաբաց,
Երգ ասելիս
Եր կեսուրը
Բացեց դուռը՝
Վեր է քրոչում
Սըրտաքրովի
Ու դեռ նըշում՝
—Յօ՛պօ՛պ... յօ՛ պօ՛պ...

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՀԱՅՐԵՆԱՍԷՐԻ ԻՏԱԼԱՑԻՆ

(Մաքոնորդառնի)

Լուսնը սալնը թէն մեծ չէ, բայց գեղեցիկ և նուրբ ճաշակով կահաւորուած է։ Զմեռն այդ սալնի տաքութիւնը չափաւոր է և նրա առաստաղից կախուած գեղեցիածն ճրադը փառաւոր լոյս է տարածուած սալնի ամրող տարածութեամն մէջ, որ շատ է նպաստում նրա մէջ հիւր եղող մարդկանց ուրախ և անվերջ խօսակցութեանը, քանի թէ ուրիշ ճրագների սաստիկ և վնասակար լուսաւորութիւնը։

Մենք դանւում էինք այդ միենոյն սալնում, և մեր ընկերական շրջանը բազկացած էր 8—10 ուրախ անդամներից, որոնց մեծ մասը պատկանում էր իդական սեռին։ Մենք փառաւոր կերպով բաղմել էինք բազկաթոռների վրայ, իսկ մեր չինական փոքրիկ բաժակիներում ածած թէյը շոգիանում և իր անուշահոտութիւնը տարածում էր սալնում։ իդական սեռին պատկանող գրեթէ բոլոր անդամները բոլորուն էին կլոր սեղանի շուրջը։ Մեր խօսակցութիւնը կարնավալի և նրա հետ կապ ունեցող ուրախութիւնների մասին չէր։ Զարմանալին և գրեթէ անհաւասարին այն էր, որ մեր խօսակցութիւնը մի վերացականի բանի մասին էր։ Մենք ուզում էինք վճռել այն հարցը, թէ սէր և հայրենասիրութիւն զգացմոնքներից որն է աւելի զօրքեղ։ Մեր շրջանում ոչ մի կրթուած կին չը կար, և գրա համար ես զարմանում էի, թէ ինչպէս պիտի կարողանաք այդ լուրջ հարցի մասին վիճարանել, բայց այնու ամենայնիւ այդ ի նկատի չառնելով՝ մենք արդէն սկսել էինք մեղ հետաքրքրող հարցի մասին տաք-տաք վիճարանել։

Տարբեր կարծիքներ էին յայտնուում։ Ոմանց կարծիքով հայրենասիրական զգացմունքն է զօրեղ կերպով ազդում մարդկային հոգու վրայ, իսկ ոմանք էլ սէր զգացմունքն էին զօրեղ համարում։

—Օ՞հ, միջամտեց մի բարձրահասակ, չէկ գանգուրներով և

կապոյտ աչքերսվ օրիորդ, որ արդեն 14 օրից ի վեր նշանուել էր, ևս հաստատ համոզււած եմ, որ սէրն առելի զօրեղ զգաց-
մունք է քան հայրենասիրութիւնը և ոչ մի ուրիշ զգացմունք
չէ կարող նրանից ուժեղ վննել Սէրը քանի քանի մարդկանց է
ողերել և խրամուսել ներսամական գործեր կատարելու և ինքնա-
զոհութեան աարել, քան թէ հայրենասիրութիւնը:

Իր կարծիքը յացնելուց յետոյ նա մի կարելցական և
քնքոյշ հայեացք ձգեց նշանածի վրայ, որ նստել էր նրա մօտ և
ըստ երևոյթին նրա խօսքերի կենդանի բացատրողը պիտի
լինէր:

Նախոննձնվ նշանածն իր ընտրած աղջկայ կարծիքին այն-
քան էլ նշանակութիւն չը առենց, այլ անդում էր, որ երիտա-
սարդութեան վրայ սէրն է մեծ աղջեցութիւն գործում, իսկ
աւելի հասունացած մարդկանց վրայ հայրենասիրութիւնը:

—Իսկ ինչ ինձ է վնրաբերում, ասաց մի գոկտօր, որ շատ
էր սիրում այլպիսի շրջաններում Արիստատէլի վիլխոտիայու-
թեան մասին մտածել և խօսել, ևս կարծում եմ, որ աղջայ-
նական և ցեղական առանձնայատկութիւնների վրայ պէտք է
մեծ ուշադրութիւն դարձնել: Սանդափբա հիւսիսաբնակը հայ-
րենիքի վիրացական գաղափարով աւելի շատ է ոգնորւում, քան
տարարին հարաւաբնակը, որ աւելի՝ զուտ մսից և արիւնից
բազկացած արարածի համար է ողնորւում: Հնդկացին սիրոյ
համար՝ խինս ծառի, միայն բնիկներին յայտնի, գաղափնիքը մատ-
նեց սովոնական նահանգապետի հիւսանդ աղջկան, և զրանով
նորասաւեց աւենդի ոյժը ոչնչացնելու, որ մի և նոյն էր, թէ Ամե-
րիկան աշխատեց օտարը ճնշաներից բայց այդ հնդկացին հարա-
ւարնակ էր և աւելի ընդունակ սիրելու, քան թէ հայրենասի-
րութիւնամբ զբաղուելու: Մի շվեր կամ անզիւցի իր հայրենիքի
համար աւելի շատ բան կը զոհի, քան իր սիրուհու համար.
բայց այդ բանը կասկածում եմ ասել մի սպանացու կամ իտա-
րացու մասին:

Մէր շրջանի աչքի ընկնող անձնաւորութիւնը տիկին ֆօն
Գ...ն էր: Նա մի չաղ, չափազանց կանոնաւոր հագնուած և մօտ
40 տարեկան կին էր: Նրա մազերը փայլուն և սև էին, դէմքի
գծագրութիւնը նուրբ, շրթունքները նուրբ և ծնօտը լիքը, ուժեղ
ու կլոր: Այդ բոլոր նշանները խելոյն մատնում էին, որ նա հա-
րաւի տիոլ էր: Եթէ նրա արաւպէն տեսքն ու բնաւորութիւնն էլ
ը լինէին՝ այդ կարելի էր եղբակացնել նրա արտասանութիւ-
նից: Գերմաններէն խօսելու ժամանակ նա խելոյն և եթ օտար-
երկրացի կնոջ աղաւորութիւն էր թողնում:

Տիկին քօն Գ...ն մինչև այդ ժամանակ լուռ և ուշադրութեամբ լսում էր մեր խօսակցութիւնը: Դօկտօրի վերջին կարծիքը նրա շրթունքների վրայ ծիծաղ առաջացրեց և ստիպեց նրան մեր վիճաբանութեանը մասնակցելու:

—Պարոն գօկաօր, ինչ որ դուք ասացիք սպանացիների և խօսալացիների մասին, նկատեց նա, ևս չեմ կարող ձեր կարծիքն անպայման կերպով ընդունել: Եթէ թոյլ կը տաք՝ ես իմ կեանքից մի կարծ միջադէպք կը պատմեմ, որից դուք կարող եք եզրակացնել, որ գանաղան հանդամանքներում խօսացու վրայ էլ հայրենասիրութիւնը աւելի սաստիկ է ներդործում, քան թէ սէրը:

Նրա արամագրութիւնից կարելի էր խօկոն ենթադրել, որ այդ միջադէպքը բոլորիս համար հետաքրքրական պէտք է լինէր:

—Դուք զիտէք, որ ես միլանեցի եմ և սրանից տասը տարի առաջ թողեցի ծննդավայրս, և ամուսնուս կոչումն ինձ այստեղ բերեց: Ես 18 տարեկան աղջիկ էի, երբ Լոմբարդո-Վենետիկեան ապստամբութիւնը ճնշուեց: Մարշալ Ռադեցիկին յաղթական զօրքի զլուին անցած մասաւ Միլան: «Խօսալիայի սուրբ» արդէն կոտորուած էր և իւրաքանչյւր հայրենասէր ստիպուած էր արխիւնալի սրտով իր յոյսերի իրականանալուց ձեռք վլրցնել: Օհ, դուք չէք կարող այն ժամանակուայ թշուառութեան և վշտի մասին գաղտնիար կազմել, որովհետեւ այն ժամանակը չէք ապրել: Մենք ամեն կողմից պաշարուած էինք և միշտ աշխատում էինք խուսափել թշնամիներից, որոնք զիտմամբ, տանջելու համար, մեղ յիշեցնում էին մեր հայրենիքի թշուառ դրութիւնը և աննախանձելի վիճակը: Մենք թողեցինք մեր սովորական զրօսամքները, որովհետեւ աւստրիական սպաները ամեն քայլափոխում մեզ հետեւում էին: Իւրաքանչյւր ընտանիք բաւականանում էր միայն իր եւ կանաչական շրջանով և ապրում էր չորս պատերի մէջ փակուած: Դուք հաղին թէ կարողանաք երեակացել, թէ այդ դրութիւնը մեզ, խօսալացիներիս, որքան վիշտ և մեղամաղձութիւն էր պատճառում:

Այդ սարսափելի ժամանակում ես ծանօթացայ Ալբերտ քօն Գ...ի հետ, որի հետ ես յետոյ ամուսնացայ: Նա եղբօրս ուսումնակիցը և մի և նոյն ժամանակ մի յայտնի ինժեներ էր: Ալբերտը մի գեղեցիկ երիտասարդ և լաւ ընկեր էր, որի այցելութիւնները այն սարսափելի ժամանակում ինձ համար կրկնակի հածելի էին: Ես արդէն նկատում էի, որ նա ինձանով հետաքրքրուում է: Սկզբում նա միշտ եղբօրս հետ էր ինձ մօտ գտ-

լիս և նրա հետ էլ զնում: Յետոյ նա միայնակ էր գալիս, բայց խսկոյն հեռանում էր, երբ նկատում էր, որ եղբայրս տանը չէր: Վերջապէս նա մեր մշտական հիւրը դարձաւ, և որովհետեւ նրան ծնողներն էլ այդ այցելութիւններին հակառակ չէին, դրա համար նա հետզհետէ սովորութիւն դարձեց ինձ մօտ երկար մընալ և ինձ իր խելքը ու գրաւիչ խօսակցութեամբ հրապուրել:

Մենք արդէն միմնանց շատ լաւ էինք ճանաչում և փոխադարձ վատահաւթիւն վայելում, երբ նա մի օր (նա կէսօրից յետոյ ինձ մօտ էր լինում, որովհետեւ մենք ընթերցանութեամբ էինք պարապում) ինձանից յանկարծ թոյլտութիւն խնդրեց ծխելու:

—Ի՞նչ, գոռացի ես սարսափելով. միթէ գուք ծխում էք, Ալբերտ:

Պէտք է իմանաք, որ այն ժամանակ ես բոլորավին զզւում էի ծխող մարդկանցից: Ես միշտ գովում էի եղբօրս, որ կարողացել էր ազատ մնալ այդ զզուելի սովորութիւնից, և ամեն անգամ ասել էի, որ ես ինձ ամեն բան թոյլ կը տամ անելու, բայց կը զզուեմ այն մարդուն համբուրել, որի շրթունքները խայտառակ և գարշելի ծխախոտով կեղադառնուած են:

Ես մինչեւ այն ժամանակ չէի իմանում, որ Ալբերտը ծխում է, որովհետեւ նա իմ սկզբանում չէր ծխել, և ուրիշ անգամ էլ առիթ չէր ունեցել նրա պահասութեան մասին տեղեկանալու:

Իմ հարցի տնը շփոթեց Ալբերտին:

—Այն, ես ծխում եմ, պատասխանեց նա քաշուելով. բայց ինչո՞ւ էք գուք զարմանում:

—Այն, զարմանում եմ և այդ բանն ինձ օտարութիւնում, իմացէք, որ ես չեմ ամուսնանայ այն մարդու հետ, որ ծխախոտը դնում է իր բերանում: Այդպիսի մարդն իմ աշքում մը զզուելի արարած է:

Ալբերտը սարսափած նայեց ինձ, ոչինչ չխօսեց և ծխախոտը կիսեց զրածանը: Նա մի քիչ էլ մնաց ինձ մօտ և վերջապէս ինձ ողջունելուց յետոյ գուրս գնաց:

Միւս օրը նա կրկին եկաւ ինձ մօտ և առանց մի որ և է առիթ՝ ծխելու մասին խօսակցութիւն սկսեց և կատակելով ասաց, որ երէկ ինքը զարմացաւ և յոյս ունի, որ իբր թէ ես կ'աշխատեմ ընտերանալ նրա սովորութեանը և թոյլ կը տամ իւրան ծխելու. և այնու Բայց ես նրան շատ լուրջ կերպով ասացի և հասկացրի, որ ես չեմ կարող ծխող մարդկանց տեսնել և հաշտուել նրանց անտառնելի սովորութեան հետ: Ծնդհակառակին, ես սպասում եմ, որ ինձ սիրող մարդը թողնի իր ատելի սովորութիւնը և դրանով ինձ համար զոհաբերութիւն անէ:

իմ վերջնական բացատրութիւնից յետոյ Ալբերտը ծիծաղելի գրութեան մէջ ընկառ։ Նա բոլորովին տիսրեց և մի քանի րոպէից յետոյ դուրս գնաց։ Այս ժամանակից ի վեր նա ինձ հետ այլ ևս հաճելի խօսակցութիւն չէր ունենում, տիսուր էր և շարունակ հառաջում էր։ Երա անտանելի գրութիւնը տեսեց մօտ մի շաբաթ։ Այդ բանը ինձ սրտացաւութիւն էր պատճառում, բայց ևս ոչ կարող էի և ոչ էլ ուզում էի նրան օդուել։ Ալբերտը կամ պէտք է իր ծիսելը թողնէր, կամ ինձանից վերջնականապէս հրաժարուեր։ Երկուսից մէկը։

Մի օր եղբայրս եկաւ ինձ մօտ և դատապարտեց ինձ, իբր թէ ևս յիմար բաներով ևմ զբաղուած։ Բայց գրանից նա աւելացրեց, որ Ալբերտը պատի վրայ ընկած ստուերի նման միշտ այս ու այն կողմն է ընկնում և չէ վստահանում ինձ մօտ դալ։ Եղբայրս աշխատում էր ինձ համոզել, որ ևս թողնեմ յիմար սովորութիւնս և թոյլ տամ Ալբերտին ծխելու, որովհետեւ նա շատ է աշխատել ծխելը թողնել բայց որովհետեւ նրա սովորութիւնը կրամքի ոյժից աւելի զօրել է եղել՝ զրա համար նա չէ կարողացել թողնել և կարող է հիւանդանալ։ Այդ խօսքերը լսելոց յետոյ, ևս չը կարողացայ համբերել և ասացի եղբօրս։ «Ռուբեն նա մի այնպիսի մարդ է, որ չէ կարող իր անտանելի և ծիծաղելի սովորութիւնը թողնել։ Եթէ նա ինձ ճշմարիտ սիրում է գրա համար գնմէ նա պէտք է իր ծխելը թողնի, և այդ կարող է նրա սիրոյ համար մի գրաւական վնել։»

Եղբայրս վրասկունց, որովհետեւ ևս նորից կրկնեցի այն բոլոր խօսքերը, ինչ որ ևս առաջ Ալբերտին էի ասել։ Ես ձեզ կը ձանձրացնեմ, եթէ մի միշադէպքի մանրամասութիւնների վրայ երկար կանգ առնեմ Բաւական է միայն ասել, որ վերջապէս Ալբերտը եկաւ ինձ մօտ և արտասուքը աչքերում լինդրեց, որ թոյլ տամ իրան ծխելու։ Ես էլ լայ եղայ և ասացի։ —Դէ՞հ լաւ, ևս ուզում եմ ցոյց տալ, որ ևս աւելի եմ սիրում ձեզ, քան թէ զուք ինձ։ Դուք իմ սիրոյ համար չը կարողացաք ձեր անտանելի սովորութիւնը թողնել, բայց որովհետեւ ևս ձեզ աւելի ճշմարիտ եմ սիրում, զրա համար կ'աշխատեմ իմ հակակութեանը յաղթել։

Կարձ ժամանակից յետոյ մենք ամուսնացանք, և Ալբերտը շարունակեց առաջուայ նման ծխել. բայց չնայելով դրան, ևս Ալբերտի հետ երջանիկ կեանք էի վարում և բոլորովին մոռացել էի մեր կեանքի այն տիսուր շաբաթուայ մասին, երբ ևս (զարմանալի է) նորից յիշեցի մեր անցեալ կոփմները։

Կէս տարի էր արդէն, որ մենք ամուսնացել էինք։ Մի երեկոյ ևս նկատեցի, որ Ալբերտը (ինչպէս առաջ սովորաբար

անում էր) ընթրիքից յետոյ չը ծխեց: Ես բոլորովին զարժացայ և կարծում էի, թէ նա միայն այդ երեկոն բայցառութեամբ չը ծխեց: Բարեբախտաբար այդ մի և նոյն երևոյթը միւս օրն էլ նկատեցի: Ալբերտը երրորդ երեկոն էլ չը ծխեց, և զարժանքս բաղմապատկուեց. «Չը լինի՞ թէ նա իր կնոջ համար է ուղում ծխելը թողնել, մտածեցի ես. բայց ինչո՞ւ նա այդ սկզբում չարեց, երբ ես նրան ինպրում էի»: Սիրաս յանկարծ սկսեց բարախել, և ինձ թւում էր, թէ նա այժմ ինձ անկեղծ սիրում է: (Խնդրնո՞ւ չը ծիծաղէք): Ես ինձ մահկանացուների մէջ ամենաերջանիկն էի համարում: Ես երկար մտածեցի այդ բանի մասին և վերջապէս գաղտնիքը իմացայ: Ալբերտի ծխախոտի տուփը սեղանի վրայ ընկած էր, իսկ նրա սաթից պատրաստած ծխափողը զանազան թղթերի մէջ էր ընկել (ծխափողը նա սովորաբար իր մօս էր պահում): ուրեմն կասկած չը կար, որ Ալբերտը ծխելը թողնել էր:

Ես չը կարողացայ այլ ես երկար համբերել և ցանկանում էի նրան երջանկութիւնս արտայացան: «Ալբերտ, ասացի նրան մի երեկոյ, ոու կատարեալ հրեշտակ ես, որովհետեւ քո՞ դէպի ինձ տածած սիրոյ համար թողեցիր ծխելք և ոչ մի դժգոհութիւն չարտայացեցիր»: Դրանից յետոյ ես դրկեցի և ողևորուած համբուրեցի նրան:

Բայց ես նորից զարժացայ, երբ նա խոյս տուեց և աշխատեց ինձանից զալաւուել: Քիչ լուելուց յետոյ, վերջապէս առաջ Ալբերտը. «Տեսնում ես, սիրելիս, որ ես ծխելը թողեցի, և այժմ ուղում եմ քեզ զրա պատճառը բայցարել: Իմացած եղիր, որ ես ոչ թէ քեզ, այլ հայրենիքս սիրելու համար եմ ծխելս թողել: Քեզ արգէն յայտնի կը լինի, որ աւտորիքական կառավարութիւնը մնի երկրութիւն էլ է ծխախոտի մենականառութիւն մտցրել: Մենք արգէն երդուել ենք, որ իւրաքանչիւր հայրենասէր պէտք է ծխելը թողնի, որպէս զի զրանով կարողանանք մնը թշնամու եկամուտները քչացնել: Այս բանը քեզ կարող է ծիծաղիլ թուել, բայց թշնամուն հարկաւոր է ասեղով ծակել, երբ նրան չէ կարելի սրով յաղթել»:

Այդ խօսքերը լսելուց յետոյ ես անսովոր զրութեան մէջ ընկայ և աշխատեցի գոնէ ցոյց տալ, որ իտալուհին էլ իտալացուց պակաս հայրենասէր չէ կարող լինել: Ես ներեցի Ալբերտին և գովեցի նրա աղնիւ վարժունաք, որ ինձ հերոսական էր թւում: «Ես ներում եմ քեզ, ասացի, որովհետեւ դու շատ ասացիր. դու մինչեւ անգամ պարտաւոր ես հայրենիքդ կնոջիցդ աւելի սիրել և գերադասել»:

— Ուրեմն տեսնում էք, վերջացրեց իր պատմութիւնը տիկին ֆօն Գ.. ժպտալով դառնալով գէպի դօկտօրը, որ իտալացու մէջն էլ հայրենասիրական զգացմունքը սիրոյ զգացմունքից աւելի զօրեղ է, որովհետև տաքարիւն իտալացին հայրենիքի վերացական գաղափարի համար զոհեց իր ծխախոտը, որի հետ նա մսով և արիւնով կապուած էր:

Գերմ. Բարզմ. I. ԲԱԲԱՅԵԱՆ

ԶԵՅԹՈՒՆԻ ՆԵՐԿԱՑԻՑ

ԶԵՅԹՈՒՆԻ գայմազամութիւնն ունի 50 հայ, 10-ը թուրք մեծ ու փաքր գիւղեր, որոնք իրանց աշխարհապրական դիրքով և քէնայութիւններով բաժանուած են չորս գլխաւոր մասի կամ գաւառների, որոնք են—Զեյրուն, Ալաբաս կամ Սրեգի, Մխալ եւ Ֆոնուզ:

Այդ բոլոր գիւղերը թէն ունեն իրանց քէնեաներն ու աղջեցիկ գիւղապետները, այսու հանդերձ պատկանում են ԶԵՅԹՈՒՆԻ 4 թաղերին և նրանց չորս իշխաններին: Գաւասի ընդհանուր աղջաբարնակութեան մէջ տեղի ունեցած զլխաւոր վիճերը, գատերն ու հասարակական իննդիրները կարգադրում են այդ գիւղերը: Տակաւին մինչև վերջին ժամանակներս զիւղական բնակիչները առուրք էին վճարում իրանց իշխաններին ամուսնական, ծննդեան և առհարական որոշ հիմունքներում: Նաև թուրք բնակիչները իշխանների հոգատակներն են և ապրում են այս կամ այն իշխանի պաշտպանութեան տակ ճիշտ այնպէս, ինչպէս Վերին-Հայաստանի շատ գաւառներում հայերը ապրում են այս կամ այն քիւրդ կամ թիւրք քէկի կամ խանի իշխանութեան տակ:

ԶԵՅԹՈՒՆԻ հիւսիսային և արևելեան կողմերը հաստատուած գիւղերն ու ամրողջ Սրեգին պատկանում են Եէնի-Դիւնեայնեան իշխանին: Հարաւարեսմուեան գիւղերը՝ Բօղ-Բայիրի իշխանին: Մխալ զաւառակը, Թանըր և Դէօնկէլ թիւրքական գիւղերով միասին՝ Սուրէնեան իշխանին, իսկ Ֆըռնուղ գաւառակը՝ Կարկալարի իշխանին:

ա) ԶԵՅԹՈՒՆ գաւառակ.

Հիւսիսային լեռների բարերեր ձորերի և հովիսների մէջ հաստատուած են 12 մեծ ու փաքր գիւղեր, բազկացած հովերից: Հայերը գաղթած են ԶԵՅԹՈՒՆԻ Վերի թաղից նախորդ գարու վերջերից սկսած: Բնակիչների ընդհանուր թիւը հասնում է մինչև 200 տան: Քաղաքի արևելեան կողմը, Բէրդինկա և ո. Փրկիչ լեռների ստորոտը՝ հաստատուած են ութ գիւղ, 180 տուն բնակիչներով, որոնց միայն 40 տունը թիւրք են: Զորսական

մղոն հեռաւորութեամբ քաղաքի հարաւային և արեմուսնն կողմերը հաստատուած են երկու մեծ հայկական գիւղեր—Հաշիքերէ և Ֆէնք կամ Խըբի, 50-ական տուն բնակիչներով; Ֆէնքի շուրջը տնտեսուած են վանքի, եկեղեցու և բազմաթիւ շինքերի աւերակներ:

բ) Ալպառաջ կտմ Սրեգի գաւառուի.

Ալպառաջ Ջիհանի և Ջէլթունի գետակի մէջտեղ մի թերակղի է և բնական սահմաններով բաժանուած իր շրջակայ գաւառներից:

Ալպառաջ ընկնուամ է Ջէյթունից հարաւարենելը և ունի 300 տուն հայ բնակիչ, բաղկացած 18-20 մեծ ու սղաբիկ զիւղերից կամ, տեղական բառով, օրաներից, որոնք անուանուած են տեղի մեծ ընտանիքների մնաւններով կամ աղքանուններով և կամ մի որ և է պատմական գէպքի լիշտաւելով: Ալպառաջ չունի բաւական ընդարձակ գաշտագետներ: Նա կոզմուած է բաղմաթիւ կոնտածն ձգուած հողաբուճներից, որոնց ամենաբարձր գագաթը կոչւուամ է Շամբէկի, որ զանուում է գաւառակի կենարոնը և Ջէլթունից մօտաւորապէս 10 մղոն հետի: Օքաները ցրուած են Շամբէկի չուրջը՝ վեց ժամ տարածութեան վրայ:

Ալպառաջ մի ընդարձակ նահանջեական համայնք է, որ կտապարուամ է մի ընդհանուր զիւղաբետի կամ քէհեայի միջոցով: Նա բաժանուած է երեք մեծ գնրդաստանների կամ աւերեթների, որոնց անուններն են.—Վարդանենի, Շենքենի և Ենիկենի: Վարդանենը հաստատուած են Շամբէկի արեներան և հարաւարենելեան կողմները, և օրաներից մի քանիսը ցրուած են մինչև Ջիհանի եղերքը: Այս զիւղաստանը միւսներից աւելի բազմաթիւ է և ունի 200-ի չափ զէնք զործածող տղամարդիկ: Ծնդհանուր գաւառի մեծ քէհեան կամ միւղիրը չառ անգամ այդ գերգաստանից է նշանակուել: Շենքենիք բնակուում են Շամբէկի բարձրագոյն մասերի վրայ, իսկ Եւեկնենը հարաւային կողմը՝ Ջէլթունի գետակի եղերքները: Ալպառաջիները մի կամ երկու դար առաջ ապրուած էին ո. Փրկիչ լերան ձորահովտի մէջ, ինչ ժամանակ Սրեգին բոլորովին ամայի ու անմարդարնակ էր և Սրեգին թշնամիների անընդհատ յարձակումների պատճառով խոյս էր տուել գէպի հիւսիս Սակայն յետոյ բազմանալով և զօրանալով, հետղետէ դրաւած են ամենազ Շամբէկը և վերջէն առիւներս էլ անցնելով Ջէլթունի ջուրը՝ առաջացան մինչև Քիւրիւրիւսի և Նաղիրլիի սահմանները: Շենքենց օրային մի քանի ծերեր, իբր սերնդաբար աւանդուած իրանց պատկերից, պատմուած էին, թէ «շատ ժամանակ առաջ, երբ այս վայրերը բնակութիւն չը կար, մի քանի ընտանիքներ Սասունի կողմերից գաղթելով

ապաստանած են Անկ-Չուրը և յետոյ հաստատուած ո. Փրկչի լեռնահովիտների մէջ: Իրը թէ այդ ընտանիքներից երկուսը Սասունի Շէնքը գիւղի բնակիչներից են եղել, ուրիշ երկուսն եւ Տարօնի Վարդենիս գիւղից, որոնց այդ գիւղերի անուններով իրանց բազմացած ընտանիքները կոչուել են Շէնքենք և Վարդանենք»: Ալաբացիների ընտանեկան և հասարակական սովորութիւնները և նիստ ու կացը շատ նման են ասսունցիների սովորութիւններին և նիստ ու կացին:

Շամբէկի արևմտեան կողմը հաստատուած է մի գիւղ Ալաբօզան անունով: Մոտ 50—60 տարի առաջ մի քանի ընտանիք Միալից գաղթել և բնակուել են այդտեղ, ուր բազմանալով այժմ հասել է նրանց թիւը մինչև 25 տուն: Ալաբօզանը հաստատուելով Ալաբացի հողի վրայ, այդու հանդերձ մինչև հիմա նոյնութեամբ պահած է Միալի հետ իր նահապետուկան տոհմային կապնին ու յարաբերութիւնները և ենթարկում է Միալի քէնեայի իշխանութեան:

Ալաբացի Ռուրինեան թագաւորութեան ընթացքում յիշուած պատմական Արեգին է*), որ ունէր իշխանական տուն, բազմամարդ գիւղեր, կրօնական միարանութիւն և նշանաւոր վանք, որի իրաւասութիւնն ընդարձակում էր շրջակայ բազմաթիւ թեմերի վրայ: Ալաբաց կոչուել է թիւրքերի կողմից միայն այս գարուս սկզբում: Դեռ մինչև այժմ զէյթունցին ու տեղայի բնակիչը անունում են Արեգի, որ այդ անունը ընդունած է, անշուշտ, իր աշխարհազրական գիրքի չորսհայտ Ակսած Շամբէկի բարձրութիւնից՝ հիւսիսից դէսի հարաւ, ամբողջ գաւառակը աստիճանաբար խոնարհուած բլրակներով ցածանում ձգւում է մինչև Զիհանի և Զէյթունի գետակի եղերքը և ամբողջութեամբ եռանկիւնի մի ընդարձակ զառիխայրի գիրք ընդունած տարածում է արևելքի վիմաց: Եւ արեգակը, տուաւուայ գէմ երեսն գալով Ախոր-Դաղի բարձր գագաթներից, իր անզրանիկ շողերն ուղղակի կերպով ցողում, տփում է ամբողջ գաւառակի ընդարձակութեանը վրայ, միաժամանակ լուսաւորելով և բազմաթիւ սանդիխաւոր բլուրների բարձունքները, և անտառները, ձորերն ու լեռնահովիաները, նրանց ամեն անկիւնները: Ահա ընութեան սոյն տնտարանի առջև բնակիչները այն մըրտել են Արեգի կամ Արեգնի անունով:

Կիլիկիայի իշխանութեան և մասնաւորապէս ԽԱ-րդ գարու անմիջապէս մերջերը և ունի թագաւորութեան պատմու-

*) Տե՛ս «Միառան», երես 191.

թեան մէջ յիշատակուում է Արեգնի բերդ *) և Արեգնի վանի, որոնք
իր ժամանակին առաջնակարգ կարևորութիւն և գեր են ունեցել:
Հիմասելով պատմութեան տուած մնակութիւնների և աւանդու-
թիւնների վրայ, որպէս և աչքի առաջ ունենալով այդ վայրերի
աշխարհագրական գիրքը, հին Արեգնի գաւառի սահմանները
կազմում էին, արենելքից՝ Ձիհանը, հարաւից՝ Ֆանուղի գա-
ւառը կամ համանուն գետակը, արևմուտքից՝ Կոկիսոնի լոռներն
ու Թէքիրի ձորահովիաը և հիւսիսից՝ Բէրիդի լեռները: Զէյթուն
գաւառը, որ այդ ժամանակները գեռ ես չէր կրում այդ անու-
նը և չունէր այն նշանակութիւնը, ինչ ունի ներկայումս՝ գալն-
ուում էր Արեգնի գաւառի սահմանում և վերջինիս բերդատէ-
րերի իշխանութեան ներքոյ: Հին Արեգնի բերդը, որ անորոշ
ու մութը կերպով յիշատակուած է պատմութիւնն մէջ և որի
մասին մի քիչ ներքեւ պիտի խօսենք, մի և նոյն բերդն է, ինչ որ
այժմ զոյութիւն ունի Արեգնի կամ Կիւրէտինի և կամ Ալարաշի
բերդ անուններով: Հ. Ալիշանը այդ բերդի վայրը փախադրում
է Եփրատի եղերքը՝ տարակուսելով նրա ճշառութեան նկատմամբ:
Եւ, բացի այդ, եթէ Ալարաշի շրջականները երեան չը գան հին
Արեգնի վանքի աւերակներ և կամ պակասի սառուցութիւնը նրա
տեղի մասին՝ պէտք է կարծել, որ այժմու ս. Փրկիչ կամ ս.
Աստուածածին վանքերից մէկն է նշանաւոր և պատմական Աւ-
րեգնի վանքը: Այդ ժամանակներն ասհասարակ վանքերը կոչ-
ուում էին իրանց գաւառի կամ երկրի անունով, ինչպէս հէնց
այդ շրջակայրում՝ Կանչի վ., Ֆաւոնաւի վ., Ընկուզու վ., և
այլն, մինչդեռ վերջերս մի և նոյն հաստատութիւնները ծանօթ են
մեզ ս. Ստուփանոս վ., ս. Կարապետ վ., և այլն անուններով:
Այժմ չը կան, չեն մնացել հին Արեգնից ոչ մի յիշատակ,
ոչ մի հետք կամ աւերակ: Ամբողջ բլուրներն ու ձորերը ծած-
կուած են կարծ ու խիտ մացառներով, մացրիներով կամ զանա-
զան վայրի ծառերով, որոնք հաղիւ մի քանի դարերի բուսա-
կանութեան արդիւնք են, և բացայաց է, թէ նախ քան կարծ
դարերի միջոցը այդաեղ զոյութիւն ունէր եռուն կեանք և
աշխատում էին հաղարաւոր մշակող ձեռքեր:

Ալարաշիները կարիճ են և զեյթունցու նման քաջ պա-
տերազմիկ, ինչ որ յետոյ պէտք է տեսնուի պատմութեան ըն-
թացքում: Նրանք մասնակցած են բոլոր կուներին և ամեն ան-
դամ Զէյթունի համար ունեցել են այն եղակի դերը, ինչ որ առ-
հասարակ պատերազմների մէջը սւնեն առաջապահ զօրտպնդերը:

*) Թիւրքական տիրապետութիւնից յետով, ինչպէս նաև այժմ, ան-
ուանում է Ալիրէտինի բերդ:

Նւ հէնց այդ պատճառով նրանց օբաները յաճախ աւելուած ու հրդեհուած են արշաւող թշնամիների կողմից: Ալաբաշին այժմ շատ թշուառ դրութեան մէջ է և իբրև ապրուստի միշոյ՝ ունի մէայն խալողն ու չամիչը:

Ալաբաշի հարաւ արեմուազք, ԶԵՅԹՈՒՆԻ գետակի անմիջաւ-
սլէս եղերքը՝ կանգնած է պատմական նշանաւոր Արեգնի բեր-
դը, որ տեղացիք շարունակում են անուանել Արեգնու կամ
Կիւրէտինի բերդ: Սա նշանաւոր է իր ամրութեամբ, բարձր-
ու լայն գիրքով և գեղեցիկ կլոր ձևակի: Բերդի բոլորակի կող-
քերի մեջ ու բարձր ապառաժները կարծես վերից ի վայր ուղ-
ղակի կտրուած և արհեստական կերպով քանդակուած լինին:
Միայն մի ճանապարհ բարձրանում է միջնաբերդը, որի համար
հարկաւոր է մագցելով գնալ: Դեռ ևս, կիսափուլ, մնում են ար-
տաքին դուն կամարներն ու շեմքը, որի երկու կողմերը, ապա-
ռաժների մէջ, յաջողակ կերպով փորուած են պահապանների
յատուկ տեղերը, որոնք պահուել են նոյնութեամբ դարերից ի
վեր: Բերդի վրայ բաւական ընդարձակ է, ուր, ինչ որ հաւա-
նական է, հին ժամանակները գտնուում էին բազմաթիւ տներ
ու հաստատութիւններ, որոնց աւերակները որոշ կերպով նկա-
տելի են այժմ: Երթեեկութեան համար ապառաժների վրայ
տեղ-տեղ շինուած են նեղ, մանր, կանոնաւոր սանդուխներ, ո-
րոնց աստիճանների վրայ սախալուած ես դնել ուղերի ծայրերը
միայն և զգուշաւոր կերպով: Բերդի արեմտեսան մասում պատ-
րաստուած են երկու մէտր արամագծով և քառակուսի բերան-
ներով արհեստական վեց ընդարձակ և խիստ խորը ջրամբարներ,
որոնց շուրջը շինուած կանոնաւոր ուղիները՝ անձրիի և ձիւնից
հարած ջրերը հաւաքում են այստեղ: Անկարող եղայ զսնել ու ե-
է արձանազրութիւն:

Բերդի հանդէպ, գետակի միւս եղերքը, նոյնանման ապա-
ռաժներավ և աւելի բարձր գիրքով կանգնած է մի հսկայ սար՝
Ալա-Գայա կամ Գամա անունով, որ նոյնպիսի նշանաւոր ամրու-
թիւն է և ունի բազմաթիւ ընդարձակ քարայրներ, ուր երկար
ժամանակ ապաստանել են ԶԵՅԹՈՒՆԻ ասպատակային խմբերը՝
թէ նախորդ գարերի և թէ Պապիկ փաշացի ու Շամ-Քէշիշ օղ-
լիի ժամանակները: Սոյն բերդի և Գայայի համար տեղացիները
պատմում են աւանդաբար առասպելախան պատմութիւններ,

գ) Միայ կամ Աւագ-Կալ գաւառակ.

Միալի գաւառակը գտնուում է ԶԵՅԹՈՒՆԻ հարաւարեմը-
տեան կողմը զերթէ 5 մլոն հեռաւորութեամբ, ընդամենը 350
տուն բնակիչներով: Սոյն գաւառակի գիւղերն ել Ալաբաշի հետ
միասին երկու անգամ այրուեցին թիւրքերի կողմից անցեալ տա-

բուայ վերջին կիսում: Բնակիչների ասպրուստի միջոցն է, ինչպէս միւսներինը, միայն խաղողը, և գտնուում են ծայրայեղ աղքա- սութեան մէջ:

դ) Ֆոնուզի գտուառակ.

Ֆոնուզը գտնուում է Զէյթունի հարաւարեմտեան կողմը, մօտաւորապէս 24 մղնն հետաւորութեամբ: Սրբութ 20 տարի առաջ այս գտուառակը, հակառակ իր աշխարհագրական և արև- տեսական յարմաքութիւններին, պատկանում էր Անգրունի դայ- մագամութեան, սակայն 78-ի յայտնի դէպքերից յետոյ արձա- նագրուեց Զէյթունի դայմագամութեան հետ միացուած: Երա սահմաններն են, հիւսիսից՝ թէքիրի գետակը, արևմուտքից և հարաւայից՝ Կոկիսոնի ու Կապանի լունները և հարաւարեմտեպից՝ Սէկի լեռը:

Ֆոնուզի գտուառակը բազկանում է մօտաւորապէս 16 հայկական գիւղերից, որոնք ունեն ընդամենը 450 տուն բնակիչ և մի քանի թիւրքական գիւղեր՝ 70 տուն:

Գիւղերից ամենամեծն է Ֆոնուզ կամ Խօնուզ, 200 տուն բնակիչով, որ հաստատուած է համանուն լեռան արևելեան սաս- րուոր՝ գետակի հիւսիսային եղերքը, մի փոքրիկ ձորահովտի մէջ: Սիսուանեան հարստութեան ժամանակ նշանաւոր է եղած Ֆըռ- նուզը *): Նկատի առնելով տեղական աւանդութիւնը, իր 6-7 գար առաջ Ֆոնուզը հաստատուած էր գետակի միւս եղերքը Սէկի գասկավայրի ջրայ, իսկ աւելի վերջ, երբ արտաքին թշնա- մինների յարձակումները սաստիւցան, բնակիչները, այլ ևս ան- կարող գէմագրելու՝ փոխադրուեցին այժմու վայրը աւելի ապա- հով դիրքավի: Հաւանական է, թէ այս է սպատճառը, որ պատմու- թիւնը յիշատակում է «Հին» կամ «Ըսոր» Ֆոնուզ անունները: Ան- ցեալ գարու սկիզբները բնակիչները բազմանալով ցրուած են շրջակայ վայրերը և կազմել են շրջակայ գիւղերը կամ օբանները:

Գլխաւոր գիւղերն են.—Ֆոնուզի հիւսիսային կողմը, ի- րարից մէկ և կէս կամ երկուական մղնն հետի, Հին-գեղ և Կո- չուլս: Առաջինի արհելեան կողմը, հինգ վայրկեան հետի, գտըն- ուում է աւերակ գարձած մի բերդ, բնականաբար հին Յաւու- նուսը, որի բերդատէրն էր, ԽՊ-րդ գարի վերջերում, Աբրդա- րից անուն մի իշխան: Այդաւել բարձրանալը բաւական դժուար է: Վերեք գեռ կանգուն են կիսափուլ պարխազներ, կամարներ և սանդուխներ: Բերդի շուրջը յայտնի են երեսում չէնքերի մնա- ցորդներ և մի վանքի ու եկեղեցու աւերակներ, որոնց մասին ժողովրդական աւանդութիւնը հաղորդում է, իբր թէ սրանք գեռ

*) Տե՛ս „Սիսուան“՝ 192 էրես:

դոյութիւն ունէին մէկ և կէս կամ երկու զար առաջ: Հինգեղցի մի քսնի ծերեր պատմեցին, թէ իրանց պապերի ժամանակ, այսինքն 18-րդ դարում, մահմեղական բերդատէրեր զրաւած ունէին այդ և Սրեգնու բերդերը և բնակութիւն հաստատած: Սոյն երկու բերդերը կանգնած են դէմ առ դէմ, բարձր գիրքերի վրայ, մօտաւորապէս 10—12 մետրն հեռաւորութեամբ: Սրանց վերջին տէրերը, իբր, երկար ժամանակ կախներ են ունեցել և կոտորել միմևանց: Անկարող եղայ ստոյգ տեղեկութիւն ստանալ, թէ երբ էր այդ և բերդատէրերը ինչ ցեղից էին և կամ ինչ պիսի յարաբերութիւն ունէին հայերը դրանց հետ: Հինգիւղի անմիջապէս մօտն է ո. կարապետ նշանաւոր վանքը, որ վասուեց թիւրքերի և չերքեղների կողմից վիրջին ասլուամբութեան միջոցին: Վանքի մէջ զանւում էին Ռուբինեանց ժամանակից մնացած բազմաթիւ հսութիւններ, ձեռագրեր, յիշատակարաններ, թանկարգին եկեղեցական սպասներ և այլն, որոնք, պահուած լինելով զաղտնի մի տեղ՝ այրուեցին վանքի հետ միասին:

Յունուզի արեմտեան կողմը գտնուում է Հինգեանչին կամ Չուզուր-Հիսարը, որի գիրքը խիստ անառիկ է և ունի մի փոքրիկ ու բարեկեր գաշտագետին՝ շըշապատուած լեռների անամացանելի չղթաներով, որոնք պատսպարած են նբան՝ որպէս բընական ամուր պարիսպներ: Հայերը անուանում են կանչի նաև այժմ: Սրանից մօտ 15—20 տարի առաջ այդտեղ հաստատուել է մի հայկական գիւղ՝ Ալաճաճենք՝ տեղափոխուած մանուղից: Դաշտի հիւսիսային կողմը, միմևանց կցուած, կան պատմական կանչի բերդն ու կիսաւեր ո. Ստեփանոսի վանքը, որի մատուքի մէջ կայ մի գերեզման: Այդտեղ, այդ գերեզմանի մէջ է թաղուած ուլնեցի Ստեփանոսի դիակը, որի գերեզմանավարի մօտից բզիսում է սառը և անուշ ջուր: Վանքից գէպի արեմ-հիւսիս, կէս ժամ հեռու, կանչի լուսահովտի մի ձորի մէջ սպանուած են Ստեփանոսի Յընկերները, որոնց յիշատակը տօնում է հայոց եկեղեցին: Ծերունի գիւնականը՝ Հ. Պ. Ալիշանը մանրամտան կերպով պատմում է Ստեփանոսի սպանութիւնը ու այլ և այլ պարագաները, սակայն նահատակութեան տնօղի մասին երկմտութիւն է յայտնում*): Տեղական աւանդութիւնը, չը նայած որ երկար զարեր են անցել, բոլորովին թարմ կերպով նշանակում է վանքի, գերեզմանի և սպանութեան տեղերը: Թէ հայերը և թէ Չուզուր-Հիսարի թիւրքերն ուխտի են զնում այդ գերեզմանի վրայ և տարուայ մէջ մի օր ահազին բազմութիւն է հաւաքւում նբանց յիշատակը տօնելու:

*.) Տե՛ս „Սիսուան“, 184—185 երես:

Ֆոնուզի շրջամակները լիքն են բաղմաթիւ հնութիւններ և աւերակներ։ Չուզուր-Հիսարի մէջ կան երբեմն լեռների ստորաք նուրբ քանդակագործութեամբ և քառակուսի փոքրիկ գաներով փորուած մեծ ժայռեր, որոնք խուցի նմանութիւն ունեն և արդիւնք են երկարատես ու հմտալից աշխատութեան։ Պարզ է, որ հոռմէական և յունական դարերից են մնացած։ Այդ քարէ խուցերը, հաւանականաբար, ճգնաւորների բնակարաններ են եղած, իսկ հալածանքների ժամանակ վախսատականների ապաստան։

Ֆոնուզից Յ մղոն հեռու գէպի հարաւ, Սէկի լեռն հիւս.-արեմտեան կողմը, մէկ աննշան ըերդի շուրջը գտնւում են բնդարձակ աւերակներ, որոնց մասին բնակիչները աւանդում են, թէ այդտեղ հաստատուած էր հին Ուխիա քաղաքը, որ հրդեհուելով արշաւող ցեղերի կողմից՝ ողջ մնացած բնակիչները խոյս տուին և բնակուեցին ֆոնուզի գետի միւս կողմը։

Ֆոնուզիներն ունեն բնդարձակ խաղողի այգիներ և մի և նոյն ժամանակ պարապում են փայտահաստութեամբ և անամսալիքահութեամբ։ Ֆոնուզն ու իր գաղթականութիւնը զգաւուի կերպով զանազանուում են իրանց սովորութիւններով, հասարակական նիստ ու կացով մօտակայ հայկական գաւառների բնակիչներից։ Սրանք կտւլտուրապէս աւելի բարձր են քան շրջակայ գիւղերը։

Ֆոնուզից Յ մղոն գէպի արեելք համանուն գետակը և կէս մղոն աւելի հեռու Զէյթունի գետակը միանում են Թէքիրի ջրի հետ, ուր, այդ միախառնուած տեղը, կոչւում է Սու-Զարի։

Կապանը կիլիկիայի պատմութեան մէջ ամենայայնի տեղն է զրաւում։ Ռուբինեան հարստութեան ընթացքում նա երկար ժամանակ մնացել է հայոց իշխանութեան ներքոյ և եղել հայ իշխանների կամ թագաւորների կենտրոնավայր։ Նշանաւոր են նրա աշխարհագրական ամուռ զիրքը, անառիկ լեռները, որոնք բնական պարիսպ են եղած երկրի համար՝ իրանց նեղ ու գժուարանցամելի կիրճերով, նրա բերդերը և ընդարձակ բարերեր դաշտը։

Կապանը գանւում է Մարաշի, Համնի և Զէյթունի մէջ-տեղը, իւրաքանչիւրից մօտաւորապէս 48-ական մղոն հեռաւորութեամբ և վերջինի հարաւ-արեմտեան կողմը։ Կապան զիւղը հաստատուած է մի լեռնաշղթայի ստորոտը ուազմական կարեսը զիրքով։ Գիւղից գէպի արեմտեան-հիւսիս, հինգ մղոն հեռի, նեղ կիրճերի բացուածքի առջև կանգնած է համանուն յայտնի բերդը, որի շինութիւնն ու ճարտարապետութիւնը հոռմէական գարերի գործ է, և գեռ ևս հաստատ մնում են ներքնաբերդի

շէնքերի միջադոյն մասը—կամարակալ սենեակներ, պարիսպներ և այլն: Բերդի հիւսիսային և արևելեան՝ կողմերը բարձրանում են բարձր ապառաժներով ընդարձակ լեռներ, որոնք կոչւում են Աստուածակն և Պարաւալի: Բերդից հիւսիս-արևմուտք, աւելի բարձր գիրքով և հազիւ կէս մղոն հեռի է հին Շողականը, որի գագաթի վրայ ապառաժների մէջ հաստատուած է մի գմբեթաւոր ուխտատեղի՝ սառը աղբեւրով և մի գերեզմանով: Տեղացիք նշանակում են նոյն այդ տնունով և սպասմում նրա մասին աւանդական գանագան անց ու դարձեր:

Գիւղի առջեւ տարածում է՝ դաշտը՝ մօտաւորապէս 20 (?) մղոն երկարութեամբ և 18 (?) մղոն լայնութեամբ, ուր մշակւում են ցորեն, գարի և այլ հացարոյսեր, և որ ոսողւում է Քէօր-Սիւլիւ գետակով: Վերջինս ծագում է Կոկիսոնի լեռներից և՝ անցնելով Ենիջէ-Գալէից ոչ շատ հեռի՝ միանում է Զիհանին: Դաշտի հարաւային լեռների կողքին կանգնած է մի կիսաւեր բերդ, որի քարայրներում պատավարւում են Դաւուրլու անունով հայ գիւղի վրանաբնակ բնակիչները ձմեռուայ ամիսներուեն:

Կապան գաւառակը կաղմում են վեց գիւղեր, չորս հայկակն և երկու թիւրքակամն:

Կապանի բոլոր գիւղերն ունեն բարերեր ու ընդարձակ դաշտեր և արտազրում են այլ և այլ հացարոյսեր: Երկրագործութիւնը այստեղ աւելի լաւ լինակի մէջ է քան շրջակայ հայկակն միւս գաւառներում:

Կոկիսոնը գանում է Զէյթունից հիւսիս-արևմուտք մօտաւորապէս 40 մղոն հեռու, ընդարձակ բարերեր լեռնադաշտերով: Դեռ սրանից 40 տարի առաջ այնտեղ հաստատուն բնակութիւն չը կար, և ամայի երկրի մի մասը ծածկուած էր անտառներով: Բազարջըգ, Զուգուր և Ամըգ օվանները բնակող թիւրքմէն, աւշար, թէջիր և ուրիշ բաղմաթիւ ցեղեր ամառը բարձրանում էին այնտեղ իրանց արջառների հետ: Սակայն 60-ական թուականներից յետոյ սուլթան Ազիղի կառավարութիւնն այդ բարեր գտաւոր յանձնեց կովկասից գաղթող Զէրքէզ ցեղերին, որոնք այժմ բաղմացած են և իրանց թիւր հասնում է Կոկիսոնի գաւառակի մէջ մօտ 1500 տուն:

Բնակիչներն ընդհանրապէս գաղթած են Մխալից անցեալ դարու սկիզբները և բազմացած: Երանք պարապում են երկրագործութեամբ:

Եկէիջէ-Գալի գաւառակը գտնուում Զէյթունի հարաւային կողմը, մօտ 70 մղոն հեռի: Այնտեղ կան մօտաւորապէս 600 տուն բնակիչ, որոնց երկու երրորդը հայեր են 12 գիւղերում բնակուած:

Այստեղ աւ հլորդ չենք համարում զնել վիճակագրական մի աղիւսակ, որից կարելի՞է, մօտաւոր թուերով, ամփոփ գաղափար կաղմել Զէյթունի գաւառի աղջաբնակութեան մասին:

Զէյթուն գաւառի վիճակագրութիւնը

(Պատրաստած 95—96 թուականին)

	տուն.	տուն.
Զէյթուն քաղաքը	2000 հայ	30 թիւրք.
Զէյթունի հիւսիսային կողմը 12 գիւղեր	100 »	100 »
» արեելքը 8 գիւղեր	140 »	40 »
Հայիւ-Դէրէ և Ֆէնք	100 »	— »
Ալպաւշ կամ Սրեղի գաւառակը	350 »	— »
Միուլ կամ Աւագ-Կալ	350 »	70 »
Ֆոնուզ՝ իր շըջականերով	500 »	70 »
Կասպան՝ վեց գիւղերով միասին	640 »	90 »
Կոկիսոսի հայկ. գիւղերը Զէյթունի սահմանի մէջ գտնուած	350 »	50 »
Եէնիշէ-Գալէի միւղիւրութիւնը	400 »	200 »
	4930 »	650 »
Իւրաքանչիւր տուն հաշուելով 7-ա- կան հոգի*)	× 7	× 7
		34,510 հայ. 4,550 թիւրք:

Գումար Զէյթուն գաւառի ընդհանուր աղջաբնակու-
թեան՝ 39,060 բնակիչ, որի գրեթէ հարիւրի 89-ը հայ է և 11-ը
թիւրք:

Հ.

*) Զէյթունի թէ քաղաքի և թէ գիւղերի մէջ ընտանիքները բազմ-
անդամ են և առհասարակ մի տան անդամների թիւը 10-ից առելի կը լի-
նի, սակայն այսուհեղ մենք կը հաշուենք իւրաքանչիւր տուն տւնտազն
7-ական հոգի:

Գ Ի Ւ Ղ Ե Մ Ա Ր Դ Ի Կ

(Տարութակութիւն)

Գ Լ Ո Ւ Խ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Ա.

Նոյն օրը երեկոյեան, նուրեանների տան հիւսիսային մեծ սենեակում, որ կոչում էր երկրորդ դահլիճ, վառուեց ելեքտրական ջահր։ Դա նշանակում էր որ մի փոքրիկ, ոչ-պաշտօնական երեկոյթ կայ այնտեղ։ Ելեքտրական առատ լոյսերը մեծ պատուհանների միջով թափուել էին տունը շրջապատող հրապարակի վրայ, ուր քամին գեռ շարունակում էր իր գժութիւնները։

Պատի ճակատից, մի ոսկեզօծ շքեղ շրջանակի միջից, հաճելի լոյսերով ոզողուած քառակուսի սենեակին նայում էր մեծ իւղանկարը, մի շատ յայտնի վրձինի գործ, որ պատկերացնում էր ինչ-որ հին, հեթանոսական զոհաբերութիւն անտառի մէջ, կապոյա երկնքի տակ։ Պատկերից ցած դրուած էր թաւշապատ բաղմոց, իսկ նրա առջև, ձուածե սեղանի կողքին, թիկնաթոռներից մէկի մէջ կիսով չափ պառկած էր մի կարճահասակ, բայց խիստ վայելչակազմ, սիրունատես տղամարդ։

Դա ինքը, պարոն նուրեանն էր։ Երեկոները նահանգստանում էր։ Բայց այս երեկոյ նա ստիպուած էր խանգարել այդ կարգը նախ և առաջ այն պատճառով, որ այդպէս էր կամեցել նրա կինը և երկրորդ, որովհետեւ անակնկալ կերպով եկել էր Թէոդորոս Զարվագարեանը մի կարևոր գործի մասին խօսելու։

Զարվագարեանը այն գեր ու կոլոր մարդն էր, որ նստած էր նրա դիմաց և մեծ աշխայժով պատմում ու բացատրում էր մի ծրագիր, որի մէջ խոշոր մասնակ- ցութիւն պիտի ունենար և նուրեանը:

Մօտ մի ժամ էր, ինչ նրանք խորհրդակցում էին քառակուսի սենեակի լուռթեան մէջ: Ոչ ոք չէր խան- գարում: սենեակը երեք դռներ ունէր, բայց դրանցից ոչ մէկն էլ չը բացուեց ամբողջ ժամանակ: Իսկ հու- րուստ կահ-կարասիները, բոլոր այդ բաց կապտագոյն թաւշով ծածկուած թիկնաթոռները, անկիւններում դրած հարաւային հազուագիւտ բոյսերը, մեծ դաշնա- մուրը ականջ չունէին որ լսէին խօսակցութիւնը:

Հարցը լուրջ էր, բարդ: Բայց նուրեանը չէր շտա- պում: Նա սառն էր, համարեա անտարբեր. նրան չէր վարակում այն տենդոտ տրամադրութիւնը, որի մէջ ընկել էր նրա կոլոր խօսակիցը: Զարվագարեանը գործի էր դրել իր լեզուի ամբողջ ճարտարութիւնը և անդա- գար պտտեցնում էր իր մոտ, ծանր մարմինը թիկնա- թոռի մէջ, չուտ-շուտ վեր էր կենում, էլի նստում, իսկ երբեմն էլ գնում էր դէպի բազմոցը, ընկլմում էր նրա մէջ, արագ կերպով խաղացնում էր իր կարճիկ ոտները:

Եւ ամբողջ ժամանակ նրա թուխ աչքերը հաստ ու թուխ յօնքերի տակից մեխուած էին տանտիրոջ վրայ: Նուրեանի դէմքից չէր իջնում մեղմ ժպիտը, դա խոշոր գործերի տէր վաճառականի ինքնավստահ ժպիտն էր: Եւ Զարվագարեանին շատ էր այրում այդ գուռող ինք- նավստահութիւնը: Նա տեսնում էր որ իրան բարձրից են նայում այստեղ: Այնքան գործի աջողութիւնը չէր նրան հետաքրքրում, որքան այդ վիրաւորական վերա- բերմունքը ջախջախելու ցանկութիւնը: Ժամանակ է որ նուրեանը և նրա նմանները հասկանան, որ առաջին կարգի վաճառական թէոդորոս Զարվագարեանը նրանց բոլորի համահաւասար ընկերն է:

—Գալիս է, Սամուէլ իսայիշ, հարցը նա, իր ու- ռուցիկ թաթը մեկնելով նուրեանին:—Բեր խփենք,

եղբայր, բեր. էլ ի՞նչ ես մտքի տակ ընկել՝ Խփենք
այժմ, իսկ պայմանը կը ստորագրենք վաղը:

Նա բարձրացրել էր ձեռքը, պատրաստ խփելու.
Նրա խոշոր երեսը ոգևորութեան մի մեծ ժպիտ էր
դարձել, վառուել, քրտնել. Ամբողջ քաղաքում միայն
նա էր, որ նուրեանի հետ «գու»-ով էր խօսում:

Բայց Սամուէլ Խսայիչը ոչ միայն տեղից չը շարժեց
իր ձեռքը, այլ և բաւական սառն կերպով նկատեց.

—Հո Շէլթան-Բազարի խանութպան չենք, որ այդ
գուհիկ ձեռվ համաձայնութիւն կնքենք:

Զարվադարեանը իսկոյն հասկացաւ այդ ակնարկու-
թեան ամբողջ միտքը: Նուրեանը, ի հարկէ, յետին մըտ-
քով, վիրաւորելու նպատակով չէր, որ տուեց Շէլթան-
Բազարի անունը, բայց Զարվադարեանը յիշեց իր ան-
ցեալը...

Այնուամենայնիւ, նա իրան չը կորցրեց: Նուրեանը
հօ այլ ևս զուտ վաճառական չէր. նա շատ էր բարձ-
րացել այդ գասակարգից, արդէն խառնուել էր իսկա-
կան արհստոկրատիայի հետ: Արդիւնաբերութեան բոլոր
խոշոր ներկայացուցիչները հետեւում են նրա օրինակին:
Այս բոլորը ճիշտ է, Նուրեանը իրաւունք ունի: Բայց
միթէ այնքան չնչին է իր, թէոդորոս Զարվադարեանի
իրաւունքը:

Կարծես այդ հարցն էր տալիս նա, երբ նորից մօ-
տենալով տանտիրոջը, անփոյթ կերպով արտասանեց.

—Ի՞նչ անեմ, Սամուէլ Խսայիչ: Այսքան գեղեցիկ,
շահաւէտ առաջարկութիւն և քո սառն վերաբերմուն-
քը... Գործի աշողութիւնը ապահովուած է. եթէ չը կայ
ուրիշ գրաւական, բաւական չէ հէնց իմ բախտը...

Նուրեանը յաղթահարուած էր: Այն, այդ մարդը ի-
րաւունք ունէր այդպէս խօսել իր բախտի մասին:

Երկու տարի առաջ նա մոքով էլ չէր անցկացնի, թէ
այսպիսի մեծ աներում ընդունուած մարդ կը գառնայ:
Իսկ այժմ ամեն տեղ նրան գրկաբաց են ընդունում, ա-
մենքը նախանձում են նրան: Բախտ... Որքան էլ բարձր,

կրթուած մարդ էր Նուրեանը, բայց, իբրև վաճառական, չէր կարող անպայման չը հաւատալ բախտին։ Իր կեանքում շատ և շատ փորձերով էր համոզուել, որ եթէ չը կայ բախտ, Նուրեանների աշխարհահոչակ ամուր առեւտրական տունն էլ չէ կարող մեծ վաստակներ ստանալ։

Իսկ Զարգագարեանի բախտը միանդամայն շլացուցիչ էր։ Որքան բարձր թռիչք գործեց մի կարճ միջոցում նա, որ գեռ երէկ, անցեալ օր այնքան փոքրիկ գործի տէր էր, որ նոյն իսկ հարստահարում էր մեծերից։ Բախտի այդ սիրասուն զաւակը հիացնում էր մանաւանդ իր անվախութեամբ։ Մանը թռիչքներ չը գիտէր նա. Երբեմն այնպիսի յանդուգն ձեռնարկութիւններ էր սկսում, որ ամենքը ասում էին, թէ նա գժուել է։ Բայց բօրսայում, գրասենեակներում, սալօններում յանկարծ տարածում էր Զարգագարեանի բախտի մի նոր, հրաշալի յաղթանակի լուրը։ Նա օրուայ հերոս էր գրամական առիւծների աշխարհում։ Եւ հարցնում էին. ուր կ'երթայ նա, եթէ բախտը այդպէս շարունակէ հովանաւորել նրան երկար, անընդհատ...

Նուրեանը խորին ուշադրութեամբ լսում էր, իսկ Զարգագարեանը մի քանի նոր բաններ էլ պատմեց իր բախտի մասին։ Ու փառաւորւում էր, տեսնելով թէ ինչպէս այդ առաջնակարգ մարդը շարժում է իր գըլուխը ի նշան մեծ հիացմունքի, որ յաճախ համարեանախանձի էր փոխուում։ Տպաւորութիւնը այնքան ընկնդող էր Նուրեանի համար, որ նա նոյն իսկ ժպտաց, երբ Զարգագարեանը ձեռքը դրեց նրա ուսին ու մտերմաբար թօթուելով, ասաց.

—Սամուել Նուրեանի յամառութիւնն եմ ուզում կոտրել գոնէ մի անդամ։

Ապա ծիծաղելով խոնարհուեց դէպի Նուրեանը, գըլուխը մօտեցրեց նրա դլմին այնպէս, որ իր ծանր ու խոնաւ չնշառութեամբ տաքացրեց նրա երեսի կէսը, և երերալով իր կոլոր մարմնով, պայցմանների մի նոր ձեւակերպութիւն առաջարկեց։

Տանտէրը լսում էր. այլ ևս Շէյթան-Բազարը չէր գալիս նրա միտքը։ Դիսի թեթև շարժումներով նա համաձայն էր Զարվադարեանի հետ, որ դրանից աւելի մեծ զիջողութիւն չէ կարելի պահանջել առևտրական մարդուց, որ այդքան հաւատ ու վստահութիւն միայն ամենամօտիկ բարեկամին կարելի է ընծայել։ Նա այժմ աւելի մատչելի էր, աւելի զիջող։ Վերջնական խօսք չասաց նա։ Պէտք էր գեռ հարց ու փորձ անել գլխաւոր կառավարչից, պէտք էր գրասենեակում մի քանի թուանշանների նայել։

Սակայն գործի կէսը կատարուած էր։ Զարվադարեանը այլ ևս չը խօսեց այդ մասին։ Այժմ նա մի սովորական խօսակից էր։ Իբրև այդպիսի մարդ, նա սիրում էր միայն հանագներ անել։ Թէև այդ բանի մէջ բախտ չունէր, բայց ոչինչ չէր խնայում սրախօսի անուն ստանալու համար. գոնէ իր ասածների վրայ ամենից առաջ և ամենից թունդ նա ինքն էր ծիծաղում։ իսկ սրախօսութիւնների մէջ պաշար ունենալու համար եռանդուն կերպով հաւաքում էր ամեն տեսակ անեկդոսներ, ծիծաղաշարժ պատմուածքներ, ուշադրութիւն չը դարձնելով նրանց բովանդակութեան վրայ։

Մի քանի բան ասաց, նուրեանը ծիծաղեց։ Դուռը բացուեց և աղախինը յայտնեց, թէ տէլէֆօնը կանչում է։

Նուրեանը վեր կացաւ, ինդրելով Զարվադարեանին սպասել։ Գործարանի կառավարիչը երեկոները գեկուցում էր տալիս տէլէֆօնի միջոցով։ Լսելը և կարգադրութիւններ անելը մի քանի բովէի գործ էր։

Բ

Մնալով մենակ, Զարվադարեանը ընկաւ բազմոցի վրայ, սկսեց խաղացնել ոտները և այս ու այն կողմ նայելով, տողեցնում էր իր կարմիր, ածելած թշերը, օդ էր դուրս փչում։ Ապա վեր կացաւ, հանդարտ ման էր գալիս փոքրիկ գահլիճում։ Նա գիտէր որ տիկին

Նուրեան տանն է, զբաղուած է մի քանի մարդկանց հետ խորհրդակցելով։ Այս տան թագն ու պսակը տիկինն էր։ Առանց նրան ոչինչ հրապոյր չէր լինի այս ոսկեզօծ պատերի մէջ։ Սամուէլ նուրեանը շատ է եսամոլ, սառն ու պաշտօնական։

Այդ էր պատճառը, որ երբ տիկին նուրեան ներս մտաւ մի խումբ մարդկանց հետ, Զարվադարեանի առաջին գործը եղաւ գանգատուել, որ իրան մենակ են թողել։

—Երեխ ես շատ անհետաքրքական հիւր եմ, Աննա Եգորովնա։

—Ի՞նչ էք ասում, Ֆէօդօր Ներսէսիչ, կարելի՞ է այդպիսի բան երեակայել, պատասխանեց տիկինը մի պքանչելի ծիծաղով և շատ սիրալիր կերպով բարեեց նրան։

Զարվադարեանը խոնարհ ողջոյններ տուեց, իր յարգանքները յայտնեց։

—Եւ չեմ նեղանայ, եթէ դ՞ուք ինձ անհետաքրքական հիւր համարէք, աւելացրեց նա, բաց չը թողնելով տիկինոջ ձեռքը։

—Ա՛հ, թողէք, խնդրեմ, այդ խօսքերը։ Դուք ծանօթ չէք…

—Օ՛, օրիորդներն էլ այստեղ են։ Բարե, հազար բարե, օրիորդ Սիրանոյ, բարե, օրիորդ Շուշանիկ։

Երկու օրիորդները մի ակնթարթում կարմրեցին և ծիծաղելով սեղմեցին Ֆէօդօր Ներսէսիչի ձեռքը։

—Դուք այստեղ մի ամբողջ ժողով էք ունեցել։

—Այն, հաստատեց տիկինը։ —Խնդրեմ ծանօթացէք…

—Նախ թոյլ տուէք խոնարհ կերպով նկատել, որ դուք, Աննա Եգորովնա, մեծ չարչարանք էք յանձն առել, շատ մեծ…

Տիկին Աննան մի սիրուն ժպիտ նուիրեց նրան եբրեւ բարեհաճութեան նշան։ Զարվադարեանը դիմեց օրիորդներին.

— Ենորհաւորում եմ ձեր առաջին քայլը, օրիորդ՝ ներ. այս օրուանից դուք կատարելապէս չափահաս էք:

— Ի՞նչ քայլ, Ֆէօդօր Ներսէսիչ, հարցրեց օրիորդ Սիրանոյշը աւելի ևս կարմրելով:

— Անտեղի և աւելորդ համեստութիւն... Քաղաքում արդէն խօսում են ձեր բարեգործութեան մասին: Իսկ ինչ է բարեգործութիւնը, եթէ ոչ չափահասութեան մի վկայական: Կլուբում ես միայն «Ծրեկօզ» եմ կարդում, մնացածը սուտ է և ոչնչ: Դուք գիտե՞ք թէ ինչ է դա:— Օ՛, մի զարմանալի սրամիտ շաբաթաթերթ: Նա ասում է թէ կանայք բարեգործի դեր ստանձնում են կամ ձանձրոյթից կամ... Երկրպագուներ գտնելու համար...

Նա կուշտ-կուշտ ծիծաղեց, նայում էր կանանց, որոնք փոքր ինչ շփոթուած էին երեսում:

— Երկրպագուներ գտնելու համար, այն, սա շատ լաւ է,— շարունակեց Զարվագարեանը պինդ ծիծաղից կարմրած ճակատով:— Ներեցէք, այսուեղ ոչինչ անյարժարութիւն չը կայ. տպուած, ցենզուրայից անցած խօսքեր են: Ես ինքս մի քիչ չարախօսութիւն եմ գտնում այսպիսի բացատրութեան մէջ. իմ կարծիքով, բարձր դասակարդի կանայք բարեգործ պիտի լինեն, դա օրէնք է...

Այս երկդիմի բացատրութիւնները միայն ներողամիտ, ակամայ ծիծաղներ պատճառեցին կանանց: Ամենքը գիտէին, որ այդպէս խօսողը Զարվագարեանն է. իսկ Զարվագարեանը վազուց էր հասարակութեան մէջ տիրացել աղատ լեզուի արտօնութեան: Նրա հրաշագործ բախտն էր այդ արտօնութիւնը ստեղծել: Մի մարդ, որ երբեմն մի, երկու օրուայ ընթացքում տասնեակ հազարներ օգուտ էր վերցնում, սքանչացման բացականչութիւններ տարածելով ամեն տեղ, չէր կարող մերժուել հասարակութեան կողմից միայն այն պատճառով, որ խօսում էր շատ աղատ:

Տիկին Նուրեան միայն շտապեց օգուտ քաղել տիւրած փոքրիկ լոռւթիւնից և նորից ասաց.

— Ֆէօդօր Ներսէսիչ, դուք չը ծանօթացաք...

Նա ձեռքը ուղղեց դէպի չորս երիտասարդները, որոնք ամբողջ ժամանակ կանգնած էին մնացել:

Զարվադարեանը առանց մի բառ արտասանելու սկսեց ծոյլ կերպով ձեռք տալ նրանց, իսկ տիկին Աննան «ներկայացնում էր» նոր ծանօթներին, այսինքն յայտնում էր, թէ ով ինչ է: Առաջինը նախկին մի ուսանող էր, որ մի ինչոր խառնակութեան պատճառով կիսատ էր թողել ուսումը, բայց յայտնի էր իրեւ ընդունակ ու եռանդու մարդ. նա վճռել էր նուիրուել գրականութեան, այդ պատճառով էլ ոչինչ պաշտօն չէր ստանում և միւմի յօդուածներ էր տալիս տեղական լրագիրներից մէկին:

Տիկինը այս երիտասարդի մասին մի առանձին ուշադրութեամբ էր տեղեկութիւններ հաղորդում: Ապա դալիս էր մի հաշուապահ, որի կենսագրութեան ամենագլուխաւոր գիծն այն էր, թէ նա «թունդ ազգասէր» է: Բարեկելով երրորդին, որ քաղաքային ճարտարապետի օգնականն էր, Զարվադարեանը կէս-հեգնական եղանակով արտասանեց.

— Մնում է որ մի հատ էլ վարժապետ լինի...

Ամենքը ծիծաղեցին: Զորբորդը, իրաւ, անգործ մընացած ուսուցիչ էր, նոր էր եկել գաւառից և տեղ էր որոնում: Նա չը շփոթուեց միահամուռ ծիծաղից. ընդհակառակը, շատ համարձակ, զուարժ ձայնով յայտնեց, որ, այն, հինգ տարի ուսուցչութիւն է արել զանազան գաւառներում, գլխաւորապէս գիւղերում:

Տիկինը հիւրերին խնդրեց նստել: Միայն Զարվադարեանը չը կատարեց այդ խնդիրը. ման էր գալիս: և մի երկու անգամ էլ արծարծեց այն միտքը, թէ Աննա Եգորօվնան մեծ, շատ մեծ չարչարանք է յանձն առել: Բայց յանկարծ մի բան էլ յիշեց և մօտեցաւ տիկինը:

—Հա, դօկտօր Յովասափեանն էլ ձեզ հետ էր:

—Նա այս երեկոյ էլ կը գայ, բայց քիչ ուշ, պատասխանեց տիկինը:—Մենք մի թեթև խորհրդակցութիւն ունեինք սեղանատանը, թէյի վրայ: Սակայն կան մի քանի լուրջ հարցեր, որոնց մասին կը խօսենք, երբ կը գամ՝ բժիշկը, որ իմաց է տուել թէ քիչ կ'ուշանայ, և պարոն Մհերեանը, որ գնաց աղքատանոց մի քանի կարգադրութիւններ անելու:

—Մի խօսքով՝ Յովասափեանը կը դայ: Շատ լաւ, ես նրան կը սպասեմ: Թոյլ կը տամք, Աննա Եգորօվնա:

—Ա՛խ, ինչ խօսքեր էք ասում, Ֆեօդօր Ներսէսիչ, —թեթև յանդիմանական ձեռվ ասաց տիկինը, ցոյց տալով որ ինքը, վերջապէս, կը նեղանայ:—Դուք այս երեկոյ մեր հիւրն էք:

—Շատ թանկադին է ձեր ուշադրութիւնը: Հիմա տեսնում եմ որ անհետաքրքրական հիւր չեմ եղել: Գիտէք ինչ, Աննա Եգորօվնա: Յովասափեանին հայհոյել եմ, բայց ուզում եմ ձեզ մօտ էլ...

—Հայհոյել, ինչու...

—Նա մոռանում է իր հիւանդներին: Պէտք է թըքել մի բժշկի գէմքին, երբ նա այդ դրութեան հասաւ, Զէք կարող երևակայել, թէ ինչ է պատահել այսօր մեր Մելքոն Բալաիչի տանը:

Նա առաջ բաշեց մի թիկնաթոռ, նստեց և սկսեց պատմել.

Մելքոն Բալաիչը ունի մի հատիկ որդի: Երեխան քանի օր է հիւանդ է: Բժիշկը պիտի այցելէր այսօր ժամի 11-ին. նա ինքն էր այդպէս որոշել, ինքն էր հրամայել որ գեղեր չը տան մինչև իր գալը: Անցնում է բառորդ ժամ, անցնում է կէս ժամ, բժիշկը չը կայ:

—Ես ոչինչ չեմ աւելացնի, Աննա Եգորօվնա, մնացածը ինքներդ ասացէք: Կարողանում էք երևակայել մօր դրութիւնը: Երեսուն տարուայ ամուսնութիւն և միայն այդ երեխան, հազար սուրբից մուրացած... Միակ ժառանդը...

Այդ միջոցին ներս եկաւ պ. Նուրեանը և ամենքը, բացի տիկնոջից ու Զարվագարեանից, ոտքի կանգնեցին նուրեանը բաւականացաւ երկու օրիորդներին ձեռք տալով, իսկ մնացածների վերաբերմամբ դլուխ խոնարհեցրեց հազիւ նկատելի կերպով։ Բայց տիկինը ասաց.

—Սամուէլ, ծանօթացիր. Արտալեան, Սահակեան, Թառլանեան, Ղարա-Մուրադեան։

Սամուէլը լուս կերպով կատարեց այդ պատուէրը և իսկոյն գնաց իր տեղը։

—Այս մեր պատուէլին, պարոն Ղարայեան... չէ, ներեցէք, Ղարա-Մուրադեան, վարժապետ է, հեգնական լրջութեամբ ասաց Զարվագարեանը, թեքուելով դէպի նուրեանի կողմը և մի երկար հայեացք գցելով երիտասարդի վրայ, որ նստել էր բազկաթոռի համարեա ծայրին, ուզիղ ցցած իր մէջը՝ հանդիսաւոր կերպարանք էր ընդունել և չը գիտէր թէ ուր գնէ իր ձեռքերը։

Օրիորդները չնորհալի կերպով վեր կացան ու գուրս գնացին, որպէս զի թագժնեն իրանց ծիծաղը։ Տիկին Աննան այնքան քաղաքավարի էր, որ աշխատեց մոքում ծիծաղել, ցոյց չը տալով արտաքին ոչ մի նշան։ Նուրեանը աճքերը ցած ուզեց։ Վերջ ի վերջոյ Զարվագարեանը գոհութեամբ նկատեց որ գաւառացի վարժապետի մասին խօսելը բաւական համ ունի երգիծաբանական տեսակէտից։ Գոնէ տիկին նուրեան հարկաւոր համարեց խոնարհուել դէպի նրան և շատ ցած ձայնով ասաց, որ շատ զուարճալի է նրա սրախօսութիւնը։

—Հա, ի՞նչ էի ասում, շարունակեց նա բաւականութիւնից փայլող դէմքով։ —Հա, բժիշկը...

Եւ պատմեց մօր անհանգստութիւնը։ Խելագարուելու վրայ է այդ մայրը, իսեղճ Մելքոն Բալախչը գուրս է գալիս բժշկին որոնելու։ Գալիս է իր, Զարվագարեանի մօտ, գիտէ որ ընկերներ են այդ երկուսը։ Զարվագարանն էլ չէ իմանում, թէ ուր է բժիշկը. անհան-

գիստ է, երբ իմանում է որ նրա յանկարծակի անյայ-
տանալը իրարանցում է պատճառել այն տներում, ուր
նա պիտի լիներ այսօր։ Ճաշին վազում է նրա մօտ—
տանն է։

—Ա՞ն, ի՞նչպէս գզզեցի... Տօ, ասում եմ, խոզի
դլուխ, ուր էիր։ Նա պատմում է աղքատանոց գնալը,
հարիւր ու մի բաներ է ասում կատաղութիւնս սաստ-
կացաւ, չը թողեցի որ խեղճը մի կտոր հայ ուտէ հան-
գիստ կերպով...

—Բժիշկը լաւ...

Այս խօսքերը արտասանողը Ղարա-Մուրադեանն
էր։ Նա կանգնել էր, սև խուճուճ մազերով զարդա-
րուած դլուխը հպարտ կերպով ցցել էր դէպի վեր,
նրա ձանը թանձը էր ու հնչուն։ Զարվադարեանը խեղ-
կատակի ծամածութիւններ արաւ, հազաց, ձեռքը ա-
կանջին դրեց, որպէս թէ լաւ լսելու համար։ Երկու օ-
րիորդները այս անդամ գնացին դէպի դաշնամուրը՝
ծիծաղը պահելու համար։ Բայց վարժապետը շարու-
նակեց աւելի բարձր ձայնով.

—Բժիշկը լաւ գործի համար էր գնացել և պէտք
է նրանից շատ չնորհակալ լինել։

Այս անդամ կոլոր մարդը նրան պատասխանի չար-
ժանացրեց. մէջը դարձնելով դէպի չորս երիտասարդ-
ները, նա էլի դիմեց տիկնոջը։ Ղարա-Մուրադեանը նըս-
տեց իր տեղը, ձեռքը տարաւ իր լայն ճակատով և շը-
նջաց իր ընկերներին.

—Պէտք է ասել։

—Ես այդ մասին կը գրեմ իմ յօդուածում, պա-
տասխանեց նախկին ուսանող Արտալեանը, իսկ մնա-
ցածները լուռ մնացին։

—Բժշկից—ասում էր Զարվադարեանը—պահանջ-
ւում է մասաւանդ ուշադրութիւն, բարեխզճութիւն։
Մարդկանց կեանքը նրա ձեռքին է։ Գիտէք ինչ է սա
նշանակում։

—Խոստովանում եմ, Ֆէօդօր Ներսէսիչ, մեղքը իմն

է,—ասաց տիկինը մի քնքոյշ մելամաղձոտ եղանակով,
կարծես ներողամտութիւն հայցելով:—Ես էի, որ խընդ-
րեցի բժշկին...

—Ա՛, ուրեմն նա թովուած է եղել... Հիմա հաս-
կանում եմ...

Եւ նա իր գիշատիչ հայեացքը բեեռեց տիկնոջ
գունատ, քնքոյշ գէմքի վրայ: Մի քանի վայրկեան լուս-
թիւն տիրեց: Վայելչահասակ, սքանչելի ճաշակով հագ-
նուած տիկինը, կարծես, հալուում էր այդ հայեացքից և
միայն մեղմ ժպիտներով էր պաշտպանուում: իսկ սիրուն
աչքերը ցոյց էին տալիս, թէ որքան ոյժ կայ այդ քըն-
քոյշ կազմուածքի մէջ:

—Յովասափեանի մեզքի կէսը, այն էլ շատ մեծ
կէսը չնջուեց, Սամուէլ Խայիչ, ասաց նա, այս անդամ
դիմելով տիկնոջ ամուսնուն, որ առաջուայ պէս լուրջ
ու սակաւախօս էր և չէր շարժւում իր թիկնաթուում:
—Ես էլ լինէի, չէի համարձակուի մերժել...

Նուրեանը բարեմիտ անփութութիւն արտայայտող
մի ժպիտով պատասխանեց այդ խօսքերին:

—Բայց եթէ գուռք այնտեղ լինէիք, Ֆէօդօր Ներ-
սէսիչ, կը հիանայիք բժշկի վրայ, ասաց տիկինը մի
յուղիչ եղանակով:—Մի ծծկեր երեխայ կայ, որի ազ-
գրում գնդակ է մնացել, հրացանի գնդակ—երեակայում
էք այսպիսի բան: Ա՛հ, նայելը դժուար էր... Ես չը գի-
տեմ թէ որտեղից այնքան քաջութիւն ստացայ. նայում
էի երկար...

—Ո՞րպիսի անզգուշութիւն ձեր կողմից, ընդհա-
տեց Զարվագարեանը:

—Այդ ես էլ եմ ասել, աւելացրեց Նուրեանը:

—Տիկնոջից շատ չնորհակալ ենք դրա համար, հա-
մարեա աղաղակելով արտասանեց Ղարա-Մուրագեանը,
նորից կանգնելով և յետ քաշելով թիկնաթուուր:

Այդ աղմկալի ցոյցը դուր չեկաւ: Զարվագարեանը
մի կատաղի հայեացք ուղղեց գէպի վարժապետը, իսկ
Նուրեանը, հաղիւ զսպելով իրան, ինչոր բան փընթ-

փնթաց քթի տակ: Բայց տիկին Աննայի ձայնը ամեն-քին կարգի բերեց:

—Բժիշկն սկսեց քննել վէրքը, շարունակեց նա.—
բաւական երկար ժամանակ, համարեա տառը բոպէ,
շփում էր մատներով, բայց այնպիսի զգուշութեամբ,
այնքան ճարտար ու թեթև կերպով, որ անբախտ մա-
նուկը ոչ մի անդամ ձայն չը հանեց:

Երկու օրիորդներն էլ, իբրև ականատեսներ, շտա-
պեցին իրանց հիացմունքը յայտնել: Նրանք կրկնեցին
տիկնոջ նկարագրութիւնը:

—Հրաշք էր, Սամուէլ, բացականչեց վերջինս, ձեռ-
քերը միմեանց խփելով.—ես քեզ կ'ասեմ որ այսօր միայն
լաւ ճանաչեցի մեր բժշկին: Ո՞րքան փորձուած ու հմուտ
ձեռքերում է գտնուում մեր երեխաների առողջութիւնը:

—Բժիշկ Յովասափեան—սկսեց նուրեանը վերին
աստիճանի լուրջ ու հեղինակաւոր մի վկայութիւն, որ
հաստատում էր գլխի և ձեռքերի խրախուսական շար-
ժուածքներով.—բժիշկ Յովասափեան, կարող եմ ասել,
շատ յայտնի է թէ իբրև զարդացած մարդ և թէ իբրև
փորձուած, նոյն իսկ տաղանդաւոր մասնագէտաւ Այստե-
ղի նրա ընկերակիցները չեն ուրանայ այդ բանը: Առիթ
եմ ունեցել մինչև իսկ մայրաքաղաքում գովասանքներ
լսել նրա մասին: Դիագնօզի մէջ աջողակ, համարեա ան-
սխալական—սա ամենագլխաւորն է. ներքին հիւանդու-
թիւնները հիանալի է հասկանում. կարող եմ ասել, ա-
ռաջինն է մեզանում...»

—Հէնց այդ է պատճառը, որ ես, Սամուէլ իսայիչ,
խստապահանջ եմ դէպի նրան, ասաց Զարվագարեանը
մի սրաակից բարեկամի հպարտութեամբ.—ամենից ա-
ռաջ բարեխզութիւն, առանց այս բանի նոյն իսկ Զա-
խարինը բժիշկ չէ: Մեր հասարակութիւնը խստապա-
հանջ է. հեշտ չէ նրա վստահութիւնը գրաւելը, բայց
շատ հեշտ է մի անդամից ամեն ինչ կորցնելը: Եւ վեր-
ջապէս Մելքոն Բալակչը, նրա կինը... Զը գիտեմ ինչ

սիրտ պէտք է ունենալ՝ այդ երկու մարդկանց նեղացնելու համար... Միակ ժառանգ... երեխայ...

Ղարա-Մարադեանի կողմում էլի թեթև ազմուկ լուեց, բայց այս անգամ նա չը բարձրացաւ, ոչ էլ խօսեց:

—Ես անտարբեր չեմ այդ մարդու վերաբերմամբ, շարունակեց չաղ մարդը:—Ընկեր է, հրաշալի ընկեր, դեռ երիտասարդ, ունի իր առջև մեծ ապագայ: Սիրելուց, եղբօր պէս միրելուց է, որ ես շատ անգամ նրան չեմ խնայում: Եւ նա, չնորհակալ եմ, հասկանում է այդ:

Յաղթական մի գիրք ընդունեց Զարվադարեանը. Նրա աչքերը փայլատակում էին, խոշոր ինքնագոհ ժըպիտը վկայում էր, թէ որ քրան երջանիկ է նա, շողոքորթուելով ամենքի լուութիւնից, գլուխների միանման մեղմ օրօրումներից, որոնք միաբան հաստատում էին թէ նա, այն, սալօնների կուռք դարձած բժշկի մտերիմ ընկերն է...

Գ

Այնուամենայնիւ, Նուրեանների այս փոքրիկ երեկոյթը շուտ ձանձրացրեց: Այդպէս էր ցոյց տալիս նախ և առաջ ինքը, տան գլխաւորը, որ յաճախ դուրս էր գնում և էլի ստիպուած վերագառնում էր, իբրև մի ամուսին, որի կինը նստած էր հիւրերի հետ:

Մի կենդանի, աշխոյժ խօսակցութիւն սկսել չէր աջողւում: Քառակուսի, շքեղ սենեակի մէջ օտար, անծանօթ տարրի ներկայութիւնն էր այդպէս ճնշում: Եւ անսպասելի կերպով ներս խուժած խորթ ոյժը այնքան աննշան չէր, որ կարելի լինէր նրան արհամարհել. չորս հոգի—բոլոր ներկայ եղողների համարեա կէսը:

Բժիշկ Յովասափեանի յատկութիւնները չափազանց լաւ յայտնի էին ամենքին: Յայտնի դարձաւ և այն, որ Զարվադարեանը նրան անշափ սիրում է և անշափ էլ սիրում է նրանից: Յետո՞յ,

Ճարը գարձեալ Ղարա-Մուրադեանն էր և Թէուզորսոց նորից նրան կպաւ Բայց ոչ ուսուցիչը, ոչ էլ նրա ընկերները ծիծաղելի կամ ամօթալի ոչ մի հանգամանք չէին գտնում այն բանի մէջ, որ գիւղում ուսուցիչ է լինում, որ կոշտ ու կոպիտ են գիւղացիները, յաճախ շատ միամիտ, նոյն իսկ յիմար, հաստաղուկս: Սրախօսութիւնների համար հոգի տուող Զարվադարեանը ըզգում էր որ սպառւում է իր պաշարը. արդէն տիկինն ու օրիորդներն էլ անուշադիր էին գառնում գէպի նրա խօսքերը: Թմրութեան նման մի բան, կարծես, իջնում էր նրանց վրայ. մնում էր որ սկսէին յօրաննշել:

Կնալով՝ արթուն, զուարթ էր գառնում միայն վարժապետը: Նա նուաճել էր տունը. գիւղական ծխրտած, հոտած աշխարհի այս ներկայացուցիչը իր աներես հըպարտութեամբ վիրաւորում էր թէ նուրեանին և թէ Զարվադարեանին. վիրաւորում էր մանաւանդ նրանով, որ, կարծես, ասում էր. «Ես այստեղ եմ, և սա իմ տեղն է, որովհետեւ ես և դուք մի և նոյն ենք»:

Երբ Սամուէլ Նուրեանը մի անգամ էլ դուրս գնաց, Զարվադարեանը համարեա վազեց նրա ետեից և առանձնասենեակում բռնելով նրա ուսից, շատ լուրջ կերպով ասաց.

—Դիմացիր, սիրելի Սամուէլ իսայիչ. սուրբի համբերութիւն է հարկաւոր:

Նուրեանը կարողացաւ իր վրդովմունքը յայտնել դէմքի մի գառն ծամածութեամբ և ուսերը վեր քաշելով:

—Զեմ հասկանում,—վայրկենական լուռթիւնից յետոյ արտասանեց նա ոուսերէն լեզուով:

—Զես հասկանում... Դաղափար, բարեգործութիւն, եղբայր... սրանք առանց գիւղական թրիքների չեն գլուխ գայ: Մեր փողն է այս բոլսրի պատճառը: Բայց լաւ, ինչո՞ւ անպատճառ այսպէս. ինչո՞ւ գան, աչքներս մտնեն: Սատանան տանէ. փող տալ և էլ գիւղացիների ընկերութիւնը վայելել: Աւելի լաւ չէ դնել փողը դրսի

դռների մօտ, թող ով ուզում է վերցնէ, ինչ ուզում է անէ, միայն թէ վերև բարձրացող չը լինի...

Նա տաքացած էր, խօսում էր բարձր ձայնով: Իսկ նուրեանը թեթև կերպով հառաջեց. նրա խելօք աչքերը կարծես ասում էին, թէ այս բոպէին էլ նա պատրաստ է այդպէս անել:

—Անցել է, ասաց Զարվադարեանը.—դիմացիր, սիրելի Սամուէլ Խասյիչ, իսկ ես կը գնամ... Կլուբում մի ամենաձանձրավի խաղընկեր գտնելը սրանից լաւ է...

Նա տեսաւ, թէ ինչպէս խեղճացաւ Սամուէլ նուրեանը: Մի բողոքող հայեացըով գրամական առիւծը հասկացնում էր որ գնալ չէ կարելի:

—Ամենից առաջ կինս կը նեղանայ, —ասաց նա և լոեց. բայց Զարվադարեանը հասկացաւ որ երկրորդն էլ այն է, որ ինքը, նուրեանը, խնդրում է մենակ չը թողնել իրան:

Այս հանգամանքը մանաւանդ շատ հաճելի էր Զարվադարեանին: Եւ նա մի տեսակ կարեկցողի դիրք ընդունելով, համաձայնութիւն տուեց, ասելով թէ չէ կարելի թողնել նուրեաններին այսպիսի «հասարակութեան» մէջ:

Բայց մենակ նա չէր, որ այդ երեկոյ կարեկցութեան արժանի էր համարում նուրեաններին: Քառորդժամ չանցած, օտար տարրի այդքան ճնշող, վիրաւորական հաւասարակշռութիւնը ոչնչացրին նոր հիւրերը: Բոլորովին անսպասելի էր Գուլուբէկեան ընտանիքի այցելութիւնը:

—Նատ ուրախ ենք, շատ ուրախ ենք, ասացին նուրեան ամուսինները և երկուսով զնացին դիմաւորելու նորեկիններին:

Ամենից առաջ ներս մտաւ տիկին Գուլուբէկեան, որ ժպտաց ու դանդաղ կերպով ասաց.

—Տիւրեցինք, եկամնք:

—Համեցէք, շնորհ արէք:

Զորս հոդի էին եկողները: Տիկին Աննան համբուր-

ուեց նախ տիկին Գուլուբէկեանի հետ, ապա նրա աղջկայ հետ, որ մի շատ բարակ ու երկար տիկին էր՝ լալկան հայեացքով, ոսկորոս դէմքով, բարձր ուսերով։ Մօր և աղջկայ մէջ տեղ կանգնած էր մի կլորիկ ու աշխոյժ տղայ-երեխայ, որին նոյնպէս համբուրեց տիկին Աննան։

Այդ երրորդութեանը, երկու քայլ հեռուից, հետեւում էր մի երիտասարդ՝ տեխնիկի մաքուր համազգեստով։ Մի քանի տարի առաջ նա մի երկու-երեք մարդու էր յայտնի և պարզապէս Գալուստ Աբրահամեան էր, երկրագործի որդի, որ ինն տարի չարչարուել էր Պետերբուրդում՝ ինժենէրի վկայական ձեռք բերելու համար։ Բայց ամուսնանալուց յետոյ հասարակութեան մէջ այդ անունը, ինն տարիները, ինժեներական կոչումը բոլորվին անյայտացան, և առողջ ու ինքնաբաւական երիտասարդը ստացաւ «տիկին Գուլուբէկեանի փեսայ» անունը։

Նրան էլ բարեկեցին։ Երեկոյթը վորք ինչ կենդանութիւն ստացաւ. այժմ բազմամարդ էր, իսկ օտար տարրը կղզիացած էր մնացել, թէև տիկին Աննան իր պարտքը համարեց իսկոյն ծանօթացնել չորս երիտասարդներին նորեկների հետ։

Տիկին Գուլուբէկեանը մի շատ խոշոր ու լայն կին էր, սեւազգեստ, թուլս դէմքով, թանի պէս սպիտակ մազերով և արծուի քթով։ Պատկառանք էին աղդում մանաւանդ նրա անշտապ, դանդաղ շարժուածքները, վեհ ու խորաթափանց հայեացքը. իսկ նրա մեծ դէմքի գծերի մէջ ամենից շատ արտայայտիչ էր ներքեկի շրթունքը, որ վերեկնից փոքր ինչ երկար էր ու սուր։

Այդ բոլորի հետ միացած էր և այն նշանաւոր հանգամանքը, որ նա հանդուցեալ Թագէոս-բէկ Աղաւխան-բէկեան Գուլուբէկեանի այրին էր, այն Թագէոս-բէկի, որ երեսուն ու չորս տարի ոստիկանական պաշտօններ էր վարել զանազան քաղաքներում։ Այրին մի

առանձին հաճութեամբ էր պատմում նրա կենսագրութիւնը։ Երկար ժամանակ հասարակ գրագիր մնալուց յետոյ Թաղէոս-բէկը սկսեց բարձրանալ, այնպէս բարձրանալ, որ ամբողջ նահանգի շինօվնիկների նախանձն էր շարժում։ Նա դարձաւ պրիստաւ, դաւառապետ, ոստիկանապետ, նոյն իսկ եղաւ ժամանակ, երբ նրան յանձնուեց փոխահանգապետի պաշտօնը, որը նա վարեց մօտ երեք ամիս, ամառը. խօսում էին, թէ նա պիտի փոխահանգապետի պաշտօնում էլ հաստատուի. բայց այդ մի բանը—միակ բանը նրա կեանքում—չաղողուեց։

Թաղէոս-բէկի ոստիկանական տաղանդը անջնջելի յիշատակներ էր թողել շատ տեղերում և այնքան յարգուած էր նաև բարձրերում, որ երբ ծերութեան պատճառով նա թողեց պաշտօնը ու դարձաւ այս հարուստ քաղաքի առաջին մարդկանցից մէկը, նահանգապետը յաճախ էր դիմում նրա աջակցութեան և խորհրդներին։ Նրա մահը մի խոշոր գէպք էր. նահանգապետը տանից մինչեւ եկեղեցի գնաց ու մնաց մինչև պատարագի վերջը։ Հինգ թաւշեայ բարձերի վրայ տանում էին հանգուցեալի շքանշանները. իսկ մի տեղից, ուր Թաղէոս-բէկը երկար ժամանակ դաւառապետ էր եղել, պատգամաւորութիւն էր ուղարկուած։

Այդքան նշանաւոր մարդու յիշատակը մեծ արժանաւորութեամբ պահպանում էր պատկառելի այլին։ Իսկական պետական խորհրդական էր Թաղէոս-բէկը, ունէր գեներալի աստղ։ Նրա տանը հաւաքւում էր ընտրովի, ազնիւ հասարակութիւն, այդտեղ նահանգական բարձր պաշտօնեաները շփում էին արդիւնագործական խոշոր ներկայացուցիչների հետ։ Վաճառականներից շատերն էին ցանկանում մտնել այդ շրջանը, բայց Գուլուբէկեանը սաստիկ խիստ էր ընտրութեան մէջ, սաստիկ նախանձախմնդիր արիստօկրատ օջախի պատուին։ Երբ նա մեռաւ, ընդհանուր կարծիք էր թէ վերջնականապէս մարեց այդ օջախը. Բայց սխալուած էին ամենքը. ա-

մուսնու տեղը կանգնեց տիկին Գուլուբէկեանը. նա գանձարանից ստանում էր այրիի կենսամոշակ ոչ թէ այն պատճառով որ կարօտ էր—ոչ, Թադէոս-բէկը մեծ հարստութիւն էր թողել,—այլ գեներալի կնոջ դիրքը պահպանած լինելու համար: Ճիշտ է, այժմ նրա տանը այլ ևս առաջուայ պէս յաճախ չէին հաւաքում անուանի հիւրեր, բայց նախին ծանօթներից ոչ մէկը հիմա էլ չէ մոռացել այդ տունը Եւ վերջապէս, տիկինն էլ ունէր իր սեփական արժանիքը. յայտնի էր ամենքին, որ տեղական գիմնազիան աւարտած առաջին հայուհին նա ինքն էր:

Նուրեանները մի առանձին երախտապարտութիւն էին զգում դէպի Գուլուբէկեանների ընտանիքը: Խոչ-պէս կը բարձրանար մի հասարակ արհեստաւորի որդի Սամուելը, եթէ չը լինէր Թադէոս-բէկը: Նա էր, որ կրթեց այդ անդադար հարստացող վաճառականին, մըտցրեց արխատոկրատիայի շրջանը: Մի երեկոյ Թադէոս-բէկի հիւրերից մէկը խօսեց նրա հետ՝ մի երխատարդ, շատ յայտնի տոհմանուն ունեցող իշխանի մասին, որ տեղ էր որոնում: Նուրեանը յայտնեց իր պատրաստականութիւնը. երիտասարդ իշխանը ծանօթացաւ նրա հետ, ամեն օր լինում էր նրա տանը և հիացնում էր իր ազնուական ձևերով: Տիկին Աննան յատկապէս նրա համար չքեղ երեկոյթներ էր սարքում: Երկու կողմը միմեանց շատ հաւանեցին: Նուրեանների թախանձանիքներին զիշանելով, իշխանը նամակ գրեց իր ազգակից և ծանօթ իշխաններին, հրաւիրեց նրանց ծանապարհորդել դէպի արդիւնաբերական քաղաքը: Հաղիւ մի շաբաթ անցած՝ իշխանների և իշխանուհիների մի խումբ երեան եկաւ ոսկիների քաղաքում: Նուրեանների տանը նորից սկսուեցին փառահեղ խնճուքներ իսկ երբ հիւրերը վերադան իրանց քաղաքը, Նուրեանը, շատ բարձր գնահատելով իշխանի ազգականական կապերը, նշանակեց նրան «մինիստրական» ոռնիկ և ուղարկեց նրան մայրաքաղաք իրմւ իր առևտրական տան ներկայացուցիչ: Ա-

մենքը գիտէին որ այդ պաշտօնը բոլորովին անհարկաւոր էր առևտրական տան համար և եթէ ստեղծուել է, պատճառն այն է, որ նուրեանը ուզում է արիստօկրատ քջանների հետ կապուած մնալ:

Դ.

Տիկին Աննան վերին աստիճանի սիրալիր կերպով հարց ու փորձ էր անում այրիի, նրա աղջկայ առողջութեան մասին. երեխային ուզարկեց իր երեխաների սենեակը, կարճ կերպով պատմեց, թէ ինչու համար են հաւաքուել անծանօթ պարոնները, և մի քանի խօսքով նկարագրեց աղքատարեանը նուտել էր տիկին Գուլուբէկեանի կողքին, սրախօսութիւններ էր անում բարեգործութեան մասին. իսկ Սամուէլը ինչոր բան էր բացատրում տիկին Գուլուբէկեանի փեսային, որ կանգնած էր նրա առջեւ և երբեմն-երբեմն թոյլ էր տալիս իրան մի քիչ դէպի առաջ խոնարհուել՝ նրա խօսքերը պարզ լսելու համար:

Բայց տիկին Գուլուբէկեանի թոռնը շուտով վերադարձաւ, բերելով իր հետ նուրեանների երկու երեխաներին: Դա մի թեթև անկարգութիւն էր, բայց մեծերը, մանաւանդ տիկին Գուլուբէկեան, փոքրիկ նկատողութեամբ բաւականացան, և մանկական սրտաբացութիւնը մի ակնթարթում թարմացրեց գահինձի մթնոլորտը: Երեք փոքրիկները իրանց վազվողներով, իրանց խաղալիքներով, շատախօսութեամբ, ծիծաղներով նուաճեցին ամենքին, խառնեցին գասակարգերը, մոռացնել տալով ամեն մի խտրութիւն: Ամեն մէկը իրաւունք ունէր շոյել մանկական փափուկ թշերը, սրտի պարզութեամբ հարցեր տալ երեխաներին և ենթարկուել նրանց միամիտ հարց ու փորձերին...

Հնդհանուր բաւականութիւնը հրճուանքի փոխուեց, երբ նուրեանների երրորդ, ամենափոքրիկ երեխան էլ,

բոլորովին անակնկալ կերպով, երեւաց դահլիճում՝ ոռւս
աղախնի հետ։ Մի աղջիկ էր գա՝ ձիւնի պէս սպիտակ
շորերի մէջ, քնքոյշ, փափլիկ ու սիրուն՝ իբրև քերովբէ։
Նոր էր նա ման գալը սովորել և արգէն կարողանում
էր մի քանի բառ թոժովել։ Եւ նրան իսկոյն յափշտա-
կեցին, ձեռքից ձեռք էին խլում։ Մինչև իսկ տիկին
Գուլուբէկեանը անտարբեր չը մնաց։

—Լիլին, Լիլին, կանչում էին այս ու այն կողմից։

Երեխան անդադար թեքում էր դէպի իրան կան-
չողները, ծիծաղում էր, երբեմն արտասանում էր իրան
յայտնի բոլոր բառերը, խաղացնում էր իր փոքրիկ ձեռ-
քերը, մի խօսքով հրճում էր, ինչպէս կարող է հրճուել
առողջ ու կայտառ մանուկը։

Հրճում էին և ծնողները։ Աղախինը պատմում էր
նրանց թէ ինչպէս երեխան չը կամեցաւ մենակ մնալ
կամ քնել, ինչպէս ստիպողաբար պահանջեց որ իրան էլ
տանեն միւս երեխաների հետ և վազեց դէպի այս կող-
մը։ Հայրն ու մայրը չը գիտէին ինչպէս արտայայտեն
իրանց զարմանքը։ Հրաշք չէ, հարցնում էին նրանը
միմեանցից. այդքան փոքր, և սակայն որքան խելք, որ-
պիսի մտառութիւն...

Լիլին ամենից շատ գրկում ու համբուրում էր
Զարվադարեանը։ Իր քնքութիւնների և գգուանքների
մէջ նա նոյն իսկ չափազանցութեան էր հասնում։ Որ-
քան նա հրճում էր, երբ փոքրիկը միւմի ձգում էր նրա
բեղերը կամ իր թաւիշ թաթիկներով ծեծում էր նրա
ճակատը։ Տիկին Աննան շտապում էր սաստել երեխային,
որ այդպէս չանէ, բայց Զարվադարեանը նեղանում էր
և խնդրում էր թոյլ տալ որ երեխան ազատ ու ինքնա-
կամ լինի։ Մի քանի անդամ օրիորդները խլեցին նրա-
նից Լիլին։ Բայց նա պտոյտ էր գալիս երեխայի շուր-
ջը և ամեն յարմար դէպքից օգտառում էր, որպէս զի
նրան յափշտակէ ու փախցնէ։ Հիացնում էին մանաւանդ-
մանուկի աչքերը. մօր աչքերն էին... իսկ և իսկ...

Իսկ օտար տարրը անընդհատ առաջ էր տանում

իր տիրապետութիւնը այդ փառաւոր սենեակում։ Ղարա-
բա-Մուրաղեանը հաշուապահի հետ մօտեցել էր պատ-
կերին և երկար դիտում էր նրան։ Փոքր ինչ վտիտ,
բայց ամուլ կազմուածքի տէր երիտասարդը հանգիստ
ու ինքնավստահ կերպով ձեռքերը յետ էր դարսել և
հետզհետէ խորասուզւում էր նշանաւոր տաղանդի թու-
վիչ ազդեցութեան մէջ։ Նա չէր էլ մոտածում որ կար-
գին շապիկ չունի հագին։ հնամաշ սև սիւրտուկը բոլո-
րովին խորթ չէր թւում այս հարստութեան մէջ։ Թուխ,
խուճուճ մազերով ծածկուած դչուխն անշարժացել էր,
դիւղական արևառ դէմքի վրայ մեղմ հիացմունքը շտկել
ու կանոնաւորել էր փոքր ինչ կոպիտ դծերը։ Կտաւի
վրայ փուած կապոյտ երկինքը, լոյսերը, ծառաստանը,
զոհարանի բարակ մուխը, մարդկանց խոնարհ, աղեր-
սաւոր դէմքերը խորին բաւականութիւն էին թափում
նրա սրտի մէջ։ Այդ ծառերի ու լոյսերի միջից բուրում
էր մի ինչ-որ առանձին օդ, մաքուր ու զուարթ, և ե-
րիտասարդը իր ամբողջ թռքերով ներս էր ծծում այդ
կենսատու եթերը։ Եւ նա յանկարծ, մի բուռն ոգեսո-
րութեան տակ, խօսեց.

—Գաղափարը միացնում է, Սահակեան. գաղափա-
րը կարող է ոչնչացնել ամեն մի խտրութիւն. նա ար-
դէն ոչնչացրել է, չ՞ս տեսնում,—ասաց նա, մի հայ-
եացքով չափելով դահլիճը—Ա՛հ, ինչքան չքեղ է ապ-
րում այս մարդը...

Հաշուապահը հասկացրեց, որ այստեղ զարմանալու
բան չը կայ. պարոն նուրեանը տարեկան մի միլիօն ե-
կամուտ ունի:

Միլիօն... Եօթնյարկանի թուանշանը այնքան ճնշող
էր խեղճ դիւղական ուսուցչի համար, որ ակամայ հա-
ռաջանը հանեց նրա բերանից։ Ուրեմն միլիօնը միայն
թուաբանութեան մէջ չէ, նա իրականութիւն էլ է,
այսպէս խօսուն ու շարժուող մարդիկ, այսպիսի պա-
տեր... նա յիշեց թէ ինչերից է կազմում այդ թիւը,

յիշեց թէ ինչն է այսպիսի մի հսկային մօտեցրել իրան
և նորից արտասանեց.

—Գաղափարը...

Մէկը այդ վայրկեանին մեղմ կերպով քաշեց նրա
փէը: Յետ նայեց—Լիլին էր:

Զանձրանալով գզուանքներից ու համբոյրներից,
երեխան սկսել էր վազգվել, բայց յանկարծ կանգ առաւ
վարժապետի մօտ, սուր բացականչութիւններով ինչոր
բան էր ուզում հասկացնել: Երեսի պատկերն էր գրա-
ւել. այդպէս հասկացան մի քանիսը և մօտ վազեցին.
բայց Ղարա-Մուրադեանը հանգիստ կերպով բարձրա-
ցրեց նրան, գրկեց և աւելի մօտենալով պատկերին,
սկսեց ցոյց տալ, բացատրել: Նուրեանը անօդնականի
պէս ցածրացրեց գլուխը, կարծես ամաչելով իրան շըր-
ջապատողներից: Զարվադարեանը, ճարը կտրած, էլի
սկսեց իր հեգնութիւնները գիւղի, գիւղական վարժա-
պետի մասին, բարձրաձայն ծիծաղ պատճառելով տի-
կին Գուլուբէկեանի փեսային:

Բայց Ղարա-Մուրադեանը չէր լսում: իր ամբողջ
միտքն ու ուշքը երեխային էր նուիրել: Այդ փոքրիկ
հրեշտակը չէր հաստատում այն, ինչ ինքը մի բոպէ ա-
ռաջ ասում էր Սահակեանին: Լիլին այդ օտար մար-
դու գրկում էլ ուրախ էր, թուկոտում էր: Վերջա-
ցնելով իր բացատրութիւնները պատկերի մօտ, երիտա-
սարդը տարաւ երեխային՝ դահլիճի միւս զարդարանք-
ների մասին խօսելու: Երբ նա երեխան խտտած հան-
դիսաւոր կերպով անցնում էր սենեակի միջով, ամենքը
մի վայրկեան լուցցին, կարծես բոլորովին ճիշտել, տա-
փակացել էին:

Նա մօտեցաւ դաշնամուրին: Այդտեղ տիկին Ան-
նան և օրիորդները սաստիկ թախանձում էին Գուլու-
բէկեանի աղջկան, որ մի բան նուագէ. իսկ նա, լալկան
աչքերը մերժ մէկի, մերժ միւսի վրայ գարձնելով, հը-
րաժարում էր, ոչինչ պատճառ չը բերելով: Անշարժ ու
հրաշալի հանգիստ նստած տիկին Գուլուբէկեանը նայ-

ում էր այդ տեսարանին և նրա ներքեկի սուր շրթունքը գոհութեան նշան էր ցոյց տալիս, համարեա ժպիտ: Տանտիկինը նրան էլ դիմեց, խնդրեց նրա միջամտութիւնը. բայց նա պատասխան չը տուեց, միայն նրա խոշոր դէմքի վրայ ներողամիտ բարեհաճութիւն առայայտող կնծիռներ երևացին:

—Կարող ես, վարժապետ, հէնց այս ըոպէին, ձեռաց, մի շարական սովորեցնել Լիլիին, հարցրեց Զարվադարեանը, ծիծաղելի մի քայլուածքով մօտենալով նրան:

Տիկին Գուլուբէկեանի փեսան, որ նրանից մի քայլ չէր հեռանում, որպէս զի այդ հանագները լաւ լսէ՝ աւելի մեծ հաճութեամբ ծիծաղեց: Բայց Ղարա-Մուրադեանը, ուշադրութիւն չը դարձնելով այդ տափակ խօսքերի վրայ, ցած դրեց երեխային, մօտեցաւ լալկան աջքերով կնոջը, գլուխ տուեց և բարձր ձայնով ասաց.

—Տիկին, ես էլ եմ խնդրում...

, 1 է 0

(Կը Շարունակուի)

ՖՐՈՄՈՆ ԿՐՏՍԵՐ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

I

Կնոջս ընդունելուրեան օրը:

Կէսօր է: Մառէ թաղը նախաճաշում է:

Եկեղեցիների զանգահարութեան ծանր զօղանջին խառնըւում է, —բակերից բարձրանալով, —գործարանների զանգակների բարակ զնդզնգոցը Այդ զանգահարութիւններից իւրաքանչիւրը ունի իր տարբեր բնաւորութիւնը: Որը տխուր է, որը ուրախ, որը ժիր է, որը թմրած: Կան հարուստ, բախտաւոր զանգեր, որոնք հնչում են հարիւրաւոր բանուորների համար. կան աղքատ, երկչոտ զանգեր, որոնք կարծէք թագնւում են ուրիշների յետնում ու աշխատում կուչ գալ, փոքրանալ, կ'ասես վախինալիս լինեն, որ մնանկութիւնը կը լսի նրանց ձայնը: Վերջապէս կան և խարերայ, անզգամ զանգեր, որոնք հընչում են դրսեի համար, փողոցի համար, որպէս զի հաւատացնեն ամենքին, թէ իրանց առևտրական տունը նշանաւոր տուն է և բազմաթիւ մարդիկ են բանում անտեղ:

Փառք Աստուծու, Ֆրօմօնների գործարանի զանգը դրանցից չէ: Մի կարգին, հին ու մի քիչ ճաքած զանգ է այդ, որ արդէն քառասուն տարի ծանօթ է Մառէյում և որ երբէք անգործ չէ մնացել բացի կիրակիներից և խռովութիւնների օրերից:

Նրա ձայնը հնչելուն պէս բանուորների մի ահազին բազմութիւն անցնում է հինաւուրց ապարանքի գարպասի մէջով և անհետանում շըջակայ գինեստուններում: Աշակերտ բանուորները նստոտում են մայթերի և վերքներին որմնադիրների հետ միասին: Խաղալու համար մի կէս ժամ յետ քցելու, համար նրանք նախաճաշում են հինգ րոպէում, գնելով զանազան ուտելեղէններ, որ փողոցային վաճառողները Պարիզում ման են ածում

անտունների և աղքատների համար, — շագանակ, ընկոյզ, խնձոր, —և նրանց կողքին որմնագիրները կտոր-կտոր են անում ալիւրից ու գաճից բոլորովին սպիտակած մեծ-մեծ բոքոններ։ Կանաք վասդ-վուազ վագում են զանազան կողմեր։ Նրանք բուլորն էլ տնտեսութեան վերաբերեալ գործեր ունեն, կամ թէ մի երեխայ կամ մի ծերացած ազգական, որին պէտք է խնամն տանը կամ ապաստարանում։ Արհեստանոցների խեզդող օդիցը չնչասպառ, կոպերն՝ ուռած, մազերը՝ խունացած թաւշաթղթի հաղպակեր մամր փոշուց, նրանք, զամբիւղները կոնկրին, շտապում են այդ դուրս խուժած ամբոխով լի փողոցի միջով, ուր դժուարութեամբ են շրջադայում հանրակառքերը։

Նստած՝ դարպասի կողքի քարի վրայ, որ երբեմն իր ոտաստեղ էր ծառայում ձի հեծնողների համար, Ծիսլէրը ժըպտալով նայում է բանուորների ելքին։ Նրան մեծ երջանկութիւն է պատճառում միշտ սրտաբաց յարդանքը։ այդ ժրաշան մարդկանց, որոնց նա ճանաչել էր այդտեղ, երբ ինքն էլ նրանց նման աննշան և նուաստ էր։ Նրա սիրութ զերմութիւն է զգում, երբ նա լսում է այդ «բարե, պարոն Ծիսլէր»-ը, արտասանուած այդքան տարբեր-տարբեր, բայց անխափի գորովալից ձայներավ։ Երեխանները աներկիւղ մօտենում են նրան, կէս բանուոր, կէս արուեստագէտ գծապրիչները, երկար-երկար միրուցներով, անյնելիս ձեռք են տալիս նրան և խօսում են հետը «դու»-ով։ Թերևս այդ բոլորի մէջ պէտք եղածից մի քիչ աւելի ընտանեկանութիւն կայ, որովհետեւ այդ մարդը գեռ չէ ըմբռնել իր նոր գիրքի վեհութիւնն ու հեղինակաւորութիւնը, և ես գիտեմ մէկին, որ շատ նուաստացուցիչ է համարում այդ սղասաւ արձակ վերաբերմունքը։ Բայց այդ «մէկը» չէ կարող նրան տեսնել այս բոպէին և պատրօնը օգուտ է քաղում զրանից և ուժգին կերպով գրկում ծեր հաշուապահ Սիրիկմունդին, որ ամենքից վերջն է դուրս դալիս, ձգուած, կարմրած, դէմքը ճխտած մի ահազին շապկօձիքի մէջ և-ինչ եղանակ էլ լինի—գլխաբաց, որովհետեւ վախում է կաթուածահար լինի։

Ծիսլէրն ու նա հայրեննակիցներ են։ Նրանք վերաբերում են միմեանց խորին յարգանքով, որ սկսուել է այն հեռաւոր ժամանակներում, երբ նրանք երկուսն էլ նոր էին մտել գործարանը և միասին նախաձառում էին փողոցի անկիւնի փոքրիկ կաթնատանը, ուր Սիրիկմունդ Պալանուսը մէն-մենակ է մտնում այժմ ու մի տեսակ կերակուր է ընտրում հերթական ճաշ պատիցը կախած ցանկի մէջ...

Բայց ահա կրոսեր ֆրօմօնի կառքը մանում է դարպասով։ Նա առաւօտից ի վեր շրջադայում է, և այժմ երկու ընկե-

բակիցները, դիմելով դէպի իրանց ապրած գողտրիկ տունը, որ գտնւում է պարտէզի խորքում, մտերմաբար խօսում են իրանց գործերի մասին:

—Ես գնացել էի Պոչասօնների մօտ, ասում է կրտսեր Ֆրօմօնը: Նրանք ինձ ցոյց տուին նոր տիպարներ, որոնք շատ սիրուն են... Պէտք է ուշադրութիւն դարձնել: Լուրջ մրցորդներ են նրանք:

Բայց Ռիսլէրը չէ անհանգստանում: Նա զօրեղ է զգում իրան, յոյս գնելով իր տաղանդի, իր փորձառութեան վրայ, և բայցի այդ... սակայն այդ թող գաղտնի մնայ... Նա արդէն մի զարմանալի զիւտ անելու վրայ է,—մի կատարելագործուած սպազրիչ գործիք, մի այնպիսի բան... Էհ, վիրջը ինքները կը տեսնեն: Այդպէս խօսելով, նրանք մտնում են պարտէզը, որ սէուայրի նման են պահում, գնդանե խուզած ակացիաներով, որոնք գրեթէ նոյնքան հին են, որքան և ինքը ապարանքը, և հրաշալի բաղեղներով, որոնք ժածկում են սևացած բարձր պարսպները:

Կրտսեր Ֆրօմօնի կողքին Ռիսլէր երէցը՝ իր սպառըօնին հաշիւ ներկայացնող գործակատարի տպաւորութիւն է զործում: Ամեն քայլափոխում նա կանգ է առնում խօսելու համար, որովհետեւ նրա շարժուածքները ծանր են, մտածողութիւնը գանդաղ և խօսերը դժուարութեամբ են գալիս միտքը: Ա՞հ, եթէ նա կարողանար տեսնել այնտեղ, վերևում, երկրորդ յարկի պատուհանի յետեւում, այն փաքրիկ վարդագոյն դէմքը, որ ուշուչով դիտում է այդ բոլորը...

Տիկին Ռիսլէրը սպասում է իր ամուսնուն նախաճաշի և համբերութիւնից գուրս է գալիս, տեսնելով նրա գանդաղութիւնը: Չեռքով նրան նշան է անում՝ «Դէ չուտ արա է»: Բայց Ռիսլէրը չէ նկատում այդ: Նրա ուշը ու միտքը ժօրժի ու կլէրի փաքրիկ աղջկայ հետ է, որ ծծմօր գրկին հրճւում է արեի առաջ իր ժանեակների մէջից: Որքան սիրուն է նա:—Իսկ իսկ ձեր պատկերն է, տիկին Շօրը:

—Ձեղ այդպէս է թւում, բարի Ռիսլէր. սակայն ամենքն ասում են, թէ նա հօրն է քցել:

—Այն, մի քիչ... բայց այնուամենայնիւ...

Եւ բոլորը միասին, հայրը, մայրը, Ռիսլէրը, ծծմայրը, լուրջ կերպով նմանութիւններ են վնասուում մարդկային այդ փաքրիկ ուրաւագծի մէջ, որ նայում է նրանց իր շաղուած և արտաքին կեանքից ու արեի լոյսից շացած աչքերով: Իր կիւսաբաց պատուհանից Սիդօնին կուանում է տեսնելու, թէ ինչ

են անում նրանք այնտեղ և ինչու իր ամուսինը չէ բարձրանում վերի:

Այդ բոպէին նիսլէրը, իր զիրկը վերցրած պատլիկին, — սպիտակ կտորների և բացգոյն ժապաւէնների այդ սիրուն բեռը, — ծեր պապիկի գգուանքներով ու ծամածոռութիւններով աշխատում է ծիծաղեցնել ու ծըւծըւացնել նրան: Ո՞րքան ծեր կւրպարանք ունի խեղճը: Ո՞րքան անչորհք ու ծիծաղելի են այդ ահազին մարմինը, որ նա աշխատում է կուչ ածել, փոքրացնել երեխայի առաջ, ու այդ կոչուկոպիտա ձայնը, որ նա խլացնում է քաղցրացնելու համար:

Վերեւում նրա կինը ոտը խփում է գետնին ու մրժմրժում ատամների արանքով.

— Յիմար...

Վերջապէս, սպասելուց ձանձրացած, նա ուղարկում է աւսելու պարոնին, որ նախաճաշը բերել են արդէն. բայց խաղը այնքան տափացել է, որ պարոնը չէ իմանում, թէ ինչպէս թողնի հեռանայ, ինչպէս ընդհատի այդ հրճուանքի բուռն արտայայտութիւնները և թոչնածայն ծըւծըւոցները: Վերջ ի վերջոյ նա մի կերպ յետ է տալիս երեխային իր ծծմօրը և վախչում դէպի սանդուխները, ծիծաղելով ի բոլոր սրտէ: Նա դեռ ծիծաղում է սեղանատունը մտնելիս, բայց կնոջ հայեացքը սառը ջուր է ածում գլխին:

Սիդճնին նստած է սեղանի մօտ, կերակուրը դրած ջերմապահի վրայ (réchaud): Նա զոհի դիրք է ընդունել, և երեւում է, որ վճռել է վատ տրամադրութեան մէջ մնալ:

— Վերջապէս եկաք... վանք Աստուծու:

Ռիսէրը նստում է, փոքր ինչ ամօթահար:

— Մի նեղանար, փոքրիկս: Այդ երեխան այնքան...

— Ես ձեզ արդէն ինսդրել եմ, որ «դու»-ով չը խօսէք ինձ հետ: Մեր մէջ այդ չը պէտք է լինի:

— Բայց չը որ մենք մենակ ենք այժմ:

— է՞հ, դուք երբէք չէք կարողանալու յարմարուել մեր նոր դիրքին... Եւ ինչ է գուրս գալիս: Ոչ ոք այսուեղ յարդանքով չէ վերաբերւում դէպի ինձ: Աշխլ գետին, այդ ծեր դռնապանը, հազիւ հաղ է գլուխ տալիս, երբ ես անց եմ կենում նրա սենեակի առաջով... Ի հարկէ, ճիշտ է, որ ես Թրօմօն չեմ և սեփական կառք չունեմ...

— է՞հ, փոքրիկս, դու... այսինքն... դուք լաւ զիտէք, որ դու... որ դուք կարող եք միշտ լծել տալ տիկին Շօրչի կառքը: Նա միշտ մեր տրամադրութեան տակ է դնում իր կառքը:

— Քանի՞ անգամ պէտք է ասեմ, որ ես չեմ ուզում ոչընչով պարտաւորուած լինել այդ կնոջը:

— Ա՛խ, Սիդօնի...

— Հա, հա, գիտեմ, գիտեմ, այդ արդէն յայտնի է... տիկին Ֆրօմօնը երկնքից իջած Աստուած է: Ոչ ոք իրաւունք չունի նրան դիպչելու: Եւ ես պարտական եմ խոնարհ կերպով տանել այն բանը, որ ես ոչինչ եմ այս տանը. պէտք է թողնեմ, որ ինձ ստորացնեն, ոտնաւակ տան:

— Ե՞ն, Է՞ն, փոքրիկս...

Խեղճ Ռիսլէրը աշխատում է առարկել, մէկ երկու խօսք ասել յարդարացումն իր սիրելի տիկին Շօրշի: Բայց նա ճարպիկ չէ: Յօնքը դրստելու տեղ աչքը հանում է, և Սիդօնին ձեռաց կրակ է կտրում:

— Ես ձեզ ասում եմ, որ, չը նայելով իր անգորը կերպարանքին, այդ կինը գոռոզ է ու չարասիրտ... Նախ և առաջ, նա ինձ ատում է. այդ ես լաւ գիտեմ... Քանի որ ես գեռ առաջուան փոքրիկ ու աղքատ Սիդօնին էի, որին նա չպրտում էր իր կոտրտած խաղալիքները ու հին հազուստները, բանը լաւ էր գնում. բայց այժմ, որ ես էլ նրան հաւասար գործարանատիրուհի եմ,— այդ նրան զայրացնում է ու նուաստացնում... Այդ աղջիկ-պարոնը ինձ խորհուրդներ է տալիս բարձրից, արածներս ըննադատում է... Զնուր եմ աղախին վարձել... Ի հարկէ: Զէ որ ես սովոր եմ ինքս ինձ աղախնութիւն անել... Նա ամեն տեսակ առիթ է վնասում ինձ վիրաւորելու համար: Երբ չորսեքաբթի օրերը գնում եմ նրա մօտ, պէտք է լսել, թէ ինչ եղանակով է բոլորի առաջ հարցնում, թէ ինչպէս է տիկին Շէրը... Ե՞ն, շատ լաւ, այն, ես Շէր եմ, իսկ նա Ֆրօմօն է: Մէկ մէկի արժենք կարծեմ: Իմ պատս գեղագործ էր: Իսկ նրանն ի՞նչ է: Վաշխառութեամբ հարստացած մի գիւղացի... Օ՛հ, ես նրան կ'ասեմ այդ բանը այս օրերս, եթէ քիթը շատ բարձրացնի. այն էլ կ'ասեմ, որ նրանց աղջիկը, թէն իրանք այդ չեն նկատում, նմանում է այդ ծեր Գարդինուա պապին. իսկ նա, Աստուած էլ գիտի, որ սիրուն չէ:

— Օ՛հ, ասում է Ռիսլէրը, որ խօսք չէ դանում պատասխանելու համար:

— Ի հարկէ, ես ձեզ խորհուրդ եմ տալիս զմայլելու նրանց երեխայի վրայ: Միշտ հօ հիւանդ է: Ամբողջ գիշերը կատուի պէս մլաւում է: Զէ թողնում, որ քնեմ... Ցետոյ էլ, ամբողջ օրը զլուխս տանում են մօր դաշնամուրն ու անվերջ կլկոցները... տրա լա լա լա... Գոնէ մի ուրախ երաժշտութիւն էլ է լինէր:

Ռիսլէրը հնարք գտել է։ Ոչ մի ձայն չէ հանում, իսկ մի քիչ անցած, երբ տեսնում է, որ կինը սկսել է մնջմանալ, բուլորվին հանգստացնում է նրան հաճոյախօսութիւններով։ —Ո՞քան սիրուն է նա այսօր։ Երեկ այցելութիւններ պէտք է անել նախաճաշից յետոյ...

«Դու»-ով խօսելու վտանգից խուսափելու համար, նա անորոշ ու անդէմ գարձուածքներ է գործ ածում։

—Չէ, ես այցելութիւններ չեմ անելու այսօր, պատասխանում է Սիդնին մի տեսակ հպարտութեամբ։ Ես, ընդհակառակը, ընդունում եմ այցելութիւններ։ Իմ ընդունելութեան օրն է այսօր...

Եւ տեսնելով ամուսնու զարմացած ու շփոթուած կերպարանքը, վրայ է բերում։

—Այն, այն, իմ ընդունելութեան օրն է... Տիկին Ֆրօմօնն ունի իր օրը. կարծում եմ, ես էլ կարող եմ ունենալ իմը։

—Ի հարկէ, ի հարկէ, ասում է խեղճ Ռիսլէրը, որ նայում է շուրջը փաքր ինչ անհանգստութեամբ... Այդ է ուրեմն պատճառը, որ այսօր այնքան ծաղիկ կայ ամեն տեղ, վերնագաւթում, դահլիճում։

—Այն, այս առաւօտ աղախինը իջաւ պարտէզը... Գուցէ լաւ չեմ արել։ Հա, դուք չեք ասում այդ բանը, բայց ես հաւատայած եմ, որ դուք կարծում էք, որ լաւ չեմ արել... Տէր Աստուած։ Ես կարծում էի, թէ պարտէզի ծաղիկները նոյնքան մեղ են պատկանում, որքան և նրանց։

—Անշնչառ... բայց և այնպէս դու... դուք... դուցէ աւելի լաւ լինէր...

—Թոյլուութիւն ինզրեկ... Հա... էլի ստորանալ, այն էլ մի քանի անպէտք ոսկեծաղիկների ու երկու-երեք շիւղ կանաչի համար։ Վերջապէս, ես հօ գողունի չեմ քաղել տուել այդ ծաղիկները, և երբ ափկին Ֆրօմօնը այժմ գայ վերե...։

—Միթէ գալու է։ Ախ, որքան սիրալիր է նա։

Սիդնին ծուլ ելաւ տեղից, դայրացած։

—Ի՞նչպէս թէ «որքան սիրալիր է նա»... Այդ էր պակաս, որ գեռ չը գայ էլ։ Հապա ես ինչո՞ւ եմ ամեն չորեքշաբթի գընում ձանձրանալու նրա մի ամբողջ խումբ քրքրուան ու ծամածուող հիւրերի հետ։

Նա լոռութեան է տալիս այն բանը, որ տիկին Ֆրօմօնի այդ չորեքշաբթիները մեծ ծառայութիւններ են մատուցելիրան, չէ ասում, որ նրանք մօղային շաբաթաթերթի տեղ են բռնում նրա համար, այն փոքրիկ, խառն բովանդակութեամբ հանդէսներից մէկի տեղը, որոնց մէջ տպուած է լինում, թէ ինչպէս պէտք է

սենեակ մտնել, գուրս գալ, բարեկը, ի՞նչպէս պէտք է ծաղիկները զետեղել ծաղկաբանում ու սիգարները ծխարանում, գեռ չը հաշուած նկարները, չնորհալի հագուստեղէնի տիպարները և լաւ դերձակուհիների անունները: Սիդօնին չէ ասում նաև, թէ կլէրի այդ բարեկամուհիներին, որոնց մասին այժմ այդքան արհամարհանքով է խօսում, բոլորին էլ ինքը աղաջել է, որ գան իրան մօտ, և թէ հնչնց նրանք են ընտրել նրա ընդունելութեան համար ուրբասթ օրը:

Կը գան արդեօք նրանք: Արդեօք տիկին ֆրօմօն կրտսերը սիրու կ'անէ վիրաւորել սիկին Ռիսէր երէցին, չը գալով նրա առաջին ընդունելութեան օրը: Այդ հարցը այնքան մնհանգըստացնում է նրան, որ նա տեսդի մէջ է զգում իրան...

— Շնէւա արէք, շուտ, ամեն բոպէ ասում է Սիդօնին Ռիսէրին... Որքան ծանր էք նախաճաշում, Տէր Աստուած:

Ճիշտ որ Ռիսէրը սիրում է գանդաղ ուտել և ծխել չիրուխը հացի վրայ, կում-կում ծծելով սուրճը: Այօր նա ստիպուած է հրաժարուել իր այդ սիրելի սովորութիւններից, ծուխ չանելու համար չիրուխը չը հանել պատեանից և վերջին պատան ուտելուն պէս՝ գնալ ձեռաց հազնուել, որովհետեւ կինը պնդում է, որ կէս օրից յետոյ նա գայ վերև ողջունելու իրան այցելող տիկիններին:

Պէտք էր տեսնել, թէ որքան զարմացան գործարանում, տեսնելով որ Ռիսէր երէցը այդ լի օրը իջնում է ներքև սև սիւրտուկով, ու հանդիսօրեայ փողպատով:

— Վա, հարսանիք ես գնում, ձայն է տալիս նրան գանձական Սիգիզունդը իր վանդակապատի յետեից:

Եւ Ռիսէրը պատասխանում է ոչ առանց մի փոքր հպարտութեան.

— Կնոջս ընդունելութեան օրն է այսօր:

Քիչ անցած, ամենքն էլ իմանում են, որ Սիդօնիի ընդունելութեան օրն է այդ օր, և Աշէլլ քեռին շատ էլ դոհ չէ մնում, տեսնելով, որ կտրել են պարտէզի մուաքի մօտ եղած ձմերային դավինիների ճիւղերից մի քանիսը:

Ռիսէրը իր արհեստանոցում տախտակի առաջ նստած գծադրում է բարձր պատուհանների պայծառ լոյսով: Նա հանել է վրայից իր գեղեցիկ սիւրտուկը, որ նեղութիւն է տալիս նրան, և վեր է քաշել շատկի բոլորովին թարմ թեքերը. բայց այն միտքը, որ իր կինը հիւրերի է սպասում, զբաղեցնում ու անհանգստացնում է նրան և նա ժամանակ առ ժամանակ հազնուում ու շիտկուում է վերև գնալու համար:

— Մարդ չի եկել, — հարցնում է նա վախվիսելով:

—Զէ, ոչ ոք չի եկել, պարո՞ւ:

Նքեղ կարմիր գահլիճում,—որովհետև նրանք կարմիր դամասկով պատած մի դահլիճ ունեն, որի պատուհանների արանքին դրուած է մի կօնսօլ և բացզոյն ծաղիկներով գորգի մէջտեղը՝ մի սիրուն սեղան,—Սիդօնին բազմել է հիւրեր ընդունող արկնոջ գիրքով, շրջապատուած շրջանաձև շարուած բազկաթոներով ու աթոռներով: Այստեղ այնտեղ երևում են գրեկը, գրական հանդէսներ, մի փոքրիկ զամբիւղ ձեռադործի համար, հիւրուած մնատաքսէ փնջուղներից, մի փունջ մանիշակ բիւրեղէ բաժակում և կանաչ բոյսեր ծաղկարաններում: Այդ բոլորը դասաւորուած է ճիշտ այնպէս, ինչպէս մի յարկ ներքեն ֆրօմօնների մօտ, միայն թէ ճաշակը, —այդ աննշմարելի զիծը, որ բաժանում է գուեհկականը ազնիւից, —դեռ չէ հասել նրբութեան: Կարծես թէ մէկը մի գեղեցիկ ժամարային պատկեր է, իսկ միւսը՝ նրա միջակ պատճէնը: Տանտիրուհին ինքն էլ այնպիսի շոր է հագել, որ շատ նոր է, այնպէս որ նա աւելի հիւրի տպաւորութիւն է գործում քան իր տանը հիւր ընդունողի: Ռիսէրին որ հարցնես, ամեն ինչ հիանալի է ու ոչ մի պակաս տեղ չունի. նա պատրաստում է այդ ասել դահլիճը մտնելիս, բայց կնոջ զայրագին հայեացքի առաջ խեղճ մարդը կանգ է առնում վախվիսելով:

—Տեսնո՞ւմ էք, արդէն ժամի չորմն է, ասում է նա նրան, բարկացկոտ շարժումով ցոյց տալով պատի ժամացայցը... Ոչ ոք չի դալու... Բայց ամենից աւելի բարկութիւնս բերում է կլէրը... Նա տանն է... ես հաստատ գիտեմ... ես լսում եմ, որ այնտեղ է...

Յիւրաւի, կէսօրից սկսած, Սիդօնին ականջ է դնում ներքի յարկից լսուող բոլոր ձայներին, երեխայի ճըւոցին, փակուող դռան ճըսուցին: Ռիսէրին ուղում է գնալ արհեստանոցը, փախչել նախածաշի խօսակցութիւնից, որ վերսկսում է, բայց այդպէս հեշտ չէ կարող պլծնել կնոջ ձեռքից: Քանի որ ամենքը բարձիթող են արել իրան, թող գոնէ ամուսինը ընկերութիւն անէ իրան, և խեղճ ամուսինը մնում է վերևում, անշարժ, տեղումը մեխուած, այն մարդկանց նման, որոնք չեն համարձակւում իրար գալ փոթորիկի ժամանակ, վախենալով իրանց կողմը քաշել կայծակը: Սիդօնին յուզուում է, գնում գալիս է դահլիճում, փոխում է այս կամ այն աթոռի տեղը, նորից տեղն է գնում, անցողակի նայում է ինքն իրան հայելու մէջ, զանգը տալիս է, կանչում է աղախնին, ուղարկում Աշիլլ քեռու մօտ, որպէս ոի իմանայ, հօ մարդ չի հարցրել իրան: Այնքան չար

մարդ է այդ Աշխալ քեռին, որ գուցէ հարցնող լինելիս ասում է, թէ նա դուրս է եկել առանից:

Բայց չէ, դժոնապանը գեռ ոչ ոքի չի տեսել:

Լոռութիւն ու լքումն Սիդօնին կանգնել է ձախակողմի պատուհանում. Ռիվլէրը՝ աջակողմի: Այստեղից նրանք տեսնում են փոքրիկ պարտէղը, ուր սկսում է արդէն մութն ընկնել, և սև ծուխը, որ բարձր ծխնելոյզը դուրս է թողնում գէպի ցածիկ երկնքը: Սիդիզմունդի պատուհանը լուսաւորւում է առաջինը ներքեկի յարկում. գանձապահը ինքն է սարքում իր լամպը մանրակրկիտ խնամքով, և նրա երկար ստուերը ման է գալիս բոցի առաջ ու երկուտակի է լինում վանդակապատի մօտ: Սիդօնիի բարկութիւնը մի բոպէ փարատում է այդ ծանօթ մանրանանութիւնները տեսնելիս:

Յարկարծ մի փոքրիկ կառօք մտնում է պարտէղը և գալիս կանգնում է դռան առաջ: Վերջապէս մի եկող եղաւ: Մետաքսի, ծաղիկների, սև սաթէ ուլունկների, երիզների ու մուշտակեղէնի այդ մրրիկը արագ-արագ մտնում է նեղսե. Սիդօնին ճանաչում է այդ կնոջը. նա ֆրօմօնների գահլինի ամենապողտրիկ յաճախողներից մէկն է, մի հարուստ բրօնդավաճառի ամուսին: Ո՞րքան պարծանք է ընդունել այդակսի մի հիւր: Շատապ-շտապ տանտէրերը բռնում են իրանց տեղերն ու զիրքերը,—մարդը նստում է բուխարիի մօտ, կինն էլ բազմում բաղկաթոռի մէջ ու սկսում անհոգաբար թերթել ինչ-որ մի ամսագիր: Զուր աշխատանք: Գեղեցկուհի հիւրը Սիդօնիի մօտ չէր եկել. նա մտաւ ներքեկի յարկը...

Օ՛, եթէ տիկին Ժօրժը կարողանար լսել, թէ ինչ է ասում իր դրացուհին նրա ու իր բարեկամուհիների մասին...

Այդ բոպէն դուռը բացւում է և զեկուցանում են.

—Օրիորդ Պլանուս:

Գանձապահի քոյրն է այդ, մի նուաստ, քաղցրաբարոյ ու խեղճ պառաւ աղջիկ, որ պարտականութիւն է համարել այցեւելու այդ օրը իր եղբօր պատրօնի կնոջը և մնացել է ապշած, տեսնելով թէ ինչպէս սիրալիր կերպով են ընդունում իրանց Շրջապատում են նրան, գլխովը պտոյտ են գալիս: «Ո՞րքան սիրալիր է ձեր կողմից... Մօտեցէք, ինզրեմ, կրակին»: Ի՞նչ ուշադրութեամբ, ինչ հետաքրքրութեամբ են լսում նրա ամենաչին խօսքերը: Բարեհոգի Ռիսլէրը այնպէս սրտամնց է ժպտում, կարծես չնորհակալութիւն է յայտնում: Նոյն իսկ Սիդօնին ամեն կերպ գգուում է նրան, ուրախանալով, որ կարող է իր փառքի մէջ երեսլ իր մի ժամանակուայ հաւասարին և որ ներ-

քեռւմ տիկին Ֆրօմօնը կը լսի, որ իր մօտ մարդիկ են եկել: Ուստի որքան կարելի է շատ աղմուկ է հանում, գրգուացնելով բազկաթոռները, յետ ու առաջ քաշելով սեղամնը, և երբ պառաւ օրիորդը գնում է, շացած, զմայլած ու շփոթուած, Սիդօնին ճանապարհ է քցում նրան մինչև սանդուխները, խշչացնելով շրջազգեստի ծալազարդերը, և բարձրաձայն զոռում է նրա յևսեից, կամնալով վանդակի վրայով, թէ ինքը տանն է լինում միշտ ուրբաթ օրերը... Լսում էք, ուրբաթ օրերը...:

Արդէն զիշեր է այժմ: Դահլիճի երկու ահապին լամպերը վառել են: Կողքի սենեակում լսում է աղմուկ, աղախինը ճաշը քցում է: Վերջացաւ: Տիկին Ֆրօմօն կրտսերը չի գայ:

Սիդօնին կապտել է բարկութիւնից.

—Տեմնում էք այդ գրգրուանին, որ չի կարողանում բարձրանալ տամնութ աստիճան վերև... Տիկինը մեզ անշուշտ շատ նշին արարածներ է համարում իր համեմատութեամբ... Օ՞հ, շատ լսւ, ես վրէժս կը հանեմք...

Եւ որքան աւելի է դուրս զեղում նա իր զայրոյթը այդպիսի անարդար խօսքերով, այնքան աւելի նրա ձայնը գունդկանում է, արուարձանային ելեէջներ է ստանում և բառերի արտասանութիւնը դառնում է ուսմվական, պարզ ցոյց տալով, որ խօսողը առաջ աշակերտուհի է եղել օրիորդ և Սիրի արհեատանցում:

Իիսէրը դժբախտութիւն է ունենում մի խօսք ասելու: —Ո՞վ զիտի: Գուցէ երեխան հիւանդ է եղել:

Սիդօնին կատաղած շուռ է զալիս դէսի նա, կարծես ու զելով կծել նրան:

—Գլուխս մի տանէք, ինդրեմ, այդ երեխայով: Իսկապէս դուք էք մեղաւոր, որ այսպիսի բան է գալիս իմ զվին... Դուք չէք կարողանում անմէս ամել, որ ինձ յարգանքով վերաբերուեն:

Եւ նրա սենեակի դուռը շրխկալով փակում է զողողացնելով լամպերի գունդերը և գարակներում դարսած բոլոր զարդարանքները, ու Իիսէրը մնում է մենակ, անշարժ զահլիճի մէջտեղում, յուսահատ դէմքով նայելով իր սիփ-սպիտակ շապկաթեգերին ու փայլակած լայն կօչիկներին և մեղենայօրէն մրժուալով.

—Կնոջս ընդունելութեան օրը:

II

Իսկական մարզարիս եւ կեղծ մարզարիս

«Ի՞նչ է պատահել հետք... Ի՞նչ եմ արել նրան», հարցնում
էր յաճախ ինքն իրան կլէր ֆրօմօնը, մտածելով Սիդօնիի մա-
սին:

Նա ոչինչ չը գիտէր այն բանի մասին, որ երբեմն տեղի
էր ունեցել Սալինիում իր բարեկամունու և Ժօրժի մէջ: Նրա
պէս շիտակ բնաւորութիւն ու անդորր հոգի ունեցողը չէր կա-
րող գուշակել, թէ ինչ նախանձու ու ստոր փառասիրութիւն
էր առել նրա կողքին տամնհնդ տարուց ի վեր: Բայց և այն-
պէս, այդ սիրուն դէմքի հանելուկային հայեացքը, որ սառասոք
ժպտում էր նրա երեսին, շփոթեցնում էր նրան, թէ նա չէր
հասկանում թէ ինչու: Մանրակրիտ քաղաքավարութեանը, որ
շատ տարօրինակ էր Սիդօնիի պէս մանկութեան ընկերուհու
կողմից, յաջորդում էր յանկարծ վատ քողարկուած զայրոյթ,
ձայնի չոր ու կծու արուայացտութիւն, որի առաջ կլէրը մնում
էր չուարած, ինչպէս մի հանելուկի առաջ: Երբեմն այդ անհան-
գստութեանը միանում էր նաև մի տարօրինակ նախազգացու-
մըն, սրտի մի անորոշ վկայութիւն, թէ մեծ դժբախտութիւն է
գալու նրա զվախն. որովհետև կանաք բոլորն էլ մի քիչ գեր-
բնատես են (νογαντε, յանուանապայ), և նրանցից ամենապար-
զասիրաների մէջ անդամ չարիքի խորին անդիտութիւնը լուսա-
ւորում է երբեմն-երբեմն զարմանալի պայծառութիւն ունեցող
յանկարծական տեսիլքներով:

Մի-մի անգամ փոքր ինչ երկար խօսակցութիւնից յետոյ,
այն անակնկալ հանդիպումների ժամանակ, երբ յանկարծակրի
բռնուած դէմքերը թոյլ են տալիս պարզ տեսնելու իրանց իս-
կական մտածմունքները, տիկին ֆրօմօնը լուրջ կերպով միաք
էր անում այդ տարօրինակ, փոքրիկ Սիդօնիի մասին, բայց ե-
ռուն ու ստիպողական կեանքը, պատելով նրան մտերմական
յարաբերութիւնների ու հոգսերի մթնոլորտով, ժամանակ չէր
տալիս նրան կանդ առնելու դրա նման մանր հարցերի վրայ:

Իսկապէս կանաքը ունեն միշտ մի հասակ, երբ նրանց
կեանքի ճանապարհը այնպիսի յանկարծական պտուտանքներ է
անում, որ բոլոր հորիզոնները վտանգում են, բոլոր տեսակէտ-
ները յեղացըջւում են:

Զահէլ աղջիկ ժամանակը նա սաստիկ կը վշտանար ան-
շուշտ, եթէ այդպէս մաս առ մաս զրկուէր Սիդօնիի բարեկա-

մութիւնից, որ կարծես մի չար ձեռք պատռում տանում էր կը-
տոր-կտոր: Բայց նա զրկուել էր հօրից, որ նրա ջահէլ ժամա-
նակուայ ամենազդիսաւոր, նոյն իսկ միակ սիրոյ առարիմն էր.
այնուհետև ամուսնացել էր: Յետոյ էլ ծնուել էր երեխան,
որի քաղցր պահանջներին բաւարարութիւն պէտք էր տալ ա-
մեն րոպէ: Բացի այդ, նրա մօսն էր կենում գրեթէ բոլորսին
երեխայացած մայրը, որ աւելի ևս ապուշ էր կտրել իր ամուս-
նու աղէտալի մահի չորհիւ: Այդքան զբաղուած կեանքի մէջ
Սիրօնի քմահաճոյքները շատ քիչ անդ էին բռնում, և Կէր
Ֆրօնօնը գրեթէ չը զարմացաւ, երբ նա ամուսնացաւ Ռիսլէրի
հետ: Անկասկած Ռիսլէրը շատ մեծ էր նրա համար, բայց որ
իրար սիրում էին:

Ի՞նչ վերաբերում է յաւ զգալուն, որ փոքրիկ Շէրը հա-
սել էր այդպիսի բարձր գիրքի ու գրեթէ իր հաւասարը դարձել,
— նրա բնուրութիւնը այնքան վեհ էր, որ անընդունակ էր այդ
տեսակ փոքրուգութեան: Նա ի բոլոր սրտէ կը ցանկանար,
ընդհակառակը, բախտաւոր ու յարգուած տեսնել այդ ջահէլ
կնոջը, որ կենում էր նրա կողքին, ասրում էր, այսպէս ասած,
նրա կեանքով և եղել էր նրա մանկութեան ընկերուհին: Նա
փորձեց ամենայն քաղցրութեամբ սովորեցնել նրան աշխար-
հիկ նիստ ու կացը, մարդամէջ դուրս բերել նրան, ինչպէս
անում են լաւ օժտուած գաւառացուհիների հետ, որոնց շատ
քիչ բան է պակասում պքանչելի կին դառնալու համար:

Երկու ջահէլ ու սիրուն կանայք հեշտութեամբ խորհուրդ
չեն ընդունում իրարից: Երբ տիկին ֆրօնօնը մի մեծ ճաշկե-
րոյթի որ տիկին Ռիսլէրին տարաւ իր սենեակը ու ուղիղ երե-
սլին ժպտալով ասաց, որպէսզի չը նեղանայ. «Շատ զուգսեղէն
կայ վրադ, հողիս... Համ էլ՝ օձիքը բարձր զգեստ հազնելիս ծա-
զիկ չեն խրում մազերին...»: Սիրօնին կարմրեց, չորհակալու-
թիւն յայտնեց, բայց սրտի խորքումը մի աւելորդ քէն էլ ար-
ձանագրեց նրա դէմ:

Կէրի շրջանում բաւական սառն ընդունեցին նրան:

Սէն-Ժէռմէնի արուարձանը *) իր յաւակնութիւններն
ունի, ի հարկէ, բայց կարծում էք՝ Մաուն չունի:

Խոշոր արդիւնազործողների ու հարուստ գործարանատէ-
րերի այդ կին ու աղջիկները գիտէին փոքրիկ Շէրի պատմու-
թիւնը և վերջապէս հէնց նրա բարեելու և իրան պահելու ձեզ
բաւական էր, որ նրանը հասկանացին նրա ով լինելը:

*) Փարիզի Սէն-Ժէռմէն արուարձանում ապրում է ազնուական դասը:

Սիդոնին շատ էր աշխատում կոկուել, բայց ի զուր,—նա էլի մնում էր խանութում ծառայած օրիորդ։ Նրա փոքր ինչ բռնասպասիկ և երբեմն չափազանց խոնարհ սիրալիրութիւնը վատ տպաւութիւն էր գործում, գործակատարների խօսելու կեղծ եղանակի նման, իսկ նրա արհամարհուոտ դիրքերը յիշեցնում էին նորութիւնների խանութների գլխաւոր գործակատարումիներին, որոնք,—պահնուած սև մետաքսէ զգեստով, որ երեկոյեան տուն գնալիս հանում թողնում են խանութի հանդերձարանում,—իրանց խոպու դրած մազերի բարձրութիւնից վեհ կերպով նայում են այն մանր մունք մարդկանց վրայ, որոնք թոյլ են տալիս իրանց սակարկութիւն անել։

Նա զգում էր, որ իրան զննում ու քննադատում են, և ստիպուած էր վախվիսկով սպառազինուել պատերազմ մղելու համար։ Այն անունները, որ արտասանում էին մօտը, այն զըւարձութիւնները, տօնախմբութիւնները, գրքերը, որոնց մասին խօսում էին հետք, բոլորն էլ անծանօթ էին նրան։ Կլէրը ամեն կերպ աշխատում էր տալ նրան հարկաւոր տեղեկութիւնները և միշտ օգնութեան պարզուած բարեկամական ձեռքով պահում էր նրան իր դիրքին վայել աստիճանի վրայ։ Բայց տիկիններից շատերը գտնում էին, որ Սիդոնին սիրուն է։ Այդ բաւական էր, որպէս զի նրանք դժգոհ լինէին այն բանից, որ նա մտել էր նրանց լրջանը։ Ոմանք էլ, գոռող իրանց ամուսինների դիրքով ու իրանց հարստութեամբ, ամեն կերպ աշխատում էին ստորացնել այդ փոքրիկ նորելուկին ամբարտաւան լռակեցութեամբ։

Սիդոնին նրանց բոլորին ամփոփում էր մի խօսքի մէջ,— կլէրի բարեկամուհիները, այսինքն իր անձնական թշնամինները... Բայց նա լուրջ կերպով քէն էր զգում միմիայն իրան, կլէրի դէմ։

Երկու ընկերակիցները, Ռիալէրն ու Ժօրժը, կասկած անգամ չէին տանում իրանց կանանց մէջ անցած-դարձածի մասին։

Ռիալէր երէցը, շարունակ ուշ ու միաքը տուած իր տպագրիչ մեենայի գիւտին, երբեմն մինչև կէս զիշեր մնում էր նստած իր գծագրութեան սեղանի առաջ։ Ֆրումօն կրտսերը ամբողջ օրը դրսեն էր լինում, նախաճաշում էր ժողովարանում և գրեթէ երբէք ոտք չէր դնում գործարանը։ Նա յարդելի պատճառներ՝ ունէր այդ բանի համար։

Սիդոնիի մօտիկութիւնը վրդովմունք էր քցում նրա ոիրաք։ Այն քմահամ, լրքոտ զգացմունքը, որ նա տածում էր երբեմն դէսի այդ կինը, այն սէրը, որ նա զոհեց իր հօրեղբօր վերջին կամքը կատարելու համար, շատ յաճախ էր գալիս նրա

միաքը, սաստիկ ափսոսանք աղդելով, որ բանն անկարելի է ուղղել, և նա, թոյլ զգալով իրան, փախուստ էր տալիս: Թուշամորթ, կրաւորական բնաւորութեան տէր մարդ էր նա, այնքան խելօք, որ կարող էր ճանաչել ինպն իրան, բայց և այնքան թոյլ, որ անկարող էր կառավարել ինքն իրան: Ռիսէրի հարսանիքի երեկոյեան, ինքն էլ գեռ հազիւ մի քանի ամսուայ պասկուած, նա նորից զգաց Սիդօնի վերաբերմամբ Սավինի փոթորկալից երեկոների բոլոր յուզմունքը: Այն օրից ի վեր նա, առանց ինքն իրան պարզ հաշիւ տալու, խուսափում էր Սիդօնիին տեսնելուց ու հետը խօսելուց: Դժբախտաբար, նրանք մի և նոյն տանն էին ապրում և ամիկիները օրը տասն անգամ այցելութիւններ էին անում միմնանց, այնպէս որ միշտ տեղի էին ունենում պատահական հանդիպումներ, և ահա դրա նորհիւ առաջ եկաւ այն տարօրինակ երեսյթը, որ այդ մարդը, կամենալով ազնիւ ամուսին մնալ իր կնոջ վերաբերմամբ, բոլորովին կտրուել էր տանից և զուարձութիւններ էր ինտուում դրսնում:

Այդ չէր զարմացնում կէրին: Հանդուցեալ հայրը սովորեցրել էր նրան այն բանին, որ առևտրական մարդու տեղը դրսն է լինում միշտ, և Փօրժի բացակայութեան ժամանակ՝ նա, բոլորովին նուիրուած իր ամուսնական ու մայրական պարտականութիւններին, տեղական գործեր ու ամեն տեսակ աշխատանքներ էր հնարում ինքն իր համար, երեխային տանում էր զբուժեցնելու, երկար ու ձիգ հանդիսատ էր առնում հետք արե տեղերում, յետոյ էլ վերադանում տուն՝ հիացած իր աղջկայ յառաջադիմութիւնից, համակուած մանր երեխաների բացօքեայ հրճուանքներով ու ծիծաղներով և պահած իր լուրջ աչքերի խորքում այդ փոքրիկների պայծառութիւնից:

Սիդօնին էլ շատ էր դուրս գալիս տանից: Յաճախ, գիշերուայ դէմ, Փօրժի կառքը, գարպասով ամսցնելիս, սախառում էր շտապով մի կողմ քաշուել շքեղազգեստ տիկին Ռիսէրին, որ վերադառնում էր տուն գրեթէ ամբողջ Պարիզը ոտնատակ տալուց յետոյ: Բուլվարը, իանութիւններում ցուցադրուած իրերը և գնելիքները, —որ նա շատ ծանր ու բարակ էր ջոկում, կարծէք գնելու նոր զուարձութիւնը որքան կարելի է լաւ ճաշակելու համար, —շատ երկար էին պահում նրան դրսնում: Նրանք բարեսում էին միմնանց սանդուխների պտուանքում, սառն հայեացք փոխանակելով իրար հետ, և Փօրժը շտապով մտնում էր իր բնակարանը, իբրև մի ապաստարան, ու աշխատում, գգուանքներ թափելով երեխայի վրայ, ծածկել վրդովմունքը, որ յանկարծ տիրել էր սրտին:

Սիդօնին, ընդհակառակը, կարծէք՝ այլ ևս ոչինչ չէր յի-

շում ու միմիայն արհամարհանք էր զգում այդ մեղկ ու հեզ բնաւորութեան վերաբերմամբ։ Բացի այդ, ուրիշ շատ հոգսեր ունէր նա:

Նրանց կարմիր դահլիճի երկու պատուհանների արանքում Ռիսլերը վերջերքը մի դաշնամուր էր դնել տուել:

Երկար տատանմունքներից յետոյ, Ալիդնին վճռել էր երգեցութիւն սովորել, մտածելով, որ մի քիչ ուշ է դաշնամուրի դասեր առնելու համար, և շաբաթը երկու անգամ մի սիրուն սէնտիմէնտալ շիկահեր կին, տիկին Դօրասն, գալիս էր երգեցողութեան դասեր տալու նրան կէսօրից մինչև ժամի մէկը։ Եւ շրջակայ բակերի լուութեան մէջ նրա սենեակի բաց պատուհաններից լսում էին նրա երկար ու ձիգ և տասն անգամ կրկնուող ա... ա... ա...-երը ու օ... օ... օ...-երը, զիշերօթիկ դպրոցի կերպարանք տալով գործարանին։

Եւ յիրաւի իսկական աշակերտուհի էր այդ վարժութիւններ՝ անողը, —մի անվորձ ու երերուն մատաղ հոգի, լի գաղտնի իղձերով և կարօտ ամնն ինչ նոր սովորելու և ճանաչելու, որպէս զի կատարեալ կին դառնար։ Վասն այն էր միայն, որ նրա փառասիրութիւնը շատ վայրիվերոյ էր։

—կլէր ֆրօմօնը դաշնամուր է ածում. ես էլ երգել կը սովորեմ... Նրան գողարիկ ու նրանցաշակ կին են համարում. ես էլ ուզում եմ, որ նոյն բանն ասեն ի՞մ մասին։

Առանց մի բոպէ լուրջ միտք ունենալու որ և է բան սովորել, նա անց էր կացնում իր կեանքը խանութէ-խանութ, վաճառանոցէ-վաճառանոց վազելով. «Ի՞նչ են հագնելու այս ձմեռ»։ Նրան հրապուրում էին ցոյց զրուած շքեղ բաները, այն ամննը, ինչ որ զարկում է անց ու դարձ անողների աչքին։

Այն կեղծ մարգարիտներից, որ նա այնքան երկար ժամանակ բանեցրել էր իր ձեռքում, ինչոր մի բան մնայել էր նրա մատների ծայրին, —մի քիչ նրանց շինծու սատափից, նրանց փուչ դիւրաբեկութիւնից, նրանց երեսահան փայլից։ Նա ինքն էլ իսկապէս մի կեղծ մարգարիտ էր, —կլոր, փայտուն ու լաւ սպացրած, —որից ամբոխը կարող էր խաբուել. իսկ կլէր ֆրօմօնը իսկական մարգարիտ էր՝ ճոխ ու միանգամայն համեստ շողքով, և երբ մարդ նրանց տեսնում էր միասին, տարբերութիւնը իսկոյն աչքի էր ընկնում։ Մարդ գուշակում էր, որ մէկը միշտ մարգարիտ է եղել, բոլորովին մանր մարգարիտ՝ մանկութեան օրերում ու այնուհետեւ աճած, մնանալով գողտըկութեան ու չնորհալիութեան տարրերով, որոնք հազուած գիւտ ու անգին բնաւորութիւն են դարձել նրան։ Միւսը, ընդհակառակը, դուրս էր եկել Փարիզ կոչուող հսկայական կեղծ

գոհարագործի արհեստանոցից, գոհարագործի, որ հազար ու մի մանրունքներ ունի, բոլորն էլ հիանալի, բոլորն էլ փայլուն, բայց քիչ դիմացկուն, վատ սաղացրած ու վատ իրար կցած,—մի խօսքով նա իսկական արդիւնք էր այն արհեստի, որ երեմն բանեցրել էր և ինքը:

Սիդօնին ամենից շատ նախանձում էր կլէրին նրա երեխայի, այդ շքեղազարդ մի մատ արարածի համար, որ ժապաւէնների մէջ թաղուած էր օրօրոցի վարագոյքներից սկսած մինչև ծծմօր գլխանոցը: Նա չէր մտածում համբերութեամբ ու անձնուրացութեամբ լի քաղցր պարտականութիւնների, անքուն գիշերների երկար օրօրների և հրճուալից զարթումների մասին: Ոչ, երեխայի մէջ նա տեսնում էր միայն զբօսանքը... Ո՞րքան սիրուն բան է, երբ փողոցների յորձանքում անցնում է մի ջահէլ մայր, որին հետեւում է սաւառուն ժապաւէնների ու երկար փետուրների այդ պաճուճանքը:

Իսկ ինքը տանից գուրս գալիս կարող էր ընկեր ունենալ միմիայն իր ծնողներին կամ ամուսնուն: Նա գերազասում էր միայնակ գուրս գալ: Ո՞րքան ծիծաղելի կերպով էր արտայայտում Ռիսլէրը իր սէրը,—խաղում էր կնոջ հետ, ինչպէս երեխանները խաղում են տիկնիկի հետ, կճմուռմ էր թշերն ու կըզակը, պտոյտ-պտոյտ էր գալիս չորս կողմը՝ «հու, հու» դրաւլով, և կամ թէ իր խոշոր քաղցրացած աշքերով նայում էր նըրան սիրող ու երախտագէտ շան նման: Սիդօնին ամօթահար էր լինում այդ յիմարավարի սէրից, որ նրան դարձնում էր մի տեսակ խաղալիք, յախճապակէ մի դարակազարդ: Ինչ վերաբերում էր ծնողներին, նրանցից նա քաշում էր այն մարդկանց առաջ, որոնց հետ ուզում էր տեսնուել, և այդ պատճառով հարսանիքից յետոյ իսկոյն նա գրեթէ բոլորովին գլուխն աղատեց նրանցից, մի փոքրիկ տուն վարձելով նրանց համար Մօնուռժում: Այդ միանգամից կտրեց ոգ. Շէրի յաճախակի արշաւանքները իր երկարափէշ սիրտառկով և անվերջ այցելութիւնները տիկին Շէրի, որ սկսելով նորից բարօր կեսնաք վարել, դարձել էր առաջուան պէս շատախօս ու անգործ:

Սիդօնին շատ կ'ուզէր մի և նոյն կերպով հեռացնել իրանից նաև Դըլօքէլներին, որոնց գրացիութիւնը նեղում էր նըրան: Բայց Մառէն կիմստրօնական տեղ էր ծեր զերասանի համար, որովհետև մօտիկ էր բուլվարների թատրոններից. բացի այդ, Դէզիրէն, նստական կեսնաք վարող բոլոր մարդկանց նման, շատ էր վարժուել իր ծանօթ հորիզոնին, և նրանց տիսուր բակը, որ ձմեռները մթնում էր ժամի չորսից ի վեր, թւում էր նրան իբր մի բարեկամ, մի ծանօթ դէմք, որ երբեմն, լուսաւորուելով

արելց, կարծես ժպտում էր նրա հասցեին: Սիդօնին, չը կարուղանալով գլխիցը հեռացնել նրանց, վճռել էր այլ ես չը տեսնուել հետները:

Վերջ ի վերջոյ, նրա կեանքը շատ տխուր կ'ընթանար ու միայնակ, ևթէ չը լինէին այն զուարձութիւնները, որ նա ըստամում էր չնորհիւ կէր Թրօմօնի: Եւ նա ամեն անդամ բարկութիւնց փրփրում էր, մտածելով.

—Միթէ ամեն բան նրանից եմ ստանալու միշտ:

Եւ երբ, ճաշի վրայ, ներքի յարկից օթեակի մի համար էին ուղարկում նրան կամ երեկոյթի հրաւէր, նա հագնուելիս հրճում էր, որ կարող է իրան ցոյց տալ, բայց մի՛ և նոյն ժամանակ միայն այն էր մտածում, թէ ինչպէս գետնովը տայ իր ախոյեանին: Ասենք, այդ գէպքերը հետզհետէ հաղուագիւտ էին դառնում, որովհետեւ կլէրը սախպուած էր աւելի ու աւելի զբաղուել իր երեխայով: Սակայն երբ Գարդինուա պապը գալիս էր Պարիզ, նա միշտ միացնում էր այդ երկու ընտանիքները: Որպէս զի այդ ծեր գեղջուկի սիրաը կարողանար ուրախութիւնից բացուել պէտք է նրա մօս լինէր փոքրիկ Սիդօնին, որ չէր խրտնում նրա կատակներից: Նա նրանց չորսին էլ հրավիրում էր ճաշի իր սիրած՝ Ֆիլիպպի ճաշարանը, ուր նա ճանաչում էր թէ տիրոջը, թէ ծառաներին և թէ տնտեսին, շատ փող էր ծախսում այնտեղ ու յետոյ էլ այնտեղից տանում էր նրանց Օպէրա-Կոմիք կամ Պալէ-Մօյալ թատրոնը, ուր առաջուց օթեակ էր վերցրած լինում:

Թատրոնում նա քան քան ծիծաղում էր, ընտանեքար խօսում էր օթեակների գոնապան կանանց հետ, ինչպէս Ֆիլիպպի ճաշարանի ծառաների հետ, բարձր ձայնով աթոռակներ էր սահանջում տիկինների համար և դուրս գալիս ուզում էր ամեն-քից առաջ ստանալ իրանց վերարկուներն ու մուշտակները, կարծես թէ ինքը միակ նորելուկ միլիօնատէրն էր այդտեղ:

Այդ փոքր ինչ գուհկական զրօսակների համար, որոնցից շատ յաճախ խուսափում էր Փօրֆը, կլէրը իր սովորական տակտով պարզ շորեր էր հագնում և անսկատելի էր մնում: Սիդօնին, ընդհակառակը, բոլոր առագաստները պարզած, բազմում էր օթեակի առաջը և ի բոլոր սրաէ ծիծաղում պապի պատմածներին, երջանիկ, որ իր մի ժամանակուայ սովորական տեղից, երկրորդ կամ երրորդ յարկից, իջել է այդ բնակողքի հայելազարդ գեղեցիկ օթեակները, որոնց թաւշապատ եղերքները, թւում էր նրան, թէ յատկապէս վնասած են իր բացգոյն ձևնույների, փղոսկրէ դիտակի և զա-

նակաղարդ հովհարի համար: Հասարակական զուարձատեղերի տափակութիւնը, և պատառների կարմրութիւնն ու ոսկեզօնանքը խոկական ճոխութիւն էր թւում նրան: Այդ միջավայրում նա փթթազարդ փայլում էր իբրև մի թղթաշեն սիրուն ծաղիկ հիւսկէն ծաղկաբանի մէջ:

Մի երեկոյ, Պալէ-Ռոյալում, մի ժողովրդականութիւն վայելող թատերական գրուածքի ներկայացման ժամանակ, Սիդօնի շարժումները, հագուստը, ծիծաղելու և նայելու ձեզ մեծ ուշադրութիւն գրաւեցին հարդիսատես կանանց կողմից, —այդ նկարիչների վրձինին արժանացած խոշորացուցային գլխարկներով ու ահազին հովհարներով հոչակաւոր տիկինների կողմից, որոնց գեղ գրած զլուխները զգեստի իրանքի բացուածքի մէջից գուրս էին ցցւում բէնիւարի օթեակների ստուերից իբրև հազիւ հազիւ կենդանացած պատկերներ: Դահլիճի բոլոր գիտակները, զեկավարուելով մագնիսական հոսանքից, որ այնքան զօրել է ջահի լոյսով, քիչքիչ ուղղուեցին դէպի նրա նսաւած օթեակը: Կէնք վերջի վերջոյ սկսեց վատ զգալ իրան այդ բանից և կամացուկ փոխեց տեղը իր ամուսնու հետ, որ դժբախտաբար այդ երեկոյ նրանց հետ էր:

Ժօրժը, երիտասարդ ու գողտրիկ, նստած Սիդօնի կողքին, այնպիսի տպաւորութիւն էր զործում, կարծես նրա բնական զուգակիցը լինէր, մինչդեռ նրանց յետեին Ռիսլէրը, միշտ վերին աստիճանի մեղմ ու նսեմ, բոլորովին իր տեղումն էր թւում կէնք ֆրօմօնի կողքին, որ իր փոքր ինչ մթագոյն հագուստի մէջ կարծես ծպտուած լինէր, ինչպէս մի աղնիւ կին Օպէրայի պարահանդէսում:

Դուրս դալիս՝ երկու ընկերակիցներից իւրաքանչիւրը կուռը տուեց իր հարեանուհուն: Օթեակների գոնապան կանանցից մէկը ասաց Սիդօնիին, խօսելով Ժօրժի մասին, —«Զեր ամուսինը...», և Սիդօնիի դէմքը իսկոյն պայծառացաւ ուրախութիւնից:

Զեր ամուսինը:

Այդ հասարակ խօսքը բաւական էր նրան տակնուվայ անելու և սրտի խորքումը մի ամբողջ կոյտ վատ խորհուրդներ իրար տալու համար: Մինչ նրանք անցնում էին միջանցքներով ու փօքով, նա նայում էր Ռիսլէրին ու տիկին «Շօրշին», որոնք գնում էին առջելից: Կէնք գողտրիկութիւնը՝ ոչնչացած, գոեհկացած էր թւում նրան Ռիսլէրի բիրտքայլուածքի չնորհիւ: Նա ասում էր ինքն իրան՝ «Մը քան տղեղացնում է երեխ դա ինձ երբ մննք ման ենք գալիս միասին»... Եւ նրա սիրտը սկսում է թնդալ, երբ նա մտածում էր, թէ ինչ սիրուն, երջանիկ ու

հիացմունք ազդող զոյգ կը կազմէին ինքն ու ժօրժ Ֆրոմօնը,
որի կուռը դողդողում էր այդ բովէին իր կոան տակ:

Եւ երբ կապոյտ կառքը մօտեցաւ թատրոնի դռանը Ֆրօ-
մօններին տանելու համար, առաջին անգամը նա սկսեց մտա-
ծել, թէ իսկապէս այդ կինը խլկէ էր իր տեղը և թէ ինքը
կատարեալ իրաւունք ունի աշխատել նորից ձեռք բերել այդ
տեղը:

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(Կը շարունակուի)

ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԽՍ-ԾԴ ԴԱՐԻ ՄԿՋԲՈՒՄ

Գ

Խօսելով գրական կեղծիքների մասին՝ չէ կարելի չը յիշել և մի ուրիշ հետաքրքրական օրինակ այդպիսի կեղծիքի, մանաւանդ որ նա մեր հին մատենագրութեան մէջ մի առանձին, ինքնուրոյն տիպ է կազմում:

Մեր խօսքը Փաւստոս Բիւզանդի մասին է։ Այս անունով հասել է մեզ մի պատմական գրուածք, որի մէջ նկարագրուած են Հայաստանում կատարուած անցքերը՝ սկսած Տրդատ թագաւորի մահից մինչև Արշակունեաց թագաւորութեան երկու մասի բաժանուելը, պարսիկների և յոյների մէջ, կամ 337-ից մինչև մօտաւորապէս 390 թուականը։ Այսպիսով ուրեմն այս գրուածքը հանդիսանում է շարունակութիւն Ազաթանգեղոսի պատմութեան։ Այսուեղ հանդէս են բերուած Խոսրով, Տիրան, Արշակ, Պապ, Վարազդատ և այլն թագաւորները. Վրթանէս, Յուսիկ, Մեծն Ներսէս և մի քանի աննշան կաթողիկոսներ, սրբակեաց և խեղլատակ եպիսկոպոսներ, անթիւ պատերազմներ, որոնց մէջ Մամիկոնեան նախարարները, իբրև զօրքի սպարապետներ՝ մի-մի անյաղթելի հերոսներ են հանդիսացած. երկար քարոզներ ու աղօթքներ, և սրանց կողքին այնպիսի անվայնուչ նկարագիրներ, որոնցից կը քաշուեին նատուրալիստ Զօլան ու իր հետևողները. հրաշքներ ու տեսիլքներ, մի և նոյն ժամանակ խայտառակ անեկդոտներ հոգեորականների կեանքից և ախյատնի առասպեճներ։

Տարօրինակ զիրք է, այն, Փաւստոսի պատմութիւնը, և տարօրինակ են եղել կարծիքները նրա մասին։ Ոչ մի հեղինակ մեղմնում ենթակայ չէ եղել այնքան հակասական կարծիքների, այնքան ծայրայեղ արհամարհանքի ու չափազանց յարգանքի՝ որքան Փաւստոսը։ Այս կէտում նրա բախտին մասամբ նմանում է Խորենացու բախտը և յիրավի այս երկու հեղինակները զարմանալի յարաբերութեան մէջ են միմնանց վերաբերութեամբ. կարծես դրանք հակոսնեաններ լինին, ճօճանակի խաղի

երկու ծայրերը. մէկը բարձրացած ժամանակ՝ միւսը անդունդն է իջնում, իսկ երբ սա է բարձրանում՝ միւսն է խորասուզւում: Այսպէս եղել է շարունակ աւելի քան 1400 տարի ժամանակի: Եւ սա հասկանալի էր: Այս երկու հեղինակները իրանց ճաշակով, զարգացումով, հայեացքներով, զրելու ոճով, դպրոցով՝ կատարեալ հակապատկերներ են կազմում: Խորենացու ամբողջ գրքում չէ կարելի գտնել մի տող, որ գրական ոճի վայելչութեան դէմ մեղանչէր. նրա ամեն մի խօսքը չափուած ու կըոււած է, միշտ լուրջ, միշտ համապատասխան նիւթին. նրա լեզուն արուեստական է, ճաշակով մշակուած, սեղմ, աղդու.—այս-ինչ Փաւստոսի մօտ չափ ու կշռ չը կայ խօսքի. մի ռամիկ չաշանակ է նա, որ ոչ ոճ գիտէ, ոչ գրական վայելչութին. արուեստը բացակայում է. խօսքը ուղղակի սրտից թափիւում է թղթի վրայ. նա գաղափար անդամ չունի ոճի և արուեստի մասին. նրա ոճը—բնութիւնն է, արուեստը՝ միամը-տութիւնը: Խորենացին քննող, դասող հեղինակ է. նա ընտարութիւն է անում աղբիւրների մէջ, անհաւանական կամ կառկածելի գէպքերը զանց է անում կամ իր հասկացողութեամբ ուղղագրում է. տեղ չէ տալիս հրաշքների և առասպելների. շատ անդամ նա հէնց ինքը տարակոյս է յայտնում իր պատմածների ստուգութեան մասին, կամ ընդհակառակն՝ երաշխարութիւնը: իսկ Փաւստոսի մէջ հետք անդամ չկայ այսպիսի քննադատող, ընտրող ոգու. նա ինչ որ գիտէ՝ ասում է, սուս կամ ճշմարիտ, առասպել թէ իրողութիւն. ոչ մի բառով զանազանութիւն չէ դնում լուն պատմական իրողութեան և ակնյայտնի առասպելի մէջ. նա չունի նոյն-իսկ տարրական դարբացում, առանց որին չէ կարող գոյութիւն ունենալ քննական կարողութիւն: Խորենացին միշտ աշխատում է որոշել իր պատմած անցքերի ժամանակները, «որովհետեւ պատմութիւնը առանց ժամանակագրութեան չէ կարող ստոյդ լինել»: Այս-ինչ Փաւստոսը հասկացողութիւն չունի ժամանակագրութեան մասին. նրա պատմած անցքերը սովորաբար կատարւում են «այն ժամանակի» կամ «ապա»: Վերջապէս՝ Խորենացին դպրոցական կրթութիւն ստացած, գիտնական և գիտակցող պատմագիր է, իսկ Փաւստոսը՝ դպրոցական կրթութիւնից զուրկ, ժողովրդի ծոցից դուրս եկած մի առող է: Այս է պատճառը, որ Խորենացիով պքանչացող սերունդները չէին կարող յարդել ու լուրջ հեղինակ ճանաչել Փաւստոսին, և ընդհակառակն, այն բանասէրները, որոնք զանձեր են գտնում Փաւստոսի մէջ չեն կարող հաւանել Խորենացուն, որի մէջ բացակայում են այդպիսի, Փաւստոսին յատուկ, զանձեր:

Այս հակոտնեայ հեղինակներից՝ Խորենացին տառնեակ դարերով տիրում էր հայոց պատմական գրականութեան մէջ, փայլում էր իբրև արեգակ, և Փաւստոսը բոլոր այս միջոցում արհամարհուած, մատնուած էր մոռացութեան։ Եթէ մէկը համարձակէր, Խորենացուն թողած, Փաւստոսից պատմական նիւթ քաղել՝ գրանով իր փարկը կը կոսրէր, համարուելով տղէտ, անճաշակ և պատմական զիտութեան անտեղեակ։ Դեռ հինգերորդ դարի վերջերում մի նշանաւոր հեղինակ, Փարաբեցի Ղաղարը, խիստ զատապարտում էր այս պատմութիւնը, զանելով որ նա անհանճար, ավելի ցիկն բաներ է դուրս տալիս. և քանի որ չէր կարող ենթազրել, որ հիւզանդիայում ուսում առած մի մարդ, ինչպէս էր Փաւստոսը, այսպիսի յիմար բաներ գրէր՝ ուստի կարծում էր, որ կամ ուրիշ անհարազատ ձեռքեր աղաւաղել են այդ պատմութիւնը, կամ մի տղէտ մարդ է գրել նրան, բայց իր տգիտութիւնը քօղարկելու համար՝ զրքի վրայ գրել է Փաւստոսի անունը, սրանով կամենալով նրա արժէքը բարձրացնել։ Ինքը Խորենացին զտել է Փաւստոսի մէջ օդտակար նիւթեր և օգտուել է նրանցից, որչափ և ինչպէս հարկ է համարել, բայց Փաւստոսին իրեն աղբիւր յիշելը անյարմար է համարել. դրանով կարող էր իր պատմութեան արժէքը պակասել։ Նոյնպէս են վարուել և յաջորդ դարերի հեղինակները։ Դեռ նոյն-իսկ 18-րդ դարի վերջերում հոչակաւոր Զամշեանը «երազապատում» էր մնուանում Փաւստոսին, և նրանից չօգտուեց իւր լնդարձակ Հայոց պատմութեան մէջ։ Միայն տասներիներորդ դարի կէսերին մօտ սկսում են երկշոտ և զգուշաւոր ձայներ բարձրանալ յօդուտ Փաւստոսի—«կարելի է օգտուել նրանից այն դէպքերում» երբ նա չէ հակասում Խորենացուն։ Այսուհետեւ Խորենացու աստղը հետզհետէ սկսեց խաւարել—և Փաւստոսին սկսեց փայլել աւելի և աւելի պայծառ։ Ութմական թուականներին պրօֆ. Պատկանեան նրան կոչեց «անհամեմատ մեր պատմազիրների մէջ և շատերից աւելի արդարախօս», (քարը շարտելով Խորենացու վրայ)։ Իսկ իննանական թուականներին Ա. Գարագաշեան իր «Քննական պատմութեան» մէջ դէն ձեռն Խորենացուն և իբրև աղբիւր գործածեց Փաւստոսին։ Ո՞րքան մեծ զանազանութիւն մի դարում միենոյն զրուածքի գնահատութեան մէջ. որչափ քննադատութեան հայեացըները փոխուեցին այդ մի դարում, որ անդունդ գլորուած հեղինակը երկինք բարձրացաւ։ Բայց պէտք է ասել, որ բանասիրութիւնը ինչպէս առաջ՝ այնպէս և այժմ՝ ծայրայեղ է իր գնահատութեան մէջ Խորենացու և Փաւստոսի վերաբերմամբ, և դեռ խական հայեացք չէ կազմել այս երկու հեղինակի մա-

սին, որով երկումն էլ իրանց արժանաւոր զիրքը կը գրաւեն մեր գրականութեան մէջ: Խսկապէս՝ այս հեղինակները, փոխանակ հակոտնեայ, միմեանց ոչնչացնող նկատուելու՝ պէտք է ճանաչուին իբրև միմեանց լրացնող, իւրաքանչիւրը անփոխարինելի իր տեղում. մէկը իբրև գեղարուեստական պատմիչ և ստեղծող ազգային պատմութեան, միւսը իբրև հաւաքիչ ժողովրդական աւանդութիւնների, արտայայտիչ ժողովրդի հայեացքներին ու բարքերին:

Ինչպէս մեծ է զանազանութիւնը Փաւստոսի պատմութեան արժէքի գնահատութեան մէջ հին և նոր ժամանակ՝ նոյնպէս շատ տարբեր են եղել կարծիքները և հեղինակի անձնաւորութեան մասին: Ո՞վ է այդ հեղինակը, ինչ ազգից է, ինչ լեզուով է գրել և իբր—այս հարցերի վերաբերութիւնը էլ կատարեալ յեղափոխութիւն առաջացաւ զրականութեամբ զբաղուող մակերի մէջ՝ չնորհիւ քննադատութեամբ: Տիրող ընդհանուր կարծիքն էր հին ժամանակից ի վեր, թէ Փաւստոսը, որ կոչում է Բիւզանդ կամ Բիւզանդացի՝ յոյն է, Բիւզանդիայում (Կոստանդնուպոլսի հին անունն է) ծնած, կամ այնտեղ ուսած. նա ասլել է չորրորդ դարում, ուրեմն և զրել է յունարէն լեզուով. այնպէս որ մեզ հասած պատմութիւնը պէտք է լինի թարգմանութիւն յունարէնից: Գրքի մէջ յիրաւի շատ ապացոյցներ կան այս կարծիքը հաստատող. այնտեղ մի եպիսկոպոս կայ Փաւստոս անունով, որ եղել է ներսէս մեծին ասրկաւադ ձեռնադրով և նրա մօտիկ գործակիցը, և յիշուած է որ այս Փաւստոսը յոյն էր: Մի ուրիշ տեղ բառացի գրուած է, թէ մեծ պատմագիր Փաւստոս Բիւզանդը յունաց ժամանակագիր էր: Ուրեմն շատ հաւանական էր եղրակացնել, թէ պատմագիր Փաւստոս Բիւզանդը հէնց այն Փաւստոս եպիսկոպոսն է, որ յիշուած է պատմութեան մէջ. իսկ այս եպիսկոպոսը, ուրեմն զրբի հեղինակը, անշուշտ մեռած պէտք է լինի չորրորդ դարում, երբ գեռ հայերէն զրերը չէին գտնուած. այնպէս որ նա պէտք է զրէր իր պատմութիւնը յունարէն լեզուով: Սրա վրայ իբրև կողմնակի փաստ աւելացնում էին և այն, թէ այս հեղինակը ատում է հայերին, և իբրև մի օսար յոյն է խօսում և ոչ իբրև մի հայ մարդ: Այս կարծիքները ներկայումս թողնուած են և նոյն-իսկ օտարութիւն թւում: Այժմ ճանաչուած է, որ այդ զիրքը թարգմանութիւն չէ, այլ զրուած է հայերէն լեզուով, իբրև ինկնուրոյն, սկզբնագիր աշխատութիւն. հեղինակը անշուշտ հայ է եղել, իսկ զրութեան ժամանակն է՝ մօտաւորապէս հինգերորդ դարի կէսերը, Ագաթանց գեղոսի պատմութեան զրուելուց յետոյ: Իսկ թէ ով է այդ հայ հեղինակը՝ յայտնի չէ, գուցէ երբէք էլ չիմացուի. այսպանը ան-

տարակուսելի է, որ դա՝ գրքի մէջ յիշուած Փաւստոս եպիսկոպոսը չէ։ Հաւանական է, որ այդ հեղինակը ո. Մեսրոպի աշակերտներից մէկը լինի, Հայաստանի նորաբաց դպրոցների պատուղը, Արարատեան հանանդի ճնունդ, որ իր բնական հակումով՝ աւելի սէր է ունեցել ժողովրդական զրոյցների քան զիտական ու աստուածաբանական, միտք յոդնեցնող զբաղմունքների։ Գրելով իր աշխատութիւնը՝ նրա վրայ գրել է Փաւստոս եպիսկոպոսի անունը՝ որպէս զի այդ անունով վաւերականութիւնն ստանայ իր գրուածքը, իբրև չորրորդ գալրում ապրող, Ներսէս կաթողիկոսի գործակից, յոյն նշանաւոր եպիսկոպոսի աշխատութիւն։ Մենք տեսանք, որ Ագաթանգեղոսի հայ հեղինակն էլ նոյնակէս է վարուել, իր աշխատութիւնը վերագրելով հոռամյեցի Ագաթանգեղոսին։ Ուրեմն նոյնպիսի գրական կեղծիք կատարել է և Փաւստոսի պատմութեան հայ հեղինակը, որ ժամանակով շատ մօտ, գուցէ և լաւ ծանօթ է եղել Ագաթանգեղոսի հեղինակին։

Բայց ինչ փաստերի հիման վրայ քննադատութիւնը հասաւ այս եղբակացութեան, որ միանդամայն հակառակ է գրքի մէջ եղած յայտնի վկայութիւններին՝ թէ Փաւստոս Բիւզանդը յոյն հեղինակ է։—Քննադատութիւնը, ասացինք անցեալ անգամ, անհաւատ է. մինչեւ չը քննէ, չը ստուգէ՝ ոչինչ չի ընդունի։ Փաւստոսի յոյն լինելը վկայուած է գրքի մէջ, բայց այս վկայութիւնը չէ հաստատում գրքի բովանդակութեամբ ու ոգով. ընդհակառակը, զիրքը տալիս է մի շարք այնպիսի փաստեր, որոնք բոլորը միանում են հերքելու այդ վկայութիւնը և հաստատելու, թէ նրա հեղինակը հինգերորդ դարի կէսերում գրող մի հայ է։ Համառօտ յիշեմք մի քանի այսպիսի փաստեր։ —Հեղինակը օգտառում է բաւական թուով հայերէն գրքերից, օրինակ՝ հայերէն Աստուածաշնչից, Կորիւնից, Ագաթանգեղոսից, Ժամագրքից և այն. սրանք բոլորը գրուեցին հինգերորդ դարի առաջին կէսում։—Տեսիլքների, անէծքների և օրհնութիւնների մէջ ակնարկութիւններ են լինում զանազան անցքերի վրայ, օրինակ՝ զբերի դիւտի, Արշակունեաց թագաւորութեան վերջանալու, կրօնական հալածանքների և այն. սրանք էլ բոլորը հինգերորդ դարի առաջին կիսում կատարուած անցքեր են, որոնց ուրեմն ծանօթ է եղել հեղինակը։—Անմիւ հրաշքներ ու առասպեկտներ կան գրքի մէջ, որոնք չէին կարող գրուել ժամանակակից հեղինակի կողմից, այլ ակներեն է, որ դրանք վերցուած են ժողովրդի բերանում պատուող աւանդութիւններից։ Եթէ հեղինակը լինէր յոյն Փաւստոս եպիսկոպոսը, կարող էր նա իր ժամանակակից, իր գուցէ ընկերոջ մասին գրել այսպիսի բաներ.

«Սա (Դանիէլ եպիսկոպոսը) զարմանալի մարդ էր և մեծամեծ հրաշքներ էր գործում: Կոչկով քալելալ ման էր գալիս գետի ջրերի վրայ, և ոտները չեն թրցւում: Զմեռ ժամանակ, երբ խոր ձիւնը կուտուած զիղուած էր լինում՝ լեռների վրայ, և նա այդպիսի լեռներով մի տեղ գնալու էր լինում՝ յանկարծ ձիւնը անհետանում էր, գետինը ցամաքում նրա առաջ: Մի հեռու տեղ գնալիս՝ կարծես փայլալի նման թոշում էր և անմիջապէս ուղած տեղումն էր գտնուում: Մեռենիներ էր յարուցանում և գեռ սրանցից էլ աւելի մեծ հրաշքներ էր գործում: Եւ այսպիսի պատմութիւններ որչափ ուղեկք կան ֆաւստոսի զրգում: Ժամականակից մարզը ընդունակ չէ այսպիսի բաներ գրելու:—Ժամանակակից հեղինակի առաջին յատկութիւնը պէտք է լինի ճիշտ ժամանակադրութիւն. իսկ Փաւստոսի պատմութեամ մէջ զոյութիւն չունի ժամանակադրութիւն. նրա մօտ, ինչպէս ասացինք, անցքերը կատարուում են «այն ժամանակ»: Իսկ երբ նրա մէջ պատահաբար յիշուած մի քանի տարիները ի նկատի ենք առնում, հաշիւններ ենք անում՝ դուրս է գալիս մի անասելի խառնակութիւն. միմեանց հետ կոիւ են մղում երկու թագաւոր՝ որոնցից մէկը միւսի թագաւորելուց 60 տարի առաջ մեռած է եղել. մի ուրիշը, որ թագաւորել է ամենաչափը 18 տարի՝ յանկարծ յիսունից աւելի տարի թագաւորած է դուրս գալիս: Այսպիսի անտեղութիւնները հասկանալի են դամում միայն այն գէպում, եթէ ենթագրենք, որ հեղինակը լսել է աւանդաբար պատմուած անցքերը, լսել է թագաւորների անուններ, և շփոթել է միմեանց հետ: Ժողովրդական աւանդութիւնները, ինչպէս յայնի է, ժամանակադրական հաշիւններ, անուններ չեն սիրում. նրանց հետաքրքրում է անցքը:

Այս փաստերի կողքին կայ մի ուրիշը, որ դուցէ ամենից կարեորն է՝ հեղինակի ազգութիւնը որոշելու խնդրում—այդ՝ զրքի մէջ տիրապետող ովին է, ազգասիրական տենգենցիան: Ցիշեցինք վերը, թէ ոմանք կարծել են, իբր թէ հեղինակը առում է հայերին, ուրեմն օտարազդի, յոյն է: Սա մի մոլորութիւն է, որի դէմ հեղինակի ուկորներն անզամ կը բողդէին: Այս մոլորութեան առիթ է տուել հեղինակի մի յանդիմանութիւնը ուղղուած հայերին: «Ակզբից ի վեր, ասում է նա, երբ հայերը քըրիստոնէութիւն ընդունեցին՝ լոկ իբրև մի ծէս յանձն առան, հարկից ստիպուած, և ոչ թէ ընդունեցին ջերմեռանդ հաւատով: Որոնք որ յունարէն կամ ասորերէն ուսում ունէին՝ էլի փոքր ի շատէ հասկանում էին. իսկ որոնք որ անում էին, նրանց զիիին թէկուզ գիշեր ցերեկ յորդառատ անձրեկ նը-

ման խրատ թափէին՝ նրանք մի կաթիլի չափ անդամ չէին հասկանայ: Նրանց խելքը՝ իրանց հեթանոսական սովորութիւնների ու երգերի հետ էր»: Սրանից աւելի ճշմարիտ խոստովանութիւն չէր կարող անել հեղինակը: Յիրաւի, ի՞նչ հաւատ, ի՞նչ ջերմնառանգութիւն և գիտակցութիւն կարելի է սպասել մի տըդէտ, խառնիճաղանձ ամբոխից, որին թագաւորի հրամանով, ոչխարների հօտի նման, քչում, գետն են ածում ու մկրտում: Ո՞վ նրանց հասկացրեց քրիստոնէական կրօնի նշանակութիւնը, ո՞վ յորդորեց, համոզեց և ապա ընդունեց նոր կրօնի գիրկը: Ահա այսպիսի ծմբարիտ, ըստ ինքեւմն հասկանալի մի իրողութիւն ասելու պատճառով՝ հեղինակը համարուել է հայտնեաց, ուրեմն և օտարազդի:

Այն-ինչ այս հեղինակը հայասէր է, ոչ, այս խօսքը չէ արտայայտում հեղինակի ինչութիւնը. նա կոյր, մոլեռանդ հայապաշտ է: Բոլոր հայասէրները հին և նոր ժամանակ, սկսած զարգացած, գիտակցող մարդկանցից մինչև մեր ժամանակի թըթու ազգասէրները, չեն կարող համեմատուել այս հեղինակի հետ: Նրա աշքում՝ հայը անշաղթելի է. հայ զօրավարը՝ հերոս, հայ զինուոր՝ տիրատէր, կեանքը յետ դրած իր թագաւորի, իր աշխարհի և եկեղեցու համար, հայ թագաւորը՝ հզօր և նուիրական անձնաւորութիւն: Միլիոնաւոր զօրքերով թշնամին դիմում է հայի վրայ. հայ սպարապետը մի քառասուն հազար զօրքով դուրս է գալիս նրանց դէմ և մինչև վերջի մարդը կոտորում է նրանց. Նորից են գալիս միլիոններ, և նորից բնաջինջ լինում: Անթիւ պատերազմներ են յիշուած պատմութեան մէջ, և ամեն անգամ հայերը յաղթել, կոտորել են թշնամիներին: Պատերազմի դաշտում հայը երբէք չէ կարող յաղթուել—ահա այն հայեացը, որ տիրում է ամբողջ գրքում և հեղինակի դաւանանքն է կազմում:

Այս պարծենկու ինքնախաբէութեան հետ համեմատենք իրողութիւնը, գարձեալ նոյն հեղինակից վերցրած նիւթերի հիման վրայ: Տեսնում ենք, որ մեր Արշակունի թագաւորները, Տրդատից յետոյ, թոյլ, անզօր, հեղինակութիւնից զուրկ իշխողներ են եղել, աւելի վասարներ յունաց կայսրի և պարսից թագաւորի, քան ինքնակալ, ազատ պետեր: Նրանք այնքան ժամանակ կրում էին թագաւոր տիտղոսը և թագաւորում էին՝ որքան այդ հաճելի էր դրացի հզօր պարսիկներին կամ յոյներին. սրանք էին, որ միմեանց մէջ համաձայնութիւն կայացնելով կամ միմեանց հակառակ՝ Հայաստանի վրայ թագաւոր էին նշանակում, կամ դահից ձգում, և նրանց բախտի հետ խաղում էին՝ ինչպէս մի խոնարհ ստորագրեալիք: Մի պարսիկ իշխան

3000 զօրքով «հիւր է գալիս» Տիրան թագաւորի մօտ, և նրան առանց այլիայլութեան բռնում, հէնց Հայաստանի մէջ նրա աչքերը դադում-կուրացնում (պարսիկների սիրած պատիժը հին և նոր ժամանակ) և շղթայակապ տանում Պարսկաստան։ Մի ուրիշ թագաւորի (Պապ), յոյն զօրավարը, Հայաստանում, ընթրիքի է հրաւիրում և հարրած ժամանակ դաւաճանութեամբ սպանել տալիս։ Եւ ոչ միայն անսպատիժ է մնում նրա այս ոճագործութիւնը, այլ հայոց նախարարները այս առիթով որոշում են յունաց հպատակութեան տակ մասնել։—Աւելի զարմանալի է երրորդ թագաւորի բախտը։ Արշակը 30—34 տարի անդամար պատերազմ է մղում պարսից Շապուհ թագաւորի դէմ։ յատկապէս յիշուած են 25 պատերազմ, որոնց մէջ պարսիկները երբեմն 4—5 միլիոն զօրքով են եկել հայոց վրայ, անուանի զօրավարների առաջնորդութեամբ։ Հայոց սպարապետը ամեն անդամ կոտորել է նրանց, այնպէս որ փախչող աղատուող չէ եղել։ Այս պատերազմներում պարսիկներից կոտորուել են մօտ քսաննեհօթը միլիոն մարդ։ Այսպիսի կոտորածներից յետոյ Պարսկաստանում հաւանօրէն ոչ միայն մի մարդ այլևս չէր մնայ, այլ գուցէ ձի և շուն էլ չը մնար։ Բայց զարմանքն էլ հէնց այն է, որ այսքան յաղթութիւններ անելուց յետոյ՝ հայերը ձանձրանում են կոռուց։ Իսկ Շապուհը Արշակին հրաւիրում է իր մօտ։ Արշակը ճարահատեալ գնում է Պարսկաստան և շղթայակապ բանտ է ձգւում, որտեղ և մնոնում է։

Ի՞նչպէս կարելի է բացատրել այս պատմական անհեթեթութիւնները՝ եթէ ոչ դարձեալ յողովրդական աւանդութեամբ, Ժամանակակից հեղինակը այսպիսի այլանդակութիւններ գրելուց կ'ամացէր. օտարազգի հեղինակը այսպիսի հէքեաթների վրայ կը ծիծաղէր. միայն հայ ժողովուրդը, ընական աղքային պատուասիրութեամբ, կարող էր տիսուր իրականութիւնը զարդարել երևակայական փառաւորութեամբ՝ արտաքինը վրկելու, ազգային կոտրութիւն չը գգալու համար։ Կարծես մի ծերունի, արդէն թագաւորութիւնը վերջանալուց յետոյ, երբ հին թագաւորների միայն յիշատակն էր մնացել՝ պատմելիս լինի պարծենալով։ «Օ, երբ մեր հայերը թագաւորութիւն ունէին, ով կարող էր նրանց յաղթել. մեր թագաւորների նման հզօր թագաւորներ չեն եղել աշխարհում։ նրանց սուրը կտրուկ էր, նրանք թշնամիների գլուխները այնպէս էին թուցնում, ինչպէս սոխի գլուխներ»։ «Հապա ի՞նչպէս է որ նրանց կուրացնում, բանտ էին գնում հոռոմներն ու պարսիկները»,—կասկածելով հարցնում են ունկնդիրները։—«Ե՛, որդիք, մեր նախարարներն անմիաբան էին. մէկ էլ որ հոռոմներն ու պարսիկները խօ չէին յաղթում

մեր հզօր թագաւորներին, այլ խարսում էին, իրանց թալակը ձգում, կամ թէ չէ՝ դաւաճանութեամբ սպանում»։ Կարծես հէնց այսպիսի մի ծերունի, ժողովրդի մարդ է և մեր հեղինակը, որ ամենայն լրջութեամբ ու հաւատով պատմում է հին-հին դարուց հայ թագաւորների փառքերն ու գիրախտութիւնները։

Այս տեսակէտից էլ Փաւստոսի անունը կրող գրուածքը անդնահատելի գործ է մեր հին մատենագրութեան մէջ։ Կարսորը այն չէ, թէ որշափ նրա աւանդած այս կամ անցքը ճշշմարիտ է իրեւ պատմութիւն։ Սնտարակոյս, շատ ստոյգ պատմական տեղեկութիւններ է պահպանել նա. բայց բանասիրութիւնը դրանց ընդունում է միայն այն գէպքում, եթէ ուրիշ աղքային կամ օտարազգի աղքիւններից սուլգում է նրանց ճշմարտութիւնը. այլապէս, միայն Փաւստոսի վկայութեամբ, լուրջ հեղինակը չէ կարող ընդունել որ և է պատմուածք՝ իրեն ստոյգ իրողութիւն։ Կարեորը Փաւստոսի մէջ—այդ ժողովրդական աւանդութիւններն են, որոնք միամիտ, կենդանի լեզուով պատմուած՝ մեր առաջ բաց են անում մեր հին նախնեաց սիրտն ու միտքը, բարքերն ու հայեացքները։ Այս կողմից Փաւստոսը յիրափ «անհամենմատ» է մեր պատմագիրների մէջ, որովհետեւ իր նմանը չունի։

Բերենք մի քանի էպիզօդներ այս հեղինակից, որոնց մէջ նկարագրուած են հին հայոց կենաքի ու սովորութիւնների մի քանի կողմերը։

Ահա մի պատկեր՝ թագաւորի ու կաթողիկոսի յարաբերութեան։

Արշակ թագաւորի եղբօրորդի Տիրիթը սիրահարւում է իր հօրեղբօրդի Գնէլի կնոջ, գեղեցկունի Փառանձեմին, և սրան ճանկ գցելու նպատակով քսութիւն է անում թագաւորի մօտ, իր թէ Գնէլը պատրաստում է նրա զէմ ապատամբել և ինքը թագաւորել թագաւորը իր մի հաւատարմին ուղարկում է Գնէլի մօտ, որ խարելով բերէ թագաւորի բանակը։ Միամիտ, ոչ մի բանից չը կասկածող Գնէլը գեղեցկունի Փառանձեմի հետ շտապ-շտապ գալիս է բանակը։ Թագաւորին իմաց են տալիս, և նա անմիջապէս հրամայում է դահճին, որ գնայ Գնէլին բռնէ, տանի բանակից դուրս, զլսատէ։ Դահճները գալիս, ձից վէր են ձգում Գնէլին, ձեռները կապուում և տանում են սպանելու տեղը։ Զահէլ կինը այս աղէտը տեսնելով վագում է եկեղեցի—առաւօտեան ժամասացութիւն էր կատարւում, Ներսէս Մեծ կաթողիկոսի ներկայութեամբ—և պաղասում է կաթողիկոսին։ «Շնւած հասիր, սուրբ հայրապետ, ահա ամուսնիս անմեղ տեղը մորթում են»։ Կաթողիկոսը դադարեցնում է ժամերգութիւնը,

շտապով գնում, ներս է ընկնում թագաւորի վրանը։ Տեսնում է Արշակ նրա գալը, հասկանում է որ ձեռքիցը սրբնելիք չունի—դիմում է խորամանկութեան. դլուիր անկիւնը խցկած, սամուրենին զլսին զյած՝ սուտ քուն է լինում, որ կաթողիկոսի ասածները չը լսէ։ Կաթողիկոսը բաց է անում բերանը, սկսում է յորդորել, համոզել «քնած» թագաւորին, որ չարագործութիւն չանէ, անմեղ արիւն, այն էլ հարազատ ազգականի արիւն չը թափէ. յիշեցնում է Քրիստոսի պատուիրանները, ապագայի սպառնավիճները... Թագաւորը, երեսը ծածկած, գահի վրայ տաղ է արել մնացել, ոչ շարժում է, ոչ ձէն-ծպտուն հանում... Վերջապէս ներս է մտնում զահճապետը և զեկուցանում, թէ թագաւորի հրամանը կատարուեց. ինքը Գնէլին տարաւ նշանակած տեղն ու սպանեց։ Այն ժամանակ կաթողիկոսը նորից բաց է անում բերանը և սկսում է ամեն տեսակ անէծքները թափել թագաւորի և նրա ազգատօնմի զլսին։ Սիրտը հովացնելուց յետոյ հեռանում է բանակից և այնուհետև էլ չէ կամնում տեսնել թագաւորի երեսը։ Դժբախտաբար հեղինակը չէ պատմում, թէ դահճի ներս մտնելուց յետոյ թագաւորը աչքը բացեց, թէ անէծքի ժամանակ էլ շարունակում էր սուտ քուն լինել։

Ահա այս անցքի երկրորդ գործողութիւնը, որ հասկացողութիւն է տալիս այն ժամանակուալ բարքերի ու սովորութիւնների մասին։

Սպանութեան տեղումն է։ Թագաւորը հրամայել է հանդիսաւոր կոծ ու սուզ անել սպանուած «արշակունի մեծ սեպուհ» Գնէլի վրայ. պատուիրել է, որ բոլոր բանակի մարդիկ դան ներկայ գտնուին և մասնակցեն սուզին։ Խնդն էլ եկել, նստել է դիակին շատ մօտիկ, միս ու վիշ անելով լաց է լինում և ըստիպում է որ ողբն ու կոծը սաստկացնեն։ Գեղեցկունի Փառանձեմը, իսկական սպաւորը, մազերը յետ արած, շորերը ճըղած, կուրծքը մերկ՝ աղէկաուր ճայնով ողբում է իր սիրելիի մահը և իր խոր վշտով լացացնում է շուրջն եղողներին։ Իսկ Արշակ իր կեղծ լացի մէջ, աչքը անկած զեղեցիկ կնոջ՝ բորբուտում է ցանկութեամբ և վճռում է նրան կին առնել։ — Սըզաւորների մէջ է և քառ Տէրիթը։ Սա էլ ի հարկէ տեսնում է Փառանձեմին այսպէս մերկանդամ կոծելու; Կիրքը այն աստիճան է բոբբովուում նրա մէջ, որ հէնց նոյն տեղում մարդ է ուղարկում ողբացով թշուառ կնոջ մօտ, թէ «այզքան էլ մի չարչարուիր. ես քո մարդուց աւելի լաւն եմ. քեզ սիրում եմ. ես մարդուգ սպանել տուի, որպէս զի քեզ կին առնեմ»։ Ճիչ է արձակում կինը, մազերը փետում, աղաղակում։ «Իմ պատճառով

սպանուեց մարդս. իմ վրայ աչք էր դրել Տիրիթը, զրա համար մարդուս սպանել տուեց»: Ինքը դառնում է ողբի մայր (ողբացող խմբի պարագլուխ և ողբի խօսքերն ասող) և սկսում է երգել Տիրիթի սէրը, քսութիւնը, ամուսնու սպանուելը և այլն, և լալիան կանաքը ձայնակցում ու ողբակցում են նրան, այսպէս որ խայտառակ լուրը տարածում է և հասնում թագաւորի ականջը...

Բաց ենք թողնում երրորդ գործողութիւնը—Փառանձեմը Արշակ թագաւորի կին դարձած,—որ հետաքրքրական տեղեկութիւններ է մատակարարում արքունական տան ընտանեկան կեանքից: Բայց մեր բերած երկու կրծատ տեսարաններն անգամ որպան ուսանելի նիւթեր են պարունակում մեր ալեոր հնութիւնը ճանաչելու համար: Տեսնում ենք, որ քաղաքական և հոգեոր իշխանութիւնների մէջ պարտքի և իրաւոնքի սահման չէ որոշուած. դատաստան չը կայ. թագաւորը մահուան վճռո է արձակում ոչ թէ տիրաբար, այլ ինչպէս մի եղենագործ, գաղտնապէս. նա կեղծ լացով, հանդիսաւոր սգով աշխատում է ցոյց տալ, թէ ինքը մասնակից չէ սպանութեան: Պատուի ճանաչումը բացակայում է, անասնական կիրքը տիրում է սանձարձակ. բարոյական զգացմունք չը կայ. ամենազգուելի քսութիւն է կատարւում՝ մօտ ազգականի արիւնը թափելու և նրա կնոջ տիրանալու համար: Ամուսնութեան օրէնքներ չեն որոշուած կամ չեն յարգւում. թագաւորն առնում է իր եղբօրորդու կինը (երրորդ աստիճան իննամեկան ազգականութեան):^{*)} և միաժամանակ երկու կին ունի: Աւելացնենք սրանց վրայ սգի ծէսը —զգեստը պատառել, հերարձակ ճչալ, մեռելի շուրջը պատել, մեռելի ողբ երգել, ողբի մայր ու ձայնարկու և այլն—և կը տեսնենք, որ Փաւատոսի այս մի գլուխը նրչափ կարեոր և բազմա-

^{*)} Ազգականութեան մի ուրիշ դէպք էլ կայ Փաւատոսի մէջ. Յուսիկ (կաթողիկոսը) ամուսնանում է Տիրանի աղջկայ հետ, իսկ այս ամուսնութիւնից ծնուած Աթանազինէսը կին է առնում Տիրանի քրոջը, ալսինքն՝ ամուսնանում է իր պապի քրոջ հետ. (չորրորդ աստիճան արենակցական ազգականութեան):—Ռւսանելի է մանաւանդ ամանուկը Յուսիկի ամուսնութեան հանգամանքը նրան ամուսնացնում են բռնի, հալիս ռասներկու տարեկան հասակում. առաջին անգամ կնոջ մօտ զնալուց յետոյ նա անդիմաղրելի զգում դէպի սեռական լարաբերութիւնը... ալդ լինում է առաջին և վերջին անգամը նրա կեանքում: Վնոջ վիշտն ու թախանձանքները, աներոջ միջամտութիւնը, սպառնալիքները չեն ազդում: Կինը վերջապէս մեռնում է հալումնաշ, դժբախտ ամուսնութեան դժոխքի մէջ. իսկ ինքը Յուսիկը մեռնում է անելոյն ծեծից... ինչպիսի դրամա:

տեսակ նիւթեր է պարունակում մեր նախնեաց բարոյական, քաղաքական և ընտանեկան կեանքը ուսումնասիրելու համար:

Ահա և մի պատկեր Փաւստոսից, որտեղ երեսում է հայ ժողովրդի կոյր հաւատը դէպի հայրենի հողի և ջրի հրաշագործորութիւնը:

Արշակ թագաւորը գերի է Պարսկաստանում: Շապուհ թագաւորը չը գլուէ ինչպէս վարուի նրա հետ: Նա հմայողներին խորհրդի է կանչում և յայտնում է, թէ ինքը սիրել է Արշակին իբրև որդի, կամեցել է իր աղջիկը նրան կին տալ, բայց Արշակը միշտ մերժել է իր սէրը և անդադար կոփւներով հանգիստ չէ տուել պարսիկներին: Այժմ նա իր ուգով ելնել եկել է Պարսկաստան և շատ խոնարհել է: Ինքը յօժարութեամբ նրան էլի Հայաստան կ'ուղարկէր իբրև թագաւոր, բայց վատահ չէ որ նա հայրենիք վերադանալուց յետոյ էլ խոնարհ ու հպատակ կը մնայ: Ի՞նչպէս իմանալ այդ: Հմայողների խորհրդով Շապուհը ուզտեր է ուղարկում Հայաստան, Հայաստանի հող ու ջուր բերելու: Բերած հողն ածում է իր վրանի յատակի կէսում, ջուրը ցանում է վրան, իսկ յատակի միւս կէսը թողնում է բնական, պարսկական հողով: Արշակը այս մասին ոչինչ չը գիտէ: Ապա Շապուհը Արշակի թեր մտած՝ խօսակցելով մտնում է հմայութեան վրանը: Նախ ման են գալիս բնական յատակի վրայ: Շապուհը հարցնում է: «Արշակ թագաւոր, ես այնքան քեզ սիրել եմ, որդուս տեղ եմ համարել, աղջիկս կամեցել եմ քեզ կին տալ. ինչու գու ինձ հակառակ էիր վարւում, թշնամութիւն անում հետա»: Արշակը պատասխանում է: «Մեղայ քեզ, տէր իմ թագաւոր, ես քո ոտքի փոշին եմ. ինձ խարեցին, քեզ հետ թշնամացրին. ես յանցաւոր եմ քո առաջ. կեանքս քո ձեռին է, արա ինչ որ կամենում ես»: Խօսակցութիւնը շարունակելով Շուպուհը Արշակին տանում է վրանի հայայատակ կէսի վրայ: Հենց որ այս հողի վրայ ոտք է գնում Արշակը՝ խրոխտ գոչում է: «Հեռու ինձանից, ծառայ չարագործ, որ քո տիրոջ վրայ տէր ես զարձել. ես իմ նախնեաց վրէժը կը հանեմ քեզանից և քո որդիներից. դուք մեր հպատակներն էք, որ մեր գահը խլել էք, և ես...»: Շապուհը տանում է նրան պարսկական հողի վրայ: — Արշակը սկսում է ողբալ իր արածի վրայ, Շապուհի ոտներն է ընկնում, զղջում, ներողութիւն ինդրում: Շապուհը բերում է նրան հայկական հողի վրայ: — Արշակը աւելի խիստ խօսքերով սկսում է խրոխտալ նրա դէմ: Առաւօտից երեկոյ փորձ է անում—և շարունակ նոյն երևոյթը:

Երեկոյ է, թագաւորի ընթրիքի ժամանակ. ներկայ են բազմաթիւ նախարարներ, բարձր պալատականներ: Արշակի հա-

մար տեղ են պատրաստել ոչ թէ Շապուհի կողքին, հէնց նրա տախտի վրայ, ինչպէս սովորութիւն էր, այլ շատ ներքե, ուրիշ երկրորդական իշխաններից ցած, և նրա տեղի յատակում դարձեալ փոել են Հայաստանի հողից բերում բազմեցնում են Արշակին այդ հմայուած տեղում: Քիչ ժամանակ նստում է նա ուռուծ, վքուած, յանկարծ ոտքի է կանգնում և գոռում Շապուհի վրայ. «Վեր կաց տեղիցդ, դա իմ տեղն է, ես պէտք է այդտեղ բազմեմ. իմ ազգի տեղն այդ է եղել: Մէկ որ իմ աշխարհը դառնամ՝ տես ինչ կը բերեմ քո զիսին»:—Անմիջապէս շվթայ են ձգում Արշակի վիզը, ձեռքերն ու ոտքերը և ցմահ բանտարկութեան ենթարկում Անյուշ բերդում:

Այս առասպելի մէջ՝ Արշակը գերի է, օտար աշխարհում. նա օտար հողի վրայ կանգնած ժամանակ ստրկանում է, խոնարհուում. բայց հէնց որ միայն ոտքով չօշափում է հայրենի հողը՝ առիւծ է դառնում, գոռողանում, Շապուհի դէմ խրոխուում: Հիմա փոխադրենք այս Արշակին բուն Հայաստան, իր աղդակիցների մէջ, իբրև թագաւոր, և այն ժամանակ մեղ համար բոլորովին հասկանալի կը դառնան նրա երկարատե յաղթական կոփները պարսիկների հետ, սրանցից միլիոնաւոր զինուորներ կոտորելը, նրա անպարտելիութիւնը: Այս առասպելը և երեսնամեայ պատերազմները միմևանց ամբողջացնում են և անխզելի կերպով կապուած են իրար հետ, իբրև մի և նոյն գաղափարի և հաւատի արտայայտութիւնը: Իբրև պատմական աղբիւր՝ նրանք արժէք չունին, և մնած միամտութիւն կը լինէր՝ նրանց հալած իւղի տեղ ընդունել և իբրև պատմութիւն տալը. իսկ իբրև աղդագրական նիւթ, իբրև բանտառեղծութիւն, որի մէջ ցոլանում է ժողովրդի մէրը դէպի հայրենի հողն ու ջուրը, նրա հայեացքը պանդուխտի ու իր օջախում ապրող մարդու հոգեկան զրութեան մնաւն տարբերութեան մասին՝ նրանք անգնահատելի պերճախօս նիւթեր են: Հող չէ, որ նրանք, ինչպէս և ուրիշ շատ էպիզոդներ Փաւաստոի մէջ՝ իրողութիւն չեն, այլ հնարովի են. այս հանգամանքն, ընդհակառակն, աւելի արժէք է տալիս նրանց.—Նրանք ժողովրդի ստեղծագործութիւններն են, որոնց տարբերը կազմում են ժողովրդի բարոյական, կրօնական, քաղաքական հայեացքներն ու հաւատալիքները, ժողովրդի ամբողջ աշխարհայեղողութիւնը:

Այսպիսի նիւթեր շատ և շատ է մատակարարում Փաւաստոսի անունը կրող մատենագրական դորձը: Հայ ժողովրդի հարազատ որդին^{*}), նրա հայեացքներով ու ճաշակով ամբողջապէս

*) Եթէ դատենք հեղինակի մանրապատում, բազմաբառ ոճից և

տոգորուած՝ անկեղծ հաւատով պատմում է անցեալի զրոյցները իր անարուեստ, անկանոն, բայց բնական, հարուստ, կենդանի, նկարագրական լեզուով։ Նրա գրուածքը աղգային անմշակ վիպասանութեան համն ու հոտն է տալիս և գրաւում է իր միամիտ, վիպասանական ոճի աղովք։ Նա հայոց գրականութեան թօստաննամէն է, որ դժբախտաբար չունեցաւ իր մշակող—յաջորդ Ֆիրդուսին, չունեցաւ նոյն-իսկ իր ուսումնասիրովը մինչև այսօր։ Դարերով մոռացութեան և արհամարհանքի մատնուած այս աղգային աշուղ-պատմիչը տամնեիններորդ դարի երկրորդ կէսից սկսեց բարձրանալ ու գնահատուել, բայց դարձեալ ոչ ճիշտ հայեցակէտով։ Նրա զլխաւոր արժանաւորութիւնը, իբրև ժողովրդական աւանդութիւնների և ստեղծագործութեան ժողովողի, դեռ բաւականաչափ չէ ճանաչուած։ Այս պատճառով մենք փոքր ինչ երկար կանգ առանք՝ Փաւստոսի այս կողմը լուսաբանելու վրայ։

Իբրև բանաստեղծ՝ Փաւստոսը, իսկապէս նրա բերանով խօսող ժողովուրդն, ունի իր իդէալները և հերոսները, որոնք մարմնացնում են այդ իդէալները։ Հերոսները երկու խմբի են բաժանուած—հոգեհորական և աշխարհական։ Առաջինները (Վրթանէս, Յուսիկ, Խաղ, Դանիէլ, բայց զլխաւորապէս ներսէս Մեծ) փայլում են հոգեկան առաքինութիւններով ու անբիծ վարքով։ Հօտի բարօրութեան համար նրանք ճգնում են անդադար, խնամում, յորդորում, բարեգործական հաստատութիւններ հիմնում, աղքատներին օգնութեան ձեռք ևն մեկնում, մեծամեծների անառակութիւնը յանդիմանում։ Չեն քաշւում թագաւորներին կշտամբելուց և նահատակի վախճան են ունենում։ Նրանք օժտուած են նրաշք ներ գործելու, տեսիլքներ տեսնելու, ապագայի դուշակութիւններ անելու չնորհքներով։ Մէկ խօսքով՝ այնպիսի հոգեհորականներ՝ որպիսին ժողովուրդը ցանկանում էր ունենալ և երնակայում էր իր մտքում։ Աշխարհական հերոսները կազմում են մի շարք սպարապեաններ (զօրավարներ) Մամիկոնեան նախարարական տոհմից։ Սրանք մարմնացնում են անսահման տիրասիրութիւն և հաւատարմութիւն դէպի Սրչակունի «քնիկ» թագաւորները։ Ժողովուրդն ու նկեղեցին՝ նրանց կուսքն են, պաշտելին։ Երկիւը նրանց համար անծանօթ հասկացողութիւն է։ Նրանք կուտի գաշտում ասիւծներ են, որոնց առաջ ոչնչանում է թշնամու անթիւ բազմութիւնը՝ ինչպէս ոչխարների հօտ Մեռնել անկողնում, հրւանգութիւնից կամ ծերութիւնից՝ վա-

բարբառական մի քանի բատկութիւններից՝ հեղինակը եղել է բուն Ալբարատեան նահանգից։

տութիւն է նրանց աչքում. մահ պատերազմի դաշտում—ահա
նրանց բաղձանքն ու պարծանքը:

Բայց այս մասին կը խօսենք յաջորդ գլխում, որտեղ խօսք
կը վնի Եղիշէի պատմութեան առիթով։ Այստեղ կը տեսնենք
հերոսութեան մի ուրիշ գաղտնիքն էլ, որ նկատուած է մեր
հին մատենագրութեան մէջ չնորհիւ գիտական քննադատու-
թեան։

ՍՏ. ՄԱԼԻԱՍԵԱՆՑ

(Կը տարանակուի)

Բ Ո Ւ Դ Գ Դ Ա

(ՄԵՐԵԺԿԱՎԱԼԻԲ)

Մութ ձորերի մէջ, սարերի գլխին,
Ուր աշնան քամին փըշում էր ուժզին,
Մի խումբ տրշմոլիկ, քախիծը սրտում,
Դէպի Գանգէսը գոնում էր սրտում:
Բուժ ու անձրեւից՝ կիսամերկ, նիհար
Նրանց մարմինը կապտել էր խաղան,
Եւ տրշում էին ահա՛ երեխ օր,
Առանց ապաստան, ընկած սար ու ձոր:

Ծառերի միջից անթափանց մթնում,
Նըրանց աչքերին յանկարծ մի ըրբեղ՝
Տաճար է փայլում, ուր ներս են մտնում,
Որ գտնեն իրանց ապաստան այնտեղ:
Եւ ի՞նչ են տեսնում. իր զահի վըրայ
Բազմած է բուդդիան—մի քարէ հոկայ,
Որի ոսկեկորու, պերճառուք քազին
Շողողում էր մի գոհար քանկագին:

«Այսեղ մարդ չը կայ, զիւերն էլ խաւար»,
Նըրանցից մէկը ասում էր կամաց.—
«Եղբա՛յր, այս անզին գոհարի համար
Մեզ մեծ գումարներ կը տան անկասկած:
Նա ամենեւին պէտք չէ Ասըծուն,
Այնտեղ, կապուտակ տարածութեան մէջ—
Երկնային Հօր մօս—աւելի սիրուն,
Շըբեղ են փայլում ասդերը անտէջ»:

Նրանել տուին... Եւ ահա՝ կամաց
Նրանի մութի մէջ, երկիւդով լցուած,
Լուռ մօտենում են. բայց երբ դողալով
Ռւզում են ձեռք տալ այդ վեհ սրբութեան՝
Լսում են ձայներ ահեղ որոսման,
Որ սարերի մէջ արձագանի տարով՝
Մի ուժեղ բափով նրանց յես է մըդում...
Եւ սարսափանից սառչում են տեղում...

Այդ խմբի մէջից մէկը միայն անվախ
Առաջ է գալիս Եւ, վսահ, խաղաղ,
Դիմում Ասրծուն. «Թո՛ւ անարդար ես,
Կամ քո բուրմերը մեզ սուս են ասել,
Թէ դու ողորմած, բարի ես եւ հեզ,
Թէ դու սիրում ես վետե ամոնել
Եւ յաղթել խաւառն, որպէս լոյս արեւ...
Ո՛չ, դու մեզանից մի բարի համար
Վլրէծ ես առնում, մինչդեռ քո առջեւ
Մենի գետնատարած, ընկած ենի անհար:

Բայց մենի էլ քեզ պէս անմահ ենի հոգով.
Ո՛, ամաջիր դո՛ւ, բազաւոր երկնի.
Դու վեր ես կացել եւ հրզօր ոյժով
Աղքատի հացը խըլում ես քոնի:
Արբանի մեծ, քո՛ղ խելազարիս
Դիմին որոսան շանք ու կայծակներ.
Քեզ հետ հաւասար կանգնած եմ ահա,
Եւ գլուխը բարձր պահած անվեհներ՝
Գոչում եմ երկրի եւ երկնի դիմաց—
Դու անարդար ես, ո՞վ կարող ասուած:
Նա լրոեց... Խսկոյն նրանք պատահեց.
Բուդդիան բազակիր գլուխը խոնարհեց
Մինչեւ ի գետին: Եւ խեղճուկ, սոված
Ամբոխի առաջ այն հրզօր եւ մեծ
Քարէ հսկան էր միուս մէջ ընկած...

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՅՆՈՒԹԵՐՈՐԾ ԳԱՐԾ ԸՆԴ- ՀԱՆՐԱՊԵՍ ՊԱՐԳԱԳՄԱՆ և ԱՊԱՋԱՊԻՄՈՒԹԵԱՆ ՄՐԺԱՆ է, ՀԱՄԵ- ՄԱՏԱԾ ՆԱԽԱԼԻԲՆ ՊԱՐԵՐԻ հԵտ ՆԱ ՆՀԱՆԱւՈՐ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ է ՆՈՒԱՃՈՒՄ ՀՈՐՍ ԵՐԼԻՐՆԵՐՈՒՄ, ԱՅՆ Է՝ ԹԻՎՐՔԻԱՅՈՒՄ, ԻՄԱՂԻԱՅ- ՈՒՄ, ՀՆԴԼԱՍՄՈՒՆՈՒՄ և ՌՈՒՍԱՍՄՈՒՆՈՒՄ: ՀՐԱՄԱՐԱԼԿՈՒԱԾ ՊՐԵ- ՐԻ ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԲԱԳՄԱԹԻՒ է, ԱՅՆՊԵՍ ՈՐ ԱՎԱՏՄԱԳԻՐԸ այլ և չէ կարող կանգ առնել իւրաքանչիւր հայերէն տպագրու- թեան առաջ և պիտի խօսէ միայն այն տեսակ գրքերի մասին, որ հետաքրքրութիւն են ներկայացնում: Բաղմացել են, ի հարկէ: և գրական գործիչները, տպարան հաստատելը, գրքեր հրատա- րակելը այլ ևս մեծագործութեան, հերոսութեան նման մի բան չէ երևում: Գրքերի տէրը դարձեալ հոգևորականութիւնն է, բայց արդէն սկսում են ասպարէզ գալ և աշխարհական մարդիկ:

Գրական ամենագլխաւոր կենտրոնները, ուր լոյս են տես-
նում բազմաթիւ գրքեր, երկու մեծ քաղաքներ են—Կ. Պօլիս և
Վենետիկ: Ամրող գարի ընթացքում այդ քաղաքները մրցում
են միմեանց հետ առաջնութեան համար, և առաջնութիւնը խը-
լում է թիվրքաց մայրաքաղաքը՝ իր հրատարակած գրքերի հա-
նակուրեամբ: Բայց միայն քանակութեամբ: XVIII գարի հայե-
րէն տպագրութիւնների ցուցակը ներկայացնում է մեզ այսպի-
սի հաշիւ: մինչդեռ կ. Պօլիսը տուել է մօտ 210 տպագրած գրքեր,
Վենետիկի հրատարակութիւնների ընդհանուր թիւը 180-ի
էլ չէ հասնում: իսկ գրքերի բովանդակութեան կողմից կ. Պօլի-
սը Վենետիկից շատ է յետ մնում:

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

XVIII ԴԱՅՐՈՒՄ

ԴԼ. Բ.

Կ. ՊՕԼԻՍ ԵՒ ՎԵՆԵՏԻԿ

I

Հայոց գրականութեան համար տաճնութերորդ գարը ընդ-
հանրապէս զարգացման և առաջադիմութեան լրջան է, համե-
մատած նախալիբն գարերի հետ: Նա նշանաւոր կենտրոններ է
նուաճում չորս երկրներում, այն է՝ թիվրքիայում, իտալիայ-
ում, Հնդկաստանում և Ռուսաստանում: Հրատարակուած գրքե-
րի քանակութիւնը բազմաթիւ է, այնպէս որ ավատմագիրը այլ
ևս չէ կանգ առնել իւրաքանչիւր հայերէն տպագրու-
թեան առաջ և պիտի խօսէ միայն այն տեսակ գրքերի մասին,
որ հետաքրքրութիւն են ներկայացնում: Բաղմացել են, ի հարկէ:
և գրական գործիչները, տպարան հաստատելը, գրքեր հրատա-
րակելը այլ ևս մեծագործութեան, հերոսութեան նման մի բան
չէ երևում: Գրքերի տէրը դարձեալ հոգևորականութիւնն է, բայց
արդէն սկսում են ասպարէզ գալ և աշխարհական մարդիկ:

Գրական ամենագլխաւոր կենտրոնները, ուր լոյս են տես-
նում բազմաթիւ գրքեր, երկու մեծ քաղաքներ են—Կ. Պօլիս և
Վենետիկ: Ամրող գարի ընթացքում այդ քաղաքները մրցում
են միմեանց հետ առաջնութեան համար, և առաջնութիւնը խը-
լում է թիվրքաց մայրաքաղաքը՝ իր հրատարակած գրքերի հա-
նակուրեամբ: Բայց միայն քանակութեամբ: XVIII գարի հայե-
րէն տպագրութիւնների ցուցակը ներկայացնում է մեզ այսպի-
սի հաշիւ: մինչդեռ կ. Պօլիսը տուել է մօտ 210 տպագրած գրքեր,
Վենետիկի հրատարակութիւնների ընդհանուր թիւը 180-ի
էլ չէ հասնում: իսկ գրքերի բովանդակութեան կողմից կ. Պօլի-
սը Վենետիկից շատ է յետ մնում:

Սա բնական է: Կ. Պօլիսը ներկայացնում է նոյն Ասիան, որի մի բազմաչարչար անկիւնն էր Հայաստանը: Ասիան ոչ թէ աշխարհագրական, այլ մտաւոր—կուլտուրական մոքով: Խնդնուրոյն միտք այդտեղ ազատ զարգանալ չէր կարող. պալատական յեղափոխութիւններից ցնցուող ննիչէրիական վայրենութիւններին ենթարկուած կ. Պօլիսը, մի մշտապէս պատերազմող զինուորական բռնապետութեան մայրաքաղաք, որ մերթ յաղթողի հպարտութիւնից էր յղիանում, բայց յաճախ դառն պարտութիւնների յուսահատութիւն ու լքումն էր ներկայացնում,—անկարող էր նմանուել անգամ առաջադիմող Եւրոպային: Կ. Պօլսում գործող հայերը նոյն տիսուր իրականութեան ծնունդներն էին, որ ծանրացած էր մահմետական ամբողջ Արևելքի վրայ: Բազմաթիւ հանգամանկներ հարկադրում էին հայերին, չը նայած XVIII դարի լուսաւորութեան, իրանց երկրում, իրանց ունեցածի մէջ որոնել մտաւոր պաշար: Նրանք դրսի, այսինքն արևմտեան աշխարհից բաժանուած էին չինական պատերով:

Միայն տպագրական մամուլն է, որ հաստատ հող է նուածում կ. Պօլսի հայութեան մէջ: Բայց նա ինչ կարող էր արտադրել այն նեխուուած մթնոլորտում: Ըսթացիկ գրականութիւնը, որ լոյս է հանւում այդ մամուլի միջոցով, մեծ մասսամբ ողորմելի բան է: Եւ կ., Պօլսի կատարած դերը այդ ընթացիկ, ինքնուրոյն գրականութեան մէջ չէ: Դրանից աւելի մեծ նշանակութիւն ունէր այն հանգամանքը, որ կ. Պօլիսը սկսեց հրատարակել եկեղեցական գրքեր և հին մատենագրութիւնը:

Մինչև XVIII դարի սկիզբը լուսաւորչական եկեղեցին շատ անօգնական գրութեան մէջ էր. Նրան հարկաւոր էին գրքեր, իսկ դրանք հրատարակուում էին համարեա միայն արևմտեան Եւրոպայում: Բայց այդտեղ կանգնած էր կաթոլիկ ամենակարող կղերը, որ պահանջում էր նախ հիմնաւորապէս սրբազնել եկեղեցական գրքերը, ապա միայն տպագրելը: Այն գառն տանջանքները, որ կրեցին Ռուսնը և նրա յաջորդները Մարտէլում, ցոյց են տալիս, թէ հրեան ծանր, յաճախ կատարելապէս անկարելի բան էր ունենալ եկեղեցական հարազատ, չաղճատուած գրքեր: Եթէ չը լինէր աղատ Հոլլանդիան, եթէ հայ տպարան չը բացուէր Ամստերդամում՝ հայերը իրանց կրօնական պէտքերի համար կամ պիտի բոլորովին հրաժարուէին տպարանի օժանդակութիւնից կամ պիտի բաւականացին այն եկեղեցական գրքերով, որոնք լոյս էին տեսնում Հոռոմի կամ Վենետիկի կաթոլիկ գրաքննութեան հաւանութեամբ: Դարը այսպէս չէր, որ կարելի լինէր հաշտուել այս երկու մտքի հետ: Կաթոլիկ պրօպագանդան մտել էր Հայաստանի սիրտը, առատ հունձեր էր հաւա-

քում կոռել այդ արշաւանքի դէմ լոկ հալածանքներով, մատնութիւններով բաւական չէր: կարեոր էր և գործ, կարեոր էր և քարոզութիւն, գրքերի օդնութիւն:

Մենք տեսանք *), թէ զիմապրելու անհրաժեշտութիւնը ինչպէս հարկադրեց հայ հոգնորականներին բանակոիւ մղել գրքերի միջացու: XVIII դարի վերջին քառորդում բացւում է Նոր Զուղայի վազուց փակուած տպարանը՝ յատկապէս կաթօլիկների դէմ ուղղած մի քանի վիճաբանական գրքեր տպագրելու համար: Պայքարը զնալով սաստկանում է. Թիւքքիայի համարեա բոլոր կողմերում ժողովուրդը կռուածաղիկ է դառնում կաթօլիկ և տեղական եկեղեցիների մէջ: Իւրաքանչուր կողմը աշխատում է յարձակողական և պաշտպանողական դիրք գրաւել:

Եւ անա այդ ազգեցութիւնների տակ կ. Պօլսում կենտրոնանում է հայ եկեղեցու պաշտպանութեան գործը: Ամստերդամի գերը յանձն է առնում կ. Պօլսը, տպագրելով եկեղեցական հարազատ գրքեր. այդ կողմից նաև համարձակ մրցում է նոյն իսկ Վենետիկի հետ, զարգացնելով տպարանական գործը և հեղինակութիւն է ստանում: Ինչ որ կար հայերի ձեռքում իրանց եկեղեցու ուղղավառութիւնը հաստատելու համար՝ մամուլին էր յանձնուում կ. Պօլսում: Ժամանակակից հեղինակների հերքումները, յարձակումները կաթօլիկների դէմ բաւական չէին. կարիքը հարկադրում էր դուրս բերել հին ձեռագիրներ, յանձնել տպագրութեան: 1709 թուականին տպագրուում է Ազաթանգեղութու: Մովսէս Խորենացու պատմութեան տպագրութիւնից յետոյ դա երկրորդ փորձն է, որ մամուլին է յանձնուում հայ հին զրականութեան մի յիշատակարանը: Եւ ինչ պատճառով:—Որպէս զի հայերը կարդան, հասկանան, որ իրանք դաւանում են Գրիգոր Լուսաւորչի զրած հաւատը ու կարողանան պատախաններ տալ հաւատափոխներին **): Նոյն նպատակով է որ 1719 հրատարակուում է Զենոռ Գլակը, 1837-ին Մեսրոպ երէցը: Բացի պատմական նշանակութիւն ունեցող այս գրքերից հրարակուում են և հին զուտ կրօնական շարադրութիւններ: Տպւում են, չը նոյած ահազին ծախսներին և դժուարութիւններին, «Յայսմաւուրքի», Գրիգոր Տաթևացու հատորների պէս ահազին գըրքեր:

Միանալու, փոխադարձ աշակցութեամբ գործելու անհրաժեշտութիւնը պարզ զգացուում է, իրականութիւն դառնում: Մենք նոյն իսկ տեսնում ենք այսպիսի երևոյթ: Հաւաքւում են

*.) Հալկ, Տպ., 1. եր. 243 և յաջ.

**) Ազաթանգեղու, 1709 թ. տպ., առաջաբան:

մի քանի մարդիկ, գանձանակ են հաստատում գրքեր հրատարակելու համար։ Նրանք դիմում են մարդկանց բարեսիրութեան, չեն արհամարհում նոյն իսկ աղքատների սև փողերը։ Այսպիսի հաւաքական ոյժերով հրատարակուեց 1717 թուականին Կիւրեղ Աղէքսանդրացու «Պարապմանց գիրքը», որ գարձեալ պիտի հաստատէր թէ հայերը հերձուածող ու հերետիկոս չեն։ Դա առաջին հրատարակչական ընկերութիւնն է հայերիս մէջ։ Նա խոստանում էր ուրիշ գրքեր էլ հրատարակել հետզհետէ *): Աւելի և առաջ գնալով, տեսնում ենք փաքրիկ դիրքով տպագրած գիրք, ծոցում կամ գրապանում պահելու յարմարեցրած, «Ճշմարիտ նշանակութիւն կաթողիկէութեան» վերնագրով, երկրորդ տպագրութիւն (1750). դա վիճաբանութիւն է կաթոլիկների դէմ և տարածւում է ձրի **):

Եւ այսպէս կ. Պօլսի մէջ կենտրօնացած էր դիմադրութիւն կաթոլիկ պրօպագանդայի դէմ ոչ միայն քաղաքական իշխանութեան, ոյժի միջոցով, այլ և գրականութեան միջոցով։ Հենց այդ պատճառով էլ այդ գրականութիւնը միանման ու միագոյն է — կրօնական։ և կ. Պօլսաը կարեորութիւն ունի աւելի տպարանական, աւելի հրատարակչական տեսակէտից։ Նա դիմադրում էր արևմտեան տպարաններին, բայց ազգային լուսաւորութիւն ստեղծելու և առաջ տանելու համար ոչինչ չունէր և չէր էլ կարող ունենալ. այդ բանի մէջ նա ոչնչով չէր արարերում մնացած հայութիւնից և ինքն էլ կարօտ էր արևմտեան հրատարակութիւններին։ Թէ ինչ կարող էր արտադրել կ. Պօլսի գրական աշխարհը կրօնական հարցերից դուրս, այդ կարելի է իմանալ մի գրքից, որ տպագրուել է կ. Պօլսում 1704 թուականին։ Դրա հեղինակն է Գալուստ վարդապետ Ամասիային, որ կայծակ էլ էր կոչւում։ Նոյն այդ միջոցին կայծակը կ. Պօլսի պատրիարք էր և համարում էր «մեծիւմաստ վարդապետ»***։ Այդ մեծիւմաստի գիրքն էլ ունի մեծահնչյուն վերնագիր—«Լուսաշաւիդ»։ Երեսուն զլուխների մէջ կայծակը մարդուն նմանեցնում է բազմատեսակ առարկաների (աշխարհ, քաղաք, մելու, գաղան, աղբիւր, ծով, նաւ, գետ, թռչուն և այլն) և զարմանալի նմանութիւններ է դանում։

Ահա օրինակներ. 1) Մարդը նման է աշխարհին։ Ի՞նչպէս—օթարինք և բարձրանք ուկերացն համեմատ, ծառ և տունկ՝ մազ և մօրուաց համեմատ, հող և ջուր օդ և հուր սաֆրայ և պաղպամ արիւն և սև մաղձ։ Եւ դջուր գոյ աշխարհի և մարդուս դ։ Են ջուրք՝ աղին աչաց. լեղին ական-

*) «Պարապմանց գիրք», եր. 795։

**) եր. 269։

***) Զամշեան, Գ. եր. 745։

ջաց. քաղցր բերանոցն, և անօրինակն երիկամանց։ Աշխարհիս բազում գետ գոյ։ և մարդս բազում երակօք է։ 2) Մարդը ժամացոլցի նման։ «Զի մարդը» նմանի ասհէթի։ նաև. ունի թանձր արծաթ և ոսկի կամ պղինձ. և մարդս ունի մարմին նրկու. զգեցուցանեն աման դիպակ և կումաշ. և մարդս ունի հանդերձ ոսկէթել. և սամուր. և սկ կտաւ. կամ շալ։ նրեք. ոսկէզօծ առնեն. և մարդս օծեալ է մեռոնիս սրբոյ շորս. զժամն ցուցանէ, որ է ժամացոլց. և մարդս գիտէ զժամն և զժամանակն։ Հինդ. ոմանք ձախ արձակեն, որպէս նոյեան կոչնակն. ըստ այնմ փող հարէք զոր և առաքեալքն փող եղեն. և նարտենիս ժամահարքն։ և աքաղաղն։ 3) Մարդը նման է քաղաքի։ «Քաղաքի բանդ կա և մարդուս հիանդութիւն և ցաւ»^{*}։

Այսպիսի գոհարների հետ «Լուսաշատիդը» տալիս է և զանազան տաղեր, աղօթքներ, խրատներ, որոնք լի են նոյն խելագութեամբ։ Կայծակը համոզուած է, որ այդ երգերը պիտի երգուեն և ազաշում է երգողներից ու նուազողներից, որ իր անունը յիշատակեն և ի լրումն ամենայնի խոստանում է երկու այդպիսի լուսաթաթախ զրքեր էլ հրատարակել, մի խոստում, որ բարեբախտաբար անկատար է մնացել։

Մի նմուշ Գալուստ վարդապետի բանասեղծութիւններից։ Խոսքը արբեցողի մասին է։ «Փամ աղօթքն ուլացեր է. ծունուն և մարմնապաշտ է. որպէս էզիտի գուրթ է. մք օր աղօթէ։ Թէ ժամ զնա՛ աղաջէ. յԱսոուծոյ զինի խնդրէ. այզի եարան և մէջ է. խելքն և միտքն կարասն է։ Քրիստոնէից ատէթ է. հաւատ. լոյս. սէր միշտ ուզէ. ճունունն երեք բան խնդրէ. թուղթու ըրախի զինի նէ. Որքան հարբած կան յերկրի ժողովեալ դիմեն տեղի մի. շատ կարասներ և զինի. ցուցանեն ի մառանի. Բնաւ չոտ գաւաթ մի. կարօտ հասրէդ մեռանի. աւուրն ահեղ ատենի. ի զժուց զերծանի. Պու ոօգում օ ատէմէ. շէրաս կօթուրմէ լինէ. քօգուսունտան մէստն իտէ. հէր կուն մէհթատ էտինէ»։

Եւ Գալուստ վարդապետը զուր չէր կոչւում «մնձիմաստ»։ Գոնէ նրա ժամանակակիցները զրանից աւելի լաւ չէին զրում։ Կանոնաւոր շարադրելու ընդունակութիւնը, լեզուին մի քիչ բաւարար կերպով տիրապետելը շատ հազուաղիւտ բաներ էին այն ժամանակներում։ Աւետիք պատրիարքը, որ այնքան եռանդու էր հալածանքների, ծեծի ու բնութիւնների մէջ, Կայծակից մի աստիճան բարձր զրազէտ չէր, ինչպէս ցոյց են տալիս նրա մի քանի զրութիւնները ^{**})։ Տիրող ախուր զրութիւնն է ներկայացնում և նոյն հաւաքական ինդրազիրը, որ 1706 թուականին կ. Պօլսի հայ հոգեորականները ուզարկել են էջմիածնի Աղէքսանդր կաթողիկոսին և որի մէջ մի խառն ու շփոթ շատախոսութեամբ պատմուած են ժամանակակից կրօնական խոռովութիւնները ^{***})։

^{*}) Անփոփոխ ենք պահում ուզգազութիւնը։

^{**)} «Բանասէքը» հանդէս, 1900, № 2, էր. 141—144։

^{***)} «Կոռոնկ» ամսագիր, 1863, № 9, էր. 662—683։

Գրական ճաշակի, մտաւոր պահանջների մի բնորոշ արտայայտութիւնն էլ «Պատմութիւն Պղնձէ քաղաքին» գիրքն է, որ առաջին անգամ տպագրուեց կ. Պօլսում 1708 թուականին: Ժողովրդի մէջ վայելած համբաւին և հեղինակութեան նայելով, այս պատմութիւնը, որքան էլ վիրաւորական լինի խոստովանելը, հոչակաւոր գիրք է: Նոր չէր յօրինուում նա. մի ձեռագիր էր, որ դառնում էր տպագրած գիրք: Բայց այնքան մեծ պահանջ առաջացրեց, որ բազմաթիւ հրատարակութիւններ ունեցաւ ոչ միայն XVIII, այլ և XIX դարում, ոչ միայն կ. Պօլսում, այլ և շատ ուրիշ տեղերում: Հազիր մի երկու տասնեակ տարի լինի, որ հայ ժողովուրդը, կամ դոնէ նրա ստուար մեծամասնութիւնը, բաժանուել է այդ պատմութիւնից. այժմ էլ անշուշտ քիչ չեն այնպիսի անկիւններ, ուր «Պղնձէ քաղաքը» իր նախկին փառքի մէջ է, հայ գրագէտի ընկերն ու խորհրդատուն է: Այդ երկարատև և ընդարձակ ժողովրդականութիւնը պարաւորեցնում է մեզ մի քիչ մանրամասն խօսել հոչակուած գրքի մասին: Ի՞նչ գաղտնիք ունէր նրա աջողութիւնը:

«Պատմութիւն Պղնձէ քաղաքին» կոչուող գիրքը զանազան հոգեշահ պատմուածքների մի ժողովածու է, որի մէջ այն պատմուածքը, որից գիրքը ստացել է իր անունը, մի փոքրիկ տեղ է զրաւում: Նրան հետուում են Փահլուի, Խիկարի, աղքատ Ալէքսիանոսի և այլ պատմութիւններ, որոնք, լինելով բոլորովին անջատ ու անկախ գործեր՝ միայնած են իրար հետ ներքին կապով. ամենքն էլ հոգի փրկելու, խրատելու, ուղիղ ճանապարհներ ցոյց տալու ձգտումն ունեն: «Պղնձէ քաղաքը» թարգմանուած է արաբերէնից գետ XVIII դարի առաջին քառորդում մի հայ վարդապետի ձեռքով: Պատմական-կուլտուրական տեսակետից այդ թարգմանութիւնը ներկայացնում է մեծ հետաքրքրութիւն, իբրև արաբական տիրապետութեան յիշատակարաններից մէկը:

Մինչև VII դարի կէսը Հայաստանը ևսթարկուած էր Պարսկաստանի քաղաքական և կուլտուրական ազդեցութեան: Բայց ահա զուխ բարձրացրեց մի նոր մեծ ոյժ, որ վերջ զրեց Պարսկաստանի ինքնուրոյն գոյութեան և նրա ժառանգը հանդիսացաւ Առաջաւոր Ասիայում: Դա արաբական իսլամն էր: Նրա տիրապետութեան տակ մտնում է և Հայաստանը, որ մօտ չորս դար ուղղակի կամ անուղղակի կազմում էր մի արաբական երկիր: Փոքր, սեփական ինքնատիպ կուլտուրայից զուրկ ազգերի ճակատագիրն է ևնթարկուել ուժեղների, մեծերի ազդեցութեան: Հայերը թէն քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ հանդիսանում էին ոչ-քրիստոնեայ ազգերի աղդեցութեան գի-

մաղրող մի տարր, բայց և այնպէս, այնքան ոյժ և ինքնուրոյնութիւն չունէին, որ միանգամայն ազատ մնային այդ աղղեցութիւնից։ Որքան էլ նրանց մէջ կենդանի մնար դիմադրող ոյժը, բայց ուժեղ էր և արաբական աղզը, որ համաշխարհային պատմութեան ասպարէց իջաւ ոչ միայն իրեն նուածող, այլ և իրեն կուլտուրական-մոռաւոր ընդունակութիւններով հարուստ մի թարմ ցեղ։

Պատմութեան տուած փաստերը շատ ցանցառ ու թոյլ են, բայց և այնպէս ամեն ինչ ցոյց է տալիս, որ արաբական աղղեցութիւնը հայերի վրայ՝ շատ զօրաւոր էր։ Նուածողները նուածուածների հետ շփում էին անդադար, որքան էլ իսլամը խորութիւնների և արտօնութիւնների միջոցով աշխատում էր նուածողներին անջատել, հետու պահել նուածուածներից։ Հայերի մէջ շատ գործածական են դառնում արաբական յատուկ անունները, ճարտարապետութիւնը Հայաստանում ենթարկվում է արաբական ոճին, նոյն խիստ աղղեցութիւնը մտնում է գրականութեան մէջ։ Հայ զրողների ոճը, արտայատութեան ձեր արաբական են։ Զօրեղ է մանաւանդ բանաստեղծութեան աղղեցութիւնը. մեր բանաստեղծութիւնների մէջ մտնում է արաբական չափը, այսինքն ուները, արաբականի նման, վերջանում են միանման վանկերով, որոնք շատ ձանձրալի են դարձնում ուսանաւորը։ Սա արդէն մի անսխալ նշան է, որ արաբական գրականութիւնը շատ տարածուած էր հայերի մէջ, շատ ընթերցողներ ուներ։ Ֆէ կարելի ասել, թէ արաբները չարհամարհում էին հայոց զրականութիւնը։ Թէ որքան սերտ էին նրանց յարաբերութիւնները հայերի հետ զրական գործերում, երեսում է նրանից, որ Գրիգոր Մաղիսարոսը, վիճի բռնուելով մի դիտուն արաբի հետ՝ չորս օրում գրեց հազար տողից բաղկացած մի հայերէն ոտանաւոր, որ, ինչպէս պատմում է ինքը, Մաղիսարոսը, մեծ տպաւորութիւն գործոց արաբի վրայ *): Բացի զրանից, այժմ ապացուցուած է, որ արաբական առակների մի ամբողջ ժողովածու հայերէն «Աղուէսագրքից» է թարգմանուած **):

Սյս հանդամանկըները ի նկատի առած, մենք պիտի սպասէինք, որ արաբական շրջանի հայոց զրականութիւնը մեծ հարստութիւններ փոխ առած լինէր արաբական զրականութիւնից։ Արաբները հայերին տալու շատ զանձներ ունէին։ Գիտական և գեղարուեստական զրականութիւնը նրանց մէջ զարգացման

*) «Ճաղանացութիւնք Գրիգորի Մաղիսարոսի», Վենետիկ, 1868.

**) Պրօֆէս. Ի. Մարք, „Сборникъ притчъ Вардана“, Спб., 1899, т. I, եր. 11—58.

բարձր աստիճանին էին հասել. կային մեծ բանաստեղծներ, զիտութեան զանազան ճիւղերի մէջ (պատմութիւն, աշխարհագրութիւն, մաթեմատիկա) նրանք աշխարհին ահազին ծառայութիւններ մատուցին: Եթէ հեռաւոր եւրօպայից մարդիկ զնում էին Սպանիա և Բալդադ, եթէ իրանք, արաբները, ճանապարհորդում էին զանազան երկիրներ, տանելով իրանց հետ զիտութեան պաշար՝ հայերի համար ոչինչ դժուարութիւն չը պիտի լինէր աւելի մօտիկուց իւրացնել այն մտաւոր գանձերը, որ պատրաստում էին արար գիտնականները և մատենագիրները: Բայց մենք տեսնում ենք, որ հայոց գրականութիւնը համարեա բոլորովին չէ օգտուել արաբականից: Եղել է արտաքին ազդեցութիւն ձեփ վրայ, բայց աղղեցութիւն ներքինի, բովանդակութեան վրայ չէ եղել Արաբական շրջանը հայոց գրականութեան մէջ ոչինչ նոր փոփոխսութիւն չը մտցրեց:

Դրա պատճառը, ի հարկէ, այն էր, որ հայոց գրականութիւնը միայն կրօնական էր, ծառայում էր կրօնին և գտնուում էր նրա պաշտօնեաների ձեռքում: Նկատի առնենք, որ իսլամը և քրիստոնէութիւնը կատաղի, անհաշտ թշնամիներ էին, միմեանց ոչնչացնելու մասին էին մտածում զարերի ընթացքում, և ոչ թէ միմեանց ձեռք մեկնելու, հաշտ ու համերաշխ ապրելու մասին: Որ և է բան փոխ առնել արաբական ճոխ գրականութիւնից՝ հայ կղերի համար պիտի նշանակէր ընդունել իսլամի գերազանցութիւնը, մանաւանդ որ Մուհամմէդի ժամանակից արաբական բանաստեղծութիւնը տոգորւում է կրօնական ոգով, դառնում է ազգային-իսլամական: Արաբական վէպերը, բանաստեղծութիւնները, մանաւանդ զարդարուն, ֆանտաստիական հեքեաթները, գրական մի հարուստ պաշար կարող էին տալ հային. բայց նրանք չեն թարգմանուում, որովհետեւ կրօնական դասակարգը չէր կարող տանել նրանց, քրիստոնէութեան անհաշտ թշնամիների այդ գործերը: Հայ կղերը, բացի գրանից, լոկ իր եկեղեցու մասին էր մտածում. ազատ գիտութիւնը, որի մէջ այնքան առաջացել էին արաբները, ինքն ըստ ինքեան թշնամի էր կրօնական հաւատավեներին. արաբների մէջ գիտութիւնը զարգանում էր այն ժամանակներում, երբ թուլանում էր իսլամի ոյժը, երբ համարեա անհաւատութիւն էր տիրում խալիքների պալատում: Այդ տեսակ գիտութիւնը չէր կարող մոցնուել Հայաստան՝ հայ կղերի ձեռքով:

Չը նայած այս արգելքներին, արաբական գրականութիւնից թարգմանութիւններ և փոխառութիւններ երեսում են մեր գրականութեան մէջ: Հետաքրքրական է, որ գրանք տեղի են

ունենում այն ժամանակ, երբ վերջացել էր արաբական տիրապետութիւնը, երբ արաբ ազգը այլ ևս քաղաքական դեր չէր կատարում Ասիայում։ Արաբական գիտութեան մի շատ զարգացած ճիւղը բժշկականութիւնն էր. կեանքի համար այնքան մեծ նշանակութիւն ունեցող բժշկականութիւնը չէր կարող ենթարկուել կրօնական կամ ցեղացին խարութիւններին և շատ տարածուեց Հայաստանում։ Հայ բժիշկները ոչ միայն գործադրում են այդ գիտութիւնը հիւանդների վրայ, այլ և զրում են զրեր, բժշկական գիտելիքները ժողովրդականացնելու համար Առաջին և ամենից շատ յայտնի բժիշկ հեղինակը Մխիթար Հերացին է. սրա օրինակին հետեւել են և ուրիշները՝ Կարելի է ասել, որ մենք միջին գարերում ունեցել ենք բժշկական մի ամբողջ զբրականութիւն, հիմնուած, ի հարկէ, արաբական հեղինակութիւնների վրայ։ Բայց աչքից չը ցցենք մի բնորոշ հանգամանք. այդ գրականութիւնը աշխարհական մարդկանց գործ է և նշանակուած է ժողովրդի համար, ուստի և ունի ժողովրդին հասուալի լեզու։

Ժողովրդի համար է և «Պղնձէ քաղաքը», որ արդէն արաբական բանաստեղծութիւնների շրջանից է վերցրած. թէև հոգեորականի ձեռքով է նա թարգմանուած, բայց աշխարհաբար լեզու ունի։ Եւ հայ հոգեորականը ոչինչ մեղք էլ չէր գործում, թարգմանելով այդ պատմուածքը։ Դա արաբական երգիծաբանութիւններից մէկը չէր, որոնք յաճախ այնպիսի համարձակութեան էին հասնում, որ չէին խնայում նոյն իսկ իսլամի հիմնադրին, ոչ էլ առհասարակ մի այնպիսի գրուածք, որ իր բովանդակութեամբ գայթակղութեան քար դառնար հաւատացող հայ քրիստոնեայի համար։ Ընդհակառակն. «Պղնձէ քաղաքը», երեխ, մէկն է այն բազմաթիւ հեքեաթներից, որոնցով այնքան հարուստ է արաբական գրականութիւնը և որոնցից կազմուեցին հոչակաւոր «Հազար ու մի դիշերները»։ Նրա մէջ փայլում է արեւելեան այն վառ երևակայութիւնը, որ այդ տեսակ հէքեաթների ամբողջ գրաւիչ ոյժն է կազմում։ Այստեղ են հրաշքները, Սողոմոնի զիերը, մի ամբողջ մեռած քաղաք, որ խորհըրդաւոր է իր հարստութիւններով, իր դիրքով։ Բայց ամեն տեղ ամեն ինչ հաստատում է միայն աշխարհի ունայնութիւնը, կատարեալ ոչնչութիւնը. զերեզմանների, ապարանքների արձանագրութիւնները միաբերան քարոզում են, թէ չարժէ աշխարհին գործերին նուիրուել. սուտ է աշխարհը, իրականութիւնը միայն գերեզմանն է, որից չէ ազատում ոչ հարստութիւնը, ոչ իշխանութիւնը, որի մէջ երեկուայ թազաւորները, բռնակալները որդերի կերակուր են դառնում։ Աշխատել երկնքի համար,

աշխատել յաւիտենական կեանք ժառանգել—ահա թէ ինչ է պահանջում պատմուածքի իւրաքանչիւր մասնիկը:

Այս միստիքական խոհերը միջին դարերում ընդհանուր էին ամեն տեղ, հաւասարապէս մեծարելի էին թէ քրիստոնեայի և թէ մուսիլմանի համար: Ուրեմն և թարգմանող վարդապետը, կրօնական հասկացողութիւնների տևակէտից, ոչինչ մեղք գործած չէր լինում, տալով ժողովրդի ձեռքը մի այնպիսի գիրք, որ աղուու օրինակներով ցոյց է տալիս, թէ սուտ է աշխարհը, թէ մարդը ոչինչ չը պիտի ունենայ, թէ միակ միսիթարութիւնն է բաժանել ունեցած-չունեցածը աղքատներին, հեռանալ աշխարհից և ճգնաւորի կեանք վարել որ և է այրի մէջ:

Նոյն այդ միտքն են արծարծում Փահլուկի պատմութիւնը, կամաւոր աղքատ Ալէքսիանոսի ճնուռթիւնները, մի խօսքով այն ամենը, ինչ կայ «Պղնձէ քաղաքի» մէջ, բացի միայն Խիկարի պատմութիւնից: Խիկարը, իրեն խելքի և խմաստութեան ներկայացուցիչ, ահազին հեղինակութիւն է վայերել հայերի մէջ: Դա Արեելքի հանձարն է, որի խրանները իրեն սուրբ ճշմարտութիւններ կազմուել են Քրիստոսից շատ առաջ և տարածուել են ամեն տեղ, թարգմանուել շատ լեզուներով: Հինգերորդ դարի հայ հեղինակներն էլ ծանօթ էին Խիկարի իմաստութիւնների հետ *): Այդ Խիկարը ունի մի պատմութիւն, որ ներկայացնում է մարդկային ավերախտութիւնը և որի մէջ ցոյց է տուած, թէ ինչպէս խեղճը յաղթահարում է աշխարհի անմիտ բնակալներին: Խիկարի խրանների մէջ երեսն է եկած հին աշխարհը իր եսամոլ հասկացողութիւններով. մարդը պէտք է իր սեփական օգուանները պաշտէ, իսկ հոգի չը կորցնելու համար պիտի ողորմութիւն տոյց աղքատներին. այդտեղ մեծարւում է իմաստութիւնը, խոնարհութիւնը, քարոզւում է զգուշութիւն, խոհեմութիւն: Կինը, ի հարկէ, ներկայանում է մի արարած, որին չէ կարելի ոչինչ խորհուրդ յայտնել. համարձակ խօսելը վատութիւն է համարւում. եթէ մէկը տեսնում է որ երկու մարդիկ կուռում են՝ չը պիտի մօտենայ նրանց ու հեռացնէ, որպէս զի ինքն էլ չը ծեծուի: Կան, ի հարկէ, և խելօք խրատներ:

Այս է այն ժողովրդական գիրքը, որ հոչակուած է «Պղնձէ քաղաքի պատմութիւն» անունով: Ընդհանուր առմամբ դա էլ կրօնական-խրատական ժողովածու է, այն զանազանութեամբ, որ հետաքրքրաշարժ պատմուածքների, վիպական ձեի միջոցով

*). Հ. Յ. Տաշեան, «Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք», Վիեննա, 1901, եր. 123—125:

է ժողովրդականացնում այն՝ ինչ եկեղեցական մռայլ սխօլաստիկան քարոզում էր իբրև բարձր գիտութիւն, իբրև փիլիսոփայութիւն։ Հազիւ թէ մի ուրիշ զիրք այդքան բացասական տպաւորութիւն թողնէ անպատճաստ ընթերցողի վրայ. նա խըլում է ամեն մի աշխայժ, հոգեկան կորով, թթացնում է միտքը, ոչչացնում է ամեն մի հարցասիրութիւն, զնելով մարդու մէջ մի սառն անտարբերութիւն դէպի շրջապատը։ Ի՞նչ հարկաւոր է գործունէութիւնը, երբ աշխարհը մի ստութիւն է, երբ մարդուն միայն մի քանի կանգուն կտաւ է հարկաւոր։ Ասիական խաւարի և անշարժութեան մէջ նստած մի ժողովրդի հէնց այսպիսի քարոզներ ինն պակասում։ Աւելացրէք այդ բոլորի վրայ նախասաշարմունքները, առասպելները դեերի, հրաշքների մասին, որոնցով լի է զիրքը, և դուք կիմանաք, թէ ինչպիսի դաստիարակ էր «Պղնձէ քաղաքը»։ Դա մերկ ու խաւար հնութիւնն էր, որ տպագրական մամուլի միջոցով նոր լոյս էր գալիս ոչ իբրև գիտնականների ուսումնասիրութեան նիւթ, այլ իբրև ժողովրդական զիրք։ Նա դեռ նոր պիտի լայն շրջանառութիւն գտնէր ժողովրդի մէջ, դեռ նոր պիտի նուածէր կարդացողների և, որ ամենից ցաւալին է, հաւատացողների բազմութիւններ։

Եւ «Պղնձէ քաղաքը» չէր կարող չը հրատարակուել, չէր կարող զրական դանձ չը համարուել մեր մէջ, քանի որ մեր գրագէտ դասակարգի համարացողութիւնները բարձր չէին այդ զրբի իմաստութիւններից։ «Մեծիմասաւ» Գալուստ վարդապետի «Առասաշաւիղը» ցոյց է տալիս, որ մենք «Պղնձէ քաղաքներին» էինք արժանի, որ մենք մեր զարգացողութեամբ դեռ պատկանում էինք այն հին ժամանակներին, երբ գրականութիւնը սուրբերի վարքագրութիւններից և դեերի պատմութիւններից էր կազմուած...

II

Եւ կարելի է զարմանալ, որ այսպէս էինք XVIII դարում։ Կ. Պօլսի հայութիւնը, ինչպէս տեսանք, մռաւ այդ դարը մի ողբալի դրութեան մէջ։ Թերթում ենք նրա պատմութիւնը մինչեւ այդ դարի վերջը, և բայցի կրօնական վէճներից ու երկպառակութիւններից՝ ուրիշ բան համարեած չենք տեսնում։ Մի զարհուրելի աղէտ է դա, որ տեսում է ոչ թէ մի հինգ, տասը տարի, այլ մի ամբողջ դար։ Երևակայեցէք մի այդպիսի ժողովուրդ։ Երևակայացէք նրան՝ կրօնական նուրբ հարցերը ծեծի, բռնութիւնների, մասնութիւնների միջոցով վճռելիս, այն էլ մի այն-

պիսի պետութեան մէջ, ուր բացակայ է արդարադատութիւնը, ուր չը կան հաստատուն օրէնքներ, ուր այսօրուայ արածը կարելի է վաղը ոչնչացնել կաշառքի միջոցով։ Այդ ժողովուրդը կարող էր միայն ընկնել, կարող էր միայն խաւար ֆանատիկութեան մէջ խրուել։ Ել մրտեղից պիտի հաստատուէր նրա մէջ մի լուսաւոր երևոյթ։ Ինչեր էր տեսնում նա և մանաւանդ ինչեր էր կատարում։

1706 թուականին Աւետիք պատրիարքը անյայտացաւ գործունէութեան ասպարէզից։ Ֆրանսիական դեսպան Ֆէրիօլ կարողացաւ մի անլուր և զզուելի բռնութեան զոհ դարձնել այդ մարդուն։ Աւետիքի ասպարէզը առհասարակ փշոտ էր. հեշտ չէր եղուիտների նման թշնամիներ ունենալը։ Հազիւ էր նա մի տարի պատրիարքութիւն արեւ՝ երբ նրան պքսորեցին Կ. Պօլսից (1703)։ Շէլս-իւլ-իսլամ Ֆէյզուլլահը այլ ևս չը կար, և Աւետիքի պաշտպանութիւնը միայն ժողովուրդն էր. յաջորդ տարին ժողովուրդը կարողացաւ վերադարձնել տալ նրան Կ. Պօլսի։ Աւետիքը նորից հագաւ պատրիարքական կապան, բայց այս անգամ էլ երկար չէր նրա իշխանութիւնը։ 1706-ի սկզբում նա նորից դատապարտում է պքսորի։ Համենլով Քիոս կղզին, նա այդտեղից կամենում էր ճանապարհուել երուսաղէմ, որի պատրիարքութիւնն էլ իր ձեռքն էր գցել, բայց ընկաւ թակարդի մէջ։ Նաւը դէպի Պալեստին չը գնաց, այլ դէպի Թրանսիա. այդպէս էր կարգադրել դեսպան Ֆէրիօլը, որ վազօրօք ծրագրել էր պատրիարքի յափշտակութիւնը և այդ նպատակի համար էլ վարձել էր այն իսկ նաւը, որի մէջ մտաւ Աւետիքը։ Հայոց պատրիարքը ափ իշաւ Մարսէլում. այդտեղ նա կալանաւորուեց իբրև յանցաւոր և պահւում էր ամենախիստ հսկողութեան տակ։ Մեծ զգուշութիւններով նա հեռացնուում է մի ամայի տեղ, ուր նրան փակում են մի կաթօլիկ վանքի մէջ. ապա փոխադրում են Պարիզի Բաստիյլ բանտը, ուր Աւետիքը վերջապէս կաթօլիկութիւն է ընդունում, բայց այլ ևս չէ կարողանում վերադառնալ թիւրքիա։

«Գիծ դեսպան» անուն ստացած Ֆէրիօլից^{*)} դժուար չէր սպասել այսպիսի մի գործ, որ բացի զզուելի, բարբարոսական բռնութիւն լինելուց՝ քաղաքական մնձ անհեռատեսութիւն էլ էր։ Խենթ հասկացողութեան արդիւնք էր Աւետիքին անհեռացնելը։ Դեսպանը և նրա գործակից եղուիտները կարծում էին,

^{*)} Ֆէրիօլ, Կ. Պօլսի դեսպանութիւնից հրաժարուելուց յետոյ, խելագարուեց, երբ ալդ բանը յայտնեցին մեծ վէդիրին՝ սա ասաց. ճնա դիժ էր, երբ ալսուել եկաւաւ

թէ ամեն ինչ կարգի կը դայ, երբ մէջ տեղից կը վերանայ անխնայ հալածող պատրիարքը: Բայց դա մի մեծ մոլորութիւն էր. այդ բռնութիւնը միայն առատ իւղ էր ածում կրակի վրայ: Լուսաւորչական հայերը աւելի ևս կատաղեցին, աւելի ևս անհաշտ ու անխնայ դարձան: Եւ Կ. Պօլսում բացուեցին տեսարաններ, որնք քստմնելի տպաւորութիւն են թողնում այժմ էլ, դարեր անցնելոց յետոյ...

Ճիշտ է, Ֆէրֆօլին աջողուեց Աւետիքի տեղ պատրիարք նստեցնել կեսարացի Սարը-Մատթէոս վարդապետին, որ համարեա կաթոլիկ էր, բայց հայերը երկու ամսից աւելի չը պահեցին այդ պատրիարքին: Աւետիքը ունէր զօրեղ կուսակցութիւն, որ գիմումներ արեց թիւրք կառավարութեան, խնդրելով վերադարձնել տալ բռնութեան դոհին իր անյայտ պքսորատեղից, ինչպէս նաև ինդրեց Էջմիածնի Աղէքսանդր կաթողիկոսից՝ յատուկ պատգամաւորութիւն ուղարկել Հոօմ և հասկացնել պապին, թէ չէ կարելի հայ եպիսկոպոսին կապել ու բանտարկել և թէ պէտք է վերջ դնել «ախթարմաների» (հայկաթօլիկների) արարքներին. մի և նոյն ժամանակ, նկատի առնելով համարձակ ու անխնայ կոռու անհրաժեշտութիւնը, Կ. Պօլսի հայերը ինդրում էին մի քանի ժիր վարդապետներ ուղարկել Կ. Պօլիս, յատկապէս Յովհաննէս վարդապետ Զմիւռնացուն: Կաթողիկոսը կատարեց ինդրիքի այս վերջին կէտը:

Պատրիարքները այժմ ամիսների համար էին պաշտօնի կանչւում: Մարտիրոս Քիւհանճին, որ Աւետիքի փոքրաւորն էր, չորս ամիս պատրիարքութիւն արեց և տապալուեց Աւետիքի հակառակորդների ձևոքով. Նրան յաջորդեց Միքայէլ Խարբերդցին, բայց մնաց պաշտօնում միայն ութ ամիս ու ստիպուած եղաւ տեղի տալ Սահակ վարդապետ Աբուչեխցուն: Սրան էլ ութ ամսուայ պատրիարքութիւն էր վիճակուած: Այդ միջոցին Էջմիածնից Կ. Պօլիս հասան երկու հոգևորականներ: Մէկը Աւետիքի կուսակցութեան ինդրած Յովհաննէս Զմիւռնացին էր, որ և իսկոյն պատրիարք դարձաւ ու բաց արեց կոռու սասպարէզ, զերազանցելով նոյն իսկ Աւետիքին: Ուրիշ տեսակի մարդ էր միւս հոգևորականը, որ Էջմիածնի նուիրակի պաշտօն ունէր և կոչւում էր Աստուածատուր Աղաւնի: Սա Զուղայի վանքիցն էր, Կ. Պօլիս ուղարկուել էր իրեն զիտուն ու հմուտ մարդ: Եւ իրաւ, ինչպէս երեւում է, նա Զուղայի դպրոցի վերջին աշակերտներից մէկն էր՝ փոխանակ եղբայրասպան կոիւների մէջ նետուելու, նա աւելի կրթական գործով զբաղուեց: Աստուածատուր Աղաւնին էր, որ իր հետ տարաւ Աղաթանգեղոսի պատմութիւնը և տպագրել տուեց Կ. Պօլսում:

Այդտեղ էլ նրան աշակերտեց Բաղդասար Դպիրը, որ Կ. Պօլսի յայտնի գրագէտներից մէկը դարձաւ:

Յովհաննէս Զմիւռնացու հետ իշխանութեան զլուխը բարձրացաւ Աւետիք պատրիարքի կուսակցութիւնը, որ սկսեց սոսկալի կերպով վրէժ հանել իր հակառակորդներից: Նորից հալածանքը կաթօլիկ հայերի դէմ կատաղի կերպարանք ընդունեց: Այդ դժբախտ ժամանակներում կոպիտ, վայրենի կըրքերն էին միայն զարգանում: պակասում էին խաղաղութիւն, եղբայրութիւն քարոզողները: Պակասում էին ոչ թէ այն պատճառով, որ չը կային խաղաղութեան և եղբայրութեան օգուտները հասկացող անհատներ, այլ այն պատճառով, որ այդպիսի մարդիկ ամենից շատ դժբախտ էին. խօսել հաշտութեան խօսք՝ նշանակում էր ենթարկուել մեծ վտանգի: Ահա վայրենի իրարանցումների այդ ժխորի մէջ մի քահանայ, Կոմիտաս Քէօմիւրճեան, Երեմիա Զէլէպիկ^{*)} եղբայրը, ձայն է բարձրացնում և սկսում է քարոզել սէր և խաղաղութիւն: Կոմիտաս քահանան իր նշանաւոր եղբօր նման զրասէր էր և 1705 թուականին հրատարակել էր ոտանաւորի վերածած «Գործք առաքելոցը». Ժողովուրդը յօժարութեամբ ականջ է գնում նրա քարոզներին. այդքանը բաւական էր, որ Կոմիտաս քահանայի չորս կարգակիցները նախանձով և ատելութեամբ վառուէին նրա դէմ: Կրքերի բորբոքումը ծայրայեղութեան այն աստիճանին հասաւ, երբ հարկաւոր էր արիւն՝ ամերութային բարբարոս հակումները յագեցնելու համար: Այդ արիւնոտ դոհերը պիտի պատրաստէր Յովհաննէս պատրիարքը: Եւ այս հոգենորականը չը քաշուեց այդ դերից, սկսեց պատրաստութիւններ տեսնել:

Հաւաքում են շատ փող: Աջողութեան առաջին պայմանն է դա. հարկաւոր է կաշառել թիւքը պաշտօնեաներին: Ժողովուրդը տալիս է արիւնոտ գանձանակը, և ոսկինսերով լի քսակներին յենուած՝ Յովհաննէս Զմիւռնացին դիմում է մեծ վէզիրին, մատնում է քառասուն մարդկանց, որոնք բոլորը կաթօլիկներ չէին, առնում է հրաման այդ ցուցակագրած մարդկանց կալանաւորելու մասին: Բոնուում են մօտ քսան հոգի, մնացածները փախչում են: Այս բոլորը անսովոր բաներ չեն Կ. Պօլսում: առաջին անգամը չէ, որ կրօնական վէճերի պատճառով հայերը փակւում են թիւքաց բանակրում, ուղարկուում են թիւրանները, կորցնում են ամեն ինչ: Բայց Յովհաննէս պատրիարքը վճռում է սովորականից շատ առաջ դնալ. պատրիարքարանը

^{*)} Հայկակ. Տպագր., I, եր. 266—279.

կաղմել է ինն մարդկանց ցուցակ և վճռել է գլխատել տալ զրանց: Դա մի կատարեալ ինկվիզիցիա է հայոց եկեղեցու մէջ: Մի քանի մանրամասնութիւններ այդ զբուելի ոճրագործութեան պատմութիւնից մենք չենք կարող բաց չանել մեր ընթերցողի առաջ, որպէս զի ցոյց տանք, թէ ինչ չափերի էր համառում հայ կղերի կատաղութիւնը և նրան գժբախտ էր հայ ազգի գրութիւնը:

1707 թուականի հոկտեմբերի 22-ին, երեքշաբթի գիշերը լոյս չորեքշաբթի, վերև յիշած չորս քահանաները և մի քանի աշխարհականներ խումբ կաղմած մօտեցան Կոմիտաս քահանայի տանը: Խմբի մէջ էր և ինքը, Յովհաննէս պատրիարքը, որ առկայն չէր համարձակուել կրօնաւորական գգեստով կատարել այդ զիշերային արշաւանքը և հաղել էր սպասարորի զգեստ^{*}): Հայերը, որքան էլ շատուոր լինեին, չեն կարող մենակ գլուխ բերել իրանց մտադրութիւնը, ուստի վերցրել էին իրանց հետ թիւրք դատաւորի ծառաներին: Նրանք ուղում էին խորտակել տան դուռը, բայց Կոմիտաս քահանան դուրս եկաւ. և իրան յանձնեց հայ ինկվիզիտորների ձեռքը: Նրան կապեցին և տարան: Միւս օրը պատրիարքը ներկայացաւ մեծ վէղիրին և բացէ ի բաց մատնեց Կոմիտասին, ասելով թէ նա է այն խմբի պարագլուխը, որ պատրաստում է ապատամբութիւն թիւրքերի գէմ և հէնց այդ պատճառով էլ միացել է Փրանկների հետ, լրաեսում է ամեն ինչ: Իբրև ապացոյց առաջ է բերեսում Աւետիք պատրիարքի անհետացումը և նրա փոխարէն Սարը-Մատթէոս եպիսկոպոսի պատրիարքանալը: Սկսում է հարց ու փորձ. մնջադրուազները արդարանում են, բայց պատրիարքարանի պատրաստած սուտ վկանները հաստատում են մեղադրանքը: Վճռում է գլխատել ինն մարդկանց. զրանց հետ է և նախկին պատրիարք Սարը-Մատթէոսը, որ առաջ Սիսի կաթողիկոս էր եղել:

Խսկոյն դահճներ են ուղարկւում մահապարտների յետեւ փեց և բացւում է աղջտալի տեսարան: Հաւաքուել է մեծ բազմութիւն, գլխաւորապէս օտարներից—յոյններից, հրէաներից, թիւրքերից: Բարձրացել է սուտ ու շիւան. լաց են լինում մահապարտները, ընկնում են դահճների ոսները և աղաչում են խնայել իրանց. լաց են լինում նրանց ազգականները, վերջապէս անտարբեր չեն նոյն իսկ օտարները, նրանք էլ լաց են լի-

*) Զամշեան, Գ., եր. 752: Այս բոլոր մանրամասնութիւնները մենք վերցնում ենք Զամշեանից, որ միակ աղբիւրն է՝ այդ Ժամանակների գործերի հետ ծանօթանալու համար և որի սպատմուածքները չեն հերքուած մինչեւ այժմ:

նում: Բայց ազատութեան մի պայմանն կայ միայն—ընդունել մահմեղականութիւն: Այս ու այն կողմից համոզում են մահապարտներին կատարել այդ պայմանը, կատարել գոնէ առերես, ազատուել մահից. իսկ շուարած թշուառները միայն բարձրաձայն լաց էին լինում և չը գիտէին թէ ինչ անեն: Շուարած չէր, լաց չէր լինում միայն Յովիաննէս պատրիարքը, որ իր խորհրդակիցներով եկել էր տեսնելու, թէ ինչպէս են սպանում իր հակառակորդներին: Պատահաբար զիսատման տեղով անցնում էր վէզիր-քեհեասին (մեծ վէզիրի փոխանորդը). Նայելով այդ տեսարանին, նա չը կարողացաւ պահել իրան, մօտեցաւ պատրիարքին, նախատեց նրան և նոյն իսկ լաց էլ եղաւ: Այդ նախատինքն էր շրջում և հաւաքուած օտարների բազմութեան մէջ. նախատում էին ամբողջ ազգը, որի անդամները այսպիսի սոտր մատնութիւններով են կուռում միմեանց դէմ:

Դահիճները կատում են մահապարտների ձեռքերը և մերկացնում են իրանց սրերը: Օրհասական բոպէին Սարը-Մատթէոս եպիսկոպոսը, Սիօփ կաթողիկոս և Կ. Պօլի հայոց պատրիարք, բարձրացնում է ձեռքը և ընդունում է մահմեղականութիւն. Նրա օրինակին հետեւում են և միւնները: Ամենքը ազատուած են մահից: Բայց ինչ օգուտ ստացաւ Յովիաննէս պատրիարքը: Նա գեռ ունի զոհ. գեռ մնում է կոմիտաս քահանան: Սրա և սրա երկու ծանօթների վրայ է նա թափում իր ամբողջ կատաղութիւնը: Պէտք է թիւքերի ձեռքից կորզել այս մարդու մահուան դատավճիռը: Դատաստան է կազմուում նախ մեծ վէզիրի մօտ, և պատրիարքը մահ է պահանջում. բայց քահանան արիաբար հերքում է իր վրայ բարդած մեղադրանքները: Մեծ վէզիրը մահուան արժանի յանցաւորութիւն չէ գտնում քահանայի մէջ և ուղարկում է նրան դատաւորի մօտ. սա էլ նոյնպէս դատեց: Տեսնելով որ ուրիշ ճար չը կայ՝ պատրիարքարանը սուտ վկաներ առաջ քաշեց, որոնք մեղադրեցին քահանային և նրա երկու ծանօթներին քրէական ծանր յանցանքների մէջ: Երեքն էլ մահուան դատապարտուեցին: Եւ հոկտեմբերի 25-ին զիսատման տեղում նորից հաւաքուեց բազմութիւնը: Այս անգամ զոհը չազատուեց. Նրան շատ համոզեցին կեանք գնել մահմեղականութիւն ընդունելով, բայց իզուր: Բարձրացաւ դահճի սուրը և կոմիտաս քահանայի գլուխը կտրուեց: Անմեղ արիւնը թափուեց եղբայրասպան կոփէը պսակելու համար. հայոց ազգի ամբողջ զժրախտութիւնն էր պարունակուած այդ արիւնի մէջ: Քահանայի արիւնը սարսափեցրեց նրա երկու ընկերակիցներին, որոնք ուշաթափուեցան և վայր ընկան. այդ զրութեան մէջ էլ նրանց հազցրին թիւքի շորեր. Նրանք մահմեղականու-

թիւն ընդունած համարուեցան և ազատութիւն ստացան։ Այնուհետև զվաստուած քահանայի մարմինը մատնուեց բարբարոսական անարգանքի։ Դիմակը երեք օր ընկած էր անթաղ։ Պատրիարքի մարդիկ խնդրեցին մեծ վէպիրից, որ չը թաղուի այդ դիմակը, այլ զցուի ծովի մէջ։ բայց վէպիրը մերժեց այդ խնդիրը և թոյլ տուեց բարեկամներին թաղել դիմակը։ Սակայն Յովհաննէս Զմիւռնացին թոյլ չը տուեց, որ հայքահանաները կատարեն թաղման արարողութիւնը։ Այն ժամանակ յունաց պատրիարքը բազմաթիւ հոգևորականներ ուղարկեց, որոնք մեծ հանգէստվ թաղումը կատարեցին։ Նահատակ քահանան սուրբ հըռչակուեց։ Եւ Քրանսիական գեսապանը մեծ փող ծախսելով, հանել տուեց նրա մարմինը գերեզմանից և ուղարկեց Ֆրանսիա։

Յովհաննէս Զմիւռնացին միայն այդ դահճութիւնը կատարելու և պատմութեան մէջ սեանալու համար էր պատրիարքութեան կանչում։ Կոմիտաս քահանայի արիւնը յագեցրեց մարդկանց գաղանացին հակումները և Զմիւռնացին, տաճն և չորս ու կէս ամիս պատրիարքութիւն անելուց յետոյ, տապալունց, իսկ նրա տեղը նորից բազմեց Սահակ Արուչեխցին։ Այս անդամ այս մարդուն մինակուեց մի համարեա արտակարգ բախա։ Նա պատրիարքութիւն արաւ ամրողջ հինգ տարի և երեք ամիս։ Մօտ չորս տարի խաղաղութիւն տիրեց Կ. Պօլսում։ Բայց Արուչեխցին չը կարողացաւ զիմապրել յուղուող կրքերին և վերջ ի վերջոյ նա էլ, իր նախսորդի նման, գուրս եկաւ իր ազգակիցներին հալածելու և տանջելու։ Պատճառաբանութիւնը միշտ մի և նոյն էր. կաթօլիկ հայերը ֆրանկներ էին դառել, չեին յաճախում հայոց եկեղեցիները, հետեարար նրանք թիւրքերի հաւատարիմ հպատակներ չեն, պետութեան թշնամիններ են։ Դարձեալ բայցուեցան թիւրքաց բանտերի դռները մատնուած հայերի առաջ, դարձեալ թիւրանները լցուեցան այդ «յանցաւորներով»։ Շատերը փախան Կ. Պօլսից։ Բայց գանուեցան և այնպիսիները, որոնք մի յուսահատական փորձ արին՝ հայոց պատրիարքարանի ահաւոր զէնքը ջախջախսելու համար։ Այդ զէնքը մատնութիւնն էր, որի միջոցով զրգուում էր թիւրք կառավարութեան կասկածուութիւնը կաթօլիկ հայերի հաւատարիմ հպատակութեան վերաբերմամբ։ Եւ ահա մի խումբ մարդիկ ներկայանում են մեծ վէպիրին. ամեն մէկը վզից կախել է իր հարկաթուղթը և մի հատ էլ շղթայ։ Եւ ասում են այդ խեղճերը. — նայեցէք ինչ ֆրանկներ ենք մենք. ահա մեր հարկերի թուղթը, չը որ մենք միշտ վճարում ենք մեր հարկերը, չը որ մենք տէրութեան ըստ արուկներն ենք։ Մեծ վէպիրը համոզւում է որ ճիշտ, այդ մարդիկ նոյն օսմանեան հպատակներն են, ինչպէս և ու-

րիչները. արձակում է բողոքաւորներին և այնուհետև ուշադրութիւն չէ գարձնում պատրիարքարանի մատնութիւնների վրայ: Ինքը, Սահակ պատրիարքն էլ, շուտով փորձեց իր վրայ, թէ ինչ բան է այն իսկ մատնութիւնը, որին ինքն էր դիմում: Թէքիրդաղի հայոց առաջնորդը հակառակուեց նրա դէմ և սկսեց մեղադրել, թէ նա ինքը ֆրանկացել է. այդ մեղադրանքի մէջ սա այնքան առաջ է գնում: որ Սարգիսը հեռացնում է պատրիարքութիւնից:

Սարգսի յաջորդ Յովհաննէս Գանձակեցին, որ մինչև պատրիարք գառնալը կ. Պօլսի հայցթուխների խանութներում ասլրող մի վարդապետ էր, շարունակեց հալածանքները նոյն մատնութիւնների միջոցով: Բայց, ինչպէս տեսանք, այդ զէնքը բժացել էր, և հայոց պատրիարքարանը այն աստիճան անկման էր հասել, որ թիւրք կառավարութիւնը ոչնչ ուշադրութիւն չէր գարձնում, երբ նա մատնացոյց էր անում հայ-կաթոլիկների վրայ, իբրև պետութեան սպառնացող մի ապատամբ ոյժի վրայ: Եւ Յովհաննէս Գանձակեցին գուցէ ոչ մի աջողութիւն չունենար, եթէ այս անգամ իրանք, կաթոլիկ հայերը, չը բարձրացնէին խոռվութիւն: Նրանք կամեցան առանձին պատրիարքութիւն հաստատել, բոլորովին անջատուել հայ-լուսաւորչականներից: Գործի զլուկս էր անցել կ. Պօլսի լատին եպիսկոպոսը. խոստովանահայրերը ժողովրդից փող հաւաքեցին թիւրք պաշտօնեաններին կաշառելու համար: Յովհաննէս պատրիարքը այդ պատրաստութիւնների մասին իմաց տուեց մեծ վէզիրին, որ այս անգամ չէր կարող անտարբեր մնալ. առանձին հայ-կաթոլիկ պատրիարքութիւն ստեղծելը հակառակ էր թիւրքաց հայեացքներին: Մեծ վէզիրի հրամանով կալանաւորուեցան հայ-կաթոլիկների պարագլաւս եպիսկոպոսները: Սկսուեց դատաստան. հայ-կաթոլիկ եպիսկոպոսներից մի քանիսը ահից մահմեդականութիւն ընդունեցին, իսկ որոնք չը կամեցան այդ գնով ազատութիւն ձեռք բերել՝ ուղարկուեցան թիւրքանները: Հայ ժողովուրդը փողոցում սպասում էր մեծ վէզիրի դատավճոին. երբ երեք հայ-կաթոլիկ եպիսկոպոսներ դուրս բերուեցան իբրև դատապարտուածներ և տարուեցան դէպի թիւրքանները, լուսաւորչական ամբոխը ընկաւ նրանց յետեից, թքում էր նրանց վրայ, հայհոյում էր նրանց. իսկ կաթոլիկ հայերը կորագլուխ, ամօթահար տուն վերագարձան:

Կարծես քիչ էր այն ամենը, ինչ կատարւում էր կ. Պօլսում, Յովհաննէս պատրիարքը հրաման ստացաւ մեծ վէզիրից, որ գաւառներում էլ հալածանքներ սկսուեն կաթոլիկ հայերի դէմ: Թիւրքիայում ասլրող այն բոլոր հայերը, որոնց մասին

կասկած կար թէ կաթօլիկ են, պիտի ձերբակալուէին։ Տրապի-
զնում, Թօփաթում, էրզրումում և ուրիշ շատ տեղերում բան-
տարկուեցան հայ-կաթօլիկ հոգևորականներ և բազմաթիւ աշ-
խարհականներ։

Այսպէս ահա մի շարք խաւար ու զզուելի գործերի միջու-
ցով, տարիների ընթացքում, աւելի և աւելի ամրապնդում,
արիւնոտ կերպարանք է ստանում այն կատաղի թշնամութիւնը,
որ կար մի և նոյն ազգի երկու կրօնական հատուածների մէջ։
Աւելորդ է ասել, որ այսպիսի երեսյթների վրայ ուրախանալ
կարող էին միայն հայութեան թշնամիները եւ եթէ իրանք,
հայերն էին ամենից սոսկալի թշնամիները իրանց ազգութեան
դէմ՝ դրա պատճառը ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ տգիտութիւնը։
Մի կողմ թողնելով նոյն իսկ ազգային միութեան պառակտումը,
որ կրօնական վէճերի հետեանքն էր, մենք չենք կարող չընդու-
նել, որ երկու կողմերի, այսինքն լուսաւորչական և կաթօլիկ
հայերի համար այդ խոռվաւթիւնները ահեղ աղէտներ էին
հանրամարդկային բարօրութեան և առաջադիմութեան տեսա-
կէտից։ Այսպիսի վայրենութիւնների սովորած մի ժողովուրդ
չէր կարող զարգանալ, առաջ գնալ. նա կը մնար կոյր ֆանա-
տիկոս մի համայնք, որի համար աշխարհում չը կայ ոչ մի բար-
ձր իդէալ։ Պէտք էր որ երկու կրօնների ընդհարումը ընդունէր
աւելի մեղմ, մարդավայել կերպարանք։ Իսկ սրա համար հար-
կաւոր էր կրթութեան լրյու։

Հայոց պատճութեան մէջ քիչ չեն գէպեկը, երբ ընդհա-
նուր դժբախտութեան միջոցին, գուրս են գալիս մարդիկ, ո-
րոնք կրթութեան սպեղանիով սկսում են բժշկել ազգային վէճ-
քերը։ Մենք տեսանք, թէ XVII դարի սկզբում թանձրացած խա-
ւարի մէջ ինչեր արեց Սիւնեաց գալրոցը *): Տեսանք որ այդ
գալրոցից գուրս եկաւ բարեկարգութիւնը, որ Արևելեան Հայաս-
տանի հոգևորականութեան դաստիարակը դարձաւ և պատրաս-
տեց այդ ողբալի ժամանակների համար նշանաւոր գործիչներ։
Սիւնեաց գալրոցը առաջացրեց Նոր-Զուղայի գալրոցը. սրա ա-
ռանձնայատկութիւններից մէկն այն էր, որ այդտեղ Սիւնեաց
գալրոցի հետ միացաւ մի ուրիշ, նոյնպէս նշանաւոր գալրոց, որ
գտնւում էր թիւրքաց Հայաստանում, Բաղէշի վանքերից մէ-
կում։ Մենք տեսանք այս վիրջին գալրոցի ներկայացուցիչներից
մէկին, ճգնաւոր Մելքիսէթ վարդապետին **): Այս միացումից
առաջ եկաւ էջմիածնի գալրոցը։ Կրթական այս հաստատութիւն-

*.) Հայկ. Տպագր., 1, 80—82.

**) Ibid., Եր. 110.

ների ազդեցութիւնը շատ աչքի է ընկնում XVII դարի պատմութեան մէջ. դրանց չնորհիւ է որ Արևելեան Հայաստանը ունի բարեխիղճ, իրանց պարտականութիւնները լաւ հասկացող հոգևորականների մի շարք։ Միայն Կ. Պօլսի հայութիւնը ամբողջ դարի ընթացքում զուրկ էր այդ բարերար ազդեցութիւնից։ Բայց ահա XVIII դարի առաջին քառորդում, այդ, ինչպէս տեսանք, տխուր ու թշուառ ժամանակներում, Բաղէշի դպրոցը գալիս է իր ազդեցութիւնը մտցնելու և Կ. Պօլսի մէջ։ Նա տալիս է պարտաճանաչ առաջնորդներ, սկսում է կրթական շարժում։

Լ Է Օ

(Կը շարունակուի)

Ա.ՄՈՒՆՈՒԹԻՒՆ

(Առողջապահական ետիւդ)

VII

Ժ Ա. Ռ Ա. Ն Գ Ա. Կ Ա. Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ֆիզիկական ու բարոյական ժառանգականութիւն.—Սասավիզմ.—Առաջգնաց ու յետազնաց ժառանգականութիւն.—Ծնողների համանման եւ հակասական յատկանիւթեան փոխանցումն ուրենիլին.—Վայումնի քօրիտան.—Հիւանդական ժառանգ.—Ժառանգականութիւն ոյժը.—Ըստրոպուրեան օրէնքը ամսաւութեան մէջ — Ժառանգարար փոխանցնայ հիւանդականութեան օրէնքները.—Պէտք է բացաւրել ժույրդին հիւանդական ժառանգականութեան օրէնքները:

«Պտուղը ծառից հեռու չի ընկնի». «Ծառը արմատից է փառւում»:

Փողովրդի խորիմացութիւնը այս առածներով է արտայայտում ժառանգականութեան մեծ օրէնքը:

Զաւակը նմանում է ծնողներին:

Նա արդիւնք է երկու ծնողների արմատական յատկութիւններին, նրանց կենսական ոյժի պառւղն է:

Ցեղի յատկանիշները կարմիր թելի նման անցնում են սերունդների միջով, կազմելով նրանց գլխաւոր բընորոշ յատկագոյնը:

Մարդկային ցեղը, ինչպէս և կենդանիներինը, ինչպէս և բոյսերինը, մի և նոյն օրէնքով է զեկավարւում — ժառանգականութեան օրէնքով:

Առողջ ծառը առողջ պտուղներ կը տայ, հիւանդը — հիւանդ:

Այս է ժառանգականութիւնը իր ամենապարզ արտայայտութիւններով։

Մենք չենք կարող այստեղ մանրամասնութիւնների մէջ մտնել ժառանգականութեան բարդ թէօրիաների մասին։ Այդ մեզ շատ հեռու կը տանէր և մեր նպատակից դուրս կը լինէր։

Կ'ասենք միայն հետեւեալը.

Ժառանգականութիւնը լինում է ժիզիկական և բարոյական կամ հոգեկան։

Թիզիկականը վերաբերում է մարմինի կազմին և ձեխն։ Յաղթանդամ ծնողներից կը սերուեն լաւ կազմուածքով զաւակներ։ մեծ քթանի ու սև մազերով հօր զաւակը կարող է նոյնպէս մեծ քիթ ու սև մազեր ու նենալ։

Հոգեկանը վերաբերում է սերնդի ընդունակութիւններին, բարոյականութեան, առհասարակ մտաւոր աշխարհին. խելագար, ընկնաւոր ծնողի զաւակը կարող է ներփային լինել և նոյն հիւանդութիւններն ստանալ։ Մեծ, հանճարեղ երաժշտի, բանաստեղծի որդին նոյն ընդունակութիւնները կարող է ունենալ և այլն։

Հենց միայն այն մեծ օրէնքը, որ ամեն կենդանի իր նմանն է ծնում և ոչ ուրիշ—այդ ժառանգականութեան ամենախոշոր յայտնութիւնն է։

Ամուսիններից իւրաքանչիւրը կարող է իր յատկանիշները տալ զաւակին։ Բայց ըստ գիտենք, թէ ումյատկութիւններն են դերակառում որդու մէջ.—հօրը թէ մօրը։

Մի ընդհանուր կարծիք կայ, որ սակայն դեռ ապացուցուած չէ, այն է, թէ տղան աւելի նմանում է մօրը, իսկ աղջիկը—հօրը։ Յաւակցաբար այս մասին մենք բաւարար հետազոտութիւններ չունենք։

Կայ և ատավիզմ—նախանմանութիւն, երբ ժառանգական յատկանիշները թոշում են մի սերունդ, օրինակ, անցնում են ոչ որդուն, այլ թոռանը։ Ատավիզմը ահագին դեր է խաղում հիւանդական ժառանգութեան մէջ։

Յաճախ ծնողները առողջ են, այն ինչ որդիքը մի որ և է արատ ունեն, կամ ներփային հիւանդութեան տէր են, կամ բարակացաւոտ ու սիֆիլիսոտ:

Նատ ընտանիքների մէջ հիմնական բնորոշ գծերը համարեա անփոփոխ անցնում են մի քանի ուերունդներ միջով. այսպէս յայտնի են Նապօլէօնների պատմական դիմագծերը: Բայց ընդհանրապէս ամուսնութիւնների միջով տոհմային յատկանիշները կարող են փոփոխուել—սաստկանալ կամ նուազել:

Առաջին գէպքում (երբ յատկանիշները սաստկանում են) ժառանգականութիւնը կոչում է առաջգնաց կամ պրօգրեսիվ, երկրորդում յետագնաց կամ րեգրեսիվ: Ամուսնութեան մէջ ամուսիններից իւրաքանչիւրը իր մի քանի յատկութիւնները մտցնում է նոր էակի կազմի մէջ: Եթէ այդ յատկութիւններն ունի և միւս ամուսինը՝ պէտք է սպասել, որ որդու մէջ նրանք կ'արտայայտուեն աւելի ուժեղ կերպով, աւելի պարզ, աւելի սաստկացած, քան ծնողներից ամեն մէկի մէջ:

Այսպէս, օրինակ, եթէ հայրն ու մայրը, երկուսն էլ սեւամորթ են, կամ մեծ քթանի են, հաւանական է, որ որդիքը աւելի ևս ու դուրս գան և աւելի մեծ քիթ ունենան, քան ծնողներից իւրաքանչիւրը:

Այս օրէնքը աւելի ևս պարզ է և ապացուցիչ հիւանդական ժառանգականութեան մէջ:

Օրինակ. եթէ երկու ծնողներն էլ տուքերկուլող (բարակացաւ) ունեն, նրանց զաւակը աւելի տրամադրուած կը լինի բարակացաւ ստանալու, քան եթէ նըրանցից մէկը միայն հիւանդ լինէր:

Հիմա վերցնենք հակառակ դէպքեր, երբ ծնողների յատկանիշները ոչ միայն համանման չեն, այլ ուղղակի հակառական են եւ միմեանց ոչնչացնում են:

Սեւամորթ տղան ամուսնամում է շիկահեր աղջկայ հետ.—զաւակները լինուիք են (ընդհանրապէս) միջակ գոյնի—շափանակագոյն: Բարձրահասակ մարդը և կարճահասակ կինը կը տան միջահասակ որդիքը: Մեծ քթանի հօդ

ու փոքր քթանի մօր զաւակը կարող է միջակ քիթ ու նենալ և այլն և այլն:

«Բաւական է նայել մեր շուրջը, ասում է մի գիտնական, որպէս զի համոզուենք, թէ մաքուր տիպեր շատ քիչ կամ բոլորովին չը կան: Ամեն քայլափոխում հանդիպում ենք ու մազերով ու բացդոյն աչքերով մարդկանց ու կանանց. տեսնում ենք երկար դէմքեր, մինչդեռ գլուխաները կլոր են, կամ այնպիսի դիմագծեր, որոնք կարծես ուրիշ դէմքերի համար էին ստեղծուած և պատահաբար են կպել այս դէմքին: օր. չափազանց կարճ ըլթ, չափազանց հաստ ծնօտ: Մի քանիսների գլուխը չափազանց մեծ է, համեմատելով հասակին, միւսների թևերն ու ոտներն են չափազանց երկար: Պատահում է— փոքր գլուխ հաստ պարանոցի վրայ, կամ անհամաչափութիւն մի և նոյն մարմնամասի երկու կէսերի մէջ— քթի մի կողմը աւելի կարճ է, քան միւսը, քթի միջապատը ծուռն է, աչքերը զանազան գոյն ունին, կամ դրուած են անհամաչափ (չափազանց մեծ կամ փոքր) բների մէջ. որքան յաճախ են պատահում անհամաչափութիւն գանգոսկրների ու կոնքի ոսկրների մէջ»:

Ո՞վ չէ տեսել այնպիսի դէմքեր, որոնց մի կողմը միւսից աւելի երկար է ու չէ նմանում միւսին:

Այս բոլորը հետեւանք է ժառանգականութեան այն օրէնքին, որով ծնողներից իւրաքանչիւրը կարող է իր յատկանիշներից իր որդուն տալ: Սակայն միշտ այսպէս չէ լինում:

Երբեմն զաւակներից մէկը կարող է պարզապէս ժառանգել միայն հօր կամ միայն մօր յատկանիշները ամբողջովին, առանց նուազման, կարծես միւս ծնողից ու չինչ ժառանգած չը լինի:

Օրինակ. բարակացաւոտ հօր մի աղջիկը հիւանդանում է այդ ցաւով, թէև մայրը բոլորովին առողջ եղած լինի, այն ինչ միւսը բոլորովին առողջ է մնում: Ուրեմն առաջինը ստացել է միմիայն հօր հիւանդական ժառանգութիւնը և մայրը նրան ոչինչ չէ տուել, այն ինչ երկրորդը

ստացել է մօր առողջ ժառանգութիւնը, և հօր հիւանդական սաղմերը չեն զարգացել նրա մէջ:

Եւ, յիրաւի, երբեմն բաւական է, որ ծնողներից մէշ կը հիւանդական մի որ և է յատկանիշ ունենայ, զաւակներից մէշ կամ մի քանիժները ամբողջովին կարող են ժառանգել այդ հիւանդութիւնը, չը նայելով որ միւս ծնողը բոլորովին առողջ է:

Հետևաբար հիւանդու տղամարդը ամուսնանալիս չը պէտք է մխիթարէ կամ արդարացնէ իրան նրանով, թէ իր ամուսինը առողջ է և ուրեմն սերունդն էլ առողջ կը լինի: Նա պէտք է հասկանայ, որ իր բոլոր որդիքը կարող են հիւանդու ծնուել:

Վայսմանը, իր հետազօտութիւնների հիման վրայ, ճշմարիտ է, եկել է այն եզրակացութեան, որ ստացական յատկանիշները չեն անցնում ժառանգաբարք: Օրինակ, ոտք կամ թեր կտրած մարդու որդին անոտ ու անթեւ չէ լինում, կամ կուրացածից կոյր չէ ծնւում: Նա փորձեր է արել, կտրել է դաշտամկերի պոչերը, յետոյ սրանց ձադերինը, թուներինը և այլն մինչև մի քանի սերունդներ, բայց դարձեալ նոր ծնուղները պոչեր ունենին:

Սյապիսի փորձերի իսկի հարկ չը կար, ինչպէս իրաւացի նկատում է պրօֆ. Զիմը, քանի որ յայտնի են համանման դէպքեր մարդկանց մէջ ևս. օրինակ. չը նայելով դարերի ընթացքում կատարուած թշփատման, հրէաները թշփատ չեն ծնւում:

Սակայն կասկած չը կայ, որ որոշ տեսակի հիւանդութիւններ (թէև նրանք ստացական լինեն և ոչ ժառանդական) կարող են փոխուել սերնդից սերունդ:

Մրանք այնպիսիներն են, որոնք հարուածում են մարդուս ամբողջ կազմուածքը, եւ ոչ թէ մի անդամը կամ մի մասը:

Եթէ հայրը կոտրուած ուս ունի, կամ մի կոյր աչք, զաւակները չեն ստանայ, որովհետեւ դրանք ընդհանուր

հիւանդութիւններ չեն, այլ մարմնի մի մասի տկարութիւն են, կամ արատ:

Ընդհակառակը, եթէ հայրը արբեցող է, կամ բարակացաւ ունի, այսինքն, երբ նրա ամբողջ օրգանիզմը թունաւորուած է ալկօհոլական կամ բարակացաւի թոյնով, այն ժամանակ ահադին հաւանականութիւն (եթէ ոչ հաւաստիութիւն) կայ, որ սերունդները հիւանդ կը լինեն:

Ուրեմն մեր ժառանգականութեան թէօրիայով, ժառանդաբար անցնում են այն հիւանդութիւնների սաղները, որոնք հարուածում են ծնողների ամբողջ կազմուածքը, բայց արագընթաց են, հետք չեն թողնում օրդանիզմի վրայ: Այսպիսիներն են բոլոր սուրվարակիչ կոչուած հիւանդութիւնները (խօլերա, ժանտափստ, տիֆ, քութէշ, դիֆթերիտ, կարմրուկ, ծաղիկ և ուրիշները):

Վի ուրիշ պայման ես: Այս հիւանդութիւնները պիտք է երկարաւել (չրոնիական) լինեն: Սրբնթաց հիւանդութիւնները, որոնք նոյնպէս թունաւորում են ամբողջ կազմուածքը, բայց արագընթաց են, հետք չեն թողնում օրդանիզմի վրայ: Այսպիսիներն են բոլոր սուրվարակիչ կոչուած հիւանդութիւնները (խօլերա, ժանտափստ, տիֆ, քութէշ, դիֆթերիտ, կարմրուկ, ծաղիկ և ուրիշները):

Վարակիչ հիւանդաբեր թոյնը, մտնելով մարդուս արեան մէջ, սոսկալի արագութեամբ աճում ու տարածում է ամբողջ մարմնի մէջ, թունաւորելով նրան. մարդս հիւանդանում է: Ապա մի քանի ժամանակից յետոյ (մի քանի օր կամ մի քանի շաբաթ) հիւանդը կամ մեռնում է, կամ թոյնը ոչնչանում է մարմնի մէջ, դուրս մղում, և հիւանդն առողջանում:

Այսպէս ամեն ինչ վերջանում է: Յարատե հիւանդութիւնների մէջ թոյնը, ընդհակառակը, կամաց-կամաց, երկար ամիսների ու տարիների ընթացքում, քանդում է մարդուս կազմուածքը և հիւանդացնում է նրա բոլոր օրգանները: Եւ քանի որ ապագայ սերնդի սաղմերը իրանց մէջ պարունակում են ամբողջ կազմուածքից ստացած հիւթեր, հետեաբար իրանք էլ հիւանդուս կը լինին: Այս թէօրիան փորձնականապէս

ապացուցուած է այսօր։ Յայտնի գիտնականներ— Շարրէն և Գրէյ Ենթարկել էին արու և էդ ճագարներին զանազան հիւանդաբեր միկրօբների ազդեցութեան (դիֆթերիտի, բարակացաւի միկրօբների) և տեսել էին, որ սրանց միաւորումը կամ անպտուղ էր մնում; կամ վիժումներ էր տալիս, կամ թէ չէ սատկած ձագեր էր տալիս իսկ եթէ ձագերը կենդանի էլ ծնուռմ էին, նրանք լինում էին վատասերուած, այսինքն թղուկային (քիչ զարդացած), զանազան հրէշաւորութիւնների (անկանոն կազմի) տէր, կամ հիւանդ։

Այս երեելի փորձերը միանդամայն բացատրում են, թէ ինչի հիւանդ ծնողների սերունդը վատասերում է, թէ ինչի սիֆիլիսոտի, բարակացաւոտի, արբեցողի զաւակները հիւանդ են լինում ու երկար չեն ապրում։

«Ժառանդականութիւնը ներկայանում է մեր առաջ այսօր իբրև մի անհասկանալի ճակատագրական ոյժ, որ զեկավարում է մեր վիճակը, հակառակ մեր կամքի ժառանդականութիւնը տուել է մարդկութեանը ամենամեծ բարիքներ և միենոյն ժամանակ նա և անհամար չարիքների պատճառ է եղել։ Խորհողի ու բժշկի ամենամեծ կոչումն է տիրապետել այդ ոյժը, հեռացնել նրա աւերիչ զօրութիւնը, և դարձնել նրան դէպի մարդկութեան բարիքը։ Այն, այս մի մեծ ոյժ է, եթէ լաւ ըմբռնուած է»։

Ի՞նչ չի կարելի անել ժառանդականութեան մեծ օրէնքի ոյժով։

Անասնաբուծութեան մէջ այս օրէնքը ամենալայն դործագրութիւն է ստացել։ Կամենում են լաւացնել մի որ և է կենդանու (խոզի, ոչխարի, հաւի և այլն) ցեղ։ Ի՞նչպէս անեն։

Ընտրում են շատերի միջից մի զոյգ ամենալաւ անհատներ (էդ ու որձ) և աճեցնում։ Սրանց ձագերի միջից նոյնպէս ընտրում են լաւագոյն մի զոյգ, աճեցնում և այլն։ Այսպիսով միքանի սերունդներից յետոյ կը ստացուին ամենալաւ անհատներ։ Այս ընտրական ձևը արդէն

զարմանալի հետևանքներ է տուել Եւրոպայում անասնապահութեան գործում.—կազմուել են կամ ուղղակի ստեղծուել մի շաբթ նոր անասնական ցեղեր. օրինակ, ոչխարի այնպիսի ցեղ, որի բուրդը զարմանալի առատ է և երկար, մինչև գետին է հասնում; կամ ահադին դմակ ունի. խոզեր, որոնք համարեա ամբողջովին ճարպ են գարձած. բարակ, թեթև ձիեր, որոնք կարծես ստեղծուած են արշաւելու համար և այլն:

Մարդկային ցեղը այս տեսակէտից ոչնչով չէ տարբերում միւս կենդանիներից: Մարդիկ էլ յաջող ընտրութիւնով կարող են բարելաւել իրանց սերնդի առողջական վիճակը:

Յաղթանգամ ու գեղեցկատես տղան ու աղջիկը անտարակոյս կը տան ընտիր սերունդ, որ նոյնակէս յաջող ամսւանութիւնների շնորհիւ աւելի ևս կ'աղնուացնէ ցեղը և այլն:

Այս—ընտրովի ամուսնութեան առաւելութիւններն է: Սակայն շատ չեն մեր մէջ այդպիսի միաւորութիւնները:

Մեր երիտասարդներից շատերը, կամ չը հասկանալով ամսւանութեան վեհ նշանակութիւնը, կամ շլաշած օժիտով և խոստացուած հասարակական գիրքով, անուշագիր են մնում գէպի գիտութեան պահանջները, յանդզնում են զօհել ապագայ սերնդի բարօրութիւնը իրանց եսամոլութեանը:

Հիւանդ տղամարդը, որ կապւում է մի անմեղ արարածի հետ, մի հրէշ է, մի մեղապարտ, և ոչ մի գիտում չէ կարող արդարացնել այդպիսի մարդուն: Նա կրկնապատիկ յանցաւոր է, որովհետև ոչ միայն անբախտացնում է իր կողը, այլև ամբողջ սերունդները: Մի ծնող, որ իր երեխային գյում է մի վատառողջ մարդու գիրկը, ուղղակի զոհ է բերում իր զաւակն և իր թռուներին:

Աւելի ևս զազրալի են այդ մարդիկը, եթէ շարժառիթը շահասիրական է:

Ցեղը որոշ դրոշմ ունի և սերունդները ծնուռմ են կնքուած այդ դրոշմով:

Սրատը, հիւանդութիւնը անցնում են իսկօրէն կամ փոփոխուած, սաստկանալով կամ նուազելով, սերըն դից սերունդ մինչև ցեղի կատարեալ սպառումն կամ վերականգնումն:

Ծնողների արատը, հիւանդութիւնը ցեցեր են, ու բոնք ծծում են սերունդների առողջ հիւթերը ու կամաց-կամաց քանդում ամբողջ ցեղի օրգանիզմը:

Հիւանդ ծնողը, որ գիտակցաբար ամուսնում է, մի յանցաւոր է և չարագործ թէ իր տմուսնու, թէ իր սերնդի առաջ:

Շատ գժբախտ արարածներ, յղացած ու ծնած հիւանդութեան մէջ, ամեն իրաւունքով կ'անիծեն իրանց ծնած վայրկեանը, իրաւունք կ'ունենան մէկ օր, տանշանքից յուսահատուած, այսպէս խօսել իրանց ծնողներին. «Դուք կուրացաք փոխադաբաբար. դու, հայր—մօրս օժիտով, իսկ դու, մայր—հօրո հասարակական դիրքով, և չը մտածեցիք, որ անարժան էք ամուսնանալու և ծնող դառնալու. Դուք ամենազազրելի եսամոլներ էք էք և չարագործներ, աւելի անողորմ, քան բոլոր եսամոլները, և աւելի անդութ, քան աշխարհիս բոլոր չարագործները»:

Ցեսնենք, թէ որոնք են ժառանդաբար անցնող հիւանդութիւնները: Սրանք սակաւաթիւ չեն: Մենք կը թուենք միայն կարեորագոյնները.

1. Սիֆիլիս.
 2. Տուբերկուլոզ (բարակացաւ) և լոուախտ (զօլոտուխտ).
 3. Ներվային զանազան հիւանդութիւններ.
 4. Ալկօհոլիզմ:
 5. Բախիտիզմ կամ անդիխական հիւանդութիւն:
 6. Խլիրդ (քայլ) և ուրիշները:
- Այս հիւանդութիւնները չեն բաւականանում ան-

հատին հարուածելով, այլ իրանց աւերիչ ներդործութիւնը անց են կացնում սերունդների վրայ ևս:

Մենք կ'աշխատենք բացատրել մի առ մի նրանց խաղացած գերը ամուսնական կեանքի մէջ:

Մենք յաւակնութիւն չունենք կարծելու, թէ այս փոքրիկ էտիւգը պիտի վրկէ մեր ազգը սպառնացող և արդէն տեղ-տեղ յայտնուած վատասեռման վտանգից: Ոչ, մեր բաղձանքը կատարուած կը լինէր, եթէ կարուզանայինք համողել գոնէ մի քանի աղնիւ երիտասարդների, որ նրանք ազնուաբար վերաբերուեն դէպի ամուսնութեան սրբազան ակտը, որ չը վաճառեն իրանց խիղճը: Մենք երջանիկ կը լինենք, եթէ կարող լինենք համողել մի քանի ծնողների, չը շանալ վեսացուի գիրքով ու հարստութիւնով և չը ծախել իրանց զաւակներին:

Այս ձեռով միայն հնարաւոր է երջանկութիւնը ամուսնութեան մէջ:

Մենք համողուած ենք, որ շատերը անդիտակցաբար են վատ պսակներ անում և իրանց ձեռով իրանց անբախտացնում:

Նրանք մի արդարացումն ունեն, այն է—որ «ոչ դիտեն թէ զինչ դործեն»:

Եւ, յիրաւի, շատերը չեն հասկանում իրանց վարմունքի ահագին րիսկը:

—«Ի՞նչ կայ, մի քանի տարի առաջ սիֆիլիս եմ ունեցել. հօ բժշկուել եմ»:

—«Ի՞նչ վսաս իմ ընտանիքին, թէ մայրս թոքախտից է մեռել. ես հօ առողջ եմ»:

—«Ի՞նչ անենք, թէ ես արբեցող եմ ու արբեցողի որդի. այլ ևս չեմ խմի, պրծաւ գնաց»:

Այսպէս են գատում շատերը:

Բայց այդպէս խօսողները չեն հասկանում, որ ոչինչ չէ կորչում բնութեան մէջ, որ սաղմի մէջ գումարուած են նախնիների յատկանիշները: Չը գիտեն, որ նորածին օրդանիզմը մի հայելի է, որի մէջ անդրադառնում են պապերի ու ծնողների պատկերները:

Այն, ցաւակցաբար ոչինչ չէ խուսափում անողորմ ժառանգականութիւնից: Զը կայ մի յատկութիւն, ֆիզիկական լինի նա թէ բարոյական, որի մասին հաւաստի լինէին, թէ չի անցնի զաւակներին: Մանր է և սպառնալից այս օրէնքը ու խորհել է տալիս մեզ:

Մենք ուզում ենք պարզել ամուսնացողի պատասխանատութիւնը սերնդի առաջ:

Բժիշկը երբեմն ստիպուած է չօշափել շատ փափուկ խնդիրներ, ինչպէս ասում են—ետքաշել ալկովի^{*}) փարագոյրները:

Կար ժամանակ, երբ անվայել բան էր համարւում խօսել վեներական ախտերի մասին, սեռական կեանքի, նոյն-իսկ ծննդաբերութեան մասին:

Զարմանալի լոգիկա էր այդ:

Մարդիկ զգում էին այս խնդիրների մեծագոյն կարերութիւնը, հասկանում էին, որ տգիտութիւնը մայր է ամեն տեսակ չարկը, գիտէին որ վտանգից ազատուելու միակ միջոցը զգուշացումն է:

Ի՞նչպէս պաշտպանի մարդ իրան վատ ցաւից, եթէ չը գիտէ թէ ինչ է նրա իսկութիւնը, ինչ են նշանները, ինչպէս է անցնում նա մէկից միւսին: Ի՞նչպէս կարող է յդի կլնը զգուշանալ յդութեան ու ծննդկանութեան բաղմաթիւ վտանգներից, եթէ չը հասկացնենք նրան, թէ ինչ են այդ մեծ ակտերը և ինչպէս պիտի պահպանէ կինը իրան այդ ծանր ժամանակամիջոցում:

Ոչ, գիտութեան մէջ ոչինչ ամօթալի բան չկայ:

Այդ հասկացել են արդէն ամենքը և բարեբախտաբար այլ ևս ոչ ոքի ամօթիսածութիւնը չէ հարուածւում բժշկական տեղեկութիւներ կարդալով:

Անցած գարի յատկանիշներից մէկն էլ գիտութիւնների և մամնաւորապէս բժշկական-առողջապահական գիտութիւնների ժողովրդականացումն է: Բժշկականու-

*.) Անջարանի խորշը, ուր գրուած է մահակալը:

թիւնը դուրս է եկել իր քրմական խորհրդաւոր շրջանից և գառել է ժողովրդի սեփականութիւն։

Դէն գցենք ուրեմն կեղծ ամօթխածութիւնը և խօսենք ժողովրդի հետ պարզ լեզուով նրա օդափի համար, համոզած լինելով, որ միայն լոյսը կարող է հալածել խաւարը։

Սրա մէջն է հասարակութեան փրկութիւնը։

VIII

ՄԻԹԻԼԻՍ ԵՒ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ

Միթիլիսով վարակուելու ձեւերը.—Միթիլիսի առայացտուրիւնները.—Նրա խաղացած դերը ամուսնութեան մէջ.—Հիւանդին՝ իրան սպառնացող վտանգը.—Ընտանիքին սպառնացող վտանգը.—Միթիլիսի ազգեցուրիւնը ժառանցների վրայ (վիժումն, եւեխանների մահանումն).—Ժառանցական սիթիլիսի արտաւոր եւելոցքները.—Վատասնուումն ու երան նշանները.—Միթիլիսի ազգեցուրիւնը երկորդ սերնի վրայ.—Միթիլիս ունեցողը կարո՞ղ է ամուսնուալ եւ ի՞նչ պայմաններում.—Ֆուրնիլի կինը պայմանները.—Միթիլիսը բուժելի հիւանդուրիւն է.—Բժօկուրեան փրկարա ազգեցուրիւնը.

—Բժօկի դերը ամուսնութեան խնդրի մէջ։

Այն ախտը, որ ամեն ազգեր կնքել են վաս ցաւ անունով, վեներական հիւանդութիւններից ամենասարսափելին է թէ իր հիւանդական երկոյթների ծանրութիւննով, թէ ժառանդականութեան ոյժով։

Սա մի վերին աստիճանի հեշտ վարակիչ հիւանդութիւն է, որ անցնում է հիւանդից առողջին կամ անմիջապէս, կամ մի որ եւ է առարկայի միջոցով, որի վրայ ընկած է վարակիչ թոյնը։

Վարտկման ամենալայն ճանապարհը—մտերիմ սիրային յարաբերութիւններն են կնոջ ու տղամարդու մէջ, այս պատճառով էլ նրանք կոչում են վեներական (Վեներա—սիրոյ չաստուածուհու անունով): Բայց սակաւ չեն և կողմնակի, անմեղ կերպով վարակուելու միջոցներ։

Միթիլիսի արտայայտութիւնները բազմաթիւ ու բազմատեսակ են։ Ամենքից վտանդաւոր արտայայտու-

թիմները, վարակման տեսակէտից, սիֆիլիսական խոցերն են, ջրջուկները. որովհետև սրանցից արտադրուած հեզուկի մէջն է գտնւում սիֆիլիսի վարակիչ թոյնը:

Այսպիսի խոցեր և ջրջուկներ գտնւում են բերանի մէջ, պուշների, լեզուի վրայ յետոյ շեքում, ուրբանի շուրջը և այլն:

Այս պատճառով էլ սիֆիլիսը յաճախ փոխւում է հիւանդից առողջին համբոյրի միջով, կամ երբ մի և նոյն բաժակով են խմում, կամ սիֆիլիսոտի գործածած թաշկինակով ու երեսսրբիչով սրբում և այլն: Սափրիչները վարակուած ածելիով կտրում են առողջ մարդուն ածելիլիս ու թոյնը լցնում նրա արեան մէջ, կամ բաղանկքներում առողջ մարդը նստում է մի նստարանի վրայ, որի վրայ իրանից առաջ մի սիֆիլիսոտ էր նստած, և վարակւում է:

Այս և սրանց նման շատ դէսքեր կարող են յաճախ պատահել և տարածել սիֆիլիսը անզգոյշ մարդկանց վրայ, որոնք կը տանեն այդ ցաւը իրանց ընտանիքի մէջ ու կը հիւանդացնեն իրանց կանանց, երեխաներին և այլն:

Յաճախ վարակումն սկսւում է ծծի երեխայից, ուրին հիւանդացնում է ծծմայրը կամ գայեակը, երեխան վարակում է մօրը, մայրը—հօրը և այլն:

Սիֆիլիսով վարակուելու ճանապարհները անթիւ են. ծառաները, հիւրերը, լուայարաբները, խանութից գնած խաղալիքները, նոյն-իսկ դշքերը և այլն կարող են իրանց հետ թոյն մտցնել ընտանիքի մէջ:

Այս ձեսով է, որ մի բանուոր, երբ այդ հիւանդութիւնն ստանում է բաղաքում, կարող է, վերադառնալով իր գիւղը, կարծ ժամանակում վարակել ամբողջ գիւղը:

Ահա թէ ինչ է այս ցաւի վարակիչ ոյժը:

Հայերի մէջ ևս արագ տարածւում է այդ ախտը, չնորհիւ այն կեանքին, որ վարում են հազարաւոր պանդուխտ բանուորներ արդիւնաբեր քաղաքներում (Բագու, Բաթում, Թիֆլիս): Սրանք հիւանդանում են քա-

զաքներում, և վերադառնալով հայրենիք, տանում են մտցնում ցաւը իրանց ընտանիքի մէջ։ Հիւանդանում են նոյնպէս վաճառականները Ռուսաստանի քաղաքներում, հիւանդանում են ուսանողները, հիւանդանում են անառակ կեանք վարողները։ Մի մեծ սարսափելի հոսանք է սկսուել, հոսանք, որ բացի նրանից, որ պղծում է հայ անարատ ընտանիքը, նաև սպառնում է սերհատել ազգը։

Անկարելի է թուել այստեղ մի առ մի այն բոլոր աւերումները, որ սիֆլիսը կատարում է մարդուս մարմնի մէջ։ Հիւանդանում է մաշկը, որի վրայ դուրս է տալիս զանազան ցաւեր, յուզաթաղանթները (բերանի, քթի, բղի, նրբանի), որոնց վրայ երևում են խոցեր, ջրջրուկներ. յետոյ հարուածւում են ոսկիները (օր. քթի ոսկիները) բոլոր ներքին գործարանները, ուղեղն ու ողնուղեղը։ Սիֆլիսը կարող է կուրացնել, քառացնել, անդամալոյծ գարձնել, կաթուածահարել հիւանդին։ Զը կայ ոչ մի մարմնամասն, որ ազատ մնար սիֆլիսի աւերիչ դորութիւնից։

Մի խօսքով նա քայքայում է հիւանդի ամբողջ կազմուածքը և առաջացնում է հարիւր տեսակ հիւանդութիւններ, որոնք եթէ լաւ բուժուած չեն եղած, կարող են տանել անխուսափելի կերպով դէպի մահ։

Մենք ծանօթացանք այս ախտի իսկութեան հետ։ Այժմ խօսենք այն դերի մասին, որ նա կատարում է ամուսնութեան մէջ։

Մի մեծ մասնագէտ, որի անունը հոչակուած է գիտութեան մէջ և որ սիֆլիսի վերաբերեալ խընդիրներում միանդամայն հեղինակութիւն է, Պարիզի պրօֆ. Ֆուլնիէն, մի շաբք հատորներ ունի դրած այս հիւանդութեան մասին, և նրանց մէջ շօշափել է նաև ամուսնութեան խնդիրը։

Մենք ընդարձակօրէն օդտուում ենք այստեղ նրա

ահադին փորձնականութիւնից և զարմանալի լուրջ հայեցքներից:

Սիֆիլիսոտ մարդը, մտնելով ամուսնական լծի տակ, մի ահադին պատասխանատւութիւն է յանձն առնում թէ իր կնոջ և թէ իր սերնդի առաջ:

Հստ ֆուրնիէի, ամեն սիֆիլիսոտ, մանաւանդ ու գլխաւորապէս այնպիսիները, որոնք վատ են բժշկուել կամ բոլորովին չեն բժշկուել թէ հիւանդութեան լրջութիւնը չը հասկանալով, թէ ուզզակի ոչինչ նկատած քը լինելով, այդպիսիները չը պէտք է վստահանան ամուսնալու մինչև այն ժամանակ, երբ խուսափած կը լինեն իրանց անձին սպառնացող վտանգից, եւ թէ իրանց կը դադարեն վտանգաւոր լինելուց կնոջը, սերնդին, հասարակութեանը:

Բացատրենք այս չորս կէտերը մի առ մի.

Ա. Հիւանդին իրան սպառնացող վտանգը:

Սիֆիլիսի երրորդական երեւոյթները^{*)} չափազանց յաճախ պատահում են այն անձանց, որոնք անբաւա-

*) Սիֆիլիսը երեք շրջան ունի.

Առաջին շրջանի երեսոյթը միակ է, այն է—սիֆիլիսական խոցը, որ դորս է զալիս մարմնի այն կէտում, որտեղ թոյնն է զիպեր:

Ես առաջին արտայացութիւնից յետոյ մի երկու կամ աւելի ամիս անց, երևամ են զանազան ցանուր կամ զուրս տուածներ մաշկի և բոզազանթների վրաց (բերանի մէջ, իեղուի վրայ, բղի, քթի մէջ), նըսնք զանազան կեղեր են, բծեր, կամ ջրջրուկներ և կազմում են երկրորդ շրջանը. Այս բոլոր երեսոյթները կարծ թէ երկար միջոցում անցնում են առանց որ և է հետքի, որովհետ նրանք մակերեսով վական են և չեն վընասում նշանառոր գործարանները: Առաջին և երկրորդ շրջանների միև յատկանիշն այն է, որ նրանք վարակիչ են.—այս բոլոր խոցերի, ջրջրուկների հեղուկը (արտադրութիւնը) ընկնելով մի ուրիշ յուղաթաղանթի կամ մաշկի վրաց (եթէ մի ամենաանշան քերծուածք կամ ձեղքուածք անդամ կայ), փոխազրում է նրա վրաց վարակիչ թոյնը:

Երրորդ շրջանում հիւանդութիւնը աւելի խոր է հարուածում մարդուն, վնասում է նրա ամենանուրբ և ամենակարենոր օրգանները (օր. ուղեղուաշարը, ոսկրները, նեղին զործարանները և այլն), առաջացնելով հարիւր տեսակ հիւանդութիւններ, որոնցից շատերը անրուժելի են և յաճախ սպանում են հիւանդին. (կաթուած, ողնուղեղի յառաջգնաց յարատն բորբոքումն (որից անդամալուծութիւն), ընդհանուր պարալիչ, խելագարութիւն և այլն և այլն)

Ես երբորդ շրջանում երեւոյթները վարակիչ չեն:

Տե՛ս իմ “Սիֆիլիս” գիրքը:

բար կերպով են բժշկում,—և ընդհակառակը նրանք հազուադիւտ են այն անձանց վրայ, որոնք չեն ենթարկուած սիստեմական և երկար բժշկութեան:

Թէ որչափ յաճախ են պատահում երրորդական երևոյթները, այդ մասին զարմանալի պերճախօս է Ֆուրնիէլի վիճակագրութիւնը:

Նա գիտել է երրորդական սիֆիլիսի 4800 դէպք, որոնք դասաւորուած են հետեւեալ կերպով.

Ուղեղային, ողնուղեղային և ներվային սիֆիլիս (ուղեղի ողնուղեղի և ներվերի հիւանդութիւններ, սիֆիլիսից առաջացած) 1857 դէպք.

Մաշկի հիւանդութիւններ 1451 »

Ոսկրների 519 »

Քթի, բերանի, բգի, լեզուի սիֆիլիս. 860 »

Մնացածը ուրիշ գործարանների և մարմնամասերի սիֆիլիսն: Է Ալքի է ընկնում ներվային հիւանդութիւնների սոսկալի թիւը: Այս պատճառով սիֆիլիսը համարում է ներվային սիստեմի թոյն, և սկզբնապատճառ ներվային հիւանդութիւնների մեծագոյն մասի:

Կարելի է վստահ ասել, որ ուղեղի սիֆիլիսը ամենասարսափելին է, որովհետև առաջացնում է անդամալուծութիւն, կուրութիւն, խլութիւն, ընկնաւորութիւն, խելագարութիւն, մահ:

Ուղեղային սիֆիլիսը ամենից վասնգաւորն է, և մեծ մասամբ անբուժելի: Այսպէս, 100 հիւանդից Ֆուրնիէն կարողացել է բժշկել միմիայն 22-ին, 19-ը մեռել են. իսկ 59-ը թէեւ ապրում են, բայց անբուժելի արատներով.—թեևը, ոտերի լուծութիւն (պարալիպ), կամ խելպակասումն և այլն,—որ մահօւան չափ ծանր են:

Ամեն սիֆիլիսոտ, որ միտքն է գրել ամուսնանալ, պիտի լուրջ կերպով մտածի այդ ինդրի վրայ, իմանայ որ փրկութիւնը բժշկութեան մէջ է, և որ եթէ չը բժշկուի կամ բժշկութիւնը անբաւարար լինի, նա ապագայում կը զգայ հիւանդութեան սոսկալի ոյժը:

Ահա մի երիտասարդ. նա ամուսնանում է, առանց

կանոնաւոր կերպով բժշկուած լինելու. վեց ամսից յետոյ յանկարծ վրայ է գալիս մի որ և ուղեղային հիւանդութիւն, և նա մեռնում է, թողնելով իր կնոջն ու փոքրիկ երեխային սոսկալի դրութեան մէջ։

Մի յայտնի նկարիչ, որ իր սիֆիլիսը բոլորովին անբժշկել էր թողել, ամուսնանում է և մի երեխայ է ունենում։ Մի բանի տարուց յետոյ սկսում է դէմքի սիֆիլիս, որ նա նոյնպէս չէ բժշկում։ Խոցերը ուտում են դէմքը, քրքրում-ոչնչացնում են քիթն ու վերին շրթունքը, մտնում են քթածակերը, կրծում են ներսի ոսկըրները, քիմքը, բուգը և այլն։ Այս ողորմելի մարդը ուղղակի մի զագրելի ու զզուելի հրէշ է գառնում, որ սոսկումն ու զայրոյթ է յարուցանում ամենքի մէջ։ Այսպէս նա քարշ է տալիս մի քանի տարի էլ իր ողորմելի դոյտիւնը, Աստուծուց մահ խնդրելով։

Մի ուրիշ նկարիչ, մեծ տաղանդի և մեծ ապագայի տէր, ամուսնանում է լաւ չը բժշկուած։ Ակզբում ամեն բան յաջող է գնում, նա հարստանում է և մի որդի է ծնում։ Բայց երկար չէ վայելում այս բախտը. նա կուրանում է։ Հետևանքը—լնտանիքի մնանկանալն ու կատարեալ անբախտանեալը։

Մի երիտասարդ, որ հակառակ մուլնիէի կամքին, ամուսնանում է, պսակից հազիւ երկու օր անց, մի սաստիկ կարկամումն է ունենում (ընկնաւորութիւն), յետոյ շուտով վրայ են գալիս ուրիշ ուղեղային երեսյթներ, կաթուած, խելացնորութիւն և մահ։

Այսպիսի գէպքեր շատ կան գրականութեան մէջ։ Բաւականանակ այս մի քանիսով, որ բաղում ենք ֆուլնիէի գրքից *)։

Բ. Ընտանիքին սպառնացող վտանգը։

Ամենից առաջ ի հարկէ վարակւում է կինը։

Այսպէս, երկու ամուսիններն էլ սիֆիլիսոտ են. ինչ

*) Syphilis et Mariage, Fournier.

կը լինի սրանց սերունդը։ Խօսելով ժառանգականութեան մասին, մենք ասել ենք, որ եթէ երկու ծնողներն ևս նոյն հիւանդութիւնից ունեն, նրանց զաւակը շատ աւելի շանս ունի նոյն հիւանդութիւնն ստանալու, քան եթէ ծնողներից մէկն է միայն հիւանդ։ Սիֆիլիսում այս կանոնը ակներեւ է, և այն երեխաներն են ամենից յաճախ սիֆիլիսոտ ծնւում ու սիֆիլիսի վատագոյն ձեռն ստանում, որոնց երկու ծնողներն էլ հիւանդ են։

Ի՞նչ սոսկալի ոճիր—զդալ, որ ինքը վարակիչ հիւանդութիւն ունի, հասկանալ, որ կարող է այդ ցաւը տալ կնոջը, և այնու ամենայնիւ ամուսնանալ։

Մի անմեղ երեխայ սիրում և հաւատում է երիտասարդին, նետում է իրան նրա գիրկը, բերում է նըրան անմեղութեան հետ միասին թարմութիւն և առողջութիւն։ Եւ սիֆիլիսոտը մի ժամուայ մէջ ընդ միշտ անբախտացնում է այս երեխային, և նրա առաջին համբոյրը պղծում է աղջկայ մաքուր արիւնը իր սոսկալի թոյնով։

Ի՞նչ կայ աւելի դարշելի և աւելի սոսկալի քան այդ մարդկը։

Տեսէք թէ ինչ է պատմում նոյն ֆուրնիէն։

«Մի քանի տարի առաջ, ինձ պատահեց տեսնել մի սոսկալի տեսարան։ մի կին, որին վարակել էր նրա ամուսինը, դառել էր մի կատարեալ հրէշ։ Դէմքը, կամ այն, ինչ որ մի ժամանակ դէմք էր եղել՝ այլանդակուած էր, փոս ընկած, կամ պարանների նման ձգձգուած սպիներով։ Քթից ոչ մի հետք չէր մնացած։ Նրա տեղ երևում էր մի մութ փոս, ինչպէս մեռելի դանգի վրայ։

Եւ քանի՛ քանի այսպիսի դէպքեր, անպաշտան զոհեր, սրիկայութեան, տխմարութեան կամ շահամոլութեան զոհեր։

Հիմա հարցնում ենք. ի՞նչ կարող է լինել այսպիսի ընտանիքի կեանքը։ որչափ ատելութիւն ու զայրոյթ պիտի զդայ կինը դէպի իր այրը, որ այդպէս անխնայ կերպով քանդել է նրա գոյութիւնը։

Կորչում է սէրն ու յարգանկը, ընտանիքը դառնում
է դժոխք երկուսի համար ևս ու համակեցութիւնը ա-
մեն բոպէի տանջանք:

Գ. Սիմեոնիսի ազդեցութիւնը ժառանգների վրայ:

Սիմեոնիսի ամենամեծ վտանգը՝ սելնդների վրայ ու-
նեցած ազդեցութիւնն է:

«Մի բառ միայն կայ այդ ազդեցութիւնը բնորոշելու¹
համար,—այդ սարսափելի բառն է», ասում Ֆուրնիէն:

Ի հարկէ (դարձեալ ասենք), այս ամենը վերաբե-
րում է չը բժշկուած կամ վատ ու կարճ ժամանակ բը-
ժշկուած սիմեոնիսին:

Լաւ խնամուած սիմեոնիսի կարող է տալ բոլոր-
վին առողջ սերունդ:

Տեսնենք հիմի, թէ ինչպէս է արտայայտում սի-
մեոնիսի ազդեցութիւնը ժառանգների վրայ:

Ամենից առաջ յիշենք վիճումները:

Սիմեոնի հիմանդ, կամ սիմեոնիստ ամուսին ու-
նեցող կինը (ինքը կարող է վարակուած չը լինել) յա-
ճախ վիժում է արգանդի պտուղը: Այս վիժումները առ-
հասարակ կրկնւում են մի քանի անգամ: Մի կին կարող
է վիժել հինգ, վեց, տասը և աւելի անգամ: Ընդհան-
րապէս, երբ մի կին մի քանի վիժումներ է ունենում, հա-
ւանական է, որ ընտանիքի մէջ սիմեոնիսի կայ:

Եթէ կինը չէ վիժում, նա ծնում է յաճախ կամ
արդէն մեռած երեխայ, կամ հիմանդ, որ երկար չի
ապրելու:

Շատ սիմեոնիստ ընտանիքներում բոլոր երեխաները
մեռնում են և ցեղը սպառւում է. այսպիսի դէպքեր գի-
տութեան մէջ հարիւմներով են յիշուած:

Եղել են դէպքեր, երբ ութ, տասը, տասնըմէկ ե-
րեխաներից ոչ մէկը կենդանի չէ մնացել:

Ֆուրնիէն յիշում է 90 կանանց պատմութիւնը, ո-
րոնք սիմեոնիստ էին ստացել իրանց ամուսիններից: Տեսէք,
թէ ինչ է եղել դրանց սերունդը: Այդ կանանցից 50-ը

վիժել կամ ծնել են մեռած երեխաներ, 38-ը ծնել են ենդանի երեխաներ, որոնք շատ շուտով ամենքն էլ մեռել են, և միայն երկուսի զաւակներն են կենդանի մնացել:

Ահա թէ ի՞նչ է ժառանդական սիֆիլիսի կործանիչ զօրութիւնը:

Սա մի սոսկալի կոտորած է:

Սակայն բոլոր երեխաները, չեն կոտորւում: մի քանիսն ապրում են: Այսաեղ մեծ դեր են խաղում մի քանի ֆակտորներ.—ծնողների սիֆիլիսի հասակը, ծնողներից հայրն է հիւանդ, թէ մայրը, թէ երկուսն էլ, բժշկութիւնը և այլն:

Դ. Սիֆիլիսական ժառանգական վատասեռումն կամ արատաւորումն:

Մենք ասացինք, որ սիֆիլիսոտների երեխաները կարող են իրանք ևս սիֆիլիսոտ ծնուել. ուրիշ խօսքով. նրանք կը ներկայացնեն նոյն երևոյթները, ինչ որ ծընողները, այսինքն երկրորդական և երրորդական սիֆիլիսի նշաններ:

Բայց երեխան կարող է և չը կրել իր վրայ իսկական սիֆիլիսի երևոյթներ, և այնու ամենայնիւ հիւանդոտ, արատաւոր լինել:

Եթէ սիֆիլիսոտի երեխան չէ մահանում մօք արդանդի մէջ, կամ չէ ծնւում մեռած, այլ աշխարհ է գալիս առերես առողջ, այդ դեռ չէ նշանակում; թէ նազերծ է ծնողների ախտի ազդեցութիւնից: Ընդհակառակը, այդպիսին յաճախ կրում է իր մէջ վատ ցաւի հետքերը, որոնք և կազմում են ժառանգական սիֆիլիսի արատներն ու աւերամները:

«Այս արատաւոր երևոյթները, ասում է Ֆուլնիէն, որոնք հարիւր ձևեր են ստանում, համարեա բոլորը առաջ են գալիս կազմուածքի աճման շեղումներից, որոնց հետեւանքն է զործարանների անկանոն կազմութիւնը, բնորոշ գծերի, տիպի վրիպումներ բնականից, մինչև անդամ հրէշութիւններ:

Այստեղից է զաւակի կենսականութեան և դիմաց կոտութեան նուազումն. այստեղից է նրա գիզիկական ու բարոյական նուասութիւնը (որ ի հարկէ զանազան աստիճանի է լինում), համեմատելով առողջ ծնողների զաւակների հետ, որոնք աւելի լաւ են օժտուած բնութիւնից և աւելի պատրաստուած են կեանքի կոռուի համար. մի խօսքով, այստեղից է ճանապարհը դէպի այլասեռումն:

Անհնար է այսպիսի մի փոքրիկ տեսութեան մէջ նկարագրել այն ահագին քանակութեամբ արատաւոր և հիւանդական երևոյթները, որոնք նկատում են սիֆիլիսական սերունդների վրայ:

Կը թուենք գլխաւորները միայն:

Պրօֆ. Խուրնիէլ հետ մենք այս արատաւորութիւնը կը բաժանենք երեք կարգի.

1. Այնպիսիներ, որոնք հարուածում են մի որ և է օրդան, մի որ և է մարմնամասն.

2. Այնպիսիներ, որոնք արտայայտում են անհատի ամբողջ կազմի մէջ.

3. Այնպիսիներ, որոնք կազմում են իսկական հրէշութիւններ:

Առաջին կարգի պատկանող ժառանգական—սիֆիլիսական արատաւորութիւնները հետևեալներն են (գլխաւորները).—գանդի անկանոնութիւններ (չափազանց մեծ, անհարժ, երկու կէսերն անհամաչափ գլուխներ, փոքրագլխութիւն, ջրդողագլխութիւն), տամների, ծնութերի արտաւորութիւններ, քթի, աչքերի, ականջների, ողնաշարի անկանոն կազմութիւն, կորութիւն:

Յետոյ անկանոն կազմութիւն և անկանոն աճումն ընդհանրապէս զանազան մարմնամասերի. օր. անդամների (չափազանց երկար ու չափազանց կարճ ոտներ ու ձեռներ), բազմամատութիւն, կպած մատներ, ոտների, ձեռների ծոռւմներ. Ուղեղի կողմից նկատում է ընդունակութիւնների անբաւարար զարդացումն, կամ նրանց շեղումները, խուլ-համրութիւններ. Զանազան վտանգալից

անկանոնութիւններ նոյնպէս և երակների, սրտի, սեռական գործարանների մէջ:

Երրորդ կարգի արատաւորութիւնները հարուածում են անհատի ամբողջ կազմը և տանում նրան դէպի վատասեռումն:

Ժառանգական սիֆիլիսը արտադրում է վատոյժ, կծկուած, նիհար, մանը երեխաններ, որոնք այնչափ նուազ են, որ ճշալու ու ծծելու անգամ անընդունակ են: Սրանք նորածին ծերունիններ են դէմքով, ամբողջ օրդանիզմի սպառումով, և նրանց օրերը համարուած են: Կամ երեխան ծնւում է համարեա առողջ, բայց բերում է իր հետ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ դէպի ամեն տեսակ հիւանդութիւններ, զբկուած լինելով կենականութիւնից և դիմացկուսութիւնից: Սրանք առհասարակ նրբակազմ են լինում, քիչ զարգացած մկաններով, չափազանց հեշտ տկարանում են ու հիւանդանում: Սրանց փուխր կազմուածքը չէ դիմանում թեթև հիւանդութիւններին անգամ:

Զարմանալի յաճախ նկատուում է նրանց մէջ բախիշիզմ (ոսկրների անկանոն զարգացումն և հիւանդական կազմը), որ արտայայտուում է մեծ և ուռուցիկ (bousseillé) դլսով, կոր և ծռմռած ողնաշարով, նոյնպիսի կոնքով:

Շատերը երկար են ապրում, մնալով միշտ մի տեսակ դեռահաս դրութեան մէջ. Նրանց ֆիզիկական զարգացումն առաջ չէ գնում. մնում են միշտ փոքրահասակ, կծկուած, ձեռներն ու ոտները նուազ ու բարակ, յաւիտեան երեխայ:

Շատ ուրիշ ձևեր են՝ լնդունում ժառանգական սիֆիլիսից առաջացած արատաւորութիւնները:

Քանի՞զանի ողորմելի թուլամիտներ, նեվրօպաթներ, ներվայիններ, հիստերիկներ, մոլիններ, ապուշներ, ընկնաւորներ, կոյրեր ու խուլուհամիեր, գաճաճներ ու խուլախտաւորներ, բարակացաւոտներ ու թոքախտաւորներ իրանց անբախտութիւնով ծնողներին են պարտական: Հազարներով, տասն հազարներով քարշ են տալիս

սրանք իրանց չարքաշ կեանքը, միշտ աւելի ցած մնալով
ուրիշներից, աւելի սուր թէ ֆիզիկապէս և թէ բարոյա-
պէս, աւելի դժբախս ճակատագրի ոյժով, անընդունակ
կեանքի կոռուփ, հազիւ վստահանալով ապրելու ցանկու-
թիւն անգամ յայտնելու, ամաչելով իրանց հրէշութիւ-
նից, իրանց ահագին գլխից, որ լզար վիզ հազիւ է
կարողանում կրել իր վրայ և կզայտած մէջքից, ընկճուած
ու տրորուած ուժեղների ոտների տակ:

Եւ այս բոլորը թէօրիաներ չեն, այլ վերցուած են
կեանքից:

Ահա հարիւրների միջից մի օրինակ. դէսկը Պր.
Տարնովսկու.

27 տարեկան մի մարդ սիֆիլիս է ստանում և այնու-
ամենայնիւ ամուսնանում է վկա տարուց յետոյ, զրեթէ
առանց բժշկուելու: Կինը մնում է առողջ, և 11 անգամ
յղանում է:

1-ին յղութիւն. երեխան կարկամումներ ունի, 11
ամսական մնոնում է ուղեղի բորբոքումից:

2-դ յղութիւն. երեխան կինդանի է, բայց ընկնաւոր:

3-դ յղութիւն. երեխան շատ զանդաղ է աճում,
միջակ խելքի տէր մի աղջիկ է. ամուսնանում է 18 տ. և
ծնում է երկու զաւակ, որոնք երկումն էլ մնոնում են շու-
տով. մէկը կարկամումներից, միւսը գլխի ջրգողութիւնից:

4-դ յղ. երեխան հիստերիկ ու բախիտիկ:

5-դ յղ. երեխան առողջ է մինչեւ հիմա:

6-դ յղ. երեխան շատ զանդաղ է աճում. 12 տարե-
կան հազիւ կարողանում է գրել-կարդալ սովորել. մնում է
երեխանման, 19 տ. ինքնասպանութիւն:

7-դ յղ. երեխան մնոնում է ուղեղի բորբոքումից 22
ամսական:

8-դ յղ. երեխան քիչ զարգացած է. 6 տարեկան դեռ
չը դառած, բոլոր ատամները թափւում են:

9-դ յղ. վիժումն եօթերորդ ամսին:

10-դ յղ. վիժումն երրորդ ամսին:

11-դ յղ. երեխան ծնում է անժամանակ. զանգը
անկանոն, ատամները վատ, ականջները ցից և ցած, ներ-
քիկ ծնօտը դուրս պրծած:

Բացատրութիւններն աւելորդ են:

Սա մի այլասեռումն է, մի ամբողջ սերնդի գիշեկական ու մտաւոր ստորացումն, որ քանդում է ընտանիքի բարօրութիւնը և տանում է սերունդը դէպի ջնջումն, դէպի սպառումն։

Ահ, եթէ միայն գրանով վերջանային սիֆիլիսի աւերումները, եթէ միայն մեռնողը մեռնէր, իսկ ապրողները դոնէ տային առողջ սերունդներ։

Բայց այդպէս չէ լինում։

Միփիլիսի սոսկալի աւերիչ ոյժը, որ հիւանդացրել էր ու սպանել պապին, որ արատաւորել էր ու մնբախտացրել որդուն, տարածւում է թոռան վրայ ևու

Մինչև անգամ պատահում է այսպէս.—Հայրը առերես առողջ է, իսկ որդին ծնւում է ժառանգական սիֆիլիսի դրոշմը վրան։ Ո՞րտեղից։

Հարց ու փորձ էք անում և տեսնում, որ երեխայի պապը սիֆիլիս է ունեցել։

Սա առավելագույն է։ Այսպէս, սիֆիլիսական արատաւոր երեւոյթները նկատում են նաև երկրորդ սերնդի վրայ։

Այս երեւոյթները նոյնն են, ինչ որ առաջի սերնդի վրայ նկատուածները.—Վիժուալներ, արատաւոր ծնունդներ, և այլն, ինչպէս վերև յիշել ենք։

Մի օրինակ միայն (բժ. Ս. Էտիէնի յիշատակած)։ Մարդը ժառանգական-սիֆիլիսոտ, կինը առողջ։ 14 յղութիւն, որոնցից 5 վիժուալն, 1 երեխայ մեռած ծընած, 5 երեխայ ուղեղային հիւանդութիւններով, 1 ապուշ, 2 երեխայ ատամների արատաւորութիւնով։

Մենք նկարագրեցինք սիֆիլիսի վտանգաւոր ազդեցութիւնը թէ իր—հիւանդի, թէ նրա ամուսնու, թէ զաւակների և թէ ամբողջ սերնդի առողջական դրութեան ու բարօրութեան վրայ։

Այժմ մի գժուարին խնդիր է դրուած մեր առջեն, այն է, թէ սիֆիլիս ունեցողը կարո՞ղ է արդեօֆ ամուսնանալ թէ ոչ. իսկ եթէ կարող է, ի՞նչ պայմաններում։

Ուրիշ խօսքով. ինչ պիտի պահանջուի սիֆիլիսու-

տից, որ թոյլ տրուի նրան կին ուզելու, ընտանիք կաղմելու եւ սերունդ արտադրելու:

Անտարակոյս, անխղճութիւն կը լինէր զրկել ընդմիշտ սիֆիլիսոտին ընտանեկան երջանկութիւնից, և գիտութիւնը, որի միակ ձգտումն է երջանիկ դարձնել մարդուս կարճատե կեցութիւնը, մշակել է մի շարք կանոններ ու պահանջներ, որոնք, չը զրկելով հանդերձ սիֆիլիսոտներին ամուսնանալու հնարաւորութիւնից, ապահովում են որոշ չափով կնոջ, զաւակների և սերնդի առողջութիւնը և բարեկեցութիւնը:

Այս պահանջները պրօֆ. Ֆուրնիէն զետեղել է հետեւալ հինգ կէտերի մէջ.

1. Բացակայութիւն որ և է սիֆիլիսական երեսոյթի:
2. Հիւանդութիւնը բաւականաչափ հին պիտի լինի (վարակման օրից 5—6 տարի անցած):
3. Վերջին սիֆիլիսական երեսոյթից պիտի շատ թէքիչ ժամանակ անցած լինի:
4. Հիւանդութիւնը չը պէտք է սպառնացող (խիստ աւերիչ) բնաւորութիւն ունեցած լինի:
5. Բժշկութիւնը պէտք է բաւարար եղած լինի:

1. Բացակայութիւն որ եւ է սիֆիլիսական երեսոյթի:

Թէև անհաւատալի կը թուի մեր ասածը, սակայն պակաս չեն այնպիսի դէպքեր, երբ աղամարդը սիֆիլիսի վարակիչ շրջաններում ամուսնանում է: Կասկած չը կայ, որ նա անմիջապէս վարակում է իր կնոջը: Այնուհետեւ վերջացաւ ընտանիքի երջանկութիւնը, —հիւանդութիւնը տարածում է իր կործանիչ ոյժը զաւակների, սերնդի վրայ...

2. Հիւանդութեան հասակը:

Վարակումից պիտի որոշ ժամանակ անցած լինի: Փորձը և հաղարաւոր դէպքերի դիտումները ցոյց են տուել, որ բանի նոր է սիֆիլիսը, այնչափ վտանգաւոր է նա:

Վտանգը նախ կայանում է նրանում, որ կինը վա-

բակւում է, որովհետև եթէ սիֆիլիսը նոր է, յանկարծ մէկ օր կարող են տղամարդու մարմնի վրայ երևալ գեռ ըլ հանգած հիւանդութեան երկրորդական երեւոյթները (կեղեր, խոցեր բերանի, լեզուի, պուօչների, ջրջրուկային մաշկախտեր), որոնք անպայման կերպով կը փարակեն կնոջը:

Ժառանգների տեսակէտից նկատուած է, որ հօր 3—4 տարեկան սիֆիլիսը այլ ևս չէ անցնում զաւակներին, սակայն մօր սիֆիլիսը գեռ երկար տարիներ անդրագաղոնում է սերնդի վրայ:

Ժամանակն առհասարակ ժուլացնում է ցաւի զօրութիւնը:

Այսպէս սիֆիլիսոտ կինը առաջի տարիներում վիժում է, յետոյ ծնում է մեռած երեխաներ, յետոյ երեխաներ, որոնք շատ քիչ են ապրում, վերջը, մի քանի տարիներից յետոյ, առողջ որդիք: Այստեղից հասկանալի է, որ սիֆիլիսոտը պիտի սպասի որքան կարելի է երկար ժամանակ, յամենայն դէպս ոչ պակաս քան հինգ տարի:

3. Սակայն եթէ մինչև անգամ հինգ և աւելի տարի էլ անցած լինէր հիւանդութեան սկզբից, գարձեալ հիւանդը իրաւունք չունի ամուսնանալու, եթէ հիւանդութիւնը որ և է արտայայտութիւն է ունեցել (որչափ աննշան էլ լինէր սա):

Անհրաժեշտ է, որ վերջին արտայայտութիւնից անցած լինի ոչ պակաս քան երկու տարի: Ուրիշ խօսքով. սիֆիլիսը պիտի երկու տարի լուռ մնացած լինի, որ հիւանդն իրաւունք ունենայ պսակուելու:

4. Այս հիւանդութիւնը միշտ մի տեսակ չէ լինում: կան այնպիսի ձեւեր, որոնք յայտնի են վաս կամ ծանր սիմիլիս անունով: Սա հարուածում է ուղեղը, աչքը, զարմանալի աւերումներ է անում յուղաթաղանթների ու մաշկի վրայ, շուտով ընկնում է ոսկորները: Դժուար է լինում կանգնեցնել նրա աւերիչ քայլը: Հենց որ բըժկութիւնը դադարում է, սիֆիլիսը նորից գլուխ է բար-

ձրացնում և այլն։ Այսպիսի սիֆիլիսի տէրերը կարող են մի քանի ժամանակ առողջ մնալ, բայց միշտ պէտք է սպասեն մի որ և է բարդութեան։

5. Վերջապէս ամենակարեւոր կէտը բժշկութիւնն է։ Բարեբախտաբար սիֆիլիսը, եթէ ժամանակին կանոնաւոր կերպով խնամուած է, կարող է բժշկուել։

Միժիլիսը միանգամայն բուժելի հիւանդութիւն է։

Բայց մինչեւ բժշկուելը սիֆիլիսոր չը պէտք է մտածի անզամ ամուսնանալու վրայ, որովհետեւ կ'անբախտացնի թէ՛ իր կնոջը եւ թէ՛ իր ամբողջ սերունդը։

Թէ ինչպէս պէտք է բժշկուի սիֆիլիսութը, այդ մենք բացատրել ենք մանրամասն ուրիշ տեղ*։ Կ'ասենք միայն, որ պառաւների ու դաշտաքների բժշկութիւնը կամ անբաւար է կամ չափազանցացրած ու վտանգաւոր։

Կանոնաւոր ու բաւարար բժշկութիւն կարող է անել միմիայն բժիշկը։

Բժշկութիւնը պիտի տեի երկար ժամանակ—գիտնականների ասելով—մի քանի տարի։

Պէտք է բժշկուել ոչ միայն այն ժամանակ, երբ մի որ և է կերպով արտայայտուել է հիւանդութիւնը, այլ և այն ժամանակ, երբ հիւանդի վրայ ոչինչ չը կայ, երբ նա առերես բոլորովին առողջ է։

Երբէք չը պէտք է մոռանալ, որ ամենաթեթև ձեւով կարող է վերջում, եթէ առանց բժշկութեան մնայ, բարդուել ամենածանր, օր. ուղեղի հիւանդութիւնով։ Այս պատճառով պէտք է բժշկուի ամեն ոք, ով սիֆիլիս է ստացել, որչափ էլ թեթև եղած լինէր սա։

Մեծ քանակութեամբ գիտնականներ եկել են այն եղբակացութեան, որ կանոնաւոր բժշկութիւնը ոչ միայն փրկում է հիւանդին սարսափելի բարդումներից, այլ և յաճախ փրկում է նոյնպէս և սերունդը։

Յաճախ պատահում են այսպիսի դէպքեր։

Մի կին մի քանի անգամ վիժուաներ է ունենում. մենք հակասիֆիլիսական բժշկութիւն ենք անում մար-

*.) Տե՛ս յիշած զբքուկու։

դուն կամ կնոջը, կամ երկուսին էլ, և վիժումները դաշտարում են, ու կինը ծնում է առողջ երեխաներ։

Հիմա մի քանի խօսք ասենք նաև ժառանգական սիմիլիսոնի ամուսնութեան մասին։

Այս տեսակէտից էլ ժառանգական սիֆիլիսոտը ընդունում է իբրև հաւասար իսկական սիֆիլիսոտի։

Սիֆիլիսոտ ծնողներից սերուած որդիքը պիտի նոյն չափով վախենան բարդումներից, որչափ իրանց հայրը նրանք եւս պիտի լուրջ կերպով բժշկուեն, եւ միայն լաւ բժշկուած, երբ այլ ևս սիֆիլիսական ոչ մի երեւոյթ չի մնացել վրաները, նրանք ընդունակ են դառնում փոքր ի շատէ լաւ սերունդ արտադրելու։

Ինչպէս տեսնում ենք, սիֆիլիսոտների և նրանց ժառանգների ամուսնանալու խնդրի որոշման մէջ վրճռողական նշանակութիւն ունի բժիշկը։

Նա պիտի բժշկութիւն անէ, նա պիտի կարծիք յայտնէ այն մասին, թէ առողջացած է հիւանդը եւ ընդդունակ է ամուսին դառնալու թէ ոչ եւ այլն։

Հետեաբար ամեն սիմիլիս ունեցող պիտի զիմէ բժեկի եւ դեկապարուի երա խորհուրդներով, եւ երեք շամուսնանայ հակառակ երա կամֆին։

Անտարակոյս կը գայ մի ժամանակ, երբ ամուսնանալու համար պէտք կը լինի ամուսնացողների առողջութեան վկայականներ պահանջել, ինչպէս այսօր պահանջում է մետրիկական վկայական. բայց մինչեւ այն ժամանակ, ամեն մի երիտասարդ ինքը յօժարաբար պիտի դիմէ բժշկին եւ նրա հաւանութիւնն ստանայ այս պատասխանատու քայլն անելու համար։

Այս է պահանջում ազնւութիւնը, այս է պահանջում ընտանիքի ու սերնդի բարօրութիւնը, ցեղի փըրկութիւնը, և աւելացնենք (քանի որ մարդ եսական է նոյն իսկ ամուսնութեան մէջ) իր սեփական երջանկութիւնը։

ԲԺՊ. Վ. ԱՐԾՐՈՒԽՆԻ

(Կը շարունակուի)

ԱՅՈ՛, ՀԵՆՑ ՆՈՐ ԷՐ...

Այո՛, հինգ նո՞ր էր,
Սըփոելով շողեր,
Վառում արեւը երկրների ծոցում,
Եւ դալարագեղ,
Փարքամ ու ըրբեղ
Սարերի լանջերն նա ոսկեզօծում:

Բայց ա՞յժըմ... Ահա՛
Լեռների վրայ
Իջել են խիս-խիս, սեւաբոյր ամպեր,
Պատել սարալանջ,
Ծառ, ծաղիկ, կանանչ...
Եւ սաղսկալի՛ է այդ մըռայլ պատեր...

Այդպէս եւ երեսն սեւ ամպն է վըշտի
Սեւ օօղով պատում դալարը սըրտի.
Եւ վառ անուրջներ, ծածկուած խաւարում,
Ժրպտուն աչերի փայլն են պղտորում...

Ա. ՇԱՏՈՒՐԵԱՆ

ՄԱՍԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

10) ՄՈՒՐԱՅԱՆ. Ռուզան կամ Հայրենասէր օրիորդ. պատմական
դրամա 5 արարուածով: «Թատրոն» ժողովածու, 1900 թ. № 1.

Հայ պատմական պիէսների բախտը, կամ, աւելի ճիշտն
ասած, դժբախտութիւնը յայտնի է ամենքին: Այժմ ամենքը
զիտեն, թէ այդ շնծու, արուեստական զրուածքները արժանի
չեն բեմ հանուելու: Մի տեսակ բացառութիւն է կազմում
«Ռուզանը»: Մօտ քսան տարի է, ինչ այդ զրաման մտել է հայ-
ոց թատրոնական բեպերսուարի մէջ և այժմ էլ յաճախ լսում
ենք, որ նա ներկայացնուում է զանազան տեղերում: Այս երկա-
րակեցութիւնը, ըստ երեսյթին, պէտք է որ իր հիմնաւոր պատ-
ճառներն ունենայ: Պ. Մուրայանը նոր միայն տպագրեց իր այդ
հեղինակութիւնը, և այժմ կարելի է քննել նրան իբրև գրական
երկ:

Պատմական վէպ, դրամա գրելու համար ամենից առաջ
հարկաւոր է, որ հեղինակը ձեռքի տակ ունենայ տոպատ, լաւ
ուսումնասիրուած նիւթ: Իրական, ժամանակակից կեանքից որ
և է պատկեր վերցնելիս մենք դիտում ենք մեզ հետաքրքրող
երևութները, դէմքերը, աշխատում ենք բնական, կեանքին հա-
մապատասխանող գոյներով նկարել պատկերը: Գործը շատ
դժուարանում է, երբ մենք վերցնում ենք վաղուց անցած-գնա-
ցածը, պատմական կեանքը: Այստեղ արդէն մեր առջև չը կան
խօսուն, շարժուող մարդիկ. այստեղ կենդանի, արիւն ու մար-
մին առած զօկումննաներ չը կան: Անցեալի մարդկանց ուսում-
նասիրելու, նրանց իրական պատկերը փոքր ի շատէ բնական
գոյներով նկարելու համար մենք ձեռքի տակ ունենք միայն հատ
ու կտոր տեղեկութիւններ թղթի վրայ, ունենք մեր աշքի առջև
հին կեանքի թողած խղճուկ հետքերը—օրինակ, մի կանգուն
եկեղեցի, մի բերդի հաղիւ նկատելի հետքերը կամ մի որ և է
իշխանական ապարանքի պատերից մնացած բեկորները: Պէտք
է ահազին ջանք, երկար տարիների ուսումնասիրութիւն՝ այդ

թղթի կտորներին, աւերակներին մի գեղարուեստական գրուածքի մէջ շունչ և կենդանութիւն հաղորդելու համար։ Առանց այսպիսի նախապատրաստութեան չէ կարող ստեղծուել որ և է պատմական երկ, որովհետեւ իւրաքանչիւր պատմական գրուածքի մէջ ամենից առաջ և ամենից շատ պէտք է լինի պատմական ճշմարտութիւն։ Զը կայ այդ ճշմարտութիւնը—և պատմական երկը կը ներկայացնէ մի ողորմելի կեղծիք, որ սարքւում է ճիշտ այսպէս, ինչպէս մեր ժամանակներում հնավաճառները կեղծում են հին դրամներ և ծախում որպէս իսկական, անաղարտ հնութիւն։

Նիւթի ընտրութեան կողմից պ. Մուրացանը մի շատ կեղծ դրութեան մէջ է եղել՝ նա կամեցել է ոգևորութիւն որոնել այնպիսի տեղ, ուր ոչ մի ողնորիչ հանդամանք չը կայ, գոնէ դրամայի ամենազլիւաւոր իդէալի, այսինքն հայրենասիրութեան տեսակէտից։

«Մուզանի» նիւթը վերցրած է թաթարական արշաւանքների ժամանակից։ Գործողութիւնը կատարւում է Արցախի Խաչէն գաւառում։ Ջալալ իշխանը քաջերից քաջ է, կուում է թաթարների դէմ։ Նրա վիսան, Ներսէհ իշխանը, հէնց հանդիսականների աջքի առջն է վերադառնում թաթարների դէմ սկըսած մի յաղթական արշաւանքից։ Մուզանը այդ Ներսէհի նշանածն է։ Բայց Սիւնեաց Համտուն իշխանն էլ աչք ունի նրա վրայ. և երբ Մուզանը մերժում է այդ իշխանի կինը դառնալ՝ Համտունը գնում է թաթարների մօտ, մատնում է Ջալալին, գովում է Մուզանի գեղեցկութիւնը։ Թաթար իշխանաւորներից մէկը, Բուրա, վճռում է, որ Մուզանը իրանը պիտի լինի։ Թաթար զօրքը մօտենում է Ջալալի բերդին։ հայերը կոռել չեն ուզում և խաղաղ բանակցութիւններ են ակսում թաթարների հետ։ Բուրան յայտնում է որ խաղաղութիւն կարող է լինել այն դէպքում, եթէ Ջալալը Մուզանին իրան տայ։ Պայմանը բերդում չէ ընդունւում։ նայ իշխանները պատրաստում են պատերազմի։ Բայց Մուզանը այլ կերպ է վճռում։ շրջակայ գիւղերից թաթարները հաւաքել են հազար հայեր, որոնց պիտի կոտորեն, հէնց որ Ջալալի մերժումը յայտնի կը գառնայ թաթարական բանակում։ Եւ Մուզանը, այդ ինեղներին ապրեցնելու համար, փախչում է բերդից, գնում է Բուրայի մօտ և նրա կինը դառնալու համաձայնութիւն։ է տալիս։ Նա իր հետ տանում է թոյն, որպէս զի, նախ քան թաթար իշխանի գիրկը մտնելը, վերջ դնէ իր կեանքին։

Այսպէս է պատմում պ. Մուրացանը։ Նրա ասելով, Խաչէնի իշխանի բերդում վառ են հայրենասիրութիւնը, անվախ քաջա-

սրտութիւնը և հերոսական անձնագոհութիւնը բարձր գաղափարի համար։ Տեսնենք որքան ծշառութիւն կայ պ. Մուրացանի այս պատմութեան մէջ։

Դրամայի մէջ գործող անձինքներից պատմական են միայն չորսը—ինքը, Հասան Զալալ Դոլան, նրա կին Մամբանը, և դրայր Զաքարէն և Ռուզանը (խկասէս Ռուզուքան և ոչ Ռուզան)։ Այդ մարդկանց մասին խօսում են երկու ժամանակակից պատմագիրներ. Վարդան (շատ համառօտ) և Կիրակոս (մանրամասն)։ Ի՞նչ են ասում սրանք։

Զալալ իշխանը հոչակաւոր Զաքարէ և իւանէ սպասալարների քրոջ որդին է, Ներքին Խաչէնի տէր Սակոեանց Վախութանգի որդին. ունի մեծ կարուածքներ, մի աւատական իշխող է, հարուստ ու փառաւոր. պատմագիրները տալիս են նրան «մեծ իշխան», «արքայաշորք» ամսունները. իսկ Գանձասարի վանքի արձանագրութիւնը անուանում է նրան «փնքնակալ», նոյն իսկ «Ժագաւոր»։

Այս բոլորը շատ լաւ։ Բայց ահա թափւում են թաթարները, գժբախտ Խաչէնը արիւնլուայ է դառնուում։ Գանձասարի դիմաց, ամպերի մէջ կորած մի սար կայ, և այդ սարի վլխին էր Զալալի բերդը։ Երկիրը լի է այդպիսի բնական ամրութիւններով, որոնք պաշտպանելու հիմալի միջոցներ են տալիս։ Բայց ոչ մի տեղ չենք տեսնում Զալալին թաթարների դէմ կոռւելիս, որ և է քաջութիւն ցոյց տալիս։ Ճիշտ է, սկզբում Զալալը փակւում է իր բերդում, բայց պատերազմ տեղի չէ ունենում։ Զալալը առանց մի նիզակ կոտրելու հպատակուում է թաթարներին, յանձն է առնում հարկ տալ նրանց և օդնել նրանց իր զօրքերով։ Եւ դա բնական է։ Զալալը հոչակուած է իր բարեպաշտութեամբ, բայց ոչ քաջութեամբ։ Կիրակոս պատմագիրը բառ չէ թողնում Զալալին փառարանելու համար։ «Բարեպաշտ և աստուածաէր մարդ, եեղ և հանդարտ, ողորմած և աղքատասէր, ազօթքների և խնդրուածքների մէջ ճգնող, նման նրանց, որոնք անապատներում են լինում։ Ցերեկուայ և զիշերուայ պաշտօնը կատարում էր անխստիան, ուր և լինէր, ինչպէս վանքերում, և Փրկչի յարութեան յիշատակը կատարում էր կիրակի օրեւը, ոտքի վրայ կանգնած՝ անքուն անց էր կացնում աքնութեամբ։ շատ քահանայտէր էր և ուսումնասէր, աստուածային։ Կտակարանների ընթերցող էր *): Ուրիշ հանգամանքների մէջ էլ կղերական պատմագիրը գովում է իշխանին, և միշտ ամեն տեղ Զալալը հոգի պաշող մի արդար քրիստոնեայ է և

*) Կիրակոս պատմ., Վենետիկ. Եր. 145:

ուրիշ ոչինչ. դուք չեք գտնի մի բառ, որ վկայութիւն լինէր այն մասին, թէ Զալալը պատերազմող է, անվեհներ զինուոր, յաղթող բազուկի աէր:

Այդ բարեպաշտ մարդը, համաձայն ննք, իր բոլոր հարըստութիւնները գրել էր բարի գործերի համար, ոչինչ չէր խնայում, որ տիրողների հետ հաջու ու խաղաղ ապրէ: Նա նոյն իսկ բաւական աշողութիւն ունէր իր այդ քաղաքականութեան մէջ. որքան հնարաւոր էր՝ նա չէր թոյլ տալիս, որ թաթարները կեղեքն ժաղովուրդը, թոյլ չէր տալիս ոչ թէ զէնքի ոյժով, այլ իր վրայ վերցնելով հարկերի և տուրքերի ծանրութիւնը. նո իրանից էր տալիս այն ամենը, ինչ պահանջում էին թաթարները ժողովրդից: Բայց բարեպաշտ խաղաղապիրութեան ժամանակներ չէին. չը նայած իշխանի նոյն իսկ չափազանց հեղութեան և կամակատառութեան, թաթարները մի անգամ այնպէս քանոդեցին ու կործանեցին Խաչէնի բերդերը, որ նոյն իսկ չէր կարելի իմանալ, թէ այդտեղ երբ և իցէ բնակութիւն եղել է: Պատմութիւնը չէ ցոյց տալիս, որ այդ աւերանքի ժամանակ որ և է զիմագրութիւն եղած լինի հայերի կողմից: Ուշրեմ, Զալալը մնեալործ է լոկ իրեն բարեպաշտ քրիստոնեայ: Եւ իրաւ. բռնութեան և արտասոնների տարիներում նա շինում է Գանձաւարի հոյակապ վաճառք. օժման հրաւիրուած են 700 քահանաներ, և Զալալը ճաշի վրայ սպասաւորում է նրանց:

Մենակ նա չէր այդքան կրօնասէր, նոյն իսկ կրօնամոլ: Նրա մայր Խորիշանը ծախում է իր բոլոր ունեցածը, բաժանում աղքաններին և գնում է Երևասաղէմ, ուր ճգնաւում է մինչև կնանքը վերջը, ապրելով իր ձեռքի աշխատանքով: Ճգնող էր, ինչպէս վկայում է Կիրակոսը, նաև Զալալի կին Մամքանը: Իսկ Զալալի որդի և ժառանգ Աթարէկը «որբանունգ», պարկեշտ, խոնարհամիտ և արօթական մարդ էր, ինչպէս մէկը սուրբ միայնակնացներից. որովհետեւ նրա ծնողները այնպէս էին դաստիարակել նրան»: ասում է նոյն կիրակոսը:

Ճգնաւորների մի ամբողջ ընտանիք: Նա կարող է նիւթ տալ մի հոգեոր ներբաղի, մի մարտիրոսաղբութեան համար (մանաւանդ որ Զալալը իր կեանքը վերջացրեց նահատակութեամբ, և նրա մարմնի վրայ, ինչպէս ասում են կրօնաւորները, երկնքից լոյս էլ է իջել), բայց ոչ թէ այնպիսի գաղտիարների համար, որոնք մայրած են «Ռուզան» դրամայի մէջ: Քաջ զօրավարները, յաղթող և անձնուէր հայրենասէրները այդտեղ դործ չունեն. չէ կարելի զօռով մարդկանց վզին փաթաթել այն, ինչ նրանք չեն ունեցել:

Բայց զրամայի գլխաւոր հիմքը այն վայրկեանն է, երբ Ռուզանը, իբրև անձնազոհ, հայրենիքի բախտին նուիրուած մի հերոսուհի, դժում է թաթարների բանակը, հակառակ իր ծնողների կամքին։ Այդ կէտք, որ պիէսի հոգին է կազմում, ամբողջովին շինծու է, հսարած։ Այդպիսի Ռուզան դոյութիւն չէ ունեցել։ Զալալի աղջկայ մասին Կիրակոս պատմագիրը միայն մի տեղ է յիշում, երբ նկարագրում է, թէ ինչպէս սպանեցին այդ բարեպաշտ, հեղ իշխանին։ Թաթար զօրապեաներից մէկը, Սրդուն, բռնում է Զալալին և տանջելով տանում է Ղազուին, ուր մտադիր է սպանել տալ նրան։ «Իսկ Զալալի դուսար Ռուզանը, որ Բարանուինի կինն էր եղել... զնաց Զօլաւուի կին Թօխուզ Խաթունի մօտ, որպէս զի աղատէ իր հօրը Արդունի ձեռքից»։ Ե՞րբ է Ռուզանը Բուրանուինի կինը դարձել, չը գիտենք։ Զամչեանը, չը զիանէք, ինչպէս է իմացել, որ այդ ամուսնութիւնը տեղի է ունեցել 1238 թւին, երբ թաթարները պաշարել էին Զալալի բերդը և երբ Զալալը խաղաղութեամբ հապատակուեց թաթարներին. իբրև թէ այդ խաղաղ գանադրաւթիւնը հաստատելու համար էր, որ Զալալը իր աղջկան տուեց Բուրանուին։

Ահա Զամչեանի այս խօսքերի վրայ է հիմնել պ. Մուրացանը իր զրաման, թէ այդտեղ ոչինչ չը կայ, որ ցոյց տար, թէ Ռուզանը մի ինչ որ աղէտի առաջն առնելու համար փախար բերդից և յօժար կամքով իրան յանձնեց թաթար զօրավարին։ Դնենք, թէ հէնց այդպէս էր. բայց դա ինչ թշուառ հայրենասիրութիւն է, որ թոյլ է տալիս մի օրիորդի ընկնել երկրի թշնամու զիրկը՝ հայրենիքի աղատաւթիւն ձեւոք բերելու համար։ Պ. Մուրացանը գիտէ, որ դա կը լինէր մի անհամ ու գատապարտելի հայրենասիրութիւն, ուստի իր հերոսուհու ձեւոքը թոյն է տալիս, որպէս զի նա վերջ դնէ իր կեանքին, նախ քան թաթարի կրքերի առարկայ դաւնալը։ Բայց այսուեզ էլ հեղինակին ծաղրում է պատմական ճշմարտութիւնը։ Ռուզանը ոչինչ թոյն չէ ունեցել իր հետ։ Զամչեանը Ռուզանի ամուսնութիւնը դնում է 1238 թուին։ Իսկ Զալալը նահատակուել է 1261 թուին։ Եւ որովհետեւ անհերքելի փաստ է, որ Ռուզանը Ղազուինում աշխատում էր աղատել իր հօրը, ուստի գուրս է գալիս որ Ռուզանը ամբողջ 23 տարի կին էր թաթարների մէջ, ամննեին չը մտածելով այն թոյնի մասին, որ պ. Մուրացանը դրել է նրա ձեռքում։

Այսպէս ահա, ուր որ նայում էք՝ տեսնում էք միայն կերծ ու շինծու զրութիւններ։ «Ռուզան» զրաման չունի իր մէջ ոչինչ պատմական ճշմարտութիւն։ Չունենալով ոտի տակ հաստատուն հող,

չունենալով իր շուրջը ոգևորող փաստեր, պ. Մուբացանը թխել է իր երեակայութեան միջոյով մի հայրենասիրական պատմուածք, ամենենին հոգ չը տանելով իր գոված ու փառաբանած հերոսների մասին։ Կեղծ դրութիւններ գրամայի մէջ—որքան կամենաք։ Հէնց նայեցէք այն տեսարանին, որ ներկայացնուամ է այն բոպէն, երբ Զալալի պալատում ստացւում է Բուրայի առաջարկութիւնը՝ Խուզանին իրան տալու մասին։ Վճռում են պատերազմ սկսել։ Զալալը չէ ուզում իր աղջկան թաթարի կին դարձնել. չէ ուզում այդ բանը մանաւանդ Ներսէհ իշխանը, որ Խուզանի նշանածն է, որ քաջ է, յաղթել է թաթարներին և Բուրայի առաջարկութիւնը լսում է հէնց այն միջոցին, երբ հարսանիքն է, երբ պիտի Խուզանի հետ ևլեղեցի զնայ։ Ամենաքը արտասանուամ են հայրենասիրական թունդ խօսքեր, ամենաքը քաջեր են. բայց հէնց որ լսում են, թէ Խուզանը փախել, զընացել է թաթարական բանակը՝ լսում են, հանդարտուում. և բեմի վրայ մնում են փայտէ սրերի շողովուն ու դատարկ խօսքեր, որոնք շատ ողորմնի կերպարանք են տալիս այդ «քաջերին»։ Ահա մի նմուշ այդ թշուառ ֆրազներից։

Ներսէհ. Եթէ զժոխի կատաղիներն անգամ զինուեն իմ դէմ, ես չի պիտի յաղթահարուեմ։ Ես կործքի մէջ, ուր բարախում է մի սիրո քեզ սիրելու համար, մնանում է և մի առիծ քեզ պաշտպանելու համար։ Քանի դեռ շնչում եմ, քանի դեռ արիւն է վազում իմ երակներում և քանի այս բազուկը կորովի է, ես թոյլ չեմ տալ, որ բանաւորի պիղծ ձեռքերը մօտենան քեզ, Յալց երբ ես անկարող կը լինեմ քո անիրաւ ճակատագիրը ջնջելու. երբ ես իմ քաջերով կ'լինեմ պատերազմի զաշոտմ, այն ժամանակ, Խուզան, ազգի փրկութեան սեղանի վրայ դու կը հանես քո ողջակէզը։ Ուրեմն դեռ այժմ մենք կ'երթանք դործելու։

Բառեր, բառեր, բառեր...

Իսկ երբ յայտնի է դառնում Խուզանի փախչելը՝ Զալալը ասում է թիկնապահներին։

«Բացէք բերդի գուռը. շտապեցէք նրա տուածն առնելու (թիկնապահները գուրս են վազում)։ Իսկ մէնք, բարեկամներ, յետաձենք առ այժմ մեր յարձակումը, մինչև որ տեսնենք Աստուած ինչ յաջողում։

Եւ Խուզանին արդելելու համար՝ պաշարուած բերդից դուրս են գալիս զիտէք ովքեր. — Երկու աղախին, մի ծառայ։ Փառաւորներից փառաւոր Ներսէհ իշխանը, Զալալ իշխանը և ուրիշները հանգիստ նստում են իրանց տեղը, սպասելով որ աղախիններն ու ծառաները յետ դարձնեն Խուզանին։ Երեկի քաջութիւն...

Երկար կը լինէր այս «պատմական» դրամայի անհեթեթութիւնները մի առ մի բերելը։ Նոյն իսկ եթէ վերցնենք

«Մուզանը» ոչ իբրև պատմական գրուածք, այլ լոկ իբրև երևակայութեան մի պտուղ, կը տեսնենք դարձեալ շատ պակասութիւններ։ Բոլոր գործող անձնութեալ միանման են. չը կան դէմքեր, չը կան բնաւորութիւններ. թաթարը, մատնիչ հայը, հերոսը, սիրահարը, նոյն իսկ ծառաները խօսում են միատեսակ լեզուով. դա հարուստ ու ողորկ է իբրև հայերէնի նմուշ, բայց անկենդան, շինծու է իբրև կենդանի մարդկանց խօսք։ Պ. Մուրացանը դանում է Պէջիկթաշեանի, Հէքիմեանի, Նարբէյի խիստ աղդեցութեան տակ։ Անդադար լսում եք «կամակոր հայ», «հեռու այդ սլիլծ ձեռքերով», «գարճրէք սրերդ իրանց պատեանները», «վատարանց», «Տէր-նուին», (թաթարական իշխանի անունը) «քաշիր լեզուդ, զարշելի պառաւ, ապա թէ ոչ սուրս կը լոեցնէ նրան» և այլ այսպիսի բառեր ու բացազանչութիւններ, որոնք սաստիկ յեշեցնում են մեր հանգուցեալ պատմական տրագեգիանները։ Աւելացրէք վրա վրայ և հեղինակի սաստիկ գրաբարամոլութիւնը (գործ է ածում «զի», «կարի», «առքելզ»), և պատկերը լրացած կը լինի։

Բայց «Մուզանից» կարելի էր մի փոքրիկ, ոչպատմական գործ շինել։ Պ. Մուրացանը լսու սիւժէտ է վերցրել, բայց չէ կարողացի նրան մշակել։ Մի օրիորդի անձնազոհութիւն հայրենիքի ազատութեան համար—սա թէ շատ հին, քաշչած նիւթէ, բայց ունի իր թարմութիւնը և միշտ սրերդի ու համելի կը մնայ։ Թոն այդ օրիորդը անպատճառ Զալալ իշխանի աղջիկը չը մինի, թոն նա լինի նոյն իսկ ոչ պատմական անձնաւորութիւն, այլ երևակայութեան ծնունդ—ոչինչ մնաս չը կայ դրանից։ Ընթերցազի վրայ տպաւորութիւն թողնում է Ռուզանը այն ժամանակից, երբ նա վճուռում է զոհուել հայրենիքի համար։ Նրա վախչելը բերդից, նրա ճանապարհը մինչև թշնամու բանակը, խօսակցութիւնը թաթար իշխանի հետ լսու են, տպաւորիչ Հէնց այս կտորներն ել սլիքսի աջողութեան գաղտնիքն են կազմում։

Բայց այդ կտորներից գուրս ուշադրութեան արժանի ու չինչ չը կայ։ Եթէ դէն դցուեն շինծու շատախօսութիւնները, թղթից ու փայտից շինած քաջերը, կեղծ զրութիւնները, տրազիքական անհամ բացականչութիւնները, որոնք միայն ծիծաղ են յարուցանում, մի խօսքով ևթէ ամբողջ սլիքսը մի լաւ, հիմնաւոր կրծատման ենթարկուէր և մնար միայն պաշարուած բերդից գուրս եկող աղջիկը, որ գնում է իրան զոհելու՝—այն ժամանակ «Մուզանը» կը լինէր մի կամ երկու արարուածից բաղկացած դրամա, որին նայելը համելի կը լինէր։

Իսկ ներկայ զրութեան մէջ նա անհեթեթութիւն է թէ

պատմական ճշմարտութեան և թէ մի գեղարուեստական երկից
պահանջուող յատկութիւնների տեսակէտից:

I.

11) Վ. ԲԱՐՅԱՐԾՈՎ. ԴՕՎ. Դասագիրք բնդիմուր պատմութեան, մասն
III. Նոր Դար, բարգմանեց եւ Հայոց պատմութեան յաւելուածով
ձոխացրեց Ն. Քարամեան. Երան. Առաջի Նատուրեանի. Բագու,

1900. 8^o. 379. գինը 1 ռուբլի:

Երեք պ. Քարամեանը իր այս թարգմանութեամբ միայն
ցանկութիւն է ունեցել ապացուցանելու, թէ մեր աշխարհա-
բարբ գեռ այնպիսի ողորմելի վիճակի մէջ է, որ չէ կարող
ճիշտ արտայայտել վերացական գաղափարներն ու պարզ նկա-
րազրել պատմական իրողութիւնները: Ուրիշ կերպ չեմ կարող
բացատրել, թէ ինչն է ստիպել այդ «հայագիտութեան սիւնին»
տալ մի այսպիսի աշխատութիւն, որի ամեն մի էջը անընդհատ,
բայց ապարդիւն ճիզ է լեզուի դժուարութիւնների դէմ մաքա-
սելու, մինչև որ վերջապէս, պարոնը այն աստիճան իւճճւում է,
որ հայերէնի փոխարէն սկսում է թոթովել Բաբելոննեան աշ-
տարակաշինութեան լեզուով:

Մուկուայի համալսարանի պրօֆէսօր Վինօգրադօվը, մի
լուրջ գիտնական, 1895 թ. հրատարակել է մի դասագիրք, որի
երրորդ մասի թարգմանութիւնը տալիս է այժմ պ. Քարամեանը
մեր միջնակարգ դպրոցների աշակերտների համար, «ամսամբ
փորձած լինելով թելադրութեամբ տաժանելի դասաւանդու-
թիւնը և միրայօժար հրձուանօք փութալով կատարել նորին
Վեհափառութեան հրամանը մի դասագիրք պատրաստելու պատ-
մութեան համար»:

Մուսերէն քնագիրը կարձ ժամանակամիջոցում երեք հը-
րատարակութիւն է ունեցել, և եթէ մամուլն էլ, մանկավար-
ժական աշխարհն էլ համակրութեամբ էին ողջունում նրա երե-
ւան դալը, պատճառն այն էր, որ հեղինակը, հետևելով այժ-
մեան պատմական դիտութեան պահանջներին, իր ձեռնարկի
մէջ առաջին տեղն է յատկացրել ժողովուրդների ներքին կեան-
քի, այսինքն—կրօնական, մտաւոր, հասարակական ու անտե-
սական յարաբերութիւնների զարգացման պատկերին, իսկ թա-
դաւորական տների ու աղջերի անվերջ խոսվութիւնների ու
կոփիւների մասին այնքան է խօսում, որքան անհրաժեշտ է քա-
ղաքակիրթ մարդկութեան առաջննորդացութեան մասին ամփոփ,
գաղափար տալու համար: Մասնաւորապէս Վինօգրադօվի՝
«Նոր Դար» հատորի այն ասկասկած առաւելութիւնն էին շեշ-

տում, որ այստեղ առաջին անգամ արժանավայել ուշադրութիւն է դարձուած այն մեծ շարժումների վրայ, որոնք վերաստեղծեցին կրթուած մարդու կեանքը 18-րդ և 19-րդ դարերում և ներկայիս տիրապետող պայմանների ամսմիջական պատճառներն են կազմում. այս տեսակէտով Վինօգրադօվի դասադիրքը անհամեմատ բարձր է, օրինակ, իլույակու գասագրքից, որի մէջ վերջին երկու դարերի դէպքերը մէջ են բերուած սղմուած, համառոտակի կերպով, շատ անգամ սխալ և գունաւորուած լուսաբանութեամբ։ Մի խոչը պակասութիւն սակայն նսեմացնում է Վինօգրադօվի ձեռնարկի նշանակութիւնը, գոնէ աշակերտական գործածութեան համար։ Ոճը, զուտ գիտնական լինելով, շատ ծանր է, կազմուած երկար ու բարդ նախադասութիւններից, անկենդան, զուրկ ամեն գեղարուեստական արժանաւորութիւններից։ Աշակերտը ստիպուած է ուշադրութեան ամբողջ ոյժը լարելու հեղինակի մոքին հետեւլու համար։ Այս կողմից աւելի քան գոհացուցիչ պէտք է համարել մի ուրիշ ուսւակելին դասագիրք, որ, պահպանելով գիտնական շարադրութեան բոլոր յատկութիւնները, զուրած է աշակերտներին լիովին մատչելի լեզուով, մեր խօսքը Պետերբուրգի պրօֆէսօր կարէնվի աշխատութեան մասին է, որի Յ-րդ հատորը—Նոր Դարը լոյս է տեսել գեռ անցեալ տարի, իսկ 1-նը և 2-րդը լոյս են տեսնելու հետզհետէ։ Սիսալուած չենք լինիլ, եթէ գուշակելու լինենք, որ Վինօգրադօվի գրքի նշանակութիւնը, իբրև գպրոցական ձեռնարկի, ընկնելու է ընդհանուր պատմութեան այս նոր ձեռնարկի հրատարակուելովը։

Հնդհանուր պատմութեան ինչ դասագիրք էլ որ թարգմանուէր մեր միջնակարդ գպրոյների համար, մեր ուսուցիչներից ու աշակերտներից պէտք է ընդունուէր ամենայն չորհակալութեամբ, էլ չենք ասում այնպիսի աշքի ընկնող ձեռնարկի թարգմանութեան մասին, ինչպէս է Վինօգրադօվինը ի՞նչ ունենք այդ առարկայի դասաւանդութեան համար—պ. Արասխանեանի «Արևելեան ազգերի պատմութիւնը», որ կազմած է ըստ Մասպերօյի և մի շատ սահմանափակ պատմական շրջան է ընդգրկում, պ. Հայր. Ղուկասեանի «Հին դարերի» և Գէորգ Սուրէնեանի «Հին և Միջին դարերի» թարգմանական ձեռնարկները, որոնք թէ հնայած են և թէ այնպիսի թերութիւններ են պարունակում, որ դասաւուն ստիպուած է շարունակ սրբագրել ու լրացնել։ Նոր դարերի համար՝ ոչ մի դասագիրք չունէինք։ Հասկանալի է թէ ինչու պատմութեան ուսուցիչները անհամբերութեամբ էին սպասում պ. Քարամեանի թարգմանութեան լոյս տեսնելուն, հաւատացած լինելով, որ այդ աշ-

խատութիւնը որքան էլ թերի լինէր, այնու ամենայնիւ շատ կ'օդնէր գասատութեան միջոցին։ Սակայն ծանօթանալով թարգմանութեան հետ՝ ամեն մէկը համոզւում է, որ հին անօնական գրութիւնը մնում է անփոփիս։ Իր թարգմանութեամբ պ. Քարամեանը ապացուցեց, որ նա ոչ ոռւսերէն լիւզուին է ափրապեառում, ոչ էլ հայերէնը այնքան զիտէ, որ օդուի «Արա ձեւրի ճոխ բազմատեսակութիւնից» (Ներածութիւն)։

Բերենք մի քանի օրինակ, գաղափար տալու համար, թէ նրգան է դիտութիւնը ոռւսերէնի բառական հարստութիւնից։

Распоряжаться полиціей—ոստիկանութեան մասին կարգադրութիւն ամել, превозносить—վերացուցանել, ցիническій—մի տեղ՝ անամօթ (Դիլրակէլի), մի ուրիշ տեղ՝ չնական, результатъ развітія—զարգացման եզրակացութիւն, устроилъ пренія—սահմանեց վիճաբանութիւն, кооперативный духъ—միաբանութեան ողի, капиталъное пріобрѣтеніе—հիմնական գրաւում, разсудочность—մի տեղ՝ պատճառակիրութիւն, մի ուրիշ տեղ՝ բանագույնութիւն, озnamеновать—տօնել, երդու—յանկարծակի, натуральное хозяйство—բնական տնտեսութիւն, ссылка на авторитетъ папъ—պապական հեղինակութեան վկայութեան կոչումներ։

Մի կողմ թողնելով ոռւսական ստուգաբանութիւնից բայերի ժամանակների շիոթութիւններ (անյեալ կատարեալը անցնալ անկատարի հետ, ինչպէս—составлялись—կազմուեցան, духовенство бралось—հոգևորականութիւնը ձեռնարկեց, օսудիլ—դատապարտում էր և այլն) մենք առաջ բերենք՝

Սխալ հասկացուած համաձայնական կապակցութիւնների մի քանի օրինակներ։

Пользоваться полною самостоятельностью въ устройствѣ и веденіи своихъ особыхъ дѣлъ—վայելել կատարեալը ինքնուրույնութիւն ներքին կազմակերպութեան և իւր յատուկ գործերի վարչութեան մէջ, изучали природу, изучали древніе образцы искусства—ուսումնասիրում էին բնութեան և գեղարուեստի հնագոյն օրինակները, kontrolъ и высшее направление дѣлъ—գործերի վերաստուգութեան և նրանց բարձրագոյն ուղղութիւն տալը։

Միւս կողմից ամեն քայլափոխում ոռւսաբանութիւն. преобладаніемъ обвязана—վերակշռութեամբ պարական է. ближе всего касались священнаго союза германскія дѣла—ուրազան դաշնագրութեան ամենից աւելի մերձաւոր էին գերմա-

նական գործերը, общая воинская повинность—ընդհանուր զինուորական պարտականութիւն (ասել է՝ զինուորագրութիւն):

Այսպիսի թարգմանութիւնների կողքին պատահում են հայերէն բառերի հետեւեալ շարահիւութիւններ.

Փորձուած վարպետներ հրապուրել—привлекать опытных мастеровъ. անզիհացոց բանակը ճահիճը խոթել—загнать английский лагерь въ болота. կոխները դիպչում էին ևրոպական զաղութներին, ոչ մի գործունէութեան նախագիծ—никакая программа действій. այսպիսի միջոցի ձեռնարկութիւնից յետոյ—въ виду такой смѣлой мѣры. անցքը միջին գարուց դէպի նոր ժամանակը տանձնապէս հիւանդաղին ձեռվ տեղի ունեցաւ—переходъ отъ среднихъ вѣковъ къ новому времени особенно болѣзненно совершалось. առանձին զօրաւոր կերպիւ—особенно сильно. անհրաժեշտ էր համաձայնութիւնը. լուրջ լուրը արագաթոիչ կերպով տարածուեց. ջնջուեցան առանց հատուցման գնի բոլոր հարկերի տեսակները—уничтожены безъ выкупа всѣ виды феодальныхъ повинностей. Կամ սեռականի յետափաս գործածութիւն, օրինակ—զգալ անգամ մի գերմանական տղի, մնաց հոգեոր առաջնորդ ժընեվի, Յարաբերական դերանունի պաօրինակ գործածութիւն—թագաւորն ատում էր կալուխնականներին, իրրեւ տէրութեան և ևկեղեցու հակառակորդներին, որ դահի նեցուին էր համարում—какъ противниковъ государственної церкви, которую онъ считалъ опорой своего престола.

Այս բռնազմոսիկ գարձուածները համնմուած են չինծու, երբեմն էլ ինքնահնար, բայց անձաշակ բառերով. возрожденіе искусства—գեղարուեստների վերածնունդ. идеаль—գեղակայ. փոխակերպել—преобразовать, հրազինուոր—вооруженный огнестрѣльнымъ оружіемъ. սուսերազինուոր—вооруженный холоднымъ оружіемъ.

Պ. Քարամեանի լեզուագիտական ստեղծագործութեան համնարը երեսում է մանաւանդ համազգային տերմին դարձած գիտական բառերի հայացման մէջ, որի վրայ «առանձին զօրաւոր կերպիւ» ճիզ է թափած.

Прагматическая санкція—«իրաւագիտական կարգագրութեան պատճառական սրբագրծում», , олигархія սուլղիչանութիւն. сеймъ—աւագաժողով, համաժողով, реакція и либерализмъ—յետաշրջում և ազատականութիւն. реформація—բարեչրջում, բարենորդութիւն. ре-

форма—նոյնպէս բարենորոգութիւն, парламентъ—խորհրդարան, реставрація—վերահաստատում, интендантъ—գործակալ կամ վերակայու. меркантилизмъ—վաճառականականութիւն, протекціонализмъ—ինամակալականութիւն, конгресъ—ընդհանուր ժողով, конвенція—համագումար, сенієрія—տանուտերութիւն, дезэмъ—աստուածանց աղանդ, մуниципалитетъ—քաղաքատեսչութիւն, конвентъ—համախումբ ժողով, ուրիշ տեղ՝ սահմանադիր, մի տեղ էլ համագումար ժողով, директорія—վարչարան, бюрократическій—պաշտօնէական, դիւնակալական:

Երբեմն յայտնի տերմինները չը հասկանալով, գաղափարները խառնում էին Օրինակ.

Ջրաբաշխական մեքենայ՝ գидравлическая машина, որը ջուր երբէք չէ բաշխում, այլ ջրի ոյժով է գործում. վարձակալ երկրագործ—ֆերմեր (իրլանդիայում), որ ոչ թէ վարձ էր ստանում, այլ ինքը վճարում էր իր մշակած հողի փոխարէն հողատիրոջը: Մարդօգուտ գիտութիւն—գյումանիզմъ, որ երբէք չէր ձգտում օգուտ բերելու մարդուն. յեղափոխական հաւատաքննիչներ—революционерные инквизиторы, որոնք հաւատի հետ ոչ մի գործ չեն ունեցել, այլ հալածել են միայն քաղաքական հակառակ գաղափարները:

Անհաշտ թշնամութիւն հրատարակելով օտար բառերի գէմ, պ. Քարամեանը երբեմն սախառուած է լինում գոնէ փակադերի մէջ բերելու տերմինների օտար ձևը, բայց, անհասկանալի ֆուրանսամիրութեամբ, վերջնում է դրանց ոչ թէ սկզբնական, տեղական արտասանութիւնը, ինչպէս ամեն տեղ ընդունուած է, այլ Քրանսերէն տերրօ—տերրէօր, կոնկրծած—կոնկրծած, ինտենդանտъ—էնտէնդան, կոնտրիպան (որ սխալ թարգմանում է փրկանք): Եւ միամստարար կարծելով թէ Քրանսերէնի մէջ էլ ուսական ԱՅՄ վերջաւորութիւնը իգմ է (մինչդեռ isme=լսիմ), զրում է. օրինակ. սենսուալիզմъ—սանսիւյլիզմъ, մատերիալիզմъ—մատերիալիզմъ, մերկանտիզմъ—մերկանտելիզմъ:

Բայց սպարոնը ոչ պակաս զրաբարամով է. ամեն տողում մի-մի գրաբար բառ, կամ գոնէ գրաբառ ձե, ինչպէս. Մեր գարու սկզբան, մետասանամեայ, հարկաւ, յիրաւի, յառաջ բերին, ամենուրեկը, համակարգեալ, ոգեստեալ, արտօնաւորեալ, առաքեալ—առաքելոյ, քահանայք—քահանայից, երից գասակարգների համաժողով, հնարաւոր կացոյց:

Եւ որանց կողքին. Սկսու, դրաւ, արաւ, բերու, առնուեցաւ, կազմուում, ձայնառուութիւն:

Հասկանալի է, որ այսպիսի լեզուագիտական գոհարներով դարձարուած թարգմանութիւնը մի շարք անհեթեթութիւններ պիտի ներկայացնէ աշակերտաներին, որոնց առանց այն էլ խեղածուկ հայերէնը միայն կարող է աւելի ևս խառնաշփոթուել, օրինակ, այս տեսակ հատուածներից.

Եթէ միապետական իշխանութիւնը երիար գործեց Ֆըրանսիայում միահեծանութեամբ և առանց վերահսկողութեան, գրա համար և այժմ ժլատաբար էին չափում իրաւունքն և հնարաւորութեան չափ քիչ ազդեցութիւն էին յատկացնում նրան (226):

Յարմար գիտուածում քաղաքացոց իշխանութիւններին ընդդիմանալու իրաւունքը գժուար էր սահմանադրութեան մէջ որոշել մանրամասնօրէն, բայց իրաւունքների յայտարարութեան մէջ գրա ձևական ճանաչումը զուրկ էր նշանակութիւնից, աչքի առաջ ունենալով այն սպառնական դիրքը, որ բանել էր Փարիզը, և յուզուած վիճակը տաք գլուխների, որոնք բաղմաթիւ էին Ֆրանսիայում (230).

Բայց որ մէկ օրինակը բերենք—անչափ բազմաթիւ ևն այսպիսի հատուածները:

Իսկ հայոց պատմութիւնից պլ. Քարամեանը բերում է 5^{1/2} երես վայրիվերոյ տեղեկութիւններ, որոնք յամենայն զէպս հեռու են «Ճոխութիւններ» լինելուց... Սւրեմն, պլ. Քարամեանի թարգմանութիւնը այնքան թերի է և գժուարամարս, որ անկարող է լրացնել պատմութեան գասագրքի այն մեծ պակասը, որ զգացւում էր մեր մէջ:

ԱՏ. ԼԻԱ.

12) ԿԷՕ. Հայկական ռպագրութիւն: Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում: Հատոր առաջին, XVI-XVIII դար Նրանապատ «Մշակ» լրագրից: Թիֆլիս, 1901. եր. XVI+451, գինն է 1 ր. 50 կ.:

Անցեալ 1900 թ. յունիսի 11-ին Գերմանիայի Մայնց քաղաքում տօնուեց Յոհանն Գուտենբէրգի ծննդեան 500-ամեայ յոթելեանը: Գուտենբէրգը մարդկութեան առաջնակարգ բարերարներից մէկն է—տպագրութեան հնարողը, ուստի և բոլոր քաղաքական պատերին ազգային պատուածները՝ մասնակից եղան այդ հաղուագիւտ յորելեանի տօնին: Մենք, հայերս, անմասն չենք մնացել տպագրութեան բարիքներից. բայց նրա հնարողի յոթելեանին մասնակցելու, մեր երախտագիտութիւնը արտայայտելու նկատմամբ

ոչնչից ոչինչ չարինք: Միայն կէօն յիշեց և յիշեցրեց, որ մենք էլ պարտաւոր ենք մի բան անել այդ առիթով, և երբ ոչ ոք արձագանդ չը տուեց նրա կոչին՝ ինքը մենակ ձեռնարկեց և զլաւխ բերեց այս գործը, որ յունիսից սկսած հետզհետէ տպագրուեց «Մշակում» և այսօր մեր առաջ գրուած է առանձին հատորով:

«Թօս չորս դար մեղ ապրեցրել է Գուտենբերգի զիւտը—տառւմ է հեղինակը ներածութեան մէջ:—Եւ ակաօր, երբ տառւմ է մեր այդ անհնան երախտաւորի լորելեանը, ի՞նչ կարող ենք մենք նուիրել նրա անմահ լիշտակին: Միայն մի բան—մեր երախտավիսութիւնը: Դա է մեր միավ պասկը Գուտենբերգի անյալտ գերեզմանի վրայ: Իսկ թէ որքան թանգարին է այդ պասկը, մենք ալդ կորող կը լինենք չափել ու կշռել, երբ կիմանանք թէ ի՞նչ էր ապագրութիւնը մեզ համար»:

Աւելի յաջող միավ չէր կարող լինել—տպագրութեան հնարողի յորելեանի առիթով և ի յիշատակ՝ գրել հայկական տպագրութեան պատմութիւնը: Նոյն նիւթի մասին գրուած կան և ուրիշ աշխատութիւններ—բոլորը Վենետիկի Միթարեան Գար. վ. Զարքհանէլեանի գործ: Դեռ 1877 թուին սա իր «Հայերէն գլուութեան պատմութեան» երկրորդ հատորում զետեղել է մի զլուխ՝ «Հայկական տպագրութիւն» վերնագրով (եր. 274—352): Ապա «Հայկական մատենագիտութեան» մէջ (1883 թ.), զրել է մանրամասն ցուցակ հայերէն հին տպագրութիւնների, նշանակելով տարին, տպարանը, զրքի անունը, հեղինակը և այլն: Վերջապէս 1895 թուին նոյն հեղինակը առանձին զրքով հրատարակել է «Պատմութիւն հայկական տպագրութեան», որ պարունակում է առաջին երկու աշխատութիւններն՝ աւելի ընդարձակուած և նոր զիւտերի յաւելուածներով: Այս երեք աշխատութիւններն էլ չատ սահմանափակ ծրագրով են կազմուած—ջշափում են միմիայն տպարանների, տպագրիչների և տպագրութիւնների պատմութիւնը (այն էլ՝ ոչ բալորավին կատարելապէս), կաղմնով մենագրութիւններ (մօնօգրաֆիա), որոնք կարող են գեղեցիկ նիւթ և աղքիւր լինել ուսումնասիրութեան համար, բայց չեն կարող ծառայել իբրև ընթերցանութեան նիւթ:

Բոլորովին տարբեր ծրագիր և նպատակ է գրել կէօն իր զրքի համար: Նա տպարանի վրայ չէ նայում իբրև լոկ արհեստանոցի վրայ, այլ իբրև մի միջոցի վրայ, որ տարածում է զրականութիւնը, այնպէս որ նա տպարանի նիւթական պատմութեան հետ զուգընթացաբար անում է և զրականութիւնը պատմութիւնը, և որովհետեւ գրականութիւնից անբաժան է կեսանքը՝ ուստի հեղինակը աշխատում է լուսաբանել և հայոց կեանքը՝ որչափ կարելի է պարզ կերպով: Հեղինակն ինքը յայտնում է.

«Իմ ծրագիրն էր տալ պատմուածքներ մեր անցեալ մտաւոր, կուլտուրական և քաղաքական կեանքից: Բայց ես այս աշխատութիւնը անուանեցի «Հայկական տպագրութիւն», որովհետեւ տպագրութիւնն է այն առանցքը, որի շուրջը պտուտ են գալիս իմ պատմուածքները... Ես միտք չեմ ունեցել տալ մի զիանական աշխատութիւն... Ո՞չ: Մեր ճորդութը — ես ամենից առաջ նրան եմ աչքի առջև ունեցել — ոչինչ չը գիտէ իր անցեալի մասին: Իմ ուժերիս ներածին չափ օգնել երան մի մասչեի, կենդանի կերպով պատմուած գործով — տյու էր իմ ամբողջ ձգտում»:

Եւ յիրաւիք, զիրքը ընթերցողների առաջ բաց է անում միշտք պատկերներ մեր անցեալ կեանքից, մեծ մասամբ տիտոր և յուսահատական, երբեմն էլ յուսալից. ինչպէս մի կալէյտոսկոպի միջով՝ ընթերցողի աչքի առջեով անցնում են կանկթամուրն իր աւերածներով. տաճկական լուծն իր և նիշէքիներով ու հարստահարութիւններով. հայ գաղթականութիւնները, հայ վաճառականները, իրանց լաւ ու վատ կողմերով. Շահաբասն և հայոց Արաքս գետը անցնելը. Էջմիածինն՝ աւերակ և բոյն գարձած գիշատիչ տպէտ կաթողիկոսների. Կ. Պօլսի պատրիարքներն ու ակրող բարոյական անկումը. Խորայէլ Օրին և հայոց վերածնութեան երկունքը: Սրանց հետ միասին գալիս են պատկերներ և եւրոպական կեանքից — վերածնութեան գարը, տպագրութեան տարածուելը. Հոռմ և կաթողիկութիւնը, միսիօնարները, կրօնական մեծ յեղափոխութիւնը, եղուփառները. Կ. Պօլսի նուանումը օսմանցոց ձեռքով, արենելեան հարցի սկզբնաւորութիւնը և նրա լուծման պատմութիւնը: Այս պատմական պատկերների մէջ զետեղուած են գարձեալ պատկերներ՝ հայկական տպագրութեան վերաբերեալ. հեղինակն ընթերցողին երբեմն տանում է Վենետիկ, երբեմն Լիվոնոյ, այսուղից Ամստէրդամ, Կ. Պոլսի, Մարտէյ, Նոր-Զուղայ, գարձեալ Ամստէրդամ և այլն, և նկարագրում է հայ տպագրութեան գործիչներին — Արգար Թօփսաթեցի, Սուլթանշահ, Խաչատուր կեսարացի, Մելքիսէթ վարդապետ, Ռոկան երեանցի, Մաթէոս ծարեցի, Մաթէոս և Դուկաս վանանդեցիներ, Թովմաս եպիսկոպոս Նուրիջաննեան և այլն: Սրանց հետ զալիս են գարձեալ պատկերներ հայոց գրութեան, մտաւոր կեանքի, հայ աշուղների և մի քանի հեղինակների: Կարելի է ասել՝ ամբողջ զիրքը բաղկացած է բազմաթիւ պատկերներից, որոնց մէջ հեղինակը աշխատել է ներքին կապ հասաւել:

Ո՞րչափ յաջողուած են այս պատկերները: Լէօն լաւ ծանօթ է հայ ընթերցող հասարակութեան, և նրա ոճն ու ողին յայտնի են: Եթէ երեակայենք, թէ նրա գրուածքը մի երաժշտութիւն է՝ տպա կարող ենք ասել, թէ նրա նուազարանը բնական աստիճանից բարձր (զիլ) է լարուած. կամ եթէ նրա

գրուածքը նմանեցնենք նկարի՝ ապա պէտք է ասենք, որ թունդ գոյներ է գործածում: Միշտ նկարադրական, միշտ աշխայժ նա չէ կարող հանդիսան գրել, պատմելիս նա ճառ է ասում, ապա ցուցանելիս՝ միմում է: Նա զգում է սաստիկ, սաստիկ էլ լինում է նրա արտայայտութիւնը:

Մի փոքրիկ հատուած նրա գրքից՝ կը բացատրէ մեր խօսքը.

«Մելքիսէթի երկարամեայ կաթողիկոսութիւնն օրով վայրենացած հոգեւուականութիւնը չեր կարող նոյն խոլ մասնել և կտակներ թողնել տապագրութիւնն մասին: Մելքիսէթին յաջորդեց նրա եղրորդի Սահակը, որ պարտէ համարեց իր ելուահոչակ հօրեղբօր մի հաւազատ կտորը լինել—նոյնպէս շրջապատուած հարկահաններով, նոյնպէս աստանդական՝ ժողովրդի արիւնը ծծելու համար և նոյնպէս անարգուած ժողովրդից: Բայց Սահակը երկար չը կարողացա իր բաջազուծութիւնները ցոյց տալ: Հայ ժողովրդի մէջ արդէն ալնքան գիտակցութիւն և ոյժ էր հաւաքուել, որ նա կարողանում էր դիմադրել ու պատժել զրնի իր վեղաւառ խաներին» (եր. 107—8):

Ո՞րքան փոխաբերութիւններ, չափազանցութիւններ, նմանութիւններ, հեղինութիւններ այս մի փոքր հատուածում, և դրանք վնասվի, բռնի չեն, այլ բնական, ինքնաբուզի, որով ստացւում է մի կենդանի, ազգու ոճ՝ յատուկ բանաստեղծութիւն: Այս ոճը յատուկ է լէօփ գրչին. ինչ էլ որ լինի նրա նիւթը՝ միննոյն է, նա միշտ նկարադրող, բանաստեղծ է:

Հեղինակի ոգին և ուղղութիւնը նոյնպէս անձանօթ չեն մեղ. նրանք վազուց արտայայտուել են զանազան տոփթներով այլ և այլ գրուածքներում, մանաւանդ «Մշակի» մէջ: Անկեղծ սիրող քաղաքակրթութիւնն, ծշմարիտ քրիստոնէութիւնն, ազգերի համերաշխութիւնն, խղճի ազատութիւնն, արգար յարաբերութիւնն ազգերի և անհամաների մէջ՝ նա չմիշտ զեկավարւում է այս սկզբունքներով՝ երբ պէտք է գնահատէ այս կամ այն իրողութիւնը, այս կամ այն անձը: Ոչ մի կողմնակի գիտում, ոչ մի կոմպրօմիտ չեն շեղում նրան իր այս բարոյական գաւանքից: Նա հաւասարապէս դատապարտում է տղիտութիւնը, կեղծիքը, անբարոյական քաղաքականութիւնը, ճնշումը—թէկուզ հայերի մէջ նրանք երևան գտն, թէկուզ օտարների. կարելի է ասել՝ նա աւելի խստապահանջ է գէպի հայերը, որ հետևանք է նրա աւելի մեծ սիրուն զէպի իր ազգը և աւելի սրտայաւութիւն՝ սրտ պակասութիւնների պատճառով: Վերը մի հատուածում տեսանք, ինչպէս է նա հարուածում հայոց «վայրենացած» հոգեւորականութիւնն ու նրա «վեղարտոր խաներին», որտեսք «պարագ են համարում ժողովրդի արիւնը ծծելը: Նոյն խիստ լեզուն նա դործ է ածում՝ երբ պատկերացնում է կաթողիկ և կեղեցու բացասական կողմերը և եղուխների գործունէու-

թիւնը, առաջինի գործ զրած համատարած ճնշումը մաքի ու խղճի աղատութեան վրայ, երկրորդի ճարպիկ, բայց անբարոյական միջոցները՝ «ի մեծաղոյն փառս Աստուծոյ»:

Այս համակրելի ուղղութեամբ նայելով պատմական երեւոյթների վրայ՝ տեղական հեղինակը մտցնում է և ճշմարիտ, եթէ կարելի է ասել՝ «ուղղափառ» լուսաբանութիւն հայոց կեանքի մի քանի պատմական և զրական հարցերում: Մեր պատմութեամբ ու զրականութեամբ ամենից աւելի զբաղուել են Վենետիկի Մխիթարեանները: Զը խօսելով նրանց գիտական աւելի կամ նուազ պատրաստութեան ու մէթօդի մասին, որոնցից կախումն ունի աշխատանքի գիտական արժանաւորութեան աստիճանը՝ նրանք ունին մի քանի էական պակասութիւններ:— կեանքից կարուած վաճականներ են, լեզուի հարցերում պուրիստ են (լեզուի մաքրութեանը չափազանց մեծ նշանակութիւն առուղ) և դաւանութեամբ կաթոլիկ են: Այս յատկութիւնները թողնում են իրանց գրումը նրանց պատմական աշխատութիւնների վրայ, գարձնելով նրանց՝ հայեացքի կողմից սահմանափակ և ողու կողմից կաթոլիկ, և մենք շարունակ կարգալով այդ աշխատութիւնները՝ ակամայ ևնթարկուում ենք այդ հայեացքների և ոգու աղջեցութեան և ծուռ ու անարդար հասկացողաւթիւններ կազմում մեր պատմական անցեալի մասին: Լէօն ահա մի քանի հարցերում, որոնք առիթ է ունենում չօշափել իր գրքում՝ ուղղում է Մխիթարեանների այդ սխալ հայեացքներն և ուղիղ տեսակէտով լուսաբանում անձերն ու իրերը: Այսաէն՝ լէօն ճիշտ և արժանաւոր գնահատութիւն է անում Ռուկան վարդապետի գործունէութեան, այս բազմաչարչար, բազմաշխատ անձի, հայոց Գուտէնբէրգի, որ անասելի գժուարաւթիւնների յաղթելով, հալածանքների, զրամական տագնապի, դաւաճան ընկերների հարուածների տակ՝ քաղաքէ քաղաք թափառեցաւ: Եւրոպայում՝ հայերէն գրքեր տպելու համար, հիմնեց ժամանակի լաւագոյն հայերէն տպարտումը և տպագրեց առաջին անգամ Սատուածաշունչը հայերէն լեզուով և ուրիշ չառ զրքեր: Այն-ինչ այս նահատակի-գործիչը Մխիթարեանների զրուածքներում արհամարհանքի է ենթարկուած այն պատճառով, որ իր զրաբար լեզուի մէջ մտցըել է լատինալրան աղաւազութիւններ, որոնք ընդհանրացած տարածուած էին նրա ժամանակ:— Նոյնակէս անինայ հարուածում է լէօն Ալ. Պիգու կաթոլիկ կրօնաւորին—մի գործունեայ անձնաւորութիւն, որ նշանաւոր գեր կատարեց Լէհաստանի հայերին կաթոլիկ դարձնելու գործում, զիմելով այնպիսի միջոցների՝ ինչպէս են կաշառք, խաբէութիւն, սպառնալիք, բռնութիւն, աքսոր, մատնու-

թիւն և այլն *): Զը բաւականանալով իր հարուստ որսով կեհաստանում՝ նա մրանսիայում էլ մատնեց Ռոկանին, թէ նա տպում է հայերէն լեղուով հերետիկոսական (այսինքն՝ ոչ-կաթոլիկ) գրքեր, և ջանք արաւ, որ այդ տպագրութիւնը խափանուի, կամ գոնէ Ռոկանը պաշտօնապէս ընդունէ կաթոլիկութիւն։ Նրա ջանքով՝ կաթոլիկ գրաքննիչ նշանակուեց Ռոկանի հրատարակութիւնների վրայ, որ այնքան աղէտների գուռ բացեց Ռոկանի համար և խափանեց նրա արդիւնաւոր գործունէութիւնը։ Ահա այս հոչակաւոր Պիդու կրօնաւորի մասին Մըլիթարեանները գրում են այսպէս. «Հայոց պահապան կեցող եկեղեցականաց մէջ նշանաւոր եղաւ հայրն Փիտու, որ անկեղծաբար եւ հաւասար լուսամտութեամբ մայր եկեղեցւոյ զիրկն առաջնորդեց Լեհաստանի հայոց գաղթականութիւնը»։

Հեղինակը աշխատում է կեանքը և դրականութիւնը կապել միմեանց հետ՝ իրքի փոխադարձարար միմեանց վրայ ապդող գործօններ, աշխատում է պատմական անցքերը միմեանց հետ կապել՝ իրքի պատճառ ու հետեանկը։ Այս ուղղութիւնը այժմը ալիրապեատում է ընդհանուր պատմական զրականութիւնն մէջ, և լէօն հետեւում է այս ժամանակակից մէթօդին, որպէս նըրա աշխատունքը առելի հետաքրքրական է դառնում, մինչն ժամանակ՝ գործը առելի դժուարանում ու պատասխանատու դառնում։ Տեղը չէ այստեղ խօսելու այն մասին, թէ ինչ բարդ գործ է այսպիսի պատմութիւն զրելը և ինչ անազին, երբեմն անյաղթելի դժուարութիւններ են ծագում պատմազրի առաջ։ մենք բաւականանում ենք մեր ընդհանուր տպաւորութիւնը յայտնելով, թէ հեղինակը այս կէտում, մեր կարծիքով, ամեն անդամ չէ յաջողել։ Լիովին գոհացնող լուսաբանութիւնների հետ պատահում են և այնպիսիները, որոնք չեն գոհացնում մեզ, և մենք կարդալով այս կամ այն բացատրութիւնը մի պատմական կամ զրական երեսյթի մասին՝ մեր մտքում մի հարցական նշան ենք դնում, տարակուսանք յայտնում։ Լուսաբանութիւնն անբաւարարութիւն ենք համարում և խօսիք այն բացառույական ձեզ, որին յաճախ դիմում է հեղինակը և որը կարելի է ձետեղակել «թէպէտե—բայց» բառերով։ Օրինակ՝ նա նկարում է կեանքի կամ մաքի մի խաւար պատկեր, այդ պատկերից յետոյ մի լուսաւոր պատկեր՝ իրքի շարունակութիւն և ծնունդ տուածինի։ Բնական արամաբանութեամբ՝ մենք խաւարից պէտք է

*.) Նրա այս բառկութիւնները երեսում են հէնց այն լիշտակարանում, որ ինքը Պիդուն է դրել (Ցես „Բռնի միութիւն Հայոց Լեհաստանի“ գրքի առաջին մասը, եր. 1—135):

սպասէինք խաւար, «բայց», (իբրև ըացառութիւն) լոյսի ենք հանդիպում: Եւ մենք ի հարկէ չենք հաշտում այս «բայց»-ի հետ և ասում ենք. երիի խաւարի մէջ եղել են և լուսաւոր երեսյթի սաղմերը, որոնց հեղինակը չէ նկատել, ընդհանուր խաւարի տպաւորութեան տակ. իսկ յետոյ, երբ այդ սաղմերը աձելով լուսաւոր պատկեր են: տուել՝ հեղինակը չէ կարողացել նրան այլապէս հասկանալ՝ եթէ ոչ իբրև մի «բայց». Մեր սովորութեան հակառակ՝ այս կէտը ապացուցանելու համար չենք բերում օրինակներ, որովհետեւ ստիպուած կը լինէինք որաւմական քննութեան մէջ մտնելու, որ առանձին յօդուածների նիւթ կարող է լինել և ոչ մի մատենախօսական համառօս ակնարկի: Միայն պէտք է ասենք, որ անբաւարար, նոյն-իսկ սխալ լուսաբանութիւնը այնպիսի գաւառում, ինչնպէս մեր պատմական անցեալն է՝ անխուսափելի է, և հրաշք կը լինէր՝ եթէ այդ մոռացուած, անմշակ, տեղեկութիւններով աղքատ անցեալը հէնց զրչի առաջն փորձավ կատարելապէս լուսաբանուեր իր բոլոր խաւերում: Մենք չնորհակալ պէտք է լինենք լէօփից, որ ժամանակակից մէթօդի լոյսը ուղղել է մեր պատմութեան այդ խաւար էջերի վրայ և շատ բան լուսաւորնել է յաջողաւթեամբ. չնորհակալ լինինք և չը յաջողուած կամ կասկածելի բացարարութիւնների համար—որովհետեւ հէնց զրանցով նա հարցասիրութիւն, հետաքրքրութիւն է շարժում ընթերցողների մէջ:

Գիրքը, իր նիւթով, չօշափած հարցերով, արտայայտած հայնացըներով, աշխայժ, կինդամնի պատմուածքով ընթերցանութեան շատ հետաքրքրական նիւթ է ոչ միայն «ժողովրդի» համար, այլ և ինտելիգենտ գասակարդի համար, որի վերաբերութեամբ էլ սխալ չի լինի ասել հեղինակի խօսքը, թէ «ոչինչ չը զիտէ իր անցեալի մասին»:

ԱՏ. ՄԱԼԻԽԱՍԵՍՆՅ

13) Տօֆ. Կ. ՏԱՂԱՎԻՍԻՒՑԱՆ.—Տարուինականութիւն. 9 տպագրութիւն. Կ. Պոլիս 1901թ.

Դոկ. Տաղաւարեանը իր գրքոյի մէջ աշխատել է չօշափել համարեա այն բոլոր խնդիրները, որոնք կառ ունեն գարվինիդմի հետ: Գրքոյիը բաղկացած է երեք մասից. 1 մասում հեղինակը ծանօթացնում է ընթերցողն այն հայեացքների հետ, որոնք ընդունուած են բնագիտութեան մէջ («Տեսակների» մասին) մինչև Դարվինի աշխատաւթիւնների լոյս տեսնելլ: Երկրորդ

մասում հեղինակը բացատրում է, թէ ինչումն է կայանում գարվինիզմը. իսկ երրորդում առաջ է բերում այն փաստերը, որոնք ապացուցանում են Դարվինի վարդապետութիւնը:

Մի փոքրիկ՝ 52 երեսից բազկայած գրքոյկի մէջ բազմաթիւ հարցեր շօշափելու հետեանքն է, որ հեղինակը ստիպուած է եղել շատ համառօտ կերպով խօսել ամեն մէկ հարցի մասին: Ենորիւ այդ հանգամանքի, գրքոյին ստացել է կոնսպեկտի բնաւորութիւն. այն ընթերցողը, որ ոչինչ չը գիտէ գարվինիզմի մասին, հազիւ թէ կարողանայ գաղափար կազմել այդ վարդապետութեան մասին դոկ. Տաղաւարեանի գրքոյկով: Մեր կարծիքով՝ հեղինակը պէտք է իր ուշազրութիւնը կենարոնացնէր միայն մի քանի ամենաէկան կէտերի վրայ, դուրս ձգելով բոլոր երկրորդականները. այն ժամանակ նա հնարաւորութիւն կ'ունենար աւելի երկար կանգ առնել իւրաքանչիւր հարցի վրայ և աւելի լուս պարզաբանել նրան:

Բրօշիւրի երկրորդ խոշոր պակասութիւնը նրանում է կայանում, որ հեղինակը համեմատաբար շատ երեսներ նուիրելով կամարքի հայեացքներին (որ այնքան էլ անհրաժեշտ չէր) և Դարվինի վարդապետութիւնը ապացուցող փաստերին, շատ համառօտ կերպով է խօսում բուն դարվինիզմի մասին: Վերջուպէս ի նկատի ունենալով, որ հասարակութիւնը յաճախ շփոթում է գարվինիզմը առաջադիմութեան սկզբունքի (Եվլիւցիալի) հետ, ցանկալի կը լինէր աւելի շեշտած տեսնել այդ երկու տեսութիւնների տարբերութիւնը, քան այդ արել է դոկ. Տաղաւարեանը իր գրքոյկում:

Գրուածքի ոճը վերին աստիճան ուարդ է և հասկանալի:

Ա. Բ.

1-4) Dr. V. Totomjanz und E. Toptschian. Die social-ökonomische Türkei. (Վ. Տոտոմյանց և Ե. Թոփչեան. Տաճկառական հասակական և անտեսական տեսակչութիւն). Berlin. 1901. հրատարակութիւն
R. Prager.

Գրքի շապկի վրայ, որպէս էպիգրաֆ, տպագրուած են Էնգելսի խօսքերը—«Տաճկական տիրապետութիւնը անկարելի է իսկապէս հաշտեցնել կապիտալիստական հասարակութեան հետ: Շահը ապահով չէ յափշտակող սատրապների և վիշաների րեժիմի տակ. այսուեղ պակասում է բուրժուական շահազործման էական պայմանը, այսինքն՝ առներականի և նրա սեփականու-

թեան ապահովութիւնը»: Թիւրքերի տիրապետութեան պատմական տևառութեան մէջ, որով սկսում է զրքի բովանդակութիւնը, ցոյց է արում, թէ ինչպէս թիւրքերը, որպէս տիրող զաս, ոչ մի ժամանակ չեն ձգտել առաջ բերել հպատակ ազգութիւնների ձուլումը (Assimilation) տիրող ազգութեան հետ: Թիւրքերի վերաբերումը, օրինակ, գէպի քրիստոնէական ազգութիւնները միշտ եզել է և շարունակում է լինել յաղթողի զիրք՝ գէպի պատերազմում վերցրած գերի: Կառավարութիւնը չը հետաքրքրուելով իր հպատակ ցեղերի կեանքով, միջոց է տուել նրանց պահպանել իրանց ինքնուրոյնութիւնը: Երկրորդ գլուխը նուիրուած է հայերին և հայկական խնդրին, որտեղ բերուում է ամենիկական միսսէօներ Գրինի կարծիքը այդ խնդրի վերաբերմամբ: Գրինի կարծիքով՝ հայկական հարցը կարող է երեք տեսակ լուծում ունենալ. ա) Տաճկա-Հայաստանի գրաւումը Ռուսաստանի կողմից, բ) ինքնուրոյն Հայաստանի սանդումը և գ) Բերլինի գանադրութեան կողմից պահանջած բէֆօրմների իրագործումն Հայաստանի մէջ:

Գրքի հետեւալ վեց մտսերը պարունակում են զանագան տեղեկութիւններ Թիւրքիայի բնական հարստութիւնների— երկրագործութեան, արուեստագործութեան, պետական տուրքերի, հազորդակցութեան և առևտուրի մասին: Ասիական Թիւրքիայի բնական հարստութիւնները շատ նշանաւոր են, սակայն տաճկական ամբողջ ընդիմը անկարելի է զարձնում նրանց պատշաճաւոր շահագործութիւնը: Որպէս զի նրանք շահագործուեն՝ հեղինակների կարծիքով, ամենից առաջ անհրաժեշտ է բարւոքել և աւելացնել երկրի ճանապարհները և ոչնչացնել տուրքերի կազալի գինը: Շատ տխուր պատկերներ է տալիս Թիւրքիայի տնտեսական զրութեան մասին այն հանգամանքը, որ ամբողջ այդ երկրի միայն $\frac{1}{10}$ մասն է մշակւում: Կարելի է երեակայել, թէ ինչ հարստութիւն կը բղիս այդտեղից, եթէ այդ հարուստ երկիրն ընկնի եւրոպացիների ձեռքը: Թերթելով տարբերի գըլուխը, մարդ զարմանում է, թէ ուրիշ էլ ինչ բանի համար չէ վճարում օսմանեան հպատակ-դիւղացին, թէ քրիստոնեան և թէ մահմեդականը:

Իրանց ուսումնասիրութեան վերջը հեղինակները դաշխ են այն եղբակացութեան, թէ տնտեսապէս Թիւրքիան արագ քայլերով գնում է գէպի անկումը: Երկրագործութիւնը, աւետուրը և ինդուստրիան նշանաւոր կերպով ընկնել են: Պետական արդիւնքների մի մասն արդէն զրաւ է զրուած, այդ պատճառով էլ վայր է ընկնում և նրա ներքին ու արտաքին վարկը (կրեգիտը): Շատ նշանաւոր հարուած էր Թիւրքիայի համար

Ղրիմի պատերազմը։ Այդ երեսում է նրանից, որ մինչև 1854 թ. նա չունէր արտաքին պարագ. իսկ այդ տարրուց մինչև 1875, Բարձրագոյն Դուռը կնքեց 12 արտաքին փոխառութիւններ, որոնց ընդհանուր գումարը հաւասար է 134 միլիոն ֆունտ ստերլինգի, մօտաւորապէս 1 միլիոն դրամ տալով 90/0. պետութիւնը վճարում է ուրեմն տարեկան մօտ 80 միլիոն ռուբլի միայն տոկոսիք։ 1897 թ. պետութեան ընդհանուր պարագը հաւասար էր 1 միլիարդ ռուբլու, իսկ այժմ՝ $1\frac{1}{2}$ միլիարդի։

ՊՊ. Տօսօմնանցի և Թօփչեանի գրքոյիը, չը նայած իր փոքրը ծաւալին (124 երես), պարունակում է իր մէջ շատ հետաքրքիր տեղեկութիւններ Թիւրքիայի առհասարակ ներքին կեանքի մասին։ Նա կազմուած է, հիմնուելով մի չարք եւրոպական աշխատութիւնների վրայ, որոնց մեծ մասը լոյս է տեսել միայն վերջին տարինները։ Ո՞վ որ գերմաններէն հասկանում է՝ խորհուրդ կը տանք այդ գիգը ձեռք բերել, ցանկալի կը լինէր մինչև անգամ, որ նա թարգմանուէր հայերէն։

X.

Ն Ո Ր Ս Ա Ց Ո Ւ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

- 1) Ի. Վորօնօվա, Մագնիս, թարգմ. ոռւսերէնից։ Նուէր մանուկներին. Թիֆլիս, 1901 թ. գինը 12 կոպ.։
- 2) Ե. Լալայեան, Գանձակի գաւառ, 2 հատոր, արտատպած «Աղբագրական հանդիսից»։ Թիֆլիս, 1901 թ. երկու հատորի գինը 1 ռ. 60 կոպ.։
- 3) Խօղէ Եչեգարան, Մարիանա, դրամա 3 գործ. և վերջաբանով. թարգմ. Արսէն Կրասիլնիկեանի. Բագու, 1900 թ. գինը 1 ռ.։ Վաճառման բոլոր արդիւնքը յատկացնւում է «Եղբայրական օգնութեան»։
- 4) С. Заваровъ, Кавказъ въ сельскохозяйственномъ отношеніи въ 1899 г. Издание И. К. О. С. Х. Тифлисъ, 1900 г.
- 5) Յ. Սոլովեան, Կոտրուած սիրտ, վէպ. Մոսկուա, 1898 թ. գինը 40 կոպ.։
- 6) Յ. Սոլովեան, Ղօնաղլուսս մնաց, գողըվիլ մէկ արարուածով. Մոսկուա, 1896 թ. գինը 20 կոպ.։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՕՏԱՐ ԴՐԱՄԱԳԼՈՒՅՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ *)

Սեփական դրամագլույներ, համեմատաբար, քիչ լինելով, բնական էր որ Ռուսաստանի ընդարձակ բնական հարստութիւնները գէպի իրանց գրաւէին օտար դրամագլույներ։ Այդ հոսանքը հևտեանք էր դրամագլխի բնական ձգտման այնտեղ, ուր նա կարող է իր համար աւելի նպաստաւոր գործադրութիւն գտնել։ Մինչդեռ հին հարուստ երկրներում դրամագլխի տոկոսի քանակը, և համապատասխան դրան՝ սովորական ձեռնարկուների օգուտի չափը աւելի և աւելի իջնում է, որովհետև գործունէութեան աւելի նշանաւոր և արդիւնաբեր ճիւղերը արդէն վաղուց շահագործուած են, —ընդհակառակը Ռուսաստանում, ինչպէս անսպասելի, այլև չը ձեռնամխուած հարստութիւններ ունեցող նորահաս մի երկրում, դրամագլույները կարող են գործադրութիւն գտնել արդիւնագործութեան բոլորովին նոր ճիւղերում, որոնք մինչև օրս կամ շատ քիչ և կամ բնաւ չեն շահագործուած և որոնք, սակայն, նշանաւոր արդիւնք են տալիս։ Նախկին ժամանակներում օտար դրամագլույները Ռուսաստանում գործադրութիւն էին գտնում միայն պետական փոխառութիւնների ու երկաթուղային պարտաթղթերի (օրլիդացիա) ձեռվ, այն-ինչ վերջին 20—25 տարում օտար դրամագլույները թափուեցին Ռուսաստան զանազան արդիւնաբերական ձեռնարկութիւններում գործադրուելու համար։ Այդ բանին որոշ չափով նպասակց Ռուսաստանում տիրապետող մաքսային հովանաւորող դրութիւնը, որ նշանաւոր կերպով պաշտպանում է տեղական արդիւնաբերութիւնները օտար մրցումներից, ուստի և օտարերկրացի ձեռնարկուները, փոխանակ ներմուծելու Ռուսաստան իրանց գործուածքները, աւելի ձեռնատու համարեցին մտցնել այդ երկիրը իրանց դրամագլույները և շահագործել նրանց՝ արդիւնաբերա-

*) Ռուսիա վե հօգութեան XIX թ. գրքից։

կան ձեռնարկութիւններ հիմնելով ուղղակի Ռուսաստանում և այդպիսով օգտուել նաև գոյութիւն ունեցող հովանաւորող սխստեմի բոլոր առաւելութիւններից։ Վերջին ժամանակներս օտար դրամագլուխները ամենից շատ գործադրութեան տեղ գտան իրանց համար մետաղարարական և քարածուխի արդիւնաբերութիւնների մէջ։ Առաջին մետաղարարական գործարանը հիմնել է 1871 թուին Եկատերինօսլաւում անգլիացի Զօն Խզքր, որ այդ նպատակի համար կազմել էր «Նօվորոսեան ընկերութիւնը» 300,000 ֆունտ ստուրխնդ դրամագլխով։ Այդ գործարանը, որ իր արդիւնաբերական չափով և իր մէջ աշխատող ձեռքերի քանակութեամբ (մոտ 10,000 բանուոր) գեռ հիմա էլ Ռուսաստանի մետաղարարական ամենախոշոր գործարանն է համարւում սկզբում հիմնուել է մի բոլորովին անքնակ տեղի վրայ։ Ներկայումս նրա մօտենքում ապրում է 30,000 բնակիչ ունեցող մի գիւղ, որ գործարանի հիմնադրի անունով Խզովկա է կոչւուել։

1880 թուին հիմնուել է հարաւային Ռուսաստանում «Կրիվորօժեան հանքերի ֆրանսիական ընկերութիւնը», 5 միլիոն հիմնական դրամագլխով։ Այդ ընկերութիւնը եղաւ հարաւային Ռուսաստանի երկաթահանքերի մշակման սկզբնապատճառը և ապա ժամանակի ընթացքում կառուցեց նաև իր սեփական մետաղարարական գործարանը (Գդանցելվակի)։ Այդ ժամանակից սկսած հարաւային Ռուսաստանում մետաղարարական արդիւնաբերութիւնները մեծ զարգացում ստացան, և այդ յատկապէս օտար դրամագլուխների չնորհիւ։

Նոյն ձեռով հիմնուեց 1889 թուին նաև Եկատերինօսլաւի մօտ գտնուող Կամենսկ գիւղի «Հարաւ-Դնեպրեան գործարանը», 5 միլիոն հիմնական և 2^{1/2} միլիոնի պարտաթղթային կապիտալով։ Այդ ընկերութեան գլխաւոր մասնակիցները՝ մէկ կողմից, բելգիական Կոկերիլեան ընկերութիւնն էր, միւս կողմից՝ Վարչավեան պողպատածուլական գործարանի ընկերութիւնը։

1891 թուին հիմնուել է «Թօնեցկի երկաթագործարական և պողպատածուլական արդիւնաբերութեան ընկերութիւնը» (Դրուժկովսկի գործարան), մասնակցութեամբ ֆրանսիացի Պաստոր և Վերդիէ դրամատէրերի (ընկերութեան հիմնական դրամագլուխն այժմ 3 միլիոն ոռոքի է ոսկով, և օրիգացիաներով 1^{1/2} միլիոն ոռոքի, նոյնպէս ոսկով)։

1895 թուին կազմակերպուել է «Ռուս-Բելգիական մետաղագործարական ընկերութիւնը», որի հիմնական դրամագլուխը հասնում է այժմ 10 միլիոն ոռոքու և որ չինել է Պետրովեան ահագին գործարանը։ Դրա հետ միաժամանակ իւրեվկա կայա-

րանի մօտ հիմնուել է Դօնեցկօ-իւրեվսկի գործարանը, 5 միլիոն ռուբլի հիմնական դրամագլխով։ Միւս մետաղագործական գործարանը կառուցել է Տագանրօկի մօտ Փրանսիական ընկերութիւնը, որի հիմնական դրամագլուխն այժմ $3^{3/4}$ միլիոն ռուբլու է հասնում ուկով։ Մարիուպոլի մօտի գործարանը իր գոյութիւնը պարտական է ամերիկացի դրամատէրերի մասնակցութեան. հիմնողը Նիկոազօլ-Մարիուպոլի ընկերութիւնն է, հիմնական դրամագլուխը Յ միլիոն ռուբլի է ուկով։ Լուգանսկ քաղաքի մօտի «Օլխովսկի» և Մարիուպոլի մօտի «Պրօվիդանս» գործարանները, որոնք հիմնուած են վերջերս, իրանց գոյութեամբ պարտական են բելգիական ընկերութիւններին, որոնցից մէկի հիմնական դրամագլուխն է 5 միլիոն Փրանսկ, իսկ միւսինը՝ 6,650,000 Փրանսկ։ Ներկայում հարաւային Ռուսաստանում էլի քանի մի մետաղարարական գործարաններ են կառուցւում. սրանք են՝ Վերին-Դնեպրեան ընկերութիւն (5 միլ. ֆր. հիմն. դրամ.) Բելգիական-Ալմազնան ընկերութիւն (6 միլ. ֆր. հիմն. դրամ.) և գլխաւոր ընկերութեան «Մակէնվսկի պողպատաձուլական գործարանները»։

Ռուսաստանի մետաղարարական արդիւնաբերութեան միւս մեծ շրջանում—Լեհական թագաւորութեան մէջ—օտար դրամագլուխները նոյն կերպով գործունեայ մասնակցութիւն ունեցան այդ արդիւնաբերութեան զարգացման մէջ։ Այդ շրջանի մետաղարարական գործարաններից ամենամեծը Դոմբրովի «Գուտա Բանկօվա» կոչուածն է։ Այդ գործարանը, գետ 1842 թուին լեհական դրամատան միջոցներով հիմնուած լինելով՝ շատ փոփոխութիւնների է ականատես եղել և 1876 թուից շահագործում է քրանսիական ընկերութիւնից։ Երկրորդ խոշոր գործարանը «Եկատերինա»-ն է, Սոցնովիցի մօտերքում, որ պատկանում է գերմանական մի ընկերութեան (Կօրոլեվսկի և Ջայրա)։ Գերմանական միւս՝ «Friedenshütte» ընկերութիւնը հիմնել է նոյն տեղում նաև Միլվիցկի գործարանը։ Նոյն տեղ են գտնուում նաև խողովակաշէն երկու ահազին գործարաններ, որոնցից մինը հիմնել է պրուսական հպատակ Գուլդշինսկին, իսկ միւսը՝ նոյնպէս պրիուսական հպատակ Ֆիցնէրը և շվեյցարական քաղաքացի Համպէրը։ Առհասարակ, Լեհական թագաւորութեան մէջ եղած մետաղարարական արդիւնագործութեան մէջ գործադրութիւն գտան առաւելապէս դերմանական դրամագլուխները, մինչդեռ հարաւային Ռուսաստանում կենտրօնացան գլխաւորապէս բելգիական և քրանսիական դրամագլուխները և միայն մասամբ անգլիականն ու ամերիկականը (իւզի և Նիկոազօլ-Մարիուպոլի գործարանները)։

Ծուռասատանի մետաղարարական երրորդ՝ Ռւբալեան՝ ըստ
Ժամանակի աւագագոյն շրջանում, հանգային հարստու-
թիւնները շահագործելու համար օտարերկրացի ընկերու-
թիւնները միայն վերջերս սկսեցին կազմակերպուել: Այդպէս
են, օրինակ, Ռւբալեան-Վոլգեան մետաղարարական ֆրանսիա-
կան ընկերութիւնը (18 միլ. ֆր. հիմն. դրամագլխով), նոյնպէս
Վոլգեան-Վիշեգրեան լեռնային և մետաղարարական ֆրանսիական
ընկերութիւնը (9,375,000 ռ. հիմն. դրամ. և 4,687,500 ռ.
պարտաթղթերով, Հարաւ-Ռւբալեան մետաղարարական բել-
գիական ընկերութիւնը (6 միլ ֆր. հիմն. դրամ.) և «Երմակ»
ընկերութիւնը, որին մասնակցում են գլխաւորապէս անգլիացի
դրամատէրերը (18 միլիոն ռուբլի հիմնական դրամագլ.):

Արդիւնաքերական միւս ճիւղը, որի մէջ օտար դրամա-
լուխները ուժեղ մասնակցութիւն ունին, դա հարածուխի ար-
դիւնաքերութիւնն է, և ինչ որ վերեն ասուեց մետաղարարա-
կան շրջաններում ձեռնարկողների դասաւորութեան վերաբե-
րմամբ ըստ ազգայնութեան, նոյնը տեղի է ունեցել նաև քարա-
ծուխի շրջանների նկատմամբ: Այսպէս, օրինակ, Լեհական թա-
գաւորութեան մէջ, Վարչավայից արևմուռք, Դոմբրովի շրջա-
կայքում, շատ վաղուց է որ հասաւատուել են գերմանացի ձեռ-
նարկողները («Կոմս Ռենարդ», «Խօսնովիցնան ընկերութիւն»,
«Սատուրն», «Հօհենլոէ իշխանի», «Զելեած»), որոնց մէջ մրանս-
իտալական ընկերութիւնը կարծես բացառութիւն է կազմում:
իսկ հարաւային Ծուռասատանում, Դօնէցի աւագանում, ընդհա-
կառակը՝ քարածուխի հանգերը գլխաւորապէս շահագործւում են
ֆրանսիական դրամագլխներով (Շչերբինովի հանք, Կրիվօրո-
ժեան երկաթահանգերի ընկերութիւն, Լեռնային և արգիւնաբե-
րական ֆրանսիական ընկերութիւն և միւսները) ու բելգիական-
ներով (Ալմազեան ընկերութիւն, Խուռ-Բէլգիական ընկ., Խուռ-
Դօնեցեան ընկ., Պրօխորովիեան հանգեր և ուրիշները), և միայն
մասամբ անգլիականներով (Նօվորոսեան ընկերութիւն): Բայտ
1897 թուականի հաշուետեսութեան՝ 45 մետաղարարական ըն-
կերութիւնների հիմնական դրամագլուխը կազմում էր 108 միլ.
ռուբլի, բոլոր դրամագլուխները 140,2 միլ. ռուբլի, պահանջը
(ակտիվ) 215 միլ. ռուբլի, շահաբաժնը (դիվիդենդ) 6½ միլ.
ռուբլի: իսկ քարածուխի 15 ձեռնարկութիւնների հիմնական
դրամագլուխը հաւասար էր 59,6 միլ. ռուբլու, բոլոր դրամա-
գլուխները 83,3 միլ. ռ. պահանջը 96 միլ. ռուբլի, իսկ շա-
հաբաժնը 2,9 միլ. ռուբլի: Արդիւնաքերական այդ երկու ճիւ-
ղի հիմնական դրամագլուխը 167,5 միլ. ռ. բոլոր դրամագլուխ-
ների գումարը 223,5 միլ. ռ. պահանջը—311 միլ. ռ. իսկ շա-

հաբաժինը — 9,4 միլ. ռ., որ ասել է՝ հիմնակ. դրամագլխին ընկ-
նում է 5,60%, այսինքն բոլոր դրամագլուխների առմամբ — 4,20%,
իսկ պահանջմքի առմամբ 30%:

Այդ 60 ձեռնարկութիւնից մասնաւորապէս շահաբաժին
են ստացել.

3-ը մինչև 200% և աւելի.

5-ը 100%—16,70%.

18-ը 50%—100%.

3-ը 1,30%—3,50%.

11-ը բոլորովին չեն տուել շահաբաժին:

12-ը, միայն մի տարի գոյութիւն ունենալով, չեն
տուել որեւէ շահաբաժին, իսկ 8-ը վնաս են կրել:

Նաւթային արդիւնաբերութիւնը իր ծաղկմամբ, յայտնի
չափով, նոյնպէս պարտական է օտար դրամագլուխներին: Ամեն-
ահին և իր գործերով ամենամեծ նաւթային արդիւնաբերու-
թիւնը հիմնուել է 1876 թ. չվեղական հպատակ Նօրել եղբայր-
ների ձեռքբոլ (զրա այժմեան հիմնական դրամագլուխը 15 միլ.
ռ., բոլոր դրամագլուխը 30 միլիօն, շրջառութեան մէջ է 64 միլ.
սուբլի): Միւս խոշոր ձեռնարկութիւնը Կասպեան-Սևծովեան
նաւթային ընկերութիւնն է, որ հիմնել են Բունգէ և Պալաշ-
կովսկի, և որ 1886 թուին անցել է Ռուշկիլդի Փրանսիական առե-
տարական տան ձեռքը (հիմն. զրամ. 6 միլ. ոուբլի): Վերջին ժա-
մանակներու ոուսական նաւթային արդիւնաբերութիւնը դէպի
իրուն է քաշում անգլիական դրամագլուխները: Այսպէս Թաղի-
ելի նախկին ձեռնարկութիւնը գնեցին անգլիացիք 5 միլ. ոուբ-
լիով, տալով՝ Russian-Petroleum and liquid fuel C°. limited ան-
նունը, հիմնական դրամագլուխն է մէկ միլիօն ֆունտ ստեր-
լիոն: Շիբաևլի նաւթահորերն ու գործարանները 3½ միլ. ռ.
ձեռք է բերել անգլիական The Shibaevff Petroleum C°. limited
ընկերութիւնը: Արաֆելօվի, Բուղազօլսերի և ուրիշների նաւ-
թային գործերը ձեռք է բերել Բակս-Russian Petroleum C°.
limited ընկերութիւնը 7 միլ. ոուբլով (հիմն. զրամ. 1,300,000
ֆունտ ստերլիոն): Բայց դրանից հիմնուած են նաև մի քանի
նոր ընկերութիւններ, ինչպէս են՝ «Ռուսական Ստանդարտ»,
«Գուրիայում (Կովկաս) նաւթ և այլ հանքեր որոնելու և շահագոր-
ծելու համար բեղդիւական ընկերութիւնը» և ուրիշները:

Օտար դրամագլուխները նշանաւոր գործադրութիւն գտան
նաև այնպիսի ձեռնարկութիւնների մէջ, որոնք վերաբերում են
խողաքների բարեկարգութեան, որպէս են՝ ջրանցքները, ձիա-
քարչները, գազային և ելեկտրական լուսաւորութիւնները:

Արդիւնաբերական այլ ձիւղերից պէտք է յիշել նաև ձե-

ուակերտականը (մանուֆակտուրային): Քառասնական թուականներին այդ արդիւնաբերութեան զարգացմանը նշանաւոր չափով նպաստել է Մոսկուայի շրջանում Կնօպի Փիրման, որ անզլիական դրամագլուխով օգնում էր ոռու գործարանատէրերին և ինքը շինում նրանց գործարանները և մատակարարում բոլոր մեքենաներն ու պարագաները: Ներկայումս օտար ձեռնարկութիւնների թիւը մանուֆակտուրային արդիւնաբերութեան մէջ Մոսկուայի շրջանում աննշան է (ամենամեծ գործարաններն են՝ Ցինդէլի, Գիւլմէրի, Ժիրոյի), այն-ինչ օտար դրամագլուխները (առաւելապէս գերմանականները) մեծ դեր են խաղում մանուֆակտուրային արդիւնաբերութիւններում Լեհական թագաւորութեան մէջ (լօձի և Սօսնովիցի շրջանների): Այդանող օտարերկրացիւներից հիմնուած գործարաններից ամենամեծներն են՝ Ժիրարդովեան, Զաւերցէի, Դիտէլի, Շէնի, Լէօնարդի, Լէօն Ալլարտի, Դևիտւրմօնի և ուրիշների:

Ընդհանուր առմամբ պէսով է խոստովանուել, որ օտար դրամագլուխները բարեյաջող ազգեցութիւն են ունեցել երկրի արդիւնաբերական զարգացման վրայ, տարածելով արուեստագիտական տեղեկութիւններ, զարգացնելով ձեռներէցութեան ողին, ստեղծելով արդիւնաբերական նոր կենտրոններ և աշխատանքի պահանջը մեծացնելով, որի արդիւնքը եղել է բանուորակարձի բարձրանալը:

Օտարերկրեայ ձեռնարկութները նաև հոգս են տաճում բանուորների վիճակը բարուղելու մասին՝ շինելով լաւ բնակարաններ, հիւանդանոցներ, ինսայողական զանձարաններ և այլն և այլն: Հին ձեռնարկութիւններից մեծ մասն արդէն կարողացել է ձուլուել և դաշնալ ոռուական: Նորերը կամաց-կամաց հետեւում են այդ ուղղութեան: Եղյնը կարելի է ասել նաև ծառայողների և վարպետների քանակութեան մասին: Նոր ձեռնարկութիւնների համար դրանք առաւելապէս օտարերկրացիներից են վերցլնում, իսկ ժամանակի ընթացքում փոխւում ոռու ծառայողներով:

ՆԵՐՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մոտաւորականութեան նշանակութիւնը հասարակական զարգացման մէջ։ —Եւրոպական ազատարար գրականութեան ազդեցութիւնը Ռուսաստանի ներքին կեանքի վրայ։ —Ալեքսանդր Ա-րդի վերաբերմունքը դէպի ճորտերի աղասոութեան խնդիրը, 1861 թ. փետրուարի 19-ը, —Ազատ աշխատանք և զիւղացիական հոգատիրութիւն, —Հողարաժինների պարագագիւր լեռ գնումն, —Կայուածատիրական հողերի վրայ ապրոյ զիւղացինների գրութիւնը Անդրկովկասում, —Զրի աշխատանքից օգտուղներ, —Մանր տնտեսութիւնների դիմացկունութիւնը, —Խակաւահողութեան դէմ զործադրուող միջոցներ, —Տեղական ինքնավարութեան նշանակութիւնը երկրագործ ժողովրդի համար, —Ճորտերի ազատութեան քառասննմեակի առիթով օրոշումներ, —Մարմնական պատմի վերացման միջնորդութիւններ, —Ճորտերի ազատութիւնը իրանք հիմք վաթսունական թուականների վերանորոգութիւնների, —Պաշտօնական հաղորդագրութիւններ ուսանողական խառնակութիւնների մասին։

Եթէ տնտեսական և աւանդաբնազդական պայմանները մի տեսակ տարերային անդիտակայութեամբ որոշ ուղղութիւնն են տալիս հասարակական զարգացման —դրան հակառակ՝ մարդկային մտաւորականութիւնը, լուսաւոր միավը, այն գործօնն է, որ զիտակցական գեր է կատարում, ջանալով արդարութեան սկզբունք մայնել հասարակական կարգերի մէջ։ Այնտեղ, ուր չը կայ մտաւորական կեանք և անհատները մատնուած են լոկ տնտեսական և աւանդաբնազդական պայմանների մրցման —մենք տեսնում ենք մի կենցաղ, ուր գոյութիւն չունեն մարդկային արժանապատութիւն և իրաւունք։ Պարզելու համար մեր ասածը հեռու չը գնանք վայրենիների մօտ, այլ վերցնենք մեր հարեւան Պարսկաստանը կամ Թիւրքիան։ Այդ երկրներում ներգործում են միայն տնտեսական յարարերութիւնները, կրօնական նախապաշտումունքները, անդիտակայական բնազդումներըն ու կրքերը և համարեա գոյութիւն չունի մտաւոր կեանքով ապրող ինտելիգենտ դասակարգ, չը կան գաղափարական հոսանքներ, միավը թմրած է և անշարժ, մի խօսքով՝ տիրում է կատարելապէս մտաւոր անշարժութիւն ու խաւար։ Հասարակա-

կան կեանք գոյութիւն չունի այդ երկրներում, և ամեն մի անհատ ապրում է իր և իր ընտանիքի համար; Արևելցու հասկացողութեամբ շատ բնական է համարւում, որ մէկը ծնուի ստրուկ, իսկ միւսը՝ բռնակալ, մէկը իրաւագուրկ ու սեփականազուրկ մի թշուառ կեանք վարէ, իսկ միւսը՝ զեղսութիւն և փարթամութիւն վայելելով հանդերձ՝ ունենայ և ոչ մի օրէնք չը ձանաչելու և աշխատող դասակարգը հարստահարելու արտօնութիւն։ Այդպիսի երկիրները մի-մի ճահճներ են, որոնց մէջ պարագիտ տղրուկները ապրում են թշուառ զոհերի արիւնը ծծելով։ Եւ չը կայ փրկութիւն այդ զոհերի համար, մինչև որ մտաւորականութիւնը չը թափանցի ուժգին մի հոսանքով այդ երկիրների մէջ...

Այդպիսի մի նեխուած ճահճ էր և նախապետրոսեան Ռուսաստանը։ Պետրոսը ոչնչացրեց այն չինական պատերը, որոնք բաժանում էին Ռուսաստանը արևմուտքի մտաւոր ծովի ալեկոծութիւնից։ Մի անգամ կապ հաստատելով Եւրոպայի լուսաւոր մտաւոր կեանքի հետ, այլ ևս ոչ մի կերպ չէր կարելի ոչնչացնել մարդկանց մաքերի առնչութիւնը։ Վօլտերների և Ռուսաների գաղափարների առաջ անզօր էին սահմանագլխի մաքսային կարգերը։ Իրանք ոռուաց գահականերն անգամ ենթարկւում էին Եւրոպական լուսաւոր՝ հոսանքների «գարակման», և Եկատերինա Ա-րդը, ինչպէս և նրա յաջորդները, նոյն իսկ աւելի լայն ու մարդասէր հայեացքներ էին արտայայտում, քան իրանց շրջապատող ազնուականութիւնը։

Ֆրանսիայից մուաք գործած ազատ գաղափարների համաձայն՝ ազատութիւնը և հաւասարութիւնը մարդկային բնութեան անկողութեանի իրաւունքն են։ Ո՞վ ոյժ ունէր արգելել, որ ժողովրդի մէջ տարածուեն մամուլի և խօսքի միջոցով այդ գաղափարները։ Մտաւոր գործնը արդէն իր դերը կատարել էր, զարկ տալով ինքնածանաչութեան, և ճորտերը այլ ևս նախկին համբերութեամբ չէին տանում ազնուականների բռնութիւններն ու անիրաւութիւնները. ամբոխը յուզուում էր, ժողովրդական խըսովութիւնները աւելի յաճախ էին կրկնուում։ Ոչ մի խստութիւն այլ ևս չէր կարող լուեցնել զարթած ինքնածանաչութեան արդար պահանջները։ Այդ լաւ ըմբռնեց Ալեքսանդր Ա-րդը, Ռուսաստանի այդ մեծ վերանորոգիչը։ «Գոյութիւն ունեցող չնչափական կարգը,—ասաց նա Մոսկուայի ազնուականներին դեռ 1856 թուին,—չէ կարող անփոփոխ մնալ։ Աւելի լաւ է ճորտական իրաւունքի վերացումը կատարել վերեւից, քան սպասել, որ այդ իրաւունքը ինքն իրան սկսուի վերացուել ներքեւից»։ Եւ չը նայած, որ ազնուականութեան միծամաս-

Նութիւնը՝ դարերի ընթացքում սովորած լինելով ժողովրդի ձրի աշխատանքով ապրել, ընդդիմանում էր այդ վերանորոգութեան՝ այնու ամենայնիւ մտաւորականութիւնը, ալտրուիսատկան գաղափարը, յաղթող հանդիսացաւ:

Երբէք չի մոռացուի անշուշտ Ալէքսանդր Արդի անհատական մեծ զերը այդ անսարիւն յեղափոխութեան մէջ։ Յայտնի է, որ նոյն իսկ Պետական Խորհրդում անդամների մեծամասնութեան հակառակ, որոնք աշխատում էին պահպանել ճորտութիւնը, կայսրը ընդունեց փոքրամասնութեան — աղատութեան կողմնակիցների — կողմը, և 1861 թուի փետրուարի 19-ին իր ստորագրութեամբ դրոշմեց իր անփոփոխելի կամքը — ազատել դարեւոր ճորտութիւնից մի բազմամիլիօն աշխատաւոր ժողովուրդ, Այդ հզօր կամքով զդիաները ջախջախուել, ընկել էին, և ցնծում էր ազատ ծփող ովկիանոսի նման ոռւս ժողովուրդը, միլիօնաւոր ձայների միացած հառաջրով օրհներով իր աղատարար մեծ թագաւորին։ Այդ օրից Ռուսաստանի համար սկսուում է մի նոր դարագլուխ և հիմնովին վերանորոգուում է նրա պետական ու հասարակական կեանքը։

Պարզ է, որ եթէ Ալէքսանդր Արդ համակարծիք լինէր մեծամասնութեան հետ, նոյն իսկ մասամբ, և ճորտերին ազատութիւն տար առանց հողաբաժինների, բոլորովին այլ կազմ կը ստանար Ռուսաստանի ներքին կեանքը, և գուցէ մենք ունենայնք ազնուական կալուածատէրեր, նման իրանդիայի լէնդլորդերին, և հողագուրդ մի ժողովուրդ, որ ստիպուած կը լինէր այդ կալուածատէրերից կապալով հող վերցնել ու մշակել Այդ դէպրում թէև դիւղացու անձը աղատ կը լինէր «ազնուական» պարոնների կամայականութիւնից, բայց իրավէս նրանք դարձնալ ճորտ պէտք է դառնային իրանց նախկին տէրերի ձեռքում, որովհետև իրանց ապրուատը ամբողջապէս կախուած կը լինէր այն կտոր հողից, որ կը բարեհածէր բարձր կապալով տալ նրան կալուածատէրը։ Սակայն ճորտերի ազատարար չուղեց, որ ազատութիւնը անուանական լինի — նա աղատուած դիւղացուն դարձրեց և մի կտոր հողի լիակատար սեփականաւաէր։

Սկզբում ազնուականների և գիւղացիների փոխազարձ համաձայնութեան էր թողած հողաբաժինների յետ գնման հարցը, բայց յետոյ պարտապիր դարձրուեց հողաբաժինների յետ գնումը, և կառավարութիւնը յանձն առաւ այդ գործում օգնել գիւղացիներին. նա վճարեց գիւղացիների պարտքը ազնուականներին, և գիւղացիներին գիւրութիւն տուաւ 49 տարուայ ընթացքում կամաց-կամաց լրացնել փոխարէնը գանձարանին։

Գիւղացին այժմ գործ ունէր կառավարութեան հետ և ոչ մասնաւոր անհատների, որոնք անձնական շահերից դրդուած կարող էին նեղացնել նրան: Որպէս զի այդ հողաբաժինները յետոյ չանցնեն մասնաւոր անձանց ձեռքը, Ալէքսանդր Ռ-ը օրէնքով (1893 թուին) նոյն իսկ արգելեց գիւղացիների հողաբաժինների վաճառումը գիւղական հասարակութիւնից գուրս անդամներին: Այդպիսով Ծուսաստանի թէ կալուածատիրական, թէ պետական և թէ արքայազնական (սկզբան) հողերի վրայ ապրող գիւղացիները հնարաւորութիւն սաացան մանր սեփականատէր երկրագործների մի գասակարգ կազմել:

Այստեղ չէ կարելի ցաւելով չը նկատել, որ Անդըր-կովկասում կալուածատիրական հողերի վրայ ապրող գիւղացիները դեռ ևս մնում են տնտեսալէս կախուած «մուլքադար» բէգերից, աղաներից և խաներից: Այդ գիւղացիները բացի արքունական հարկերից պարտաւոր են վըճարել իրանց արիւնքբաժնքով վաստակած հողային բերքերի 30 մասից 4-ը կալուածատէրերին. ուրեմն կալուածատէրերը ստանում են գիւղացիներից 12% աւելի, որ մի վաշխառուական տոկոս է կազմում: Այդ գրութիւնը հակասում է տիրող ընդհանուր կարգերին, և յոյս կայ, որ միայն ժամանակի խնդիր է նրա վերացումը, ինչպէս ժամանակի հարց էր չնչահարկը, որ վերացուեց այս տարրուանից: Եթէ մեր բէգերը ախորժակներ ունեն ծրիաբար վայելել գիւղացու աշխատանքը, պէտք է իմանան, որ մի ժամանակ ծորտութեան ազատութիւնից առաջ պակաս ախորժակներ չունեին և ուսւա աղնուականները: Օրէնքը թողնում է մեր կալուածատէր ազնուականների կամքին՝ կամաւոր համաձայնութեամբ ծախել գիւղացիներին նրանց հողաբաժինները, բայց «կամաւորը» անշուշտ այն չէ, ինչ որ պարտադիր պահանջը, ուստի իրանց շահերից բէգերը չեն հրաժարուիլ, մինչև որ օրէնքով ստիպուած չը լինեն այդպէս տնել:

Մենք առիթ ենք ունեցել մի այլ տեղ խօսել *) մանր գիւղատնտեսութիւնների գիւղացիունութեան մասին գոյութեան կուում. սակայն այդ «մանրութիւնը» որոշ չափ ունի, որից նուազազյնը արդէն անկարող է վարձատրել երկրագործի աշխատանքը: Այդ յօդուածներում ցոյց էր տրուած և սակաւահողութեան չափը մեր երկրում: Եթէ Ծուսաստանում 3—5 դեսեատին չնչաբաժին հողը համարւում է, և իրաւամբ, անբաւարար, ինչ ասել 0,7—0,9 գեսեատին բաժինների մասին, որ ընկնում է, օրինակ, երեսմի և Կարսի կողմերի գիւղացիներին:

*) „Մշակ“, 1900, № 29, 39.

Անկասկած այդպիսի փշրանքների վրայ ոչ մի տնտեսութիւն չէ կարող արգիւնաւոր լինել:

Սակաւահողութեան առաջն առնելու համար բուն Ռուսաստանում գործադրւում են մի քանի միջնորդներ, աւելորդ ազգաբնակութիւնը գաղթում է Սիբիրի ընդարձակ վայրերը. այսպէս, Սիբիրի երկաթուղու գծի երկու կողմում իւրաքանչյուր տարի մօտ 200,000 հոգի բնակութեան նոր տեղ է հաստատում: Բայց գաղթականութիւնից, որ թոյլ չէ տալիս մայր գիւղում անչափ բաժան-բաժան անելով մանրացնել հսղաբաժնները, նաև Շինական Բանկը գնում է մասնաւոր անձերից հողեր և ձեռնաու պայմաններով, երկարժամանակեաց վարկով, տալիս է գիւղացիներին: Կալուածառէրերը, չունենալով այլ ևս ձեռքի տակ առաջուայ պէս ձրի աշխատողներ, շատ դէպքերում աւելի լաւ են համարում ծախել իրանց հողերը կամ կապալով տալ հարեան գիւղացիներին: Վերջապէս, տեղային ինքնավարութիւնը, զեմստվօն, մի հրաշալի հիմնարկութիւն է, որի գործիչները միշտ կարող են գիտակցորէն այս կամ այն օգնութիւնը հասցնել գիւղացի երկրագործներին, հրաւիրելով, օրինակ, մասնացէտ ազգօնոմներ, որոնք իրանց խորհուրդներով կարող են միջնորդ լինել ազգօնոմիական գիտութեան և գիւղացիների մէջ: Զեմստվօն կարող է ընտիր սերմացուների շտեմարաններ բանալ, կաղմակերպել գիւղատնտեսական գործիքներ մատակարարելու խնդիրը, փոխառու-խնայողական գանձարաններ հիմնել, օգնել ընկերակցութիւններ կաղմակերպելու գործում և այլն:

Այդ մի շարք նպաստաւոր պայմաններից, դժբախտաբար, զուրկ է մեր գիւղացին: Ի հարկէ, ոչ մի մասնաւոր նախաձեռնութիւն չէ կարող զեմստվօյի տեղը բռնել, բայց և այնպէս մեզ թուռմ է, որ եթէ Կովկասի Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութիւնը աւելի կմնդանի և գործնական հետաքրքրութիւն ցոյց տար դէպի մեր գիւղական կեանքը և մեր իրականութեան աւելի մօտ կամնէր—կարող էր, յայտնի չափով, կատարել զէմստվօյի գերը. սակայն նա մինչև այժմ աւելի ակադէմիական, տեսական հարցերով է զբաղւում, քան զուտ գործնական, ուստի մեր գիւղացին քիչ օգնութիւն է տեսնում նրանից: Կարելի է ասել՝ չարիքի ովլիանոսը այդ Ընկերութիւնը մինչև այժմ ու զում էր կժերով ցամաքեցնել...

Ճորտերի ազատութեան քառամամեայ տարեդարձը մեզ առիթ տուեց խօսելու. և մեր գիւղացիների մասին, և իւկապէս, էլ որ օրում այնքան յարմար է յիշել այն բազմամիջօն աշխատաւորներին, որոնք երկրագործական մի ահազին պետութեան

ստուար մեծամասնութիւնն են կազմում: Այդ մասսայի մասին նոյն այդ օրը յիշեցին Ռուսաստանի ամեն անկիւններում. քաղաքային և գտառական ինքնավարութիւններից ամեն մէկը մտածեց մի կերպ յաւէրժաշնել այդ օրը ժողովրդի առաջադիմութեան նպաստող որ և է ձեռնարկութիւնով: Մոսկովյայի քաղաքային խորհրդարանը, օրինակ, մտածում է բանալ 12 նոր քաղաքային դպրոցներ, Պետերբուրգի խորհրդարանը որոշոյ 50 հազար ո. յատկացնել ժողովրդական մի ուսումնարանի և գրադարան-ընթերցարանի. մի տեղ ժողովրդական թատրոն են հիմնում, մի այլ տեղ ժողովրդական տուն և այն. իսկ Սարատօվի և Նիժնի-Նովգորովի խորհրդարանները նորից բարձրացնում են մի հարց, որ բազմից յարուցել են թէ առաջադէմ մամուլը, թէ զէմատվածները և թէ բժշկական ընկերութիւնները, միշտուգելով, որ վերացնուի մարմնական պատիժը, մարդկային պատիւը վիրաւորով այդ խայտառակ գործողութիւնը: Եւ իսկապէս՝ ճորտերի աղատութիւնից յետոյ մնացած այդ ժառանգութիւնը մի քստմնելի թիւրիմացութիւն է, ուստի զարմանալի չի լինի տեսնել մի օր իրագործուած և վերոյշեալ բարի տենչանքները:

Ճորտերի աղատութիւնը, հիմնովին վերանորոգելով Ռուսաստանի կենաքը, անփոփոխ չը թողեց ոչ միայն վարչութեան, դատարանի և տնյական ինքնավարութեան կազմակերպութիւնը, այլ և վաթսունական թուականներում շատ զգալի կերպով ընդարձակեց մամուլ օրէնքները և դեմօկրատիկական գոյն տուաւ կրթութեան գործին:

I. II.

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«Правительственныи Въестникъ»-ում տպուած է հետեւեալը. Դեռ անցեալ տարուայ յունիս ամսին մի քանի բարձրագոյն դըպրոցների ուսանողների գաղտնի կազմակերպութիւններ Օդէսայում «համառասնողական ժողով» էին գումարել, որին մասնակցել էին պատղամաւորներ այդ կազմակերպութիւններից «ամբողջ ուսուանողութեան» գործողութիւնների համար միակերպ ծրագիր մշակելու նպատակով: Նիստերից մէկի ժամանակ ոստիկանութիւնը ձերբակալեց «պատղամաւորներին» և խեց նրանց ձեռքից մօտները դտնուած թղթերը: Այդ թղթերը պարունակում էին, ի միջի այլոց, տեղեկութիւններ արգելուած ուսանողական ընկերութիւնների կազմակերպութեան, նրանց քանակական կազմի և նրանց ընտրած նպատակների մասին, և բացի այդ, նրանց ապագայ գործունէութեան ծրագիրները և նախա-

գիծ, որով առաջարկուում էր միացնել այդ ընկերութիւնները, հիմք դնելով այնպիսի կենտրօնական օրդանի, որի պաշտօնը լինէր որոշ դէպքերում զեկալարել ուսանողների գործողութիւնները ցանկալի ուղղութեամբ: Այդ ծրագիրների և նախագծի մէջ, բացի յանցաւոր քաղաքական նպատակներից, որոնք մի քանի թղթերի աւելով, պէտք է ծածուկ պահուեն ուսանողների մեծամասնութիւնից այն պատճառով, որ «մասսան վախենում է ամեն տեսակ քաղաքական ձկտումներից», ի միջի այլոց, իբր գործողութեան նպատակ է առաջարկուած ուսանողական կազմակերպութիւնների համար (որոնք, նոյն թղթերի վկայութեամբ, բարձրագոյն դպրոցների ուսանողութեան փոքրամասնութիւննեն միայն ներփակում իրանց մէջ) արտայայտել ամեն տեսակ բողոքներ համալսարանական, հասարակական և քաղաքական կեանքի երևոյթների և ուսանողական շարժումների կազմակերպութեան առիթով: Թէպէտ, ինչպէս ասուած է, համաժողովի մասնակիցները ձերբակալուեցին, բայց ներկայ ուսումնական տարուայ սկզբից բարձրագոյն դպրոցներից շատերում սկսեցին արտայայտուել նրանց որոշած գործողութիւնների ծրագիրը իրագործելու յամառ փորձեր, մասնաւորապէս իբր ազմկալից բողոքներ և խառնակութիւններ այլ և այլ պատրուակներով, ուրոնցից ոչ մէկը ոչ մի կապ չունէր տրուած դպրոցի հետ: Առանձին սաստկութեամբ արտայայտուեցին այդ փորձերը կինք ս. Վլադիմիրի համալսարանում, ուր նրսնք դեկտեմբերի սկսով բուժացացան մի ազմկալից համախմբումով, որ վճռեց գաղարեցնել սլարապմունքները ձմեռային կիսամեակից յետոյ, եթէ բաւարարութիւն չը տրուի ուսանողների պահանջներին: Յուղմունքը կիելի համալսարանի ուսանողների մէջ սկսուեց հոկտեմբեր ամսին: Իբր սկզբնական առիթ այդ յուղմունքին ծառացեցին գասախօսութիւնները մի պրօֆէսօրի, որ, փոխարինելով մի ուրիշ, արձակուրդով արտասահման դնացած պրօֆէսօրի, Փակուլտէտի որոշմամբ ստանձնել իր նրա առարկայի գասախօսումը: Դժգոհ մնալով գասախօսների այդ ժամանակաւոր փոխարինութեամբ, ուսանողները սկսուեցին յուղուել, խօսք կապել, որ չը յաճախեն իրանց չը ցանկացած դասախոսի լսարանը և համախմբումներ կազմն՝ ուրիշ գասախօս նշանակել տալու նպատակով: Զը նայելով այն միջոցներին, որ գործ էին դնում ուսանողներին խելքի ընթացու համար Փակուլտէտի դէկանը և համալսարանի քարտուղարը, տեսչութիւնը և ըէկտորը՝ յուղմունքը քանի զնում սաստկանում էր և հոկտեմբերի վերջին սկսեց արտայայտուել ազմկալից համախմբումներով և անթոյ-լատրելի ցոյցերով, որոնց արդէն մասնակցում էին նաև ու-

րիչ կուրսերի և նոյն իսկ ուրիշ բաժանմունքների ուսանողներ:

Այդ յուզմունքն ընդհատուեց, գոնէ առերևոյթ, միայն այդ պրօֆէսօրի դասախոսութիւնների դադարմամբ. բայց ընդհատումը կարձատե եղաւ: Նոյնմբերի 13-ին նորից տեղի ունեցած մի բազմամարդ համախմբումն, մօտ 700 հոգու մասնակցութեամբ, և այս անգամ մի ուրիշ պատրուակով—իրանց ընկերներից մէկին դատաելու համար մի տգեղ վարմունքի պատճառով, որ հրազդարակ էր հանել տեղական մամուլը: Տեսչի օգնականի ապարդիւն փորձից յետոյ, որ ընդունուեց սուլոյներավ և թշնամական աղաղակներով, տեսուչը ինքը գնաց ուսանողների մօտ և բաւական գժուարութեամբ թափանցեց իակուած լսարանը, ուր տեղի ունէր համախմբումը, որի մասնակիցները սկզբում թշնամաբար ընդունեցին նրան: Ասելով ուսանողներին, որ նրանց արածը ապօրինի բան է, որ նրանց մեղապարտ ընկերը արդէն արձակում է համալսարանից և որ համախմբման ժամանակ յշշատակուած՝ տգեղ վարմունքների միւս գէպքերը քըննուած են և ենթարկուելու են վարչութեան դատին, տեսուչը սաստիկ յորդորներից յետոյ կարողացաւ համոզել ուսանողներին ցրուել, որ նրանք կատարեցին փոքր ինչ տատանուելուց յետոյ, չը նայելով համախմբման ղեկավարների ջանքին, որոնք բողոքում էին ու գիմազրում, աշխատելով միջանցքում կամսգնեցնել հեռացողներին և տանել նրանց միւս լսարանը: Գրգռուելով այդ անաջողութիւնից, վերացիշեալ ղեկավարները հետեւեալ ուսումնական օրը մի նոր համախմբումն կազմեցին, որին մասնակցում էին մօտաւորապէս նոյն թուով ուսանողներ, բայց որ այնքան յամառ գուրս եկաւ, որ տեսչութեան ջանքերը՝ դադարեցնել իսապնակութիւնները, ապարդիւն անցան: Լսարանում մօտ երկու ժամ մնալուց յետոյ ուսանողների բազմութիւնը դուրս եկաւ այնտեղից աղմուկով, սուլոյներով և երգերով, շարունակեց մի փոքր ժամանակ անկարգութիւն անել միջանցքում և այն աստիճան մոռացութեան տուեց ամեն բան, որ թոյլ չը տուեց իօսել բեկտօրին, որ եկել էր նրանց յորդորելու: Բաղմութիւնը ցրուեց միայն այն ժամանակ, երբ այդ թոյլ տուեցին ղեկավարները, որոնցից մի քանիսը ցրուելուց առաջ չնորհակալութիւն էին յայտնում այնտեղ գտնուողներին «ներկայ օրուայ յաղթանակի համար»: Համախմբման գլխաւոր ղեկավարները, որոնք բաւական բացարձակ և անպատկառ կերպով էին վարում, գրի առնուեցին տեսչութեան կողմից և ուսումնական շրջանի հոդաբարձուի կարգադրութեամբ մատնուեցին վարչու-

թեան դատին։ Դրանից յետոյ մի քիչ հանգստութիւն տիրեց, որի միջոցին ուսումնական պարագմունկները ընթանում էին անխափան։ Նկատի առնելով ի միջի այլոց այդ հանգստութիւնը, որ արտայայտուեց նրանով, որ $2^{1/2}$ շաբաթուայ ընթացքում համախըմբումներ այլ ևս չէին վնասում, համալսարանի վարչութիւնը դեկտեմբերի 2-ի նիստում հնարաւոր գտաւ վերին աստիճանի ներողամիտ վերաբերուել նոյեմբերի 13-ի խառնակութիւնների մասնակիցներին և չորս գլխաւոր մեղաւորներին զատապարտեց կարցերի 5-ից մինչև 2 օր. միւս մեղաւորների վերաբերմամբ բաւականանալով աւելի մեղմ պատիժներով—յանդիմանութեամբ և մի տարի ժամանակով որոշ արտօնութիւններից զրկելով։ Սակայն այդ դատավճիռը պատրուակ ծառայեց հետագայ շարժումների համար,—կարգերի դատապարտուած ուսանողներից երկուսը բացէ ի բաց հրաժարուեցին ստորագրել որոշած պատմին, որ տեսուչը նրանց յայտնել էր դեկտեմբերի 4-ին, և տեսչի առանձնասենեակից դուրս գալուն պէս հրաւէր կարգացին ուսանողներին համախմբուելու հետեւալ օրուայ ժամի 12-ին։ Որովհետեւ մեծ լսարանները, ուր սպասելի էր որ կը կայանան համախմբումները, տեսչութեան կարգադրութեամբ փակուած էին դեկտեմբերի 5-ին նշանակուած ժամին, ուստի միջանցքում հաւաքուած ուսանողները փորձ արեցին մտնել ուրիշ երկու լսարանները, որտեղ դասախոսութիւններ էին կարգացւուած, որպէս զի այնտեղ կազմեն համախմբումը։ Սակայն միահամուռ դիմագրութեան հանդիպելով պրօֆէսօրների և ուսմիշդիրների կողմից, բազմութիւնը մի յարկից անցաւ միւսը և բռնութեամբ ներս խուժեց կողպած լսարաններից մէկը, գրո՞ւ տալով ջարդելով դռան կողպէքը և համախմբուելով գրաւուած լսարանում։ այդ միջոցին, միջանցքով անցնելիս, ուսանողներից մէկը խոխեց դասախոսութիւնների վերջաւորութիւնը յայտարարուել զանգը, ժամանակից 20 րոպէ առաջ, թէն սակայն չը հասաւ իր նպատակին։ Դեռ համախմբան սկզբից առաջ բէկտօրը հրաւիրեց իր մօտ այն երկու ուսանողներին, որոնք հրաժարուել էին՝ ենթարկուել իրանց համար որոշուած պատժին, և յիշնորեց նրանց, որ համալսարանի կանոնագրութեան համաձայն, վարչութեան դատավճունը չը հնազանդողները արձակուած են համալսարանից։ բայց այդ խօսքերը չը կարողացան հնազանդութեան բերել յամառուողներին։ Այն ժամանակ թէկտօրը յայտնեց նրանք, որ նրանց արձակուած են, պահանջնեց, որ նրանք յետ տան դասախոսութիւններին յաճախելու համար ստացած տոմսակները, և առաջարկեց նրանց անմիջապէս հեռուանալ համալսարանի չէնքից։ Խելով այդ անօրէնութիւնը,

նրանցից մէկը ուղղակի գնաց համախմբման տեղը, ուր այդ միջոցին արդէն հաւաքուել էին ուսանողները, իսկ միւսը հեռացաւ համալսարանից, բայց շուտով վերադարձաւ չրջապատուած մի խումբ ընկերներով, և նոյնպէս գնաց համախմբման տեղը, ուր ընդունուեց աղմկալից ողջոյներով։ Մօտ երկու ժամ լսարանում մնալով և ի միջի այլոց քննութեան ենթարկելով՝ միւս բարձրագոյն դաշտոցները պատգամաւորներ ուղարկելու և նոյեմբերի 13-ի խառնակութիւնների պատճառով դատապարտուած «անմեղ տեղը վնասուած» ընկերների պաշտպանութեան հարցերը, համախմբումը, որին մասնակցուել էին մօտ 250 հոգի, որոշեց պահանջել, որ փոխեն վարչութեան վճիռը և նորից ընդունեն համալսարան այդ վճիռն չը ստորագրուելու համար արձակուած ուսանողներին, իսկ հակառակ դէպքում գործադուլ անել և շարունակել գործադուլը Ծննդեան տօներից յետոյ։ Այդ որոշումը կայացնելուց յետոյ, նրանք պատգամաւորներ ուղարկեցին խնդրելու բէկտօրին, որ գայ իրանց մօտ լսարանը, բայց նա պատախանեց ուղարկուածներին, որ ինքը չի գնաց այնպիսի ուսանողների մօտ, որոնք չեն կատարում իր պահանջները։ Դրանից յետոյ հաւաքուածները մնացին լսարանում էլի մի կէս ժամ ու յետոյ ցրուեցին, նախապէս վճռելով ճանապարհ գցել արձակուած ընկերներին, որոնք մտադիր էին նոյն օրը հեռանալ կիեվից։ Եւ յիրաւի, ուշ երևկոյեան մօտ 300 ուսանողներից բաղկացած մի խումբ, սակաւաթիւ կանանց հետ, հաւաքուեց երկաթուղու կայարանում՝ արձակուածների ճանապարհ ընկնելու ժամին և ճանապարհ գնելիս ցոյցեր արեց նրանց պատուին՝ ի միջի այլոց զանազան երգեր երգելով։ Ճանապարհ գյողների հետ մնաք բարե անելիս, արձակուածներից մէկը հրաւէր կարգաց ուսանողներին՝ չընդհատել համախմբումները և տոկուն կերպով առաջ տանել գործը մինչև վերջին հնարաւորութիւնը։

Սկսուած շարժումը չը սահմանափակուեց այդ ցոյցով։ Դեկտեմբերի 7-ին, ցերեկուայ ժամի 12-ի մօտ, նոյն լսարանում կայացաւ մի բազմամարդ համախմբումն, որի քննութեան առարկան էր, առաջուան պէս, վարչութեան վճիռը փոխել տալու և արձակուած ուսանողներին նորից ընդունել տալու հարցը։ Նախընթաց համախմբման պէս՝ այդ համախմբումն էլ աչքի էր ընկնում սաստիկ սանձարձակութեամբ։ Մօտ $2^{1/2}$ ժամ տեւող աղմկալից խօսակցութիւններից յետոյ, նորից պատգամաւորներ ուղարկեցին բէկտօրի մօտ՝ հրաւիրելով գալ համախմբման եւ լսել նրա որոշումը։ Մերժելով այդ բանը, բէկտօրը աշխատեց բացարել պատգամաւորներին, թէ նրան անհիմն են համա-

խմբման պահանջները. բայց իդուր: Ի պատասխան նրա ասածին՝ պատգամաւորները յայտնեցին, որ ուսանողները չեն ցրուի, մինչև թէկտօրը չը գնայ նրանց մօտ, եթէ նոյն իսկ պէտք լինի ամբողջ օր ու գիշեր մնալ համալսարանում: Մինչ տեղի էր ունենում նկարագրուած համախումբը, դասախոսութիւնները միւս լսարաններում ընթանում էին սովորական կարգով: Դասախոսութիւնների վերջանալուց յետոյ տեսչութիւնը տնօրինեց փակել համալսարանի բոլոր մուտքերը, այն պայմանով, որ ցանկացողներին ազատութիւն տրուէր գուրս գալ չէնքից, բայց առանց թոյլ տալու նորից վերադառնալ այնտեղ: Ուստի երբ յետոյ հեռացած ուսանողների մի խումբ, բաղկացած մօտ 15 հոգուց, նորից վերադարձաւ, զանազան մթերքներ բերելով հետո՝ նրան թոյլ չը արուեց ներս մանել. բայց այդ միջոցին մէկը նշան տուեց և համալսարանում մնացածները մուտքերից մէկի դուռը ջարդեցին և ներս թողեցին ուտելեղէն ու մոմեր բերող ընկերներին: Այդ դռան մօտ պահապահներ գնելով, ուսանողները այնուհետև արդէն կարող էին ազատորէն ստանալ ուտելեղէններ: Մութին ընկնելուց յետոյ նրանք փառեցին լսարանում մոմերը, սկսեցին աղմուկ անել, երգեր երգել: Հետզհետէ սաստկացող սանձարձակութիւնը այն աստիճանի հասաւ, որ այլ ևս անհնար էր տեսչութեան և առհասարակ համալսարանական իշխանութեան համար որ և է կերպով ներգործել տաքացած բաղմութեան վրայ: Ծուտով ուսանողները ջարդեցին դրացի սնեակի գուռը ու այդպիսով տեղաւորուեցին երկու լսարաններում. յետոյ սկսեցին կոտրել արտաքին պատուհանների ապակիները և այնուհետև քսանական հոգուց բաղկացած խմբեր ուղարկել համարձարանը վերարկուները բերելու, ցրտից պատըսպարուելու և, թերևս, գիշերելու պատրաստութիւն տեսնելու համար: Լսարաններից հնչում էին ջարգուող ապակիների գրքնացն ու անկարգութիւններ անող բաղմութեան աղաղակները: Որովհետև աղմուկը շարունակ սաստկանում էր, կատարուող դէպքերի մասին զեկուցում ուղարկուեց գեներալնահանգապետին, որ բացասական պատասխան ստանալով համալսարանական վարչութիւնից այն հարցին, թէ արդեօք կարող է նա իսկոյն և եթ գաղարեցնել խառնակութիւնները, անմիջապէս կարգադրեց զօրք ուղարկել համալսարան և փոխահանգապետին ու նահանդական ժանդարմային վարչութեան գլխաւորին յանձնարարեց զբի անցկացնել համախմբման բոլոր մասնակիցների անունները և տները ուղարկել նրանց. իսկ այն ուսանողներին, որոնք չեն կամենայ հնագանդուել այդ պահանջին, ձերբակալել:

Ժամի 7^{1/2}-ի մօտերքը զինուորները բռնեցին համալսարանական

շինութեան ելքերը և շրջապատեցին այն լարանը, որ գրաւել էին ուսանողները, որոնք թշնամաբար և յանդկնարար ընդունեցին լարանը մանող իշխանաւոր անձերին. բայց յետոյ, տեսնելով նրանց ուղեկցող զինուորներին, սկսեցին աւելի զուսալ ու քաղաքավարի պահել իրանց: Այսու ամենայնիւ երբ առաջարկուեց, որ անունները հեշտութեամբ գրի անցնելու համար՝ զանազան ֆակուլտէտների ուսանողները չոկ-ջոկ խմբուն, նրանք պատասխանեցին, որ յօժարակամ դուրս չեն գայ լարանից, մինչև որ նրանց մօտ չը գայ բէկտօրը լսելու համախմբման որոշումը, որից յետոյ նրանք կը կատարեն իրանց ուղղուած պահանջը: Բոնի ոյժի գործադրութիւնից խուսափելու համար, փոխահանգապետը և ժանդարմային վարչութեան գլխաւորը հեռացան լարանից, գնացին բէկտօրի մօտ և խընդրեցին նրան գնալ ուսանողների մօտ, որոնք մինչև այդ ժամանակ արդէն մի փոքր համգստացել էին: Երբ բեկտօրը մտաւ լարան, ուսանողներից մէկը դիմելով նրան՝ մի ճառ ասաց, որի մէջ յայտնեց համախմբման հետեւեալ որոշումները. 1) համախմբումը պահանջում է, որ կարգերի պատիժը գործ չը դրուի կիեվի համասարանում, 2) պահանջում է, որ արձակուած երկու ուսանողները նորից ընդունուեն համալսարան, և 3) եթէ այդ պահանջները չը կատարուեն, համախմբումը որոշել է յունուարին ընդհանուր օքսորուկցիա կազմել: Բէկտօրը, պատասխանելով այդ ճառին, նորից բացատրեց ուսանողների պահանջների անհիմն լինելը, որից յետոյ համախմբման անունից խօսող ուսանողը յայտնեց, որ ինքը բաւարարութիւն ստացաւ. այնուհետեւ համախմբման մասնակիցների անունները յաջորդաբար գրի առնուեցին խումբ առ խումբ, իւրաքանչիւր խումբը 30 հոգուց բաղկացած, և նոյն կարգով արձակուեցին իրանց տները: Բոլոր գրի առնուածների թիւը 396 էր, որոնցից մէկը ուրիշ համալսարանի ուսանող էր, երկուսը ազատ լսողներ էին և մէկը արդէն համալսարանաւարտ: Այդպիսով, ինչպէս երեսում է վերեը գրուածից, կիեվի համալսարանում ներկայ ուսումնական տարրուայ առաջին կիսամեեակի ընթացքում տեղի ունեցած առանձին-առանձին համախմբումների մէջ մասնակցել են 250-ից մինչև 700 ուսանող, որ համեմատած այդ համալսարանում սովորողների ընդհանուր թիւ հետ, որ 2,700-ից աւելի է, չնչին փոքրամասնութիւն է կազմում, որ սակայն յամառաբար խանգարում է մնացած ուսանողների պարապմունքների կանոնաւոր ընթացքին: Դրան պէտք է աւելացնել և այն, որ տեսչութեան դիտողութիւններին նայելով, համախմբումների գլխաւոր և ե-

ունդուն մասը կազմում են մի և նոյն անձնաւորութիւնները, ինչ առիթով էլ և ուր որ էլ տեղի ունենայ համախմբումը:

Նկատի առնելով այդ բոլորը, ժողովրդական լուսաւորութեան մինհստրը գեկտեմբերի 8-ին հեռազրով առաջարկեց կիւելի ուսումնական շրջանի հոգաբարձուին, գեկտեմբերի 7-ի համախմբման մասնակիցների վերաբերմամբ գործադրել 1899 թուի յուլիսի 29-ին Բարձրագոյն հաստատուած ժամանակաւոր կանոնները՝ բարձրագոյն դպրոցներից խմբովին խառնակութիւններ անելու համար արձակուող ուսանողներին զինուորական ծառայութեան ենթարկելու մասին։ Այդ օրէնքի հիման վրայ՝ ժողովրդական լուսաւորութեան, զինուորական, ներքին գործերի և արդարադատութեան մինհստրութիւնների ներկայացուցիչներից կազմուած յատուկ խորհրդակցութիւնը 15 նիստ նուիրեց այդ գործի քննութեան, սկսած գեկտեմբերի 11-ից մինչև 31-ը, հարց ու փորձի ենթարկեց գեկտեմբերի 7-ի խառնակութիւնների այն բոլոր մասնակիցներին, որոնք, կոչ ստանալով, ներկայացան խորհրդի նիստերին, ուշադրութեան առաւ չը ներկայացողների դրաւոր յուցումները, և քննելով մասնակիցներից իւրաքանչիւրի վարմունքը ու դրա հետ միասին գործի պարզուած հանգամանքները, ձայների մնամանութեամբ որոշեց։ ս. Վլադիմիրի համալսարանի այն բոլոր ուսանողներին, որոնք մասնակցել են գեկտեմբերի 7-ի համախմբման, ճանաչել մնալուոր և ենթակայ արձակման համալսարանից ու զինուորագրութեան՝ զանազան ժամանակամիջոցներով։ — Երկու ուսանողների երկը-երեք տարով, հինգ ուսանողների՝ երկ-երկու տարով և բոլոր մենացածներին, մէջները հաշուելով ուրիշ համալսարանի մի ուսանողի, թուով 385 հոգի, մի տարով, և այս վճիռը ներկայացնել ժողովրդական լուսաւորութեան մինհստրին։ Քննելով յատուկ խորհրդակցութեան ներկայացրած արձանագրութիւնները և որոշումը՝ դրանց կցած վաւերաթղթերի հետ, գեկավարուելով 1899 թ. յունիսի 29-ի ժամանակաւոր կանոնների նորդ յօդուածով, ժողովրդական լուսաւորութեան մինհստրը կայացրեց հետևեալ վերջնական վճիռը։ 1) յատուկ խորհրդակցութեան որոշումը առաջին կարգի երկու ուսանողների և երկրորդ կարգի հինգ ուսանողների մասին հաստատել։ 2) առանձին խորհրդակցութեան որոշումը երրորդ կարգի 176 ուսանողների մասին, որոնք եռանդուն մասնակցութիւն են ունեցել գեկտեմբերի 7-ի անկարգութիւնների մէջ կամ, բայց այս վերջին անկարգութիւնների մէջ ունեցած մասնակցութիւնից, նկատուած են և առաջ եղած անկարգութիւնների մէջ, հաստատել։ 3) իսկ յատուկ խորհրդակցութեան որոշումը նոյն երրորդ կարգին

պատկանող 209 ուսանողների մասին, որոնք միայն ներկայ են նդել դեկտեմբերի 7-ի համախմբման և չեն նկատուած նախկին անկարգութիւնների մէջ, փոխել, ենթարկելով այդ ուսանողներին յանդիմանութեան և արձանագրելով այդ մասին տուգանքների օրագրութեան մէջ, զրկելով բոլոր արտօնութիւններից համալսարանական կուրսի ընթացքում և նախադգուշացնելով նրանց, որ եթէ նորից մասնակցելու լինեն անկարգութիւնների մէջ՝ նրանց այժմեան մեղաւորութիւնը կը համարուի նրանց մեղքը ծանրացնող հանգամանք»:

Նոյն պաշտօնական թերթում մարտի 6-ին տպուած է. «Ի նկատի ուենալով կայսրութեան զանազան քաղաքներում վերջին ժամանակներս տեղի ունեցած փողոցային անկարգութիւնների մանրամասնութիւնների մասին տարածուած սուտ լուրերը, ներքին գործերի մինիստրը անհրաժեշտ է համարում յայտնել ի դիտութիւն ընդհանուրի հետեւեալ փաստերը, որոնք կան նրա մօտ տեղական իշխանութիւնների գեկուցումների հրման վրայ: Փետրուարի 19-ին Պետերբուրգում, պատարագից և ընդհանուր մաղթանքից յետոյ կազմնսկի տաճարում, տաճարում գտնուած ուսանող երիտասարդութեան մի մասը, որին միայնան տաճարի դաւթում կանգնած անձինք, խմբուեց կազմակայա հրապարակի վրայ՝ տաճարի և սկիբերի միջն, սիւնաշարքի թեկ մօտ, և խմբի մէջ գտնուող մի քանի անձինք աշխատում էին ճառեր արտասանել: Ուստիկանութեան պահանջին՝ ցրուել, խմբուածները մերժողական պատասխան տուեցին և խմբի մէջ լսուեց այս կոչը. «Պարսններ, բոլորս սեղմուած խմբով գէպի աջ, Նէվակի պրօսպէկտով»: Հետեւելով այդ կոչին, խումբը երգեր երգնելով դիմեց Նէվակի պրօսպէտը, գրաւելով փողոցի մի մասը և ամբողջ մայթը: Անմիջապէս կանչուած ոստիկանական զօրաբաժնի միջոցով այդ խումբը մղուեց գէպի Պետերբուրգի քաղաքային խորհրդարանի բագը, և ոչ մէկը այդ խմբից ոչ մի խեղում (յԵՖՊԵ) չը ստացաւ: Խորհրդարանի բակում խմբի մասնակիցները ցուցակագրուեցին, թուով 244 մարդ, որոնցից մայրաքաղաքի զանազան բարձրագոյն դպրոցների ուսանողներ էին 71, զանազան իգական կուրսերի ունինդիրներ՝ 128, ուրիշ կանայք՝ 20 և 25 հոգի կողմնակի անձեր: Ցուցակագրուածներն ապա իրանց տներն արձակուեցին: Յիշեալ անկարգութեան մասնակիցների մասին քննութիւն է սկսուած, որին պատշաճաւոր ընթացք է տրուած:

«Նոյն թուին Խարկօվ քաղաքում, տաճարում և համալսարանական եկեղեցում ժամասացութիւնը աւարտելուց յետոյ, երբ աղօթողները դուրս էին գալիս տաճարից, նրանցից ան-

ջատուեցին համալսարանի, տեխնոլոգիական և անասնաբուժական ի նստավայրի 100 ուսանող և խմբովին դիմուցին գէպի համասարանի շինութիւնը երգեր երգելով: Եւ որովհետև նրանք հրաժարուեցին ենթարկուել ոստիկանութեան պահանջին ու ցրուել, այդ անձանց շրջապատեցին կանչուած հարիւր կազակներ և մտցրին նրանց ոստիկանական վարչութեան շնչը: Հետքութիւնետէ կազմուեց մի համախմբումն ուսանող երիտասարդութիւնից, որ պահանջում էր բաց թողնել բռնուածներին: Ի նկատի ունենալով, որ ամբոխը, որին միացան և չատ հետաքրիներ, հրաժարուեց ցրուելուց, ուստի այդ անկարգութիւնը դորձելու դրդող անձինք նոյնպէս ձերբակալուեցին: Երեկոյեան ուսանող երիտասարդութիւնից բաղկացած խումբը, որի հետ կրկին միացաւ հետաքրուողների մի նշանաւոր թիւ, աշխատում էր ցոյց անել «Յահնի Էքրայ» լրագրի իւրմբագրատան շինութեան մօտ, ուր զիմեց երգեցողութեամբ, ճիշերով և շուղներով, բայց իր ժամանակին շրջապատուեց պահանջուած զօրքերով և տարուեց ոստիկանապետի վարչութիւնը ցուցակագրուելու համար: Այդ վերջին խմբի հետանալուց յետոյ, փողոցում մնացածների հետ նորից միացաւ զանական կոչման տէր մարդկանց ամբոխը, որ դրամատիկական թատրոնի մօտ աղաղում էր, աղմուկներ է անում և երգեր էր երգում: Կանչուած զօրքերը յետ մղեցին ամբոխը գէպի հարեան փողոցները և ապա ցրեցին նրան: Թէս նահամնդապետին ությայուարարութիւններ մատուցուեցին ստացած այլանդակումների եւ հարուածների մասին, բայց ստուգելուց և բժշկական քննութիւնից յետոյ հաստատուեց միայն մէկը: Վերև նկարագրած անկարգութիւնների մասնակիցների մասին ևս քննութիւն է սկսուած, այնպէս որ 136 ձերբակալուածներից 24 մարդ կանաւորուած են, իսկ մնացածներն արձակուած են:

«Փետրուարի 22-ին և փետրուարի 23-ին Մոսկուայում, ցերեկուայ 12 ժամին, հին համալսարանի շինութեան մօտ ըսկեցին հաւաքուել նախ համալսարանի ուսանողները, զանազան իրական կուրսերի ունկնդիրները և ուրիշ կանայք: Զը նայելով ոստիկանութեան պահանջին ցրուել, ամբոխը գնալով ածում էր և ցերեկուայ մօտ մէկ ժամին, յետ մղելով ծառաներին դրսի դռներից, ներս խուժեց համալսարանի դրսի բագը ապա, կուսրելով դռները, թուով մօտ երեք հարիւր մարդ, ներս խուժեց ակտի դահլիճը, ուր բացեց համաժողովի նիստը, հրաւիրելով այդ ժողովին այն ընկերներին, որոնք կանդնած էին փողոցում և բագում: Նոյնպէս մօտ 300-ից աւել մարդ, մի և նոյն ժամանակ գումարուածները գրգում էին հասարակութիւնը, գցելով

նրանց մէջ զանազան կոչնաթղթեր։ Թէ ոստիկանութեան յորդորները փողոցում և թէ տեսչութեան յորդորները ակտի գահվծում չը կարողացան ստիպել հաւաքուածներին ցրուելու և վերջ տալու անկարգութիւններին, այդ պատճառով էլ համախմբումը փողոցից և համալսարանի բագից շրջապատուեց ոստիկանական խմբով և տարուեց մերձակայ մանէժը։ Համախմբումի մասնակիցները, երբ նրանք դուրս եկան համալսարանի բագը, նոյն կարգով տարուեցին նոյն մանէժը, և ապա բոլորը ցուցակագրուեցին, թուով 630 մարդ, որոնցից 517 զանազան բարձրագոյն դպրոցների ուսանողներ էին, 12 օտար անձինք և 101 կանայք։ Բոլոր բռնուածները շարունակում էին աղմուկներ հանել և յանդուդն պահել իրանց, չը հնազանդուելով ոստիկանութեան ոչ մի պահանջնիւ երեկոյնան մօտ՝ կանանց առաջարկուեց հեռանալ մանէժից և ցրուել իրանց աները, որից օգուտ քաղեցին 93 կանայք, իսկ մնացած 8 կանայք ցանկացան մնալ գիշերելու մանէժում ուրիշ բռնուածների հետ միասին։ Փետրուարի 24-ին առաւօտեան, բռնուածների թուից 53 հոգի բանտ ուղարկուեցին պահապանների ուղեկցութեամբ։ Փետրուարի 24-ի գիշերը մէժէվոյ ինստիտուտի 21 ուսանողներ յանձնուեցին ուսումնարանական իշխանութեանը, իսկ մնացած 463 հոգին խումբ-խումբ ուղարկուեցին փոխադրական բանտը։ Փետրուարի 24-ին, գլխաւորապէս ուսանող երիտասարդութիւնից բաղկացած ամբոխը, որի թիւը երեւնակի հասնում էր 700 հոգու, փորձում էր յարաբերութիւն հաստատել մանէժում գիշերով ձերբակալուածների հետ, բանակցելով նրանց հետ այդ շինութեան մի քանի պատռհաններում իրանց ձեռքով ջարդած ապակիների միջով։ Ոստիկանութիւնը, իրան օգնական ունենալով հարիւր կազակներ, բազմիցս մաքրում էր այդ տեղը խմբուածներից։ Բայց երեկոյեան մօտ ծ ժամին, կամաց-կամաց հաւաքուող խումբը, մօտաւորապէս 300 մարդ, սկսեց առաջ ընթանալ Նիկիտսկայա փողոցով և Տվէրսկօյ բուլվարով երգերով և աղաղակներով, իսկ այնտեղից դէպի Տվէրսկայա փողոցը, ուր, Բրիւսօվսկի նոր փողոցի մօտ, յետ մղուեց դէպի կողքի փողոցները և ցրուեց։ Մօտ մէկ ժամին, փետրուարի 24-ի գիշերը, աւելի քան 100 ուսանողներից և կանանցից բաղկացած ամբոխը, որին չէին թոյլ տուել անցնել Տվէրսկայա փողոցով, անցաւ երգելով Պետրօվսկի քաղաքագուան մօտ կիրակի, փետրուարի 25-ին, զանազան դասակարգերին պատկանող մարդկանցից բաղկացած ամբոխը, զեկավար ունենալով բարձրագոյն դպրոցների ուսանողներին և բարձրագոյն իդական կուրսերի ուսանողուհիներին, օրուայ ընթացքում անկարգու-

թիւններ էր անում քաղաքի կենտրոնական մասերում՝ փորձելով մտնել Տվերսկայա փողոցը. այդ փորձերին արգելք եղան ոստիկանները և երկու հարիւր կազակներ։ Երեկոյեան մօտ, երբ անզուսպ համախմբումը սկսեց ջարդել փողոցի լապտերների ապակինները Բոլշայա Նիկիտսկայա փողոցի և Սարաստնոյ բուլվարի վրայ, այն ժամանակ անկարգութիւններին կատարելապէս վերջ դնելու նպատակով և ի նկատի ունենալով գիշերային ժամանակը, ոստիկանութեանը օդնելու համար կանչուեցին երկու էսկադրօն զօրք և սկսուեց անկարգութիւններ անողների ձերբակալումը։ 400 հոգուց բաղկացած մի խումբ շրջապատռեց և տարուեց մանէժ, իսկ միւս խումբը, որ անկարգութիւններ էր անում Սրբականսկի քաղաքադաների մօտ, Վօրօբէվի տունը տարուեց։ Մանէժում և Վօրօբէվի տանը բռնըուածներին քննելուց յետոյ, ոստիկանութիւնը ձերբակալեց 16 ուսանող, երկու նախսկին ուսանող և մի բժիշկ, իբրև խառնակութիւնների ղեկավարների. իսկ միւսներին, անունները գրելուց յետոյ, բաց թողեցին մները. իսկ ընդամենը, վերոյիշեալներին էլ մէջը հաշուած, այդ օրուայ ընթացքում՝ ոստիկանութեանը անհնազանդութիւն ցոյց տալու և խառնակութիւնները զնկավարելու համար ձերբակալուած են 34 հոգի, որոնց թւում համալսարանի և ուրիշ բարձրագոյն դպրոցների ուսանողներից 21, կանանց զանազան կուրսերի ուսանողուհիներից 9 և կողմնակի անձերից 4։—Փետրուարի 26-ին, ցերեկուայ ժամը մօտ երկուսին, Օխօսնօրենազսկայա հրապարակում ժողովուեց մի ամբոխ, բաղկացած մօտ 150 հոգի ուսանողներից, կանանցից և կողմնակի անձերից. ոստիկանութիւնը բաժան-բաժան արեց այդ ամբոխը և նրա մի մասը, 85 հոգուց բաղկացած, յետ-յետ մղելով, մտցրեց մանէժը, ուր և զրի անցրեց բոլորի անունները։ Այդ 85 հոգուց 31-ը ուսանող դուրս եկան, որոնցից երկուսը, իբրև ամենից շատ մեղաւորներ, ձերբակալուեցին։ Նոյն օրը սատիկանական բաժանմունքներում կալմանաւորուեցին քաղաքի զանազան մասերում փողոցային խառնակութիւններ անելու պատճառով 25 հոգի, որոնց թւում 15 ուսանող. այդ բռնըուածներից պահեցին կալմանաւորուած երկու տղամարդ և մի կին։—Կիրակի, մարտի 4-ին, ցերեկուայ ժամի 2-ին, Տվերսկոյ բուլվարում՝ ոստիկանութիւնը շրջապատեց և հարեան տան բակը մտցրեց 70 հոգուց բաղկացած մի ցուցարար ամբոխ, որի մեծամասնութիւնը կազմում էին տեիմնիկական դպրոցի ուսանողները։ Երբ ոստիկանութիւնը ձերբակալում էր այդ խումբը, ժողովուեց կանանց մի խումբ, որ աշխատում էր հետաքրքիր անցորդների համակրութիւնը գրաւել, դատապարտելով ոստի-

կանութեան վարմունքը. այդ կանայք, թուով 9 հոգի, նոյնպէս ձերբակալուեցին։ Այսուհետև խառնակութիւններին մասնակցողների, թուով 67 հոգի, անունները գրեցին և նրանցից ձերբակալեցին—տեխնիկական գպրոցի 11 ուսանող, Մուկուայի համալսարանի 1 ուսանող և երեք կանանց։ Այդ օրերի ընթացքում Մուկուայում տեղի ունեցած խառնակութիւնների ժամանակ յանցաւորներին բռնելիս ու ձերբակալելիս ոչ մի ընդհարումն և կոփւ չէ եղել ամբոխի և ոստիկանութեան ու նրան օգնութեան կանչուած զինուորական ոյժերի մէջ։ Բոլոր յանցաւորների վերաբերմամբ քննութիւն են կատարում համապատասխան ուսումնարանական վարչութիւնները և կառավարչական իշխանութիւնները։

«Մարտի 4-ին, Ա.Պետրովուրդում, առաւօտեան ժամի 11-ին մօտ, սկսեցին Կազանսկի մայր տաճարին մօտենալ զանազան դասակարգերից բազկացած խմբեր, որոնք անդասուեցին տաճարի մէջ, նրա շուրջը և հրապարակում ժամի 12-ին մօտերքը այդ ամբոխին միացան մայրաքաղաքի բարձրագոյն գպրոցների բազմաթիւ ուսանողներ և ուսանողուհիներ, այսպէս որ 3,000 հոգուց բազկացած մի ամբոխ բռնեց ամբողջապէս տաճարի բակը, գաւիթները և կողքի պարտէզն ու փողոցանցքերը։ Ոստիկանութիւնը պահանջում էր ներկայ եղողներից, որ ցրուեն, բայց նրանց մեծամասնութիւնը ոչ մի ուշադրութիւն չէր գարճանում այդ պահանջների վրայ։ Այսուհետև լսուեցին բացականչութիւններ և աղմուկ ու աղաղակներ բարձրացան, ուստի ոստիկաններից և կազակներից բազկացած մեծ խումբ կանչուեց, որ և բոլորովին անջատեց հրապարակում համախմբը բուածներին նրանց շրջապատող և մեծ մասամբ Նեվսկիյ Պրօսպեկտում կանգնած հասարակութիւնից։ Երբ ոստիկանների և կազակների մեծ խումբը մօտեցաւ, շրջապատուած ամբոխը սկսեց յետ-յետ գնալ դէպի տաճարի դուռը և զանազան առարկաներ նետել դէպի զօրքը և ոստիկանութիւնը։ Մի քանի ուսանողներ այդ ժամանակ փորձ արեցին բաց անել իրանց մօտ եղած և զանազան մակագրութիւններ կրող կարմիր և սպիտակ դրօշակները, որ իսկոյն նրանց ձեռքից խլեցին։ Մայր եկեղեցու աջ կողմից ամբոխի մի մասը կոփւ սկսեց ոստիկանների և կազակների գորաբաժնի հետ, գործելով ձեռնափայտերով, եկեղեցու գաւթի գործերի վրայից վերցրած երկաթեայ ձողերով, նետելով մի և նոյն ժամանակ կրկնակօշիկներ, սառած ձիւնի գունդեր և քարեր։ Այս ժամանակ ամբոխի միջից նետուած երկաթեայ անկոթ մուրճով վիրաւորուեց նորին Մեծութեան

կազակների լէյբ-գվարդիայի գնդի 2-րդ հարիւրեակի հրամանատար Եսաուլ Խոչեսկ. հարուածը այնքան սաստիկ էր, որ յիշուած օֆիցէրը արիւնաթաթախ ստիպուած էր դուրս գալ զօրքերի շարքից: Այս տեսնելով՝ նրան շրջապատող կազակները իջան ձիերից և շարժուեցին դէպի հաւաքուածների կենտրոնը, որտեղ՝ նրանց և հաւաքուածների մէջ տեղի ունեցաւ կոփւ: Այդ ժամանակ վայրագութիւն գործողների մի մասը մղուեց դէպի հրապարակը, շրջապատուեց ստիկաններով և ուղարկուեց բանտ, իսկ միւս մասը մտաւ եկեղեցի, որտեղ մի քանիսը չը հանեցին զլխարկները և սկսեցին ծխել Եկեղեցու դռնապանի Նկատողութեանը՝ այդ անկարգութեանը վերջ տալու մասին՝ ուսանողներից մէկը հարուած հասցրեց նրա երեսին: Չը նայելով եկեղեցում սկսուած անկարգութիւններին և աղաղակին, ժամասացութիւնը շարունակուեց մինչև վերջը: Աղօթողների մեծ մասը շտապեց հեռանալ եկեղեցուց կողմնակի դռներով: Սևղանի դռները փակելուց յետոյ աւագ քահանան բարձրացաւ ամբիոն՝ անկարգութիւններ անողներին խրատելու համար. բայց անսաջող, և երբ նա առաջարկեց գուրս գնալ եկեղեցուց, ուսանողներից մէկը, որ կանգնած էր աւագ քահանայի ետեր, բռնեց նրա փարաջի թերից և խորհուրդ տուեց, որ, անհաճոյ դէպիքերից խոյս տալու համար, ինքը հեռանայ եկեղեցուց: Ապա ամբոխը յետ քաշուեց դէպի տաճարի յետին պատը՝ խորհրդակցելու համար հետագայ գործողութեան եղանակի մասին: Մեծամասնութիւնը վճռեց մէկ-մէկ գուրս չը գալ եկեղեցուց և ոչնչացնել իրանց մօտ գտնուած ամեն բան, ինչ որ կասկածելի էր: Այդ միջոցին մտաւ ստիկանութիւնը և համոզեց մնացած ամբոխին, որ բաղկացած էր մօտ 300 հոգուց, հեռանալ եկեղեցուց և գնալ կազանեան քաղաքամասի ստիկանատունը: Եկեղեցու առաջի հրապարակը մաքրուեց անկարգութիւն անողներից մինչև կէս օրուայ ժամի 1-ը, որից յետոյ ստիկանութիւնը և կազակները ստիպուած էին մի քանի ժամուայ ընթացքում ցրուել Նեկսկի պրօսպէկտում, Սաղօվայա փողոցի և Պոլիցէյսկի կամուրջի միջև, դժբախտաբար, մեծ քանակութեամբ հաւաքուած հետաքրքրուողներին, որոնք վերին աստիճանի դժուարացնում էին ստիկանութեան գործողութիւնները: Մարտի 4-ին ընդամենը ձերբակալուած են 760 մարդ, որոնցից 339-ը մայրագաղաքի բարձրագոյն դպրոցների ուսանողներ են, 377-ը՝ կանաք, առաւելապէս կանանց զանազան կուրսերի ուսանողուհիներ և 44-ը՝ կողմնակի անձինք: Ամբոխի հետ տեղի ունեցած կոռուի մէջ վիրաւորուած է վերոյիշեալ եսաուլ Խոչելը և ծանր

հարուած է հասցրած պրիստաւ վոլուգնդապետ Վիլյելմսկուն։
Հարուածներ և վերքեր ստացան նաև 20 ոստիկանական զին-
ուորներ և 4 կազակներ, բայց նրանց վերքերը ծանր չէին, թէն
բժշկական օգնութիւն հասցնել նրանց հարկաւոր էր։ Զերբա-
կալուածներից վիրաւորուած են 18 տղամարդ և 14 կին։ Ան-
կարգութիւններ առաջացնող յանցաւորների մասին կատարւում
է քննութիւն»։

ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

I

ԱՆԲԵՐՐԻՈՒԹԻՒՆԸ ԱԽԱԼՔԱԼԱՐԻ ԳԱԻԱՌՈՒՄ ԵՒ ՆՐԱ
ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Հացի բզեզը և հօտենտոտեան մլուկը Ախալքալաքի դաշտերում 1899 և 1900 թ.—Մասնագէտ անձանառութիւնների այցելութիւնը.—15 հազար ռուբլու փոխառութիւնը.—Հարկերի կանոնատոր վճարումը.—Միջատներից վնասուած գիւղացիների դրութիւնը այս ձմեռը.—Գլխաւոր կօմիտէտի հոգացողութիւնը.—Հասարակական աշխատանքը.—Գլխաւոր կօմիտէտի երկու անդամների այցելութիւնը և նրանց ուսումնափրութիւնը.—Նոաջին աստիճանի վնասուած 23 գիւղերը, ստորաբաժնուած երեք կարգի՝ կարութեան աստիճանի համաձայն.—Երեք հազար ռուբլու նպաստը.—Տեղական կօմիտէտը և կազմակերպուած օգնութեան սկիզբը.—Քաղցածների բեղիստրացիան իննը գիւղերում.—Նոաջին անգամ ալիւրի բաժանում.—Երեք հազար ռուբլի՝ կտաւատի և գետնախճորի սերմացուի համար:

Ի՞նչպէս յայտնի է «Մուրճի» ընթերցողներին, Ախալքալաքի գաւառը ենթարկուեց ոչ միայն երկրաշարժի աւերմունքներին, այլ և վնասակար միջատների, այն է՝ հացի բզեզի և հօտինտոտեան կամ մաւրեան մլուկի արշաւանքին, որից հազարաւոր դիւդացիներ ընկան մեծ կարութեան մէջ, և տասնեակ գիւղերի բարօրութիւնը երկար տարիներով քայլայուեց:

Սյդ միջատները առաջին անգամ մեր գաւառում երևացին 1899 թուի գարնանը և մեծ վնասներ տուին գլխաւորապէս 13 գիւղերի արտերին, մանաւանդ հացի բզեզը: Դրանց մասին առաջին անգամ այստեղ իմացուեց և տեղական մի երկու ինտելիգենտ անձնաւորութիւնների միջոցով յայտնուեց մամուլին և իշխանութեանը այն ժամանակ միայն, երբ միջատները մեծ քանակութեամբ տարածուել էին և սպառնական դիրք էին բըռնել: Ոչ ոք մինչև հիմա էլ չը գիտէ դրանց այստեղ երեալու կամ գոյանալու պատճառը և անցեալ պատմութիւնը, չը նայած որ մենք այստեղ մասնագէտներ ունենք, գիւղատնտեսական հիմնարկութիւն ունենք: Գիւղացիները ենթադրում են, թէ

Ռուսաստանից բերել տուած քաղաքային դպրոցի փորձնական դաշտում կամ պ. լ. Ղուկասեանի ցուցադաշտերում ցանած սերմացուի հետ են եկել այդ բզէզների ձուերը. բայց մենք անհիմն ենք համարում այդ ենթադրութիւնը:

Ոչինչ չը գիտենք այդ միջատների դէմ կռուելու մասին և դրսից ոչ մի խորհուրդ կամ օգնութիւն չը ստացանք՝ բացի մի քանի հակասական և ոչ-դրական խորհուրդներից: Այդ պատճառով անզօր ժողովուրդը մեծ անհանգստութեամբ և անորոշ զգացմունքներով էր սպասում երկրորդ տարուան: Դեկտեմբերի 19-ի սուլկալի երկրաշարժը պակասը լրացրեց: Գլուխը կորցրած աղջաբնակութիւնը թէ միջատներին, որոնց մասին առաջ ոչինչ չէր լսել, և թէ երկրաշարժը Աստուծու պատիժ էր համարում: Երկրաշարժի տպաւորութիւնը դեռ թարմ էր, և զիւզացին գեռ չէր սփոփուել նրա ծանր հարուածներից, երբ 1900 թուի գարնան բացուելուն պէս միջատները, զլիսաւորապէս հօտենտօտեան մլուկը, համարեա գաւառի կէսը բռնելով՝ սկսեցին իրանց աւերածութիւնները:—Եթէ միայն 1899 թ. հացի բզէզը լինէր, մեր դաշտերը 1900 թուի գարնանը պէտք է ազատ մնային նրանց սերունդի աւերածութիւններից, որովհետեւ 1899 թ. ամսաը նրանք ձու ածնելուց յետոյ՝ ոչնչացել էին, իսկ ձուերից դուրս եկած թրթուաները մօտ երկու տարի (22 ամիս) պէտք է մնային գետնում ու միայն այս 1901 թ. գարնանը՝ պատենաւոր, ապա բզէզ դառնային: Ահա ինչու Հարաւային Ռուսաստանում հացի բզէզի աւերածութիւնները տարումէջ են տեղի ունեցել, օրինակ, 1874, 1876, 1878 և 1880 թուականներին: Բայց ցաւալին այն է, որ մեր դաշտերում անդեւալ 1900 թուի գարնանը և ամսաը աւերածութիւններ արին, ինչպէս և 1899 թուին և հօտենտօտեան մլուկը, և բզէզը, որ անկասկած 1899 թուի բզէզի սերունդը չէ, այլ նոր բզէզ է: Այդ է պատճառը, որ այսուեզ վնասը անհամեմատ աւելի մեծ է, քան ուրիշ այնպիսի տեղերում, ուր, դիցուք, երեացել է կամ միայն բզէզ, կամ մլուկ: Բայց այդ արհաւելիքներից՝ ամառուայ ընթացքում մեծ վնաս պատճառեցին, զլիսաւորապէս միջատների շրջանից դուրս արտերին, ժանգը և եղեամը:

Զէր կարելի, ի հարկէ, լուրջ ուշադրութիւն չը դարձնել այս մեծ աղէտի վրայ: Դիւզացիների զրութեան հետ ծանօթանալու համար՝ ամառուայ ընթացքում ամենից առաջ մեր գաւառը այցելեց «Մշակի» խմբագիր պ. Ա. Քալանթարը. ապա երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութեան կովկասի լիազօրի կողմից՝ ագրօնօմ պ. Ա. Սահակեանը, որ այցելելով միջատներից վնասուած բոլոր 45 զիւղերը, վերածեց

նրանց երեք կարգի, ամենից շատ վեասուած գիւղերի թիւը հաշուելով 23։ Հէնց այդ ժամանակ էլ ընդհանուր վեասների շափը որոշուեց մօտ 400 հազար ոռոբի։ Աչնան սկզբին պ. Սահակեանը երկրորդ անգամ այցելեց մեր գաւառը՝ նահանգապետի կողմից նշանակած պաշտօնեայ Բարձրանովսկու հետ։ Այդ այցելութեան հետեանքը այն եղաւ, որ իշխանութիւնը վճռեց—գաւառի գիւղատնտեսական դրամալիսից 15 հազար ոռոբի փոխարինաբար բաժանել ամենից շատ վնասուած գիւղերին, որ սերմացու առնեն և աշնան ցանքս անեն, որովհետեւ հաւանական ևնթագրութիւն կայ, թէ միջաւաները քիչ են վնասում աշնանացան արտերին։

Բայց նեղուած գիւղացին այդ ժամանակ չէր էլ մտածում աշնանացանի մասին. ստացած փողի մի մասով նա վճարեց իրանից պահանջող պետական, զեմսկի և գպրոցական հարկը, իսկ միւս մասով մի քանի շաբաթուայ համար հայահատիկ առաւ։ Պէտք է նկատած, որ նոյն իսկ այսպիսի նեղ հանգամանքներում մեր գաւառի գիւղական ազգաբնակութեան վրայ պետական, զեմսկի և գպրոցական հարկից ոչ մի կոպէկ ապառիկ չը կայ, որի համար նրանց յայտնուել է նահանգապետի չնորհակալութիւնը։ Շատերին այդ բանը տարօրինակ է թւում. ասում են թէ հէնց միան դա կարիքի բացակայութեան ապացոյց է, որովհետեւ, նրանց ասելով, նոյնանման գէպքերում ներքին նահանգներում չեն կարողանում հարկը ժողովել, նոյն իսկ անկարգութիւններ են լինում։ Բայց զարմանալու ոչինչ չը կայ. դա այստեղի գիւղացու յատկութիւնն է. նա պատրաստ է շապիկը ծախելու, միայն թէ պետական հարկը իր ժամանակին վճարէ։ Այդ է պատճառը, որ ամբողջ թիֆլիսի նահանգի միայն Ախալքալաքի և մասամբ Սխալցխայի գաւառն է, որ երբէք հարկի առափիներ չեն ունենում։

Հին հայահատիկ չունենալով՝ գիւղացիները հէնց առառաւայ վերջին կամ աշնան սկզբին հացի մեծ կարիք էին զգում, բայց յոյս ունենալով արտաքին օգնութեան վրայ՝ չէին վճռում իրանց ունեցած-չունեցած անամսնեղէնը չնչին գներով ծախելու։ Նրանք թէ մինչև 15 հազար ոռոբու բաժանելը և թէ այդ գումարից ստացած չնչին բաժինները վերջանալուց յետոյ՝ մի առժամանակ զիմում էին քաղաք՝ տեղական իշխանութեան և նպաստ էին խնդրում շարունակ։

Հէնց այդ ժամանակ և թէ յետոյ աղքատ գիւղացիների մէջ եղան խելազարուողներ, իսկ ումանք ինքնասպանութեան յուսահատական միջոցների էին զիմում։ Սակայն ոչ մի տեղից նպաստ չը ստանալով՝ յոյսերը կտրեցին և շատերը սկսե-

յին պանդխտել, գլխաւորապէս, Թիֆլիս, Բաթում և Բագու. շատ անձար գիւղացիներ ցրուեցին շրջակայ գաւառների գիւղերը և ծառայ մտան, կամ ուղղակի սկսեցին մուրալ: Այստեղացի 15 ծառայ կայ միայն կարսի շրջանի Մալքա գիւղում, որի բնակիչները մօտ 15 տարի սրանից առաջ գաղթել են այստեղի նախկին Զիֆլիկ ամենաաղքատ և կորած գիւղից և այդ նոր հողաշատ տեղը հարստացել են: Ունեցողներն էլ սկսեցին չնչին գներով ծախել սկզբից ոչխարը, ապա գիւղացիութեան հիմքը կաղմող եղները, կոմիրը: Դիւղացին պակաս օգնութիւն չը ստացաւ, և այս տարուայ առատ խոտի վաճառումից: Բայց ցաւելով պէտք է ասեմ, որ այս բոլոր միջոցները վերջանալուց յետոյ՝ Վաշիան և Զանդուրա գիւղում եղան աղքատ գիւղացիները, որոնք, իրանց գոյութիւնը պահպաներու համար՝ սկսեցին աների ծածկը քանդել ու գերանները ծախել...

Կործես բաւական չէին բնութեան անողոք հարուածները. ասպարէլ եկան և հողատէրերը իրանց պահանջներով՝ նրանցից մէկը, Ղըրիկեսալով, վաշիանցիներից չորս հազար ոուրլուց աւելի էր պահանջում, բայց գիւղացիների հետ «հաշտութիւն» կայացնելով, բաւականացել է 1700 ոուրլիով, այն սլայմանով միայն, որ այդ գումարը խեղճ վաշիացիները վճարեն մինչև մարտի 23-ը... Սարսափելի ուլտիմատում: Այսպիսով խեղճ վաշիանցիները պէտք է տուգանք վճարեն բնութեան փոխարէն. բայց ինչպէս պէտք է նրանք անցնեն միջաւաների և կալուածաւէրերի նման Սկիլլայի և Քարիբդայի միջով... Սակայն գտնուեցին կալուածաւէրեր (Յարութիւնեան և Բաբուրցեան), որոնք իրանց հասնելիք գումարի մի մասը բաշխեցին գիւղացիներին կամ պահանջը յետաձդեցին:

Ահա այսպէս անմիտիթար է գիւղացիների ներկայ գրութիւնը:

Սպագան էլ շատ անորոշ է: Երկար մասածելուց յետոյ՝ վճռել են փորձի համար շատից-քչից ցանքս անել, եթէ միայն սերմացու ճարուի: Զէ որ հացի բզէզը և, մանաւամնդ, հօտենտուեան մլուկը իրանց պարագիտը ունեն, մի միջատ, որ բոյն դնելով նրանց մարմնի մէջ՝ արագութեամբ ոչնչացնում է նըրանց: Գոնէ ուրիշ տեղերում հօտենտուեան մլուկը ոչնչացուել է պարագիտի չնորհիւ՝ երրորդ, չորրորդ տարում: Գուցէ այստեղ էլ, առանց արհեստական միջոցների, բնականաբար ոչնչանան նրանք, և մեր գիւղացին կրկին իր վաստակի տէրը դառնայ: Սակայն շատերը մտադիր են ընտանիքներով մարաբայութեան գնալ գաւառի շրջակայ սար գիւղերը և շրջակայ գաւառները:

Մարարա գիւղացին առհասարակ կալուածատիրոջ կամ միւս զիւղացու սերմացուով, եղներով և գործիքներով մշակում է նրա հողը և բերքից՝ սերմը դուրս դալուց յետոյ, ստանում է մի երրորդ կամ կէս մասը: Բայց դրանից՝ մարարան իր ընտանիքով պարտական է կատարելու հողատիրոջ և միւս տնական գործերը: Շատերը մտադիր են գնալ կարսի վերև յիշած Մազրա դիւղը, որի բնակիչները, այստեղի ներկայումս աւերակ Զիփլիկ գիւղում եղած ժամանակ, հող չունենալու պատճառով, այստեղի գիւղացիների ողորմութեամբ էին ապրում:

Գիւղացիների այս ողբայի գրութեան մասին շարունակ հաղորդուում էր մամուլին և նահանգական իշխանութեանը, որ և լուրջ ուշադրութիւն դարձրեց այս ճգնաժամի վրայ: Երկրաշարժից վնասուած գիւղացիներին օգնող գլխաւոր կօմիտէտը իր հողացողութեան տակ առաւ և միջատներից վնասուած գիւղացիներին և ամնանից առաջ մտածեց հասարակական աշխատանքի մասին: Կարծում էին, թէ կարելի կը լինի Ախալքալաքի և Ալեքսանդրովոլի ճանապարհի՝ մեր գաւառում գտնուող մասը խճուղել և բոլոր աշխատութիւնները յանձնել միջատներից վնասուած գիւղացիներին. բայց այդ ճանապարհի շնութիւնը ոչ մի կերպ չէր կարելի այս տարի ակսել: Գլխաւոր կօմիտէտը վճռեց երկրաշարժից վնասուած գիւղերում շնութելիք նոր աների համար հարկաւոր գերանների կարելը Զուբարէթի անտառում և այնուեղից մինչև երկրաշարժից վնասուած գիւղերը բերելը յանձնել միջոցներից վնասուած գիւղացիներին: Բայց դրանից՝ վլխաւոր կօմիտէտը պայմանաւորուել է նոր աների շնութիւնը յանձն առած կատալասուի հետ, որ շնութիւնների համար հարկաւոր բանուորները վերցնէ միջատներից վնասուած գիւղացիներից: Սակայն հազիւ թէ մոր գիւղացին օգտուի այդ կապալասուից:

Այստեղ կարելի էր երկու տեսակ հասարակական օդտաւէտ և նպատակայարմար աշխատանք ստեղծել: Առաջինը՝ կարելի էր մեր գաւառի գիւղատնեսական մօտ 300 հազար սուրբ դրամադիմի գէթ մի մասը, գիցուք մի հարիւր հազար ոռոքի, գործադրել գոնէ մի երկու գլխաւոր ջրանցքներ անց կացնելու՝ ոռոգման կարօտ, բայց ջրառատ մեր գաւառում: Այդ բանը կարող էին անել և գրամատէրերը՝ իրանց դրամը յետ ստանալու պայմանով. բայց ոչ նախաձեռնող կայ, ոչ էլ կարող ձեռք: Երկրորդը՝ կարելի էր մեր քաղաքը ջուր բերելու կամ փողոցները սալայտակելու գործը միսել: Բայց մեր քաղաքացին վարչութեան ներկայ կազմը հնարաւորութիւն չի տալիս նոյն իսկ մտածել այդ բաների մասին:

Բայց վերև գրածից՝ զլիսաւոր կօմիտէտը հարկաւոր համարեց մօտիկուց և անմիջապէս ծանօթանալ վնասուած գիւղացիների տնտեսական դրութեան և իսկական կարիքի չափերի հետ։ Այդ նախատակով մեր քաղաքը և գաւառը այցելեցին և վեարուարի 18—19-ն ուսումնասիրութիւններ կատարեցին զլիսաւոր կօմիտէտի անդամներ՝ «Մշակի» խմբագիր պլ. Ալ. Քալանթար և յայտնի կովկասագէտ Ե. Գ. Վէյդենքառում։ Նրանք քաղաքում տեղեկութիւններ ժողովեցին գաւառական և գիւղական բժիշկներից, թէ քաղցածութիւնից առաջ չեն եղել արդեօք հիւանդութիւններ, տնասանարոյժից՝ մնացու կենդանիներ արտահանելու մասին, մասվաճառներից և ալիւրավաճառներից՝ թէ որ գիւղից են զլիսաւորապէս անասուններ վաճառում և ալիւր գնում։

Ապա կօմիտէտի այդ երկու անդամները տեղական գաւառապետի հետ այցելեցին Զանդուրա, Վաչիան և Դելիսկա գիւղերը՝ տեղն ու տեղը ուսումնասիրելու նրանց վիճակը, Բոլոր վերև գրածները և թէ առաջ լրագրների հաղորդածները մի առ մի հաստատում են։ Ամեն գիւղում մի քանի տասնեակ աներ կան, որոնք ոչինչ չունեն ուտելու և վերջիրս քաղցում են բասի իսկական մաքով։ Բարեկախտաբար հիւսնդութիւններ և սովոր ուրիշ նշաններ գեռ չեն երեայել, զլիսաւորապէս այն պատճառով, որ շրջակայ դաւաներում, նոյն իսկ մեր գաւառի մի քանի գիւղերում այս տարի հայրը առաստ է և տոհասարակ համեմատաբար աւելի էժան է՝ քան 1899—1900 գիւղատնտեսական տարում։ Բացի գրանից, ինչպէս ասացինք, շատերը պանդիստեցին, շատերը անասնեղէնը ծախեցին, անասուն չունեցողները խոսու ծախեցին և այն։ Շրջակայ զիւղերից ամեն օր աղքատ գիւղացիները ամենաշժան գներով թիւած հաց էին առնում տեղական զօրանոցներից։ Ահա այդ մի քանի հանդամների պատճառով մինչև հիմա սովոր առաջն առնուել է։

Բայց հիմա զիւղացու վերջին ուժերը սպառուել են, և եթէ հասարակութիւնը օգնութեան չը հասնէ, կարող է իսկական սովորացնալ Արովիշետե միջոց չունենալու պատճառով չի կարելի բոլոր մնասուած գիւղացիներին օգնել և նրանց հարուր հաղարների հասնող կորուսար վերադարձնը, և որովհետեւ այդ միջատները կարող են այս ամեա լրիմն ասպարէլ զալ, ուստի եկան հետեւեալ եղրակացութիւններից գիւղացիներին խորհուրդ տալ, որ այս գարնան քիչ ցանեն, այն էլ զլիսաւորապէս կտաւատ և գետնախնձոր, որ այնքան էլ ենթակայ չեն միջատների աւերմունքներին (կտաւատը միշտ լաւ դին է ունենում)։ Բայց գրանից՝ այս տարի օգնել միայն առաջին կարգի 23 զիւ-

զերին՝ թէ սերմացու և թէ ալիւր բաժանելով կարօտներին, որ գրանով գժբախտութիւնների առաջն առնուիք Այդ զիւղերն էլ կարօտութեան տեսակէտից բաժանուեցին երեք կարգի, որոնց ցից առաջին օգնութիւնը պէտք է հասցնուի առայժմ միայն առաջին կարգի վնասուած զիւղերի քաղցած ընտանիքներին։ Ահա այդ 23 զիւղերի անունները, որոնք կարօտութեան աստիճանի համեմատ բաժանուած են երեք կարգի։

Առաջին կարգի զիւղեր՝ 1. Վաշիան,

2. Օրնա,

3. Գելիսկա,

4. Կորի,

5. Գիւմիւրդա,

6. Զանդուրա,

7. Սանալիս,

8. Քիլդա և

9. Սուլճախէթ։

Երկրորդ կարգի՝

1. Ղուլալիս,

2. Մեծ-Խօսպիտա,

3. Փոքր-Խօսպիտա,

4. Պրտնա,

5. Զոնչխա,

6. Ավնիա,

7. Գուգաչէն և

8. Քոթելիս,

9. Արագովա,

2. Զիգրաշէն,

3. Տրկնա,

4. Ալջուս,

5. Խանդօ և

6. Զաք։

Առաջին կարգի զիւղերի քաղցածներին կերակրելու և սերմացու (կտաւատ և գետնալինձոր) տալու համար, առնուազը, հարկաւոր կը լինի մօտ 25 հազար ռուբլի։

Ե. Գ. Վէյգենբառում այսուհեղից հեռագրեց զիսաւոր կօմիտէտի նախագահ Թիֆլիսի պ. Նահանգապետին, որ անհրաժեշտ է չուտափոյթ օգնութիւն հասցնել առաջին կարգի զիւղերի քաղցածներին։ Նահանգապետը այդ նպատակով հեռագրով փոխազրեց 3000 ռուբլի, որ ալիւր առնուի և բաժանուի կարօտներին։

Այդ պատճառով փեարուարի 20-ին այսուեղ կայացաւ անբերրիութիւնից վնասուած զիւղացիներին օգնող նորակազմ կօմիտէտի առաջին նիստը, որ որոշեց—կօմիտէտի անդամներից ուղարկել վնասուած զիւղերը, որ քաղցած որբերի, այրիների, աշխատելու անընդունակ ծերերի կամ հաշմանդամների ցուցակ կազմուի, որ հաւաքած տեղեկութիւնների համաձայն՝ բաժա-

նուի ալիւրը։ Ապա կօմիտէտի անդամների մէջ ստորագրութիւն բացուեց, որ և պիտի շարունակուի քաղաքում։ Միւս օրը, փետրուար 21-ն, կօմիտէտի կազմից յատուկ անձնաւորութիւններ գնացին առաջին կարգի վասուած իննը գիւղերը—Երկրորդ նիստում քննուեցին գիւղերից բերած ցուցակները մանրամասն տեղեկութիւններով։ Երեաց, որ իննը գիւղերից ամենից շատ կարօտ են և նեղութիւն են քաշում Վաչիան, Օրծան, Դելիս կան, Կորխը և Գիւմիւրդան։ Զանդուրա գիւղը, թէն ամենից շատ է վասունը, բայց քաղցող ընտանիքներ համեմատաբար քիչ ունի, որովհետև քաղաքին մօտ է, և շատերը աշխատում են քաղաքում։ Աւելի նուազ կարօտութեան մէջ են Մաճադիան և, մանաւանդ, Քիլդան ու Մուրճախէթում։—Երրորդ նիստում վերջնականապէս որոշուեց ներկայումս քաղցողների թիւը հետեւալ կերպով։ Վաչիանից—56 տուն, 328 հոգի, Օրծայից—55 տ., 266 հ., Դելիսկայից—31 տ., 231 հ., Կորխից—49 տ., 187 հ., Գիւմիւրդայից—25 տ., 136 հ., Զանդուրայից—17 տ., 92 հ., Մաճադիայից—14 տ., 67 հ., Քիլդայից—9 տ., 50 հ. և Մուրճախէթից—3 տ., 12 հ., ընդամննը 259 տ. և 1369 հոգի։ Նոյնպէս որոշուեց, իբրև մի ամսուայ ապահովութիւն, մարդարկուխ ամեն մի հոգուն տալ 30 ֆունտ ալիւր կամ բոլոր 1369 հոգուն՝ մօտ 1027 պուդ, որից 650 պուդը այստեղ դնուեց. մի վագն ալիւր էլ հեռագրով պատուիրուեց։ Հիմա ցուցակագրուած կարօտ գիւղացիները քանակներով գալիս են քաղաք և իրանց բաժին ալիւրը ստամուում։ Մոռացայ ասել որ այստեղի կօմիտէտը որոշեց բաժանել առայժմ միայն հազար ոտորու ալիւր։ Մնացած երկու հազարը պահուում է մօտիկ ապագայի համար, երբ պահանջը աւելի մեծ է։

Ապա այստեղի կօմիտէտը հեռագիր ստացաւ Թիֆլիսի պ. Նահանգապետից, թէ գիսաւոր կօմիտէտը որոշել է գիւղացիների համար ձեռք բերել իբրև սերմացու 100 սօմար կտաւատ (սօմարը 18 պուդ է) և 1500 պուդ գետնախնձոր, որ վոխարինաբար պէտք է բաժանուի կարօտ գիւղացիներին այն պայմանով, որ ստացած բերքից վերադարձնեն տուած սերմացուն։ Կտաւատը և գետնախնձորը պէտք է առնուեն մինչև վետրուարի 24-ը դոյութիւն ունեցած գներով, որի համար վոխարինաբար է 3000 սուրբի։ Այստեղի կօմիտէտը մտադիր է կտաւատի մի մասը այստեղ առնել իսկ մնացածը՝ Ալէքսանդրապոլի գաւառից բերել տալ։ Գետնախնձորը կ'առնուի կամ դուխօրօրներից, կամ Ախալցխայի գաւառի Դամալա գիւղից։

ՍԱԼԻՒՄԵԱՆ

II

ԱՂՔԱՏՆԵՐԻ ԽՆԱՄՄԱՏՐՈՒԹԻՒՆԸ ԲԱԳԻՌՈՒՄ

Յայտնի է, որ 1899 թուի վերջերից մեր երկու բարեգործական ընկերութիւնները—Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը և Բազուի Հայոց Մարդասիրական Ընկերութիւնը վերակաղմուեցան նոր սկզբունքների վրայ, որոնք նշանակուած են կառավարութեան հաստատած նոր կանոնագրութիւնների մէջ։ Այդ նոր կանոններով յիշեալ երկու ընկերութիւնները այլ ևս առաջուայ նորան չը պիտի ծախսեն իրանց միջոցների մած մասը կրթական գործի մամար, այսինքն ուսումնարաններին և ուսում առնողներին նիւթական օժանդակութիւն հասցնելու համար։ Այժմ ընկերութիւնների առջև դրուած է միայն չքաւոր հայերին օգնելու հնարաւորութիւնը, այն էլ միայն այն չքաւոր հայերին, որոնք ապրում են այն քաղաքներում, ուր բացուած են ընկերութիւնները, այսինքն Թիֆլիսում և Բագւում։

Գործունէութեան շրջանը և նպաստակները այժմ սահմանափակ են։ Բայց դա գեռ չէ նշանակում, թէ երկու բարեգործական հաստատութիւնների գործը շատ թեթևացրած է։ Ընդհակառակն, եթէ առաջներում Բազուի Մարդասիրական Ընկերութիւնը միանգամից կազմում էր ուսումնարանների և ուսում առնողների ցուցակը, որոշում էր իւրաքանչիւրին յատկացնելի նպաստը (նկատներ՝ մեծ մտսամբ շատ աննշան քաննակութեամբ).—այժմ այլ ևս չէ կարելի բաւականանալ բարեգործութեան այդ հեշտ ձեռով։ Այժմ ընկերութիւնների առջև կանոնած է ժողովրդական կարիքը Կովկասեան երկու մեծ քաղաքներում —Թիֆլիսում և Բագւում։ Մեծ, շատ մեծ է այդ կարիքը, և նրան կարելին չափ վերացնելու համար ընկերութիւնները ունեն շատ միջոցներ։ Նրանք կարող են բաց անել ձրի և էժանագին ձաշարաններ, հիւանդանոցներ, աշխատանքի տներ։ Սնկասկած, այժմ աւելի շատ զործ և եւսանդ է պահանջւում ընկերութիւններից՝ այդքան մեծ զործեր կատարելու համար։

Այդքան կարողանում են մեր ընկերութիւնները իրանց նոր գիրքի համապատասխան զործունէութիւն ցոյց տալ։

Վերցնենք Բագուն։ Արդիւնաբերական և առևտրական այդ խոշոր կենտրոնը դէպի իրան է քաշում մեծ քանակութեամբ մարդիկ, որոնք, անապահով դրաւթեան մէջ գտնուելով, որոնում են գործ և աշխատանք։ Յայտնի է որ աղքատութիւնը ոչ մի տեղ այնքան սարսափելի կերպարանք չէ ընդունում, ինչպէս

այդ մեծ քաղաքում, ուր ամենափարթամ, շացուցիչ հարըստութեան, անմիտ զեղխութեան հետ միասին ապրում է և մի այնպիսի մերկաւթիւն, որից տեսնողի մազերը բիշ-բիշ են կանգնում: Այդպիսի մի տեղ Մարդասիրական Ընկերութիւնը ահանգին գործ ունի կատարելու: Եւ մնաք չենք կարող բաւարար համարել նրա այն գործունէութիւնը, որի քննութեամբ էր զբաղուած անդամների ընդհանուր ժողովը մի քանի օր առաջ: Նախ և առաջ չենք կարող ցաւ չը յայտնել, որ ընկերութեան վարչութիւնը չէ ուղարկել իր տեղեկագիրը խմբագրութիւններին, որպէս զի կարելի լինի տեհի լիակատար պատկեր ներկայացնել: Ուստի մենք հարկադրուած ենք՝ բաւականանալ այն տեղեկութիւններով, որոնք երևացին լրագիրների մէջ, պիսաւորապէս «Մշակում»:

Մենք չը գիտենք թէ ընկերութիւնը մի տարուայ ընթացքում քանի անդամներ և նրգան մուտք է ունեցել: Անդամների թիւը, ինչպէս երևում է, 300-ից աւել չէ, հետեւարար մուտքի մէջ միայն 1500—1800 ուուրլի է մանում այն անձինքներից, որոնք կամնում են միջոց տալ ընկերութեան՝ գործը առաջ տանելու: Դա մի շատ չնշին միջոց է, եթէ նկատի ունենանք Բաղուն, այնտեղ հաւաքուած հայերի բաղմութիւնը և նիւթական կարողութիւնը: Այնպէս որ ընկերութիւնը ստիպուած է, ինչպէս և առաջ, գործ տեսնել իր մայր գումարի տոկոսներով: Բարեկամստարար, այդ մայր գումարը բաւական խոչոր է և ընկերութիւնը, միայն այդ հանգամանքի չնորհիւ, այնքան աշքատ չէ, որ չը կարողանայ վորք ի շատէ ուշադրութեան արժանի գործ կատարել: Եւ այսպէս, կը նշանակնենք նախ և առաջ այն հանգամանքը, որ Բագուի հայերը շատ էլ պարտաճանաչ չեն ընկերութեան վերաբերմամբ: Պէտք է աւելացնենք, որ մնաք ներկայ տեսութեան մէջ նկատի չենք առնում ընկերութեան զրադարանը, թէ չենք կարող անցողակի չը նկատել, որ այդ հիմնարկութիւնը պահանելու համար նախահաշուով նշանակուած է 5000 ուուրլի, բայց արդեօք այդքան էլ մուտք ստացւում է սրանից, թէ ընկերութիւնից է նպաստներ պահանջում: մի բան, որ չը պէտք է լիներ, ի նկատի ունենալով թէ գրագարանի հարստութիւնը և թէ Բագուի պէս մեծ քաղաքը:

Անշներով ընկերութեան միւս գործերին, մնաք նախ և առաջ պիտի արձանագրենք այն միանգամայն համակրելի հիմնարկութիւնը, որպիսին է ձրի ձաշարանը: Նա բացուած է 1900 թ. ապրիլի 20-ից և 8 ամսուայ ու 10 օրուայ մէջ տուել է 31520 բաժին ճաշ: Զէ կարելի չը ցանկալ, որ այդ հիմնարկութիւնը օրէցօր տեհի մեծանայ և աւելի մեծ գործունէու-

թիւն ցոյց տայց Ընկերութիւնը ծրագրել է և աշխատանքի տուն, որի համար յատկացրել է 4000 ռուբլի: Դա էլ խելացի օդնութեան մի միջոց է Բագուի աղքատների համար:

Թէ որքան մեծ է ընկերութեան նպաստներին կարօտ անձանց թիւը, երեսում է նրանից, որ 1900 թ. ընթացքում վարչութիւնը ստացել է 1158 ինդրագիր՝ նպաստներ տալու համար: Այդ մեծ սկահանջիր դիմաց վարչութիւնը հարկադրուած է ևղել խոստովանել իր անկարողութիւնը իր դրամական միջոցների պակասութեան պատճառով: Ահա այստեղ է, որ մենք պիտի անբաւարար համարնք վարչութեան գործունէութիւնը: Պակասում են միջոցներ՝ բոլոր թշուառների խնդիրքներին բաւարարութիւն տալու համար, բայց չը պիտի պակասէն: Բագուի հայ հասարակութիւնը պիտի հասկանայ այն սարսափելի գրութիւնը, որին ականատես է լինում վարչութիւնը հարիւրաւոր գէպերում: Ահա այդ իրողութեան մի պատառիկը, որ գտնում ենք այ: Դաւթեանի յօդուածներից մէկում.

«Քաղաքի յետ ընկած մասերում, զանազան Ն.-ներ անուանուած խողերում, մէկ-մէկու վրայ թափթփուած՝ ընակւում են ընտանիքներ, ամեն մի Ն.-ում մի քանի ընտանիք, յաճախ բոլորովին օտար, անծանօթ ընտանիքներ: Այդ Ն.-ներում գուք տեսնում էք և՛ ծեր, և՛ երիտասարդ, և՛ պառաւ երկուտակած սկեսուր, և առողջ-մատաղահաս հարս, ամուրի, ձեռքից կամ ոսքից զրկուած երիտասարդ, 15—16 տարեկան ծաղկափթիթ օրիորդներ, պատանիներ, ծծկեր երեխաներ և նոյն խոկ երկունքի ենթակայ գարձած, երեմները ծածկած, անկիւններում կուչ եկած կանայք: Դրանք, բաղդի այդ խաղալիքները, մերկ յատակի վրայ թափթփուած, քնում են միասին, առանց անզաշորի... Կեղան ու գարշահոտութիւնը լրացնում են ամեն ինչ: Աւելացրէք գրանց վրայ և հիւանդներ, մի կտոր թաղիքի տակ կծկուած զառամեաներ, որոնք հազիւ հազ զլուկ վեր քաշած՝ օգնութիւն են հայում, արտասուաթոր աշքերով ազաշում-պաղատում են աղատեկ «այս զժովից», ձանապարհ ցցել, որպէս զի կարողանան յանկացած ժամանակ գտնէ «աղաղ», «յստակ» ջուր խմել... Ի՞նչ սիրտ կարող է չը մղկատ, նրափիսի գութ կարող է չը շարժուել լսելով այդպիսի խօսքեր»:

Բայց և այնպէս, մղկըտացող սրտեր, շարժուող գութ շատ չը կան Բաղւում: Ապացոյց—300 անդամները...

Ո՞չ Մեր բարեգործական ընկերութիւնները այժմ այնպէս չը պիտի լինեն, ինչպէս եղել են: Այժմ նրանք մողրուած են ժողովրդական կարիքների և ցաւերի մէջ և ունեն զործունէութեան շատ լայն ասպարէզ, հետեարար և մեծ պատասխանա-

աւութիւն են վերցրած իրանց վրայ։ Հարկաւոր են աւելի մեծ նիւթական միջոցներ։ Իսկ այդ կողմից ընկերութիւնների ապահովութիւնը մենք չենք կարող որոնել միայն անշարժ գրաւմագլուխների տոկոսների մէջ, այլ այն կենդանի և աշխոյժ համակրութեան մէջ, որ հասարակութիւնը ցոյց կը տայ նրանց վերաբերսամբ։ Անդամների թիւն է այդ համակրութեան չափը։ Եւ որովհետև Մարդասիրական Ընկերութեան անդամները այնքան քիչ են, ուստի կարող ենք ասել, որ Բագուի հայ հասարակութիւնը դեռ մեռած ու անզգայ է այն սարսափելի իրականութեան դիմաց, որի մի փոքրիկ նմուշը բերինք վերևում...

Ա.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Զարգացման հիմնական օրէնքը՝ Վայրենիների համախմբում և քաղաքակիրթ հասարակութիւնն. — Համախմբում աղքանական սկզբունքով. — Երկու տեսակ նացիօնալիաներ. — Դրանց լարաբերութիւնը. — Համամարդկային համերաշխութիւն հաւասար աղջութիւնների մէջ. — Անհատական և միջազգային վէճերի լուծման օրինական միջոց. — Զէխեր և գերմանացիներ. — Իրանպացիներ և անդիխացիներ. — Իրանդական օրստրուկցիա պարլամենտում. — Իրանդական լեզուն անդիխացան պատգամատրների ժողովում. — Իրանդական պարլամենտ և համալսարան. — Հողային հարցը իրանդիխացում. — Բանակցութիւններ անդիխացիների և բօշների մէջ. — Սօցիալիստ Ձեփաչսի սռաջարկը Գրանսիխական պատգամատրների ժողովում. — Դէրուէդ և Գրանսիխական նացիօնալիստներ. — Սավելունիալի պահանջները. — Երազացի դիպումատների ընդդիմազրութիւնը Սան-Ստեֆանօյի գաշնազրութեան և զրա ոխուր հետևանքները:

Զարգացումը (ըստ Սպենսէրի) ոչ այլ ինչ է, եթէ ոչ աստիճանական փոխուսութիւն՝ անորոշ, անկապ, հասարակ միատեսականութիւնից գէպի որոշ, կապակցուած, բարդ բազմատեսակութիւն։ Զարգացման այդ ընդհանուր օրէնքից զերծ չեն կենացանիների, ուրեմն և մարդկանց հասարակութիւնները։ Եթէ մնաք համեմատենք վայրենի մարդկանց համախմբումները քաղաքակիրթ աղջերի հասարակութիւնների հետ, մնաք կը նրկատենք նոյն օրէնքը. անորոշ, անկապ, հասարակ միատեսակութիւնից աստիճանաբար առաջ է գալիս որոշ, կապակցուած և բարդ բազմատեսակութիւն։

Վայրենիների կեանքում տնհատների իրաւունքներն անորոշ են, անհատների փոխադարձ կախումն ու կապը շատ թոյլէ, անհատները իրար շատ նման են. չը կայ աշխատանքի բաժանումն. իրաքանչիւրը ինքն է շինում իր անպաճոյն կեանքի համար բոլոր անհրաժեշտ իրերը։ Մինչդեռ քանի բարձր է հասարակութիւնը իր քաղաքակրթութեամբ, այնքան որոշ են անհատների իրաւունքները, այնքան սերտ է դրանց փոխադարձ կապն ու կախումը, այնքան լիակատար է արտայայտում աշխատանքի բաժանումը։ Կարծես այդպիսի հասարակութիւնը՝

բոլոր անդամների բազմատեսակ մասնիկներից սերտ կապակցուած մի ամբողջութիւն, մի մարմին լինի:

Երբ քաղաքական որոշ սահմաններում ապրող անհատները, բացի տնտեսական և վարչական ընդհանուր պայմաններից՝ կապւում են և ընդհանուր լեզուով, պատմական անցեալով, մի խօսքով ազգայնական ընդհանուր հակումներով, այն ժամանակ մենք գործ ունենք մի կենտրոնաձիգ ոյժով (ազգայնութեան) միացած համախմբութիւն, որ ենթակայ է միայն ներքին հասարակական զարդարացման և զասակարդացման մաքառման: Բոլորովին այլ երևոյթի ենք հանդիպում, երբ որոշ տերրիտորիայի վրայ ապրող անհատները մի քանի կենտրոնաձիգ ոյժերի, մի քանի ազգութիւնների են պատկանում:

Վերցնենք, օրինակի համար, Աւստրիան. այդտեղ կայ ունդարական ազգայնական կենտրոնաձիգ ոյժ առանձին, չեխականը առանձին, լեհականը առանձին, գերմանականը առանձին, էլ չենք թւում այլ մանր-մունր ազգութիւնների ձգուումները: Բնականաբար հաւասարակշռութիւնը կարող է վերականգնուել, երբ զրանցից իւրաքանչիւրի կենտրոնաձգական տեսնչը գոհացում կը ստանայ. այսինքն, երբ խրաբանչւրը կ'ունինայ ազգային լիակատար ինքնուրոյնութիւն, երբ իրապէս հաւասարութիւն կը լինի այդ բոլոր ազգութիւնների իրաւունքների մէջ և մէկը չի լինի գերակշռող հրամայով իսկ միւսը՝ ճնշուած ու իր ազգային իրաւունքների մէջ սահմանափակուած: Համերաշխութիւնը, եղբարութիւնը կարող է դոյսութիւն ունենալ միայն հաւասարապէս անկախ անհատների մէջ, նոյնը ձիշտ է և ազգերի փոխազարձ յարաբերութիւնների նկատմամբ:

Երբէք չէուը չի հաշտուիլ գերմանացու հետ, իրլանգացին՝ անգլիացու հետ, քանի գեռ կը լինի դրանց իրաւունքների մէջ որ և է խտրութիւն: Ոչ մի տնտեսական ծրագիր չէ կարող զոհացնել դրանց ազգային պատուասիրութիւնը, մինչև որ դրանք չը ստանան իրանց ինքնուրոյնութիւնը: Զէխի կամ իրլանդացու ձգուման մէջ չը կայ ուրիշին վնասելու, ուրիշին հպատակեցնելու բնակալական տարր, այլ չոկ ինքնապաշտպանութիւն, լոկ ընական մի պահանջ: Այդ է պատճառը, որ մարդկաւթեան ազնիւ մասը համակրում է գրանց ձգուումներին:

Բոլորավին այլ երևոյթ է գերմանացու կամ անգլիացու «նացիօնալիստական» կամ «իմպերիալիստական» ձգտումը: Այդ արդէն ուրիշներին նուածնելու, հարստանարելու և նրանց իրաւունքները սահմանափակելու անարդար մի ձգտում է. այդ ոչպարփակութեան ազնիւ մասը համակրում է գրանց ձգուումներին:

և ասում.—Քեզ չի կարելի այն, ինչ որ կարելի է ինձ. դու թողլ ես, ուրեմն պէտք է բոլորովին հպատակուես ինձ և լաւ համարես այն, ինչ որ ես ևմ ցանկանում գու անշախանաս ես, իբրև ազգութիւն, և իրաւունք չունես ինքնուրոյն լինել քո սեփական գործերում:

Բնականաբար բօէրը, իրլանդացին չէ կարող իր մասին արդարացի համարել ուժեղ անդլիացու կարծիքը, ինչպէս չեխը չէ կարող հաշտուել գերմանական՝ գերիշանութեան հետ. սկսում է մրցում ազգայնական հողի վրայ. և երբ խաղաղ օրինական պայքարը անզօր է, առաջ են գալիս ցոյցեր, օքստրուկցիա, ահամբեկումներ, կոփւ և պատերազմ:

Մի ժամանակ մարդկային հասարակութեան անդամների մէջ ես վիճող՝ կողմից արդարութիւնը իրանց որերի ծայրերին էին գտնում: Մենամարտութիւնը Աստուծու դատաստան էր ճանաչուած: Քաղաքակրթութիւնը վերացրեց այդ բարբարոս հասկացողութիւնը և անհատին դրաւ օրէնքի և անհաջառ դատաստանի հովանու տակ դնի ազգերի իրաւունքը: Այդ մարդկային ձգտումը հստանութիւն գտաւ աշխարհիս ամենանդօր պետութեան առաջնորդի, ուսւաց կայսրի կողմից, ստիւան ազգերը կառավարող գիպօմաները գժուարութեամբ ևն հրաժարում գարերով վարժուած սովորութիւններից և առայժմ Հասկայի համաժողովի որոշումները մնում են դեռ բարի ցանկութիւններ:

Անցեալ համարի Սրտաքին Տեսութեան մէջ մենք տեսանք, թէ ինչ ձեռով սկսուեց աւստրիական պատգամաւորների ժողովի առաջին նիստը: Դժուար չէր գուշակել, որ յաջորդ նիստերում տեղի են տնինալու աւելի սկանդալեօզ տեսարաններ՝ չէին և գերմանացի նացիսալիսաների մէջ, ինչպէս և եղաւ: Ի՞չ մնաց որ խօսքից, հայհայնքից, գործը տուրուգմիոցի համնէր:

Միացած իրլանդական կուսակցութիւնն էլ անդլիական պարլամենտում է բռնել մարտական դիրք և սառնարին անզլիացիները պատգամաւորների ժողովում ստիստուած եղան դիմուլ սովորութիւն՝ 12 անհնազանդ իրլանդացի պատգամաւորներին հեռույնելու համար: Երբ համայնքի լիդեր (պարագուխ) Բալֆուրը առաջարկեց քուէարկութեան՝ կառավարութեան 17 միլ. ֆ. ստերլինգ բաց թողնելու հարցը և ըստ սովորութեան պատգամաւորները սկսեցին ցրուել դահլիճից գէսի հարեւն սենեակիները՝ ձայները թուելու համար, իրլանդացիներից մէկը բացականչեց. «Մենք չենք հեռանալ դահլիճից, մենք բոլորում

ենք, որովհետև 17 միլիօնի հարցը վճռուած է, թէն իրլանդացիները գեռ չեն յայտնել իրանց կարծիքը»:

«Խնդիրը վճռուած է»—ասաց մասնաժողովի նախագահը և հրաւիրեց իրլանդացուն կարգի: Իրլանդացիները չէին ուզում հեռանալ դահլիճից և բողոքում էին: Համայնքի նախագահը (սպիրիտ) պահանջնեց՝ անյապաղ հեռանալ: Իրլանդացիներից 12 հոդի չէին ուղում շարժուել իրանց տեղերից և սպիրիտը ստիւպուած էր հրաւիրել ժողովը պօլիցիականներ, որոնք ոյժով դուրս բերին անհնաղանդ իրլանդացիներին:

Պարլամենտի օրէնսդրական զբաղմունքները՝ ապագայում այդ տեսակ օբսարուէցիացից ազատելու համար Բալֆուրը առաջարկեց պարլամէնտին, որ այսուհետև այն պատգամաւորաները, որոնք չեն հնադանդուիլ սպիրիտի հրամանին, չը նոյած պօլիցիա հրաւիրելու նրա սպառնալիքին, դրանով պէտք է համարուեն հեռացրուած պատրամաւորական ժողովի ամբողջ նսաւշրջանի ընթացքում: Եւ օրինագուհութիւնը շատ բարձր գնահատող անգիտացիները ահազին մնածամասնութեամբ, 264 ձայնով ընդդէմ 51-ի, ընդունեցին այդ առաջարկը:

Նոր քաղաքական երեսյթ էր անգլիական պարլամէնտում և մի այլ գէպք. իրլանդացի պատգամաւոր Օ' Դօննէլ փորձեց իր ճառը արտասանել իրլանդներէն և ոչ անգլիերէն: Այդ չը տեսնուած նորմուծութեան գէմ բողոքեց սպիրիտը՝ կարգի հըրաւիրելով «իրան անյայտ բարբառով» խօսող պատղամաւորին: —Ես խօսում եմ իմ մայրենի լողուով և ինձ անյայտ է կանոն, որ արգելում վնէր պարլամէնտում խօսել իրլանդներէն,—պատասխանուց Օ' Դօննէլը:

Իրլանդացիների ձգտումը լաւ ընորոշում է նրանց պատգամաւորների պարագլուխ Զօն Բէդմօնդի Նիւկէստլում արտասահած ճառը: «Իրլանդացիների նպատակը կայանում է աղդացին անկախութիւն ձեռք բերելու մէջ. չը պէտք է յօյս դնել անգլիացիների վրայ, որոնք չեն ուզում հասկանալ, որ մինչև չը տրուի իրլանդացի ժողովրդին անջատ և անկախ ազգ լինելու իրաւունք—իրլանդիան երբէք չէ կարող դոհ լինել: Իրլանդիան պէտք է ունենայ իր սեփական ինքնալիքութիւնը, Գլադատօնի ծրագրած սեփական պարլամէնտը»:

Իրլանդացիները ուզում են ունենալ իրանց հայրենիքում և սեփական կաթոլիկական համալսարան:

Իրլանդացիների անբաւականութեան տնտեսական պայմանը հողային հարցն է: Հողը իրլանդիայում միծ մասսամբ պատկանում է անգլիացի կալուածատէրներին, լէնդ-լօրդներին, որոնցից կապալով հողաբաժիններ են վերցնում իրլանդացի աւ-

գարակասէրերը (Գերմէր): Կատալի պայմանները շատ ծանր են և իրլանդիայի բոլոր թարմ ոյժերը գերադասում են՝ իրանց թշուառ հայրենիքից գաղթել Ամերիկա: Վերջին 20 տարուայ ընթացքում Իրլանդիայից գաղթել են 1,500,000 հոգի: Այդ չարքի առաջն առնելու համար իրլանդական ժողովրդի ներկայացուցիչները պահանջում են հողաբաժինների ստիպութական յետ գնումն կալուածատէրերից, այն էլ պետական զանձարանի օգնութեամբ: Անզլիան պէտք է փոխ տայ Իրլանդիային 120 միլիոն, որ պէտք է դորձ գնուի լինդ-լորդերից հողեր գնելու վրայ, և միայն 20 տարուայ ընթացքում Իրլանդիան մաս-մաս պարտաւորում է վերադարձնել այդ փոխառութիւնը: Այլ խօսքն իրլանդացիները պահանջում են, երկրագործների համար այն, ինչ որ արաւ ոռոսաց կառավարութիւնը իր գիւղացիների համար *):

Սնդգրիան, մանաւանդ հիմա, երբ ահազին միջոցներ է կլանում հարաւ-ափրիկական դժբախտ պատերազմը՝ յանձն չէ առնում ընդունել հողերի ստիպովական յետ զնումը և թողնում է ամեն բան լինդ-լորդերի յօմար կամքին; Առհասարակ բօշները շատ թանդ նստացրին անզվիացիներին, դրանց դիպլոմատների և կապիտալիսաների ջանքերով սկսած անարդար պատերազմը, և դևս յայսնի չէ, թէ երբ կ'աջողութ կիտչներին և Միներին համոզի Դեվէլիսին և Բօտացին որ՝ անձնատուր լինեն: Առայժմ անզվիական կառավարութեան խոստամիները՝ տալ բօշներին ներում, տեղական լայն բնանավարութիւն և մինչև անգամ բօշների խանդարուած անակտութիւնը և աւերակ տները վերականգնելու համար խոշոր փոխառութիւն— գետ չեն ներդրութել այդ քաջերի վրայ:

Ֆրանսիայում կրօնական միաբանութիւնների հարցի քըն-նութիւնը գետ չը վերջացաւ պատրամաւորների ժողովում։ Սօ-ցիալիստ Ջևիաէսի առաջարկը—իսպառ վերայնել Ֆրանսիայում բոլոր կրօնական միաբանութիւնները — մերժուեց ձայների առաւելութեամբ (515 ձայնով ընդդէմ 34-ի)։ Վալդէկ-Բուսան յայտնեց, որ չէ կարող ընդունել այդ առաջարկը, որտիհետեւ օրենքով բոլլացրուած միաբանութիւնները օգուտ են բերում՝ նպաստ տալով 70 հազար չքառորդներին։ Սակայն հարց է, միթէ կառավարութիւնը ինքը չէր կարող նոյնը անել։ Անկասկած դրա համար պահանջւում է շատ աւելի արժատական ուղղութիւն, քան որին հետեւում է Վալդէկ-Բուսան։ Ֆրանսիայի ներկայ հասարակական կարդերի ծնունդ է և կղերական դարյոց-

*) Skr. u. vkl. p. ph. n. skrum. d. ph. n.:

ների աջողութիւնը. նոյն այդ պայմանների ծնունդ է և Յուլան-ժէների ու Դերուլէդների փորձերը—տապալել հասարակապետութիւնը: Դերուլէդը վերջերում ակնյայտնի ցոյց տուեց, թէ ինչ բարոյական ոչնչութիւններ են քրանսիական նացիօնավանները. այդ մնափառ Տարտարէնը նորից ցանկացաւ խօսակցութեան առարկայ դառնալ և զբաղեցնել իր երեկի անձով աշխարհը. նա մի շարք անբաստանութիւններ բարդեց իր երէկուայ գաճնակիցների վրայ և նորանոր սկանդալներով իր մասին գարձեալ խօսացնել տուեց հասարակական կարծիքը: Դէրուլէդը Շնացիօնալիստներին այն տիպերից է, որոնք ի չարն են գործ գնում ժողովրդի անկուլտուրական խաւերի նախապաշարմունքները՝ իրանց մնափառ և ստոր կրքերին գործացում տալու համար: Ամեն աղքի մէջ կան Դէրուլէդներ, որոնց երրէք չը պէտք է շփոթել խսկական հայրենասէրների հետ...

Աւելի խոշոր տիպերի մէջ աւելի ևս ակներեն է այդ երկու ձեր հայրենասիրութեան տարբերութիւնները. օրին. Գլաւատօն և Բիսմարկ ուղղակի հակապատկերներ են:

Առաջին տեսակ հայրենասէրի համար, օրինակ, գոյութիւն չունէր ատելութիւն դէպի մի այլ աղդ և նաև յետին մտքերով դէմ չէր լինիլ ոտու-տաճկակտն պատերազմից յետոյ ընդունել Սան-Ստեֆանոյի գաճնագրութիւնը, և մարդկութիւնը անշուշտ աղատուած կը լինէր անթիւ ոճիրներից. բայց Բիկօնսֆիլդ-Բիսմարկները իրանց չարամիտ «հեռատեսութեամբ» գուրս եկան անհամեմատ կարճատես, որ պարզ է ամեն մէկի համար, ոչ մօտ ծանօթ է թիւրքական ըեժիմն:

Ուուսաստանին խանդարեցին իր ժամանակ թիւրքական լծի տակից հանել Մակեդոնիան և միայնել Յուլզարիային: Ի՞նչ շահեց զրանից Եւրոպան, որ ամեն օր պէտք է սպասի նորանոր արիւնհեղութիւններին Բալկաննեան թերակղզու այն մասում, որ հակառակ Սլէքսանդր Ռ-ի ցանկութեամբ մասում ուղարկուանը Պատականացարդ ճիշտ է, Բերլինի գաճնագրութեամբ սուլթանը պարտաւորուեց անյապաղ մտցնել բարենորսումներ թէ Մակեդոնիայում և թէ թիւրքական այլ նահանգներում, բայց ինչ արաւ եւրոպական դիպլոմատիան՝ իր որոշումներն իրագործելու համար: Ոչինչ: Եւ այժմ մակեդոնացիները թէն առաջարկում են հէնց այն, ինչ որ պարտաւոր էր համաձայն Բերլինի համաժողովի որոշման, մտցնել թիւրքիան, բայց նրանք հալածում են իրանց արդար պահանջների համար: Ծանօթանալով այդ պահանջների հետ, որ տպուեց ոռուսաց չառ թերթերում, դժուար չէ տեսնել, որ Մակեդոնիան սուլթանի ծայրագոյն իշխանութեան դէմ ոչինչ

չէ առաջարկում, այլ խիստ օրինական հողի վրայ է կանգնած:

Մակեդոնիան առաջարկում է. 1) Սալօնիկի, Մօնասարի և Խոսկուբի վիլայեթներից կազմել մի նահանգ, Սալօնիկի գուլսաւոր քաղաքով. 2) Նահանգի մէջ գերակշռող ազգութիւնից նշանակել հինգ տարով մի գեներալ-նահանգապետ. 3) Այս վերջինը պիտի կառավարի նահանգը, ժողովրդից ընտրուած ներկայացուցիչների ընդհանուր ժողովի միջոցով. պէտք է երաշխաւորութիւն տրուի փոքրամասնութեան իրաւունքներին; Բնդիսանուր ժողովը իր կարծիքն է յայտնում բոլոր խողիրներում, որ վերաբերում են նահանգի ներքին կառավարութեան. 4) Նահանգի բոլոր բնակիչների համար անխտիր պէտք է երաշխաւորուի անձի ազատութիւն և տան անձեռնմխելիութիւն; Ցենզուրամն պէտք է վերացնուի. 5) Յոլոր պաշտօնեաները պիտի նշանակուեն նրանց ծառայութեան տեղում գերակշռող ազգութիւնից. բարձր պաշտօնեաները նշանակուում են սուլթանից, սակայն գեներալ-նահանգապետների առաջարութեամբ, իսկ աւելի ստորին պաշտօնեաներին նշանակուում է ուղղակի ինքը գեներալ-նահանգապետը. 6) բոլոր հիմնարկութիւնների մէջ նահանգի գլխաւոր լեզուներն ընդունել հաւասար տաճկականին, մի և նոյն ժամանակ իրաւունք տալով վարչութեան մարմիններին՝ այդ լեզուներից մէկն ու մէկը ընտրել պաշտօնական յարաբերութիւնների համար. 7) Զանազան քրիստոնեայ ազգութիւնները իրանք են հիմնում իրանց ուսումնարանները, առանց կառավարութեան կամ իշխանութիւնը միջամտութեան. 8) Կարգը և հասարակական խաղաղութիւնը պահպանելու համար հիմնում է միլիցիայի մի գունդ, որ կազմուում է նահանգի իրաքանչիւր ազգութեան բնակիչների թուի համեմատանը թիւը չը պէտք է 10% -ից աւելի լինի ազգաբնակութեան արական մասի թուից. միլիցիայի գլխաւորութիւնը յանձնուում է գեներալ-նահանգապետին. բարձրաստիճան զինուորականները՝ գեներալ-նահանգապետի առաջարկութեամբ նշանակուում է սուլթանը, իսկ ստորին աստիճանի սպաները նշանակուում են գեներալ-նահանգապետից. 9) Բիւզմէտը և հարկերը որոշում է ընդհանուր ժողովը. եկամուաների 25% մտցնուում է տէրութեան ընդհանուր զանձարանը՝ կայսրութեան պէտքերի համար. 10) Գեներալ-նահանգապետի հետ միասին նշանակուում է մի մասնաժողով տեղական ազգաբնակութեան ընդարձակ ներկայացուցութեամբ. այդ մասնաժողովը գեներալ-նահանգապետի նախագահութեամբ մշակուում է մայուելի բեֆօրմների մանրամասնութիւնները. 11) Պէտք է չնորհուի ընդհանուր ներումն քաղաքական բանտարկուածներին և բոլոր պատորուածներին.

12) նոյն բեֆօրմները պէտք է մտցնուեն Ադրիանօպօլի վի-
լայէթում:

Դժուար չէ համոզուել, որ այդ ծրագիրը ձեռնտու է և
թիւրք ժողովրդին և նրանից միայն կարող են տուժել անձնա-
կան քմահաճ րեժիմից օգտուող թիւրք պաշտօնեաները:

Եւ այդպէս ահա Մակեդոնիայի քրիստոնեաները ստիպուած
եղան անթիւ զրկանքներ ու տանջանքներ կրել միայն այն
պատճառով, որ եւրոպական զիսլօմատիան, եսամոլ և կոյր նա-
խանձից զրդուած չուղեց ընդունել Ալէքսանդր Ա-րդի մարդա-
սէր որոշումները թիւրքիայի քրիստոնեաների նկատմամբ:

I. U.

ՎԻԿՏՈՐԻԱ. ԹԱԳՈՒՀԻՆ

Մեծ-Բրիտանիայի թագուհին և Հնդկաստանի կայսրուհի Վիկտորիան ծնուել է Լօնդոնում 1819 թուի մայիսի 12-ին (24-ին) *): Նա կենտի դուքս Էդուարդի՝ Գէորգ թագաւորի չորրորդ որդու և Սակսեն-Կոբուրգեան իշխանուհի Վիկտորիա-Լուիզայի միակ զաւակն էր։ Հօր մահից յետոյ, որ տեղի ունեցաւ 1820 թուին, փոքրահասակ իշխանուհի Ալեքսանդրին—Վիկտորիան ժառանգեց իր հօր իրաւունքը բրիտանական զահի վըրայ, որ պէտք է անցնէր նրան Վիլհէլմ IV անզաւակ թագաւորի մահուանից յետոյ։ Իշխանուհի Ալեքսանդրինը—այսպէս էին անուանում Վիկտորիա թագուհուն այն ժամանակ—ընտանեկան կանոնաւոր կրթութիւն ստացաւ նախ Նօրտումբերլանդեան դքսուհու և ապա Սելբուրնեան դուքսի ղեկավարութեամբ, որ, Վիլհէլմ VI-ի ցանկութեամբ, ծանօթացրեց նրան քաղաքական գիտութիւնների հմունքների և առանձնապէս Անգլիայի պետական ու կառավարչական կազմակերպութեամս հետ։

Վիկտորիա թագուհու գահակալութիւնը կատարուեց ոչ բոլորովին սովորական հանգամանքներում։ Ահա թէ ինչ է պատմում այդ անգըի մասին նրա թագաւորութեան պատմագիրներից մէկը՝ Մակ-Կարտի: Երբ Վիլհէլմ IV թագաւորը վախճանուեց, իշխանուհի Ալեքսանդրինը 18 տարեկան էր։ Նա իր մօր հետ ապրում էր Կենսինգտոնեան պալատում։ 1837 թուի յուլիսի 8-ին, առաւօտեան ժամի 5-ին, պալատի արտաքին վանդակապատին մօտեցաւ մի կառք։ Կառապանը դժուարութեամբ զարթեցրեց գոնապանին, որ շատ զարմացաւ՝ ճանաչելով կենտերբերիի արքեպիսկոպոսին և լորդ-սենեկապետին, որոնք լուրջ, հանդիսաւոր տեսք ունէին և պահանջում էին անյապաղ թոյլ տալ մտնելու ամրոց։ Վերջապէս պալատի մեծ դուռը բացուեց, բայց ականաւոր այցելուները դեռ երկար ստիպուած էին ըսպասել ստորին յարկի սենեակներից մէկում, որովհետև պալա-

*.) Օգոստել ենք „Рус. Вѣд.“ 1901 թ. № 11-ի յօդուածից։

տում ամենքը խոր քնի մէջ էին: Արքեպիսկոպոսն ու բարձր պաշտօնեան երկար զանգահարում էին, մինչև որ պալատական ծառաները նկատեցին նրանց ներկայութիւնը: Այնուհետև նրանց աջողուց մի կերպ իմաց տալ, որ նրանք անյապաղ ընդունելութիւն են պահանջում իշխանուհուց շատ կարևոր գործով: Քիչ ժամանակ անցնելուց յետոյ եկաւ մի աղախին ու յայտնեց նրանց, թէ իշխանուհին քնած է այնպիսի քաղցր քնով, որ չեն վստահանում արթնացնել նրան: «Մենք եկել ենք այստեղ խորհրդակցելու քաղուհու հետ,—պատասխանեցին այցելուները,—և մինչև անգամ գունը նա պէտք է զոհէ պետութեան օգտի համար»: Թագուհու հետ: Ի՞նչ էին կամենում առաջ նրանք: Թագաւորի ամուսինը վիճակում է,—այդ յայտնի էր ամենքին: Ուրեմն ինչ էր պատահել: Պատահել էր այն, որ Վիհելմ IV թագաւորն այդ գիշերը վախճանուել էր: Թագաւորը վախճանուեց, կոչցէ թագուհին: Խսկ այդ թագուհին էր 18-ամինայ Ալեքսանդրին—Վիկտորիա իշխանուհին, որ, միսս Ռիննի պատմելով, շտապեց դուրս վազել այցելուների մօտ, «հագած առաւտուայ սպիտակ շրջազգեստ, շալը ուսերին, հերարձակ, տնային կօշիկներով»: Նրա աչքերում արտասուզ էր վայլում, բայց նա բոլորովին հանդիսաւ էր և պահում էր իրան արժանավայել դիրքով: Թագուհու առաջին գործն եղաւ ցաւակցական նամակ գրել «Նորին Միծութիւն Աղեկայիդա թագուհուն», և ոչ «այրի թագուհուն», որովհետեւ—ասում էր նա—ես չեմ ուզում առաջինը յիշեցնել նրան այդ մասին: Գահ բարձրանալուց անմիջապէս յետոյ թագուհին ընդունեց Վիկտորիա անունը: Այսպէս սկսուեց այն թագաւորութիւնը, որին վիճակուած էր ամենատեղականը լինել անզլիական պատմութեան մէջ: Տաննեութ ամեաց աղջկան, որ այսպիսի անսովոր հանգամանքներում իմացաւ իր գահակալութիւնը, վիճակուեց թագաւորել 63 տարուց աւելի և մեռնել 82 տարեկան հասակում:

Սյս երկարատես թագաւորութիւնը վերին աստիճանի հարուստ էր ամենափոշոր անցքերով և փոփոխութիւններով: Բայց իրեւ խիստ սահմանադրական միապետ, որ թագաւորում է, բայց չէ կառավարում, Վիկտորիա թագուհին քիչ աղջեցութիւն ունէր բրիտանական պատմութեան վրայ վերջին 60 տարուայ ընթացքում, ուստի և նրա անձնական կեանքի փաստերը կարող են պատմուել կատարելապէս անկախ նրա թագաւորութեան պատմութիւնից: Ասենք նրա կենսագրութիւր, բրիտանական գահի վրայ բարձրանալուց յետոյ, մի առանձին բարգութիւն չէ ներկայացնում: 1838 թուի յունիսի 16-ին տեղի ունեցաւ նրա թագավորութիւնը, որ առիթ տուեց փառաւոր հանդէսնե-

բի: Երկու տարի յետոյ, 1840 թուի փետրուարի 10-ին, նա, իր անձնական ցանկութեան համաձայն, ամուսնացաւ Սակսէն-Կօրուրդեան իշխան Ալբէրտի հետ: Ամուսնութիւնը շատ աչող և բարեբախտ գուրս եկաւ: «Իշխան-ամուսինը», ինչպէս ասում էին նրան Անդլիայում, մեծ տակտով էր պահում իրան օտարերկրացու և թագունու ամուսնու դժուար դերում: Բոլորովին խուսափելով պաշտօնական միջամտութիւններից պիտական գործերի մէջ, նա չէր դադարում զեկավարել իր խորհուրդներով Վիկորիա թագուհուն, որ անսահման հաւատ էր տածում դէպի իր ամուսինը: Իննը երեխաների ծնունդը, միքանի ճանապարհորդութիւններ գէպի եւրոպական ցամաքը՝ օտար միապետների հետ տեսակցելու համար, Պարիզի համաշխարհային ցուցահանդէսի այցելութիւնը 1855 թուին—ահա բոլորը, որքան և եթ աչքի ընկնող՝ փաստերը Վիկորիա թագունու կեանքում, նրա սրմուսնութեան օրից մինչև այրիանալու տարին (1861 թիւը): Ամուսնու մահը անսպիս անսահման վիշտ ու ճնշող ազդեցութիւն թողեց նրա վրայ, որ նա սկսեց բոլորովին միայնակեցաց կեանք վարել: Հինգ տարուց յետոյ միայն նա անձամբ բայց արաւ պարլամէնտը, բայց և այսպէս չը թողեց միայնակեցութիւնը, որ հետզհետէ սկսում էր զգալի գառնալ անդլիական ժողովրդին և դժգոհութիւններ ծագեցնել նրա դէմ: Դժգոհութիւնը հասաւ այն աստիճանի, որ 1868 թուին համայնքների ժողովի անդամներից մէկը առաջարկեց հարց բարձրացնել թագունուն գահից հրաժարեցնելու և խնամակալութիւն նշանակելու մասին, սակայն առաջարկութիւնը ոչ մի աջողութիւն չունեցաւ: Նոյնպէս աննկատելի կերպով անցան էլլի միքանի տարիներ և միայն 1876 թուին պատահեց մի նշանաւոր դէպք, որ չէ կարող չը լիշատակուել հանգուցեալ թագունու կենսազրութեան մէջ: Այս թուին պարլամէնտը, Դիզրաէլիթ ջանքերով, ընդունեց մի օրինագիծ, որ լիազօրութիւն էր տալիս Վիկորիա թագուհուն ընդունել «Հնդկաստանի կայսրուհու» տիտղոսը: Դիզրաէլին իր առաջարկութիւնը պատճառաբանում էր նրանով, որ նոր տիտղոսը կ'ընդունուի Հնդկաստանում, որպէս Անդլիայի և Հնդկաստանի անքակտելի միութեան նշան, իսկ արտասահմանում, որպէս ապացոյց այն անդրդուելի վճռականութեան, որով անդլիական աղջը մտադիր է պաշտպանել իր իրաւունքները Հնդկաստանի վրայ օտարների սուածգութիւններից: Տիտղոսի պաշտօնական ընդունումը տեղի ունեցաւ 1876 թուի ապրիլի 26-ին և ապա 1877 թուի յունուարի 1-ին, ասիական հանդիսաւորութեամբ, յայտարարուեց Դէլի քաղաքում հնդկական իշխաններին: 1884 թուին թագուհին ընտանեկան ծանր

վիշտ կրեց—մեռաւ նրա որդին՝ իշխան Լէօպոլդ, Կօննառութեան դուքսը։ Երեք տարի գրանից յետոյ նա հանդիսաւոր կերպով տօնեց իր թագազրութեան յիւնամեայ յօրեկեանը, որին ներկայ լինելու համար եկել էին ներկայացուցիչներ ոչ միայն բրիտանական պետութեան բոլոր մասերից, այլ և շատ օտարերկրեայ միապետներ և արքայադն իշխաններ։ Աւելի ևս փառաւոր կերպով տօնուեց 1897 թուին նրա թագաւորութեան վաթսունամեակը, այսպէս անուանուած «աղամանդեայ յօրեկեանը»։

Այս հանդէմների ժամանակ արդէն երևայ, որ թագուհու տարիքը զգալի կերպով ազգել են նրա Փիդիկական ամրութեան վրայ։ Ալիսերև էր, որ հանդէմները յոգնեցնում էին նրան։ Աւելի ևս խանդարեցին թագուհու առողջութիւնը այն հոգսերն ու վըշտերը, որ պատճառում էր նրան հարաւաֆրիկական պատերազմը։ Երբ անցեալ տարի թագուհին կատարում էր իր ճանապարհորդութիւնը իրլանդիայում, համարեա արդէն չէր կարողանում ուղըլ շրջել։ Նրան տեղափոխում էին կամ կառքով կամ բաղկաթոուվ։ Սրանից յետոյ թագուհին տեսաւ մի շարք ընտանեկան վշտեր։ Հարաւային-Աֆրիկայում վախճանուեց նրա թոռը՝ իշխան Խրիստիան-Վիկտօր։ Անցեալ տարուայ ամառը վրտանգաւոր կերպով հիւանդացաւ։ Նրա աղջիկը՝ գերմանական այրի կայսրուհին և ապա՝ քիչ ժամանակ առաջ, մեռաւ լէդի Զօրչիլլ, որի հետ թագուհին կապուած էր երկար տարիների սերտ բարեկամութեամբ։ Այս բոլոր կորուստներն ու վշտերը վերջնականապէս խախտեցին թագուհու առողջութիւնը։ Նոր տարու սովորական ընդունելութիւնները չը կայացան։ Քիչ անցած, երեսեցան վտանգաւոր նշաններ, որոնք ցոյց էին տալիս ճակատագրական վախճանի մօտենալը։ 1901 թուի յունուարի 9-ին, ժամի 6-ին և 45 րոպէին կէսօրից յետոյ թագուհին վախճանուեց։

Հանգուցեալ թագուհին ջերմ կերպով սիրում էր իր ժողովրդից։ Այս սէրը չէր անցել նրան ժառանգաբար կամ առաջուց մնացած սովորութեամբ։ Թագուհին անձամբ կարողացել էր գրաւել ժողովրդի սէրը։ Նրանից առաջ թագաւորող միապետները մեծ ժողովրդականութիւն չէին վայելում։ Գէորգ III մի քանի անգամ խելագարուեց և մեռաւ հոգնապէս հիւանդ։ Գէորգ IV ամենավատ համբաւ ունէր իր ժողովրդի մէջ։ Վիլհէլմ IV քիչ թշնամիներ ունէր, բայց քիչ էլ յարգանք էր վայելում Անգլիայում։ Երբ նրա տեղ գահի վրայ նստեց 18 ամեա թագուհի Վիկտօրիան, ազգաբնակութիւնը բաւական սառն և անվատահ ընդունեց նրան։ Դժուար ժամանակներ էին. կենսական մթերքների թանգութիւնը, օրավարձի ստոր զնահատութիւնը, քրէական խիստ օրէնքները—այս բոլորը ծանր բեռի նման ճըն-

շում էին ժողովրդին, որ հին սովորութեամբ պատրաստ էր ամեն պատասխանատւութիւն բարդել գերազոյն իշխանաւորի վրայ: Բայց երիտասարդ թագուհին չուտով զինաթափ արեց կասկածուներին ու նախապաշարուածներին իր գործունեայ ձեռքով, իր կշռագաւուած արարքներով, այն արքայավայել զիրքով, ոռով պահում էր նա իրան, և սահմանադրութեան խիստ պահպանութեամբ: Տարիների ընթացքում անգլիական ժողովրդի սէրն ու յարգանքը դէպի Վիկտօրիա թագուհին հետզհեաէ աճում և գորանում էին: Թագուհու մարդասիրութիւնը, նրա ընդունակութիւնը՝ արձագանք տալու ուրիշի վշտին, քանի գնում աւելի և աւելի սերտ կապում էին նրա հետ ժողովրդին. իսկ վերջին տարիներում թագուհու անձնաւորութիւնը մի իսկական պաշտամունք դարձաւ անգլիացիների համար: Այս հանգամանքը, ի հարկէ, մեծ մասամբ բացատրուում էր նրանով, որ այժմ անգլիացիներից համարեա ոչ ոք չէ յիշում և չէ կարող երեսակացիկ՝ Անգլիան առանց Վիկտօրիա թագուհու, որի անձնաւորութիւնը մի տեսակ կենդանի պատկերացումն էր վերջին 60 տարիները բրիտանական պատմութեան: Նրա թագաւորութեան ընթացքում բոլոր եւրոպական պետութիւնների մէջ փոխուեցին մի քանի միավետներ. Ֆրանսիայում այդ ժամանակամիջոցի մէջ տեղի ունեցան մի քանի յեղափոխութիւններ. Իտալիան միացաւ. Բալկանեան թերակղզու վրայ երևան եկան նոր պետութիւններ. Եւրոպայի քարտէզը տեղադրութեան բոլորովին փոխուեց: Եւ միայն Անգլիան անընդհատ մի և նոյն անձնաւորութիւնն էր տեսնում իր գահի վրայ:

Թուել այն ամենը, ինչ որ պատահել է Վիկտօրիա թագուհու ժամանակ, նշանակում է զրել Անգլիայի պատմութիւնը վերջին 60 տարուայ ընթացքում: Մենք այստեղ կարող ենք յիշել միայն այդ երկարատես և նշանաւոր թագաւորութեան ամենախոշոր անցքերը: Առաջին ամենահին բարեփոխութիւնը, որ կատարուեց Վիկտօրիա թագուհու կառավարութեան օրով, հացահատիկների ներմուծման մաքսի վերացումն էր, որով յաղթանակեց աղատ առևևտուրի սկզբունքը: Դրա հետ միասին ընդունուեց մի ամբողջ շարք գործարանական օրէնքների, որոնցով սահմանափակւում էր կանանց և երեխաների աշխատանքը և որոնց մէջ էր նաև բանուարներին պատահած դժբախտ դէպքերի համար գործարանատէրերին պատասխանատութեան ննթարկելու օրէնքը: Ժողովրդի անահեսական բարեկեցութիւնը բարձրացնելու համար ձեռնարկուած այս միջոցներից յետոյ ընդունուեցին և ուրիշ օրէնքներ, որոնց նպատակն էր ազգաբնակութեան մեծամասնութեանը աւելի լայն իրաւունքներ տալ

մասնակցելու երկրի քաղաքական կեանկին։ Այսպէս 1867 թուին նաև գիւղական բանուորները իրաւունք ստացան մասնակցելու պարլամենտական ընտրութիւններին։ Տեղական ինքնավարութիւնը ևս ենթարկուեց բարեփոխութեան դէմօկրատիական սկզբունքներով։ 1888 թուին տեղի ունեցաւ արմատական բարեփոխութիւն կոմսութիւնների ինքնավարութեան մէջ։ իսկ 1894 թուին ընդունուեց և մի օրինագիծ, որ կազմակերպեց գիւղական ինքնավարութիւնը։ Շատ առաջ բարեփոխութեան ենթարկուեց ժողովրդական կրթութեան ամբողջ գործը։ Մինչև 1870 թիւը ժողովրդական կրթութիւնը գտնուում էր զլիսաւորապէս զանազան դաւանութիւններին պատկանող հոգեորականութեան ձեռքը, պետութիւնը միայն ընդհանուր հակողութիւն ունէր ուսումնարանների վրայ և օժանդակութիւն էր տալիս նրանց։ Դպրոցները կառավարուում էին զլիսաւորապէս մասնաւոր նուիրատուութիւններով։ 1870 թուի օրէնքը առաջին անգամ կազմակերպեց ընդհանուր պետական ժողովրդական գործոցը և հասցրեց նրան այն կէտին, որ այժմ Անգլիայում համարեա ամեն տեղ ազգաբնակութիւնը վայելում է ձրի և պարտադիր կրթութեան բարիքները, իսկ պետական ծախսը ժողովրդական դպրոցների վրայ 200 անգամ աւելի է քան 1870 թուին։

Վիկտորիայի թագաւորութեան օրով համարեա վերջնականապէս յաղթանակեց կրօնական կատարեալ ազատութեան սկզբունքը։ Նրա յաղթանակը արտայայտուեց նրանով, որ թոյլ տրուեց հրէաններին իբրև անդամ մանել պարլամէնտ և ընդունուեց 1888 թուի օրէնքը, որ ազատում էր համայնքների ժողովի անդամներին երգում տալու պարտաւորութիւնից։

Այս բոլոր բարենորոգումների հետեանքը եղաւ այն, որ Անգլիան աստիճանաբար և կատարելապէս դէմօկրատիական կերպարանք ստացաւ, հիմնաւորապէս փոխուեց նրա քաղաքական և համարակական կազմակերպութիւնը, որ առաջ որոշ և յայսնի կերպով արիստօկրատիական գոյն ունէր։ Բայց այս արգիւնաշատ բարենորոգումները տեղի ունեցան ոչ միայն միացեալ թագաւորութեան մէջ։ Վիկտորիայի թագաւորութիւնը, թերեւս, աւելի մեծ նշանակութիւն ունէր Անգլիայի գաղթականական պատմութեան համար։ Այս ժամանակամիջոցում ոչ միայն ընդարձակուեցին անգլիսական թագին պատկանող երկիրները աշխարհի զանազան մասերում, այլ և նշանաւոր փոփոխութիւն տեղի ունեցաւ մայրերկրի և գաղթականութիւնների փոխազարձ յարաբերութիւնների մէջ։ Թշնամականից նրանք փոխուեցին կատարեալ բարեկամականից։ Եւ այս փոփոխութիւնը առաջ եկաւ չնորհիւ այն հանգամանքի, որ գաղթականութիւնները

մէկը միւսից յետոյ Վիկտօրիայի օրով ստացան ինքնավարական իրաւունքներ։ Մինչև անգամ Հնդկաստանում, որ մինչև այժմ մնում է իրեն հսկայական վէրք Անգլիայի գաղթականական մարմանի վրայ, տեղի ունեցան մի շարք օգտակար բարեփոխութիւններ, որոնց մէջ առանձնապէս յիշելու արժանի է Արևելեան Հնդկական ընկերութեան ոչնչացումը և Հնդկաստանը բրիտանական պարլամէնտի անմիջական կօնտրօլին ևնթարկելը։

Սակայն բրիտանական պետութեան այս բազմակողմանի առաջադիմութեան լուսաւոր պատկերները զուրկ չեր նա և մութ կէտերից։ Սրանցից ամենագլխաւորը իրանդիայի թշուառ վիճակն է։ Մինչգեռ Անգլիայի և Շօտլանդիայի ազգաբնակութիւնը կրկնապատկւեց Վիկտօրիայի օրով, իրանդիայում, ընդհակառակը, նա նշանաւոր չափով պակասեց, չնորհիւ այն անընդհատ գաղթականութեան գէպի Ամերիկա, որի սկիզբը դրեց 40-ական թուականների կէսերում պատահած զարհուրեկի սովոր։ Իրանդիայի գժգոնութիւնը արտայացումը էր խոռվութիւններով, որոնց ճնշելու համար կառավարութիւնը դիմում էր վարչական և օրէնսդրական խիստ միջացների և գաղաքացնում էր երբեմնապէս Habeas Corpus-ի ներգործութիւնը։ Ռւդիլ է, իրանդիայում ևս կատարուեցին մի շարք օգտակար բարեփոխութիւններ—անգլիական եկեղեցու գերիշխանութեան վերացումը (1861 թ.), հողային օրէնքը (1881 թ.), տեղային վարչութեան բարեփոխումը գենոկրատիական սկզբունքներով—բայց այս բարեփոխութիւնները չը գոհացրին իրանդիացիներին, որոնք պահանջում են հօմքուլ, այսինքն պարլամենտական ինքնավարութիւն։ Գլագուտոնի կրկնակի փորձը, ընդունել տալու անդիական պարլամէնտին հօմքուլի օրինազիծը՝ անաջող անցաւ, և իրանդիան առաջուայ նման մնում է գժգոն և սպասում է բաւարութեան։

Վիկտօրիայի թագաւորութեան վերջին տարիները մոռայլուեցին Անգլիայի երկարատև պատերազմով—հարաւաֆրիկական երկու փոքրիկ հանրապետութիւնների և Զինաստանի գէմ, որ անհամար դժուարութիւններ ստեղծեց երկրի համար և վշտի ու մտահոգութեան առարկայ դարձաւ զառամեալ թագուհուն։ Բայց առանձին մութ կէտերը չեն խանգարում Վիկտօրիայի թագաւորութիւնը լինելու բրիտանական պատմութեան ամենամիխթարական ժամանակամիջոցներից մէկը, և հանգուցեալ թագուհու մինիստր Հիկս Բիչ, կատարելապէս իրաւունք ունէր աւելու. «Ամբողջ անդիական պատմութեան մէջ չը կայ օրինակ, որ մի որոշեալ ժամանակամիջոցի ընթացքում կատարուած լի-

նեն այնքան մեծ և արդիւնաշատ բարենորոգումներ, ինչպէս
Վիկորիա թագուհու օրովք:

Սյսու ամենայնիւ չը պէտք է մոռանալ, որ բոլորովին
անհիմն կը լինէր այս բոլոր բարենորոգումները համարել Վիկ-
տորիա թագուհու անձնական նախաճեռնութեան և անձնական
ազդեցութեան արդասիք: Ինչպէս փոքր ինչ առաջ լիշուեց, նա
խստութեամբ պահպանում էր սահմանադրական միապետի
դիրք, որ թագաւորում է, բայց չէ կառավարում:

Սակայն սրանից էլ չը պէտք է եղրակացնել, ի հարկէ, որ
հանգուցեալ թագուհին չէր հետաքրքրում պետական գործերով
կամ չափազանց զիջող էր և չէզոք զիրք էր բոնում: Ընդհա-
կառակը, հէնց գահ բարձրանալու օրից սկսած, Վիկորիա թա-
գուհին մշտաբորբոք հետաքրքրութեամբ հետեւում էր պետական
գործերին և վերջ ի վերջոյ իր հպատակների մէջ ստացաւ
«բրիտանական պետութեան կանանց մէջ ամենից աւելի աշխա-
տանքով ծանրաբեռնուած կնոջ» անուն: Թագուհու լոյս տևած
նամակները ցոյց են տալիս, որ նա ամեն մի օրէնսդրական
հարցում, մինչև անգամ խիստ մասնադիրական հարցերում,
ունէր իր սեփական կարծիքն ու համոզմունքը: Իսկ երբ հար-
կաւոր էր լինում՝ հանգուցեալ թագուհին գիտէր պատշաճանել
իր կարծիքը և ցոյց տալ իր ազդեցութիւնը: Նրա համար խորիշ
չէին, անշուշտ, և անձնական համակրութիւններն ու հակա-
կրութիւնները: Իր թագաւորութեան սկզբում, լորդ Մերրուրնի
ազդեցութեան տակ, նա ակնյայտնի կերպով վիգերին էր զե-
րադասութիւն ատլիս, որ յարուցանում էր տօրիների դժգոհու-
թիւնը: Վերջում, ընդհակառակը, նա աւելի համակրում էր
տօրիներին: Ամենքը գիտէին, որ նա սառն էր վերաբերում
Պալմերստոնին և Գլադստոնին և առանձին վստահութիւն էր
ցոյց տալիս Բիկօնսֆիլդին և ապա Սօլսբիւրփին: Ինչ էլ որ լի-
նէր, քաղաքական գործիչները ստիպուած էին ի նկատի առնել
այս հանգամանքը: Արտաքին քաղաքականութեան մէջ թագու-
հու համակրանքը Գերմանիայի կողմն էր... Բայց այս անձնա-
կան և բոլորովին հասկանալի հակումները թագուհին աշխա-
տում էր ձնշել ու թագինել իր մէջ, երբ հարկաւոր էր կատա-
րել սահմանադրական կառավարչի պարագը: Իր թագաւորու-
թեան ամբողջ տևողութեան ժամանակ նա հետեւում էր այն
կանոնին, որ իշխանութիւնը լինի մինիստրութեան ձեռքում,
իսկ մինիստրութիւնը յենուի համայնքների ժողովի մեծամաս-
նութեան վրայ: Իսկ այն դէպքերում, երբ մինիստրութիւնը
ընդհարումն էր ունենում համայնքների ժողովի հետ, թագու-
հին երբէք չէր մերժում մինիստրական պահանջը՝ արձակելու

պարլամենտը, և եթէ նոր ընտրութիւնները ևս աննպաստ էին լինում մինիստրութեան, վերջինը անխուսափելի կերպով հրաժարական էր տալիս, թէպէտ և նրան գլուխ կանգնած լինէր թագուհու սիրելիներից մէկը:

Յայտնի է արդէն լրագիրներից, որ թագուհու յուղարկաւորութիւնն ու թաղումը կատարուեցին ամենամեծ հանդիսով ու շքեզութեամբ, որոնց ներկայ էին բազմաթիւ օտարերկրեայ ներկայացուցիչների հետ միասին նաև գերմանական Վիլհելմ կայսրը, Բելգիայի, Պորտուգալիայի, Յունաստանի թագաւորները, Ռուսաստանի, Աւստրիայի, Դանիայի և Շվեյցարիայի թագաժառանդները: Յուղարկաւորութեան հանդէմները, ըստ ցանկութեան հանգուցեալ թագուհու, կրում էին զինուրական ընաւորութիւն.—ոսկեպատ զադաղը դրուած էր թնդանօթի վրայ. ցամաքային և ծովային զօրքերի ահաղին բազմութիւնը մասնակցում էր յուղարկաւորութեանը: Թաղումը տեղի ունեցաւ յունուարի 28-ին ֆրոգմօրում:

Անդիւական գահի վրայ բարձրացաւ Վիկտօրիա թագուհու աւագ որդին՝ Ռւէլսի իշխաննը՝ կղուարդ VII անունով:

ՆԱՄԱԿՆԵՐ ԱՐՏԱՍՍՀՄԱՆԻՑ

Ն Ա Մ Ա Կ Գ Ե Ռ Մ Ա Ն Ի Ա Յ Ի Ց

ԲԼՈՒԲՆ, 1901 թ. գիտուարքի 15.

Հառապտմանի նոր դրաման.—Թեալարանների սղութիւնը.—Խա-
նաց շարժումը:

Երիտասարդ դրամատուրգ Հառապտմանը, —իր սաղանդը բնու-
րոշող, «Զուլիակներ», «Սուզուած Զանգը», «Կառապան Հենեկ»
եւ «Մենակ Մարդիկ» երկերից յետոյ, գրաւել է հաղաքակիրք աւ-
խարհի բուռն համակրանքը: Նրա գրուածքները բարգմանում են
զանազան լեզուներով, երա անունը հնչում է բոլոր շրջաննե-
րում *):

Նրա ամենավերջին դրամայի՝ «Michael Kramer»-ի ամ-
բողջ ֆաբուլան հետեւեալն է.

—Դիմաւոր հերոսը—Կրամերը տաղանդաւոր նկարիչ է, որի
համար գեղարուեսը մի մեծ սրբութիւն է, մի առանձին եղե-
մական աշխարհ: Մայր բնութեան ամեն մի գեղանի տեսարանը
գրաւում է երա հրապուրանքը: Մի անգամ սացած տպաւորու-
թիւնը մնում է շատ երկար—մինչեւ որ արտասպուի պատառի
վրայ:

Կրամերի բոլոր աշակերտներն ու ծանօթները յարգում են
նրան. հասարակութիւնը խոսովանում է երա տաղանդի մեծու-
թիւնը: Սակայն այդ բոլորը ոչինչ է երա համար. նա խոյս է
տալիս առօրեայ շաբլոն երեւոյթներից, տեղի-անտեղի համակրա-
կան ցոյցերից:

—Խսկական նկարիչն անապատական է, ասում է Կրամերը,
նա միայնակ պիտի լինի, որպէս զի հասկանայ գեղարուեսի մրց-
մունջները: Լաւն ու նշանաւորը զարգանում է միայն առանձ-
նու թեան մէջ...

*.) «Մուրճը» այս համարում տալիս է իր ընթերցողներին «Մենակ
Մարդիկ» դրամայի թարգմանութիւնը:

Եւ նա հետեւում է այդ գաղափարին. նա մեկուսացած նը-կարում է Յիսուսի պատկերը փեկ պատկով եւ ոչ ոքի չէ ցոյց տալիս իր վրձինի աշխատութիւնը:

Կրամերի արտաքին ձեւերը կոպիտ են եւ սառը, բայց ոչ ոքի չէ վիրաւորում նրանից, որովհետեւ զիտեն նրա սրի անկեղծութիւնն ու բարութիւնը:

Ահա այդպէս շնորհալի նկարիչը կարող էր խաղաղ ու երջանիկ ապրել, երկ չը լիներ մի հատիկ որդու—Արեօլդի կորսաքեր կենցաղալարութիւնը:

Երիտասարդ Արեօլդը խիս պատմուած է բնութիւնից: Նա բնութիւնից սապատաւոր է եւ հակարելի: Նա վաճող տպաւորութիւն է բողնում ամենքի վրայ: Նրանից խոյս են տալիս բոլոր—մանաւանդ կանայք: Բարդական այդպիսի դառն պայմաններում մեծանում է նա եւ հետզետեւ մեծ շնորհից ցոյց տալիս նկարչութեան մէջ:

—Արեօլդը տաղանդաւոր նկարիչ է լինելու—յանախ սառում է հայրը—Միխայէլ Կրամերը:

Իսկ Արեօլդն ընդհակառակն անուշադիր է բողնում նկարչութիւնը եւ ամբողջապէս նուիրուում տուայս կենցաղալարութեան:

Սառնասիր հայրը շարունակ յանդիմանում է նրան. առաջարկում է ուղղուել, բայց դրա համար գործնական ոչ մի միջոց ձեռք չէ առնում:

Մայրական հմենյա հոգատարութիւնն ու երջ (Միխայինայի) խորհուրդներն էլ մենում են անհետեւանել:

Արեօլդը ամբողջապէս ընկնում է անբարոյականութեան մէջ: Ստախօսութիւնն ու հարքեցողութիւնը դառնում են նրա համար սովորական բան. նա զիւեր-ցերեկ անց է կացնում գարեցրաւութիւն, անբարոյական կանանց եւ մարդկանց տրջանում: Նա աշխատում է գեր այդտեղ ստանալ իր պահանջների յագուրդը:

Ուրիշ ի՞նչ կարող էր անել... չէ՞ որ համապատասխան հասարակութիւնը խոյս է տալիս նրանից:

Նրա ամբողջ հրապուրանիք կենցրնեանում է գարեցրատան քերեւսոլիկ-կօկէս աղջկայ վրայ:

Սակայն այստեղ էլ Արեօլդն իր տարօրինակ արտաքին ու ներքին յատկութիւններով ծաղր ու ծանակի առարկայ է դառնում: Վերջապէս մի օր նա գարեցրատան հարբած յանախորդների հետ ընդհարումն է ունենում. նա ատրնանակով սպառնում է իրան վիրաւորողներին. վերջիններս ընկնում են յետեւից: Արեօլդը փախչում է եւ իմբնասպանութեամբ վերջ է դնում իր դառն կեանքին:

Վերջին—չորրորդ գործողութիւնը Միխայէլ Կրամերի վիշ

ու հառաջանքի ըլքան է կազմում: Այստեղ հայրը մասամբ խոստվանում է իր սխալը, իր սառնութիւնը. նա յայտնում է իր նախակին աշակերտ Լախմանին, որ մահն արդէն մաքրեց որդու վրայ ծանրացած կեանիք կեղծը եւ այլի:

— Լախման, բացականչում է նա, մահուր մերաւ Արևոլդը, մաքրութիւն է արտայայտում նրա անենչացած դեմքը. բայց ափսո՞ս եւ հազա՞ր ափսոս. նա իր հետ գերեզման տարաւ մի տաղանդ, նկարչական մի մեծ տաղանդ:

Դրանից յետոյ նա սկսում է իր երկար ու բարակ դատողութիւնները կեանիք եւ մահուան, գեղարուեսի եւ աստուածութեան մասին:

Զափազանց խոր եւ լիրիֆական են նրա մժերը, բայց բոլորովին զուրկ դրամատիկական արժեքից:

Սյո բոլորից յետոյ կարծեն հասկանալի պիտի լինի, քե ինչո՞ւ հասարակութիւնը սառնութեամբ ընդունեց իր սիրած հեղինակի վերջին դրաման: Քննադատներից շատերը, տեխնիկայի եւ դրամատիկական գործողութեան բացակայութիւնը խոստվանելով, սկսեցին Դիոդինեսի լավագութեան բանասեղծութիւնը ու հոգեբանական խորութիւնը որոնել. սակայն շատերն այդ էլ չը գտան եւ դառն յուսահատութեամբ բացականչեցին՝ «Հառապտմանի ասողը կարծես խոնարհեւում է»:

Հսկայական հայլերով առաջադիմում է գերմանական արդիւնագործութիւնը: Վաղուց արդէն նա հարեւան պետութիւնների նախանձի առարկան է դարձել:

Պատճառը հասկանալի է: Անող արդիւնագործութիւնը գրաւում է ժողովրդին դեպի խաղաքները, կենցրանները: Այստեղ ազգաբնակութիւնն աւելանում է մեծ արագութեամբ եւ առաջացնում մի շարք տեսեսական նոր երեւյթներ, որոնց բույս բնակարանների սղութիւնը առաջին տեղն է բռնում:

Հասարակ աշխատաւորները իրանի միջոց չունեն սեպհական բնակարաններ շինելու: Շինում են հարուստները—կապիտալիսները. նրանք շինում են մեծ-մեծ բնակարաններ, որպէս զի հետպով վարձով տան եւ աղքատ ընտանիքների հետ համար չունենան:

Այդ իրաղութեան պատճառով չխաւորները ակամայից խրմեւում են նեղ ու վատառողջ բնակարաններում, իսկ երբեմն ել մնում բաց երկնիք տակ:

Բոլոր մեծ բաղադրիչներում էլ նոյն սարսափելի դրութիւնն է: Ահա այդ անտանելի վիճակն է, որ այժմ զբաղեցնում է գերմանական մամուլն ու հասարակութիւնը: Միմեանց յետեւից լոյս

են տեսնում այդ հարցին նույրուած գրեր *) ու յօդուածներ, տեղի են ունենում ժողովներ, խորհրդածութիւններ ու դասախոսութիւններ:

Վերջին օրեր բնակարանների հարցը բննուեց նաև ռէյխստագում: Ընտրուած է մի մասնաժողով՝ այդ անշետաձգելի հարցը մասրամաս բննելու եւ համապատասխան միջոցներ առաջարկելու համար:

Ժամանակի ընթացքում աւելի ու աւելի սուր կերպարաններ ստանում դասակարգային կորուր եւ գերմանացի կինը վաղուց արդեն սկսել է զիտակցութեն ու ինֆուրոյն կերպով մասնակցել այդ գործին:

Աշխատաւոր կանանց թիւր արդեն տասնեւակ ու հարիւր հազարների է հասնում: Նրանք ունեն արդեն իրանց սեպհական մասուր (or. Die Gleichheit), որ միւս արծարծում եւ պատպանում է զուտ կանացի տաներ:

Նրանք ունեն նաև բազմաթիւ ընկերութիւններ, կազմակերպական եխինարկութիւններ, չափազանց յանախ զումարում են ժողովներ, կարդում են դասախոսութիւններ ընթացիկ հարցերի մասին: Օրինակ միայն վերջին ամսուայ ընթացքում բերլինի այլ եւ այլ բաղակամասերում, հարիւրաւոր ունկնդիրների ներկայութեամբ դասախոսութիւններ կարդացին՝ տիկ. Ֆոգել՝ —«Կենոց զարգացում», որ. Մ'կը՝ «Կանացի աշխատանիքը գործարաններում», որ. Ստենբախ՝ «Սպառող ընկերութիւնների նշանակութիւնը», որ. Մ'կը՝ «Պրօլետարիատի երեխաններ» եւ այլն եւ այլն: Իբրև մի նմուշ ես առաջ կը բերեմ հրապարակախոս որ. Կարա Ցեսելինի դասախոսութեան—(Կանացի ի՞նչ են պահանջում հասարակութիւնից)—հակիմ բովանդակութիւնը:

Նա նախ եւ առաջ նկարագրեց այն ծանր աշխատանիքը, որ կատարում են չխաւոր կանաց թէ՝ տանը եւ թէ գործարաններում, ապա յիշեց XIX-րդ դարում կատարուած հսկայական առաջադիմութիւնը, որի արդիւնքներից շատ ժիշ օգուտ է ստանում չխաւոր դասակարգը. Ելեքտրականութեան ու շոգու ոյժը հսկայական գործեր են կատարում, բայց դրանից ի՞նչ շահ աշխատաւոր կանանց: Նրանք սիպուած են ապրել նեղ ու ցուրտ բնակարաններում, իր աղքատիկ նաև պատրաստել նահապետական ձեւով, իրանց զաւակների դաստիարակութիւնը բողնոյն

*) Ուշադրութեան արժանի են՝ Liebrecht: „Reichshilfe für Errichtung kleiner Wohnungen.“ և Kampffmeier Poul: „Die Baugenossenschaften im Bahmeneines nationalen Wohungsreforms“.

բնութեան հաճոյին եւ նոյն իսկ յդի ու կիսանիւանդ ժամանակ կատարել ծանր աշխատանքներ, որոնց արդիւնքը հասարակութիւնն է վայելում:

Ահա հենց այս պատճառով հասարակութիւնը պարտաւոր է՝
1) տալ բոլոր կանանց հաւասար ընտրողական իրաւունք. 2) տիեզեր ընդհանուր խոհանոցներ ու հաւատաններ. 3) տիեզել մանկավարժանոցներ ու առողջապահիկ բնակարաններ եւ այլն եւ այլն:

Այդ բոլոր նա անելու է ոչ իբրև բարեգործութիւն, այլ իբրև անմիջական պարտականութիւն: Աշխատաւոր կանայք արդեն հասել են այն գիտակցութեան, որ չեն կարող ընդունել կապիտալիզմի շարտած ողորմութիւնը: Նրանք ուզում են սահման իրանց դառն իրակնի արդիւնքը եւ դրա ժամանակն արդեմ մօս է:

Այդ մի եւ նոյն դասախոսութիւնը կարդացուեց երկու անգամ, ի հարկէ, զանազան տեղերում, եւ երկու անգամին էլ ներկայ էին 500—600 եւ աւելի ունկնդիրներ, որոնց ստուար մեծամասնութիւնը կանայք էին:

Տեղի ունեցան եւ վիճաբանութիւններ, որոնցից երեւում էր ու գերմանացի կանայք արդէն ձեռք են բերել կուլտուրական գենք եւ նրանց շարժումը օրէցօր լուրջ նշանակութիւն է սահմանութիւնը:

Ե. ԹՈՓՉԵՍՆՅ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Յայտնի քաղաքական գործիչ, Զօն Մօրէյ, որ գուցէ աւելի ևս յայտնի է իր պատմական և քննադատական հետազոտութիւններով՝ 18-որդ դարու Թրանսիական գրականութեան մասին, վերջին ժամանակները, բողոքելով այն ծայրայեղ իմպերիալիստական ուղղութիւն դէմ, որ քանի գնում աւելի տարածւում է Անգլիայում նոյն իսկ ազատամիտների շրջանում, հեռացել էր քաղաքական ասպարիզից և կրկին անձնատուր եղել իր սիրած գրական պարագմունքներին: Երկու տարի սրանից առաջ նա հրատարակեց Վ. Գլադստոնի կենսագրութիւնը, իսկ այժմ լոյս է ընծայել Օլիվէր Կրօմիլի կենսագրութիւնը: Հեղինակը իրան յատուկ խորութեամբ և ուշագրութեամբ ուսումնասիրել է անգլիական հասարակապետութեան մեծ «պրոտեկտօր»-ի կեանքը և գործունէութիւնը: «Review of Review» ամսագրի կարծիքով՝ Մօրլէյի կենսագրական ուսումնասիրութիւնների շարքում (Վօլտէր, Խուսասօ, Դիզզրո և էնցիլոպեդիստներ, Բօրկ, Գլադստոն և այլն) այս գրուածքը ամենից յաջողուածք պէտք է համարել: Նիւթը իրան հարստութեամբ հեղինակին արժանի մի նիւթ է, և նա արժանաւոր կերպով օգտուել է այդ նիւթից: Կարլէյը ինչպէս յայտնի է, հերոսացրել էր Կրօմիլին, անուանելով նրան «ոյժի մարմնացումն»: Զօն Մօրլէյը գտնում է, որ Կրօմիլլը առաջին խոշոր ներկայացուցիչն է այն իմպերիալիստական սիստէմի, որ այժմ սփուռում է ամբողջ Անգլիայում և գաղթականութիւնների մէջ: Այդ ցոյց տուեց Կրօմիլլը մանաւանդ իր վերաբերմունքով դէսի Իրլանդիան, որի պահանջները, զարմանալի չէ ի հարկէ, որ նա այն ժամանակ չէր ըմբռնում: Մօրլէյին գրաւում է Կրօմիլլը ոչ թէ որ և է իմպերիալիստական հակումների չնորհիւ, այլ իսկապէս իր կառավարչական ինստինկտով դէսի իրականացնով, որ նա միշտ ընդունում էր բարոյական տարրը մարդկութեան կառավարութեան մէջ: Այս տեսակէտից գրուածքը ներկայացնում է շատ հետաքրքրական կողմեր, մանաւանդ որ ժամանակակից

«մեծ մօրալիստը», ինչպէս անուանում է Մօրլեյխն «R. of, R.»-ի քննադատը, այնպիսի թանկագին նիւթեր է տալիս մեծ պուրիտանական միապետի (Կրօմվէլի) մասին, որոնք առաջին անգամն են լոյս տեսնում:

Զ. Մօրլեյխ ոչ պակաս յայտնի քաղաքական ասպարիդում, անզիփական ազատամիտ կուսակցութեան պարագում, լօրդ Բօգբէրի նոյնպէս անցեալ տարուայ վերջում հրապարակ եկաւ դրականութեան մէջ, հրատարակելով մի գիրք Նապոլէօն Լի մասին. «Napoleon, the last phase» վերնագրով: Հեղինակը դիմուուրապէս նպատակ է դրել ուսումնասիրել Նապոլէօնի կեանկի վերջին շրջանը Ս. Հեղինէի կղզու վրայ, և դրա համար նա օգտուել է բազմաթիւ ժամանակակից անձանց վկայութիւններից, մանաւանդ Գուրգո անունով մի սպայի գրուածքից, որ միաժամանակ Նապոլէօնի հետ ապրում էր այդ կղզու վրայ և իր օրագրութեան մեծագոյն մասը նույիրել է Նապոլէօնին: Հիմնուելով այդ բոլոր աղքիւրների վրայ՝ լօրդ Բօգբէրին աշխատում է բնորոշել Նապոլէօնի գործունէութեան դիմաւոր կողմերը: Նապոլէօնին նա անուանում է «the scavenger of god», այսինքն «Աստուծոյ մաքրող» (իսկապէս այդ խօսքը նշանակում է «փողոցները մաքրող», «սրբող»), —մի խօսք, որ փոքր ինչ անյարմար է, բայց ճիշտ բնորոշում է Նապոլէօնի դիմաւոր պաշտօնը, իբրև կառավարչի: «Յեղափոխական հրաբուղիսը, ասում է Բօգբէրին, արդէն այրուել, սպառուել էր. Նապոլէօնը պէտք է սրբէր սառած լաւան, անցեալ աւերումներից մնացած կոյտերը, փոշին, մոխիրը և բոլոր հետքերը այն ընդհանուր քայլայման, որ ամենուրեկ նկատում էր: Ֆրանսիական կառավարութիւնը կարծես թաղուել էր խոր ճահճոտ ասուի մէջ, և Նապոլէօնը իր սրի ծայրով բարձրացրեց ու հանեց նրան այնտեղից: Բայց նա ոչ միայն «մաքրող» էր. նա էր և «հրեղէն մտրակ», յեղափոխութեան սուրը և ոդին, որ այցելում էր Եւրոպայի հին միապետութիւններին ու ստիպում էր նրանց կարգի բերել իրանց տները: Այս «գլոմօնական» մարդը իր գործը կատարում էր կարծես մղուելով մի ինչոր այրող գեի նկրին դրդմամբ: Ընրա հանձարը բազմակողմանի էր: Նրա պատերազմական հանձարը, իբրև զինուորի, պատմութեան մէջ չը տեսնուած արդիւնքներ է տուել. իբրև վարչական անձ, նա վերահսկում էր իր ընդարձակ կառավարութեան մեքենայի իւրաքանչիւր անիւր և զսպանակի շարժումներին. լինէր դա մեծ, թէ փոքր, կարծես թէ դա նրա համար մի խաղալիկ էր... Պետութեան բոլոր ճիւղերում նա զիտէր ամեն ինչ, զեկավարում էր ամեն ինչ, ոգես-

բում էր ամեն ինչ։ Նրա խելքը նման էր բազմաթիւ բաժիններով մի ընդարձակ պահարանի։ Մի որ և է հարցի գէպքում նա բանում էր պահարանի այն բաժինը, որ վերաբերում էր զրան և փակում էր միւսները։ Երբ նա ուզում էր քնել, փակում էր բոլորը։ Նա յիշում էր ամեն ինչ, չէր մոռանում ոչ ոքի։ Մեծ՝ իբրև զինուոր, մեծ՝ իբրև փարչական անձ, նա թերևս բոլորից բարձր էր իբրև օրէնսդիր։ Այն ամենը, ինչ որ նա արել է, անցել են, բայց Ըօւե-ը (օրէնքների ժողովածուն) մնում է։ Գերմարդկային այս ոյժը ամփոփուած էր մի մարմնի մէջ, որ աչքի էր ընկնում իր կատարեալ առողջութեամբ։ Մէկ անգամ նա կուում էր ծ օր միմեանց յետեից առանց աչքերը փակելու, և երբ յաղթութիւնը տարաւ՝ նա քնեց 36 ժամ անընդհատ։ Նա կարծես ընդունակ չէր յոգնելու, և նրա մարտութիւնը երբէք չէր խանդարուում։ Առաջին անգամ, երբ նա դիմեց ատամնաբոյժին իր ատամը քաշելու համար—Ս. Հեղինէի կզզումն էր, և այն էլ, ինչպէս երեաց, իզուր տեղը։ Նա ներկայ էր լինում որ և է խորհրդի 8 կամ 10 ժամ շարունակ, զեկավարող մասնակցութիւն ունենալով բոլոր վէճերի մէջ էլ, մինչդեռ մինհստրները մէկը միւսի յետեից քնում էին իրանց բազկաթուների մէջ։ «Ա.աւ է, պարոններ, սթափուեցէք, միայն 2 ժամն է դեռ ես, մնաք պէտք է վաստակենք այն դրամը, որ կառավարութիւնը մեզ վճարում է»։ Նա պարապում էր 18 ժամ շարունակ յոդնածութեան որ և է նշոյլի անգամ։ Մենք բաւականանում ենք մէջ բերելով լորդ Ռօքբէրի զրքից վերսի կտորը Նապօլէօնի մասին և անցնում ենք միւս գրքերին։

Ամենքին յայտնի է, թէ նրան մեծ քազաքական նշանակութիւն են տալիս անգլիացիները այն բոլոր ինդիրներին, որոնք այս կամ այն կերպ կապուած են Հնդկաստանի տիրապետութեան հետ։ Նրանք շարունակ նոր և նոր հետազոտութիւններ են հրատարակում Հնդկաստանի հարեան երկրների և առհասարակ «հեռաւոր» կոչուած Արևելքի քազաքական կեանքի և պատմութեան մասին։ Այդ երկիրների մէջ մեծ գեր է խաղում ի հարկէ Աֆղանիստանը, որին անգլիացիք միշտ նայել են իբրև պատուար Ռուսաստանի աշխարհակալական ձգտումների գէմ։ Նորերում կօնդունում լոյս է տեսել մի ընդարձակ հետազոտութիւն, 2 հատորով, Աֆղանիստանի էմիր Աբդուր-Շահմանի մասին։ Վերնագիրն է. «The life of Abdur Rahoman, Amir of Afghanistan. Edited by Mir Munshi Sultan Mahomed Khan, of Christis College, Cambridge, secretary of state of Afganistan. Two vol.» Ինչպէս առաջարանից երեսում է, այդ գիրքն իսկապէս ինքնակենսագրութիւն է, որ մեծ մասամբ գրել է ինքը իմիր

Աբգուր-Բախմանը, և որ տեղ-տեղ լրացրել է նրա պետութեան քարտուղար Միր Մունջի Սուլթան Մահօմեդ Խանը, որ և իր հետ բեկել է այդ ձեռադիրը Լօնդոն և այնտեղ հրատարակել: Գըրուածքը մանրամասնորէն պատկերացնում է ընթերցողների առաջ նախ՝ Էմիրի կեանքը մինչև զահ բարձրանալը, և ապա նրա գործունէութիւնը այն օրից, երբ նա յաջորդում է զահի վրայ իր հօրը. ներկայացնում է նրա լայն վերանորոգիչ հայեացքները, նրա քաղաքականութիւնը և նրա բռնած դիրքը Ռուսաստանի ու Անգլիայի վերաբերմամբ: Եթէ հաւատանք հեղինակին, Էմիրը մի արտասովոր բարձր տաղանդների տէր անձնաւորութիւն է, որ գեռ 15 տարեկան հասակում, իբրև մի նահանգի կառավարիչ, հօր հակառակ ընթացք բռնելով երկար ժամանակ ստիպուած էր անցկացնել հալածանքի և աքսորի մէջ, յետոյ կրկին ներումն ստացաւ և ստանձնելով զօրքերի հրամանատարի պաշտօնը՝ բազմաթիւ նոր կարգեր հաստատեց զինուորական կազմակերպութեան մէջ, մտցնելով միենոյն ժամանակ կատարելագործուած սիստէմի զէնք և թնդանօթ: Դրանից յետոյ նրա վիճակը կրկին փոխւում է մի առժամանակ և նա զրկւում է պաշտօններից մինչև իր հօր մահը, որից յետոյ միայն նա կարողացաւ ցոյց տալ իր բոլոր ընդունակութիւնները՝ թէ իբրև զինուոր, թէ իբրև կառավարիչ և թէ, որ ամենազլիսաւորն է, իբրև քաղաքագէտ:

Քաղաքական բարդութիւնները, որ ահա մի քանի տարի է՝ առաջ են եկել Զինաստանում, առիթ տուեցին եւրոպացիներին աւելի ևս հետաքրքրուել չինական կեանքով և գրականութեամբ ընդհանրապէս: Անգլիացիք այս դէպքում էլ, պէսք է ասած, աշխատում են միւսներից առաջ գնալ իրանց հրատարակութիւններով: Զինական պատմութեան և գրականութեան վերաբերեալ Լօնդոնում անցեալ տարուայ վերջում դուրս եկան մի քանի զրքեր, որոնցից ամենից շատ աչքի է ընկնում մանաւանդ մէկը, որի վրայ մատնացոյց են անում բոլոր անգլիական մատենախօսական թերթերը, այն է՝ «A History of Chinese literature. By Herbert A. Giles, Professor of Chinese in the University of Cambridge». Այսուեղ մենք ծանօթանում ենք չինաց գրականութեան ընդարձակ պատմութեան հետ սկսած ամենահին ժամանակներից մինչև մեր օրերը: Նախ հեղինակը տալիս է համառօտ տեսութիւն Կոնֆուցիոսից առաջ գոյութիւն ունեցող գրականութեան մասին,—այդ առաջին շրջանը կոչում է «Հինգ կլասսիկների» շրջան, որ վերջանալով սկսում է երկրորդ շրջանը—այն է Կոնֆուցիոսի և նրա յաջորդ քարոզիչ և փիլիսոփայ Մենցիոսի շրջանը, որ նոյնպէս կոչում է «Չորս

գրքերի» շրջան։ H. Giles-ի ասելով չինաց հին գրականութեան աղբիւրների մեզ հասնելը մի բախտաւոր պատահմունք է միայն, որովհետև 213 թ. Քրիստոսից առաջ «մեծ կայսրը», որ հիմնեց Ցին հարստութիւնը և կառուցեց Չինաստանի մեծ պարիսպը, հրամայեց այրել բոլոր գրքերը, որոնք նրա ձեռքն ընկան։ Անկասկած հին գրականութեան շատ գրուածքներ գրան դոհ գնացին, բայց գրամերների ջանքերով բաւական ձեռագրեր ծածուկ պահուեցին զանազան տեղերում, և միայն շատ ուշ ժամանակներում կրկին վերականգնեցին հին հեղինակներին, բաղդատելով մնացած ձեռագրերը։ Աշխատելով գանելի աւելի յարմար նիւթ գրելու համար, քան բամբուկի կտորները և գրիչը, չինացիք հետզհետէ նորանոր նիւթեր գործ գրեցին. իսկ մեր ժամանակագրութեան I դարում հնարեցին թուղթը, որի չնորհւ գրական գործը մեծ քայլ արեց դէպի առաջ։ X-րդ դարում չինացիք սկսեցին արդէն փայտէ աղիւակների միջոցով գրքեր տպագրել, որ Սունդ հարստութեան ժամանակ ընդհանուր գործածութեան մէջ մտաւ։

Հին շրջանների հեղինակներից յետոյ H. Giles-ը անցնում է դէպի աւելի նոր ժամանակները։ Նրա խօսքերով, «Չինաց գրականութեան ոսկէ շրջանները տեղի ունեցան Հան, Տանգ, և Սունգ հարստութիւնների միջոցին»։ Հան հարստութեան (200 թ. Քր. առ.—200 Քր. յետոյ) փայլը ներկայացնում է Սուն-մա-Շիէն, որ ստացել է «Հայր պատմութեան» տիտղոսը և որին համեմատում են յունաց Հերոդոտի հետ։ Տանգ հարըստութեան (600—900 թ. Քր. յետոյ) պարծանքն է Լի-Պօ, «Չինաստանի ամենամեծ բանաստեղծը», և Սունգ հարստութեանը (900—1200 թ. Քր. յետոյ)—Սուն-մա-Կոււանդ, «Պատմութեան Հայելի» գրքի հեղինակը։ Լի-Պօ-ի բանաստեղծութիւններից մի քանի ընտիր օրինակներ բերուած են գրքի մէջ, նրան հեղինակը համեմատում է յունաց Անակրէծն բանաստեղծի հետ։ Նա մեռաւ գինարբեցութեան հետևանքից՝ վայր ընկնելով մակոյկից լծի մէջ այն ժամանակ, երբ աշխատում էր գրկել լուսնի ստուերը ջրի մէջ։ 17-րդ դարու չինաց մի ուրիշ բանաստեղծ տարօրինակ միտք յղացաւ՝ շարագրել իր հրաժեշտի երգը, նստած իր գերեզմանի մէջ, և նմանորինակ դէպի դժուար թէ պատահած վինի պատմութեան մէջ, նամանաւանդ, որ նա վկրչացնելով իր բանաստեղծութիւնը, պառկեց և մեռաւ։ Այդ բանաստեղծութեան մի կտորը մենք մէջ կը բերենք արձակ թարգմանութեամբ՝ հեղինակի մասին դոնէ թեթև գաղափար տալու համար։

ևնձ սպասում է մշտնջենաւոր լնակարան,
Մի՞թէ ես պէտք է տաստանուեմ գնալու,
Կամ կոռւեմ էլի մի քանի ժամ
Այս աշխարհի անցողական կեանքի համար;
Մի բնակարան, որտեղ զէնքի շառաչիմ
Կրկին լսել երբէք ես չեմ կարողանալ.
Մի՞թէ ես պէտք է ջանամ ապրելու
Տանջանքների այս վշոր աշխարհում:
Շուտով սառը քամին կը փշի իմ վրայ,
Եւ շքեղ լուսինը կը փայլի իմ զլիսի,
Երբ երկրի թանկագին քարերի հետ միացած՝
Ես կը պառկեմ իմ վերջին անկողնում:
Իմ գրիչը և թանաքը կը գան ինձ հետ
Իմ ստորերկրեայ դամբանի ներսը,
Որպէս զի, երբ ես այն աշխարհում ազատ միջոց ունենամ,
Կարողանամ քնարովս հոգիս մեղմացնելու:

H. Giles-ը տալիս է նոյնպէս բազմաթիւ տեղեկութիւններ չինական գրականութեան ուրիշ ճիւղերի մասին, ինչպէս վէպեր, թատերգութիւններ, առածներ և այլն: Նա չէ աշխատում որ և է համեմատութիւն անել 19-րդդ դարու չինաց գրականութեան և աւելի հին ժամանակների գրականութեան մէջ. չէ էլ պնդում, որ գրական ընդհանուր մակերեսոյթը ընկել է: Սակայն երբ մենք մտաքերում ենք, ասում է «Literature» շաբաթաթերթը, թէ ինչ իդէալներ ունեն իրանց աչքի առաջ չինական մատենագիրները, և թէ նրանց գեղեցիկի ճաշակը պահանջում է մօտենալ հնագոյն իմաստունների ոճին և զաղափարներին, այն ժամանակ գտուար չէ դալ այն եզրակացութեան, թէ գրականութիւնը Զինաստանում էնչպէս և ամեն ինչը այստեղ, զարերի ընթացքում կատարում է մի տեսակ «circulus vitiosus» (այսինքն պտտում է, կրկնում է առանց առաջ գնալու): Զինացիք անպայման ունեն գրական ճաշակ, մեծ սէր դէպի ընութիւնը և առողջ ու սրամիտ խելք. բայց նրանք արդէն վաղուց հասել են մատչելի կատարեկութեան գաղաթը: Նրանց մեծ գրողները անցնեալումն են, իսկ մեծ մասը գրանցից շատ հեռաւոր անցնեալում: Այն պայմանները, որոնց մէջ գործում է որ և է նոր հեղինակ, զրկում են նրան ամենայն հնարաւորութիւնից գերազանցել հին գրողներից, կամ նոյն-իսկ փորձել մի ինքնուրոյն գրուածք շարադրել:

Վերոյիշեալ «Literatu:θ» թերթից մենք տեղեկանում ենք, որ պրօֆ. Կօնիքիրը, որ յայտնի է եկեղեցական պատմութեան մէջ արած իր բազմաթիւ հետազօտութիւններով, և որ երկար ժամանակ էջմիածնում դրաղուել է հայոց հին ձեռագրերի ուսումնասիրութեամբ, պատրաստում է և շուտով հրատարակելու

է մի գրուածք «Roman Catholicism as a factor in European Politics», այսինքն «Հռոմէական կաթոլիկութիւնը, իբրև գործօն եւրոպական քաղաքականութեան մէջ»։ Նոյն պրօֆեսորը երկու տարի առաջ հրատարակեց մի ընդարձակ զրուածք Դրէյֆուսի գործի մասին, որի մէջ նա աշխատում է բացի մասնաւորապէս՝ Դրէյֆուսի գործից, շօշափել և ընդհանուր հարցը՝ կաթոլիկ հռոմէական եկեղեցու յարաբերութիւնների մասին դէպի նոր քաղաքական խնդիրները, և ակնյայտնի կերպով ցոյց է տալիս իր ծայրայեղ ատելութիւնը դէպի եզուիտները։ Նոր սպասուող գիրքը երեք աւելի մանրամասն պատճառաբանուած հետազօտութիւն կը լինի նոյն ուղղութեամբ։

Յ. ՔՈԶԱՐԵԱՆՑ

ՎՐԱՅԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Սկսած անցեալ դարի քառասնական թուականներից, վրաց ազգը ունեցել է շարունակ նշանաւոր բանաստեղծներ և վիպագիրներ։ Ռւրախալի է այն երեսյթը, որ ասպարէվից իշնող վրացի տաղանդաւոր գրողները թողնում են իրանցից յետոյ արժանաւոր յաջորդներ։ Այսպէս, մինչև վաթուունական թուականները փայլող անդրանիկ բանաստեղծներին հետեւում են այնպիսի խոչոր տաղանդներ, ինչպիսի են՝ Խիա Ճաւաւաձէ, Ակակի Ծերեբեկի. Ալ. Ղազբէզ, Ռափայէլ Երիսրաւի և ուրիշներ. իսկ այդ վերջիններին՝ իննանական թուականներից սկսած՝ մի ամբողջ շարք երիտասարդ, թարմ ոյժեր, որոնցից մի քանիսի տաղանդի խոշորութիւնը արդէն այժմեանից դուրս է ամեն կասկածից։ Զէ կարելի երջանիկ չը համարել վրաց նման մի բուռն ժողովուրդ, որ սերունդ սերնդի յետեւից չնորհալի ու համակրելի գրողներ է դուրս բերում իրանից։

Այս վերջին տասնամեակում հանդէս եկած նոր վիպագիրներից՝ առանձնապէս հասարակութեան ուշադրութեանն են արժանացել Կլիաւըլիին, Արագվիսակիրելիին, Մելանիան և ուրիշներ, մանաւանդ առաջինը. իսկ բազմաթիւ երիտասարդ բանաստեղծներից լաւ անուն է հանել մանաւանդ Վաժա-Փշաւելան, չորհիւիր ընտիր պօէմաների; Բանաստեղծների շարքումն է նաև մի օրիորդ՝ Գանդեզիլիին, որ ոտանաւոր թարգմանութեան վերածեց մօտ ժամանակներս Գրիբոեդովի «Գորե օտե յմա» նշանաւոր կօմեղիան։

Նպատակ ունենալով քիչ-քիչ ծանօթայնելու այսուհետեւ մեր ընթերցողներին վրացի թէ հին և թէ նորագոյն, երիտասարդ գրողների գործունէութեան հետ, այս անդամ մենք կամենում ենք հրաւիրել ընթերցողների ուշադրութիւնը մի ուրախառիթ երեսյթի վրայ վրայ գրականութեան մէջ, որ բաց է ի բաց վերաբերում է մեզ, հայերիս։

Բանը նրանումն է, որ վրացի վիպագիրներն ու մանա-

ւանդ գրամատուրիդները մի տարօրինակ թուլութիւն են ունեցել, սկզբից մինչև այսօր՝ իրանց գրուածներում հանդէս եկող անհամակրելի ու բացասական յատկութիւններով միայն օժտուած անձնաւորութիւններին հայ ծագում տալու։ Այդ գրուածների հերոսները կարծես բաժանուած են լինուած մի տեսակ սպիտակների ու սևերի, գառների ու այծերի, և անբախտ հայերը, ինչ ասել կ'ուզի, «պատուաւոր» տեղ են բնուած միմիայն այցերի շարքում։ Այդ սովորութիւնը, ինչպէս ասացինք, եկել է հչնց սկզբից, վրայ նոր գրականութեան հիմնուելու օրից։ Այսպէս, առաջին վրաց կատակերգութիւնը, որ գրել է իշխ. Գիորգի Երիսրաւին («Բամեանում») 1850 թուին, մեծ զուարձութիւն էր պատճառում վրաց թատրոնի անդրանիկ այցելուներին նրա մէջ դուրս բերուած հայ վաճառականի տիպով. առաջին վրաց վէպը («Առլումոն Խասկիչ Մէջզանուաշլիլի»), որ գրել է ու տպել 1861 թուին Լաւրինափ Արդազիանին, ամբողջապէս նուիրուած է մի հայ մարդու (Սոլոմոն Խասկիչ) և նրա ընտանիքի այլանդակ կողմերի նկարագրութեան։ Էրիսթաւիկի տուած օրինակը մի տեսակ օրէնք գարձաւ նրա բոլոր գրական յաջորդների համար և վրացերէն կօմեգիանների ու վօղըլիների մեծ մասի «աղը» մինչև այսօր էլ հայերն են կաղմում։ Նոյնը արին և Արդազիանիի յաջորդները իրանց բազմաթիւ վէպերում ու պատմուածքներում։ Մենք զանց ենք անուած յիշելու այստեղ սովորական լրագրական յօդուածները հայերի դէմ, որ մեր նպատակից գուրս է։ Հայը վրաց գրականութեան մէջ եղել է մինչև այսօր մի տեսակ «թուրքի գլուխ», որին տեղից վեր կացողը չմիացրել է, ինչքան սիրոն ուզել է։ Նպատակիցս դուրս լինելով դարձեալ՝ կանդ առնելու այդ վերին աստիճանի տգեղ երեսյթի պատճառների վրայ, մենք այստեղ կը բերենք միայն այն գլխաւոր առարկութիւնը, որ լսել ենք այդ մասին բազմաթիւ վրացի գրողներից. «Երեսյթը, ասում են պրանք, բացատրում է այն մեծ տնտեսական դերով, որ հայերը խաղացել են վրաց կեանքում, գրաւելով այլ և այլ ճանապարհներով վերջինների կալուածները»։

Անցնուած ենք յօդուածիս գլխաւոր նպատակին։ Ասացինք, որ այժմ մեր հարևանների գրականութեան մէջ տեղի է ունենուած մի ուրախառիթ երեսյթ հայերի վերաբերեալ։ Այդ երեսյթը կայանուած է նրանում, որ այժմ վրաց գրականութեան մէջ մէկոմէկ գլուխ են բարձրացնուած և այնպիսի արդար հոգիներ, որոնց համար աւելի թանգ է սուրբ ճշմարտութիւնը, քան անմիտ, փտած բուտինան. ազգերի եղբայրական, համերաշխ յարաբերութիւնը—քան թթու, սիսալ կերպով հասկացուած, մարդատեաց ազգասիրութիւնը։

Այդ պատուական վրացի մարդկանցից հայ-վրացական յարաբերութիւններին մի շարք առողջամիտ յօդուածներ նույրեցին անցած 1900 թուականին «Կվալի» շաբաթաթերթի ոչ պաշտօնական խմբագիր պ. Նոյ Փօրդանիայի հետ), որ հանգուցեալ հայասէր Գիօրգի Ծերեթելու արժանաւոր աշակերտն է, նոյն թերթի քննադատ պ. Իվ. Դօմարքելին և «Մօամբէ» ամսագրի տաղանդաւոր աշխատակից պ. Կիտա Աբաշիձեն: Փօրդանիայի յիշած խելացի և մարդասէր հրապարակախօսական յօդուածներին մննք կը վերադառնանք ապագայում, որովհետեւ այս անգամ մննք աչքի առաջ ունենք զեղարուեստական գրականութիւնը, որին և նույրուած են միւս երկու պարոնների՝ Աբաշիձեի և Դօմարքելու՝ գրուածքները:

Զբաղուենք ուրիմն այդ երկուսով:

Ինչպէս վերեն ասացինք, վրացի նորագոյն աչքի ընկնող վիպասաններից մէկն է պ. Մելանիան (ծածկանուն է): Դրա վերջին Ընդարձակ արտադրութիւնը՝ «Արշաւանք» անունով, տըպւում էր ամբողջ մի տարի «Մօամբէ» ամսագրում և վերջացաւ գրա անցեալ 1900 թ. յուլիսի համարում: Վէպի անցքը կատարուում է կախէթում և նրա մի խումբ հայ հերոսները գունաւորուած են ու այլանդակուած հեղինակի անդասող հայատեցութեամբ: Արդարն զա մի «արշաւանք» է հայերի դէմ, մէկը այն գալիքաբարոյ, անշրջահայեաց արշաւանքներից, որ այնքան հոչակեցին «հանգուցեալ» Վելիչկի անունը: Թէ որ աստիճան անյաջող ու անհամակրելի է այդ «զեղարուեստական» արշաւանքը, այդ կարելի է մակաբերել նախ՝ նրանից, որ նա խիստ գատափետութեան ենթարկուեց նոյն իսկ այն ամսագրից, որի մէջ տպագրուում էր, և երկրորդ՝ այն հանգամանքից, որ Աբաշիձէի («Մօամբէում») և Դօմարքելու («Կվալիում») խիստ յարձակումները վէպի դէմ երևեցան դեռ ևս մի քանի ամիս նրա վերջանալուց առաջ, այն է վեստրուար ամսին:

Ահա ի՞նչ է ասում, ի միջի այլոց, պ. Աբաշիձէն «Արշաւանքի» մասին.

«Պ. Մելանիան, սուրը ձեռքին առնելով, պատերազմ է դուրս գալիս (հայերի դէմ) և աղաղակում: Ceterum censeo Cartaginem delendam esse: Ոչ մի գրականական վարդապետութեան (պ. Մելանիան խիստ հետեւող է նատուրալիստական դպրոցին) չի վայելի գրաւուել րոպէական շահերով, ևս առաւել այն վարդապետութեան, որ դաւանում է, թէ գրողի անձնաւորութիւնը պէտք է արտաքսուած լինի նրա ստեղծագործութիւններից: Այդ սկզբունքի խախտելու հետևանքը լինում է այն, որ

գեղարուեստական արտադրութիւնը կորցնում է իր յաւիտենական նշանակութիւնը և վերածւում է մի ժամանակաւոր—հրապարակախօսական շարադրութեան։ Բացի դրանից, այդպիսի արտադրութիւնների մէջ նկատում է դարձեալ մի խոշոր պակասութիւն։ գրականութեան մէջ կատարուած այդպիսի արշաւանքները (պատերազմները) վերջանում են միշտ իրականութեան այլանդակումովը Բնաւ կարելի չէ, որինակի համար, որ մի որեիցէ մարդ՝ լինի նա հայ թէ վրացի, յայտնի իր վերջին կամքը մահուանից առաջ այն ձեռվ, ինչպէս այդ անում է մնանկացած Ղարամանը (հայ)՝ իր կտակի մասին իր որդի Ղազարի հետ խօսելիս։ Նոյնպէս երբէք կարելի չէ, որ ամեն մի հայ՝ լինի նա վաճառական թէ մուրացկան, կը լինի անպատճառ անպիտան և օծի ծնունդ, իսկ ամեն մի վրացի՝ ինչ աստիճանի ու գործի էլ լինի—օրինաւոր, կատարեալ մարդ։ Աղալօի, Ղարամանի, Ղազարի և վերջինի որդոց (որ կոչուած են «ազգութեան երեք սիւներ») տիպերը (բոլորն էլ հայ)՝ կատարեալ մի ծաղրանկար (կարիկատուրա) են։ Հայերը, իբրև վաճառական ժողովուրդ, ունեն անշուշտ վաճառական դասակարգին յատուկ բոլոր թերութիւնները, բայց նրանք ունեն, ի հարկէ, մի և նոյն ժամանակ և արժանաւորութիւններ։ բայց պ. Մելանիան այդ արժանաւորութիւններն էլ կերպարանափոխութ է թերութիւնների և գուրս է բերել հայերին այնպիսի մի գոյնով, որ բոլորովին անտեղի է գրականութեան մէջ... Սակայն պ. Մելանիայի մանրակրկիտ ուշադրութիւնից չը պէտք է խոյս տար այն հանգամանքը, որ երբ որ և է վրացու մէջ բռնկում է փող գիզելու ցանկութիւնները աւելի խոչորացած չափերով, անկարող լինելով սակայն մի և նոյն ժամանակ ունենալու նոյն հայի արժանաւորութիւններից և ոչ մէկը։ Զարմանալի է, որ հեղինակը իրերի խորը թափանցելու և կեսանքի երեսյթների ամենատեսակ մանրամանութիւնները գրի առնելու։ իր ամբողջ ընդունակութիւնը գործ է ածել միայն նրա համար, որ համոզէ մեզ, եթէ ամեն մի հայ՝ լինի նա մուրացկան թէ դարրին (Ղարաման և Ղազար) կամ գիւղական ուսուցիչ (Մելիք և Աղալօ)՝ ձեռք է բերում հարստութիւն միմիայն չնորհիւ այն բանի, որ գողութեամբ, աւազակութեամբ և ամեն տեսակ կեղտուտ միջոցներով տանջում է ու քերթում վրացի գիւղացու, վաճառականի և իշխանի կաշին (Գեղենա, Սանդրօ, Մարքղաձէ և ուրիշներ)։ որ ավացուցանէ մեզ՝ իբր թէ բախտը միշտ չնորհ է անում հայերին, և եթէ վերջինները հազար անգամ էլ մնանկանան, բախ-

տը դարձեալ առատօրէն կը վարձատրէ նրանց որդոցը (Ղաղար Ղարամանիչ), մինչդեռ վրացիներին, որքան էլ դրանք ընդունակութիւն ցոյց տան առուտուրի մէջ, դարձեալ նոյն բախտը կը կործանէ, և որ այդպիսի մի բախտի զեկավար կը լինեն միշտ իրանք հայերը: Այստեղ գրուածքի թեման հին է. դա յայտնի է մեր գրականութեան մէջ Գիօրգի Էրիսթաւիի (1850 թ.) օրերից, սակայն վերջինի պիէսներում չը կային բնաւ այն խատութիւնն ու անգժութիւնը, որ մենք տեսնում ենք պ. Մելանիայի վէպում: Անկասկած է, որ պ. Մելանիան գտնուում է այն կոռու ազգեցութեան տակ, որ մղուեց վերջին ժամանակներս մեր գրականութեան մէջ հայերի դէմ. բայց, կրկնում ենք դարձեալ, ինչ որ թոյլ է արտում հրապարակախօսական յօդուածներին, ներելի չէ գեղարուեստական արտադրութիւններին» *):

Յարգելի քննադատի այդ անաշար և ազնիւ զգացմունքներով տոգորուած գրուածքը դուք չեկաւ «Փվերիա» լրագրին, որ մի ընդարձակ ֆէլիէտօնով փորձեց ջախջախնել պ. Արաշինէին, ճգնելով ապացուցանել, որ սա բոլորովին տգէտ է հայերին ճանաչելու գործում...

Մեր յիշած միւս քննադատը, «Կվալիի» աշխատակից պ. Իվ. Գօմարթելին, դարձնում է իր ուշադրութիւնը զիսաւորապէս պ. Մելանիայի «Արշաւանքի» յարուցած հարցերի տնտեսական կողմի վրայ: — «Որ մեր արիստոկրատիան, — ասում է պ. Գօմարթելին — աղքատանում է օրէցօր և նրա կայքերի նշանաւոր մասը անցնում է հայկական բուրժուազիայի ձեռքը, այդ վաղուց ի վեր ամենաքին յայտնի է, բայց հարցն այստեղ կայանում է այդ երևոյթի պատճառի հետազօտութեան մէջ: Գլխաւոր ուշադրութեան արժանին այսօր պէտք է լինի այդ պատճառը և ոչ այն սովորական խօսքը, թէ «հայերը պլոկում են վրացիներին»: Մինչդեռ Մելանիան իրան նեղութիւն չի տուել այդ պատճառի հետազօտութեամբ զբաղուելու և աշխատել է միայն մեզ ականատես անելու, թէ ինչպէս են կախէթում մաշկում հայերը վրացի թաւադներին (աղնուականներին): Ինչու է արդեօք մեր ազնուականութիւնը իրան մաշկել տալիս: Ի՞նչն է արդեօք նրան ստիպում: Այս հարցերին մեզ Մելանիան ոչ մի պատասխան չէ տալիս: Կարծես եթէ հայերը գոյութիւն չունենային, մեր ազնուականների դասակարգը չէր մաքրագարդի իր բոլոր ունեցած-չունեցածը:

«... Երևոյթի պատճառը հէնց այսօրուայ մեր կեանքի պայ-

*) Տե՛ս „Մօամբէ“ 1900 թ. № 2, էրես 21—22 (բ. բաժին):

մաններն են և ոչ թէ հայի բնութիւնը. հայերը լոկ անմեղ գէնք
են եղած, և են այժմ էլ՝ այդ կեանքի ձեռքում» *):

Վերջացնելով մեր յօդուածը, չենք կարող սրտանց չը
չորհաւել մեր եղբայրակից վրացիներին՝ ժօրդանիաների, Արա-
շիձէների և Գօմարթելիների համգէս գալը նրանց նորադոյն
գրականութեան մէջ:

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆՑ

*.) Տե՛ս «Կպալի» շաբաթաթերթը, 1900 թ. № 9.

ՊԱՐԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Բազմավիճ», մարտ: Հանգուցեալ Հ. Գարեգին վ. Զարբհանալեանի կենսագրականից իմանում ենք որ նա ծնուել է 1827 թուին. նա 10 տարեկան հասակում Պօլսից գնացել է Վենետիկի Մխ. վանքը. ալյանեղ ուսում առել և ապա դառել Մխիթ. միաբանութեան անդամ: Նա 1850-ին վանքի դպրոցում ուսուցիչ է կարգուել: Ճիշ Պետին և մեծերուն միջտ կոյր հրապատակ մը մասցեր է նոյն իսկ ամենին չնշին իրաց և դիպաց մէջ: Վանքում վարել է տնտեսի, տպարանապետի, վերակացութեան, քարտուղարի, հիւրցնկալի և այլ զանազան պաշտօներ: 1858 թուին ուղարկուել է Պօլսի իրք Պերափի Մխիթարեան վարժարանի ուսուցիչ և կաթողիկ հայերի հովիր. նա Հասունի դիպումատ թիկունքն էր»:
1869-ին Դեր Հիւրմիզեանի հեռու գնում է Հոռոմ Վասիկանի ժողովի համար Պարիզի պաշարման ժամանակ հ. Զարբհանալեանը գոնուում է այդ քաղաքում, ուր Մխիթարեան միաբանութիւնից ուղարկուած էր՝ Մորադեան վարժարանը ծախելու նպատակով: 1875-ին գնում է Տաւրիս և Նրիմ իրք Մխիթ. միաբանութեան այցելու Գրական զարգացման վրայ աղղեցութիւն է ունեցել նրա ուսուչ. Գար. Արվագովսկին: Զարբհանալեանը 1856-ին հրատարակել է իր զրական աշխատութեան անդրանիկ գործը՝ «Յունաց, Հոտվմայեցոյ և նկեղեցական հարց Մատենագրութեան պատմութիւնը»:

1874-ին «Արևմտեան միջին և նոր դարերումէջ ապրած հանճարեղ մատենագրաց վարքը»: 1865-ին հրատարակում է „Պատմութիւն հին հայ Դարբութեանց“ գիրքը: 1878-ին „Ազգային նոր մատենագրութեան պատմութիւնն“: 1883-ին հրատարակում է «Հայկական մատենագրութիւնը, 1865—1883 դարերու շրջանին մէջ հայ տպարաններէն լոյս տեսած ամեն գրքերուն ցանկն, իշելով ամոնց հեղինակները և ուր տպուելնին»: 1889 թուին «Պատմութիւն հայ թարգմանութեան» երկասիրութիւնը: Գ. Զարբհանալեանը աշխատակցել է և Բազմավիչսկ-ում: Քայելով այս տեղեկութիւնները, թանում ենք հանգուցեալի գրական գործունէութեան քննութիւնը մի այլ անգամի:

«Պուրան», յոնուար: Այս վերնագրով Պարիզում ամսէ ամիս հրատարակուելու է պ. Գարեգին Սեածառութեանի տնօրինութեամբ, „Շնորհագրծական, զիտական և արուեստական“ հանդէս, պատկերներով: «Պութանիւ—«Ապատակն է արթընցնել և տարածել մեր ժողովրդին մէջ հողագործութեան և արուեստներու ճաշակը, ըլլալ գործնականի ժողովրային դպրոց մը, մատնանիշ ընել մշակութեանց լաւագոյն եղանակը, զիտական նորութիւնները և արուեստներու հսկայառաջադիմութիւնը»: Առաջին համարը, որ բաղկացած է ընդամենը 16 երեսից, ունի հետևեալ բովանդա-

Կութիւնը. „Հողը“, „Երկրմալը“ (անձրևային ճիճու), „Աթնտու և կարագատու կովերը ճանչնալ“, «Կովերու կաղելը», „Արօր“ (Նրա ծագումը, պաշտօնը, կազմութիւնը, տեսակները, աշխատութիւնը, «Աղնջ և կոփի կաթը», «Գինին յատակող նիւթերը»), „Երկրագործի ամսացուցը“; Մեղ թում է որ տարեկան բաժնեղինը՝ 6 ռուբլի, շատ թանգ է և կարող է արգելք լինել մեր երկրագործ ժողովրդի մէջ հանդիսի տարածուելուն, բովանդակութեան մասին մեր կարծիքը կը յատնենք, երբ լոյս կը տեսնեն մի քանի համարներ:

«Մասիս». յունուար, փետրուար Այս վտիս (16 երես) շարաթաթերթը ունի տաճկահայոց թերթերի բոլոր բնորոշ կողմերը. շատախօսութիւն, գեղեցիկ բառերի և դարձուածների տարափի հետ և բովանդակութեան ջրալիութիւն: Մենք ուսահաջերս սիրում ենք աւելի խտացած զրուածքներ և աւելի ուշք ենք դարձնում բովանդակութեան ճոխութեան, քան արտաքին պահուանքների վրայ: Խալայն արդար լինելու համար, չը պէտք է մոռանանք, որ թիւրքահայ գրագէտները ստիպուած են լարմարուել թիւրքական ըեժիմին, որ մտավախութեան սոսկալի մի տիպ է: Թիւրքահայ հրասարակախօսը, վիպասանը իրաւոնք չունի շօշափել ներքին կեանքի բազմաթիւ կողմեր. իսկ առանց արդ պարմանի մամուլը, բնականաբար, կորցնում է իր որոշ գոյնը, կենդանութիւնը և ստիպուած է իր բոլոր ուշադրութիւնը դարձնել միայն անմեղ ներքին ինդիրների վրայ և բառականանալ արասահմանեան թերթերից (դարձեալ անմեղ) քաղուածքներ անելով: Սուլթանախնամ թեժիմը խեղդում է մտաւոր ամեն ինքնուրայնութիւն, աշխոլժ. ուստի

չը պէտք է դարմանալ, որ թիւրքահալոց թերթերը ամենից շատ զբացուած են հոգնորականների և գրագէտների դամբանականներով և կենսագրութիւններով, հիւանդանոցների և զպոցների արտաքին բարեկարգութեան հարցերով և «վարդ, լիլա, կոյսի աչեր», երգելով —թէկուզ ալդախափ երգեր լսելու տրամադրութիւն էլ չունենան նըրանց ընթերցողները...

«Բանասէր». հանդէս հնախօսական, պատմական, լեզուարանական և քննական, լուս է տեսնում Պարիզում երեք ամիսը մի անգամ, տարեկան չորս գիրք, տնօրինութեամբ պ. Ա. Յ. Բասմաջեանի չրատարակութեան երկրորդ տարուայ Պրակ Գ-ի մէջ տպուած է Արջիպալու Սէլսի՛ օթետացիք կամ մի մոռացուած կայսրութեան պատմութիւնը անունով ուսումնամիրութեան թարգմանութիւնը, որ կառարել է պ. Յ. Վ. Յակոբեան: Պրօֆ. Ա. Սէլսի ներկայ գործը ութ զլուխներից է բաղկացած: 1) Գետացիք՝ ըստ Ս.-Գրոց. 2) Գետացիք՝ ըստ Եգիպտական և Ասուրական արձանագրութեանց. 3) Գետական իշշատակարանք. 4) Գետական Կայսրութիւնը. 5) Գետական ցեղը և քաղաքները. 6) Գետական կրօնն և արուեստագիտութիւնը. 7) Գետական արձանագրութիւնք. 8) Գետական վաճառականութիւնն և ճարտարուեստի Ցառացիք, զտնուած են երկու քետական մայրաքաղաքների աւերակները. Պողագիքոյ և նւիւք կոչուած քաղաքները: Կեսարիաթի դաշտի մէջ կալ Գարա-Եւիք մի զիւղ նիւդէլի և նորի կողմերը և քետական քաղաքների և գիւղերի աւերակները կան: Գիտնականները այդ կողմերի գիւղացիների մէջ նմանութիւն են գտնում քետական տիպարին:

Աւելի և շատ են այդ հին կալս-
րութեան լիշատակները սիլիկատ-
ում. հին Մարկաչ, Խիլիք և Քիսա-
սաք ալժմ կաչում են Մարաշ, Հա-
լէպ և Քիսապ: Մի խօսքով, ամրողջ
Փոքր-Ասիայում կան այդ հին կայ-
սրութեան հետքեր: Երեք տարի
առաջ պրօֆ. Եէնսէն մի ուսումնասի-
րութիւն հրատարակեց այդ հին հզօր
կայսրութեան մասին, որով աշխա-
պում է ապացուցել թէ Շետացի-
ները և Յախանայերը մի և նոյնն
են. այսինքն թէ անհետացած քե-
տական ազգը այսօրուան հայ ազգն
է ներկայացնում: Սէլյոր հակառակ
է այդ ենթադրութեան: Այս խընդ-
րով հետաքրքրութները կարող են
ալժմ ծանօթանալ հռչակաւոր գիտ-
նականի կարգիքների հետ, կարգա-
լով նրա գրուածքի հայերէն ճիշտ
թարգմանութիւնը:

„Էպեկազմէյ Եթունեւ“, մարտ.
Խօսելով «Խուրճ» ամսագրի մա-
սին պ. Ա. Խատիսեանը ապացուցա-
նում է, որ շատ գեղգում նա տե-
ղեակ չէ այն ինդիբներից, որոնց
մասին գրում է: Եր առաջին տե-
սութեան մէջ (№ 1), օրինակ, նա
պնդում էր, թէ ՀՀանդէս Ամսօրեալն
գրում է գրաբար և ասուուածարա-
նական յօդուաններ. թէ մէկ և թէ
միւս տեղեկութիւնը սխալ է: Ալժմ
էլ նոյն վատահութեամբ նա ուզում
է հաւատացնել, թէ պ. Փ. Վարդա-
նեանը դիտութիւնը ըստովդականնա-
ցնող յարտնի գրող է. թէն մեր գրա-
կանութեան մէջ մինչեւ ալժմ պ. Փ.
Ա.-ը յայտնի էր միմիայն անմարս,
շինձու գրաբարածն լեզուով կատա-
րած իր թարգմանութիւններով: Մեր
կրականութեան հետ և շատ քիչ է
ծանօթ երևում պ. Խատիսինը
նաև ապացուցած է այդ գրուում:
«Խատիսինը մասնաւոր արհեստա-
տուններ են, զուրկ ընդհանուր և լայն
գարգացումից: Դրանց մտաւոր սը-
նունդը մատակարարուում են «Խա-
պատ»-ի նման թերթերի լուրերով:
Մեր ինտելիգենցիայի մի մասը չէ
կարգում հայերէն, որովհետև չը
գիտէ իր մայրենի լեզուն և չէ ել
հետաքրքրում իր ազգի կեանքով:
Սովորել մայրենի լեզուն նա ամ-
լորդ է համարում, քանի որ գործ-
նական շահ, օգուտ, նա չունի այդ
լեզուից: Փող դատել և իր համար
կօմֆօրտ ստեղծել—ահա՝ մեր ին-
տելիգենցիայի մեծամանութեան
իդէալը: Վերցրէք նազուի և Թիֆլոսի
հայ բժիշկների, փասուաբանների,
ինժենների, ազրօնօմների և այլ
դիազօմաւոր այդ արհեստատունների
ցուցակը և փորձեցէք վիճակագրա-
կան տեղեկութիւններով պարզել
հետեւալ խնդիրը. քանի՞ ան է առհա-
սարակ հետաքրքրում հասարակա-
կան-գրական հարցերով և նոյն իսկ
ուսւերէն լուրջ ընթերցանութեամբ

«Հետաքրքրական նիւթ չեն գըտ-
նում հայոց զրականութեան մէջ
և թէ դրանցից շատերը, որոնք մի
ժամանակ կարգում էին Ռաֆֆու և
Նրծունու գրուածքները, այժմ ոչինչ
չեն կարգում: Այդ էլ սխալ է: Մեր
ինտելիգենցիան և բորժուազիան
շատ քիչ են հետաքրքրուել նոյն
իսկ այդ երկու նշանաւոր հայ գը-
րովներով: Տարօրինակ է թւում
պարոնի կարծիքը. զորս է գա-
լիս որ երկուայ գեաղան՝ բախովի
բերմամբ այսօր կապիտալիստ զառ-
նալով յանկարծ աշխան զարգա-
նում է, որ չէ հաւանում այն մը-
տառը կերակուը, որով գոհանում
են նրանից շատ զարգացած հայ ըն-
թերցովները: Պէտք է ասել որ նոյն
իսկ մեր ինտելիգենցիայի մեծա-
մանութեան ընդհանուր զարգա-
ցումը շատ էլ բարձր չէ մեր սովո-
րական ընթերցովների մտաւոր մա-
կերեսյթից. մեր ինտելիգէնտների
մեծ մասը զիսլօմաւոր արհեստա-
տուններ են, զուրկ ընդհանուր և լայն
գարգացումից: Դրանց մտաւոր սը-
նունդը մատակարարուում են «Խա-
պատ»-ի նման թերթերի լուրերով:
Մեր ինտելիգենցիայի մի մասը չէ
կարգում հայերէն, որովհետև չը
գիտէ իր մայրենի լեզուն և չէ ել
հետաքրքրում իր ազգի կեանքով:
Սովորել մայրենի լեզուն նա ամ-
լորդ է համարում, քանի որ գործ-
նական շահ, օգուտ, նա չունի այդ
լեզուից: Փող դատել և իր համար
կօմֆօրտ ստեղծել—ահա՝ մեր ին-
տելիգենցիայի մեծամանութեան
իդէալը: Վերցրէք նազուի և Թիֆլոսի
հայ բժիշկների, փասուաբանների,
ինժենների, ազրօնօմների և այլ
դիազօմաւոր այդ արհեստատունների
ցուցակը և փորձեցէք վիճակագրա-
կան տեղեկութիւններով պարզել
հետեւալ խնդիրը. քանի՞ ան է առհա-
սարակ հետաքրքրում հասարակա-
կան-գրական հարցերով և նոյն իսկ
ուսւերէն լուրջ ընթերցանութեամբ

պարապում։ Մենք հաւատացած ենք, որ ճիշտ թուերը ևս կը ցոյց տան, որ մեզը հայոց մամովի մէջ չէ... Դատարկ ու փքուն խօսքերով դրանք կը ցանկան դիմակաւորել իրանց մոտաւոր ու բարոյական սնանկութիւնը—ալդ ճիշտ է։ Բայց ամելի, քան մեծ-մեծ ապրետենդիաներ», գրանցից մի՛սպասէք։ Մենք դրանց համարում ենք չորացած և անպառող ճիպեր։ Հաղարապատիկ բարձր է մեզ համար այն ընթերցողը, որ իր սուլ միջոցներից

կոպէկներ է տալիս մայրենի լեզուով մոտաւոր սնունդ գտնելու համար...

„Բ. Բ.“ այս համարում ուշադրութեան արժանի է Մ. Ի. Թ-եվի յօդուածը՝ Ասիայում 1653 թուին Դէ-Լարովէ Լէ-Գուլի կասարած ճանապարհորդութեան մասին։ Եթե ականատես, յիշած ֆրանսիացին շատ հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում XVII-րդ դարի Թիւբքիայի, Պարսկաստանի, Հայաստանի և Վրաստանի մասին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

1901թ. 19 գետը. Ն.-Զուզան

«Մուրճ» ամսագրի յունուարի համարում, տպուած
էր Պարսկաստանից մի լուր—թէ ես արտաքին գործոց
նախարարի (Միւչիր-Դօվլէ) հետ ունեցած տեսակցու-
թեան ժամանակ բաղրմել եմ, թէ ինչպէս Ն.-Զուզայի
դպրոցական կալուածի՝ Զիգան գիւղը յափշտակող
պարսիկը, ըստ իր ասութեան, կաշառեղով մի բարձ-
ասինան անձի, արգելք է լինում դասի յաջող լու-
ծուելուն, եւ որ այդ ժամանակ, իբր թէ, ինձ ասել է նա-
խարարը. «Դա մեր մէջ ընդունուած սովորորթիւն է
դարձել»:

Պարսէ եմ համարում յայտնել հրապարակաւ, որ
այդ լուրը միանգամայն անհիմն է. այդպիսի մի խօ-
սակցութիւն ես երքէ չեմ ունեցել Նորին Վսեմու-
թեան հետ: Ընդհակառակն, ունենալով գործ Նորին
Վսեմութիւն Միւչիր Դօվլէի՝ հետ Զիգանի կալուածական
խնդրի առքի, ես միմիայն կարող եմ իմ անկեղծ գո-
հունակութիւնս ու ընորհակալութիւնս յայտնել Նորին
Վսեմութեան, որ նա իմ բոլոր դիմումներին զիհացու-
մըն է տուել՝ պատպանելով ամենայն արդարութեամբ
վասնի կալուածական դատը:

ԽՈՐՃՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՂ-ՎԱՐԴԱՆԵՍԻՆ

Պ Ա Տ Ա Մ Խ Ա Ն Ե Բ Ր

Մրեւան. Ա. Ա զ ի գ ե ա ն. — Զեր 10 ոռորլով ուղարկում է «Մուրճ» Թաւ-
րիզի Էլեաւայի հայոց դպրոցին:

Ասխարտաղ. Բ. Ա ւ ա գ ե ա ն. — Զեր 10 ոռորլով ուղարկում է «Մուրճ» Տա-
թեփի վանքին:

Բագու. Գ. Ա. Ա ռ ա ֆ է լ ե ա ն. — Զեր 10 ոռորլով ուղարկում է «Մուրճ»
Գեշոլու գիւղի հասարակութեան:

” ” Ս է լ բ - 8 ա կ ո ր ե ա ն. — Զեր 30 ոռորլով ուղարկում է «Մուրճ» Պետերբուրգի Անտառային Խնստիտուտի հայ ուսա-
նողներին, Մոսկուայի Գիւղատնտեսական Խնստիտուտի հայ
ուսանողներին և Եկատերինօսլավի Կեռնային Խնստիտուտի
հայ ուսանողներին:

” ” Մ ա ր գ ի ս Թ ա գ է ո ս ե ա ն. — Զեր 10 ոռորլով ուղարկում է «Մուրճ» Բագուի չքառոր աշակերտներին (Ա. Յարութիւնեանի
գրախանութ):

Էջմիածին. Ն. - Ա. Մ. - Թ. — Զի տպուի:

Մուկաբու. Ա. Ծ. — Աւշ ստացանք. արդէն տպուած էր:

Ասխա. Գ. Օ. — Ժամանակին Ձեզ ուղարկուած էր № 2.

Նիւ-Խօրլ. Հ ա յ կ ա կ ա ն գ ր ա դ ա ր ա ն ի մ ի ո ւ թ ե ա ն. — Ա լ լ ի ւ ր-
Տարազին խմբագրութիւնից չենք ստացել բաժնեղինը.
«Մուրճ» համարները ժամանակին ձեզ են ուղարկուած:

«Մուրճ» 1900 թուի բաժանորդներին. — Ով մտադիր է նորոգել
1901 թուի բաժանորդագրութիւնը՝ թող բարեհաճի շտառվ լրացնել բա-
ժանորդագրնի մեացորդը (Ծ. ո.), որպէս զի խմբագրութիւնը վաղօրօք իմա-
նաց ից տարեկան բաժանորդների թիւը:

Վ Բ Ի Պ Ա Կ Ն Ե Բ Ր

**«Մուրճ» վեհարուարի համարում մտել են և միջի այլոց
հետեւեալ վրիպակիները.**

Երես	Տող	Տպուած է	պէսէ է լինի
173.	21 կ.	պաշօլոգիա:	պատոլոգիա:
206.	5 „	դաշտից	տաշտից
218.	18 „	լուտերանեան	լուտերանեան
270.	19 ն.	մուտք	ծախք
”	18 „	ծախք	մուտք
288.	1 կ.	1,788,482	1,788,482,006

Հրատարակիչ եւ ժամանակաւոր խմբագիր:

Կ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆ

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Լ Ե Օ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԿԵՎԱՆՔԸ, ԳՐԱԼԱԲՈՒԹԻՒՆԸ ԱԲԾԵԱԼՈՒՄ

Համար առաջին:—XVI—XVII դար

ԳԻՆ Է 1 ԹՎԻՒ 50 ԿՊԵԿ

Ծախուս է Թիֆլիսում, «Մշակ» խմբագրատանը:

Օտարաքաղաքացիները դիմում են. Տիֆլիս, րедакցիա „Մշակ“ 1—5

Отъ Совѣта специальныхъ классовъ Лазаревскаго Института Восточныхъ Языковъ.

Въ виду предстоящаго въ 1902 году тридцатилѣтія существованія специальныхъ классовъ Лазаревскаго Института Восточныхъ Языковъ, Совѣтъ обращается ко всѣмъ лицамъ, окончившимъ курсъ Специальныхъ Классовъ съ покорнѣйшей просьбой сообщить о себѣ слѣдующія свѣдѣнія:

- 1) Имя, отчество и фамилия,
- 2) Время окончанія курса,
- 3) Занимаемое положеніе (должность, занятіе и проч.)

Отвѣты на поставленные вопросы будутъ приняты съ благодарностью и войдутъ въ подготавляемую для печати Исторію Специальныхъ Классовъ Института.

Директоръ Профессоръ Вс. Миллеръ

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ 1901 ԹՈՒԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(29-րդ տարի)

ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՐԱԳՐԻ

«Մշակը» հրատարակում է նոյն պրօգրամով եւ նոյն ուղղութեամբ

Ամեն օր բացի տօներին յաջորդող օրերից:

Բաժանորդագինը. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասնեւմէկ և տասն ամսուանը՝ 9 ռ., ինն և ութ ամսուանը՝ 8 ռ., եօթն ամսուանը՝ 7 ռ., վեց ամսուանը՝ 6 ռ., հինգ ամսուանը՝ 5 ռ., չորս ամսուանը՝ 4 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., երկու ամսուանը՝ 2 ռ. և մի ամսուանը՝ 1 ռուբլի:

Արտասահմանեան բաժանորդագրութիւն. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրուել կարելի է Խմբագրատանը (Բազարնայա և Բարօնսկայա վողոցների անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գըրուելու համար, և առհասարակ նամակներ և ծրաբներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցեով. **ՏԻՓԼԻՍԸ, Редакция «МШАКԸ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».**

Յայտարարութիւններն ընդունում են բոլոր լեզուներով:

Ապահիկ բաժանորդագրութիւն չէ ընդունում:

ԲԱ.ՑՈՒ.Ծ է 1901 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
XIX ԱՂԲԻՒԲ XIX և XII ՏԱՐՍԱԶ XII

Միամսեայ պատկերազարդ հանդէս Խառնկար շաբաթաթերթ բն-
մանուկների և գաստիարակների տառեկան բնթերցանոթեան
համար:

Կը իրաւաւակուեն նոյն ուղղութեամբ եւ աշխատակիցների
մասնակցութեամբ

Ն Պ Ս Ս Կ

Աղբիւրի նապատակն է դարթեցնել և զարդացնել հայ երեխայի մեջ բա-
րի նախանձ դէպի վսեմ ու աղնիք և ատելութիւն դէպի չարն ու վլասակարգ:

Աղբիւրը իր մասաց ընթերցողների պատերում ցանում է դժութեան,
ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր:

Տարազը Աղբիւրի հասունացած ասների խնդակցութեան և վշտի ար-
տախայտողն է, նրանց մտքերի, զգացումների թարգմանը:

Տարազը ձգտում է առաջնութեան ուղիղ ճանապարհով ընթացող,
առաքինութեամբ օժոուած, դիտութեան անշէջ լուսով զարգացած, եղ-
բայրակիրութեամբ բորբոքուած հայ անդամներ սնուցանել:

Ն Պ Ս Գ Ի Բ

Ա. ՂԲԻ ՀՐԵ ԼՍԱ Կը տեսնի իրավանչիւր ամիս 2—3 թերթ,
տարեկան 12 ՆՆ:

Ա. ՄԱՆԿԱԿԱՆ ԲՈԺԻՆ.—Մանրավէպ, Զրոյց, Հեքեաթ, Ճանապարհորդու-
թիւն, Կենապրութիւն, Բանաստեղծութիւն Գիտութիւն և արուեստ: Նոր
լուրեր. Այլ և այլք: Զուարձակիք. — մանկական, Գրեօրշեան, շախմատի և
այլ խաղեր. բերուաներ, թուարանական խնդիրներ. Անեկդոտ. Հանելուկ,
Նրգեր նօտաներով:

Բ. ԲԱԺԻՆ.—Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ
և տեղեկութիւններ: Առաջարկութիւններ: Խորհուրդներ: Մատենախօսու-
թիւն և նոր գրքեր: Խառն լուրեր: Պատասխաններ:

Տ Ա Ր Ա Գ Է ԼՍԱ Կը տեսնի ամին կիրակի, իրավանչիւր
Ն 1—2 թերթ. տարեկան 40—50 ՆՆ:

Գեղարվուսա և գիտութիւն: Պատմական, Ժամանակակից վէպեր, պատ-
կերներ, թատրոնական գրուածքներ, Բանաստեղծութիւն, Քննադատու-
թիւն: Կենապրութիւն: Կար, ձև, ձեռագործ և ամեն նորութիւն արհեստ-
ների վերաբերեալ Ծնալին արդինադորութիւն, տնահետութիւն: Ճանա-
պարհորդութիւն և արկածք: Երաժշտութիւն և թատրոն: Լուրեր, տեղեկու-
թիւններ: Յօդուածներ և այլն: Ֆելիքսոն, ծալլ, առած և կատակ: Շախ-
մատի և այլ խաղեր Ծերուած Հարցեր, Խորհուրդներ: Այլ և այլք: Սուր-
հանգակ: Ցայտարարութիւններ:

Ա. ՂԲԻ ՀՐԵ Տ Ա Ր Ա Գ Ի Բ բաժանորդագրու 10 ոուրի է, ար-
թիւնը յաւելուածով և պրէմիայով

18 կամ 50 ֆր.

Պարիզի մօդա, իլիւստրատիօն, առողջապահական,
սեղանի փառակազմ ՕԲԱՑՈՅՅՅ սանում են Աղբիւր-

Տարազի միեւնոյն հասցեով սացող բաժանորդները:

Աղբիւրի տարեկան գինը 3 ռ. Տարազինը 6 ռ.:

Հասցէն՝ Տիֆլիս, Ռեդակուալ ալլուստր. շոր. ԱԳԲԻՕՐԵ-ՏԱՐԱՅԻ կամ
Tiflis (Caucase) Réd. des jour. „Agbur et Taraz“.

ՆՈՐ-ԴԱՐ

(ՏԱՄՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Քաղաքական-դրական ամենօրեայ թերթը 1901-ին
կը հրատարակուի Թիֆլիսում նոյն գիրքով եւ ծրադրով
ամեն or, բացի տօներին հետևող օրերից:

«Նոր-Դար»-ի տարեկան գիմն է 10 ռուբլի, վեց
ամսուանը՝ 6 ռուբլի, երեք ամսուանը՝ 3 ռուբ. 50 կ.,
թիֆլիսից դուրս ամիսը 1 ռ. 50 կ., հատով դուրսը՝
7 կ., թիֆլիսում 5 կ.։

Բաժանորդ են գրւում միմիայն խմբագրատանը:
ԱՐՑԱՌԱՀՄԱՆԻ բաժանորդները վճարում են 40
ֆրանկ:

Յայտարարութիւններ ընդունւում են եւ օտար լե-
զուներով, բառը 2 կ., առաջին երեսումը՝ 4 կոպէկ:

Խմբագրատունը գտնուում է Դաւիդովսկայա փողոց,
տ. № 5.

Պատուի «Նոր-Դար»-ի հասցեն՝ Տիֆլիս, վե՛՛ Ռեդակ-
ցիո „ՆՈՐ-ԴԱՐ“ , կամ Tiflis (Caucase) Rédaction du
journal „Nor-Dar“. 3—3

ОТКРЫТА ПОДПИСКА НА НАУЧНО-ЛИТЕРАТУРНЫЙ ЖУРНАЛ
ГОДЪ II. ԿԱՎԿԱԶՍԿԻЙ ՎԵ՛ՍՏՆԻԿ 1901 Г.

Издаваемый въ г. ТИФЛИСЬ В. Д. Коргановымъ подъ редакціею
К. Н. Бѣгичева.

Редакція помѣщается на углу Тургеневской и Авчальской ул.
№№ 11—28.

ПОДПИСКА принимается въ конторѣ журнала (Головинскій пр. № 10)
и во всѣхъ книжныхъ магазинахъ.

УСЛОВІЯ ПОДПИСКИ:

	Для городскихъ подписчиковъ	Для иногород- ныхъ	За границу
На годъ	9 р.	10 р.	12 р.
” ½ года	5 ”	6 ”	7 ”
” 3 мѣсяца	3 ”	3 ” 50 к.	4 ”

За перемѣну адреса взимается 50 коп.

Отдѣльные экземпляры продаются по 1 руб.

Въ 1900 году „ԿԱՎԿԱԶՍԿԻЙ ՎԵ՛ՍՏՆԻԿ“ даль свыше трехъ тысячъ
печатныхъ страницъ.

Полный экземпляр журнала „Կավկазский Вѣстник“
за 1900 годъ стоитъ 11 рублей.

3—3 Книжные магазины пользуются 5% уступкой.

Открыта подписка на 1901 годъ.

ТИФЛИССКИЙ ЛИСТОКЪ

(26-й годъ изданія).

«Тифлисский Листокъ» въ 1901 году будетъ выходить ежедневно по прежней программѣ газеты литературной, общественной и политической.

Будеть обращено особое вниманіе на развитіе отдѣла корреспонденцій изъ разныхъ мѣстъ Закавказья.

Въ теченіе года подписчики получаютъ не менѣе 12-ти литературныхъ приложений, въ которыхъ будуть помещаться статьи по казаховѣдѣнію, повѣсти, разсказы, стихотворенія и пр.

Время отъ времени приложения будутъ иллюстрироваться портретами и рисунками.

По понедѣльникамъ подписчикамъ будутъ разсыпаться телеграммы.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Въ Тифлисѣ: на годъ—5 руб., на 6 мѣс.—3 р., на 3 мѣс.—1 р. 5 к. и на 1 мѣс.—75 к.

Для иногородныхъ: на годъ—7 руб., на полгода—4 руб., на 3 мѣсяца 2 р. 50 к. и на 1 мѣс.—1 руб.

На всѣ указанные сроки подписка принимается съ первого числа каждого мѣсяца.

Разсрочка и подписка на другіе сроки не допускается.

Подписка принимается исключительно въ конторѣ издания: Тифлисъ, Головинскій, № 3.

3—3

ОТКРЫТА ПОДПИСКА

на 1901 годъ

на издающуюся въ Тифлисѣ политическую и литературную еженедельную газету

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“.

Газета будетъ выходить въ 1901 году подъ прежней редакціей и по прежней программѣ.

Съ цѣлью удовлетворить все болѣе развивающуюся потребность въ теченіи, ФОРМАТЪ газеты съ конца пынѣшаго года будетъ УВЕЛИЧЕНЪ.

УСЛОВІЯ ПОДПИСКИ

съ доставкой и пересылкой:

На 12 мѣсяцевъ. 10 р. | На 6 мѣсяцевъ. 6 р.

За границу: на годъ—17 р., на полгода—9 р., на 3 мѣсяца—5 р.

Для годовыхъ подписчиковъ, какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится—3 р., къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября—2 р. Для сельскихъ учителей льгота: подписная цѣна на годъ—7 р., на полгода—4 р.

Лица, подписывающіяся на будущій годъ, получаютъ газету въ пинчичемъ году бесплатно.

Подписка принимается по иначе, какъ считая съ 1-го числа каждого мѣсяца. Подписка приимается въ Тифлисѣ, въ конторѣ газеты, Барятинская ул. д. № 8.

Книги, издаваемыя редакціею, будутъ продаваться подписчикамъ „Нов. Об.“ съ уступкою 50%.

3—3

ОТКРЫТА ПОДПИСКА на 1901 годъ
НА ГАЗЕТУ

„КАВКАЗЪ“

съ бесплатнымъ приложениемъ

„Вѣстника горного дѣла и орошенія на Кавказѣ“

Издается канцеляріею главноначальствующаго гражданской частью на Кавказѣ.

„Вѣстникъ горного дѣла и орошенія на Кавказѣ“, въ виду свое-
го специального характера, редактируется горнымъ инженеромъ, при
содѣйствіи особаго редакціоннаго комитета.

Приложеніе это выходить 2 раза въ мѣсяцъ, въ форматѣ $\frac{1}{4}$
листа, въ количествѣ 1—2 листовъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА на газету „Кавказъ“ съ приложениемъ
„Вѣстника горного дѣла и орошенія на Кавказѣ“: съ доставкою въ
Тифлисъ на годъ—11 руб. 50 коп., на $\frac{1}{2}$ года—6 руб., на 1 мѣсяцъ—
1 р., съ пересылкою иногородными: на годъ—13 р., на $\frac{1}{2}$ года—7 р.,
на 1 мѣсяцъ—1 р. 50 коп.; за гравицу: на годъ—18 р. 40 к. на $\frac{1}{2}$ го-
да—10 р., на 1 мѣсяцъ—2 руб.

Отдельные №№ „Кавказа“ въ розничной продажѣ безъ прило-
женій по 5 к.

ПЛАТА ЗА ОБЪЯВЛЕНИЯ: въ самой газетѣ—для объявителей
Кавказскаго края впереди текста 16 к. позади текста—8 к. со строки
петита или занимаемаго ею мѣста; для остальныхъ—20 коп. впереди
текста и 10 коп. позади текста; въ „Вѣстникѣ“—15 к. съ такой же
строки или 20 руб. со страницы. Многократная объявление,—по согла-
шению со скидкою.

Иногородные подписчики и объявители благоволять присыпать
плату по подписанѣи и за объявление въ канцеляріе Главноначальствую-
щаго гражданской частью на Кавказѣ полностью, безъ вычета за
пересылку, и съ точнимъ указаніемъ, на какой предметъ (за подписанію
или за объявление) высланы деньги, а при заказѣ объявленій—гдѣ та-
ковое должно быть помѣщено: въ газете или въ „Вѣстникѣ“.

АДРЕСЪ РЕДАКЦІИ „Кавказа“: Тифлисъ. Эриванская плѣщадь,
домъ Харазовой. Телефонъ редакціи № 184, а конторы № 182. Адресъ
редактора „Вѣстника“: „Кавказское горное управление“.

3-3

**ՄԱՒՐՃ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԴՐԱՏԱՆՔ ԵՒ ԹԻՖԼԻԶԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱԶԱՌԱՆՈՅՑՈՒՄ**

ԹԱԿԱՆՈՒՄ ԵՆ

ՀԵԽՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ	Այց Թիֆլաց Հայաստանին Թիֆլիզ, 1890 թ. գինն է. 60 կ.
»	Փողովրդի կրուրեան գոր- ծը մեզանում, 1892 թ. գ. 20 »
»	Հին ցաւ (հրապարակախօ- սական խոհեր), 1900 թ. գ. 30 »
»	և ԿՈՒՍԻԿԵԱՆԻ Մայրենի խոս (ընթերց. ձեռնարկ) 1900 թ. 70 »

ծաղրուտդ միջոցներ, — Տեղական ինքնավարութեան նը- շանակութիւնը երկրագործ ժողովրդի համար, — ձորսի- րի աղասութեան քառամնամեակի տափթով որչում- ներ, — Մարմական պատճի վերացման միջնորդութիւն- ներ, — ձորսիրի աղասութիւնը իրեն հիմք վաթուունա- կան թուականների վերանորոգութիւնների, — Պաշտօ- նական հազորդագութիւններ ուսանողական խառնա- կոմիինների մասին, Ա. Ա.	222
16. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԱՍԵՔ. I Անրերիութիւնը Խխարքալաքի զառառում և նրա հետեանքները, Սալլիւմեան. — II Ապքանների ինստանտարութիւնը Բագում, Ա.	242
17. ԱՐՏԱՔԻՒՑ ՏԱՅՈՒԹԻՒՆ. Զարգացման հիմնական օրէնքը. — Ապրինինների համախմբում և քաղաքակիրթ հասո- րակութիւն, — Համախմբում ազգայնական սկզբանքով. — Վրկու տեսակ նացիօնականատներ, — Դրանց յարարու- թիւնը, — Համամինարդկանին համերաշխութիւն հասու- սար ազգութիւնների մէջ, — Անհամական և միջազգային վիճերի լուծման օրինական միջոց, — Զէխեր և գերմա- նացիներ, — Իրամարացիներ և անգլիացիներ, — Իրամա- րական օրատրուցիս պարլամէնտում, — Իրանդական լեզուն անգլիական պատրամաւորների ժողովում, — Իր- անգական պարլամէնտ և համապարան, — Հողագին հարցը Իրլանգիացւում, — Բանակցութիւններ անգլիացի- ների և րուէրների մէջ, — Սօցիալիստ Զեվսէսի առաջարկը ֆրանսիական պատրամաւորների ժողովում, — Դէրուէզ և ֆրանչական նացիօնականներ, — Սակեդանիալի պահանջները, — Եւրոպացի զիսլօմանների ընդդիմա- գործիւնը Սան-Ստեֆանովի զաշնազրութեան և դրա տիսուր հետեանքները, Ա. Ա.	254
18. ՎԻԿՏՈՐԻԱ. ԹԱԳՈՒՃԻՆ, Ա. Ա.	262
19. ՆԱՄԱԿՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ, Նամակ Բերլինից, Ե. Թոփչեանի	271
20. ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ, Յ. Փոչառեանի	276
21. ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ, Տ. Փիրումեանի	283
22. ՊՈՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	289
23. ՆԱՄԱԿ ԿՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ	293
24. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ	294
25. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	295
26. ՅԱՒԵՂՈՒՍԾ. «ՅԱՐՈՒԹԻՒՆ», վէպ Լ. Տօլսովի, Բարգմ. Տ. Յովհաննիսեանի:	48—80

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է 1901 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա.Մ.Ս.Ա.Գ.Ր.Ե

Խմբագրութեան անդամներն են՝ պ.պ. Լեհոն ՍՍՐԳՍԵԱՆ և լիօ:

«ՄՈՒՐՃ» տեսագիրն ու ցեղալու է հետևեալ բայինները.

1. Վէպեր, պատմուածքներ, զրամա, 2. Բանաստեղծութիւններ, 3. Գրական-պարումական և հրապարակախօսական լոդուածներ, 4. Քննագրառութիւն և Մատենախօսութիւն, 5. Նորութիւններ ոռուաց և պատասահմանեան գրականութիւնից, 6. Քրութիւններ, գեղարուեստի և տեխնիկալի աշխարհից, 7. Ծրետեսական հարցեր, 8. Ներքին տեսութիւն, 9. Գաւառական կեանք, 10. Արտաքին տեսութիւն, 11. Դամակներ արտասահմանից, 12. Պարբերական հրատարակութիւններ ամեն լեզուով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՒՅ

Ուսուասանում տարեկան 10 սուր. Արտասահման՝ 30 գրանկ.

” կես տարին 6 ” 18 ”

” 1 ամսուան 1 ” 3 ”

«Մուրճ» ամսագրին կարելի է գրուել Թակաչիսում—Խմբագրատանը (Երևանեան հրապարակ), ու Խարազեանի:

Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Տոֆլու, և բարձրացնել ամսագրի աշխարհական համար պէտք է ուղարկել 40 կ.

Արտասահմանից՝ Tiflis, Rédition de la revue „Mourteh“.

Խանօրութիւն. Ոչ դժաւարանում է տարեկան բաժանորդագիւնը (10 ռ.) վճարել միանուագ, կարող է տալ մաս-մաս (սկզբում՝ 5 ռ., մարտի 1-ին՝ 3 ռ. և մայիսի 1-ին՝ 2 ռ.);

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կ.

«Մուրճում» ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ գետելիու համար պէտք է վճարել.

Մի երես բանող յախարարութեան համար . 15 ռ.

1/2 ” ” ” ” : 8 ”

1/4 ” ” ” ” : 4 ”

Ա.Պ.Ա.Ժ.Ի. կամ Զ.Բ. ոչ ո՞ի չէ ուղարկում «Մուրճ»:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը ինդրում է լոդուածագիրներից՝ դրեւ պարզ և թերթի միան մի երեսի վրալ:

2. Զընդունուած մինչ լոդուածները պահուում են Խմբագրատանը և ամիս, իսկ վարը լոդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերադնուում. Զենազիւրը լիս ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհանուր:

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է Խմբագրութիւնը

4. Խմբագրութիւնը իրան է վերապահուում ուղարկուած լոդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը